88
Б-22

2004

№ 1016

# ԱՌԱԿՔ
# ՆՕՌՎՐՈՍԻ

Թարգմանեալ 'ի գաղղիական լեզուէ յաշ-
խարհաբառ. և յաւելեալ ոտանաւոր
իմաստս և բարոյական խրատս,

'Ի Հ. ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ
ԲԺՇԿԵԱՆ
'Ի Մխիթարեան Միաբանութենէ.

Արդեամբք և ծախիւք Տեառն Պօղոս
Վարդապետի Կուլէան Խոտորջրցւոյ:

АХАЛЦИХ

1818. ՌՄԿԷ.

'Ի ՎԵՆԵՏԻԿ
'Ի Վանս Սրբոյն Ղազարու.

700

ԳՐԱԴԱՐԱՆ
...ՍԱՆԻ ՊԵՏ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԹԱՆԳԱՐԱՆ 19195



ԵԶՈՎԲՈՍ ԱՌԱԿԱԽՕՍ

# Վ Ա Ր Ք

# Ե Գ Ի Պ Տ Ո Ս Ի

Շարագրեալ հելլեներէն 'ի Մաքսիմոսէ Բիւզանդացւոյ (*)։

---

## ԳԼ. Ա.

### Հանգամանք Եգիպտոսի։

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

Շատ գիտուն մարդիկ գեղեցիկ քննելով մարդկային գործողութիւնները և պատմութեանց պատճառները ջանացին աշխատեցան, որ հաքի ենկօղները պէսպէս խրատներով կրթեն և բարեկարգեն։ Բայց Եգիպտոս քան զամէնը գերազանցեց. որուն գործքին մէջ ամէնէն աւելի կը

(*) [illegible]

փայլի իմաստասիրութիւնը և բարոյական հանճարը. որ գրեթէ վերին զօրութեան շարժելով զարմանալի աւանդեց մարդկանց այսչափ գեղեցիկ և օգտակար կանոններ բարոյականութեան, որ շատ վեր են երևելի փիլիսոփաներուն տուած կանոններէն. որոնք որ մինչև անոր ատենը աշխարհք էին եկեր։ Իբր զի՝ Եզոբոս չի կամեցաւ առաջ բերել բարակ սահմաններով պատճառներ, և երևելի պատմութիւններէ օրինակներ. որպէս զի կարենայ մարդուս միտքը համոզելով բանադատել. որ առաքինութիւնը սիրէ, ու մոլութէն փախչի։ Ուրիշ բանով չուզեց մարդկանց վարդապետել. բայց միայն առակով, որ կըսուի Առասպել (*). որով իբր վախմը կուտայ, թէ թռչունները և այլ կենդանիները՝ որ խելք ու միտք չունին, միայն բնական հասկացողութեան շարժելով շատ բաներէ հեռու կեցան. իսկ մարդիկ՝ որ ունին բանականութիւն, պէտք է ամըչնան երբոր չեն զգուշանար անանկ բաներէն, որ աղ-

ոսին վարժման հին գրեանց մէջէն, և հիներուն բերնէն լսելով սորվեցաւ. որ Փոանուըմէրէն ընտիր թարգմանած ըլլալով. մէկ ալ աշխարհաբառ դարձուցինք։ Կերևնայ թէ մեր մէջ ալ հին ատենը թարգմանած դէտ ըլլայ. կամ դէ հին գրեանց մէջ Եզոպոսին բաներէն կը գտնուին։

(*) Առասպել կըսուին անանկ առակներն որ իրօք չեն եղած, այլ յօրինուած են. որպէս թէ կենդանին, և անշունչ բանը կը խօսի։ Առանկ առակները հին ժամանակը շատ կը գործածուին ամէն ազգի մէջ. Հայոց՝ Յունաց՝ Արաբացոց՝ մանաւանդ Հրէից.

ուեսնները, և ուրիշ կենդանիները զգուշա-
նալով ազատեցան մեծամեծ վտանգներէ ի-
րենց ճարտարամիտ խորագիտութիւնը. և եր-
բեմն շատ մեծ օգուտներ ալ շահեցան երբոր
ամիթը պատահեցաւ: Ուստի Եզովբոս իր
վարքը իր քաղաքավարութեն և իմաստասի-
րութեն պատկերք մը ձևացընելով դրաւ ա-
մենուն առջին. և ատով փիլիսոփաներէն
երևելի եղաւ, որ առակէլ գործքով. քան
թէ խօսքով վարդապետեց:

Ծնաւ Եզովբոս Ամօրիոն քաղաքը մեծին
փռիւգիոյ (*), և մնաւ ծառայական վիճա-
կի մէջ: Ասոր շատ յարմար կուգայ Պղա-
տոն փիլիսոփային գեղեցիկ խօսքը. որ կ'ը-
սէր բաւած տրամախօսութեն մէջը ճշմար-
տութի կը խօսի, թէ || Բնութիւն ու օրէնքը
շատ անգամ իրարու հակառակ են ||: Վասն

ինչպէս յայտնի է Առակներէն: Բայց գիտուններըը
երեք տեսակ կը բաժնեն առակները. Ա Բանա-
կան, որ մարդուն բերնը կը յայտնէ. և լեզուծ
բանը՝ ըրածի պէս կը ցուցընէ. ինչպէս է հէն ա-
առակը Եզովբոսին, և ասոր նմանները: Բ Բարոյա-
կան, որ անբաններուն բերնը բարոյական խրատ
կը հանէ. ինչպէս է Ի և այլ առակները Եզովբո-
սին: Գ Խառն. որ կը ցուցընէ, թէ մարդը կը
խօսի անբանին հետ. ինչպէս է ԻԵ առակը, ևն:

(*) Փռիւգիա է գաւառ Ասիոյ՝ Գաղա-
տիային ու հին Մեծամորին մէջ տեղը. որ շատ
քաղաքներ ունի եղեր. մէկն ալ է Ամօրիոն քաղա-
քը. ասոր ծնաւ Եզովբոս յամի աշխարհի 3400, իբր
600 տարի առաջ քան Քրիստոսին. որ հին ատեններ
'ի վեր շատ երևելի եղած է իրեն առակներովը. թէ

չի բնութիւնը տըւաւ Եզոբոսին մեծութիւն ա-
զատ հոգի մը • բայց մարդկային օրէնքը
դրաւ զայն ծառայական վիճակի մէջ • սա-
կայն այս օրէնքը չի կըրցաւ այլայլել անոր
հոգուն ազատութիւնը • երբոր իր դերի վի-
ճակը՝ զինքը մէկ դիէն մէկալ դին նետելով
կը չարչարէր • և զանազան վիշտ նեղութի-
ները՝ ոչ երբեք կըրցան զայն իր բնական կար-
գէն փոփոխել ։

Բաւական չեղաւ Եզոբոսին դերի վիճակը •
այլև դէմքը խիստ գարշատեսիլ էր • անանկ
որ աշխարհք չէ եկած այնպիսի տգեղ մարդ •
վասն զի գլուխն էր սրածայր երկայն , քի-
թը տափակ , վիզը հաստ ու կարճ , պռուկուն-
քը թանձր , գոյնը սեւ , կապուտ • և այս
պատճառաւ կըսուի Եզոբոս , այսինքն Եթիոփ •
որ կը նշանակէ եթովպացի (*) ։ Աւելի 'ի
զատ փորն էր չափազանց դուրս , կռնակը

ղեփ գերի ծնաւ • բայց ճար ըրաւ Աթենք գնաց
բարոյական փիլիսոփայութիւնը սորվեցաւ • որ շատ
յարգելի ատուած էր • բայց [illegible] որ այն վիճակին
մէջ այլոց բան չի կրնար սորվեցընել , ահաւասիկ ինքնա-
նիներուն բերնէն խօսելով այս առակներս ըլնել ,
որ գէթ առոլ խարենայ բարի վարք սորվեցընել • որ
շատ մեծ յարգութիւն ունեցաւ նաև Յունաց մէջ •
որ Սոկրատ փիլիսոփան անոնցմէ ոտանաւոր դար-
ձուց բոլոր առակները • և յետոյ ամէն ազգ թարգ-
մանեց աշխարհի ըլլալուն համար ։

(*) Եզոբոսին ծնունդը Եթովպիայէն , կը Հա-
պէշտա կողմերէն եկած ծախուած էին Փռիւգիային
մէջ • [illegible] իրենք որոնք որ գերին էին , Եզոբոս-
ու նախ [illegible] էր • յետոյ ծախուեցաւ [illegible] ։

*ծուռ սապատողն խամպաստ· այնչափ որ սաստ տգեղութիւնը աւելի էր քան գեղեցկութիւնն· որ (*) ծիծաղելով կը նկարագրէ Հոմերոս։ Ամէն բանէն աւելի մեծ պակասութիւն էր դժուարախօսութիւնը· որուն խօսքն էր աննշան և ձայնը անորոշ (**)։*

*Ահա այս ամէն պակասութիւններու յարմարեցան Եզովբոսի ծառայական վիճակին· որ այնպիսի աղքատաց բաներու մէջ գտնուելով այս տեղ և անյարմար մարմնովը ինչպէս կրցաւ իր ծառայական կեանքը վարել։ Թէպէտ սաստիկ անշնորհք էր դրսի տեսքը, և մարմինը այլանդակ· բայց հոգին Եզովբոսի ազնիւ էր սրամիտ և քաղաքավար· որ զանազան գիտութեամբ և խելքով լեցուած՝ շուտով կը գտնէր ամէն բանին հնարքը, որչափ խրթին և նուրբ բան ըլլար (***)։*

(*) Թերսիտէս յոյնը անուն փառաւորեալն էր խաղ անշնորհք, որ պատմիչները սաստ էին ըսեր· ինչպէս Հոմերոս բանաստեղծն ալ ծաղր ընելու համար անոր կերպարանքը կը նկարագրէ։ Այս տեղը և անապարծ մարդը՝ որ մը գնաց Հերակլեայ փողին փոխ· անուն մէջ մը յետոյ պարկածին պէս ընկամեցաւ. Իբր 1200 տարի Քրիստոսէն առաջ։

(**) Պլանուդոս այսպէս տգեղ կը նկարագրէ· բայց կան որ կըսեն, թէ Եզովբոսն ինչպէս որ խելքը գեղեցիկ էր, անանկ ալ մարմինը, և խօսք յարմար քաղցրալեզու երեւելի էր ամենէն վեր։

(***) Շատ առակներ խառնուեցան Եզովբոսին առակներուն հետ· անանկ որ Եզովբոսէն առաջ և յետոյ շինուած առակներուն շատը Եզովբոսին վերագրին մէջ խառնեցին։ Այս պատճառաւ՝ [illegible]

# Գլ. Բ.

## Զրպարտութիւն Եզովբոսի.

Եզովբոսին առջի տէրն որ զինքը գնեց էր՝ ապանկ կոշտ անշնորհք տեսնելով զայն, միտքը դրաւ թէ անոր ծառայութիւնը չպիտի կրնայ ընել. ուստի արտը խրկեց որ հոն երկիր փորելով աշխատի. բայց Եզովբոս հոն գացածին պէս սկսաւ անանկ լաւ աշխատիլ սրտանց որ չի կրնայ ըլլալ: Օր մը Տէրը գեղին տունը գնաց անտեղի գործքերը նայելու համար, մէկ պարտիզպան մը տեսնելով անոր գալը՝ ընծայ բերաւ իրեն աման մը խիստ աղնիւ և պատուական թուզ. որ սիրով առաւ հաճեցաւ, ու տուաւ պահելու իր մէկ ընտանի ծառային, որ կըսվէր Ագաթոբոս (*), որպէս զի երբոր բաղնիքէն ելլէ՝ առջին բերէ: Այս միջոցիս մէջ պէտք եղաւ որ բանի մը համար Եզովբոս տունը մանէ: Ագաթոբոս այս բանն իրեն առիթ ընելով գնաց

ընկերին հետ որ Բարգմանած էայ, Թուզերը կեր. որուն մէջ ատելի է, որուն մէջ պախեր:

(*) Ագաթոբոս կը Թարգմանի բարեհամ պատուելոյ. որ կերպով Թէ արագաշարժ ասկոյծ մարդ ըլլալով այս անուամբ կը կոչէր. և անով սիրելի եղած էր տէրոջը՝ որ համարձակեցաւ այս զրպարտութիւն ընելու Եզովբոսին վրայ:

իր ընկերներուն մէկին ըսաց թէ եկո՛ սա թուզերը մենք ուտենք. երբոր մեր տէրը ուզէ, Եզոպոսին վրան կը ձգենք, թէ տունը մտնելու ատենը կերաւ ծածուկ: Այս բանիս վրա մենք կրնանք շատ սուտեր շինելու. որ ճշմարիտ երևնայ՝ անանկ որ Եզոպոս չի կարենայ այս զրպարտութենս զինքն արդարացընել. որովհետև անոր վկայութիւնը չի կրնար դէմ կենալ մեր մէկ խօսքին՝ երբոր լաւ հաստատենք. հապա ի՞նչպէս պիտի կարենայ մեզի սուտով յաղթել. մանաւանդ մեզի պատասխան տալու մէկ պատճառ մը ցուցմունք մը չունի:

Ասանկ խորհուրդ ընելէն ետև այս բռած միաբանութեան չար խորհուրդը կատարեցին, ու ամէն մէկ թուզն ուտելու ատենը բարձր ձայնով կը ծիծաղէին ըսելով. || Վա՜յ քեզ ողորմելի Եզոպոս ||:

Ելաւ տէրը բաղնիքէն և ուզեց որ թուզը բերեն. երբոր լսեց թէ Եզոպոսը կերաւ, անանկ բարկացաւ, որ մէկէն հրամեց դիմացը հանեն. որ տեսածին պէս կանչեց. ա՜յ թշուառական ի՞նչպէս յանդգնեցար մտար սեղանատունն ու կերար թուզերն որ ինձի համար պահուած էր:

Եզոպոս լսելով այս յանդիմանութիւնը լաւ հասկցաւ բանը. բայց դժուարութեան հետ էր՝ որ չէր կրնար խօսքը արտաբերել ու պատասխան տալ: Այս պատճառաւ շուտով յաղթըվեցաւ սուտ վկաներուն խօսքովը. և տեսաւ թէ չարաչար ծեծ պիտի ուտէ. ինկաւ տէրոջը ոտքը մեծ աղաչանքով խնդրեց, որ քի՛չ մը ատեն տայ իրեն: Աստի վազեց

կերակուր եփելու տեղն ու քիչ մը սառ ջուր բերաւ հոն խմեց . յետոյ մատը խօթեց բերնին մէջ սիրտը ետ բերաւ : Նոյնիս բերնէն պարզ ջուր եկաւ . վն զի բոլոր օրը բան չէր կերած : Երբը աղաչեց տիրոջն որ հրամայէ ամբաստանող թշնամիներուն , որ անոնք ալ անանկ ընեն . որպէս զի յայտնի ըլլայ թէ ով է կերեր զանոնք , և ուրիշի խօսքով չի տարվի :

Իսկ տ̄րը զարմանալով անոր սրամիտ ուշիմութեանը վրայ , պատուիրեց որ սուտ վկաներուն ալ խմեն այն ջրէն իրեն առջին : Անոնք ալ խմեցին . բայց փոխանակ որկորը թուզը տանելու մասը , դէպ'ի ընդերքը տարին , որ չի փսխեն : Սակայն հազիւ թէ խմելը լմընցուցին , ներսերնին աւրելով գանիր մը եկաւ իրենց , և ահա բոլոր կերած թուզերը դուրս եկան . որոնց յանցանքը և անօրէն զրպարտութիւնը յայտնի եղաւ ամենուն : Իսկ տ̄րը հրամայեց մէկալ ծառաներուն , որ զանոնք մերկացընեն , և լաւ մը ծեծեն : Որոնք անտանելը իրենց վրայ փորձելով լաւ հասկըցան այս ճշմարտութիւնը առակին , որ կըսէ . || Ով որ նենգութե̄ չարութիւն կը պատրաստէ ընկերին , իր գլխուն կը բերէ այն բոլոր չարիքն որ ուրիշին համար կուզէր || (*) :

(*) Եզովբոսին այս առջի վ̄րը կերպանայ թէ Փռիւգիա գնեէր էր Եզովբոսը Աթենացին պատմութեն եղեւ . իսկ Աթենաց երթալը՝ ծնողքին տիրոջը հրամանովը դէպի ըլլայ . որ Քսանթոսին եղաւ առաջ ծառայած կերպանայ . իսկ այս ձարտը իրաւ Քծաթուն է , քայց ամենաքաջ ըլլալուն Եզովբոսին յարգը լեցնէր :

# Գ.Լ: Գ.

## Հիւրասիրութիւն Եգիպտոսի։

Միւս օրը ՚ի բուն քաղաքը դարձաւ. և Եգիպտոս երկիր փորելով կաշխատէր ինչպէս որ պատուիրած էր իրեն։ Եղաւ որ Արամեան (*) Քուրմերը ուրիշ մարդկանց հետ գլխաւորով ճամբայէն մոլորեցան և ժուռ գալով եկան Եգիպտոսին հանդիպեցան. երկուսով աղաչեցին, թէ (**) Վանատուր Դիոսին համար ըլլայ քաղաքին ճամբան իրենց ցցընէ։ Անոնք շուտ մը զանոնք նստեցուց ծառին տակը՝ շուք տեղ մը, և իրենց քիչ մը ուտելու բան հանեց լաւ մը մեծարեց. յետոյ պատուելով զանոնք առաջնորդ

(*) Արտեմիս դիցուհին մեր մէջ Անահիտ ըսուէր. որ հայոց ազգին գլխաւոր կուռքն էր. ամենահաս զօրաւոր դրեր էին անոնք։ Կուռքապաշտները կըսէին, որ այս դիցուհին Դիոսին աղջիկն էր և Ապողոնին քոյրը. որ բոլոր Ասիային պաշտպանը դրեր էին. անոր համար ասոր Քուրմերն ու Շէյխերը ասանկ պատուեցան Եգիպտոսէն։ Տեսէր Ծննդոցին 651 համարը։

(**) Դիոս էր Արամազդ՝ Կռոնոս ծեր դիւցին որդին ըլլալով, բոլոր դիցներուն հայրը կը կոչուէր և ամենուն գլուխը. որ հին կռապաշտները անանկ մեծ կը դնէին, որ անոր անուանը ինչ ինչ բերէր որ ըև

գութին ըրաւ մինչև չխօսակ Ճամբան հանեց ։ Իսկ Ճամբորդները ուրախանալով Եղբօրսին մեծարանացը վրայ. և անոր երախտիքը ճանչնալով՝ ջերմեռանդ սրտով թեւերնին վերցուցին երկինքն ու աղօթք ըրին պաղատանքով իրենց բարերար Եղբօրսին համար ։ Եղբօրս դարձաւ իր տեղը, բայց Ճամբուն աշխատանքէն և տաքէն յոգնած ըլլալով պառկեցաւ քնացաւ ։ Բայց քունին մէջ երազ մը տեսաւ թէ (*) Բազդը մօտեցաւ իրեն, ու լեզուն բացաւ. և իրեն տըւաւ զօրութիւն խօսելու, և առակներ շինելու ։ Ո՜հ ըսաւ արթըննալով, ի՜նչ անոյշ քնացեր եմ. և ի՜նչ բարի երազ տեսայ. ահա ի՜նչպէս զարմանալի դիւրութիւ կը խօսիմ. ահա առանց դժուարութեան կրնամ ամէն բանին անունները տալ Էղ. Էղ. Բէբէ ։ Գիտէ Երկնաւորն, որ այս բարիքն ինծի եղաւ երախտեացս փո-

րը՝ հարկաւ խօսակելու էր ։ Ուստի շատ անգամ գինիէ գինով հայր կը խօսէին, և երբեմն հանապազ, այսինքն խնամօղ ։ Տե՛ս Ճեմ. 619 ։

(*) Որովհետև Բղնամ այս պատմութիւներս աշխարհայիններուն գրեանց մէջէն հաներ է. որոնց մէջ ստորագրանին Միւսաֆիրին պատմի օգնութիւ ները՝ շատ մեծ բան էր. ինչպէս որ ամէն ազգի օրէնքն է ։ Ուստի Եղբօրսին ըրած բարերարութեը մեծութիւնը հասկընելու համար, կրնէին՝ թէ բաղդն իրեն հատուցում ըրաւ. որովհետև թէպէտ կայր կը գրէին բաղդը մէկ տեղ վրայ կեցած, որ շատ անգամ դժուարածով կապայ բարին անարժաններուն, չէ փեռներ որ արժանաւորին տայ. բայց առաքինի մարդիկն ալ ին ուզէր, բարին տալ կը իրէն կրնէն ։

խարէնը, որ մոլորած օտարականներուն ըլլի ։ Ուրեմն երբոր մէկը բարերարութին կընէ, պէտք յուսայ թէ հարկաւ իրեն ալ բարի կըլլայ ։ Եզովբոս տեսնելով թէ այս մեծ բա-րիքն իրեն հանդիպեցաւ՝ ուրախութ̃ լեց-ւած սկսաւ ալ աւելի հոգ տանելով աշխա-տիլ անանկ սրտանց, որ չէ եղած ։

## ԳԼ. Դ.

## Ազատութին Եզովբոսի ։

Զենաս անունով մէկը վերակացու էր գեղին տանը, ուր կաշխատէր Եզովբոս ։ Այս մարդը եղաւ տէրը գնաց որ տեսնէ, թէ ծառաները հաւատարիմ կաշխատի՞ն ինչ որ իրենց հրամայած է ։ Տեսաւ որ աշխատող-ներուն մէկը անհոգութ̃ իր գործքը թո-ղուցեր չէր աշխատեր, մէկէն վրան վազեց սկսաւ սաստիկ ծեծել խեղճը ։ Այս ան-գթութենը չդիմացաւ Եզովբոս. սիրտը ցա-ւելով մօտեցաւ ըսաց. ինչու համար սանկ չարաչար կը զարնես խեղճ մարդուն, որ քեզի դէշութի մը չէ ըրած. դուն այն մար-դը չես որ ամէն օր բոլոր տանը մարդկանց նեղութիւն և չարչարանք կուտաս առանց պատճառի. իրաւ որ ըրածներդ կըսեմ մեր տիրոջը ։ Զենաս լսելով Եզովբոսին զրուցած խօսքերը շատ զարմացաւ անոր համարձա-կութենը վրայ. ուստի մէկէնիմէկ ինքնիրեն

մտմտալով կըսէր. Թէ ահա Եզոբոս խօսիլ սկսաւ. ասկէ ետև իմ բանս խիստ գէշ է. մանաւանդ երբոր տ̄րս հասկըննայ իմ ըրածներս: Ուրեմն պէտք է որ ես Եզոբոսէն առաջ խօսիմ, և ամբաստանութիւն ընեմ անոր վրան. վն̄ զի տ̄րս իմ գործքերս իմացածին պէս զիս կը վռնտէ պաշտօնէս:

Այսանկ մտածելէն ետև Ճամբայ ելաւ քաղաք գնաց տ̄րը գտաւ. և մօտենալով քովը խռոված երեսով մը բարևեց: Տ̄րը երեսը նայելով հարցուց՝ թէ ի՞նչ պատճառէ եկած է քեզի այդ խռովութիւն, որ կերպարանքըդ կերևնայ: Պատասխանեց Զենաս, թէ գեղի տունդ մէկ արտաքոյ կարգի հրէշ մը եղաւ: Ի՞նչ է բանը տ̄րը, ծառերուս մէկը ատենէ դուրս պտուղ տըւաւ, թէ ձիերս ցուցանք ծնան: Ո՛չ բնաւ Զենաս, հապա Եզոբոս որ միշտ համր էր չէր կրնար խօսիլ, հիմա խիստ լաւ կը խօսի: Ձայնդ վար քաշէ բնաւ տ̄րը. հրէշի տե՞ղ ես դրեր այդ դիպւածը:

Կրկնեց Զենաս. Տ̄ր իմ Ճշմարիտ կըսեմ, որ ես լռութենով անցայ, և չեմ պատմեր Եզոբոսին ինծի ըրած նախատինքները. բայց տէրութենդ և Ա̄ծներուն դէմ ըրած հայհոյանքներուն, և յանդգնական խօսքերուն չեմ դիմանար. ահա կը պատմեմ: Այս խօսքերս որ լսեց տ̄րը անանկ բարկացաւ Եզոբոսին վրայ, որ մէկէն ըսաւ, թէ ահա այն թշուառականը քեզի յանձնեցի, ինչ որ կուզես, ըրէ անոր. կուզես ծախէ, կուզես մէկին տուր. ինչպէս սիրտդ կուզէ անանկ ըրէ. վն̄ զի ես քու կամացդ կը յանձնեմ զայն:

Զէնաս երբոր բացարձակ տէր եղաւ Եզո-
պոսին՝ հասկըցուց անոր, թէ իր ազատու-
թիւնը բոլորովին անկէ կը կախուի ։ Եզոպոս
ալ պատասխան տուաւ, թէ ինչ որ ձեռ-
քէդ կուգայ ըրէ ինծի. և որքան որ հա-
ճոյ է քեզի, իմ անձիս հրամէ ։ Այս խօ-
սակցութեան վրայ յանկարծ վաճառական մը
եկաւ հոն անասուն գնելու համար. հար-
ցուց Զէնասին, թէ ունի՞ս ծախու անա-
սուն ։ Անալ չէ ըսաց. բայց մէկ գերի մը
ունիմ ծախու, որ հոս մօտ է, ուզես կրնաս
գնել ։ Զայս ըսելով կանչեց Եզոպոսը առ-
ջին ։ Իսկ վաճառականը երբոր տեսաւ անոր
կերպարանքը՝ սկսաւ ծիծաղիլ ։ Ասամ՞ գներ
ես ըսաւ այս ցուցանքը, որ պտուկի նման
է ։ Մա՞րդ է, թէ ծառի կոճ. թէ որ ձայն
ալ չունենար՝ պիտի կարծէի թէ տիկ է հո-
վով լեցուն. ինչո՞ւ ճամբայէս արգելեցիք.
ասանկ մէկ այլանդակ մը ինծի ցըցնելո՞ւ
համար ։ Այսպէս խօսելով սկսաւ երթալ.
Իսկ Եզոպոս ետևէն վազեց. կաղաչէր որ
քիչ մը կենայ. վաճառականը բարկանալով
կըսէր. գնա՛ կորի՛ր գարշելի ։ Պատասխա-
նեց Եզոպոս, թէ հապա ինչո՞ւ համար այս
դեղս եկար ։ Եկայ որ ըսաւ վաճառականը՝
լաւ բան մը գնեմ. բայց ինծի հարկաւոր չէ
ասանկ տգեղ անպիտան մարդը, ինչպէս որ
դուն ես ։ Զիս գնէ՛ ըսաց Եզոպոս. եթէ
ինծի կառնաս, քեզի նեղութիւն մը չեմ բերեր.
և անանկ լաւ ծառայութիւն մը կընեմ, որ
միտքէդ ալ չէ անցած ։ Հարցուց վաճառա-
կանը, թէ ինչ օգուտ կրնամ յուսալ քեզ-
մէ. որովհետև ասանկ կերպարանքի մէջ ես,

ամենուն ատելէն և գարշելէն կըլլայ: Պատասխանեց Եզոպոս, թէ չունի՞ս տանդ մէջ անհանդարտ կանչվըռտող լալկան տղաք· զիս անոնց վրայ դի՛ր· որոնք զիս տեսնելով իբր մէկ զարհուրելի բանէ մը կը վախնան: Խնդաց այս խօսքիս վրայ վաճառականը· եւ դարձաւ Զենոսին հարցուց, թէ ինչ տամ որ ինձի տաս այս ողորմելին: Ըսաւ բաւ երեք դրամ (*): Վաճառականը հանեց սակը տըւաւ ըսելով թէ ոչինչ տըւի, ոչինչ գնեցի: Յետոյ երկուքը միատեղ սկսան գնալ, և երբոր հասան վաճառականին տունը, երկու տղաք կային հոն, որ դեռ կաթկռտէին, տեսածնուն պէս սկսան լալ: Տես ըսաւ տիրոջը ինչպէս խոստմունքս կատարվեցաւ, հիմակուց վախցան տղաքը: Վաճառականը խնդալով պատուիրեց, որ մէկալ ծառաները բերեն· որոնք տեսնելով զայն կը զարմանային իրարու ըսելով· իրաւ որ այս մէկ մեծ դժբաղդութիւն մը կը նշանակէ մեր տիրոջն որ ասանկ անշնորհք մարդ գնեց· երեւոյթը կը ցցնէ թէ տանը պիտի բերէ մէկ գէշ ձախորդութիւն մը (**):

(*) Գաղղիացին կըսէ օպօլ· հին յոյնը օպօլօս· որ կը նշանակէ՝ դրամ դանկ նափարակին· որ հին յոյները կը գործածէին այս ստակը· Բայց յայտնի չէ թէ քանի՛ ղուռուշ կարծէր մէկ օպօլը, թէպէտ կերեւնայ թէ շատ էր գինը:

(**) Արուեստական հեթանոսները ամէն բան կախարդութեան կը կարծէին, մինչեւ բնական բաներն ալ այն ժամու կախարդներին· զորօրինակ աւելին խաղալը, աստղոց դիմացնին ելած ժամը, և այլն· որ մինչեւ հիմա

# ԳԼ. Ե.

## Ճարտարմտութիւն Եզովբոսի :

Քանի մը օրէն ետև վաճառականը կա-
մեցաւ Ասիա երթալ. ուստի ծառաներուն
պատուիրեց, որ բեռները կապեն պատրաստ
ըլլան որ մեկնել օրը ճամբայ ելլեն : Անոնք
ալ ամէն բան կարգաւորեցին ինչպէս որ
տէրը պատուիրեր էր, և բաժնեցին իրենց մէջ
բեռները ինչ որ ամէն մարդ պիտի տանէր :
Եզոբոս կաղաչէր որ իրեն թեթև բեռ տան.
որովհետև ամէնէն ետքը նոր եկած ըլլալով
տանելու բաներու սորված չէր : Անոնք ալ
զինքը պարտաւորեցին որ բան մը չտանէ,
և աշխատանք չի քաշէ : Պատասխանեց ա-
նոնց թէ արդարութիւն չէ ուրիշ աշխատան-
քին մնալ. ամէն մարդ պէտք է իրեն բեռը
տանել : Ընկերներն ալ իրեն կամքը հաւե-
ցին. ինչ բեռ որ ուզէ, զայն թող տանի ի-
րեն յարմար : Եզոբոս աչքն անդին նայե-
լով կը դիտէր բեռները, ամանները և տոպ-
րակները. աղաչեց որ հացին ամանը իրեն
կռնակը տան, որ երկու հոգու բեռ էր.
ուստի սկսան ամէնքը խնդալ վրան ըսելով

Միամիտները կը պահեն : Այս Եզոբոսին կերպարան-
քին նայելով աղէկ չի երևցին, կարծելով, թէ ալ-
նը յաղթութիւն պիտի ընէ :

թէ այս խեղճ գերիին պէս անխելք մարդ-կա՞յ արդեօք աշխարհքիս մէջ. որ իր յիմա-րութիւնը այս ամէնուն յայտնի ըրաւ. վասն զի խնդրեց թեթեւ բեռն ու ընտրեց աւա-խիտ ծանր բեռը: Սակայն պէտք եղաւ ա-նոր կամքը կատարել. ուստի բարձուցին վրան բեռը. որ այն ծանրութենէ տակը աշ-խատելով առջին անդին կը գլորէր: Իսկ վաճառականը այնչափ բեռն անոր կռնակը տեսնելով կը զարմանար, թէ այս ինչ ջան-քով կաշխատի Եղբայր. իրաւ որ կըսէր՝ ա-հա իր գինը հանեց. զի ձիու մը բեռ մինակ կըտանի:

Երբոր հասան պանդոկ խանի մը, պէտք եղաւ բան ուտել. Եղբօրին հրաման եղաւ որ ամէն ծառաներուն հաց բաժնէ. անալ որ բաժնեց ամանին կէսը հասաւ կերակ-րէն եաքը. և բեռին կէսը թեթեւցաւ անանկ որ շատ դիւրութը կերթար ճամբան: Իրի-կուան ալ նորէն բաժնեց ծառաներուն հաց. ուստի մէկալ օրը Եղբօրին ամանը պարպե-ցաւ. որ կռնակը զարկած աւանց աշխա-տանքի կերթար ամէնէն առաջ. որոնք չէի-տէին ինչ ըսեն. մինչեւ կը տարակուսէին, թէ իրենցմէ առաջ գացողը Եղբօրն էր թէ ուրիշ մարդ. բայց երբ գիտցան թէ այն է՝ շատ կըզարմանային իրեն ճարտարմտութիւնը վրայ. որ անանկ տգեղ անշնորհք մարդ ըլլա-լով ծաղր էր եղեր իրենց, ու այնպիսի խելք բանեցուց հացին ամանն առնելով. զի լաւ գիտէր թէ այն բեռը շատ չպիտի մնայ ի-րեն վրան: Իսկ ընկերներն ուրիշ բեռ առ-նելով՝ չի կրցան յոյս մը ունենալ, որ բե-

ուէն թեթևնան համբորդութե՛ն մէջ. որով-
հետև ծախվելու բաներ էին՝ չէին կրնար
պակսիլ ուտելու բանի պէս ։

## ԳԼ. Օ.

## Երկրորդ վաճառումն Եզոբոսի ։

Վաճառականը Ասիա հասաւ, և հոն իր գերիներուն շատը ծախեց աղէկ գնով. միայն երեք հոգի մնացին քովը. մէկը նոտար եազըճը, մէկը երգիչ հանէնտէ, մէկալն ալ Եզոբոս ։ Վաճառականին մէկ բարեկամը իրեն խորհուրդ կուտայ, թէ այս երեք գերին ծանր գնով ծախելու համար (*) Սամոս կղզին երթայ հոն ծախէ ։ Երբոր հասաւ հոն աղէկ լաթեր հագցուց նոտարին ու երգիչին, վաճառականը ֆաղարը հանեց, որ ծախէ ։ Բայց Եզոբոսին յարմար բան մը չի գտաւ հագցընելու, որ քիչ մը զարդարուի. որովհետև անանկ անձոռնի էր մարմինն՝ որ միայն մէկ քուրձ մազէ հագուստ մը կրցաւ

(*) Սամոս կղզի ըստ փմ. ուսմամ տառը է Եփեսոսին դիմացը միջերկրեան ծովին. որ հին ատենը շատ ընտիր իմաստասիրութիւն ելեր է և Էրնաքիւը անուանի էին. որ նաև աման ընկերը ատոնք փառք էր Պիւթիոս. այս կղզիէն էր Պիթագորաս փիլիսոփան ։

հոգցընել. և անանկ այլայլելով գրաւ ընկերներուն մէջ. որոնք որ կը տեսնէին՝ զարմանալով կըսէին, թէ այս հրէշս ուրիշ բանի չի գար, հապա մէկալնիք ալ կաւրէ : Եզոբոս թէպէտ միշտ անանկ ծաղր կըլլար անարգվելով ամէն տեսնողներէն. սակայն ամենեւին չէր այլայլէր, և ամենուն ուշ դնելով միակերպ կընայէր : (*) Քսանթոս փիլիսոփան անուանը Սամոս կղզին կը բնակէր. որ մի եղաւ վաճառականցը գնաց. երբոր տեսաւ թէ այն երկու ծառաները լաւ հագուած էին, և Եզոբոս անոնց մէջ անանկ անշնորհք հագուստով՝ շատ զարմացաւ վաճառականին հնարքին վրայ, թէ այն այլակերպ մարդը գրեր է մէկալնոց մէջին, որ անոր անշնորհք երեւնալովը մէկալնիք աւելի գեղեցիկ երեւնան :

Ասոր այս փիլիսոփան մօտենալով անոնց՝ հարցուց երգիչին, թէ ինչ տեղէ ես : Անալ պատասխան տըւաւ թէ (**) Կապադովկացի եմ: Հարցուց թէ ինչ գիտես ընել : Անալ

(*) Այս փիլիսոփան թէպէտ շատ երեւելի չէր, բայց այն կղզիին մէջ մեծ անուն ունէր. վասն զի տղոցին դպրատանը գլուխն էր, ու շատ աշկերտներ ունէր, և շատ մեծութի. մինչև ամենուն առջին յարգելի էր :

(**) Կապադովկիա կըսուի գաւառն. որուն բնակիչները գամիրք կըսուէին : Կեսարիա թէ այս գաւառին արևելեան կողմերէն էկած Կապադովկիա երթալով բան սորվեր է, կամ ծնօղքը հոն էկած փախած էն, և իրենց տղայն ալ գերի ըլլալով վաճառականը գներ է :

ըսաւ, ամէն բան գիտեմ: Այս պատասխա-
նիս վրայ խնդաց Եզօբոս ակռաները բանա-
լով: Քսանթոսին աշկերտները իրեն հետ
ըլլալով Եզօբոսին երեսն որ տեսան անանկ
ակռաները բաց, կարծեցին թէ մէկ ցու-
ցանկըմը է. որոնցմէ մէկը կըսէր, թէ ան-
տարակոյս այս մէկ կատղած կենդանի մը
պիտի ըլլայ, որ ակռաները բացաւ: Մէ-
կալն ալ կըսէր, թէ արդեօք ինչ բանի հա-
մար ծիծաղեցաւ: Մէկ ուրիշն ալ կըսէր,
թէ սովկալով խոժոռեցաւ ու դէմքը ծը-
ռեց, չէ թէ ծիծաղեցաւ: Ուստի ամէնքն
ալ ուզեցին հասկընալ անոր ծիծաղին պատ-
ճառը, մինչեւ մէկը մօտեցաւ Եզօբոսին հար-
ցուց, թէ ինչու համար անանկ խնդացիր:
Անալ ըսաց. գնա քալէ ծովու ոչխար:
Այս պատասխանս անանկ ամըչցուց զայն,
որ ամչնալով մէկէն փախաւ:

Իսկ Քսանթոս հարցուց վաճառականին,
թէ երգիչին գինը որչափ է: Անալ ըսաւ
հազար դահեկան: Քսանթոս տեսաւ որ
չափազանց է գինը, գնաց մէկալ գերիին
հարցուց. որ քաղքէն ես: Պատասխանեց,
թէ (*) Լիւդացի եմ: Ինչ բան գիտես հար-
ցուց: Անալ ըսաւ՝ ամէն բան գիտեմ: Ե-
զօբոս լսելով նորէն սկսաւ խնդալ: Այս
փիլիսոփային մէկ աշկերտը չգիտէր թէ ինչ
պատճառաւ կըխնդայ, ուզեց հարցընել.
բայց իր ընկերներէն մէկը զինքն արգելեց
ըսելով. թէ որ դուն ալ կուզես ծովու նո-

(*) Լիւդացի հին ատենը ազգ էին Ասիա-
յին փոքրին մէջ. որոնցմէ գերի ելած է Եզօբոսը.

խաղ կոչելու նէ հարցուր: Անատանէնը Քսանթոս մօտեցաւ վաճառականին հարցուց թէ քանի՞ է նօտարին գինը: Պատասխան տըւաւ թէ երեք հազար դահեկան:

Այս չափազանց գինը Քսանթոսին սիրտը նեղացուց, ուստի սկսաւ ետ դառնալ: Բայց աշկերտները հարցուցին թէ չի հաճեցա՞ր գերիներուն. հաճեցայ ըսաւ. իմ ուզածս էն. սակայն օրէնք դրած է, որ մէկ գերիի համար այդչափ ստակ չի տրուի: Եթէ այդպէս է ըսին՝ օրէնքի դէմ չըլլալու թէ որ տըգեղ գերին գնես. որ անոնց չափ քեզի ծառայութիւն կրնայ ընել. և մենք կըվճարենք անոր գինը ինչ որ կարժէ: Պատասխանեց Քսանթոս, թէ խելքի դէմ բան է, որ դուք գնէք՝ ես ծառայի տէր ըլլամ: Որ թողունք որ իմ ընկերս ուսելի զարդարանք և մեծութին կըսիրէ, նայինք կուզէ՞ ստանկ աղտոտ և այլանդակ ծառայ: Անոնք ալ ըսին թէ այս պատճառը չի կրնար խափանել, որ չգնես այն գերին. որովհետև առակ մը կայ կըսէ, որ պէտք չէ հնազանդիլ կնկան խօսքին, և անոնց շատ մեղք ընել:

Քսանթոս ըսաւ, թէ քանի որ չենք գնած երթանք նայինք բան մը գիտէ՞. չըլլա՞յ թէ ծովը նետենք տըուած ստակնիս: Ուստի մօտեցաւ Եզոպոսին ըսաց. ուրախ կեցիր: Ինչու համար՝ հարցուց Եզոպոս. միթէ ես տըրտմած եմ: Քեզի կըբարևեմ ըսաւ Քսանթոս. անալ ըսաւ և ես քեզ կըբարևեմ: Անոնք զարմացան այս շնորհքով պատասխանին վրան: Հարցուց Քսանթոս, թէ դուն ուստի՞ ես: Ես ըսաց՝ սև եմ: Այն չէ հար-

ցուցածս բառ. ես կուզեմ իմանալ, թէ ո՞ր քաղքէն ես, և ո՞ւր տեղէն: Ես մօրմէս ելեր եմ, բայց Եղբօրս:

Այն չեմ ուզեր գիտնալ՝ բառ, հապա ո՞ւր տեղ ծնած ես: Պատասխանեց Եղբօրս. թէ իմ մայրս չէ պատմած ինձի, թէ ո՞ւր ծնած եմ. տանը վե՞րը, թէ բակը (*):

Ի՞նչ բան գիտես՝ հարցուց Քամնգոս: Անալ բայց՝ բան մը չգիտեմ: Ի՞նչ ըսել կուզես՝ հարցուց: Պատասխան տուաւ Եղբօրս. որովհետև այս գերիները ըսին, թէ ամէն բան գիտենք. ինձի բան մը չի մնաց գիտնալու: Այս խօսքերուս վրա խիստ շատ զարմացան փիլիսոփային աշկերտները: Իրաւ որ, կըսէին զարմանալով, այս մարդը յայտնի ըրաւ իրեն խելքին ու միտքը այս խօսքերովս. ով կրնայ պարծենալ, թէ ամէն բան գիտեմ. ահա այս է եղեր պատճառն որ կըխնդար և ծաղր կընէր անոնց տուած պատասխանը:

Դորէն հարցուց Քամնգոս, կուզե՞ս որ քեզ գնեմ. անալ բառ, թէ այս խօսքդ ամենևին ինձի հարցընելու բան չէ. կուզես գնէ, կուզես մի գներ. քու միտքդ ինչ որ կըվկայէ, զայն ըրէ. պէտք չէ որ մարդ բանի անկարելի բան ընէ. այս գործքս բոլորովին քուկին կամքէդ կըկախի: Թէ որ կուզես զիս գնել, բայց քանիդ ու առակ

(*) Հին աթենքի իմաստասէրներուն մէջ ուսերամի էր այսպիսի հարցմամբ պատասխան ընել: Եղբօրս անանց ուսերամբնը նայելով այս ոճը իմանելով՝ զարմացաց իմաստասէրները:

համրի՝ . և եթէ չես ուզեր գնել, հանգիս-
տացի՛ր, այլ մի՛ խնդար վրաս ։ Աշկերտնե-
րը ըսին, թէ ճշմարիտ որ մեր վար-
պետին յաղթեց ։ Թէ քեզ գնեմ ըսաց Քսան-
դոս, պիտի ջանա՞ս փախչելու ։ Եզոպոս ծի-
ծաղելով ըսաց. եթէ ուզենամ փախչիլ, քեզի
չեմ հարցըներ, ինչպէս որ քեզ ալ պէտք չէ
ինծի հարցընել ։ Լաւ կը խօսիս ըսաց Քսան-
դոս, բայց խիստ այլանդակ ես ։ Պատաս-
խանեց Եզոպոս, թէ փիլիսոփային կը վայլէ
որ մարդուս խելքին ու հոգուն նայի, չէ
թէ դէմքին ։

Անտանկը Քսանդոս գնաց վաճառակա-
նին հարցուց, թէ այս գերիին գինը ի՞նչ
է ։ Անալ ըսաց թէ եկեր ես որ իմ գերի-
ներս վա՞ր զարնես, լաւ և գեղեցիկ գերի-
ներս չուզեցիր գնելու. հիմա եկեր տգեղ
մարդուն տէր կ'ըլլաս. կուզես մէկալ երկու-
սին մէկը գնէ. ասալ անոնց վրա առ. առանց
ստըկի ։ Չէ ըսաւ Քսանդոս, ես պիտի զաս
գնեմ ։ Ուրեմն տուր ըսաց վաթսուն դահե-
կան ։ Քսանդոսին աշկերտները շուտով համ-
րեցին ստակը, և գնեցին Եզոպոս ։ Մաք-
սաւորները [illegible] եկան քննելու, թէ
ո՞վ է ծախողը, և ո՞վ է գնողը. բայց երբոր
հասկըցան, թէ ոչինչ գնով է ծախուածը,
ամչցան ։ Իսկ Եզոպոս ոտքի վրա ելաւ կան-
չեց. թէ ահա ես եմ ծախուողը. ահա զիս
ծախողը և գնողը. թէ որ ասոնք ձայն չեն հա-
նեն, ես ազատ կ'ըլլամ ։ Մաքսաւորները
ծիծաղելով մաքս չառած ելան գացին ։

# ԳԼ. Ե.

## Եզովբոս երթայ 'ի տուն։

Երբոր Քսանթոս տուն դարձաւ պատուէրեց Եզովբոսին, որ դուռը քով սպասէ, որովհետև գիտէր որ կնիկը բանի մը չէր հաւնէր, այն այլանդակին որ տեսնէ՝ չըլլայ թէ բարկանայ, ուզեց նախ անուշ քաղաքավար խօսքերով սիրտը շահել, ու յետոյ ներս բերել կոչա Եզովբոսը։ Քսանթոս ներս մտաւ, մօտեցաւ կնկանն ըսաց, թէ Տիրուհի ասկէ ետև այլ երբեք չես զարներ աղախիններուդ աշխատանքը. ահա քեզի ծառայ մը գնեցի, որ իմ աչքիս անանկ աղուոր շնորհքով է, որ այնպիսի սիրուն մարդ չես տեսած. ահա դուռը քով կեցեր է։ Երբոր ասանկ կըխօսէր՝ աղախինները վազեցին որ տեսնեն, և կը մտմըտային, թէ որերնուն հետ պիտի բարեկամ ըլլայ։ Իսկ Տիրուհին հրամեց, որ ներս գայ նոր գերին։ Աղախիններուն մէկը վազեց կանչելու համար, երբոր տեսաւ, դո՛ւն ես ըսաւ Եզովբոս ծառան. թէ որ դուն ես՝ ներս մի՛ մտներ. վըզի քեզ տեսածնուն պէս ամէնքը պիտի փախչին։ Մէ՛կ ուրիշն ալ դուրս ելաւ ծաղր ընելով կըսէր, թէ դէմքդ փոխէ, անանկ ներս մտիր։

Եզովբոս ներս մտաւ գնաց Տիրուհիին առ-

ջին․ որ տեսածին պէս աչքը դարձուց Եր-
կանն ըսաց․ ո՞ւր տեղէն փնտըռեցիր գտար
այս ցուցանքս․ վերցուր աղջիկս վերցուր։
Կաղաչէր Քսանթոս, թէ մի՛ խռովիր․ մի
անարգէր նոր գերիս։ Ես ինչպէս կրնամ
համբերել կըսէր կինը․ ահա առով հասկը-
ցայ որ դուն զիս քամահրել կուզես, ու կա-
տես․ կերեւնայ, թէ ուրիշ մը կուզես բե-
րել․ անոր համար այս գերին բերիր, որ ես
խամէ երթամ տնէն․ ուրեմն տուր իմ բա-
ներս, ես կերթամ։

Քսանթոս տեսաւ որ չըլլար, սկսաւ ա-
նարգելով ըսել Եզոբոսին, թէ ամէն բանի
պատասխան կուտայիր, հիմա ինչո՞ւ կնկանս
բան մը չես զուրցեր։ Պատասխանեց Եզո-
բոս, թէ՛ մէկ փոսի մը մէջ ձգէ կնիկդ։
Կտրէ ձայնդ ըսաց, շատ մի՛ խօսիր սիրել-
ընկերոջս դէմ։ Եզոբոս ոտքը գետինը զար-
նելով կըսէր, թէ ահա տրս գերի բռնուած
է կնոջմէն։ Ո՛վ մեծդ (*) Եւրիպիդէս չու-
նիմ քու Ճարտասանութիւնդ որ քեզի պէս խօ-
սիմ․ խէտա լաւ կըսէիր, թէ Ծովուն կա

(*) Եւրիպիդէս էր յոյն բանաստեղծ երեւելի [illegible]
[illegible]
[illegible] որ անոնց դրին կանանց թշնամ-
[illegible] այս բաներէն բերած է Եզոբոս այս խօսքս։

տաղութիւնը սոսկալի է, գետերուն առատանալը սարսափելի է, կրակին բռնութիւնը աղէտալի է, և աղքատութիւնը անտանելի խեղճութիւն է. հազար կերպ պատահմունքներ կան, որ տրտմութիւն և վիշտ կը բերեն. սակայն անզգամ կնիկը ամէն չարութիւններէն աւելի է ||: Այս գիտնական բանիս վրա մտածելով մէկ Տիրուհի, քեզի շատ մեծ բան է որ աստնկ փիլիսոփայի կնիկ ես եղեր. խելքդ գլուխդ ժողվէ, չըլլայ թէ աղւոր մանուկ ծառայ առնես քեզի, որ անպատւութիւն մը չի բերես ընկերոջդ:

Այս խօսքս կնկանը խելքը տարաւ, անանկ որ չէր գիտէր ինչ պատասխան տայ. մինչև դարձաւ երկանն ըսաւ թէ ուստի՞ գըտար այս շնորհքով գերին. իրաւ կըսեմ, որչափ տգեղ և այլանդակ է, այնչափ սիրելի և անոյշ է. ուրեմն ես հետը կըվարվիլ կուզեմ: Քսանթոս դարձաւ Եզոբոսին ըսաւ, թէ ահա Տիրուհիդ քեզի հետ հաշտուեցաւ: Պատասխանեց Եզոբոս, թէ ուրեմն այնչափ խեղճ մարդ չեմ եղեր ես. որովհետև մէկ կնիկ մը հաշտեցընելը պզտիկ բան չէ: Զայնդվոր քաջէ ըսաց տրը. ես քեզ գնեցի, որ իմ ծառայութիւն ընես, չէ թէ գիտնակութիւն:

# ԳԼ. Բ.

## Պատասխանատուութիւն Եզովբոսի։

Քսանթոս մէկալ օրը հետն առաւ Եզովբոսն ու գնաց պարտէզ մը բանջարեղէն գնելու համար։ Եզովբոս առաւ ձեռքը պարտիզպանին ժողված կանանչեղէնները. Քսանթոս ստակը տալու ատենը, պարտիզպանը այս խօսքս ըսաց. Կաղաչեմ, մէկ բան մը պիտի հարցընեմ, ինձի պատասխան տուր։ Ի՛նչ է տարակոյսդ հարցո՛ւր ըսաւ։ Չեմ հասկընար՝ կըսէր, ինչու համար բանջարեղէն բոյսերն, որ այնչափ հոգ տանելով կը տնկեմ, կը ջրեմ, ու սանկ ուշ, և դժուարաւ առաջ կուգան. և ընդհակառակն՝ ինքիրմէ բուսած խոտերը առանց փորելու և ջրելու շուտ առաջ կուգան. ինչ է պատճառը։

Այս խօսքս Թէպէտ փիլիսոփայական խնդիր է, բայց Քսանթոս չի կրցաւ լուծելու. այլ մէկ ընդհանուր պատասխան մը տըւաւ, Թէ այդ Նախախնամութեան գործքն է, որ ամէն բան կը կարգաւորէ (*)։

(*) Նախախնամութեան [illegible] [illegible] [illegible]. Հին քրիստոնեաները [illegible] [illegible] [illegible] կառավարութիւն, որ ամէն բան իր կամքովը անանկ կը կարգադրէ՝ որ իրենց [illegible] կը հասնին, Կա[illegible]

Եղբօրս լսելով սկսաւ այս պատասխանիս վրայ խնդալ: Չէս ծաղր կընես, ըսաց փիլիսոփան, թէ կըծիծաղիս: Պատասխան տըւաւ Եղբայրս, թէ իրաւ ծաղր կընեմ, չէ թէ հրամանքդ. հապա քեզի սորվեցընողը. վ՟ն զի անանկ մէկ հասարակ պատասխան մը տուիր, որ գիտուններըն ամէն հարցմունքի կընան տալ. որոնք բաւական կըկարծեն ըսել, թէ ամէն բան իւր նախախնամութիւն կըկառավարէ: Ինծի հրաման տուր ես պատասխանեմ պարոնէզպանին. տեսնես թէ ի՞նչպէս կըհանգչի սիրտը: Անատէնը Քըռանդոս դարձաւ պարոնէզպանին ըսաւ, թէ վայելուչ բան չէ, որ ես երևելի դպրատուններու մէջ փիլիսոփայութիւն ըրած եմ, հիմա կենամ պարոնէզի մէջ բան վարդապետեմ. ահա իմ ծառաս ալ կընայ քու հարցմունքդ քակել, թէ որ իրեն զուրցես. վ՟ն զի հմուտ է սանկ բաներու պատասխան տալ:

Կըրկնեց պարոնէզպանը, թէ բէ՛հ կընայ ըլլալ, որ սանկ անշնորհք կոշտ մարդը կարդալ բան գիտնայ. ո՛րչափ խեղճ բան է սանկ ոգեղ ըլլալը: Տեսնենք կընամ իմ տարակուսանքս լուծել, և սիրտս հանգչեցընել այս ըսած բանիս վրայ: Եղբայրս սկսաւ ասանկ պատասխան տալ. երբոր մէկ կինմը երկու անգամ կըկարգըվի, ու առջի էրկը-

[illegible]

նէն զաւակներ ունի • և աւած մարդն ալ առջի կնոջմէն զաւակներ ունի • յայտնի է որ այս կնկանը հարազատ զաւակները հօրը բերածներն են • և էրկանը զաւակները իրեն խորթ են • այս պատճառաւ տարբեր կերպով զանոնք կը նայի • մեծ հոգ կընէ, որ լաւ պահէ աղէկ կերցընէ • և մեծ սիրով խնամէ իր ծնածները ։ Իսկ էրկանը զաւակները չէ թէ միայն այնպէս չի նայիր, հապա շատ անգամ կատէ, և ոտքի տակ կառնէ • անանկ որ զանոնք կը զրկէ, անոնցմէ կը քաշէ, ու իր զաւկըներուն կուտայ • և այնպիսի ընական գութ մը կըցրցնէ իրեններուն, որ կարծես թէ իր մարմինին կտորվանքն են • ասոր հակառակ, մէկալոնք ստաըի աչքով նայելով միշտ կըջախէ ։ Անանկ ալ հողը մայր կը սեպվի ամէն բուսած բաներուն • բայց քու անկածներդ անոր խորթ զաւակներն են • և իր բուսուցածները բուն հարազատ զաւակ ըլլալով աւելի հոգ կըտանի, ու կաճեցընէ • ուստի քու անկածներդ խորթ ըլլալով քիչ սնունդ կուտայ, որ շատ չեն կրնար աճիլ • վն զի օտար են ։

Այս պատասխանը անանկ հանգչեցուց պարտէզպանին սիրտն որ մէկէն կանչեց Եզոպոսին, թէ ես քեզի մեծապէս շնորհակալ եմ, որ մեծ տարակուսանքէս զիս ազատեցիր, և սիրտս հանգիստ ըրիր ։ Ուստի երթաս բարով, որչափ բանջար [illegible] կուզես առ գնա առանց ստակի, և որ ժամանակ պէտք ըլլայ՝ եկուր առ • ասկէ ետև քու պարտէզիդ պէս պահէ դաս հոս բան առնես ։

## ԳԼ. Թ.

## Խորամանկութիւն Եզովբոսի.

Բանի մը օր անցնելէն ետև Քսանթոս բաղնիք գնաց, հոն մէկ քանի բարեկամներ գտաւ. պատուիրեց Եզոբոսին, որ վազելով երթայ տուն՝ իրեն ոսպ մը եփէ: Եզոբոս մէկէն տուն գնաց, ու սատանութիւն բանեցնելով, մէկ հատ ոսպ մը առաւ պտուկին մէջ դրաւ եփեց: Իսկ Քսանթոս բաղնիքէն ետև աղաչեց բարեկամներուն, որ կերակուրը տունն ուտեն, և հասկցուց, թէ ես մէկ հարկիք մը չունիմ. միայն թեթև ոսպ ապուր մը պիտի ուտենք: Ասով ըսաց, թէ չի վայլեր շատ անուշ կերակուրներով բարեկամ փորձել. հապա աւելի պէտք է սիրոյն նայիլ:

Անոնք ալ Քսանթոսի հարկիքն ընդունեցան, տունը եկան: Տէրը կանչեց Եզոբոսին, թէ մեզի մէկ բաղնիքի ջուր մը բեր, որ լըվանանք քիչ մը: Վազեց Եզոբոս գնաց բաղնիքին լըւացված ջուրը բերաւ սիրոջը տըւաւ. Երբոր բերանն առաւ, զարշահոտին չդիմանալով ըսաւ. ուսկի՞ բերիր այս ջուրը: Բաղնիքէն բերի ըսաւ, ինչպէս որ ինծի պատուիրեցիր: Քսանթոս բարեկամներուն առջին բանեց բարկութիւն, ու հրամեց Եզոբոսին, որ իրեն մէկ կոնք մէկէն մը բերէ: Ա-

նալ բերաւ, ոտքի վրայ կեցաւ ։ Ձի լըւամս, ըսաց ո՞րը. չէ՛, ըսաւ. վա՛յ ղի ինձի ինչ որ ըսիր, այն ըրի. Թո՛ղ ըսէիր, թէ ջուր լե՛ց կո՛նքը, ոտքս լըւամ. բե՛ր հողաթափներս, և բոլոր բաներս ։ Քսանթոս դարձաւ բարեկամներուն ըսաւ, թէ այս գնած մարդս գերի չէ, հապա վարդապետ է ։ Երբոր սեղան նստան Քսանթոս հարցուց Եզոպոսին, թէ եղա՞ւ ոսպը ։ Եզոպոսն ալ բերաւ դդալով մէկ ոսպն որ եփեր էր ։ Տէրը բռնեց մատովը սխմեց, ըսաց. թէ լաւ եփած է բեր ։ Եզոպոս լեցուց ջուրն ու բերաւ ամանով սեղանը ։ Հարցուց Քսանթոս, թէ ո՞ւր է ոսպը ։ Քեզի տըւի ըսաց ։ Ինչ, մէկ հա՞տ մը եփեցիր ։ Հրամերես ըսաւ. վա՛յ ղի դուն որոշ ըսիր, թէ ինձի ոսպ մը եփէ. ոսպեր եփէ՛ չըսիր ։ Այս խօսքովս խիստ տաքցաւ Քսանթոս. մինչև ըսաց բարեկամներուն, թէ թողութիւն ըրէք ծառայիս յիմարութենը. որ մարդը խենթ կը դարձընէ ։

Հա՛ս եկող ըսաց Եզոպոսին անգամ մը ծառայ. գնա՛ խոզի չորս ոտք գնէ՛. և շուտ մը եփէ, որ ուտենք ։ Եզոպոս գնաց շուտով բերաւ. երբոր ոտքերը կեփէին՝ Քսանթոս գնաց ծածուկ ոտքին մէկը գողցաւ Եզոպոսին հոն չեղած ատենը. որպէս զի պատճառ ընելով լաւ մը ծեծէ զայն ։

Քիչմը կանցնի Եզոպոս ալ կուգայ կը նայի, որ պտուկին մէջ երեք ոտք կան. կը հասկընայ խարդախութիւնը. ուստի վազէ կերթայ տանը պահած խոզին մէկ ոտքը կըտրէ՝ քերթէ, կըդնէ մէկալոնց հետ կեփէ ։ Քսանթոս կըվախնայ, որ Եզոպոս տեսնելով

ոտքին մէկը պակաս, չըլլայ թէ փախչի. պահած ոտքը կըբերէ մէջը կը ձգէ։ Եփած ոտքերն որ առաջ բերաւ, Քանդոս տեսաւ թէ հինգ են։ Ի՛նչ է այս ըսաց Եզոբոսին. ես քեզի չըսի՞ որ չորս ոտք գնես։ Հրամեր ես ըսաւ. բայց երկու խոզին ոտքերը քանի՞ կըլլան. ութը. ահա դուն հինգ հատ տեսար հոս. երեք ալ վարի խոզն ունի, որ կըպահես։

Քանդոս այս խօսքիս վրա սաստիկ բարկանալով կըսէր բարեկամներուն, թէ ես իրաւունք չունիմ, որ կըսեմ, թէ այս ծառան իմ խելքս գլխէս պիտի առնի։ Եզոբոս ուզեց պատճառով խօսիլ տիրոջը հետ. Տէ՛ր իմ ըսաց չկյտե՞ս որ թուաբանութեան մէջ որչափ հանում ըլլայ քանակութենէ, այնչափ ալ յաւելում որ ըլլայ, գումարը սխալ չըլլար։ Ուստի Քանդոս չի կրցաւ պատճառ մը գտնել, որ Եզոբոսին ծեծ մը տայ, սկսաւ սիրտն լինջնիլ (*)։

(*) Եզոբոս երկու պատճառաւ այս խաբէութիւները բանեցաւ. նախ ուզեց տիրոջը սիրը վիրաւորել, և իր ինչպէս մարդ ըլլալը անոր հասկըցնել, որ ձրիահաճ երթայ հետը. երկրորդ՝ ուզեց կէծիկներ ըլլալ անոր ըրած անարգանքը. անով հասկընայ, որ եթէ առաջին իրեն նեղութիւն տալ ուզէ, մարդոց մէջ շիներ ծաղր ընելով տեղը կը հանէ։

## ԳԼ. Ժ.

## Վրէժխնդրութիւն Եզովբոսի:

Անգամ որ Քսանթոսի մէկ աշկերտը մեծ
հարկիք մ' ըրաւ իր վարպետին, և բոլոր ըն-
կերներուն: Քսանթոս սեղանին վրայ որչափ
լաւ և համով կերակուրներ կար, մէյմէկ
քիչ կը վերցընէր Եզովբոսին կուտար, որ ե-
տին կայնած էր: Ասանք տուն տար կըսէր
իմ բարեկամիս տուր: Եզովբոս առաւ գնաց.
բայց Ճամբան ինքիրեն մտմըտալով կըսէր,
թէ ահա՛ խիստ աղէկ տեղն եկաւ, որ վրէժ-
խնդիր ըլլամ մեր Տիրուհիին. որ հասկընայ
անանկ իմ վրաս անողորմ խնդալն, ու սիրտ
ծակելը՝ երբոր զիս առջի անգամ տեսաւ.
Ես ալ հիմա փորձեմ, նայինք կը սիրէ՞ սըր-
տանց մեր տէրը: Երբ տուն հասաւ Եզովբոս
կանչեց Տիրուհին, և Քսանթոսի տըւած
կերակուրները առջին դրաւ՝ ըսաց. ահա՛
ասանք իմ տէրս խրկեց. բայց քեզի չի խրկեց,
իրեն բարեկամ սիրականին խրկեց: Շուտ
մը կանչեց տիրոջը պզտի շունն որ հոն կը
կենար. ա՛ռ ա՛ռ որիկ կըսէր, կեր տէրս հրա-
մեց, որ քեզի տամ. և այսպէս բոլորը կե-
ցուց շանը: Յետոյ դարձաւ գնաց տիրոջն
ըսաց, որ տըւի և բոլորն իմ առջևս կերաւ:
Ուտելու ատենը բան մը զուրցե՞ց, ըսաւ

Քանդոս ։ Չէ բայց, բայց մտքովս չհոր-հակալ կըլլար տրուեԹեդ ։

Իսկ Քանդոսի կնիկը սաստիկ նեղացաւ, որ ընկերին իրեն բան մը չի խրկեց հարկէ-քէն. միտքը դրեր էր Թէ այս եղած բանը նշան է Թէ զինքը աչքէ ձգեր է. և իր սէ-րը պաղած է. որովհետև հոս տարուան ան-ըն չանըր, քան Թէ իրեն. ուստի սակալն տրտունջներ կընէր, և վշտանալով բարկա-նար ու կըսէր, Թէ այլ չպիտի նայի երկանն երեսը. և այսպէս իր խուցին մէջ փակված անանկ կուլար, որ աշխարհք կըփլցընէր. և ամենեքին չէր ուզեր միխիԹարվիլ այս ըրած բանին համար ։

Բայց հարկէքը լաւ մը չէնցաւ գինին խմե-լով. երբոր զուարճուԹեան մէջ էին՝ սկսան ամէն մէկը իրարու հետ հակաճառուԹիւն ը-նել զանազան բաներու վրայ ։ Անոնցմէ մէ-կը աւելի բարակամիտ և հետադրդիւ ըլլա-լով հարցուց՝ Թէ մի ատեն կըլլայ աւելի հակառակուԹիւն և անկարգուԹիւն մարդկանց մէջ ։ Եղբորս այս հարցընողին եախն ըլլալով պատասխանեց, Թէ ամտնը կըլլայ երբոր մեռելները յարուԹիւն կառնեն. վասն զի ամէ-նքը ինչ որ ունէին (*) աշխարհքիս մէջ մէ-

(*) Աստղաբաշխ փիլիսոփաներուն շատը գիտեին, որ մէկ օր մը մեռելները յարուԹիւն պիտի առնեն. որովհետև կընայէին որ ամէն մարդիկ հոս նեղուԹիւն կըտային մարմնոյ, և քէչ մարդիկ լաւ կապրին. հարկաւ ատոնց հատուցում պիտի ըլլայ կըսէին, մանաւանդ՝ Պղատոնի աշկերտները. որոնք մեռածներուն կարդացած լաւ բանի կապային ։

զմէկզէ կըպահանջէն: Քսանթոսի աշկերտները խնդալով այս խօսքիս վրա, միաբան խոստովանեցան, թէ Եզոբոս խիստ մտաւոր մարդ է:

Մ՚էկ ուրիշն ալ հարցուց, թէ ինչո՞ւ համար երբ մսագործը կըքաշէ ոչխարը՝ չի պոռար, ու խոզը սոսկալի կըպոռայ: Պատասխան տըւաւ Եզոբոս, թէ ոչխարը սորված է որ կաթը քաշեն, և վրայի բուրդը խուզեն. ուստի ձայն չի հաներ, թող կուտայ, որ զինքը բռնեն քաշեն ոտքէն. ինքն ալ լըռութ̅ը կերթայ ետևնուն, անտարակոյս գիտէ թէ իրեն նեղութի պիտի տան: Բայց խոզը ոչ կաթ կուտայ, ոչ բուրդ, ոչ կըկապէն, և ոչ ոտքէն կըքաշէն. գիտէ որ մարմինէն ՚ի զատ ուրիշ բան մը չունի. ուստի այս պատճառաւ կըպոռայ, կըկանչէ երբոր իրեն կըդպչի մսագործը: Ական այս պատասխանիս վրան ալ խնդալ Քսանթոսի աշկերտները. և մեծ գովեստներ տըւին Եզոբոսին:

Կերակուրը լմընցածին պէս Քսանթոս տուն դարձաւ. հարցուց թէ ուր է կնիկն որ հետը խօսի, ինչպէս սովորութի ունէր: Բայց կնիկը ծուռ ծուռ նայելով անոր ըսաց. հեռո՛ւ գնա. տո՛ւր ինծի իմ բաներս, որ երթամ քու անէդ. աւկէ ետքը ես չեմ կրնար քու տանդ մէջ քեզի հետ մնալ. գնա՛ գնա՛ քու շունդ սիրէ, որուն որ հարկէլին բաները խրկեցիր: Քսանթոս խիստ զարմանալով սաստիկ անմիտ անարգանացը վրա, չէր գիտեր ի՞նչ ընէ. և ի՞նչ պատասխան տայ. կըսէր թէ առանց կարծեաց Եզոբո-

որ բանմ՝ ըրեր է։ Դարձաւ կնկանն ըսաւ, Թէ Տէրունի, ես խմեցի՝ զմեն գինովցայ. ես այն պատուական բաները որմեն խրկեցի. քեզի չի խրկեցի՞։ Երդում կընեմ ըսաց կնիկը, Թէ ինծի բան մը չեկաւ, հապա շանը եկաւ։ Հիմա եկող ըսաց Եղբօրմին. որմեն առուիր այն կերակուրները։ Որմեն պիտի տամ ըսաւ, քու սիրականիդ տուի։

Դարձաւ Քանդոս կնկանն ըսաւ, Թէ դուն բան մը չե՞ս առած։ Ամէնեին բան առած չեմ ըսաց։ Տէ՛ր իմ ըսաւ Եղբօրս դուն սիրականիդ չի խրկեցի՞ր։ Կանչեց շունն ըսաւ. ահա բարեխօս սիրականդ. որ ամենէն աւելի քեզ կըսիրէ, և քեզի բարի կուզէ։ Վասն զի Թէպէտ կինդ կըվկայէ, Թէ քեզ շատ կըսիրէ. բայց պզտի բանէ մը նեղացածին պէս, քեզի դէմ կելլէ կըխռովի. կըպարսաւէ անարգելով, կըչարանայ, որ քեզ ձգէ։ Իսկ շունը Թէպէտ ծեծ ուտէ, անօթի մնայ վռընտըլի, ամէնեին չի փախչիր. բոլորը կըմոռնայ, քեզ կըսիրէ շողոքորթելով, և ամէն երախտագիտութեն նըշանները կուտայ։

Ուստի պէտք էր որ ըսէիր տէ՛ր իմ, Թէ կնկանս սէրը, չէ Թէ բարեկամս։ Քանդոս դարձաւ ըսաց կնկանը. կըտեսնե՞ս Տէրուհի, այս պակասութիւնը իմս չէ, հապա Եղբօրս է. ուրեմն համբերէ՛, հանդարտ կեցիր, ես ծեծով անոր վրէժխնդիր կըլլամ։ Այս պատասխանը բաւական չեղաւ անոր սիրտը հանդչեցընելու. նոյնպէս ծածուկ մը անէն ելաւ գնաց հօրը տունը։ Անատենը դարձաւ Եղբօրս ըսաւ սիրոջը, Թէ ես քե-

զի չըսէ՛, թէ քու շունդ կնոջմէդ աւելի քեզ կըսիրէ։

## ԳԼ. ԺԲ.

### Եզովբոս դարձուցանէ զտիկինն 'ի տուն։

Քանի մը օր անցաւ. Քսանթոս չի կրցաւ կնկանը սիրտն առնել ո՛չ աղաչանքով և ո՛չ շողոքորթելով. ուստի դրաւ իրեն ազգականները խրկեց որ հաշտեցընեն, և մոռնայ սըրտին նեղութիւնը. բայց ամէնեին միտք չըրաւ. ան աւելի կատղեցաւ։ Այս ըրած անզգամութիւնը խիստ ցաւցուց Քսանթոսին սիրտը։

Եզովբոս եկաւ քովը ըսաց մի վշտանար տէր իմ, մի տրտմիր պարապ տեղը. ես քեզի խօսք կուտամ, որ կնիկդ վաղը ինքիրեն կուգայ հոս։ Քանի մը դրամ առաւ անկէ գընաց գնելու հաւեր՝ թռչուններ՝ որսեր, և այլ հարկաւոր բաներ մեծ հարկիքի մը։ Զասոնք բերելու ատենը անէ տուն պըտըտելով կուգար. յետոյ եկաւ Տիրուհիին հօրը տանը առջեէն անցաւ, այս մտքով, որ տեսնեն առած բաները առանց իմացընելու, թէ ինչը գիտէ որուն տուն ըլլալը, և Տիրուհիին հօր ըլլալը։

Յանկարծ հանդիպեցաւ անոնց ծառային հարցուց, թէ արդեօք ունի՞ն ծախու բաներ հարսնեաց հարկիքի համար։ Որո՞ւն հա,

մոր կուզէս ըսաւ ծառան ։ Պատասխանեց թէ Քսանթոս փիլիսոփային համար, որ վաղը պիտի կարգըվի ։ Ծառան շուտմը ներս վազեց պատմեց կնկանը․ որ առանց ուշանալու մէկէն ելաւ գնաց երկանը տունը Եւ այնպէս խռոված անհանգիստ էր, որ արանջելով կըսէր Քսանթոսին, թէ քեզի կըվայլէ՞ կարգըվիլ ուրիշին հետ քանի որ ես կամ։ Ահա այսպէս մնաց երկանը քով Եզոպոսին հնարքովը․ ինչպէս որ անոր պատճառովը գացեր էր, անանկ ալ եկաւ ։

## ԳԼ․ ԺԲ․

### Սպաս Եզոպոսի ։

Քսանթոս ուզեց օր մը իր աշկերտներուն կերակուր ընել․ Եզոպոսին պատուիրեց որ երթայ որչափ լաւ պատուական բան կայ պանոկը գնէ ։ Եզոպոս երթալու ատենը կըսէր թէ պիտի հասկըցընեմ տէրոջս, որ ուրիշ անգամ ինծի ասանկ անխելք բան չի հրամէ ։ Ուստի գնաց մէկ քանի խոզի լեզու առաւ պատրաստեց հացկէրին համար, և ամենուն առջին դրաւ մէյմէկ լեզու խաշված համեմով պահարը ։ Աշկերտները հաճեցան, որ փիլիսոփային գործը է առջի կերակուրը լեզու բերել․ ինչպէս լեզուն ամէն լաւ խորհուրդները կըյայտնէ ։ Իսկ Եզոբոս երկրորդ կերակուրն ալ խաշած լեզու

բերաւ։ Երբոր երրորդ կերակուրն ուզեցին, նոյնը լեզու բերաւ։ Այս բանին վըրայ սրտերնին նեղացաւ. վասն զի լեզու ուտելով ձանձրացեր էին. մինչև բարկանալով ըսին Եզոպոսին, թէ մենք մինչև իրիկուն լեզու՞ պիտի ուտենք։ Բայց Եզոպոս առանց նայելու անոնց տրտունջքին նորէն լեզու գըրաւ անոնց առջին։ Ուստի Քսանթոս բարկանալով կանչեց, թէ ուրիշ բան մը չի կայ, որ բերես։ Պատասխանեց Եզոպոս հանգիստ սրտով մը, թէ չի կայ։ Ի՞նչ կըխօսիս թըշուառական կըսէր, ես քեզի չիպատուիրեցի՞ որ պատուական համով բաներ գտնես. սկսաւ անարգել զինքը փիլիսոփաներուն առջին։

Շնորհակալ եմ բաւ Եզոպոս՝ ըրած նախատանքիդ վրայ. բայց խնդրեմ՝ լեզուէն անոյշ և պատուական ի՞նչ բան կայ աշխարհքիս մէջ. աս ամէն ուսում և իմաստութիւն լեզուով կըլլայ. ամէն բան անով կառնենք կուտանք, ողօթք, առևտրութիւն, մարդավարութիւն, հարսնախօսութիւն, և ամէն ճոռոմութիւն լեզուով կըլլայ. քաղաքներ անով կըշինուին. և ամէն մարդ լեզուով կըվճարէ իրեն գործքը։ Ուրեմն ես կըհաստատեմ և լաւ գիտեմ, թէ լեզուէն գերազանց բան չի կայ աշխարհքիս մէջ։ Բոլոր նստողները հաւնելով այս պատճառներուս միաբան վըճռեցին, թէ Եզոպոս իրաւունք ունի, և Քըսանթոսի բարկութիւնը անիրաւ է։ Եւ այսպէս ամէն մարդ տուն դարձաւ։

# ԳԼ. ԺԳ.

## Երկրորդ սպաս Եզովբոսի ։

Քսանթոսի աշկերտները քանի մը օրէն ետեւ երեսը զարկին ըրած հարկիքը։ Անալ անպարտ զինքը ցըցուց ըսելով, թէ այդ բանը մինչեւ ալ չէր անցած. իմ ծառայիս չարութենէն անանկ եղաւ. բայց փորձը այսօր ամէն բան կըյայտնէ. ահա ձեր առջին իրեն կըպատուիրեմ։ Այս խօսքիս վրա Եզոբոս ալ հոն եկաւ։ Տէրն ըսաց որ գնա՛ որչափ գէշ բան գտնես գնէ, որ հարկիքը ընեմ այս պարոններուն։

Եզոբոս գնաց նոյնպէս լեզու գնեց, պատրաստեց սեղան բերաւ։ Ամէնքը արտնջալով սկսան իրարու զուըցել, թէ այս ինչպէս բան է. միշտ լեզո՞ւ պիտի ուտենք։ Քիչ մը անցաւ, նորէն լեզու բերաւ։ Երրորդ անգամ ալ լեզու բերաւ սեղանը։ Ալ չդիմացաւ Քսանթոս բարկութեամբ կըպոռար. դուն ինչպէս խօսք կըհասկընաս Ե՛զոբ. երբոր քեզի ըսի պատուական կերակուր գնէ, դուն գացիր լեզու գնեցիր. և երբոր պատուիրեցի անշահ կերակուր գնէ, նոյնպէս գացիր լեզու գնեցիր։

Ճշմարիտ է խօսքդ ըսաց Եզոբոս. բայց լեզուէն գէշ բան ինչ կրնայ գտնըւիլ. լեզուն չէ՞ որ աշխարհք կըկործանէ, և սու-

կալի մարդիկ կըկորսընցնէ · ինչո՞վ կըլլան այնչափ սուտերը՝ հայհոյութիւնները՝ անիրաւութիւնները, և խաբէութիւնները · լեզուով կըլլան ։ Այսով պատկեռանները կըքակվին · տրութիւններ թագաւորութիւնները կըկործանին · և այլ անհամար չարիք միշտ լեզուէ կըպատճառուէ, տրամութիւն՝ խեղճութիւն՝ երգում՝ բամբասանք · որով մարդուս կեանքը լեցուած է ։

Անառնէնը նստողաց մէջէն մէկը կանչեց Քսանթոսին, թէ ըսի՞չ կեցիր՝ այս ծառայքու խելքիդ բան մը կըբերէ · ըսի կընայիմ որ հոգին ալ մարմինին նման այլանդակ է ։ Եզովբոս մէկէն պատասխան տըւաւ թէ այլանդակ անմիտ դուն ես, որ հետաքրքրութե՞ ուրիշի բանին կըխառնըվիս, և չար խօսքերով կըջանաս անմիտութիւն ձգել տիրոջն ու ծառային մէջ ։

# ԳԼ. ԺԳ.

## Հնարագիտութիւն Եզովբոսի ։

Քսանթոս Եզովբոսին այս խօսքերը լսելով անանկ տաքցաւ, որ պատճառ կըփնտրռէր լաւ մը ծեծելու ։ Գործելի բաց, որովհետև դուն իմ բարեկամս պարսաւեցիր, թէ հետաքրքիր ըլլալով ուրիշի բանին կըխառնըվիս, դուր ինձի մէկն որ հետաքրքիր չըլլայ ։ Եզովբոս հասկըցաւ բանը, մէ-

կաղ օրն ելաւ գնաց վաճառանոցն բազմու-
թե մէջ ուշադրութի ամենուն կընայէր ·
տեսաւ թէ մէկ մարդ մը երկար ժամանակ
կեցեր է մէկ տեղ մը։ Հասկըցաւ որ խիստ
պարզամիտ խեղճ մարդ մ'է. մօտեցաւ իրեն
ըսաւ, թէ ի՞նչ կըհրամայընէ, որ իր առնը
կերակուր ուտես։ Այս կոշտ մարդը ա-
ռանց հարցընելու, թէ ով ես, և որու տը-
նէն եկեր ես, ելաւ գնաց հետը. և պատառ
կօշիկները ոտքը գնաց անանկ սեղանը նըս-
տեցաւ։

Քանդոս հարցուց, թէ ով է այս մար-
դը։ Պատասխանեց Եղբոս, թէ առանց
հետաքրքրութե մարդ է, որ ուրիշի գործ-
քին չի խառնըվիր։ Անատենը Քանդոս
ծածուկ կնկանն ըսաց, որ ես քեզի ինչ բան
ըսեմ՝ նէ՝ հնազանդելով ոխտի ընես. որպէս
զի պատճառ մը գտնեմ, ու լաւ ծեծ մը
տամ Եղբոսին։ Ուստի ամենուն առջին ը-
սաց կնկանն, որ գնա ջուր բեր՝ օտարակա-
նին ոտքը լըւա. վասն զի կարծէր, թէ այն
խեղճ մարդը չպիտի թող տայ որ Տիրուհին
ոտքը լըւայ. պէտք է որ մեծ շնորհակալու-
թի ընելով հրաժարի։ Եւ անանկ ընելովը
յայտնի կըլլար, որ հետաքրքիր մարդ է, ոչ
թէ անհոգ. ինչպէս հասկըցեր էր Եղբոս
այս բանը կըլլար օրինաւոր պատճառ Եղբ-
բոսը պատժելու։ Իսկ կնիկը բերաւ ջուրն,
ու պատրաստվեցաւ որ օտարականին ոտքը
լըւայ։ Բայց այն Թանձրամիտը տեսաւ
թէ Տիրուհին իրեն ծառայութիւն կընէ.
ինքիրեն կըսէր, որ ասիա զիս կուզէ պատ-
ւել, ուրիշին ընել չի տար, ինչը կընէ. և

այսպէս երկընցուց ոտքերն , ու կըսէր՝ ըլ-լամ Տէրուհի · որ ըլլայցելէն ետև սեղան նստաւ : Քանդոսս հրամեց , որ իրեն խմած գինիէն սատրականին տայ : Դարձեալ կը մտմըտար գեղջուկը, թէ պէտք էր որ ա-ռաջ իրենք խմեն · բայց որովհետև այսպէս հրամեց բարեխիրտը՝ ինծի չիյնիր քննել այս քաղաքավարութիւնը · ուստի առաւ խմեց :

Եւրէն աջին կերակուր մը, որ շատ կը սիրէր , ու ախորժանքով կուտէր : Տէրը կան-չեց խոհարարը ու՜ջին երեսը զարկաւ , թէ ինչու համար գէշ եփեցիր · և պատուիրեց որ պատժեն ու ծեծեն : Գեղջուկը անհոգ կուտէր և կըսէր · թէ այս կերակուրս խիստ պատուական եփած է, մէկ պակասութիւն մը չունի · բայց թէ որ տէրը իր սիրտը հանդ-չեցընելու համար կուզէ առանց պատճառի ծեծել խոհարարը, ինքը գիտէ · իմ ի՞նչ վը-րաս պէտք է , ինչ կուզէ , թող ընէ :

Քանդոսս այս անհոգ մարդուն վրա խիստ կընեղանար · որ ամենևին հետաքրքրութիւն մը հոգ մը չէր ըներ , և բանի մը ետևէն չէր ըլլար · բայց կը համբերէր նեղութիւնը չէր ցըցըներ : Եւրէն սեղանը կարկանդակ դըրուաւ · սատրականը ուտելը չէր գիտէր , սկսաւ հացի պէս ուտել : Քանդոսսին սիր-տը սրխտըվելով կանչեց բաւ հացեփողին · Յիմար ինչու համար կարկանդակին տակը մէջը ու համեմ չես լեցուցիր , որ քիչ մը հա-մով ըլլար : Ա՛նաւ պատասխան տըւաւ , թէ տէր իմ, թէ որ գէշ եփեցի՝ գլխս պատժէ , բայց թէ համեմ չէ դրած՝ մեր Տիրուհին պիտի գիտնայ , իմ բանս չէ , անորն է : Ե-

Թէ իմ կլինա է պատասխանը՝ հիմա ողջ ողջ կերեմ՝ կըսէր Քսանթոս։ Անէք ըրաւ կնկանն որ իրեն հնազանդի. որպէս զի պատասխան ունենայ Եզոպոսը պատժելու։

Ուստի բերել տուաւ փայտի կտորվանք. որ երբ վառեցան՝ Քսանթոսի Տիրուհին բերին կրակին մօտ, և ձեւացուցին, որ մէջը պիտի ձգեն. նայելով թէ ի՞նչ կըսէ օտարականը այս բանիս մէջ. գէթ հոգ տանելով բան մը կըհարցընէ, կամ կարգիլէ որ չէրեն կինը։ Բայց այն առանց այլայլելու հոգ մը չունէր այս ահաւոր բանին վրայ. և իր սովորական անհոգութե՞ կեցեր կըսէր մտքովը. թէ որ պատասխան մը չունի բարկանալ ընկերոջը դէմ, ինչո՞ւ ասանկ տաքցեր է։ Ելաւ գնաց Քսանթոսին քով ըսաւ, թէ որ պարտք է ասանկ ընել կանանց, քիչ մը համբերէ երթամ իմին ընկերս ալ բերեմ, որ երկուսը միատեղ էրեն։

Փիլիսոփան լսելով այս մարդուս խօսքը, զարմացաւ, թէ ասանկ առանց հետաքրքրութեն անհոգ և պարզամիտ մարդ կրնա՜յ ըլլալ. այնչափ որ այլ չգիտացաւ կանչեց Եզոպոսին, թէ իրաւ որ դուն պարապ անը մարդ չես ճանչնար. ահա՛ ճշմարիտ անհոգ անհետաքրքիր մարդ, որ ամենեւին բան մը հոգը չէ. յաղթեցիր Եզո՛պոս, և վաստըկեցար յաղթութիւնը։ Ահա ասկէ ետև գոհ եմ քու վրայ, կըմոռնամ ըրած բաներդ, կըներեմ, և ազատ կընեմ քեզ ծառայութենէդ։

# ԳԼ. ԺԱ.

## Խօսք Եզովբոսի ընդ Դաստաւորին

Քսանդոս պատուիրեց Եզոբոսին, որ եր-
թայ բաղնիքը նայի, թէ բազմութիւն շատ
կա՞յ. վասն զի կուզէր բաղնիք մտնել։ Եզո-
բոս երթալու ատենը ճամբան հանդիպեցաւ
Դաստաւորին. որ դիտէր թէ Քսանդոսին
մարդն է, հարցուց թէ ու՞ր կերթաս։ Չգի-
տե՛մ ըսաց Եզոբոս, ու՞ր կերթամ։ Դաստա-
ւորը կարծեց թէ զինքը ծաղր կընէ, բար-
կացաւ տրուած պատասխանին վրա. հրամեց
որ բանտը դնեն։ Երբոր դարձուցին Եզո-
բոսը, սկսաւ բարձր ձայնով պոռալ։ Տե՛ս
կըսէր տէ՛ր իմ, աՀա իմ պատասխանս նայէ
ի՞նչպէս ճշմարիտ ելաւ. ուրեմն իրաւունք
ունէի որ ըսի թէ չգիտեմ ուր կերթամ. եւ
գիտէի՞ թէ բանտը պիտի երթամ. գիտցա՞-
ծով քեզ տեսայ, որ իմ բանտն երթալուս
պատճառ եղաւ։

Դաստաւորը զարմանալով անոր խելացի
պատասխանին վրա, թող տուաւ։ Եզոբոս
բաղնիք գնաց տեսաւ որ շատ բազմութիւն
կայ. ամէն մէկին ուշադրութիւն կընայէր.
բաղնիքին դռանը քով մեծ քար մը տեսաւ,
որ ամէն մտնող ելլողին ոտքին դպչելով նե-
ղութիւն կուտար, որ մէկը չէր վերցըներ ան-
կէ. մէկ մարդ մը ներս մտնելու ատենը

վերցուց անկէ ուրիշ տեղ դրաւ ։ Եղբօրս դարձաւ տուն ըսաց տիրոջն, որ խնամ հան_ գիստ կրնաս ըլլացվէր · վասն զի ես մինակ մէկ մարդ մը տեսայ հոն ։

Քանդոս գնաց բաղնիք երբոր տեսաւ այնչափ բազմութիւն, որ կըլլուացվէին · Ինչ է այս կանչեց Եղբօրսին · դուն ինծի չըսիր որ մէկ հոգի մը կայ · Ճշմարիտ է ըսաց · բայց տէր իմ տեսայ այն քարը բաղնիքին դռանը մէջ դրած, ամէն մտնող ելլող անոր զարնելով կանցնէր, այնչափ բազմութեան մէջէն մէկ մարդ մը գտնուեցաւ, որ այն քարը վերցընէ անկէ անդին դնէ ։ Ահա այս պատճառաւ ըսի, որ մէկ մարդ մը տե_ սայ այսչափ բազմութեան մէջ, ամենէն վեր դնելով զայն ։ Քանդոս ծիծաղելով ըսաց, թէ Եղբօրսին պատասխանը խելքով լեցուն՝ միշտ պատրաստ է ։

## ԳԼ ։ ԺՕ ։

### Հանճար Եզովբոսի ։

Երբեմն Քանդոս իր աշկերտներովը ե_ րևելի հարկիք մը գնաց · երբոր գինին խմե_ ցին հարբեցան, սկսան իրարու հարցմունք_ ներ ընել կերպ կերպ բաներու վրայ ։ Քան_ դոս տաքնալով կը խօսէր գինիին ուժովը · Եզովբոս քովը ըլլալով ըսաւ · Ամիրայ քեզ

կուզեմ հասկըցընել, թէ (*) Բաքոս երեք յատկութին, կամ երեք զանազան աստիճան ունի. առաջինն է զուարճութին. երկրորդ է արբեցութին. երրորդը՝ կռիւ թշնամանք֊ դուն ուզածիդ չափ խմեցիր լաւ մը զուարճացար, ուրեմն դոն կեցիր այդ աստիճանին մէջ, ալ առաջ մերթար: Քսանդոս ո ակըսեր էր գինոշնալ; այս խրատս ծաղմօքով հասկըցաւ, որ բարկանալով ըսաւ. կարէ՛ ձայնդ՝ գնա՛ գժոխքին մէջ եղօղներուն խրատ տուր: Պատասխանեց Եզոբոս, թէ կարծեմ դուն ալ իտ երթաս անոնց քով:

Հո՛ն նստողներուն մէկը տեսաւ որ Քսանդոսի գլուխը տաքցեր է. Պա՛րոն ըսաց, կըրնա՞ս գտնել անանկ մարդ, որ բոլոր ծովուն ջուրը խմէ: Պատասխանեց Քսանդոս, թէ ես մինակ կրնամ խմել: Անալ ըսաց. թէ որ չի կրնաս նէ ինչ կուտաս: Բոլոր տունս կուտամ ըսաւ: Այս դաշինքս հաստատելու համար երկուքն ալ հանեցին իրենց մատնին գրին գրաւ ըռէհին. եաքը ամէն մարդ տեղը դարձաւ:

Առաւօտուն Քսանդոս երբ լուացվեցաւ տեսաւ, որ մատնին մատը չէ՝ զարմանալով

(*) Բաքոս Դիոսին որդին էր. որ հեթանոսները խաղողի և գինիի տէր ըսեր էին, ու Դիոնիսոս կըսէին. իսկ հայերը Սպանդարամետ կոչուանէին. որովհետև տօնին օրը շատ կենդանիներ զոհ կընէին. որոնց արիւնն էր [illegible]: Բայց շատ անգամ գրոց մէջ գինիին տեղը Բաքոս կը դնէին. ինչպէս Եզոբոս ալ գինին ըսելու տեղը, կըսէ Բաքոս երեք յատկութին ունի:

հարցուց Եզոբոսին, թէ ինչ եղաւ։ Պա_
տասխան տուաւ, թէ չկրնամ. բայց այնչափ
գիտեմ, որ դուն տունդ կորսընցուցիր։ Ին_
չու համար՝ ըսաւ։ Երէկ գինովութեան մէջ
պարտաւորեցար, որ ծովը խմես. տասը հա_
մար մատնիդ գրաւ դրիր (*)։ Պատասխա_
նեց Քսանթոս, թէ ինչ ընելու է որ այս
բանէս ազատիմ. ինչու որ մարդու կարողու_
թէ վեր բան է. կաղաչեմ, մէկ խելք մը բա_
նեցուր, ու բոլոր իմաստութիդ և փորձովդ
ետ առ իմ խօսքս, այս փորձանքէն զիս ա_
զատէ. որպէս զի իմ տուած գրաւս ետ առ_
նեմ առանց անարգանաց։ Իրաւ որ անկա_
րելի է ըսաւ Եզոբոս, որ կարենամ քու
խօսքդ ետ առնել, բայց կրնամ դաշինքդ
աւրել։

Երբոր այսօր ամէնքդ մէկտեղ կուգաք՝
դուն խօսքիդ վրա կեցիր համարձակ, ամէ_
նեկին մի վախնար։ Արբեցութեան մէջ ինչ որ
ըսիր, հոն ալ ըսէ բաղմութեան մէջ. հրամայէ
որ ծովուն քով սեղան դնեն. պատուիրէ
ծառաներուդ, որ աման մը ծովու ջուր բե_
րեն քեզի խմելու համար։ Կը տեսնես որ
բոլոր ժողովուրդը հոն ժողուած են, հրա_
մայէ քովի եղողներուդ, որ դաւաթը ծովու
ջուր լեցընեն տան. ձեռքդ առ, բարձր ձայ_
նով հարցուր դաշինք ընողին, թէ ինչ էր
մեր պայմանը. անաւ պիտի ըսէ, թէ բոլոր

(*) Որովհետեւ հին փիլիսոփաները ժողովուր_
դին մէջ շատ մեծ յարգութիւն և գերազանցութիւ_
ունէին. անոր համար գինովութեան մէջ եղած խօսքն
ալ ընդունելի էր, և ետ առնելը անկարելի։

ծովը խմել: Անատեանը դարձիր նստողներուն ըսաւ. Սամոսացիք դուք գիտէք թէ որչափ գետեր կըլեցուին այս ծովուն մէջ. իրաւ ես պարտաւոր եմ միայն ծովուն ջուրը խմելու, չէ թէ գետերուն. ուրեմն պէտք է որ այս մարդս նախ գետերը կարէ, որ ծովը չի վաթին, հապա թէ ես ալ խմեմ ծովը:

Քսանթոս տեսաւ, թէ այս հնարքս անտարակոյս կըհնայ դաշինքն աւրել, և մատանին ետ տալ, մեծ յուսով սկսաւ ուրախանալ: Ուստի երբոր ժողովուրդը ծովուն մօտ դիզվեցաւ, բոլոր քաղաքը հոն լեցուեցաւ. որ այս չի լսուած բանը տեսնեն, թէ ինչպէս Քսանթոս զինքը պիտի այս բանէն փրցընէ: Բայց Քսանթոս ինչ խրատ որ առաւ Եզոպոսէն՝ կատարեց ըրաւ ժողովուրդին առջին: Սամոսացիք զարմացան Եզոպոսին խելքին հնարքին վրայ, և մեծապէս գովեցին. իսկ դաշինք ընողը Քսանթոսին ոտքն ինկաւ, խոստովանեցաւ, թէ յաղթուեցայ, և աղաչեց, որ դաշինքն աւրէ: Քսանթոս ժողովուրդին աղաչանքովը յօժարեցաւ աւրել դաշինքն, ու հաշտուեցաւ անոր հետ:

# ԳԼ. ԺԼ.

## Ապերախտութիւն Քսանթոսի ընդդէմ Եզովբոսի ։

Երբոր տուն դարձան Եզովբոս ըսաց Քսանթոսին · Տէր իմ քեզի ըրած այս աղէկութենս դէմ, արժան չէ՞ որ ես ինչպէս քեզ ազատեցի, դուն ալ զիս ազատես գերութենէս ։ Տէրը խստութեամբ վռնտեց ըսելով · կարծես, թէ ես չեմ ուզեր քեզ ազատելու ։ Ելիր դուրսը նայէ՛ թէ որ երկու ագռաւ միատեղ կեցած են, բարի նշան է · հապա թէ մէկ ագռաւ մը կայ, գէշ նշան է (*)։ Եզովբոս երկուքը միատեղ տեսաւ կեցած ծառին վրայ, եկաւ պատմեց Քսանթոսին · բայց երբոր Քսանթոս ելաւ նայեցաւ, մէկը կար, մէկալը թռեր էր ։ Թշուառական ըսաց Ե-

(*) Հին ատենը հաւերուն ու թռչուններուն կերակուրը ու ձայնը դիտելով խորհրդութիւն կընէին, եղած բաները կը գուշակէին կերպ կերպ խաբէութեամբ · որ կըսուի Հաւահմայութիւն · որ հաւերուն ձայնէն ու կերակուրներէն կը գուշակէին լաւ դէպք ըլլալը, թէ գէշ ։ Եւ երբեմն փորը բանալով աղիքներուն նայելով ու սիրտին վրայէն գուշակութիւն կընէին ։ Այս Քսանթոս ալ ագռաւը նշան դնելով գէշ սկսեց ծեծել Եզովբոսը · որ է խաբէութիւն ։

զոբոսին, դուն ինծի երկուք են ըսիր, ուր է։ Պատասխանեց, թէ ես ճշմարիտն ըսի, բայց մէկը թռաւ։ Անանկ չէ, հապա գարշելի դուն զիս ծաղր ըրեր։ Բարկութիւն պատուիրեց ծառաներուն որ հանվեցընեն Եզոբոսն ու ծեծեն։ Երբոր կը զարնէին խեղճին, տեղէ մը կանչեցին Քսանթոսն, որ կերակրի երթայ։ Սկսաւ Եզոբոս կանչել. վայ անբաղդ ողորմելուս, ես որ երկու ագռաւ տեսայ, ծեծի արժանի եղայ. դուն որ մէկ ագռաւ մը տեսար՝ հարկիք ուտելու կերթաս. ահա իմ՛ փորձս յայտնի ըրաւ, որ ըրած կախարդութիւնդ սուտ է։ Քսանթոս զարմանալով անոր բարակ մտացը վրայ դադրեցուց ծեծը։

# ԳԼ. ԺԲ.

## Փորձէ Եզոլոս զգիտնականս.

Եղաւ որ Քսանթոս կերակրի հրամցուց շատ փիլիսոփաներ և ճարտասաններ. Եզոբոսին պատուիրեց, որ դուռը կենայ, և պատիւ ըլլալու համար միայն իմաստուն մարդիկ ներս առնէ. իսկ Եզոբոս դուռը գոցեց, ու ներսը կեցաւ. նոյնիս հրամցուցած մարդուն մէկն եկաւ դուռը զարկաւ։ Եզոբոս առանց դուռը բանալու ներսէն հարցուց, թէ շունը ինչ կը շարժէ։ Ան ալ դըրսէն կարծեց, թէ իրեն շուն կըսէ, բարկա-

նալով ձգեց գնաց։ Որչափ մարդիկ որ ե-
կան, սանկ բարկանալով ետ դարձան, կար-
ծելին, թէ զիրենք կը նախատէ. վասն զի Եզո-
բոս ամենուն ալ այս հարցմունքը կըներ։
Ցետոյ մէկն ալ եկաւ դուռը զարկաւ. ա-
նոր ալ հարցուց Եզոբոս, թէ շունը ինչ
կը շարժէ։ Անալ դրսէն պատասխան տը-
ւաւ, թէ պոչն ու ականջները։ Եզոբոս
անսաւ որ յարմար պատասխան տըւաւ, բա-
ցաւ դուռն ու տարաւ ներս տիրոջը քովը,
ըսաւ թէ մէկ փիլիսոփայ մը չեկաւ քու
հարկիքդ. ասկէ 'ի զատ։

Քսանթոս սաստիկ բարկացաւ՝ կարծելով,
թէ մէկալոնք զինքը ծաղր ընելու համար
չեն եկած։ Մէկալ օրը բարեկամներն եկան
դպրոցը, և երեսը զարկին Քսանթոսին, որ
զիրենք անանկ անարգելով դունէն ետ ճամ-
բեց. ինչու համար՝ կըսէին այն աստիճանը
մեզ անարգեցիր. դրիր դուանը քով այլան-
դակ գերիդ, որ մեզ թշնամանելով ետ դար-
ձուց։ Հարցուց Քսանթոս, թէ քանի եք
ինչ էք. իրաւ է ըսածնիդ։ Պատասխանե-
ցին ամէնքը մէկ ձայնով. Ճշմարիտ է քեզի
ըսածնիս։ Շուտ մը կանչեց Եզոբոսն հար-
ցուց բարկանալով, թէ ինչու համար ա-
սանկ անարգելով ետ դարձուցիր բարեկամ-
ներս։ Պատասխանեց Եզոբոս, թէ դուն չի
պատուիրեցիր, որ յիմար մարդիկ թող
չի տամ ներս մտնելու. որ միայն գիտուն
իմաստուն մարդիկ նստին հարկիքդ։ Իրաւ-
այդպէս է ըսաւ Քսանթոս. բայց ասոնք ա-
մէնքը գիտուն չե՞ն։ Պատասխանեց Եզո-
բոս, թէ ես այս գիտեմ, որ դուռը զար-

կած տանը, եւ իրենց կը հարցընէի, թէ
շունը ի՞նչ կը շարժէ. մէկը չի կրցաւ հաս-
կընալ, և հարցմունքիս պատասխան տալ.
ուստի կը նայէի որ ադէս մարդիկ են, դու-
ռը չէի բանար. միայն անոր բացի դուռը,
որ լաւ պատասխան տըւաւ։

Եզոբոս խօսքը լմնցուց, բայց մէկը չի
կրցաւ դէմ խօսիլ. և ամէնքը խոստովա-
նեցան, թէ ճշմարիտ է ըսածը։

## ԳԼ. ԺԹ.

## Հնագիտութիւն Եզովբոսի։

Քսանթոս օր մը Եզոբոսին հետ գերեզ-
մաննոցը գնաց, որ գերեզմաններուն վրայի
գոմբաները կարդալով կը զուարճանար։
Եզոբոս տեսաւ, որ մէկ գերեզմանի մը վրա
գրած էին այս գրերս Ցուցնաց. α Աւֆ.
β Վ՛ֆտ. δ Տ՛էւտ. ο Օ՛ֆգրծ, ε Է՛ֆխւծ.
ϑ Թ՛ֆտ. χ Խւհ։ Եզոբոս այս գրերը ցըցուց
Քսանթոսին, հարցուց, թէ ասոնք ի՞նչ կը
նշանակեն։ Քսանթոս ուշադրութ. նայեցա-
ւ քննեց մտմըտաց. չէմ հասկընար ըսաւ ի՞նչ
ըսել կուզէ։ Անատենը դարձաւ Եզոբոս ը-
սաց. Ա՛միրայ եթէ այս գրերուն ուժովը
հոս գանձ գտնեմ, ի՞նչ կուտաս ինծի։ Անալ
սիրտ տալով ըսաւ, թէ կէսը կուտամ և
քեզ ալ կազատեմ։ Եզոբոս այս խոստմունքը
լսելով՝ չորս քայլ առջև հեռացաւ անկէ՝ փո-

րէց գանձ գտաւ. տարաւ Քանդակոսին ըսաւ, թէ կատարէ խոստմունքդ. զիս ալ ազատ ըրէ: Պատասխան տըւաւ, թէ քեզի չեմ ազատեր, մինչև որ այն գրերուն զօրութիւը չի մեկնես ինձի. մի զի աւելի կուզեմ անոնց իմաստը հասկընալ, քան թէ ոսկին ժառանգել:

Եզոբոսն ալ ըսաց թէ ով որ այս գանձը հոս թաղեր է, իմաստուն մարդ ըլլալով այս գրերը փորել տըւեր է. որ կը նշանակեն. α Աբօբա՛ս գնացեալ. β Վէմաթա քայլս. δ Դէ՛սսէրա չորս. ο Օրի՛քսաս փորելով. ε Էվրի՛սիս գտցես. θ Թեզաւրօ՛ն գանձ. χ Խրի՛սիու ոսկւոյ: Քանդակոս ալ ըսաց. որովհետև այսպէս հնարագէտ բան գիտցող ես դուն, յիմար կըլլամ ես թէ որ քեզ ազատեմ: Կրկնեց Եզոբոս. թէ որ չընես՝ այս գանձը չես կրնար ժառանգել. մի զի կերթամ Բիւզանդացւոց (*) թագաւորին կիմացընեմ. որ անոր համար պահած էր: Ուստի գիտես ըսաց Քանդակոս: Ահա գրերը յայտնի կը ցըընեն ըսաց. α Աբօ՛տօս տուր. β Վասիլէ թագաւորին. δ Տիօնիսիէ Դիոնեսիոսին. ο Օն զոր. ε Էվ՛րէս գտեր, θ Թեզաւրօն գանձ. χ Խրիսիու ոսկւոյ: Քանդակոս այս բանը լսելով հասկըցաւ որ ձեռքէն պիտի

(*) Բիւզանդիոն կըսուէր առաջուց՝ Վիզաս իշխանին անուամբը. որ նոյն շինեց զայն քաղաք մը Արգոնաւտին պատերազմէն. յետոյ Կոստանդիանոս նորոգեց մեծցուց: Հին ատենը հոս նստող թագաւորը կը հրամայէր մօտ եղած կղզիներուն. ինչպէս Եզոբոս ալ կը յայտնէ:

երթայ․ տու ըսաց կէսն , ու ձայն մը հանեց
Դո՛ւն չէս ինձի տըւօղը ըսաւ Եզոբոս․ հա-
պա ոսկին թաղօղը տըւեր է ։ Մտի՛կ դի-
նայէ ի՛նչ կը նշանակեն գրերը․ α Անէցի-
նի զառնալն․ β Վոփ՛ոանփէս գնացեալ․
Տէէլէոթէ բաժանեցէք․ ο Օն զոր․ ։ Է՛ոէ-
տէ գտէք․ ϑ Թէոսրռն գանձ․ χ Խոհրեո-
ոսկւոյ ։

Եկո՛ր տուն երթանք ըսաց Քսանթոս, որ բաժնենք ոսկիները, և քեզ ալ ազատ ընեմ։ Բայց երբոր եկան վախցաւ Քսանթոս, չըլլայ թէ բանը դուրս հանէ Եզոբոս․ ուստի բանտը դնել հրամեց խեղճը։ Երբոր բանտը կը տանէին Եզոբոս կըսէր, թէ փիլիսոփաները այսպէ՛ս կը պահեն իրենց ըրած խոստմունքը։ Չէ թէ միայն չազատեցիր զիս, որ խոստացեր էիր, հապա բանտն ալ դնել կուտաս։ Այս խօսքովս սիրտը շարժեցաւ Քսանթոսին, շուտ մը պատուիրեց, որ թող տան ըսելով, անտարակոյս երբոր դուն ազատիս, զիս չարաչար պիտի բամբասես և ամբաստանես ։

Պատասխանեց Եզոբոս․ հիմա որչափ գէշութին կուզես ինձի ըրէ․ բայց գիտնամ որ օր մը զիս ակամայ պիտի ազատես ։

# ԳԼ. Ի.

## Ազատութիւն Եզովպոսի.

Այս ժամանակս Սամոս կղզին զարմանալի դիպուած մը պատահեցաւ. երբոր մէկ ճէհանուր երեւելի տօն մը կընէին, յանկարծ արծիւ մը ինջաւ բարձրէն խլեց տէրութեան մատանին, տարաւ ծառայի մը ծոց ձգեց։ Բոլոր ժողովուրդը զարմանալով այս պատճէլեացս վրայ, եկան միաբան աղաչեցին Քսանթոսին, որ իրենց մէջ խիստ երեւելի իշխան, և մեծ փիլիսոփայ էր, մեկնէ անոնց, թէ ի՛նչ կը նշանակէ այս հրաշալի դիպուածս։

Քսանթոս չէր գիտեր ի՛նչ պատասխան տայ, ժամանակ ուզեց որ մտածէ։ Երբոր տուն դարձաւ միշտ անհանգիստ տրտմութեան մէջ մնալով սկսաւ մտածել։ Եզովպոս տեսաւ թէ իր տէրը տրտմութեամբ կը մաշի՝ հարցուց թէ ինչու համար այսանկ տրտում ես. այս բանս ինծի ձգէ, և տրտմութիւնդ մէկդի դիր, որ քեզ կը տանջէ։ Գնա՛ վաղը զրուցէ Սամոսացիներուն, թէ իմ բանս չէ հրաշք մեկնել, և գուշակութիւն ընել. սակայն ես մէկ ծառայ մը ունիմ տունս, որ ասանկ բաներու լաւ տեղեակ է, այն կրնայ տալ ձեզի մեկնութիւնը դիպուածին, և ձեր տարակուսանքը քակել։ Տէ՛ր իմ, թէ որ ես

անոնց տարակոյսը վերցընեմ․ բոլոր պատիւը քեզի կըլլայ, որ ասանկ բան գիտցող ծառայ ունիս․ Թէ որ չի կրնամ, միայն ինծի կըլլայ պարսաւանքը ։

Քսանդոս մեծապէս ուրախանալով գնաց մէկ օրը քաղաքացոց ժողովքը, և անոնց պատմեց Եզոպոսին խօսքերը։ Անոնք աղաչեցին․ որ շուտով բերել տայ ։ Երբոր Եզոպոս եկաւ մտաւ Սամոսացոց ժողովքին մէջ, ներպարանքին նայելով սկսան ամէնքը ծիծաղիլ, մինչև ծաղր ընելով ըսին, թէ կրնայ ըլլալ, որ ասանկ այլակերպ կոշմարդը այս հրաշքին մեկնութիւնը տայ ։ Ասանկ ցուցանքաւոր բերնէն ինչպէս պիտի բարի բան լսենք․ ուստի նորէն սկսան կատակելով խնդալ Եզոպոսին վրան ։

Իսկ Եզոպոս ձեռքը շարժելով կաղաչէր ժողովքին որ լուռ կենան․ ով Սամոսացիք կըսէր, ինչու զիս կանարգէք ներպարանքիս աղեղ ըլլալուն համար․ հոգին պէտք է նայիլ, չէ թէ ներպարանքը․ բնութիւնը շատ անգամ գեղեցիկ հոգին աղեղ մարմինին մէջ կը դնէ․ դուք ամանին ձևին կը նայիք, թէ մէջի եղած պատուական գինիին ։ Բոլոր ժողովքին մարդիկը այս խօսքերս լսելով ըսին որ, եթէ դուն ունիս մեզի օգտակար բան մը խօսելու, որ կարենայ ամենուս սիրտը հանգչեցընել, խօսէ ։ Անատենը մեծ համարձակութիւնով մը այսպէս խօսեցաւ Եզոպոս․ Ով Սամոսացիք որովհետև երբոր Բաղդը սիրէ երկպառակութիւն և խռովութիւն ցանել, կը դնէ մէկ առիթ մը փառաւորութեան սիրողին ու ծառային մէջ․ եթէ պատահի որ ծառան

էյնի իշխանութիւն տալը, վիշտ կը քաշէ. և
թէ ամբողջմէն վեր ըլլայ, նոյնպէս վիշտ կը
քաշէ ծեծ կուտէ. անանկ որ բանը որ գլին
դառնայ, ծառան նեղութիւն պիտի քաշէ։
Դուք մինչև որ զիս ազատ չընէք. իմ ամբողջա
իշխանութենը տակէն չի հանէք, ես համար-
ձակ ձեզի չեմ կրնար յայտնել առանց վախու-
ղայն, որուն կը փափաքիք։ Այն կեալին բո-
լոր ժողովուրդը մէկ ձայնով կանչեց Քանդ-
գոսին, թէ ազատ ըրէ Եզոպոսը, կատարէ
Սամոսացոց կամքը. առով բոլոր քաղաքը
ազատ կընեն։

Քանդգոս պատասխան չի տըւաւ. Դատա-
ւորը մէկէն կանչեց Քանդգոսին. թէ որ
դուն ժողովուրդին մտիկ չընելով ազատ չը-
նես քու կամքովդ՝ հիմա ես ազատ կընեմ
իմ իշխանութեամբս. որ քեզի հաւասար կըլ-
լայ.

Այլ չի կրցաւ դէմ կենալ Քանդգոս՝ ա-
կամայ կամքով ազատ ըրաւ. որ փողերով
դռնակներով քաղքին մէջ կը կանչէին, թէ
Քանդգոս փիլիսոփան ազատ ըրաւ Եզոպո-
սը Սամոսացոց աղաչանքին համար։ Եւ այս-
պէս կատարեցաւ Եզոպոսին մարգարէու-
թիւնը. որ Քանդգոսին ըսեր էր, թէ ակա-
մայ զիս պիտի ազատ ընես։ Եզոպոս ազատ
ըլլալէն ետև սկսաւ առանց խօսիլ ժողո-
վուրդին։

Ով Սամոսացիք՝ ինչպէս գիտէք, (*) ար-
ծիւն է թռչուններուն թագաւորը. որ իւ-

(*) Արծիւ, որ է խարդաւ թռչունը, [illegible]
թռչուններուն թագաւոր, [illegible] ամենէն զօր-

խանական մասնին վերցուց տարաւ ծառայի ծոցը ձգեց. այս բանս կը նշանակէ՝ որ հիմնկւան թագաւորներէն մէկը կը մտածէ, որ ձեր ձեռքովը ձեր իշխանութիւնը կործանէ, և ձեզ գերի ընէ եղծանելով ձեր օրէնքը: Այս խօսքս ահի գողի մէջ ձգեց բոլոր Սամոսացիք:

Քանի մը օրէն ետև Սամոսացիք Թուղթ առին Կրեսոս Թագաւորէն (*) Լիւդիայի· որով իրենց կը պատուիրէր, որ ամէն տարի իրեն տուրք տան. եթէ չի տան՝ պատերազմով վրանին պիտի ելլէ. պատրաստ կենան: Այս բանիս վրայ ժողովք ըրին որ մտածեն ճամբայ մը գտնեն. վն̅ զի եթէ հնազանդէին, ազատութիւնը կը կորսըւէր. և կը վախ-

նար և տարակուսի է. որ ամենուն կը յաղթէ. նաև Պոլիկրատին ընծայ եղած է, ինչպէս պիտի բացատրենք:

(*) Կրեսոս Լիւդիայի Թագաւորն էր 550 տարի առաջ քան Թուականէն. որ Ասիայի մէջ շատ տեղերու տիրելով բոլոր Յոյներն հարկատու ըրաւ. այնուհետ գանձ մեծութէ դիզեց, որ շատ մեծ եղաւ հարստութեք: Իմաստասէրներու հետ խօսիլ շատ կը սիրէր. օր մը մեծութիւնը իր [illegible] բոլոր Սողոն իմաստասէրին, թէ ինչի պէս երանաւոր մարդ տեսած է: Անոր ըսաւ, թէ մինչև ի մահ պէտք է, որ մարդ իրեն երանի տայ: Յետոյ Կիւրոս Թագաւորէն յաղթուելով քաղաքն առին. երբոր մէ[illegible] Կրեսոսին, իր [illegible], որ [illegible] էր իր խօսքը. [illegible] Բաղձեցաւ. [illegible] հայր-

նոյն Կրեսոսին իշխանութիւնը տակն լինել․ մինչև հարկ եղաւ խորհուրդ հարցնել Դել-փոսին․ և անոր տրւած խորհուրդին հե-տևիլ ամէն բանի մէջ։ Անոր պատասխան տրւաւ, թէ Պարսիկներ ձեր իշխանները խոր-հուրդ կուտան, թէ տուրք տանք Կրեսո-սին․ և օգտակար է հնազանդիլ անոր, ու-պատերազմին թշուառութենէն ազատիլ․ ուս-տի իմ ձեզի տալու խորհուրդս պարապ է․ սակայն բաւական է ձեզի մէկ բան մը պատ-մել․ որ հասկընաք, թէ ի՛նչ պէտք է ընել այս բանիս մէջ։ Այս աշխարհքիս մէջ բաղ-դը երկու ճամբայ յայտներ է մէկզմէկու հակառակ․ մէկն է ազատութեան ճամբան․ որուն սկիզբն է դժուար և խիստ, և վերջը դիւրին ու զուարճալի։ Մէկալն է ծառայ-ութեան․ որուն սկիզբն է դիւրին և հան-գիստ, բայց ետքը դժուար և խիստ։ Այս բանս որ լսեցին, ամէնքը մէկ ձայնով պատաս-ցին թէ մենք ազատ ենք․ ծառայութեան տակ չենք լինիր։ Եւ այսպէս թագաւորին խրկած դեսպանը ետ ճամբեցին առանց տուրք տա-լու։ Կրեսոս երբոր բանը հասկըցաւ՝ ուզեց Սամոսացոց վրա պատերազմ բանալ․ բայց դեսպանն իրեն ըսաց, թէ տէր իմ, չեմ կար-ծեր թէ կարենաս անոնց յաղթելով վրա ել-

է Կրեսոս։ Զինւորը բանից փարթա Կիւրոս թա-գաւորին առջին, որ հրամեց նրան ճառին ողջ ողջ երէն․ նրանին փոշը որ բերէին՝ մփոն ընկան Սողո-նին խօսքն ու անանց պտուղ․ Սողոն Սողոն։ Թա-գաւորը հարցուց՝ երբոր իմացաւ Սողոնին խօսքը, ողորմ ըրաւ։

ըսա որչափ որ Եգորոս իրենց քովն է. մն գ
անոր խորհուրդին կը հետեւին, որ ամէն բա-
նի տակէն կելլէ. ուստի իմ խորհուրդս այս
է, որ ամէն բանէն լաւ կըլլայ. դեսպան
ղրկէ՛ Սամոսացոցմէ Եգորոսն ուզէ, և խօսք
տուր իրենց հետ հաշտութիւն ընելու. պար-
գեւներ ալ խոստացիր անանց յիշելու տուր-
քը՝ ձգէ հիմա պատերազմը: Երբոր Եգորո-
սը ձեռք ձգես անատենը անանց աշխատա-
նաց կը յաղթես անոնց: Կրեսոս հաւնեցաւ
այս հնարքին, և դեսպան ղրկեց ուզեց Ե-
գորոսը: Անոնք ալ հաւանեցան ղրկելու:
Եգորոս հասկընալով անոնց միտքը եկաւ
ժողովքին մէջ այսպէս խօսեցաւ. Ով Սա-
մոսացիք ինձի մեծ պատիւ է, որ թագաւո-
րին երթամ ոտքն իյնիմ, պատուեմ. սա-
կայն երթալէս առաջ կուզեմ ձեզի առակ
մը զրուցել: Հին ատենը երբոր կենդանի-
ները համաձայն էին՝ գայլերը պատերազմ
բացին ոչխարներուն դէմ. որ շներուն հետ
միաբան ըլլալով անոնց ետեւէն կերթային.
իսկ շները առաջնորդ ըլլալով կը ծեծկը-
տէին. անանկ որ գայլերը չէին կրնար մօտե-
նալ ոչխարներուն: Ասոր գայլերը դես-
պան ղրկեցին ոչխարներուն, որ հաշտըլլին.
բայց իրարու հետ սիրով վարվելու համար
ուզեցին, որ շները պատանդ ըւէհէն ղրկեն:
Ոչխարները յիմարութեամբ հաւանեցան, և
ղրկեցին անոնց իրենց շները. գայլերը մէ-
կէն պատռեցին շները՝ եկան ոչխարներն ալ
կերան:

Սամոսացիք լաւ հասկըցան առակին միտքն
ու չուզեցին որ Եգորոս երթայ իրենց քո-

մէն. բայց Եզոբոս չուզեց կենալ, եւա-
գեապանին հետ գնաց Թագաւորին ։

# ԳԼ: ԻԸ.

## Եզովբոս հաշտեցուցանէ զԹա-գաւորն ։

Երբոր Լիւգիա քաղաքը հասաւ Եզոբոս եկաւ Թագաւորին առջին. բայց Թագաւորը զայն որ տեսաւ աւելի բարկացաւ ։ Մեծ ամօթ է ինծի՝ կըսէր, որ ասանկ այլանդակ մարդը զիս արգելէ, և անանկ մեծ կղզին ձեռքէս հանէ ։ Պատասխանեց Եզոբոս, թէ մի մեծ Թագաւոր, ես ոչ բռնութե՛ եկայ հոս, և ոչ վախնալուս. այլ իմ կամքովս եմ՝ եկեր. ներէ ինծի, որ քիչ մը խօսիմ. սակայն մեր բանին վրայ չի խօսած մէկ առակ մը պատմեմ, Թողութիւն ըրէ ։ Մէկ մարդ մը մարախ ջեփերէն ժողվեր կը մեռցընէր. դիպուածով բռնեց ճպուռ ճը-ճը պէօճէք մը. կենդանին տեսաւ թէ զինքն ալ պիտի մեռցընէ, սկսաւ աղաչել, թէ զիս մի մեռցըներ պարապ տեղը. վա՛ զի ես ոչ ցորենի վնաս ունիմ, և ոչ մէկ ուրիշ զէն մը կրնամ տալ. այլ միայն շարժելով (*)

(*) Այս փէսաք կենդանիներուն յայնը օդէն կը պատահանայ. վա՛ զի հաւայի ծակէն օդը կը ձգէնն

մանաւանդ մաշկերս որ ունիմ վրաս՝ քաղց ձայն կը հանեմ, որ անցնողները և բանւորները զուարճանան. ուստի ձայնէս 'ի զատ բան մը չունիմ, և ուրիշ բան չես կրնար վրաս գտնել: Այս բանս որ լսեց, Թողուց որ երթայ:

Ո՛վ մեծ Թագաւոր. ահա ես ալ ոտք ընկած կաղաչեմ, գլխ փուճ տեղը մի մեռցըներ. ես մարդու գէշութիւն ըրած չեմ. մէկ յանցանք մ' ունիմ, որ համարձակ կը խօսիմ, և մարդու երեսպաշտութիւն չեմ ըներ. թէպէտ մարմինս է անշնորհք, որ դրսէն անարգ կերևնամ. բայց խօսքս անարգ չէ: Թագաւորը այս խօսքիս վրայ անանկ զարմացաւ, որ մեռցընելու մեղքըցաւ. ուստի կանչեց. Եզոբոս, ես չէ՛, հապա (*) ճակատագիրը կեանքդ քեզի բաշխեց. խնդրէ՛ խամէ ի՞նչ կուզես, քեզի կը շնորհեմ: Ո՛վ մեծ Թագաւոր ըսաւ Եզոբոս, կը խնդրեմ որ Սամոսացոց հետ հաշտութիւն ընես: Խիստ բարի ըսաց Կրեսոս՝ կըհաշտըվիմ: Անատենը Եզոբոս ընկաւ Թագաւորին ոտքն ու խոնար-

մաշկեղէն թևերուն. և այն մաշկերուն թրթռալուն՝ որը կը շարժի աստղին ձայն կը հանէ. շատ մանր կենդանիներ ասանկ շատ ձայն կը հանեն:

(*) Ճակատագիր ըսելով հեթանոս փիլիսոփաները կիմանային ճակատի վրայ գրած այն մարդուն գալիքը. որ գրուածը հարկաւորապէս ըլլար, ինչ որ ընես չահ չի կայ կըսէին: Այս գիրը միայն աստուածները կրնային կարդալ, բայց չէին կրնար աւրել. անոր համար կըսէին, թէ Դիոս Աստուածոյն մաւոնը վրայ կուլար. որ ճակատագրած էր: Բայց

հութ՟ շնորհակալ եղաւ ըրած բարերարու-թեանը համար ։

## ԳԼ․ ԻԲ․

### Եզովբոս գրէ զառակս իւր ։

Եզովբոս իր առակները անատենը գրեց, երբոր Կրեսոս թագաւորին քովն էր․ որ մինչև մեր օրը մնացին ։ Այս առակները ընծայ ըրաւ թագաւորին․ անալ մեծ շնորհակալութ՟ ընդունեց, և Եզովբոսին մեծութիւն տալով դեսպան ըրաւ, ու թագաւորական թղթերով խրկեց, որ երթայ Սամոսացոց հետ հաշտութիւն խօսի թագաւորին կողմանէ, և հասկըցընէ, որ իրեն ապաշխանքով Կրեսոս անոնց հետ բարեկամ պիտի մնայ ։ Ասկէ 'ի զատ թագաւորը շատ պարգևներ ընծայ ըրաւ Եզովբոսին, և Ճամբուն ամէն բանը հոգաց ։ Երբոր Սամոս հասաւ, քաղաքացիք անպատմելի ուրախութ՟ լեցուած, թագ պսակ տարին իրեն․ և քաղաքական հանդէսներ ըրին, որ մեծ պատիւ ըլլայ Եզովբոսին ։

Իսկ Եզովբոս թագաւորին թղթերը կարդաց բոլոր ժողովուրդին առջը, հասկըցընելով թէ անոնք ինչպէս որ իրեն ազատու-

[illegible]

թէ չնորհեցին․ ինքն ալ անոր դէմ այս բ-նով հատուցում ըրաւ․ ուստի թագաւորի միտքը յայտնեց անոնց և հաշտութիւն ըրաւ. Յետոյ ելաւ այս կղզիէն գնաց զանազան քաղաքներ իմաստուն մարդիկ փնտռելով որ հետերնին հակաճառութիւն ընէ ։ Մինչ ելաւ (*) Բաբիլոն գնաց․ հոն ալ իր իմաստութիւնը յայտնեց, և Լիգերոս թագաւորի պալատը մտաւ ։

Այն ժամանակի թագաւորները իմաստութե՞ փարվելով կալ չունէին, միշտ խաղաղութեան մէջ էին․ և ատով շատ անգամ իրարու առակներ, և խրթին բաներ կը գրէին հարցմունք կընէին այս պայմանով որ երբոր մէկը չէր կրնար պատասխան տալ, կը պարտաւորէր տուրք տալու մէկալին, ինչ կերպ որ դաշինք կընէին (**)։

Եզովբոս ամէն հարցմունքին և առակներուն գիւտին պատասխան կուտար, որ Լիգերոս թագաւորին կը գրէին, և ատով մեծ համբաւ ունեցաւ թագաւորը ։ Բայց որովհետև մեկալ թագաւորները չէին կրնար Լիգերոսին խնդիրներուն պատասխան տալ, կը պարտաւորէին դաշնադրութեան համար տուրքեր տալ թագաւորին ։

(*) Բաբելոն էր Պաղտատ այն ժամանակին ծաղկած ըսուած գիտուններու յարգարանն էր․ մանաւանդ Լիգերոս թագաւորին օրը․ անոր համար Եզոբոս հոն գնաց ։

(**) Այս էրդ հարցմունքս մինչև հիմա կայ Արաբացոց մէջ․ որ դրան փաղտները շատ անգամ Շէյխերը և տէրվիշները կէրթան մեծամեծնե-

# ԳԼ. ԻԳ.

## Եզովբոս որդեգրէ իւրեան զԷն-նոս :

Եզոբոս տեսաւ որ զաւակ չունի, մէկ ազնուականի մը զաւակ Էննոս անունով ի-րեն որդի ըրաւ, տարաւ Թագաւորին յանձ-նեց իբր իր հարազատ զաւակը. բայց այս տղերախտը շատ չանցաւ մեծ անկարգու-թիւններ ըրաւ Եզոբոսին տանը մէջ: Եզոբոս հասկըցածին պէս տնէն դուրս ըրաւ: Իսկ Էննոս ոխ պահեց, ու Եզոբոսին վրէժխնդ-իր ըլլալով թուղթ մը շինեց անոր բեր-նէն, որ կը գրէ իշխաններուն. որոնք խրթին առակներ կը խրկէին Լիգերոսին. և անոնց կը հասկըցընէ, թէ ասկէ ետև ձեզի հետ մէկ պիտի ըլլամ Թագաւորին դէմ: Այս թուղթը Եզոբոսին մատնիչը կնքեց տա-րաւ Թագաւորին ցըցուց:

Թագաւորն որ տեսաւ Եզոբոսին կնիքը վրանիւրը, կարծեց թէ անտարակոյս Եզո-բոսն է գրեր այն թուղթը իրեն դէմ. ու ա-ռի բարկութենը հետևելով անանկ տաքցաւ, որ մէկէն հրամեց Հերմիպբոսին (*), որ ա-

րան բան չը հարցընէն. Էնէ չգիտնան, չը դա-տաստին անոնց բան փալա:

(*) Հերմիպպոս էր Բաբելոնին մէջ հասարա-

ռանց քննելու մեռցընէ Եզորոսը իբր մա-
նիչ. Հերմիբբոս ճշմարիտ բարեկամ ըլլա-
լով Եզորոսին՝ իրեն բարեկամութիւնը յայտ-
նի ըրաւ այս կերպով։ Առաւ Եզորոսը
տարաւ մէկ գերեզմանի մը մէջ պահեց ա-
մենեւին ծածուկ. և ինքը զգուշութ̃ բա
կը տանէր անոր մարդ չիմանալով։ Իսկ Ե-
նոս Թագաւորին հրամանովը Եզորոսին ա-
մէն բանը յափշտակեց։

Ժամանակ անցնելէն ետև Դեքդենաբո-
Թագաւորը Եգիպտացոց լսեց որ սպաննել
էն Եզորոս, Թուղթ մը գրեց Սիգերոս Թա-
գաւորին՝ կաղաչէր որ իրեն մէկ քանի սո-
միտ ճարտարապետներ խումբ խրկէ. որպէս զի
շինեն իրեն անանկ մէկ աշտարակ խուց մը
որ ոչ երկինքին դպչի, և ոչ գետնին։ Նաև
խրկէ իրեն անանկ մէկ խելացի բարակ մարդ
մը, որ կարենայ պատասխան տալ խրթին
առակներուն։ Թէ որ ըսաց այս բանս կա-
րենաս ընել, ես տուրք կուտամ քեզի. Թէ
չի կրնաս, դուն ինձի պիտի տաս։ Այս
Թուղթն որ կարդաց Թագաւորը տրտմու-
թ̃ պաշարուեցաւ. վ̃ զի մէկը չունէր քովը
որ կարենայ աշտարակին տակը մէկնել.
ուստի սաստիկ ցաւելով Եզորոսին մահուա-
նը վրայ՝ կըսէր թէ անոր մեռնելով իմ տէ-
րութեա գլխաւոր սիւնը կործանեցաւ։

Հերմիբբոս տեսաւ թէ Թագաւորին կսկի-
ծը սրտանց է, եկաւ առաջին ըրաւ, թէ
Եզորոս կենդանի է. վ̃ զի Թագաւորին

րին պատուհասերը իբր Հաստատապահը. անոր հա-
մար իրեն պատուիրեց, որ մեռցընէ Եզորոսը։

օգտին համար չի մնացուցի. լաւ գիտէի, որ շատ պիտի զղջաս տրուած վճռիդ վրայ։ Այս բարի լուրը լսածին պէս Թագաւորը մեծապէս ուրախացաւ։ Ուստի շուտով Եզրոսը գերեզմանէն դուրս հանեցին, վրան գլուխը խեղճ աղատ հողոտ, մէկէն Թագաւորին դէմը հանեցին. որ զայն անանկ խեղճ տեսնելով այնպէս սիրտը ցաւեցաւ, որ սկսաւ լալ։ Հրամեց որ շուտով լուան հագցնեն և ամէն պակասութիւնը հոգան։ Եզրոս Եննոսին ըրած անօրէնութիւնը սուտ հանեց, և իր մեծասրտութիւնը յայտնի ընելու համար՝ ներում խնդրեց Թագաւորէն, որ չի մեռցընէ Եննոսը։

Սիգերոս Թագաւորը հանեց Եգիպտացոց Թագաւորին Թուղթը ցըցուց Եզրոսին, որ հասկընալով առակին միտքը, սկսաւ ծիծաղիլ. ետքը Թագաւորին ըսաց, որ ասանկ պատասխան տայ։ Երբոր ձմեռն անցնի՝ քեզի բանուորներ կը խրկեմ, որ շինեն ըսած աշտարակդ։ Նաև կը խրկեմ մէկ գիտուն մարդ մը, որ ամէն բանի պատասխան տայ ինչ որ իրեն առաջարկեն։ Անատենը Սիգերոս ճամբայ դրաւ Եգիպտոսի Թագաւորին դեսպանները, և նորէն տուաւ Եզրոսին ամէն մեծութիւնը, իրեն ծառայ տուաւ Եննոսն ամէն ունեցած բարիքովը։

# ԳԼ. ԻԳ.

## Ա՛նյիշաչարութիւն և խրատք Եզովբոսի ։

Եզովբոս նորէն տունն առաւ Եննոսը · ա-
մենեւին անցած բաները չյիշելով իր զաւկի
պէս կը նայէր, և շատ գեղեցիկ խրատներ
կուտար, որ բարի ըլլայ ։ Ո՛րդեակ կըսէր,
ամէն բանէն աւելի զա̃ծ պաշտէ · Թագաւո-
րին հնազանդ եղիր · Թշնամիներուդ առջին
երեւելի եղիր, որ քեզ չի նախատեն · իսկ
բարեկամներուդ հեզ և խոնարհ, որ միշտ
զքեզ աւելի սիրեն ։ Աղօթք ըրէ՛ թշնամի-
ներուդ երբոր խեղճ կըլլան աղքատութե̃ և
հիւանդութե̃ · որ ետքը քեզի տրտմութ̃ն չի
բերեն ։ Շատ անգամ՝ ալ բարեկամներուդ
առողջութենը համար աղօթք ըրէ ։ Մ՛իշտ
նայէ՛ որ ընկերոջդ հետ աղէկ սիրով եր-
թաս, որ չըլլայ թէ ցանկութե̃ ուրիշ մար-
դու ետեւէն ըլլայ · որովհետեւ կանայք բնա-
պէս փոփոխական և թեթեւամիտ են · երբոր
կը շողոքորթեն, չար բան չեն մտածեր ։ Ան-
խոհեմութե̃ ամէն բանի մէկէն մի հաւա-
տար · քիչ խօսէ՛, և միշտ քու լեզուիդ տ̃ր
եղիր · մի՛ նախանձիր ուրիշներուն բաղդին ·
առաւել ուրախացի՛ր ուրիշին յաջողութենը
վրայ · վ̃ զի նախանձը աւելի վնաս կը բերէ

քու անձիդ, քան թէ ուրիշին (*)։ Հոգաբարձութիւն ըրէ՛ տանդ. արթուն կեցի՛ր ծառաներուդ վրայ, որ քեզմէ վախնան իբրև իրենց մեծէն, և քեզ սիրեն իբրև իրենց բարերար։ Մի՛ ամըչնար միշտ աղէկ բաներ սորվելու. մի՛ յայտներ կնոջդ քու ծածուկ բաներդ. վա՜ զի անդադար կը ջանայ պատճառ գտնել, որ վրադ ելլէ, և քեզի հրամէ։ Ամէն օր բան ժողվէ քեզի վաղուան համար. զի շատ աղէկ է ունեցած բարիդ թշնամւոյդ ձգել մեռնելէդ ետև, քան թէ ողջուդ ատենդ բարեկամի կարօտ ըլլալ։

Որու՛ն որ հանդիպիս բարեւէ՛ պատուով և քաղաքավարութեա՛մբ. շունը պոչը շարժելով երբ կը շողոքորթէ տէրը, պարտական կընէ որ իրեն հաց տայ։ Մի՛ գզջար բարեպաշտ ըլլալու, բամբասող մարդը տունդ մի՛ հանդիպցըներ. վա՜ զի դուրս կը հանէ տանդ բանը, և ամէն զուրցածներդ։ Անանկ բան չըներս որ քեզ անարգանք և տրտմութիւն բերէ։ Մի՛ խռովիր աշխարհքիս պատահմունքներուն վրայ։ Ուրիշին չար խորհուրդ չի՛ տաս. և անօրէն մարդկանց չար վարքին չի՛ հետևիս։

Այս խրատներս անանկ գտայ Ենովսին, որ Նէտոփ օձի պէս սիրտը խոցեցին. մինչև խղճմտանքին խայթելովը, և Եզոբոսին

(*) Այս Եզոբոսին խրատը [illegible] յարմար կու-[illegible] մեր [illegible] [illegible]. ինչ որ [illegible] [illegible] [illegible] անձն [illegible]. [illegible] [illegible] [illegible] իրեն [illegible] [illegible]։

տուր խրատները մտմըտալով՝ շատ չանցած մեռաւ ։

## ԳԼ․ ԻՆ․

### Եզովպոս կրթէ զձագս արծուոյ

Եզոպոս կանչեց բոլոր հաւորսները և պատուիրեց՝ որ չորս հատ արծիւի ձագ բռնեն իրեն բերեն ։ Աւսւ զանոնք զարմանալի կերպով անանկ կրթեց, որ մարդու հաւատալիք չի գար (*) ։ Վասն զի կը պատմեն, թէ թռչուններուն սորվեցուց․ որ երբ պիթուչէին՝ վերերեն կախեց չուանով մէյմէկ զամբիւղ ձողէն մէջը դրաւ պզտի տղաներ անանկ սորվեցուցեր էր ձագերուն, որ տղաքը ուր ուզեն, հոն երթան․ վերվար կը թռչէին տղոցը ուզածին պէս ։ Երբոր ձմեռն անցաւ, գարնան ատենը Եզոպոս ամէն հարկաւոր պատրաստութիւնը տեսաւ Ճամբայ ելաւ՝ արծիւներն ալ տղաքներով հետն առաւ և Եգիպտոս գնաց ։ Անանկ զարմանալի բաներ ըրաւ եգիպտացոց առջին, որ տեսնողին խելքը կերթար ։

(*) Բանասէրք կը տարակուսին այս պատմութեանս վրայ․ վասն զի դժուար բան է․ բայց հիմա Եւրոպականները կենդանիներուն անանկ կրթութիւն կուտան, որ մարդ կը զարմանայ, մինչև հաւատալիք չէ գար․ թէպէտ այս պատմութիւնս ալ շատ դժուար բան է ։

Բայց Նեքդենաբոս Թագաւորը երբոր լսեց Եզոբոսին գալը մէկ բարեկամէն, բայց, թէ զիս կը խաբես. ես լսեր եմ թէ շատոնց մեռած է։ Միւս օրը պատուիրեց իր պալատի մեծամեծներուն, որ ամէնքն ալ ճերմակ հագնին. ինքը կարմիրներ հագաւ. գլուխն ալ դրաւ թագ մը անգին քարերով զարդարած, և այսպէս մեծուն փառքով նստեր էր աթոռը հրամեց որ Եզոբոսը բերեն. որ ներս մտածին պէս յանկարծ հարցուց Թագաւորը, թէ զիս ինչ բանի կրնաս նմանցըներ, և քովինները ինչ բանի։ Պատասխանեց Եզոբոս. քեզ կը նմանցընեմ գարնան արևու. և քովի իշխաններդ հասած ցորենի։ Թագաւորը զուարճանալով այս պատասխանին վրայ մեծամեծ պարգևներ տուաւ Եզոբոսին։

Մէկալ օրը Թագաւորը հագաւ ճերմակ լաթեր. և իշխաններուն ալ պատուիրեց, որ կարմիր հագնին. բերել տուաւ Եզոբոս մէկէն հարցուց։ Ան ալ պատասխան տուաւ թէ դուն կընմանիս արեգական, և իշխաններդ՝ ճառագայթին։ Յետոյ ըսաւ Նեքդենաբոս, թէ իմ տրուէս առջին Լիգերոս Թագաւորը բան մը չեմ սեպեր։ Եզոբոս խնդալով պատասխանեց. մի մեծ Թագաւոր սանկ ներին դատաստան մի կարեր Լիգերոսին վրայ. եթէ դուն քեզ քու ժողովուրդիդ հետ բաղդատես, կրնաս արև ըլլիլ. բայց թէ որ Լիգերոս Թագաւորին հետ բաղդատես, քու լոյսդ անոր առջին խաւար կըլլայ։

Նեքդենաբոս զարմանալով ասոր համարձակ պատասխանին վրայ, հարցուց թէ բերէր մեզի ճարտարապետներն, որ ուզեցի

աշտարակ շինելու համար ։ Պատրաստ ըսաւ Եղբրոս · միայն պէտք է որ տեղը ցըցտաս որ սկըսինք շինել ։ Անատենը Թագաւորը քաղքէն դուրս ելաւ տարաւ մէկ մեծ դաշտի մը մէջ՝ ցըցուց տեղն , որ պատրաստէր էր աշտարակին համար ։

Եղբրոս հոն տարաւ արծիւները , և չորս տղաքը դրաւ զամբիւղներուն մէջ գործիքներն ալ միատեղ · Թռուց թռչունները · ետքոր այս տղաքը վեր բարձրացան , սկսան միաբերան պոռալ , Թէ բերէք մեզի քար ու կիր , և փայտ , որ շինենք աշտարակը ։ Նեգգենաբոս երբոր տեսաւ տղաքներն օդին մէջ կըպօռան , արծիւներն անոնց հնազանդ ուր ուզեն տղաքը , հոն կերթան · հարցուց Եզոբոսին , Թէ որ աշխարհքէն այս Թևաւոր տղաքը բերիր ։ Պատասխանեց Եղբրոս · Այդ գերոս շատ ունի ասանկ տղաք · հապա դուն ի՞նչպէս բաղդատեցիր անոր , որ ձծներուն հաւասար մարդ է ։

Յաղթըւեցայ ըսաւ Նեգգենաբոս · ուստի այլ բան չունիմ ըսելու · բայց եթէ մէկ քանի առակ զուըցեմ · նայինք կրնաս շուտով քակել ։ Ես մէկ զարմանալի էգ ձի մը ունիմ , որ երբ կըլսէ բաբելոնին արու ձիերուն ձայնը , հոս կըսկըսի շուտով յղանալ ։ Թէ որ այս կարգէ դուրս գիպուածիս պատճառը կարենաս տալ , իմաստութենդ մեզի կըյայտնես ։ Ո՞վ մեծ Թագաւոր ըսաց Եղբրոս · մինչև վաղը ինձի ժամանակ տուր , պատասխան կուտամ հարցմունքիդ ։ Երբոր տեղը դարձաւ Եղբրոս բռնեց մէկ կատու մը որւան ծառաներուն , որ բոլոր քաղաքին մէջ

ծեծելով կը պաղատցընէին ։ Բայց Եգիպտացիք որովհետև սանկ կենդանիները կըպաշտէին (*), տեսան որ կատուն կըծեծեն վրանին Թափեցան բազմութիւ քաշեցին առին կատուն ձեռքերնուն որ չի ծեծեն. և գացին Թագաւորին յայտնեցին այս սոսկալի մեղքը ։ Թագաւորը կանչեց Եղբրոսն ըսաց, Թէ չէյսէմը որ մենք տարըծու պէս կըպատւենք կատուն. ինչո՞ւ համար այս բանս ըրիր ։ Պատասխանեց Եղբրոս, Թէ ես անոր համար ըրի, վասնզի անիրաւութիւն ըրաւ Սիգերոս Թագաւորին. ու այս գիշեր խզգեց անոր աքաղաղը, որուն ձայնովը գիշերուան ժամանակը յայտնի կըլլար. և խիստ արթուն կորիճ աքաղաղ էր ։ Կրկնեց Թագաւորը. ինչ կըխօսիս Եղբրոս. չե՞ս ամըչնար չինած սուտերէդ. ինչպէս կրնայ ըլլալ, որ կատուն մէկ գիշերուան մէջ Եգիպտոսէն Բաբիլոն երթայ ։

Եղբրոս ծիծաղելով ըսաց. եթէ քու ձիերդ Բաբելոնին ձիերուն ձայնը առնելով կըյղանան, այս բանս ինչո՞ւ ըլլայ անհնարին ։ Թագաւորը բանը հասկընալով շատ զարմացաւ Եղբրոսին գտուածին, և խելքին վրայ ։

(*) Ամէն չորքոտանի կենդանիները հասարակօրէն մեծ պատիւ ունէին Եգիպտոսի մէջ. մանաւանդ կովը, ոչխարը, կատուն, և այլն. անոր համար Եգիպտացիք ճճմանք կուտէին. ասոնց միսը չէին կրնար ուտել ։

# ԳԼ. ԻԶ.

## Իմաստութիւն Եզովբոսի:

Քիչ մը ժամանակէն ետև Թագաւորը բերել տուաւ (*) Արեգ. քաղքէն շատ իմաստուններ, և վիճաբանող գիտուններ, որ Եզովբոսին հետ հակառակութիւն ընեն. ուստի ամէնքը միատեղ Եզովբոսն ալ հետերնին կերակրի հրաւիրեց: Երբոր սեղան նստան, այն գիտուններուն մէկը դարձաւ Եզովբոսին ըսաւ, ո՛վ օտարական՝ ածն որ ես կըպաշտեմ, զիս ղրկեց որ մէկ խնդիր մը զուրցեմ, որ քակես: Պատասխանեց Եզովբոս թէ դուն գէշ կըխօսիս. վասն զի ած ամէն բան գիտէ և իրմէ ծածուկ բան չի կայ. ուստի մարդէ բան սորվելու կարօտ չէ, քեզի ինչու պիտի ղրկէ. այս խօսքով չէ թէ միայն դուն քեզ կանարգես, այլև ած ալ յիմար կընես:

Մէկ ուրիշն ալ ըսաց, թէ մէկ մեծ տաճար

(*) Արեգ քաղաք՝ այսինքն արեգական քաղաքը յունարէն կըսուի Հելիոպոլիս. հին ատենը արեգակին պաշտօնը հոն կըլլար, անոր համար այսպէս կոչուեցաւ: Այս քաղաքը Նեղոս գետին առ Արաբիային մէջն է. որուն բնակիչները բոլոր քուրմերն էին և գիտունները՝ որ Եգիպտացւոց ամենեցին քարոզողին հրամանովը:

մը կար, մէջը մէկ սիւն մը տասներկու քա-ղաքով․ ամէն մէկը երեսուն գերան [illegible] ունէր, որ երկու կնիկ կըպտըտէին չորս դին։ Պատասխանեց Եզոպոս, թէ այս ի՞նչ գեղե-ցիկ խնդիր է, որ մեր տղաքն ալ գիտեն մէկ-նել։ Այս տաճարն աշխարհքս է․ սիւնը տարին է․ քաղաքները՝ ամիսներն են․ գերան-ները ամսուն օրերն են․ երկու կնիկներն ալ, որ սիւնին չորս դին կըպտըտէին, գի-շեր ցորեկն է․ որ փոխ ի փոխ կըդառնան։

Միւս օրը Նեքտենաբոս պատուիրեց, որ իրեն իշխանները հոն գան․ ես շատ կըվախ-նամ կըսէր, չըլլայ թէ պարտաւորինք տուրք տալու Լիկերոսին Եզոպոսին պատճառաւը։ Խորհուրդ ըրին, մէկը իշխաններէն ըսաց․ թէ պէտք է մենք ալ պարտաւորինք Եզո-պոսն, որ մեզի անանկ խնդիր մը առաջար-կէ, որ ոչ պատճառ ունենայ և ոչ ցուցում․ մինչև մտքերնուս անցած չըլլայ, ու լսած ալ չըլլանք (*)։ Եզոպոս խօսք տըւաւ, որ վաղը հարցմունք կընեմ։ Ելաւ տուն գնաց մէկ թուղթ մը շինեց․ որուն մէջ գրած էր որ Նեքտենաբոս խօսք կուտայ թէ հազար տաղանդ Լիկերոսի տալիք եմ (**)։ Հետև-

(*) Որովհետև խորքն էր այս որ Եզոպոս ալ իրենց խնդիր հարցընէ, և գիտէին որ անոր խնդիրը չի կրնան պիտի հասկընալ․ անանկ խնդիր մը առաջարկին, որ չի կրնայ հասկընալ․ և լսած բաներնին ըսելու։ Անուշ ի՞նչ խնդիր որ ըսեր պիտի ըսէին, թէ մէկ-այդ բանը լսած ենք, և գիտենք, անպատճառ բան է․ ասոր այս ձամբով պիտի յաղթէին Եզոպոսին։

(**) Եզոպոս ալ անանց միտքը հասկընալով անանկ

եւ օրը բերաւ Թուղթը Թագաւորին իշխանները և խորհրդականները ուրիշ բան կարծելով՝ Թուղթը չի բացած միաբերան կանչեցին, Թէ մենք գիտենք, և շատոնց հասկցած ենք.՝ այս բանը մեզի նոր չէ։ Ա-րամհեան գիտենք կըսէք, ըսաւ Եզոբոս. եւ ալ ձեզի մեծապէս շնորհակալ կըլլամ և խոնարհութ՜ զիս պարտական կըհամարիմ ձեզի։

Բայց Նեգդենաբոս երբոր կարդաց Թուղթը, շատ նեղացաւ սիրտը պարաքին համար որ գրած էր. մինչև չի համբերելով կանչեց, Թէ ես Սիգերոսին պարտք մը չունիմ. վըկայեցէք ամենքնիդ ես անոր պարտական եմ։ Անատենը փոխեցին իրենց միտքն ու ըսին Թէ մենք ատանկ բան ոչ լսած ենք և ոչ գիտենք։ Կրկնեց Եզոբոս, Թէ ահա այս էր իմ խնդիրս, որ մեկնեցիք։

Ընտիր մը տրաւ, որ հարկաւ պէտք պարտաւորին. Վասն զի եթէ ըսէն իրաւ է, և չի քննէն, պէտք պարտաւորին. եթէ [illegible] հանէն թուղթը, [illegible] պարտաւորին. որովհետև իրենց բերնո[illegible] վկայեցին, թէ այս բանը չէնք լսած։ Այս [illegible] երկայրաբանութեն [illegible]. [illegible] հին ապէնը մանուկ մը ճարտասանի մը քով [illegible], և շատ բան խոստացաւ, թէ որ [illegible], մինչև [illegible] յաղթել անոր դատաստանին մէջ որ խօսի։ Այն բան [illegible] բան մը տալ. և [illegible] դատաստանին [illegible]. Վասն զի եթէ յաղթէր [illegible], պարտաւորան չէր ըլլար. եթէ յաղթըւէր, [illegible] դատաստանին [illegible]։ Ատոր [illegible] է Եզոբոսին [illegible] ալ։

Նեկտենաբոս անանկ զարմացաւ Եգիպտոսին այս ըրած բանին վրայ , որ չդիմացաւ կանչեց Թէ պէտք է խոստովանինք որ երջանիկ է Ակերոս · որ այսպիսի իմաստուն մարդ ունի իր տէրութեան մէջ · որ է իբր անհատնում աղբիւր մը գիտութեան ։ Այս խօսքէս ետև հանեց տուաւ հազար տաղանդը Եգիպտոսին , որ դաշինք ըրեր էին · և մեծ պարգեւական սիրով Բաբիլոն ղրկեց ։ Եգիպտոս Բաբիլոն հասաւ պատմեց Ակերոս Թագաւորին ամէն բանն որ ըրաւ Եգիպտոս · և տուաւ ոսկիներն , որ Նեկտենաբոսէն առեր էր ։ Ակերոս այս ըրած երախտեացը համար մէկ ոսկիէ արձան մը կանգնել տուաւ 'ի պատիւ Եգիպտոսին (*)։

(*) Հին ատենը շատ մեծ պատիւ էր երբ մէկուն անունը արձան մը կանգնէին · իսկ ոսկիէ արձան կանգնելը շատ գերազանց պատիւ էր ։ Միլթիադէս պաղատեց Աթենացոց Տէրութիւնը աղաչեց , բայց ոսկիէ արձան չի դրին · ասով կ'իմացուի Եգիպտոսին մեծ համարումն որ ունէր Բաբիլոն ։

## ԳԼ. ԻԱ.

### Եզովբոս գնայ 'ի Յոյնս, և 'ի Դելփոս։

Եզովբոս Բաբելոն գտնուելէն ետև՝ շատ չանցաւ միտքը դրաւ որ Յունաստան երթայ ժուռ գայ Թագաւորին հրամանովը․ բայց մինչև որ երդում չըրաւ նորէն ետ դառնալու՝ Թագաւորը հրաման չի տըւաւ․ ուստի խօսք տըւաւ Եզովբոս թէ կը դառնամ մինչև 'ի մահ Բաբելոն կը մնամ։ Գնաց շատ երևելի քաղաքներ Յունաստանին մէջ քալեց․ և ամէն տեղ իրեն իմաստուն փորձերն ըրաւ․ յետոյ ուզեց երթալ Դելփոս կղզին (*)։ Այս քաղաքացիք երբ անոր խօսակցութիւնը լսեցին, ուրախ կըլլային․ սակայն իրենց անշնորհք ըլլալովը մեկ յարգութիւն մը չըրին Եզովբոսին։

Իսկ Եզովբոս նայելով անոնց անմարդութենը զուրցեց․ ո՜վ դելփացիք եա ձեզ փայտի կտորի մը կը նմանցընեմ, որ ծովուն վրայ կերթայ կու գայ․ որոնք որ հեռուէն կը տեսնեն, կարծեն թէ երևելի մեծ բան է․ բայց

(*) Դելփոս կամ դելոս կղզին հին ժամանակը շատ երևելի տեղ էր․ որ Ապողոնի կուռքին ծնած տեղն ըլլալով՝ կռապաշտները հոն շինած էր շատ ճոխ տաճար․ ամէն աշխարհէ հոն կերթար։

երբոր ցամաքին կուգայ կը մօտենայ, կը հասկըցվի ինչ ըլլալը: Ես երբոր ձեր քաղաքէն հեռու էի, շատ կը զարմանայի ձեր վըրան, մինչև իմ համարմանս արժանի գրեր էի զձեզ. բայց երբոր հոս եկայ, շուտով հասկըցայ թէ սխալ է եղեր իմ կարծիքս. ուստի ես ալ միտքս փոխեցի. և հիմա ձեզ կը սեպեմ՝ ամենէն անպիտան մարդիկ:

Դելփեցիք այս խօսքերս լսելով վախցան որ չըլլայ թէ ամէն գացած քաղաքները պատմէ, ուզեցին զրպարտելով մեռցընել: Այս բանը ապահով գլուխ անելու համար (*), Ապողոնին երևելի տաճարէն գողցան մէկ ոսկեղէ աման մը, և բերին գաղտուկ պահեցին Եզոբոսին բաներուն մէջ. իսկ Եզոբոս ամենևին բան մը չգիտնալով՝ միամիտ ելաւ Դելփոս կղզիէն Փօկիդա երթալու: Մէկէն դելփեցիք վրան թափեցան արգիլեցին, ամբաստանութ̅ն ընելով, թէ դուն սրբապղծութ̅ն ըրիր: Եզոբոս զինքն արդարացընելով համարձակ կըսէր, թէ այդպիսի բան չեմ ըրած: Անոնք ալ բռնութ̅բ փընտըռեցին բաներուն մէջ գտան ոսկեղէ ամանը, որ իրենք դրեր էին հոն: Աւլին ամանը ձեռքերնին մեծ աղաղակով տարին բոլոր ժողովուրդին ցըցուցին: Եզոբոս հասկըցաւ

(*) Ապողոն էր Դիոսին որդին, ա̅ծ երաժըշտութեան և բանաստեղծութեան· որ այնչափ յարգելի էր հեթանոսաց, մինչև ամենքը անոր տաճարը կերթային, որ Մինոս թագաւոր շինած էր Դելփոս կղզին· քաղաքացիք այս տաճարով կը պարծէին, և իրենք անպիտան մարդիկ էին:

անոնց անօրէնութիւնը և յայտնելով իրեն ան-
մեղութիւնը աղաչէց որ թող տան իրեն եր-
թալ։ Իսկ անօրէն ժողովուրդը բանտը դը-
նել տըւաւ զայն, և դատաւորները վճռե-
ցին, որ դատապարտութեամբ մեռնի Եզովբոս
իբր օրինազանց։ Եզովբոս տեսաւ որ ակէ
մը ճար չի կայ, անանկ վտանգի մէջ ընկե-
նէր որ ազատում չունէր այն թշուառու-
թէն, սկսաւ իր անբաղդութիւնը լալ բան-
տին մէջ։

Դամաս անունով մէկ բարեկամը բանտը
գնաց․ տեսնելով Եզովբոսին խեղճութիւնը
սիրտը ցաւեցաւ, և հարցուց, թէ ինչու
համար կըվշտանաս կուլաս։ Պատասխան
տըւաւ Եզովբոս, թէ մէկ կին մը նոր թա-
ղէր էր երիկը գնաց գերեզմանին վրայ բոլոր
օրը լաց կըլար․ հոն մօտ ակըր երկրագործ
մը կաշխատէր, որ տեսնելով սոր լալը՝
թողուց եզներն ու եկաւ ինքն ալ գերեզ-
մանին քով կուլար։ Կինը հարցուց, թէ ին-
չու համար կուլաս․ անալ ըսաց, թէ ես
ալ իմ կինս թաղեցի, եկայ որ լալով սիրտս
պաղի։ Ինծի ալ ըսաց կնիկը, այս խեղճու-
թիւը պատահեցաւ։ Արկնեց երկրագործը․
ուրեմն երբոր երկուքիս պատահածն ալ նոյն
է ինչու համար մէկզմէկ չենք առներ, որ
երկուքիս կսկիծն ալ անցնի․ ես ինչ սէր
ունէի ընկերոջս վրայ, քեզի կըդարձընեմ,
դուն ալ անանկ ըրէ՝ կըլմընայ կերթայ։
Երբոր մէկմէկու հաւանեցան տալով սանկ
կըխօսէին, գող մը եկաւ եզները գողցաւ․
Երկրագործը արտն որ դարձաւ տեսաւ թէ
եզները չի կան․ սկսաւ անանկ դառն լալ․

որ չի կրնար ըլլալ: Իսկ կնիկը գերեզմաննոցէն դարձաւ արտը՝ նայեցաւ որ մարդը կուլայ. ո՞չ ըսաւ հիմայ ա՞լ կուլաս: Պատասխանեց մարդը, թէ ահա հիմա ունիմ ճշմարիտ պատճառ լալու:

Ասոր նման է կըսէր Եզոպոս, իմ խեղճութիւնս և վիճակս. վասն զի շատ վտանգներէ ազատեցեր եւ եկայ հոս ընկայ. հիմա ճար մը չեմ կրնար գտնել, որ մեռնելէս ազատիմ, որով դատապարտեցին զիս. ահա այս է պատճառն որ կուլամ:

---

# ԳԼ. ԻԲ.

## Մա՛հ Եզոպոսի:

Դեղփացիք բազմութ̃ ելան բանտը մտան բռնութ̃ քաշեցին դուրս հանեցին Եզոպոսն, որ տանին մէկ բարձր ապառաժ լեռան մը վրայ հանեն, ու անկէ վար նետեն: Եզոպոս սկսաւ առակներ զրուցել այսպէս: Երբոր կենդանիներն իրարու հետ կըխօսէին, մուկը գորտին հետ բարեկամ եղաւ. աղաչեց, որ երթայ հետը կերակուր ուտէ. ուստի առաւ տարաւ մեծատան մը տուն, ուր լեցուն բարիք ըլլալով համբարանոցը [illegible], կըսէր թէ ո՛վ բարեկամ գորտ՝ հրամմէ: Գորտը լաւ մը կշտանալէն ետև հրամցուց մուկին, որ անոր հարկին երթայ. բայց ճամբան չի հաղնելու համար

ուզէց որ ոտքը թելով մը անոր ոտքին կա-
պէ․ որպէս զի գործին հետ լողալով անցնի
ջրէն երթայ հոն։ Ասանկ կապելէն ետև
գորտը ցատկեց ջրին մէջ սկսաւ լողալ․ իսկ
մուկը ջրին մէջ խղդըվեցաւ․ որ մեռնելու
ատենը կըսէր գորտին, թէ դուն եղար իմ
մահուանս պատճառը, բայց դուն ալ օր մը
պիտի գտնես քեզմէ մեծէն։ Այս խօսքս
շատ չանցաւ կատարվեցաւ․ վ՟ զի մէկ որ-
ծիւ մը տեսաւ որ ջրին երեսը սատկած մուկ
մը կայ, վրան ինջաւ խլեց․ բայց գորտն ալ
անոր հետ կապած ըլլալով միատեղ յափըշ-
տակեց երկուքն ալ կերաւ։

Այսպէս դուք որ զիս անիրաւութեամբ կը
մեռցընէք, ասանկ ոտքի տակ առնելով, օր
կուգայ որ կը գտնէք, և ձեզմէ իմ վրէժս
առնող մը կըլլայ։ Բաբելոն և բոլոր յու-
նաստան իմ արիւնիս վրէժը ձեզմէ պիտի
հանեն։ Այսչափ խօսքերը ամեններն անոնց
սիրտը չի շարժեց, որ ողորմին իրեն։

Տեսաւ որ այլ ճար չի կայ, փախաւ Ապո-
ղոնին (*) տաճարը․ բայց բռնութեամբ անկէ
ալ հանեցին․ և կատաղութեամբ կը տանէին

(*) Այն ատենի և իրենց մէջ տաճարին պատի-
ւը լալու համար, հոն փախչողը կալապէր հին ատե-
նէն 'ի վեր․ ինչպէս Սպարտացիք հայրենեաց մատ-
նիչը տաճարէն չի կրցան հանել, դուռը լեցուցին։
Ադագայ ատեն, որ ծառս կըգայ, այն ծառին
դուռը փախչողը գերին ամեն կուրէյ։ Բայց Պե-
ղասգեն օրինեալ Եղիշեայ որբապէս համարե-
ցան, որ տաճարին անիրաւութեամբ ըլլալ կուտէին, ա-
ռոր համար բռնութեամբ կրցան դուրս հանել։

բարձր լեռան ծայրը։ Երթալու ատենը կը-սէր Եզոբոս. մեծ ըրէք ինծի ով ժողովուրդ Դելփոսի։ Մէկ նապաստակ մը արծիւէն փախչելով չգիտէր թէ ուր պահուի, որ թշնամուն ձեռքը չիյնի. գնաց բզէզին ծակը մտաւ, աղաչեց որ իրեն տեղ տայ. բզէզն ալ աղաչեց արծիւին, որ խնայէ խեղճ նապաստակին չի մեռցընէ. Երդում ըրաւ Դիոսին անուանը վրան, որ իր փոքր մարմինին չի նայի, աղաչանքին ընդունի։ Իսկ արծիւը անոր խօսքը բանի մը տեղ չի սեպելով թեւովը զարկաւ բզէզին, և յափշտակեց նապաստակը կերաւ։

Բզէզը բարկանալով անոր անարգանացը վրայ՝ թռաւ ետեւէն գնաց գտաւ արծիւին բունը. մտաւ մէջն ու ծակ մը բացաւ. յետոյ արծիւին հաւկիթները վար թափեց կոտրրտեց։ Արծիւը ապքնալով այս յանդըգնութենը վրայ ուզեց աւելի բարձր տեղ մը շինել իր բունը։ Բզէզը հոն ալ ելաւ, և առջինին պէս վնաս ըրաւ։ Արծիւը չգիտէր թէ ինչ ընէ, որ այս անծանօթ թշնամուն ձեռքէն ազատի, գնաց Դիոսին (*), որովհետեւ այս թռչունը անոր նուիրած ըլլալով իրեն պաշտպանութենը տակն է. ուստի դրաւ Դիոսին ծոցը իր հաւկիթները, և անոր յանձնելով աղաչեց, որ հոգ տանի։

(*) Ոլիմպեան Դիոս էր չաստուածներուն թագաւորը, և արծիւն է թռչուններուն թագաւորը. ասոր համար հեթանոսները կըսէին, թէ արծիւը Դիոսին նուիրած է. անոր համար Դիոսին արձանին քովը արծիւ մը կը դնէին։

Բայց բզէզը այդ առաւ կլորակներ չինել ու թռաւ երկինքը տարաւ Դիոսին գոգը ձգեց. Դիոս երբոր համն առաւ նեղանալով վեր ելաւ, որ վար ձգէ. բայց թոթուելովը հաւկիթներն ալ վար թափեցան կտոր կտոր եղան։

Իսկ Դիոս հասկցաւ բզէզէն, թէ այս բանս արծուէն վրէժ առնելու համար կընէր. որ ոչ միայն բզէզին բրաւ անիրաւութեն, այլև Դիոսին, որ երդումը չընդունեցաւ երբոր բզէզն բրաւ Դիոսին անունը վրա։

Արծուին որ դարձաւ եկաւ, Դիոս անարգելով զայն երեսը զարկաւ, թէ ահա բզէզը վրէժխնդիր ըլլալով քեզ կը տրամեցընէ. և խրատունք առնի քեզի այսպէս վրէժխնդիր ըլլալու։ Սակայն Դիոս չի կամեցաւ, որ արծուին ցեղը կորսուի. համոզեց խօսք հաւկըցուց բզէզին որ հետը հաշտուի։ Բզէզը չուզեց ամենևին հաշտուիլ։ Ուստի Դիոս խելք բանեցընելով փոխեց ժամանակն, որ երբ բզէզը չէ ելած դուրս, անատենը հաւկիթ կածէ արծիւը։

Ո՛վ ժողովուրդ Դեղոսի, մի՛ անարգէք տաճարը, ուր ես ապաւինեցայ. թէպէտ և անոր մեծութենը նայելով ես ոչինչ եմ, բայց գիտնամք ճշմարտութե որ հարկաւ կըպատժէ չարագործներուն անօրէնութիւնը։ Դեղոսացիք իրենց կատաղութենն ամենևին ետ չի կեցան. այլ միշտ առաջ կըտանէին Եզոպոսը մեռցընելու տեղն, որ պատրաստեր էին։

Եզոպոս տեսաւ թէ ինչ բան որ խօսեցաւ,

ամէնէն անոնց ականջը չի մնար, և կարող չեղար մտքերնին փոխելու, սկսաւ այսպէս խօսիլ: Մտիկ ըրէք ով անօրէն խստասիրտ ժողովուրդ. մէկ երկրագործ գեղացի մը պէտք ծերացեր էր, և ամէնէն քաղաքը ոտք չէր կոխած. աղաչեց մարդիկներուն, որ զինքը քաղաք տանին տեսնելու համար: Անոնք ալ էշերը սայլին կապեցին, և ծերը վրան դրին, թող տուին, որ քաղաք երթայ մինակ: Քիչ մը անցաւ մէկ սաստիկ փոթորիկ մը ելաւ. որ անանկ օդը մթնեցուց հովով անձրևով, մինչև էշերը ճամբան կորսնցուցին մոլորեցան չգիտէին, թէ ուր կերթան. խեղճ ծերը տարին լեռանը ծայրը հանեցին, որ վար պիտի ձգէին. ողորմելին զինքն այն մեծ վտանգին մէջ տեսնելով, վայ ախտոռ ինձի, կըկանչէր Փէբոսին. արդեօք քու մեծութեդ դէմ ինչ ըրած ունէի, որ զիս ասանկ ողորմելի մահուամբ կըմեռցընես. զօրաւոր ձիերէ, և կորիճ ջորիներէ չեմ մեռնիր, հապա անարգ էշերէն ահա կըկորսըվիմ, որ ամէն կենդանիներէն ցած են:

Ահա իմ վիճակս ալ այս խեղճ ծերուն նման է. որ շատ կըցաւիմ իմ անբաղդութեան վրայ. վ̃ զի չէ թէ իմաստուն և երևելի մարդկանց դատապարտելեցայ մեռնելու, այլ անպիտան անարժան չարագործներէն: Երբոր վար պիտի նետէին զինքը լեռանը վրայէն, այս եպքի առակս ըսաւ: Մէկ մարդ մը ուզեց անիրաւութիւն ընել իր զաւկին. իսկ զաւակը լալով կըկանչէր, թէ շատ աւելի կուզէի այս անիրաւութիւնը քաշել ուրիշ մարդիկներէն, քան թէ քեզմէ, որ իմ

ծնօղս եմ ։ Ահա ես ալ նոյն բանը կըսեմ ձեզի ով անօրէններ․ շատ աւելի կուզէի իջնել խորխորատը Սկիլլայի (*) կամ Գարիպդեսի, և կամ ապառաժը Ափրիկէին․ քան թէ ձեր անօրէն ձեռքովը մեռնիլ ։ Անիծած ըլլա ձեր հայրենիքը․ վկայ կըկանչեմ ամենքին, որ իմ մահուանս համար վրէժխնդիր ըլլան ձեզի, և պատուհասեն, որ զիս այսպէս անպարտ կը մեռցընէք ։

Իսկ Դեղփոսացիք առանց ուշադրընելու ապառաժին ծայրէն վար նետեցին՝ [illegible] Եզոպոսը մեռաւ ։ Քիչ ատենէն ետև բոլոր քաղաքը անպարտ դարձաւ ժանտամահէն․ մինչև գացին հարցուցին պատճառը Պատգամաւորին․ (**) որ պատասխան տըւաւ թէ այս պատիժս իրենց անօրէնութեները համար եղաւ, որ ըրին Եզոպոսին․ և պէտք է այս յանցանքը ջնջել, պատիժէն ալ ազատիլ․ որ անոր մահուանը համար կըքաշէին ։ Ի-

(*) Բանաստեղծները կըսէին, թէ Սկիլլա եր մէծ գազան մը Սիկիլիոյ ծովուն մէջ, որ առաջ յաւերժահարս էր․ երբոր [illegible] աստուածը Լուսաւոր- լու՝ ջուրը թեղած ըլլալով, բոլորովին գազան եղաւ, որ իր այլանդակ կերպարանքէն ապշած՝ ինքզինք ըլլալը ապրէն ջինքը ծովը նետեց․ ահա այս է խորխորատը Սկիլլայի ։ Այսպէս է և խորխորատը Գարիպդեսին, կամ ապառաժը Ափրիկէին ։

(**) Այս պատգամաւորն էր Ապողոնին տաճարին կամ երկրին․ երբոր գային կառքին հարցային ծանօթանալին պատճառը, տաճարին կառքին բերնէն պատասխան տըւաւ, ինչպէս սովորութիւն էր կռապաշտներուն ։

րենց խղճմտանքն ալ ստիպեց զիրենք, որ մէկ արձան մը կանգնեցին Եզոբոսին համար։

Երբոր Յունաստանի երեւելի մարդիկ և մեծամեծ փիլիսոփաները լսեցին այս անօրէնութիւնն որ եղաւ Եզոբոսին. շուտ մը Դեղոս կղզին եկան, քննեցին գտան Եզոբոս մեռցընողները, և բոլորը չարաչար պատուհասեցին։



Ժ. Աքաղաղ և մարգարիտ : ԺԱ. Գայլ և գառն :



ԺԲ. Գորտ և մուկն : ԺԳ. Շուն և ստուեր :



ԺԴ. Գայլ և կռունկն : ԺԵ. Երկրագործ և օձ :

# ԱՌԱԿՔ

# ԵԶՈՎԲՈՍԻ

## Աքաղաղ, և Մարգարիտ:

Զանարգ վաստակ՝ այր անիմաստ,
յարգոյ գնէ՝ քան զոսկերչ իմաստ:

Ով որ բանին՝ արժէք չնայէ,
գէշն ու լաւը՝ մէկ կը դնէ:

ա. Աքաղաղ մը աղբանոցը փորելով՝ յանկարծ կը գտնէ մարգրրիտ մը, մէկ դի կը նետէ ըսելով. Թէ որ մարգարտածախը այս բաղդիս հանդիպէր՝ փառք կուտար այ. բայց իմ աչքիս անանկ ոչինչ է, որ աւելի երջանիկ կըլլայի եթէ հատմը գարի գտնէի, քան թէ զայս մարգրրիտը:

---

Աքաղաղ կըսուի խորոզը, որ աղբանոցին մէջ ծառա գտնող մէկ անպիտան բան կը ճանչնայ, և եթէ գարիմը գտնէ՝ աւելի բանէն առաջի տեղ կը

կըտարածանայ. որ օրինակ է ուսմէ մարդկանց, որոնց ատղէն գիտութիւնը յարգ չունի, և գիտուն մարդն ու անխելք մարդը մէկ է. երբ անխելքներն շատ մը փառնեն, հապա իմաստունին հետ չեն խօսեր:

Ահա անիմաստ բերմունք անբանի,
զակնթ 'ի գարւոյ՝ որոշել չունի.
Դու մարդ բանական՝ ընտրեա զբարի,
զառաքինութիւն՝ նման մարգարտի:
Բարին յանարգէ՝ այնչափ տարբերի,
որչափ բանականն՝ յոգւոյ անբանի.
Մարդոյ է ընտրել՝ զիմաստ գանձ բանին,
իսկ աքաղաղին՝ զհուր անարգ գարին:

## Գայլ, և Գառն:

Յանդգնութ դաժան՝ սիրտ գազանին,
ոչինչ արգելէ՝ ձայն անմեղին:

Անիրաւ մարդն՝ երբ չար կընէ,
սուտ մուտ պատճառ՝ շատ կը գտնէ.

Ը. Գայլն ու գառը վազած ջրէ մը ջուր կըխմէին. բայց գայլը շատ վերն էր քան զգառը, և պատճառ կըփնտրուէր որ կերակուր մը յափշտակէ զգառը. ուստի տեսածին պէս մէկէն քովը վազեց, ու սկսաւ մեղադրել, թէ ինչու համար իմ ջուրս պղտորեցիր: Պատասխան տրուաւ գառը գողալով. ես ինչպէս քու ջուրդ կրնամ պղտո-

ըել. որ խմած տեղէդ շատ վարէն կըխմեմ. հաւատացի՛ր, մինչեւ ալ չէ անցած որ քեզի ամենեւին վնաս մը տամ: Կրկնեց գայլը, թէ երէկ քու հայրդ տեսայ, որ իր ձայնովը կը-յորդորէր շները որ զիս հալածեն:

Գառն ալ ըսաց թէ ամիսէն աւելի է, որ զիմ հայրս մորթեց մսածախը: Ուրեմն այն քու մայրդ էր, ըսաւ գազանը: Պատասխանեց, թէ իմ մայրս զիս ծնած ատենը մեռաւ: Գայլը ակռաները կրճտելով ըսաց. մեռաւ չի մեռաւ ես գիտեմ դուն և քու ազգդ ի՛նչպէս կատէք զիս. պէտք է որ ես ալ վրէժխնդիր ըլլամ: Զայս ըսելով ցատկեց գառին վրայ, ու պատռեց կերաւ:

---

Գայլը վայրենի գազան ըլլալով չարագործ մարդու մէկ մեծ նշանակէ և հալածանաց մէջ է. ու անիրաւութեամբ կը ջանայ յափշտակել անմեղ գառները. սակայն օրինակէ զրկօղ մեծատանց, որոնք սուտ պատճառներով կուզեն զրկել անմեղները:

Բարք է այս անգութ պատառօղ գայլի,
պատառել զանմեղն՝ չլսել ձայնի.
Հզօր չարագործք՝ զարդարն և խոնարհ,
խոշտանգեալ ճնշեն՝ նման գազանի:
Սակայն հատուցումն՝ 'ի դատաստանի,
արդարոց չարաց՝ կշռի և պահի.
Մա՛րդ քաղաքական՝ մի՛ զերթ ամեհին,
խածատեր զընկերն՝ ատեր զբարին:

## Գորտ, և Մուկն ։

Ըզվրէժ քինու՝ կառուսանիրաց,
լուծցեն արագ՝ ձեռք թշնամեաց ։

Կախս տերօղ՝ կոտաւ կերթայ,
Ինչ որ ընէ՝ զայն կը գտնայ ։

Է. Գորտն ու մուկը հակառակութիւն կը՝նէին. գորտը կըսէր թէ, իրաւունքն է որ ջրոտ տեղերը ես ժառանգեմ. և ընդ-հակառակն՝ մուկն ալ ոտք կըկոխէր, թէ ինձի կըվայլէ ժառանգել. այնչափ որ գորտը ալխոխ եղեր ժառանգութենէ, և բան չուզեց անոր ընել։ Բայց վիճաբանութիւնը չատուը տարցաւ, անանկ որ ալխոխ սկըսէին կռուիլ։ Մակայն շատ լաւ կըլլար թէ որ իրենց մէջ միաբանէին. վ.ն զի երբոր տարցած կըծեծկըռուէին, ու ամենևին թշնամին չէին մտածէր. ահա ուրուրը չալխօխը հեռուէն գի-տելով՝ յանկարծ վրա հասաւ, բռնեց կռուողները երկուքն ալ յափշտակեց ։

---

Օրինակ է խռովարար մարդկանց. որ հակառակու-թի ընելով զիրենց կոտորացընեն, և անով ուրիշը կըշահի. ինչպէս որ մէկ դատաստանի մը դատն կը-տրած է, թէ մարդ մարդու հետ միաբանութի չը-նելուն համար՝ փարն ալ կերը հոս միաբանեցան.

Այսպէս և փոքրիկ՝ իշխանաց գլխի,
երբ կռուելին վիճեն՝ 'ի վերայ գետնի.
Բայց հզօրագոյն՝ որ մերձ գտանի,
յափշտակէ զայն՝ կռուին եզերի:
Այս արդար օրէնք՝ է դատաստանի,
երկոքին կռուելին՝ երրորդն շահի.
Որչափ դատախազք՝ 'ի պայքար մտցին,
այնչափ դատաւորք՝ փաստաբանք հրճուին:

## Եղջերու, և Ոչխար.

Որ ոք ընկեր՝ լինի չարին,
փոյթ ուսանի՝ զգործս նորին:

Ով որ ընկեր՝ չարին ըլլայ,
շուտով աշակերտ՝ իրեն ըլլայ:

Գ. Եղնիկն ընկեր ըլլալով գայլին կըպահանջէ ոչխարէն, թէ ինծի չափ մը գարի տալիք ես, որ փոխ առեր քեզի՝ տուր. իսկ ոչխարը գայլին աչքին վախնալուն չուրացաւ. պարտքս է ըսաց կուտամ, թէպէտ անկէ բան մը չէր առած. և ժամանակ ուզեց հատուցանելու: Ժամանակն որ եկաւ՝ եղնիկը կերթար անպակաս ոչխարէն կուզէր գարին, որ ինչպէս խօսք տըւած՝ վճարէ պարտքը: Բայց ոչխարը երբոր տեսաւ զայն մինակ, սկսաւ ծաղր ընելով ըսել. ես չեմ պարտական խոստմունքս պահելու. որովհետեւ նեղը մնալուս, և գայլին վախուն խօսք

տըւի, որ քեզ ընկեր էր եղեր. գնա՛ բանդ, քեզի պարտք չունիմ։

---

Ընտիրն է կէսին, օրինակ՝ լաւ օրինակ առ-նուլն. այս խրատով պէտք է անզգամներէն հեռա-ծախուիլ. վասն զի աւելի դիւրին է բարի մարդ լաւ օրինակով գէշ ըլլալ, քան թէ գէշ մարդը բա-րի օրինակով լաւ ըլլալ։

Ահա՛ անխրատ՝ պահանջմունք եղին,
որ զոկէ զոչխարն՝ ահեղ գազանին.
Այսպէս անխրատք՝ ցասմամբ իշխանաց,
կողոպտեն զարդարո՞ն՝ զըկեն տնանկին։
Արդ մի՛ նմանիր՝ մի՛ անխրատին,
մի՛ ընկերանար՝ ակնառու չարին.
Բարիք ՚ի չարաց՝ ՚ի չար փոխարկին,
և բարք անմեղաց՝ փոյթ ապականին։

---

## Շուն, և Ստուեր.

Արդար պատիժ՝ է ագահին,
անյագ վազելը՝ զ՞հետ ոչնչին։

Ագահն որսոյն՝ լաւին ցանկայ,
այնչափ ագահ՝ խեղճ կը մնայ։

Է. Շուն մը լողալով գետէն կանցնէր՝ կը-տոր մը միս բերանը. ջրին մէջ կը տեսնէ մսին շուքը կարծէ թէ ուրիշ որս է. շուտ

մը կըձգէ ըսկըսին միան ու կըվազէ չգին ե֊ւանէն, որ իրեն մէկ պատուական կերակուր մը կերենար • բայց ի՞նչպէս յուսահատեցաւ, երբոր տեսաւ թէ իր ապահովութիւնը փուճ ե֊լաւ ։ Վա՜յ ինձ կըկանչէր ցաւելով իր ձգած մսին վրայ • Ես չգիտցայ պահել զայն որ ու֊նէի, ահա ունեցածս ալ կորսընցուցի ։

---

Շունը փափաքելուն կենդանի ըլլալուն ըսպանել կը ծածուկ, որ օրինակ է ագահներու մարդոց • որ չա֊փէն աւելով մէկ բանը կըյաղէ մէկալին եփնեն կը֊կորսնէ • և անով յետոյ ըսածն ալ կըկորուսընցընէ ։ Հարցուցին Բիաս փիլիսոփային, թէ ո՞վ է մեծա֊տունն • պատասխանեց թէ այն՝ որ բանի մը չի ցան֊կար ։

Քանի՞ շահասէրք՝ նման են սմին,
Թողուն զ°բաւականն՝ յանչափս ձկտին •
Կամ զոր ինչ ունին՝ շատ է քում անձին,
Մի՛ խորև զանձրան՝ ցանկար ստուերին ։
Ախտ է մոլեկան՝ այս ախտ ագահին,
Յոչինչ շատանալ՝ ոչ հանգչիլ սրտին •
Ցանկայ համապազ՝ նորանոր որսին,
Ձգէ զոր ունի՝ մաշի առ վշտին ։

# Առիւծ, և կենդանիք ․

Մի՛ յաճախեր՝ առ պետ իշխան,
յաչս նորա՝ լինիս խոտան ։

Թէ ծարբաժին՝ ծօղ չափ էրթաս,
անարգ ու շած՝ առջին կըլլաս ։

Է․ Առիւծն ու ոչխարը, և այլ կենդանիններ միաբան կերթան որս ընելու․ առիւծն երդում կընէ, թէ գտանելու աւենններս ամենուդ հաւասար կըբաժնեմ ով որ ինչ բըռնէ ։ Նոյնս որ ոչխարին որոգայթին մէջ ընկաւ եղնիկ մը, փաղեց ոչխարը շուտով իմացուց առիւծին, որ մէկէն հասաւ բըռնեց եղնիկը չորս բաժին ըրաւ ընկերներուն առջին ։ Առջի բաժինն ըսաց ինձի կիյնի․ վասն զի ես առիւծ կըկոչուիմ․ երկրորդ բաժինն ալ ինձի կըվայլէ․ վասն զի ամենէն քաջասիրտ ես եմ․ երրորդ բաժինն ալ պէտք է որ ես առնեմ, որովհետեւ ամենէն զօրաւոր եմ․ իսկ չորրորդ բաժինին համար ով որ ձեռքը ինձի հետ հակառակութիւն կընէ, մէկէն կըխղդեմ ։ Եւ այսպէս առիւծը բոլոր եղնիկը յափշտակեց, ու մէկը ընկերներէն չի համարձակեցաւ տրտունջ մը ընելու ։

Շատ մարդիկ երեւակայութիւն ընելով հնարած-
ները կարելի կերպով, որ օգուտ մը տեսնեն.
բայց անոնց միտքն որ բաներուն ընթանայ՝ անկէ եր-
կրածին ալ չեն նայիր։ Դիւրահաւատներ կենդանական
կերպեր, թէ բնութիւնները կրնան նման են. ալ ըստ
պէտք է մօտենալ, և մի հեռանալ։

*Իշխանք մեծատունք՝ նման առիւծին,*
*ինքեանց գլուխն՝ զշահ օտարին.*
*Իսկ ռամիկք նոցուն՝ ընկերել կամին,*
*կարծեն թէ ինքեանց՝ ելանէ բաժին։*
*Մի՛ լինիր ընկեր՝ հզօրագունին,*
*մի՛ շողոքորթեր՝ զարարս նորին.*
*Զի երբեւ գործի՝ լինիս 'ի ձեռին,*
*և յաւարտ գործոյն՝ մնաս անբաժին։*

---

## *Գայլ, և Կռունկն։*

*Մ՛ի նպաստեր՝ գործոց չարին,*
*զի մի՛ չարիք՝ 'ի քեզ հասցին։*

Ինչ որ ընես՝ ապերախտին,
բան չըրներ՝ իր ծոց ածին։

Է. *Գայլը երբեմն ոչխար մը կուտէ անանկ որկրամոլութեամբ, որ մէկ ոսկոր մը որկորին պօղազին մէջ կըմնայ. շատ ջանք ըրաւ որ օգնութիւն մը գտնէ, հանէ, չի կրցաւ. նաև տի որչափ որ աղաչեց ուրիշ կենդանիներուն փուճ՛ ելաւ. վե՛րջը ամէնքը կըթողուին անանկ՝ որ կանչէ, և մէկը ցաւակից չեղաւ.*

իրեն ցաւին. ծխ եղաւ կըսէին, Թող տան-
ջըլի իր անյագութիւնը: Միայն կռունկը ա-
նոր անոյշ խօսքերուն խաբուելով ուզեց օգ-
նուԹի ընել. և իր երկան կտուցքը խօԹեց
գայլին բերանն, ու որկորին մէջէն քաշեց
հանեց ոսկորը, որ կըխեղդէր զգայլը: Յե-
տոյ կռունկը հատուցում ուզեց այս մեծ
բարերարուԹեա, որ գայլը իրեն խոստացեր
էր հատուցանելու: Այս բանիս պատաս-
խան տրուաւ գայլը խնդալով. բարեկամ
դուն չե՞ս մտածեր ինձի հատուցում ընելու,
որովհետև կեանքդ ինձի պարտական ես.
երբոր կտուցքդ իմ բերանս էր՝ կրնայի վի-
զըդ փըցընել: Գնա՛ ապերախտ, շատ երա-
նելի ես, որ իմ բերնէս դուրս հանեցիր
կտուցքդ:

---

Առակս ցուցընէ անշնորհ մարդէն հեռու կե-
նալ, և բարութիւնը օգնութիւն ընել. զի ոչ ինչ որ
ընէ այսին ընելով. ու կ՚ուզէ շնորհակալ ըլլա-
լու փոխ փոխ շնորհակալութիւն կուզէ:

Տեսնե՞ր նորոգակալի՝ գործ զապերախտին,
որ չարիս խորհի՝ իւր բարերարին.
Զի փոխան բարեաց՝ որ պարտ է նմին,
անտի պահանջէ՝ վ՞գարձ փոխարինին:
Անմտութի է՝ նպաստել չարին,
կամ յապերախտէն՝ յուսալ զբարին.
Շատ է անվնաս՝ մնալ կենդան,
յորժամ նպաստեաց՝ ապիրատ գայլին:

# Երկրագործ, և Օձ ։

Բարերարին՝ խորհիլ ըզչար,
է գառն օձի՝ բարք չարաչար ։

Ով չար կուզէ՝ Բարերարին,
Չար կընէ՝ իր չար անձին ։

Է. Երկրագործ մը կըգտնէ ձիւնին մէջ պաղած օձ մը իբր կիսամեռ, կըխղճայ վրան ու կառնէ կըտանի իր տունը, կրակ վառէ կըտաքցընէ օձը, և այնչափ կըխնամէ, որ քիչ քիչ օձը հոգի կառնէ, և իւր բնական ուժը կըստանայ ։ Բայց առջի բանը այս կըլլայ, որ իր բարերարին դէմ կելլէ, և կըցանկայ որ խայթէ ։ Զարմանալով ասոր ապերախտութեան վրայ կըսէ երկրագործը. ո՛վ ապերախտ ա՜յս է երախտիք ճանչնալդ, որ քեզի ըրի, ես քու կեանքդ քեզի տուի. դուն կուզես իմս առնուլ չարագործ ։ Զայս ըսաց, և զարկաւ փայտով մեռցուց ։

---

Որչափ ապերախտին ընես օգնութիւն՝ փեշը որ գայ կը խայթէ իր բարերարը. առանց ալ ապերախտ մարդուն ինչ որ ընես, չափ մը կը մոռնայ, և չար հոգ փոխարէն ընելու կը ջանայ ։

Այս է դժնդակն՝ բերմունք ժանտ օձի,
կեայ 'ի մշտակն՝ երախտաւորի.

Զածէ զմտաւ՝ գործս հիանալի,
բառնալ 'ի կենաց՝ զնա նկրտի։
Արդար հատուցումն՝ է ապերախտին,
զրկիլ 'ի կենաց՝ վատանալ յանձին.
Որ ոք չկամի՝ վայելել բարին,
արդ առաջիկայ՝ հանդիպիլ չարին։

---

## Խոզ, և Էշ։

Քաջ յաղթանակ՝ է վեհանձին,
մերժել խոտել՝ զբան վատին։

Մեծամեծաց՝ վայելչն այս է,
որ ցած մարդէն՝ չըէծ լսանէ։

Թ. Օրմը էշն արհամարհելով ծաղր կընէ զխոզը. իսկ խոզը անանկ կըբարկանայ, որ մէկէն պիտի պատասխանէր զայն. բայց իր բարկութիւնը բռնեց, ու խոժոռ աչքով ըսաւ. չարագործ՝ ինձի դժուար չէ սորվեցընել քեզի քու անխելքութիւնդ. բայց հաճոյ բան չէ, որ ես մէկ ծոյլ անշահ անասունի մը հետ կռուիմ. վ՟ զի աշխատանքս չաժէր։

---

Մեծ խոհեմութիւն է պատասխան 'չի տալ ցած մարդոց խօսքին ու պատժել. վասն զի անձնապահութիւն չի վայլեր, որ իրենի անարժանին հետ։ Արիստիպպոսին ըսեց որ մէկը իրեն գէշ խօսեր խածնէր, մէյն այսպէս ըսաւ, թէ որովհետև օրհնել չէ սորված, անոր համար խածնէ։

Չէ՛ վեհանձնութիւն՝ չար առնել վատին,
և պատասխանել՝ անիմաստ բանին.
Առաքինեաց է՝ չլսել ձայնին,
և վրէժառու՝ լինել տկարին։
Քանի՛ անխորհուրդ՝ բան ասանակին,
Թողեալ զիւր հեղգ անձն՝ անդոսնէ խողին.
Յիմար է այն՝ որ ընդ հզօրին,
և ընդ վեհ քան զինքն՝ 'ի պայքար մտանէ։

## Ընտանի մուկն, և Դաշտային մուկն։

Խորտկաճաշին՝ կայ 'ի սեղան,
խառն ընդ խորտիկ՝ երկիւղ մահուան։

Անհոգ ուտելը՝ է լաւ համով,
տան մէջ համբերելը՝ ահով դողալով։

Ժ. Երբեմն քաղաքացի մուկն ու գեղացի մուկը՝ իրարու հարկիք կըննեն. գեղացին կըսկըսի իր հարկերը դուրսն ընել հեռու տեղ մը. և ծակէն դուրս կըհանէ իր պատուական կերակուրները. քիչ մը բակլայ, կըտոր մը պանիր, և քիչ մը խողի եղ. վ̃ զի աղքատ ըլլալով որչափ որ ձեռքէն եկաւ՝ այնչափ ըրաւ ծառայելու հաճոյ իր բարեկամին. որ աւելի գոհ եղաւ անոր լաւ մեծարանքին վրայ, քան թէ անհամ պաղ կերակուրներուն. ուստի քաղաքացի մուկը զըւարճանալով միայն ակռային ծայրովը կը

դպչէր կերակուրներուն, և չէր կրնար ու-
տել։ Ինչ և լցէ կերակուրը լմնցաւ. անոր
հրաւիրեց գեղացի մուկն, որ մէկալ օրը
երթայ իրեն տունը կերակուր ուտելու. և
պարծեցաւ, թէ շատ փափուկ կերակուր-
ներ անոր համար ըրեր է քաղքին մէջ. ուս-
տի գեղացին քաղաք գնաց անոր հարկէքը
և մէկ գեղեցիկ սրահի մը մէջ տեսաւ պատ-
րաստած՝ պատառի վրայ լեցուն պատուա-
կան մսեղէն կերակուրներ. բայց հազիւ թէ
սկսաւ ուտել յանկարծ մէկ ծառայ մը բա-
ցաւ սատոնիկ դուռը այն տեղին, ուր որ ա-
նոնք էին, և վերիվար ըրաւ ուրախութին
այս երկու բարեկամներուն. որ բոլորովին
վախցած փախան մէկը ասդին մէկալն ան-
դին։ Ծառան գնաց անկէ. քաղաքացի մու-
կը իր ընկերը կերակրի կանչեց, որ կիսա-
մեռ կըդողար վախուն. և հարցուց անոր
գեղացին, թէ շատ անգամ քեզի կը պատա-
հի՞ սաստիկ վախեր։ Անոր պատասխան տը-
ւաւ թէ ամէն անգամ կըհանդիպի. վա՜ զի
առանց նեղութեն ուրախութն չըլլար։ Գե-
ղացի մուկը ետ դարձաւ ըսաւ. քուկիններդ
ինչ որ ըլլան, հանդիստ վայելում չունին, և
անոր համար նորէն զիս փորձութեն մէջ չեն
կրնար ձգել։ Մնաս բարով, ես յառաջ նա-
խանձեցայ քու հարուստ կերակրիդ. բայց
դիտնաս որ հիմա շատ մեծ կըհամարիմ իմ
աղքատութենս, քան թէ քու բոլոր մեծու-
թիւնդ։



Ժա. Արծիւն և ագռաւն։ Ժբ. Աղուէսն և ագռաւն



Ժգ. Աղուէսն և այծիս Ժդ. Առիւծն և մուկն



Ժե. Գորտք թագաւոր խնդրեն։ Ժզ. Աղաւնիք և բազէ

Օրինակ է հարուստ և մեծամեծ մարդկանց. Մէկը մեծութիւն ունի՝ հանգստութիւն չունի, մէկալը հանգստութիւն ունի մեծութիւն չունի. բայց առող[illegible]ը մէկալէն շատ լաւ է. որովհետև մարդուս [illegible]ը թագուհին է մարմնին. երբոր հանգիստ կու[illegible]այ առանց արտաքոյն, անկէ առնելի մեծութիւն կու[illegible]ար ։

Զի՞նչ օգուտ գործեաց՝ մեծութեն ճաշին,
Երբ երկիւղ կասկած՝ նմա ընծակցին.
Եւ քանի՞ բերկրանք՝ աղքատ կերակրին,
Երբ անհոգ զուարթ՝ ուտէն 'ի դաշտին ։
Մի՛ ցանկար ընչից՝ մի՛ խորտկաճաշին,
և մի՛ երանէր՝ զբաղդ ընչեղին.
Զի տագնապ և վիշտ՝ յամէն վայրկենի,
ուտէն և մաշեն՝ զսիրտ և հոգի ։

## Արծիւ, և Ագռաւ ։

Դժուարահաւան՝ միտք զաղփաղփուն,
յամէն հողմոյ՝ կայ երերուն ։

Անխելք մարդիկ՝ ծօծօխական,
ամէն հովէն՝ կերթան կուգան ։

Ժա. Արծիւն իր ճանկին մէջ մէկ ոստրէ-[illegible] մը բռնէր կըսխմէր որ կեղեւը կոտրէ, մէջի միսն ուտէ. բայց ճար չեղաւ կոտրելու. զայն տեսնելով ագռաւ մը կըմօտենայ որ ձեռքէն առնու անոր որսը. ուստի ըսաւ

խորամանկութեանդ։ Ահա շատ աշխատած կը տեսնեմ զքեզ. Թռիր բարձրացիր երկինք որչափ որ կրնաս, և վերէն ձգէ վար ոստրէն այս քարերուն վրայ. որչափ ամուր ըլլայ՝ կը կոտրի կեղևը։ Արծիւը մէկ զարմանալի դիւրութիւն մը գտնելով հետևեցաւ ագռաւին խորհուրդին, ու ըրաւ։ Բայց խորհուրդ տուողը միայն իր շահին համար կըսէր զայն. վասն զի ոստրէն վար ընկածին պէս կոտրեցաւ և ագռաւը մէջին միսը հանեց կերաւ, ու խնդալով անոր դիւրահաւանութենը վրայ փախաւ։

---

Ագռաւը խորամանկ մարդու օրինակ է, որ միայն իր օգուտը կը նայի. [illegible] զգոյշ կենալու է անանկ խաբեբայէն, և խօսքին հաւատալու չէ. [illegible] ըներէն [illegible] կընէ։ Դիւրահաւա-[illegible] հարցուցին, [illegible] պատահական [illegible], [illegible] ընտանիներէն խաբեբայ մարդը։

*Երբ խորամանկ ոք՝ քեզ խորհրդակցի,*
*մի՛ կարծեր թէ նա՝ սակս քո խորհի.*
*Զամենայն օգուտ՝ յինքեան վերբերեալ,*
*կերակրի նովաւ՝ ծաղրէ զկնի։*
*Արդ մի՛ հեշտալուր՝ լինիր խարդախին,*
*որ մթին գունով՝ ծածկէ զնենգ սրտին.*
*Որչափ շողոմէ՝ 'ի սկզբան իւրին,*
*այնչափ զզջանաս՝ ծաղրիս զերթ արծուին։*

# Աղուէս, և Ագռաւ ։

Ունայնասէրո՞ն՝ բանիւ ունայն,
խաբի ծաղրի՝ միշտ է ունայն ։

Փառասէր մարդն՝ երբոր գովին,
շուտով խաբուի՝ անձն խօսքի ։

ԺԷ. Ագռաւը բերանն ունէր կտոր մը պանիր. աղուէսը հոտն որ առաւ վազեց ագռաւին առջին և ըսաց զարմանալով. Ի՜նչ բան է որ կըտեսնեմ. ես լսեր էի թէ քու փետուրներդ սև են. բէ՛ որ ա՛ծ, այս ի՛նչպէս ճերմակ են, որ կարապ ըօյ թռչունը քեզմէ ճերմակ չի կրնար ըլլալ ։ Կաղաչեմ՝ պարոն ագռաւ ինծի ներէ որ քիչմը վրադ նայիմ ուզածիս պէս. Ճշմարիտ կըսեմ, որ դուն ինծի անանկ աղուոր կերևնաս, որ չեմ գիտեր ի՛նչպէս զմայլիմ քու վրադ ։ Դորէն կըսէր աւելի անոյշ խօսքերով. ես հաւաներ եմ թէ միայն գեղեցկութիւնը չէ քու յատուկ կատարելութիւնդ. այլ բնութին որ կամեցաւ զքեզ ուրիշ թռչուններէն աւելի կատարեալ ընել, առանց կարծեաց քեզի տըւաւ հրեշտակային ձայն մը. երդում կընեմ, որ այնպէս գեղեցիկ երգօղ չի կայ մեր անտառներուն մէջ, ինչպէս դուն և սոխակը դի-լդի-լըլ ։ Այս խօսքերովս բոլորովին զըւարճացաւ ագռաւը, և ուզեց իմացընել, թէ աղուէսին ըսածը սուտ չէր, բացաւ

ջերմանն որ երգէ, բանալովը ձգեց բերնէն պանիրը ։ Իսկ աղուէսը յափշտակեց զայն, ու շուտմը երթալու հրաման ուզեց ագռաւէն․ և ծաղր ընելով ըսաւ․ շատ համ առի պանիրիդ անուշութենէն, քան թէ ձայնիդ գեղեցկութէն ։

---

Առակիս օրինակ է ունայնամտութիւն, որ անանկ կը խաւարցընէ մարդուս միտքն, որ առաջ գովասանքով խաբէին կը հպարտանայ, մինչև ամէնքը վրան կը խնդան ։

Ահա կուրութի՛ ունայնասիրի,
՚ի պատիր բանից՝ այլ յայլմէ լինի․
Որով յիմարեալ՝ ձգէ զոր ունի,
սի՛ն պաճուճանօք՝ հրճուի զոր չունի ։
Միտք փառասիրաց՝ հեշտութ՟ պատրի,
մինչ չասել զանձնէ՝ զի՞նչ եմ զի՞նչ էի․
Կարծէ թէ բանիւ՝ բնութի՛ փոփոխի,
անդէն յիւր յատկէ՝ փոյթ խայտառակի ։

# Աղուէս, և Արծիւ։

Որ ոք առնէ՝ բան անօրէն,
փոյթ գտանէ՝ յերկնաւորէն։

Ով անօրէն՝ բան որ ընէ,
Երկնաւորէն՝ շուտ կը գտնէ։

ԺԴ. Արծիւն իր բունը շիներ էր կաղնի մէջ ծառին վրա. ծառին տակն ալ աղուէս մը իր ձագերը կընայեր. այս երկուքը իրարու հետ սիրական կերենային։ Օրմը աղուէսը գնաց կերակուր գտնելու. արծիւն ինջաւ յանկարծ յափշտակեց աղուէսին ձագերն ու տարաւ բունը իր ձագերուն կերցուց։ Երբոր աղուէսը դարձաւ բունը, և հասկընալով դրացիներին ըրած անօրէնութիւնը՝ շատ սաստիկ բարկացաւ. բայց որովհետև յոյս չունէր հանելու իր թշնամուն, որ կարենայ վրէժխնդիր ըլլալ, ինչ որ կըցաւ վայն ըրաւ. իբր զի՝ իր բոլոր վրէժխնդրութե̃ հոգը ա̃յ Թողուց. իսկ ա̃ծ շատ չանցաւ անոր չարագործութիւնը պատժեց. վասն զի քանի մը օրէն ետև արծիւը կըգիտէր, որ երկրագործները զոհ ղուրպան կընէին մէկ այծմը իրենց կուռքին սեղանին վրա. վազ եկաւ կտոր մը միս յափշտակեց. որուն վրա մէկ քանի կրակ փակած էին, և անանկ տարաւ իր բունը։ Եւ որովհետև բունը շինած

էր յորդոր սահմանով․ և ուրիշ դիւրավառ-բաներով, մէկէն բռնկեցաւ․ և արծիւին ձագերը վար թափեցան։ Անատենը աղուէսն, որ կըսպասէր ծառին տակը՝ ընկաւ ձագե-րուն վրա․ և ինչպէս որ արծիւն իրեն ըրաւ, ինքն ալ անոր անանկ ըրաւ, մէկիկ մէկիկ զամէնը կերաւ ։

---

Աղուէսն է *թիլքի*, և արծիւն է *խարդալ* օրինակ անիրաւ մարդու․ որ միտքը կըդնէ թէ օտարին չար ընելը չէն լսուի․ բայց Աստուած արդար դատաւորն՝ ուրիշին ինչ որ ընէ, նոյն կը գտնէ, թէ բարի և թէ չար ։

Տեսնե՛ր պատուհաս՝ նենգամիտ արծուին,
որ ոչ խնայէ՝ իւր մերձաւորին․
Զածէ զմտաւ՝ վճիռ տէրունին,
Թէ որով չափես՝ չափի քեզ նովին ։
Արդ մի՛ ոտնակոխ՝ լինիր տկարին,
Թէ և 'ի բարձունս՝ ճախրես յեթերին․
Քանզի վրէժխնդիր՝ լինի քեզ երկին,
հուրբ հատուցանէ՝ պատուհաս կրկին ։

## Ծեր առիւծ :

Ծանր է և դառն՝ հզօր պետաց,
անկեալ խոտիլ՝ 'ի վատթարաց:

Շատ դժուար է՝ մեծամեծաց,
Երբ չանարգին՝ յանարգ մարդկանց:

ԺԶ. Առիւծը ծերութե̃ խուճելով այրի մաղարայի մէջ ընկած կը տանջուէր · անանկ որ հոգին բերանն եկեր էր · իսկ անասունները որովհետև այն աստիճանին մէջ չէին վախնար անկէ, ամէն կողմէն վազեցին եկան · որ սիրտը ծակելով նախատեն զայն · ուստի էշն ալ եկաւ, և խրոխտալով կից չիփէ նետեց, որ զարնէ անոր : Անատենը մ՛ն ըրաւ առիւծն ու դարձաւ գայլին և խոզին ըսաւ · ձեր ամէն նախատինքը որչափ կծու ըլլան համբերութ̃ կը քաշեմ · բայց էշն ալ կը համարձակի զիս նախատել՝ ա՛ն ահա ասոր չեմ կրնար դիմանալ :

---

Ծեր առիւծը՝ օրինակ է մեծատէ ընկած և ծերացած մարդու, որ իր ծառաներէն և թոռներէն նախատինք կը լսէ ծերութեան պատճառաւ · բայց ան աւելի պէտք է աւելի պատիւ ընել և օրհնելու արժանել, չէ թէ նախատելու ծաղր ըլլալ :

Այս է տարացոյց՝ հզօր իշխանին,
Երբ թափի յուժոյ՝ ու ի փառաց նախկին.
Ով որ ակնածէ՝ յերեսաց մեծին,
բնաւ կենդանիք՝ նախատել բերին:
Ցորչափ զօրութին՝ ունիս 'ի ձեռին,
մի թշնամանօղ՝ լինիր օտարին.
Զի գայ ժամանակ՝ տեղի տալ բաղդին,
քեզ ամենեքեան՝ նախատիչ լինին:

## Էշ, և փոքրիկ շուն:

Իւրաքանչիւր՝ յատուկ բնութե,
Են պատշաճեալ՝ իրք զանազան:

Ամէն մարդու՝ մէյ մէկ բան կայ,
որ սիրելի՝ անով ըլլայ:

ԺԵ. Պարոն մը երբեմն իր պզտիկ շունը սիրելով հետը կըխաղար իշուն առջին. էշը զայն տեսնելով նախանձեցաւ անոր երջանկութեր վրայ, և ինքիրեն ըսաց. ինչ կընէ այս շունս, որ մեր տիրոջը այսչափ սիրելուն արժանի եղած է. բայց քծնելով երբեմն թաթիկներին անոր կուտայ. հէ՞ թէ որ ասով սիրելի եղած է, ես ալ կընեմ ու քանի զայն պզտիկ անասունը շատ սիրելի կընամ ըլլալ: Զայս ըսելով ելաւ եաքի երկու ոտքին վրայ կեցաւ, և տիրոջն առջին կոշտաթի անոր պէս ըրաւ: Իսկ տէրը շատ զարմանալով մերժեց անոր կոշտ սէրը. և կան

չեց ծառաներուն, որ վաղեցին եկան աղէկ փայտ մը քաշելով հատուցում ըրին քաղաքավարութենը աւանակին։

---

Ած ամէն մարդու մէյմէկ բնութիւն և կենաց տըւեր է իրենց յարմար. Թէ որ մէկին կենացը կերնար մէկալին երթար, այն մարդն աղէկ չէր ըլլար. ապա ամէնքն ալ պէտք է իրենց ունեցածին վրա գոհ ըլլան, և իրարու չի նախանձին, չէ նէ իշուն զրուցը կըլլայնին։

Մի՛ ցանկար փոխել՝ վիճակ բնածին,
գործեալ 'ի բնէ՝ անսահղծ մտաքին.
Քանզի և բնութի՝ անցնիւր էակաց,
ետ զանազան գործս՝ ըստ իւրեանց յատկին։
Իսկ քեզ որ տէրդ ես՝ անսանոց սեռին,
ետ 'ի կատարել՝ վիճակ քո նախկին.
Զի ոչ 'ի բնութե՝ բնութն փոխարկի,
ոչ յատկութն շան՝ յէշ այլափոխի։

# Առիւծ, և Մուկն։

*Որչափ փոքրիկ՝ առնես բարի,*
*գտցես յետոյ զայն պտղալի։*

Երբ պզտիկ՝ բարիք մ' ընես,
առատօղ ձեռքով՝ զայն կը գտնես։

*Ժդ. Երբեմն առիւծը պառկեր կը քնանար. մուկ մը մօտեցաւ քովն ու հարիւր անգամ բոլորեն անցաւ դարձաւ. յետոյ համարձակեցաւ մինչև ցատկել գլխուն վրայէն։ Առիւծը արթընցաւ բռնեց մուկը. քիչ մնաց պիտի ուտէր. բայց այս բանս անարժան սեպելով իր բարկութենը, թողուց որ երթայ. իսկ մուկն որ անոր պարտական էր իր կեանքը, շատ չանցաւ միջոց մը գտաւ փոխարէնն ընելու իրեն. վասն զի քանի մը օրէն ետև առիւծն ընկաւ որսորդներուն ցանցը փաղախը. և անոր մռընչալէն պոռալու ձայնէն բոլոր անտառը թնդաց. մուկը լսածին պէս այս ձայնս վազեց եկաւ սկսաւ կրծել ցանցին օղակները, որով փաթթըրուած էր իր բարերարը. և այսպէս դիւրին մը ազատեց զառիւծը։*

---

Որչափ մեծ մարդ ըլլաս, ջանա որ ամենուն հետ անուշ վարուիս. ու պզտիկին մեծին աղէկութիւն ընես.

ձան դի օր խըլլայ որ պէտի ադէհլուքդէ մը ձեծ ջան
խընէ :

Չէ փոքր փոքուն՝ առնել զբարի,
Երբ հարկն բերէ՝ նպաստել այլում.
Թէ և Թագաւոր՝ իցես յաշխարհի,
կարօտիս երբէք՝ նպաստից փոքուն :
Քան զառիւծ հզօր՝ զի՞նչ հզօրագոյն,
և զի՞նչ քան զմուկն՝ անզօր փանաքի.
Այլ հզօրն ահա՝ կապի անդադոյն,
ազատէ անզօրն՝ զհզօր ամէհի :

---

## Ծիծառն, և Թռչունն :

Ա՜ռ քեզ խրատ՝ խորհուրդ ծիծռան,
կշռեա՛ զանցեալն՝ և զապագայն :

Բարէկամըն՝ խօստը մալ,
Էրէ ժէղ բարէ՝ խըրափ կըլէ :

ԺԷ. Ծիծեռնիկը տեսաւ որ երկրագործ մը կանեփ կամ քթանի հունտ կը ցանէր, վազեց գնաց ուրիշ Թռչուններուն իմացընելու : Օր կուգայ որ կըսէր այս ցանած հատերը ձեր գլխուն բան կը բանան. վասն զի կանեփը կը հասնի, և հաւորսը կերպ կերպ որոգայթներ կը շինէ ու զամէնքդ կը բռնէ : իմ խօսքս մտիկ ըրէք. ամէնքդ այս արտին վրայէն թռչելով կերէք բոլոր հունտերը : փուճ տեղը խրատ կուտար անոնց, որ ամենևին չուզեցին լսել. և մանաւանդ մէկ ան_

պէտ ձայն մը եկաւ իրենց, և ոչ թէ խոհեմ նախագիտութն ։ Ինչևիցէ կաննեփը բուսաւ ծիծեռնիկը նորէն ըսաւ անոնց․ թէ եկէք հանեցէք այս գէշ խոտը․ թէ որ թողուք զատոնք, շատ պիտի զղջաք ։ Պատասխան տուին թէ կուզես դուն հանէ՛․ մենք ատեն չունինք հանելու ։ Վերջապէս կաննեփը հասաւ․ նորէն վազեց ծիծեռնիկն ըսաց թռչչուններուն, թէ ինչ մարգարէութիւն որ ձեզի ըրի, շատ չանցնիր պիտի կատարուի․ եթէ կուզէք ձեր ազատութիւնը, փախիք այս կողմէն հեռացէք ։ Անոնք ալ ըսին․ գնա բանդշատախօս․ գլուխնիս ձանձրացուցիր, երբ պիտի ըլլայ որ ձայնդ կտրես, գնա մենք բանէ մը վախ չունինք ։ Զայս որ լսեց ծիծեռնիկը թողուց անոնց ընկերութիւնը ու հեռացաւ․ իսկ թռչուններն անոր խօսքին չուատալնուն համար շատ զղջացան․ բայց ինչ օգուտ բանը բանէն անցաւ․ վասն զի քիչմը ատենէն ետև հաւորսը հանեց իր կաննեփը, և ոլորեց որոգայթ շինեց, ու լարեց զամէնը բռնեց ։

---

Օրինակ է խոհեմութեան, որ եթէ գալիքները տեսնելով և բարեկամ խօսքին միտ ընելով պէտք է արթուն կենալ առջևով յետոյ եկածն ընել վտանգէն փախչիլ․ Թէ չէ նոյն վտանգին մէջ կիյնալու այն թռչուններուն պէս՝ որ խոհեմ բարեկամին միտ չըրին ու կորան ։

Նախատես լինել՝ ապագայ չարի,
մեծ իմաստութիւն՝ յիմաստնոց դասի ․

Քանզի նախատեան՝ համապաղ չահի,
արտաքոյ եղեալ՝ չարեաց բնաւին ։
Զի՞նչ մեծագոյն գանձ գիտունք ասասցին,
քան հաւատարիմ խորհուրդ մտերմի ․
Արդ մի՛ լքաներ՝ զխրատ պիտանի,
Նման անիմաստ՝ Թռչնոց երամին ։

## Գորտք Թագաւոր խնդրեն ։

Տրանջողին՝ ոչ պակասին,
ցաւք և վտանգք՝ զոր տայ երկին ։

Տժգոհ մարդիկ՝ ինչ որ ընեն,
Միշտ կը գանգտին՝ ունեցածէն ։

ժը․ Գորտերը կը ձանձրանան անանկ Ծիւա_ռանց Թագաւորի ․ որ մը միաձայն կըպօ_ռան , Թէ ով Գիոս , դուն մեզի Թագաւոր մը տուր , որ գիտնայ մեզ կառավարել ։ Իսկ Գիոս խնդաց անոնց անխոհեմութենը վրայ , և երկար ժամանակ չի կատարեց իրենց խըն_դիրքը ․ բայց հուսկ յետոյ ձանձրանալով անոնց աղաղակէն , որոշեց ակամայ կամքով կամքերնին կատարելու ․ և ձգեց իրենց լճին մէջ գերան մը ․ անանկ մեծ ձայն ելաւ գե_րանին իյնելումն , որ գորտերը ահերնուն զարհուրեցան , և ջրին տակը մտան , կիսա_մեռ կըդողային ։ Բայց քիչմը ժամանակէն ետև իրենց մէջէն մէկ աւելի սրտոտ մը գլուխը ջրէն դուրս հանեց , և առջի բերա_

նը չի համարձակելուն հեռուէն նայեցաւ նոր Թագաւորին · յետոյ այնչափ զօրացաւ որ մօտեցաւ գերանին, և ապա տեսնելով Թէ անշարժ է՝ սկսաւ ցաթկել վրան ելլել ինջնել: Անոր հետևեցաւ ուրիշ գորտ մը · անոր ալ ուրիշը հետևեցաւ · և այսպէս բոլոր գորտերն ելան Թագաւորին վրա · բայց շատ տրտնջացին այս իրենց անշարժ իշխանին համար, մինչև բողոքեցին Դիոսին, որ ուրիշ Թագաւոր մը տայ, որ կարենայ շարժիլ · իսկ Դիոս խրկեց անոնց Թագաւոր արագիլը * · որ քիչ ժամանակին մէջ կէսը հատցուց ուտելով: Իսկ գորտերը պօռացին կանչեցին ահագին ձայնով, և խնդրեցին որ զիրենք այն բռնաւորէն ազատէ: Բայց Դիոս այլ չուզեց լսել՝ ըսելով Թէ որովհետև դուք չուզեցիք քաշել ձեր բարի Թագաւորը · հիմա համբերեցէք չարագործին, և վախցէք որ աւելի գէշը չի գայ ձեզի:

---

Դիոս մեր գրոց մէջ Արամազդ կոչի · որ կռապաշտութէ ամէնը երկնից մէջ ալ կը կենէր · որուն [illegible] որ կըլլայ · բայց Դիոս կապայ կուէին[illegible] համար գործերն ալ [illegible] որ իրենց Թագաւոր տայ · [illegible] երբոր գործերը գիտցան [illegible]՝ հիները կուէին թէ իրենց Թագաւորէն [illegible] Դիոսին : Օրինակ է գանգատ[illegible] · որ ինչ ընեն կը տրտնջան, և [illegible] լէն ըլլար · անոր համար գէշ կըլլայ իրենց բանը:

Երբ զիշխան և տէր՝ տայ ումեք երկին,
չէ պարտ տրտնջալ՝ փոխել ըստ կամի:

Քանզի պատուհաս՝ է տրանջողին,
Թողուլ զբարին՝ հանդիպիլ չարի ։
Արդ մի տրանջար՝ ըստ առակողին,
երբ առաջնորդիս՝ 'ի կամաց վերին․
Որինչ անհաճոյ՝ 'ի քէն գտանիցի,
յօգուտ ևի խրատ՝ այն քեզ պատրաստի ։

---

## Աղաւնիք, և Ուրուր ։

Համբերողին՝ ամենայն փոյթ,
լինի անխայթ՝ բանջար անոյշ ։

Համբերօղ որդոյն՝ ամէն լեղի,
անոյշ կըլլէ՝ նման մեղրի ։

ԺԹ․ Ուրուրը սոսկալի պատերազմ կընէր աղաւնիներուն հետ, որ իրեն դրացի էին ։ իսկ աղաւնիներն այս թշնամութենէ ազատ ըլլալու համար կարծեցին թէ ուրիշ ճար չի կրնայ ըլլալ․ բայց եթէ թռչուններուն մէջէն թագաւոր մ' ընտրել, որ կարենայ իրենց թշնամութեան դէմ դնել․ բազէն շահինը եղաւ թագաւոր․ որ մտաւ աղաւնոցին մէջ պատճառաւ հասկընալու անոնց միաբանութեան ուժը․ և մէկէն ցաթկեց աղաւնիներուն վրայ բոլորը խղդեց ։

---

Շատ անգամ մարդ անհամբերութենէ մէջ նեղութենէ ազատելու համար անանկ բան մը կընէ, որ ա-

ունէր մեծ նեղութիւն մէջ կեանքի · նաև Թշնամոյն յետ-ևէն ազատելու համար, ունէր լարին յետոյ կը-մոռնալի ։

Այս է վատ բնութիւն՝ գժնեայ ուրուրին,
ցանգ Թշնամանել՝ զեւր հեղ գրացին ·
Որչափ քաղցրակեաց՝ լինի աղաւնին,
այնչափ գառնանայ՝ գազան Թշնամին ·
Սակայն համբերել՝ է գարման նորին,
ոչ մատնիլ 'ի ձեռս՝ հզօրագունին ·
Զի սակաւ փոյս՝ ուրուրն գործէ,
քան արեանարբու՝ սատակիչ բազէ ։

## Գող, և Շուն ։

Եթէ իցես՝ հաւատարիմ,
հաց նենգողաց՝ քեզ ոչ համին ։

Բարի ծառան՝ հաւատարիմ,
չէ խուզանել՝ արծաթն ոսկին ։

Ն. Գող մը կըջանար մէկ տուն մը մտնել գիշերվան մէջ, որ բաները Թալէ · բայց պահապան շունը Թող չէր տար · անդադար կըհաչէր · Իսկ գողը կտոր մը հաց ցըցուց շանը կարծելով Թէ անով կըպարտաւորէ զշունն որ լռէ ։ Բայց շունը մերժելով ըսաւ գողին · այ չարագործ ես կըխաբուէի, ու կառնէի քու ըռւածդ, Թէ որ չգիտնայի Թէ ինչ մըտքով կուտաս ինձի ։ Գնա կորիր

տակէ. վս՛ զի բան մը չի կրնար աւրել զիմ հաւատարմութիւնս ։

---

Օրինակ է հաւատարիմ ծառաներուն, որ շահի համար հաւատարմութենէ դէմ բան չեն ըներ իրենց տիրոջը. վասն զի խաչած կը խորշընէ մարդասէրը ։

Արդ մեր են ծառայք՝ պաշտպան մանկունք,
խոհեմ մտերիմ՝ շան հետեւեացին.
Տես զիա՛րդ մերժէ՝ զ՚կաշառ նենգողին,
յանարատ պահել՝ զիւր գանձ բնածին ։
Քանի՛ անարգանք՝ նենգօղ ծառային,
երբ քան զօրինակն՝ վատթար գտանի.
Անբանն 'ի սէր տեառն՝ ինքնադրաւ մրցի,
բանականն անփոյթ՝ խորդայ 'ի մահճի ։

---

## Էգ խոզ, և Գայլ.

Խորհուրդ և կամք՝ նենգաւորին,
է չար տանել՝ մերձաւորին ։

Զօրն երբ ջեղէ՝ խորհուրդ խոպայ,
Վախցնէ գելխոտ՝ բան կը բանայ ։

Իմ. Գայլը կը տեսնէ քած խոզ մը ծոցուոր և ծանրած, մօտենալով քովը քաղցրավար ձայնով մը կըսէ ։ Մայրիկ թէ որ կուզե՛նաս՝ ես քեզի օգնութիւն կընեմ, որ զաւկը

ներդ ծնիս • եթէ կուզես ձագերուդ ալ հոգը ինծի յանձնէ որ պահեմ. գիտնաս որ իմ քովս շատ ապահով կըլլան : Պատասխան ըրաւ խոզը • կնքահայր ես լաւ գիտեմ զայդ • բայց թէ որ դուն իմ եղած տեղէս ուզենայիր շատ հեռուն երթալ, ինծի կերեւնայ թէ ձագերս ալ մայրն ալ ասանկ խիստ ապահով կըլլային :

---

Հարկ է միշտ հեռու փախչիլ անզգամ չարէն՝ որ չարութեան արդէօք մարդը ազնուութեան ալ կրնար ընել. ինչոր ընէ՝ իր շահուն համար կընէ, և անոր [illegible] բարեկամին փառքը կուրէ :

Զխարդ ոճրագործն՝ խորհի ըղձալին,
ոչ մերձաւորի՝ այլ յատուկ անձին •
Մանկածու լինել՝ տենչայ ընկերին,
զի մանկունքն նոքեան՝ կերակուր լիցին:
Գայլակերպ նենգօղք՝ որչափ քեզ մերձին,
ջանան հեռանալ՝ 'ի ստուերէ նոցին •
Զի խորհուրդք նոցա 'ի չարիս բերին,
Թէև բարեկամ՝ քեզ երևեսցին :

## Որսորդ, և Շուն ։

Ո՛չ ինչ յանցանք՝ ծեր զինուորի ,
երբ բնական՝ յուժոյ թափի ։

Թէ չաշխատի՝ ժէղ ծեր ծառան ,
յանցանքն իր չէ՝ այլ ծերութեան ։

ԻԷ · Որսորդ մը վազեց եղնիկին վրայ , և կը ջանար թէ իր ձայնովը , և թէ փողին պօռալուն ձայնովը սիրտ տալ շանը , որ ծերութէն թօշնած անկար էր ։ Իսկ շունն որ աւելի ուժէ ընկած էր , քան թէ քաջութէ , ետքի ջանքն ըրաւ , ու անանկ արագութէ վազեց , որ հասաւ եղնիկին , և խածաւ զայն · բայց պակասութիւնը ակռաներուն եղաւ , որ չի կրցաւ բռնել արգելել ։ Անանը որսորդը տեսաւ , թէ որսը ձեռքէն ելաւ փախաւ , վազեց շանը վրան և սկսաւ զարնել նախատել , թէ բանի մը պէտք չես ։ Պատասխան տըւաւ շունը , թէ ես որ առջինը չեմ , պատճառը ծերութիւն է ։ Արդ ես կըխոստովանիմ որ հիմա զօրութիւն չունիմ · բայց ապէրախտ , դուն ալ միտքդ բեր զիմ քաջութիւններս որ կարողութեն ատենն ըրեր եմ ։

Մեծ անիրաւութիւն է ծեր աշխատաւորներն է-

ընել ձգել, և չի կրնար աշխատելու համար նա-
խատել. վասն զի անոնք ամենով իրենց պարտքն
ըրեր են. անոնցմէ միայն բան սորվելու է, ու ա-
ջի ըրած աշխատանքնին մոռնալու չէ :

Քանի՛ վշտաբեր՝ փորձառու ծերոյն, •
երբ թափեալ յուժոյ՝ նախատի յայլոց.
կամքն 'ի նա ամբողջ՝ և միտքն է արթուն,
իբրև անպիտան՝ ծաղրի 'ի յետնոց :
Արդ զի՞նչ վրիպանք՝ զի՞նչ յանցանք նորուն,
զի տայ և բռնայ՝ երբ կամի բնութիւն.
Շատ է զոր արար՝ յառաջ հասակի :
այժմեան զօրութին՝ 'ի խելսն պահի :

---

## Նապաստակք :

Երկիւղ կասկած՝ զգոյշ չնչին,
անհեղ գործեն՝ հանգոյն փղին :

Վախն ամէն բան՝ ահեղ կընէ,
ըլան ու ցորեր՝ այն կը պահէ :

ԻԶ. Նապաստակ մը սաստիկ շարժելով հովէն՝ սովորականէն աւելի ձայն կը հանէր. իսկ հոն եղած նապաստակները վախերնուն դող կելլեն. անանկ որ մէկը անոնցմէ կըսէ. փախչինք ազատինք ասա կըլլեմ որսորդի ձայն, և չներու ունալ : Ըսաւ բոլորը մէկէն ամէն կողմէն շուտով սկսան փախչիլ : Անոնց առջին ելաւ ջրոտ տեղ մը, որ զի-

րենք արգիլէց փախչելու. վա՜ զի գորտերը գրեթէն ջրին մէջ ցաթկեցին. և այս ձայնով այնչափ աւելցաւ նապաստակներուն առաջ-նորդին վախը, մինչև չի կրցաւ առաջ վա-զել. և չի համարձակեցաւ ալ ետ դառնալ. ուստի անանկ պաշարվեցաւ մնաց, որ չէր գիտեր ինչ ընէ ։ Բայց անոնց մէջէն մէկը սկսաւ մտմըտալ այս վախուն վրայ, որ զի-րենք այնպէս սաստիկ դողցուցեր էր. և մէ-կալոնց ըսաւ թէ ահա կըփախչինք հովէն, ու գորտերուն վախէն. ամօթ մեզի ։ Այս խօսքովս նապաստակները սիրտ առին, դար-ձան իրենց անտառը ։

---

Նապաստակն է Թաւշան . որ սաստիկ վախկոտ ըլլալով օրինակ է անպէտ մարդկանց . որ քաջձեռ-նը, թէ բանի փոք տնելով աշխարհէ թանաը կը հանէն ։

Զի՞նչ բռնական կիրք՝ իբրև երկիւղին,
վիթխարի գործէ՝ զառարկայս չնչին.
Զինուոր ցուցանէ՝ զոչխարս 'ի դաշտին,
ըերինք ծով անտառ՝ այնու պահպանին ։
Արդ մի հեռանիր՝ վասն նապաստակին, ;
որում անցնիւր գործք՝ որսորդ երևին.
Մի՛ յետս ընկրկիր՝ 'ի տեսս սատուերին,
զի միշտ երկնչիլ՝ է պատիժ վատին ։

# Ուլ և Գայլ։

Չարն 'ի բարին՝ կերպարանի,
յորսալ զանմեղն՝ յիւր ծուղակի։

Չարը Բարի՝ կը ձեւանայ,
որ զանմեղներն՝ իրենն որսայ։

ԻԳ․ Այծը կըփակէ իր ուլը, կամ ձագը գոմին մէջ, և կերթայ դաշտը արծելու․ իսկ գայլը կիմանայ, ու մայրը գացածին պէս կը վազէ կուգայ գոմին դուռը կը զարնէ․ ձայնը փոխելով այծու պէս կըսէ ուլին։ Ձագուկս երթալու առենս մոռցայ քեզ սիրելու․ շուտ ըրէ դուռը բաց որ իմ սէրս քեզի յայտնեմ․ բաց դուռը սիրական մօրդ։ Իսկ ուլը դուանը ծակէն նայելով ճանչցաւ, ու պատասխան տըւաւ, թէ չեմ կրնար բանալ․ իրաւ դուն այծու ձայն ունիս, բայց չարն այն է որ ես քու մօրմէնդ բոլորովին գայլ կը տեսնեմ։

---

Այս առակէս թո՛ղ սորվին ծնողք, որ իրենց զաւակը չար ընկերի հետ չի ձգեն, և իրենցմէ չի զատեն․ Իսկ զաւակներն ալ թշնամուն ձայնէն չի խաբուին, ու չարաչար կորսուին։

Տեսի՞ր զօրինակ՝ ոճրագործ չարին,
խնդրէ միայնակ՝ զծնունդ այծին․

Յեղյեղէ զձայն՝ իբր յուշկապարկին,
խարդախել զանմեղն՝ ծախել յորկորին։
Մանկի՛կ խոհական՝ մի՛ լսեր ձայնին,
մի՛ քեզ քաղցրասցի՝ բան անզգամին.
փախի՛ր 'ի նմանէ՝ զի գայլ է ներքին,
քո՛ քաղցր ծնողաց՝ հանգի՛ր 'ի բազկին։

## Ոչխարը, և Շունը։

Զրպարտողին՝ մերձ գտանին,
կաշառակուրծ՝ վկայք կրկին։

Զուրին շուտով՝ շատեր կուգան,
որ իր գործքին՝ օգնել ըլլան։

Ին. Շունը դատաստան կը կանչէ ոչխարը մէկ քանի կենդանիներու առջին, որ իրեն հաց մը տալիք է տայ, և անիրաւութե կը հաստատէր, թէ փոխ եմ տուեր։ Իսկ ոչխարը դատաւորներուն ցըցուց հաստատեց, թէ շունը անիրաւութ կը պահանջէր զայն. զի ինքը ամենեւին անկէ բան մը չէր առած. բայց որչափ ջանաց հաստատել, կորսընցուց իր իրաւունքը. վասն զի շունը վըկայ բերաւ անգղը, ագռաւը և ուրուրը. անանկ որ անոնց վկայութ այն կետին ոչխարը պարտաւորեցաւ հատուցանելու զայն, որ ոչ երբէք անկէ բան առած էր։

Անիրաւ մարդու հետ գլուխ ելլելէն · պէտք է ուզածը տալ, և հեռու փախչիլ անկէ · որ ա-ւելի բան մ' ալ չի հանէ :

Եկայք անիրաւ՝ անիրաւ դատին,
մատչին 'ի հանդէս առ դատաւորին.
Ողորմ զպատճառ՝ թխուրեալ արդարոյն,
վճռեն հաստատեն՝ բան զրպարտողին:
Վայ որ ստութիւն՝ փոխան ճշմարտին,
դնեն և ընդդէմ՝ լոյս ընդ խաւարին.
Խաւարն է այո՝ մութ նոցա բաժին,
ծնունդ ստութեան՝ ժառանգ գեհենին:

## Օձ, և Երկրագործ :

Տարապարտուց՝ բարեկացողի,
զեղջ ապաշաւ՝ կայ առաջի :

Ով որ ծուռ տեղ՝ կը բարեխնայ,
Ըրած բանէն՝ ետք կը զղջայ :

Իբ. Երկրագործ մը կըբարկանայ օձիմը վրա, որ իր տանը քով կը բնակէր, և այնչափ կը տաքնայ, որ կացինը ձեռքը վրան կը վազէ, որ սպաննէ : Բայց օձը կըփախչի մօտաւոր անտառին մէջ անանկ արագութեամբ, որ մարդը չի կրնար հասնիլ : Ժամանակէ մը ետև Երկրագործը կըտեսնէ, որ կարկուտը բոլոր իր ցորենը ջարդուբուրդ ըրեր է, կըհաս-կընայ թէ օձին իր ըրած չարութեանը պա-

տիժն է, որ ած զայն փոթորիկը խորկեց երկրին վրայ։ Ուստի այս պատիժս հանդարտեցընելու համար սկսաւ փնտըռել օձն, որ հետը հաշտըվի. և երբոր գտաւ՝ խօսք տըւաւ, թէ անկէ ետև ամենևին անորմէ վախ մը չունենայ, և աղաչեց որ դառնայ իր առջի բունը։ Բայց փուճ տեղը կաղաչէր, ու կըստիպէր զայն. վա՜ զի օձն ամենևին մտիկ չըրաւ, և շուտ մը անկէ հեռանալով կանչեց, թէ մեծ սիրով կըդառնայի քու տունդ, թէ որ չգիտնայի, թէ դուն դեռ կացինդ պահեր ես. և թէ որ կարենայի մոռանալ թէ դուն ի՞նչ մտքով օր մը զայն ինծի դէմ վերցուցիր։

---

Բարեկամութիւն է իրր մէկ բան մը, որ երևակայաթեամբ փափաքելով կըկամէ բարեկամութիւն սիրտը, որ կենծինդրեր ըլլայ. ասոր դէմը կըծածկէ, և բարեկամին կայլայլէ ըրածը նայէ. ասոր համար Պղատոն կըխրատէր որ բարեկամաց մարդը՝ հայլին նայի, բարեկամին բան ըրնէ. որ իրեն ալ աղէկ ինչպէս երեւակայածին եղաւ։

Ահա պատժայժ՝ կիրք դաղանային,
որ զհուր բարկութեան վառէ 'ի սրտին.
Նեղէ զմերձաւորն՝ այլև զընտանին,
'ի տանէ 'ի տուն՝ վարէ զդըրացին։
Արդ մի հաւատար՝ դու բարկասրտին,
թէև գտան անմեղ՝ քեզ երևեսցի.
Եթէ միանգամ՝ վշտացար անտի,
փախիր 'ի նմանէ՝ շատ է փորձառուին։

# Աղուէս, և Արագիլ։

Որչափ խաբօղն՝ է խորամանկ,
խորամանկէին՝ լինի կատակ։

Դուն որչափ որ՝ խարդախ ըլլաս,
քեզմէ ջաճին՝ ծաղր կըլլաս։

ԻԵ. Մէկ օր մը աղուէսը կըհրամցընէ զա-
րագիլը թէ իմ տունս հրամմէ՛ կերակուր
ուտելու. կըփափաքիմ որ քեզի լաւ հա-
կեր մ՚ ընեմ։ Արագիլը դէմ չի կեցաւ ու-
րախ ընդունեց անոր պատիւն, ու խօսք դը-
րած տանը գնաց։ Բայց պատիւը շատ քա-
ղաքավար եղաւ և հարկիքը անքաղաքավար.
վա՜ զի բոլոր կերակուրներն որ առաջ բերաւ՝
կաթէ շինած ջրի ապուր էին՝ տափակ ա-
մանի մէջ լեցած. անանկ որ արագիլը սե-
ղանին վրայ ուրիշ բան չի կրցաւ ընել, բայց
եթէ ամանը քըցըցելով գրեթէ բան մը չի
կերաւ. հազիւ թէ կերակրին համն առաւ։
Իսկ աղուէսը բոլորը լափելով բան չի թո-
ղուց. ու կը խնդար արագիլին վրայ, որ իր
բարկութիւը բռնելով չէր յայտներ. որով-
հետև աւելի նեղացած էր, քան թէ անօթի։
Այս ուրախութիւը աղուէսին շատ չի քշեց.
վա՜ զի այն օրը արագիլէն ալ հրամցուց զաղ-
ուէսն, որ երթայ անոր տանը կերակուր
ուտելու. և իրեն հանեց մէկ աման մը եր-
կան ու նեղ վիզով, և մէջը մանրած միս

լեցուն․ Ինքը դիւրին կերպով երկան բա- րակ կտուցքը ամանին մէջ երկընցուց ըսկը- սաւ ուտել հանգստութ̃, և խնդալ խաբող ադուէսին վրայ անոր ըրածին դէմ․ որ բո- լոր հարկէքին մէջ ուրիշ բան չի կրցաւ ը- նել, միայն թէ ամանը լզեց։ Այսպէս թողուց հարկէքն, ու անօթի մարած դարձաւ ամըչ- նալով գնաց։

---

Աղուէսը խորամանկ ըլլալով օրինակ է խաբե- բայ մարդոց, որ միշտ կըջանան ուրիշը խաբել․ բայց [illegible] թէ ինչ որ ընեն, նոյն կըգտնեն։

Զիմրդ. անվայել՝ քաղաքականին,
խարդախել զընկերն՝ ըստ խորամանկին․
Որպէս պատրանս՝ նիւթէ օտարի,
նովին պատրանօք՝ փոյթ խայտառակի։
Աղուեսու է բարք՝ ոչ բանականի,
խաբել և ծաղրել՝ զընկեր բարեկամ․
կեղծաւորելով՝ իբրև սիրելի,
զրկել և լափել՝ զօտարին սեղան։

## Գայլ, և Կիսարձան ։

Գեղեցկութի՛ բանականին,
ո՛չ մարմնականն՝ այլ է ներքին ։

Ի՞նչ շահ եթէ՝ դէմքն է աղուոր,
Գլուխն անխելք՝ պարապ հոր ։

ԽԶ. Օր մը գայլը կը մտնէ արձան շինողին խանութը, և կը տեսնէ հոն մէկ կիսարձան մը շատ գեղեցիկ շինած. առջի բերանը կը զարմանայ անոր աղուորութենը վրայ. բայց երբոր կը տեսնէ ու կը հասկընայ, թէ քարէ շինած անզգայ գլուխ մ՚ է, և բան չիմա՛նար. Ո՜հ ի՜նչ գեղեցիկ գլուխ է կըսէր. բայց մէղք որ խելք չունի ։

---

Իմացողութիւն ըղեղով կըլլայ, թէ որ ըղեղին բարակ երակները, և ոգիքը լաւ ըլլան, խելացի կըլլայ ։ Ասոր համար մեզ պէտք է մարդուս խելքին նայել, ոչ թէ դրսի կերպարանքին ։

Ձի՛նչ գեղեցկութի՝ անխիմաստ գլխոյն,
երբ զուրկ ՚ի խելաց՝ պանծայ գերադոյն.
Իմաստութիւնք միայն՝ գեղով գխաւութեան,
հրձուլին գեղապանծ՝ բանեկքին մարդոյն։
Քանզի կան պարծին՝ իբր անզգայ աստուն,
այլ զուրկ յիմաստից՝ են զերթ անասուն.

Արտաքուստ միայն՝ գեղեցիկ վառուն,
բայց անխել յաւէտ՝ արժան ըստ՚նկրքնոյն։

## Կաչաղակ, և Սիրամարգ։

Որ ոչ գիտէ՝ զչափ անձին,
Նախատանօք՝ չափ տան նմին։

Նայէ ըլլաս՝ մերան խելքով,
չէս աղուորնար՝ փառք դարդով։

ԽԹ. Սիրամարգ մը փետուր փոխելու ատենը՝ իր փետուրները կըթափէ. իսկ կաչաղակը ափաղանը զանոնք կըժողվէ, ու վրան կառնէ կըզարդարվի. և ինքը գեղեցկութեամբ շատ վեր կըդնէ, քան զսիրամարգը. մինչև հպարտութեամբ փքանալով կըթողու իր ընկերներն, ու կուգայ սիրամարգներուն ընկեր կըլլայ։ Բայց այս հպարտութեան շուտ մը խայտառակ եղաւ. վասն զի սիրամարգները ճանչցան անոր կեղծաւորութիւնը, ու սուտ փետուրները վրայէն փետտեցին. և շատ քըրքըրելով վռնտեցին իրենց ընկերութենէն։ Իսկ կաչաղակը փետտած և ծեծը կերած՝ չի կրցաւ մէկալ կաչաղակներէն ալ ցաւակցութեան արժանի ըլլալ. որովհետև զանոնք անարգեր էր առաջուց։

Առակս օրինակ է փառամոլին · որ ուրիշին խօ-
սքովը կը հպարտանայ, և կը պարծի · միայն կը նայի
որ դրսէն զարդարված ըլլայ · բայց ներսի ինչ է-
ղածը ըստուգով կը ճանչնան ուրիշները:

Այս առակս՝ պճնող հպարտին,
պճնի զարդարի՝ զարդու օտարին,
Որով թեկնածէ՝ համագոյն չքնաղին,
պանծալ ընկերօք՝ անցեալ 'ի կարգին:
Արդ զի՞նչ շահ բերէ՝ այն փառասիրին,
օտարին է զարդ՝ ոչ յատուկ անձին·
Երբ իւրաքանչիւր՝ զիւրն առնու 'ի բաց,
մնայ խայտառակ՝ մերժեալ յընկերաց:

## Ճա՛նճ, և Կառք:

Յիմար ճանճի՛կ՝ կարծէ զինքն ինչ,
սակայն յինքեան՝ է այն ոչինչ:

Պզտի մարդիկ՝ մեծ կը խօսին,
կարծեն ըլլաններն՝ իրենք ըրին:

Ը· Կառավար մը երբեմն իր կառքը արագան կը տանէր մէկ աւազոտ տեղ մը, որ երկու գօրաւոր ձիեր կը քաշէին արագութբ · Ճանճ մը կը տեսնէ զայն, և բզզալով կուգայ կը նստի կառքին վրայ, ու միտքը կը դնէ թէ ինքը միայն կը քալեցնէ զայն · հօ՛ տեսէք կըսէր որչափ փոշի կը հանեմ ահա:

Շատ մարդիկ կան որ յետադրնան բան չէ գործ, ու մեծ մեծ կը խօսին. և ուրիշին ըրած բանը իրենք ըրածի պէս կը պատմեն ճանճին նման. անոնք ներուն կըսեն, որ պէտք մարդիկ մեծ երաշ կը դնենէն: Արիստոտէլ փիլիսոփան հարցուց փղայ մը, որ մեծ կը խօսէր՝ ըսաց. ներանկ թէ մօտէր անցած բաները էս ոտնէնայի:

Տես զանմիտ արարս՝ անպէտս ակարլին,
պանծայ թէ իցէ կառավար մեկին.
Ոչինչ հայելով՝ յիւր անձն չնչին,
հոլովել կարծէ՝ զանիւս աշխարհին:
Առ քեզ 'ի խորոտ՝ զառակին իմաստ,
ծանիր զքեզ կշռեա՝ զի՛նչ ես և ուր կաս.
Մի՛ համեմատեր՝ զքեզ կարողաց,
զի մի՛ ծաղրեսցիս՝ յաչս անսողաց:

---

## Ճանճ, և Մրջիւն:

Որ զի՛նքն վեհ՝ դնէ այլոց,
մերժի խոտի՝ և 'ի փոքունց:

Քէնը մէ դներ՝ կարգը մեծին,
ծառը կըլլայ՝ մեծին քովերին:

լա. Ճանճը կըջանար մեծութեն իրաւունք ունենալ, որ իր սատիճանը մրջունէն շատ վեր դնէ. ուստի հպարտութեամբ կըսէր մրջունին, թէ ես ատանց պատճառաւ չեմ ուզեր քեզմէ վեր ըլլալ: Մտածէ ի՞նչ վիճա-

կի ո՞ր նման. ո՞ր ստեղծուած ինձի պէս ազնուական է։ Ո՛չ երբէք կաշխատիմ. ուր որ ուզեմ կը մտնեմ պալատներու մէջ ըլլայ՝ տաճարներու մէջ ըլլայ. և թէ ինչպիսի կերակուրներով ես կը սնանիմ, տէրը գիտէ. ինչ պտուղներու և դէմքերու վրա կը հանգչիմ։ Իսկ դուն մրջիւնիկ, զանոնք տեսնելով կրնա՞ս զքեզ ինձի նմանցընել, դուն որ ծակի մը մէջ կըբնակիս, ուրիշ ապրուստ մը չունիս, բայց հազիւ թէ փըթտած հատիկներով կապրիս. և անալ ուրիշ կերպ չես կրնար ունենալ, բայց եթէ մեծ աշխատանքով և հոգնելով։ Պատասխան տըւաւ մրջիւնը. Ճշմարիտ է թէ դուն պալատներուն մէջ կըբնակիս. բայց ձանձրացուցիչ ես ամենուն աչքին։ Այն գեղեցկուհիները՝ որոնցմէ իբր թէ անուշութիւն կըգողնաս, քեզ կը հալածեն և կանիծեն։ Ես կընդունիմ թէ դուն ամառը քան զիս լաւ կեանք կըվարես. բայց ձմեռն ինչպէս կապրիս գիտե՞ս։ Երբոր ցրտէն հալածուած պատին մէջ խեղճ կը սատկիս անօթի ծարաւ. ես հողին տակը իմ կերակուրներովս կապրիմ. և այն դժւար եղանակին մէջ իմ աշխատանքիս պտուղը կըվայելեմ ու կուրախանամ։ Ուրեմն պապանձէ ծո՛յլ. այլ զիս մի՛ անարգեր. թէ որ քու ապրելուդ կերպը ազնուական է, իմինս ալ առանց ծանրութեն շատ ապահով է։

---

Ասիկա մեծատուններն իրենց հարստութեանը նայելով՝ խոնարհները մարդու տեղ չեն դներ. աղքատն

մարդուս մեծութիւնը հոգւոյն վրայ ըլլալով շատ աղ-
քատ կայ, որ մեծատունէն շատ վեր է մարդկանէ։

Ամպարիշտ պարծանք՝ մնապարծ վառին,
պանծայ իբր ունակ՝ բարեաց բոլորին.
Ծ՛գնի վերագաս՝ լինել ընկերին,
և դատարկութի՛՝ ունէ զօտարին։
Գնա առ միջինն՝ ասի 'ի գրին,
ունի՛ր անտեսնել՝ զպիտոյս անձին.
Մ՛ի զերթ ձանձն անմիտ՝ ստվամաց լինիր,
մի՛ անմտութի՛՝ զծոյլն երանիր։

## Կապիկ, և Աղուէս.

Թագաւորաց՝ ոյժ զօրութիւն,
արուեստ հանճար՝ իմաստութիւն։

Խելք և իմաստ՝ թէ որ չունի,
արքայ ըլլալ՝ ունին ունի։

ԼԲ. Օր մը կենդանիները ժողվեցան, որ
իրենց մէջէն թագաւոր ընտրեն. կապիկը
կըմարիր որ ինքն ըլլայ թագաւոր. ուստի
անոնց առջին մէկ զարմանալի խաղ մ' ըրաւ,
և անանկ թեթեւութի՛ ցաթկըռտեց խաղաց,
որ իր ճարտարութի՛ը բոլոր ժողովքին սիր-
տը շահելէն ետև, միաձայն ալ իրեն նլաւ,
թագաւոր կոչվեցաւ։ Աղուէսն աղուէսը չի
քաշեց, որ խաբեբայ հնարքով արժանի է-
ղաւ կապիկն այս մեծութեը. ուզեց որու

գայթ մը լարել կայլիկին, և անոր ցըցուց մէկ փոս մը․ որուն մէջ որոգայթ մը պատրաստեր էր, վրանալ տերևներով գոցեր էր։ Տէր ըսաւ՝ դուն գիտես որ անցած օրեր այս ծակին մէջ մէկ անպատմելի գանձ մը դրայ։ Արդ ինչպէս տ̃րութիդ լաւ գիտէ, օրէնքով ամէն գանձ թագաւորին կ'իյնի․ դուն ես մեր թագաւորը․ այս գանձին տ̃ր որ ըլլաս ամենևին բան մը չի պակսիր քուկին մեծնալուն։ Ասանկ խօսքերով կապեկը խաբուեցաւ ցաթկեց փոսին մէջ․ բայց չէ թէ միայն չի տեսաւ զայն, որ կըխնդրէր․ այլև աղուէսին որոգայթին մէջ բռնուեցաւ։ Իսկ աղուէսը ծիծաղելով կանչեց անոր․ խեղճ յիմար ինչ խելքով միտքդ դրիր որ ուրիշները կառավարես, երբոր դուն ըզքեզ չիյտես կառավարել։

---

Օրինակ է անմիտ մարդկանց, որ Թագաւորի պէս հանգստութեան տեղին, ու գանձ գտնելու ետևէ կըլլան, և ունեցածնին կորսնցընելէն ետև խեղճ խայտառակ կըմնան։

Իմաստութիւն է՝ տիրօղ աշխարհաց,
և ոչ արութիւն՝ իշխանաց զօրաց․
Ուժի՛ր զիմաստից՝ գտանել զգանձ,
և մի աղուեսուն՝ թակարթիր ՚ի ցանց։
Ոչինչ չահ գործէ մեծութի փառաց,
Երբ աթոռակից՝ չեն հանճար իմաստ․
Զի իմաստնոց է՝ նախ տիրել ինքեանց,
ապա թագաւոր՝ գոլ այլազգ ազանց։

# Գորտ, և Կով ։

*Որչափ հպարտն՝ ուռնուլ ջանայ,*
*պայթի հողմով՝ ոչ մեծանայ ։*

Մէծ ըլըմըլը՝ ըսա մի ջընըր ,
Բէ մէ պօգուլու՝ օօ մէօ մէյնօր ։

*ձ՟. Գորտը երբեմն կով մը տեսաւ, որ խոտ կուտէր ջրոտ տեղի մօտ, սկսաւ ուռենալ բոլոր ուժովը, և ուռելով կանչեց ձագին, թէ որդեակ այս բանը չի կրնար ըլլալ, և չեմ կրնար քաշել, որ ես կովէն պզտիկ մնամ. լաւ նայէ ինձի կըսէր ես ինչպէս կը կարծեմ, ահա անոր պիտի հաւասարիմ մեծութիւնք ։ Պատասխանեց ձագը, թէ դուն անոր չես կրնար հասնիր, հանգիստ կեցիր ։ Ուրեմն ըսաց ահա տե՛ս ի՛նչպէս կրնամ ։ Անալ ըսաւ. պարապ տեղը կաշխատիս ։ Իսկ գորտը միշտ ուռելով կըսէր. ո՛հ կամ անոր կը հասնիմ. կամ թէ... Անխելք գորտը այս խօսքս չի կրցաւ լմնցընել. վասն զի ուռելով այնչափ մեծցաւ. որ մինչև ճաթեցաւ ։*

---

Ոհ որ իրմէ մէծին նայէլով խօսէ կիմօնը ճը-րէլ, ու մէծէրըան նմանիլ՝ գօրսին պէս իշլըյ. մէ ըն աշնըան իրէն յարմար կիմանէ մըօէր է իծ ։

Քանի՛ սըլանդակ՝ գիտունք տասցին,
հոգի փքացեալ՝ 'ի փոքրիկ մարմին.
Որ ջանայ լինել՝ նման վիթխարին,
ոչինչ խորհելով՝ թէ գործ է չնչին:
Այս գժնդակ կերպ՝ ոգւոյ հպարտին,
խորհի հանապազ՝ վեհ լինել յանձին.
Արքայից պետաց՝ նմանիլ տենչայ,
սակայն պայթուցեալ՝ նանրանայ ինքնին:

## Չղջիկան, և Թռչունք:

Այր անհաւատ՝ զերթ չղջիկան,
զուրկ 'ի լուսոյ՝ կայ 'ի մթան:

Թէ մէ Քծիւ՝ հաւատարիմ,
անարգ նըլլայ՝ ամէն տեղին:

Մ. Թռչուններն ու չորքոտանիները իրարու հետ կռիւ ունենալով՝ պատերազմ բացին, երբոր երկու դաս բաժնըվեցան, և սկսան ծեծկըւիլ. չղջիկը կամ գիշերահաւը չէնէ գալըն անոնց կողմէն ըլլալ, թշնամիներուն կողմն անցաւ, որ թռչունները տըկար տեսան. վասն զի անոնց կորուստը կուզեր: Բայց երբոր տեսաւ, թէ յաղթութիւնը թռչուններուն ըլլին, որ զանոնք թողուցեր էր՝ շատ զղջացաւ: Իսկ յաղթող թռչունները, և յաղթըված կենդանիները իրաւամբ բարկացան անոր անչափ անհաւատարմութեանը վրա, ու հալածելով պատուիրեցին որ կե-

նացը մէջ անոնց առջին չերևնայ։ Ասկէ ե֊ղաւ որ շղջիկը չի համարձակիր ցորեկն ե֊րևնալու, գիշերը միայն կը թռչի։

---

Խորտ թող տանէն անհաւատարիմ մարդիկ, ու֊րիշներ չըլլէն. Զատն ալ ատանքները մէկտն թող հաւատարմութիւն ըտնէին, և ամէնէն կընախատվին։

Տեսե՛ր զօրինակ՝ խաւարասիրաց,
որ առեան գլըյս՝ գնան խարխափած.
Ջի չեն արժանի՝ անհաւատարիմք,
վայելել 'ի լոյս՝ ընդ առաքինեաց։
Այդ չքնաղ զաշխարհս՝ զի՞նչ ինչ տապալեաց,
անհաւատարիմ՝ այր ընկերատեաց.
Որ առեայ զիւր ազգ՝ խառնի ը՞նդ օտարաց,
յօտարաց մերժեալ՝ մնայ խաւարած։

---

## Աղաւնի, և Բազէ։

Որ արդարոյն՝ չարիս խորհի,
չարագուշնին՝ ինքն հանդիպի։

Երբ անմեղին՝ փոսն ըսր խօսի,
փէշմէ ըարէն՝ յետուը կեյնէօ։

ԼԵ. Բազէն երկար ժամանակ աղաւնիին ետևէն ընկաւ, բայց չի կրցաւ բռնել. վեր֊ջապէս խելքը դարձած եկաւ ընկաւ հա֊ւորսին որոգայթին մէջ. նաև հաւորսն բըռ֊

Նածին պէս պատրաստվեցաւ որ սպաննէ։ Բազէն կըսէր անոր. մի՛ անողորմ ես քեզի ի՞նչ գէշութի ըրած եմ, որ զիս մեռցընել կուզես։ Պատասխան տըւաւ հաւորսը. թէ ի՞նչ գէշութի ըրեր էր քեզի այն աղաւնին, որ այնչափ ետևէն ընկար. և տեսայ որ կը հալածէիր. մեռնելու արժանի ես դուն ըսելով խղդեց։

---

Երբեմն ԱԾ թոյլ կուտայ անզգամաց, որ անմեղը հալածեն. Բայց յետոյ անոնց դէմն ալ մէկը կը հանէ, որ անզգամները անզգամով կը կործանէ. և այն անմեղին համբերութիւնը կը պսակէ։

Այս տարացոյց է՝ անզգամ չարին,
ակնդի հանապազ՝ ըղձեալ անմեղին.
՚ի կեղեքել զայն յիւրում ճիրանին,
ինքն կեղեքի՝ ձեռամբ որսողին։
Մի՛ անխրախիր՝ երբ թոյլ տայ երկին,
և մի՛ հանդիպիլ՝ քեզ լիցի չարին.
Քանզի չարքն յաւէտ՝ չարաւ կորնչին,
և անօրինօք՝ անօրէնք պատժին։

# Աղուէս, և Գայլ։

Որ խորխորատ՝ փորէ այլում,
ինքն անկանի՝ չարեօք'ի նոյն ։

Ով որ մարդնէ՝ կըլլայ նեղէօր ,
իրէն գլխուն՝ կուգայ ան օր ։

ԺԶ. Գայլ մը բունին մէջ նստած իրեն կերակուրներովը կապրէր, որ հոն ժողվեր պահեր էր։ Իսկ աղուէսն իմացաւ, վազեց եկաւ անոր հետ տեսութիւն ընելու. այս մտքով որ սատանութենով ձեռքէն կերակուրը յափշտակէ։ Բայց գայլը շատ զգուշութիւ նայելուն համար, աղուէսը չի կըրցաւ բան մը ձեռք ձգել։ Մտմտաց որ այս չըլլայ նէ, ուրիշ ճամբայ մը գտնէ։ Գնաց հովիւին տանը. և անոր իմացուց գայլին կեցած տեղն ու առաջն ընկաւ տարաւ հոն. խորհուրդ տուաւ որ այն չար գազանը մեռցընէ. վասն զի կըսէր շատ անգամ քու լաւ ոչխարներդ կերեր է։ Իսկ հովիւը հետեւելաւ աղուէսին խորհուրդին, ու գնաց հոն. ան զարկաւ գայլը մեռցուց, յետոյ աղուէսն ալ սպաննեց. որ իր շահին համար ուրիշին մատնիչ եղաւ։

---

Հովիւն արծանագէս ապրելոյն մարդիկը. որ ուրիշ մարդկանց խորհեց ըն յետոյ քան ակոփ

խնի : Աւանդ առ օր մը տապանան պէտք ընէ մօդ.նիներուն . որ ուրիշը մեծմեծ յանցանք մեղաց պար.ծառ կուլան :

Ազուխաբարոյ՝ նենգամիտ քսուն,
ջանի խարդախել՝ զընկերին զսուն.
Խռովէ ձգէ՝ զեղբայր ընդ եղբօր,
զի կերակրեսցէ՝ 'ի նոցունց զիւր փոր:
Արդ մի խարդախին՝ լսեր ձայն քաղցրիկ,
Թէև զերթ Թովիչ՝ սուլեսցէ հեզիկ.
Քանզի նա միայն՝ սակս իւր խորհի,
մինչև զմերձաւորն՝ 'ի սէր դոյզն օգտի:

## Գայլ, և Ոչխարք :

Թէ հաւատաս՝ ոխակալին,
փոյթ 'ի ժանեաց՝ ծախիս չարին :

Մէ՛ փոր ւէնիփըռ՝ լարէն յէտիբը,
փէռ կըյփէ՝ ճանըն ծանկը :

լէ . Շներն անանկ լաւ պահպանութիւն կընէին ոչխարներուն բոլորտիքն, որ գայլերը չէին համարձակեր մօտենալ անոնց . որոնք ուրիշ բան չէին մտմըտար, բայց թէ ինչպէս կըլլայ որ ուտեն զանոնք : Որովհետև ասանց մեծ վտանգի չէին կրնար գայլերը յայտնի բռնութ̃ գլուխ տանել բանը, պէտք եղաւ որ խորամանկութ̃ ընեն . տես թէ ինչ սատանութին բանեցուցին : Ոչխար-

ներուն առջին դրին որ հաշտութիւն ընեն ի-
րարու հետ. անոնք ալ ընդունեցան. և ա-
մենուն ապահովութենը համար կամեցան որ
երկու կողմէն ալ պատանդ ընծայեն տան ի-
րարու: Շները պատանդ գացին գայլերուն
քին. և գայլին լակոտներն ալ ոչխարներուն
քին գացին: Ոչխարները կարծեցին թէ ա-
մենք խիստ ապահով եղան. բայց շատ գէշ
եղաւ իրենց բանը. վա՜յ զի քանի մը օրէն ե-
տև գայլերը լսեցին լակոտներուն աղաղա-
կը, որ իրենց մօրմէն զատուելնուն համար
կը պոռային. այս բանն իրենց պատճառ ա-
ռին, ու խղդեցին շները քներնուն մէջ.
յետոյ վազեցին եկան ոչխարներուն վրան
ընկան պատճառելով, թէ ինչու համար գա-
ճիկքն աւրեցիք, ու մեր լակոտներուն նեղու-
թիւն տուիք: Եւ որովհետև շները չի կային
որ պահեն ոչխարները. թշնամիներուն ձեռ-
քը մատնուեցան, որ դիւրութ̅ե յափշտա-
կեցին զամէնքը:

---

Օրինակ է միամիտ մարդկանց, որ թշնամեաց խօս-
քին հաւատալով բարեկամներէն հեռու կը կենան, և
իրենց գլխուն անանց կորուստ, ու չարաչար կը մաշ-
ուին անդգամներուն ձեռքը. ասանկներէն միշտ հե-
ռու փախչելու է, և ոչ թէ բարեկամութ̅ի ընել:

Ահա բանութի՝ անգութ գազանին,
Ճգնի կլանել՝ զերամս ոչխարին.
Զխմբրդ քաղցրութ̅բ՝ դաշնակցի նոցին,
մինչև որսասցէ՝ զախրատ անմեղին:

Եւ զի՞ օգտայ էր՝ հաւատալ նոցին,
կամ զի՞ աղաչօք հաշտիլ ընդ գայլին.
Քանզի թշնամին՝ գայլ է մարդախանձ,
գժնեայ քանասար՝ դժրօղ անմեղաց:

---

## Փայտահատ, և Մահու:

Զոր ինչ գործես՝ կշռեա՛ զվախճան,
չունիս ինչ չաս՝ զերդն անպաման:

Մէ [illegible] [illegible]՝ [illegible],
[illegible] [illegible]՝ [illegible] [illegible]:

ԼԸ. Մ՛էկ փայտ կտրօղ մը աղաչեց անտառին, որ իր փայտերէն անոր փայտ մը տայ կացինին կոթը շինելու համար. իսկ անտառը խիստ աղէկ ըսաւ գլխուս վրայ. բայց յետոյ շատ զղջացաւ երբոր հասկցաւ թէ այս ըրած բարերարութիւնը իրեն կործանմանը պատճառ պիտի ըլլայ: Արդէն փայտ կտրօղը կացինին կոթն անցուցածին պէս սկսաւ անտառին ծառերը կտրտել, որ մէ մէկը կտրեց օր մը մէկալը. և այսպէս բոլոր անտառը կործանեց:

---

Պէտք է միշտ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible],
և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], որ [illegible]
[illegible] [illegible] է. [illegible] [illegible] [illegible] որ [illegible]



ԼԹ. Աղուէսն եւ խաղողն. Խ. Գայլն եւ շունն.



ԽԱ. Կապիկն եւ աղուէսն. ԽԲ Ձին եւ էշն.



ԽԳ. Եղն հայի 'ի ջուր. ԽԴ. Աքիսն եւ աղուէսն.

ընելով յանձնառութիւն նորա՝ իր ճնշումն ալ պատճառ եղաւ ։

Այսպէս անխոհեմք՝ նման անտառին,
Նպաստեն շարեաց՝ զէն տան 'ի ձեռին.
Որով և ինքեանք՝ ինքեանց կործանման,
տարաց համայն՝ պատճառօղ լինին ։
Սակայն իմաստունք՝ գիտող վախճանին,
զոր ինչ գործեսցեն՝ կշռեն նախ խորհին.
Զգաստ դող ընդդէմ՝ վնասաբերին,
ձգեն զամենայն՝ յօգուտ շահ անձին ։

## Աղուէս, և Խաղող ։

Ցորժամ չունի՝ վատն զբարին,
անգոսնէ զայն՝ իբրև չնչին ։

Ցած մարդն երբ չառ՝ բան մը ստրկած մը.
այնոյ բարին՝ հար նը դարնէ ։

Թ. Աղուէս մը երբոր անօթի կըմարիր, կըտեսնէ խաղողին կուզերը կախուած բարձր փայտերու վրա, և բոլորը հասած. խորագէտը կը բաղձայ որ ձեռք ձգէ. բայց որչափ որ վեր կը ցատկէ, չի կրնար հասնիլ որ առնէ ։ Ուստի տեսաւ թէ իր կարողութիւնը չպիտի հասնի, եւ դառնալով դըլուխը վերցուց ըսաց ։ Այս խաղողները ես ուզենայի՝ հեշտ կրնայի առնել ուտել. բայց ինձի անանկ կանանչ չի հասած կերենան, որ չին

արժէր այնչափ աշխատանք ինծի տալով զա-
նոնք փրցընեմ։

Նախանձոտ մարդը երբոր բան մը կը փնտռէ, ու չկրնար առնել, կուզէ վար զարնել այն բանը· բայց թէ որ ձեռք ձգէր ինքն ալ կուրախանար։ Այսպէս են շատ մարդիկները, որոնց խելքը կարճ ըլլալով գիտութեան չեն հասնիր· անոր համար գիտութիւնը և գիտուն մարդը վար կը զարնեն։

Իմաստ առակիս՝ խօսէ զնոսին,
որոց այլ է միտք՝ այլ ինչ 'ի լեզուին·
Տենչան 'ի սրտէ՝ ունիլ զբարին,
սակս զայն մերժեն՝ երբ յուսահատին։
Մ՚ի առեր զլաւն՝ հանգոյն խարդախին,
յորժամ չէ 'ի քեզ՝ այլ կայ յօտարին·
Նախանձու է բերք՝ այս ախտ մոլեգին,
երբ չունի մերժէ՝ զամէն ցանկալին։

## Գայլ, և Շուն։

Ազատութիւնն՝ է ձիրք բնութեան,
Նաև անբանք՝ այնու պանծան։

Ազատութիւնն՝ է գանձ բնական,
Մի՛ շուտ ծախեր՝ չայն դուռ ուծան։

Ճ. Գայլը խօսակցութիւն կընէր շան մը
հետ աղէկ ապրելու վրայ, և անոր երանի

կատար գիրութենը համար ։ Բարեկամ կը-
սէր քեզ ասանկ գէր և գեղեցիկ տեսնելով՝
պէտք է ըսել թէ քուկին վիճակն իմինէն
շատ վեր է ։ Պատասխան տըւաւ շունը, թէ
ամէնեւին մի տարակուսիր ատոր վրան ։ Ի-
բաւոր սիրելի՝ երբոր միտքս կը բերեմ, թէ
դուն ուրիշ տեղ չես պտուկիր, բայց միայն
անտառի մէջ միշտ բաց տեղեր, և շատ ան-
գամ ալ անօթի կը մեռնիս, ամէն աշխարհք
քեզ կատեն կը վռընտեն ու կը հալածեն.
իմ միտքս չի հասնիր թէ դուն ինչպէս կը
տանիս ասանկ խեղճ կեանքը ։ Իսկ ես ամէ-
նէն լաւ կերպով կապրիմ. աղէկ կը պառ-
կիմ. աղէկ կուտեմ պարոնի մը տուն, որ
զիս շատ անգամ կը սիրէ ։ Ուրեմն դուն
մտմըտամ իրաւունք չունիմ որ զիս ամէնէն
երջանիկ համարիմ ։ Սակայն հաւատամ ին-
ծի, և որոշէ որ հիմա իմ հետս գաս, ես
ինչոր ընեմ՝ դուն ալ ըրէ գացած տեղս. ա-
հա ասանց դժուարութեն իմ երջանկութենս
մասնակից կըլլաս ։ Պատասխանեց գայլը թէ
ինչ բան պէտք է ընել. գրեթէ ոչինչ ըսաւ
շունը. միայն թէ աւազակութենդ մէկ դի-
գիր, և ամէն ատեն շողոքորթէ զմեր տէ-
րը. այլ ուրիշ բան չի մնար քեզի ընելու,
բայց եթէ ուտել խմել հանգիստ քնանալ ։
Կրկնեց գայլը բոլորովին զուարճանալով.
բարեկամ թէ որ ուրիշ բան չի կայ, միայն
այս բաներով երջանիկ կրնամ ըլլալ, բոլորը
կընեմ քեզմէ լաւ ։ Զայս ըսաց ու գնաց
շունը ետեւէն, ճամբան երթալու ատենը գայ-
լը տեսաւ որ շանը վզին մազերը թափած
էին, հարցուց պատճառը ։ Պատասխանեց

շունը թէ այդ տեսածդ կըպատաճառուի օղա-կէն բռնածոյէն, որ վզս կըկապէ։ Կըկապէ՞ ըսաւ գայլը. ուրեմն դուն ուր որ ուզես չես կրնար երթալ։ Միշտ չէ ըսաց, բայց դրեթէ ամէն ուզածս ունիմ։ Շէն մնաս ըսաւ գայլը՝ ճամբայէն ետ դառնալով. ես քու վիճակիդ այլ չեմ ցանկար. զի իմ ա-խորժակս այն է, որ քիչ բարիք ունենամ ու շատ ազատութիւն։ Զայս ըսելով առաւ գնաց։

---

Բնական է, որ ամէն կենդանի կուզէ ազատ ըլ-լալ. Բայց բուն մարդու ազատութիւնն է ինքն իր բնութիւնը հրամել, ու անկարգ բան չընել, և միշտ ազատ ըլլալ 'ի նոյն։

Ուսի՛ր յառաւելս՝ չթողուլ հեշտին,
 Ձիրս ազատութեան՝ օժիտ բնածին.
 Ազատ կալ յախտէ՝ ազատ 'ի կրից,
 բուն ազատութիւն՝ է բանականին։
Մի՛ փոխանակեր՝ զայն ընդ ոսկեղէն.
 մի՛ ընդ հեշտութեան՝ դներ 'ի կշռին.
 Զի զազատութիւնն՝ 'ի կշիռ եդին,
 համայն գանձք երկրի՝ ոչինչ կշռեցին։

## Անդամք, և Որովայն :

*Որ անհնազանդ՝ է իւր պետին,*
*վաղ նմանամայ՝ ջնջի ինքնին :*

[illegible]
[illegible]

խա. Օր մը մարմինին անդամները բարկանալով որովայնին կամ փորին դէմ՝ ըսին. մենք միշտ աշխատանքով կըտանջուինք ո-րուն համար, բայց ինքը մէկ որկրամոլի մը համար, որ ամէնէն մեր աշխատանքին ձեռք չի զարներ, ու բոլոր պտուղը մինակ ինքը կուտէ: Ասկէ ետև թող գտնէ իր ապրուստն ու ապրի՝ կըսէր ձեռքը. ես այլ բան մը չպիտի տամ անոր: Ոտքը կըսէր թէ ես այն ծուլին համար որչափ քալեր աշխատեր եմ, և անանկ հոգնած եմ որ այլ պիտի հանգչիմ: Սրունքն ալ մէկ ալ գիտեն կըսէր. ինչ կուզէ ըլլայ, ես այլ չեմ կրնար անոր շարժիլ: Եւ այսպէս որովայնը երեսէ ընկած ուժը սկսաւ տկարանալ. երբոր որովայնը ուժը կորսնցուց, ամէն անդամն ալ իրենց ուժը կորսնցուցին. և մէկէն հալեցան մաշեցան, ու ետքը անոր հետ ոչնչացան:

---

[illegible]
[illegible]

կը մտածէն. որ լաւ խառնակերպինք ։ Ով որ ծնին հնազանդութ ըլլալէր ըլլալ՝ ըստ բնութեան կը խորտակին ։

Քանի՛ գեղեցիկ՝ խրատ պիտանի,
խրատէ զմարդ՝ պատկառ կալ պետին.
Ցորչափ է հնազանդ՝ իւրում իշխանին,
պայծառ 'ի լաւ անդր՝ կայ անդրդուելի։
Ձքնաղ զարդ հոգւոյ՝ է բանականի,
այս ունակութիւն՝ ըստ որում ասի.
Քանզի այր հնազանդ՝ պատմէ զյաղթութն,
հնազանդեալ իւր տ̃ն՝ յաղթէ աշխարհի ։

## Կապիկ, և Աղուէս.

Ցիմարութիւն՝ է ցանկալ յինչ,
որ կարևոր՝ ինքեան չէ ինչ։

Ան բանն որ քեզ՝ չէ պիտոյական,
Ինչո՞ւ կուզես՝ որ քեզի տան ։

խջ. Կապիկը կաղաչէր աղուէսին, որ իր պոչէն քիչ մը տայ անոր ։ Ա՛ղբարիկ կըսէր, ահա տես ես ամենևին չունիմ ու դուն շատ ունիս ։ Իսկ աղուէսը այս անոյշ խօսակցութենս վրայ սկսաւ բոլոր ուժովը ծիծաղիլ, և տալա պատասխան տուաւ, թէ որ ունենայի հարիւր անգամ աւելի շատ պոչ, առաւել կախորժէի գետինն աւլել, քան թէ մէկ կապիկի մը ետին գոցել ։

Օրինակ է անոնց, որ իրենց պէտք չեղած բանին ետևէն կիյնին. և իրենց առջինները կուզեն ճանալ ասանկ խրթին բաներ, որ ալ խելքերնին չհասնի, և ալ իրենց պէտք է։

Խրատէ՛ առակս՝ ոչ ցանկալ այլում,
 շատանալ այնու՝ զոր ինչ ետ բնութիւն.
 Զի իւրաքանչիւր՝ կատարելութիւն,
 իւրաքանչիւրոց՝ չէ յարմարագոյն։
Կապկի է այս բարք՝ և ոչ իմաստնոյն,
 ցանկալ զոր ետես՝ օտարին բարւոյն.
 Որով և լսէ՝ զոր ինչ ոչ կարծէ,
 զանարգանաց բան՝ ծաղրող յընկերէ։

## Ձի, և Էշ։

Թշնամանօղն՝ ամբարտաւան,
 դժբաղդութեանց՝ լինի արժան։

Որուն գոռոզն՝ հպարտանայ,
 այնուն անարգ՝ ունէնն կըլլայ։

ԿԶ. Ձի մը գլուխը վեր բռնած հանդէսով կերթար, և վրան ծանրագին զարդարանքներ լեցուն ըլլալով հպարտ կը շարժէր։ Մէկ էշ մը անզգուշութիւն անկէ անցնելով ձիուն ճամբան կարգիլէ։ Իսկ ձին գոռոզութիւն կըսէր անոր. մի՛ անպիտան՝ դո՞ւն միացիր իմ ճամբաս արգիլող կորսըվէ՛ մըկէ, չէ՛նէ վրադ կոխելով կանցնիմ։

Յաստիկ վախնալուն էշը շուտմը մէկ դի կը փախչի ։ Առիւծները ձին ուզեց իր զօրութիւնը յայտնել թէ որչափ վեր է էշէն ․ սկսաւ բոլոր ուժովը վազել ․ բայց վազելուն ա֊ նանկ չարաչար աշխատեցաւ, որ մարմինը վտանգեցաւ ․ և անկէ ետև անչափ անպիտան եղաւ ․ մինչև տէրը տեսաւ որ բանի չի գար հանեց երկրագործի մը ծախեց ։ Երբոր էշը դարձաւ Ջաղացքը, քանի մը օրէն ետև տե֊ սաւ ձին որ սորը կը քաշէր գետինը փո֊ րելու համար, շատ զարմացաւ ․ և անոր ը֊ րած անարգանքին դէմ կրնար ինքն ալ ը֊ նել ․ բայց մարդավարութէ համար ամե֊ նևին բան չըսաց, ու մեծապէս ցաւակից եղաւ անոր ։

---

Ով [illegible]

Խրատ պիտանի՛ 'ի բանէս ուսիր,
մի՛ հպարտանար՝ այլ յաւէտ երկիր ․
Բաղդին է այն ձիըը՝ այնպէս զարդարդուն,
որ սայ և բառնայ՝ բառ շարժիլ հողմոյն ։
Զխոնարհ նայելով՝ ձեռներ չքնաղ ձին,
քանի՛ անարգանս՝ ձգէր օտարին ․
Ո՛վ ահա ձգէ՝ զօրօր 'ի գետին,
արժանի եղեալ՝ թշուառ վիճակին ։

## Եղն նկատէ զինքն ՚ի ջրի։

Մի՛ լեր սիրող՝ ինքնահաւանութեանն,
և մի՛ գովեր՝ զինչ կայ յինքեան։

Շատ մի հաւնիր՝ ունեցածիդ,
որ շատ ցաւ՝ չի գայ անձիդ։

Խրտ. Եղնիկ մը մաքուր ջրին մէջ իրեն նայելով անանկ կը հաւնի եղջիւրներուն բարձրութեանը, մինչև կլակլան սրունքները պաճառնէրը անարգել. որ խիստ բարակ ըլլալով իրեն անհամեմատ կերևնային։ Երբոր սիրտը կտրած սաստիկ կընայէր ոտքերուն վրան, ահա որսորդ մը հասաւ հոն, և շները ձգեց անոր ետևէն։ Եղնիկը մէկէն սկսաւ վազել դէպ ՚ի անտառը, ուր տեղ սովոր էր փախչելու. և երբոր թեթև սրունքներուն վազելովը պիտի ազատէր, եղջիւրները խառնըլվեցան խիտ ոստ ծառերուն մէջ, անանկ որ արգելվեցաւ մնաց։ Անատեն եղնիկը տեսաւ որ շները զինքը պիտի բռնեն, միտքը փոխեց ու սկսաւ անարգած սրունքները գովել, և գոված եղջիւրներն անարգել։

---

Ինքնահաւան հպարտ մարդը իրեն ձեռ բերելու բանին վրա խորհրդածնայ, ու իր գեղեցկութիւնը կը գովէ. բայց շատ մարդիկ խորտակման պատճառ եղեր

է գեղեցկութիւնը. Եւ ոչ մարդուն գեղեցկութիւնն է խելքը, այլ հոգւոյն գեղեցկութիւնն է պարկեշտութիւնը։

Խրատ է այս գործ՝ անիմաստ եղին,
կանացի բնութեան՝ յիմար ալծնողին·
Որ թողեալ զիւր գործ՝ կայ առ հայելին,
այնու ընդ գեղ մարմնոյն՝ ոչ ընդ գեղ բանին։
Սակայն մի միայն՝ չքնաղ զարդ ներքին,
է գեղեցկութիւն՝ բանեղէն մասին·
Քանզի գեղ մարմնոյ՝ առիթ կործանման,
բազմիցս լինի՝ ինքնահաւանին ։

## Օձ, և Խարտոց ։

Որ հարկանի՝ ընդ հզօրին,
՚ի հզօրէն՝ փշրի հեշտին ։

Ով որ դպչիր՝ ամէն բանին,
կը հանդիպի՝ մէկ ուժովին ։

Բն. Մէկ օձ մը կը մտնէ դարբնին խանութը, և հոն կը գտնէ խարտոցը փէօրծին ու կըսկըսի կրծել։ Խեղճ յիմար կըսէ խարտոցը, գիտե՞ս ինչ է կրծածդ. չե՞ս տեսներ որ ակռաներդ զիս չեն կրնար մաշել. որովհետև ես երկաթը կը մաշեմ, դուն զիս ինչպէս պիտի մաշես ։

---

Օձն ակռային փակը թոյն ըլլալուն մէջ ըլլայ
կուզէ թանաստերէն. որ օրինակ է շատ մէկու բան

բառողաց, որոնք զամենքը խածնելով ձոր կը զար-
նեն. բայց օր մը մէկ զօրաւորին հանդիպելով անոր
ձեռս գալով գէշը ծըէնք կը ճառին:

Քանի՛ յանդգնունք՝ յոր նման սմին,
հարեալ ընդ վիմաց՝ փշրել նկրտին.
Եւ զայն ոչ գիտեն, թէ ինքեանք մաշին,
նոքա անմնաս՝ կան յուրեանց կային:
Արդ մի՛ յիմարեալ՝ կագեր ընդ վեհին,
կամ 'ի վէգ մտանիր՝ ընդ առաքինին.
Ուսի՛ր յառակէս՝ գիտել չափ անձին,
զի մի՛ հոսեսցիս՝ յերեսաց նոցին:

---

## Աքիս, և Աղուէս:

Որ քան զչափն՝ ուտէ մօլի,
ավալըլուկ՝ անգէն տուժի:

Ագահութեամբ՝ թէ որ մուլիս,
ծով պահելով՝ դէպ է փրկիս:

Խէ. Մէկ վաստուծ աղուէս մը խիստ նեղ ծակէ մը կը մտնէ ցորենին արտին մէջն, ու հոն մեծ ուրախութեամբ շատ օր կը նստի կուտէ. և այնչափ կախորժէ որ քիչ ատենին մէջ շատ կը գիրնայ. անանկ որ երբոր պէտք եղաւ անկէ դուրս ելլել, անկարելի եղաւ որ ծակէն կարենայ անցնիլ ուր տեղէն որ ներս էր մտեր. մինչև մեծ տարակուսանքի մէջ ընկաւ չգիտէր թէ ինչ ընէ:

Երբոր սաստիկ մէկ դիէն մէկալ դին կը վազեր · չէր գիտեր ի՞նչ պիտի պատահի իրեն, աքիս հէլինճին մը դիմացը կեցաւ, ու այս խորհուրդը կուտայ ։ Բարեկամ կըսէր խնդալով՝ մինչև որ ծոմ պահելով առաջվան պէս վտիտ չըլլաս ինչպէս հոս մտեր էիր, անկարելի է որ կարենաս ազատիլ ասկէ · չէ նէ պարապ տեղը կաշխատիս ։

---

Ինչ մոլութիւն որ ունի մարդ, պէտք է անոր պատիժը քաշել որ աղւորի · եթէ հպարտ է, պէտք է խոնարհութիւն ընել · եթէ որկրամոլ է, պէտք է պաս պահել ծոմ բռնել, որ մարմինն ալ աղւորի հոգին ալ ։

Տես զարդարացի՝ պատիժ անյագին,
անյագ խաղողի՝ կերակրով արտին ·
Ու գիտէ թէ այն՝ կորուստ է անձին,
եթէ ոչ պահօք՝ հիւծեացի մարմին ։
Ահա խրատունք՝ օրինաց վերին,
որով ոք գործէ՝ նովին խակ պատժին ·
Եթէ կերակրոք՝ եթէ հեշտութեամբ,
և եթէ բերմամբ՝ զանազան ախտին ։

# Սիրամարգ, և Սոխակ ։

Սիրտ նախանձոտ՝ փառասէրին,
այրի մաշի՝ ընդ փառս ընկերին ։

Նախանձոտին՝ կէրէ հոգին,
Երբ կը տեսնէ՝ այլոց բարին ։

խէ ․ Սիրամարգը կը տրտնջար Հերային, թէ ինչու համար ածներն ինծի տուեր կոշտ և անհամ ձայն մը, իսկ սոխակին տուեր անոյշ ձայն ։ Այս քաղցր ձայնը կըսէր՝ այն պզտի թռչունէն առաւել ես արժանի էի ունենալ ․ ես որ աւելի գեղեցիկ եմ ամէն թռչուններէն, որ օդին մէջ կը թռչին ։ Պատասխան տուաւ դիցուհին, թէ ճշմարիտ է ըսածդ, որ դուն ամէն թռչուններէն գեղեցիկ ես և ամենէն դէշ դուն կերգես ․ բայց սոխակը՝ որուն ձայնին կը նախանձիս դուն անիրաւութէ, ամենևին չի յանկար քու փետուրներուդ ․ մի՛ զի գիտէ թէ ամէն իր պարգևը ամենուն ալ բաժներ է, և ինչ որ կամեցեր է տալ՝ ամէնքը պարտական են որ իրենց ունեցածին վրայ գոհ ըլլան ։ Ուրեմն լռէ, այլ մի՛ տրտնջար ․ վախցիր որ քու հպարտութիւնդ պատժելու համար չըլլայ թէ փետուրներդ ալ առնէ, որով այսչափ ամբարտաւան ես եղեր ։

Կ[illegible]ները կռուէին, թէ Հէրա Դիցուհին [illegible] [illegible] [illegible] մայրն էր. և [illegible] [illegible] [illegible]։ Այս պատճառաւ սիրամարգն ալ անոր կտրտնջայ. որ օրինակ է տժգոհ կնկան, որ ուրիշին վրայ ինչ որ տեսնէ կուզէ ունենալ։

Այս՛ տարացոյց՝ տժգոհ հպարտին,
յանդգնի ընդդէմ՝ կուռ ճակատագրին.
Զամենայն զփառս՝ զոր դիտէ յայլում,
տրտնջայ թէ հի՛մ՝ ինքեան ոչ ետուն։
Արդ զի՛ փառասէրք՝ ինքնատանջ ծփին,
անխրատ զրկանն՝ ի՛ արար նոցին.
Հաշին և մաշին՝ ոչ զուրկ են ինքեանք,
այլ թէ զի՛ օտարք՝ հրճուին 'ի բարին։

---

## Փայտահատ, և Գայլ։

Ոչի՛նչ ազդեն՝ խօսք ընդունայն,
երբ ընդ գործոց՝ ոչ միանան։

Ի՞նչ շահ լեզուով՝ բարի ասել,
Գործքով անոր՝ ներհակն ընել։

Խր. Որսորդները գայլի մը ետեւէ կիյնին որ բռնեն. իսկ գայլը կը փախչի փայտ կտրողի մը խուց կը պահուի, և կաղաչէ որ զինքը մարդու չի յայտնէ. անոր խօսք կուտայ անոր։ Նոյնա մէկէն որսորդները հոն հասան ու հարցուցին փայտ կտրողին, թէ մեր է գայլը՝ քու խուցդ չի պահուի՞։ Մէկ հա_

մարձակ ձայնով մը ուրացաւ փայտ կտրողը, թէ հոս չէ՛. բայց միանգամայն մատովն ալ ցըցուց գայլին պահված տեղը ։ Վազեցին հոն որսորդները. բայց զինքը հոն չին գտան միայն տեղը տեսան. վ՜զի գայլը երբ տեսաւ թէ փայտ կտրողին մատնութիւնը յայտնըվեցաւ, շուտով փախաւ գնաց իր տեղը ։ Քանի մը օրէն ետև փայտ կտրօղը հանդիպեցաւ գայլին, ու երեսը զարկաւ, թէ իրէն ըրած բարերարութենը համար ինչպէս շնորհակալութին մը չըրած փախեր գացեր էր խուցէն ։ Պատասխանեց գայլը, թէ ես ամենևին չէի պակսէր այս պտրտքէս, պիտի ընէի քեզի շատ շնորհակալութին, թէ որ չի տեսնէի, թէ խօսքդ շատ լաւ էր, բայց գործքդ մեծ չար ։

---

Օրինակ է մեր ժամանակի մարդկանց, որ խօսք կապան ու խօսքերնին չեն պահեր. և շատ խաբէբաներ ալ կան, որ խօսքերնին ազնիւ է, գործքերնին աղէկ. այսպէս մարդոցը հիմայ մարդոց խօսքն ըլլալով՝ շատ մեծ ամօթ է մարդու պէս խօսք տալ, և անասունի պէս խօսքին վրայ չի կենալ։

Իրաւամբք մերժի՛ մատնիչ խաբեբայն,
Յորժամ խոստանայ՝ ոչ պահէ զի՛ւր բան.
Զի լոկ բանք ոչինչ՝ գիտեն վճարել,
գործով պակսի՝ ամենայն վախճան ։
Խոստանալ պահել՝ մարդոյ է պատկան,
ոչ ասել մերժել՝ զի՛ւր խօսս իբր անբան.
Քանզի անասունք՝ զեղջերաց կապին,
լեզուաւ և բանիւ՝ մարդ կապի միայն ։

## Սարեակ, և Հաւորս ։

Հետաքրքիրն՝ ընդ այլոց բան,
զիւր կործանումն՝ ածէ ինքեան ։

Շատ մը մարդիկ՝ ուրիշին բան,
[illegible] [illegible]՝ [illegible] [illegible] ։

խմ․ Սարեակ մը կը տեսնէ հաւորսը, որ իր որոգայթը կը լարէր․ հող. ի՞նչ կընես բայց ։ Պատասխանեց հաւորսը, թէ քաղաք կը շինեմ ։ Այս խօսքովս հետաքրքրութեն մը ունեցաւ սարեակն ու եկաւ որոգայթին քով․ և անանկ մտաւ որ տեսնէ․ բայց մէկէն բռնըվեցաւ որոգայթին մէջ ։ Անա տէնը կանչեց հաւորսին․ ով անօրէն, եթէ միշտ ասանկ քաղաքներ որ շինես՝ դուն ա- մենեւին քաղաքացի չպիտի տեսնես անոնց մէջ ։

---

Շատերը կան որ իրենց բանը գործը կը թողեն՝ ուրիշին բանին ետևէ կիյնին, և վերջին ըրածը մէ- [illegible] [illegible] [illegible] [illegible] կիյնին [illegible] [illegible] [illegible], որ է խայտառակութիւն ։ [illegible] հարցնողին թէ ինչ բանով կը զբ- [illegible] ․ [illegible] [illegible] թէ [illegible] [illegible] [illegible] որ հետաքրքիր մարդը [illegible] [illegible] [illegible] ։

Մ՛ի հետաքններ՝ զարտաքս օտարին,
խրատէ առաւել՝ կալ զգոյշ յանձին.
Քանզի որոգայթ՝ լարեալ խարդախին,
կախարդէ զքեզ՝ ձգել 'ի նմին:
Զի՛նչ օգուտ գործէ՝ գիտել զընկերին,
երբ ոչի՛նչ գիտէ՝ զի՛նչ ունի յանձին.
Լաւ է հետամուտ՝ ելանել ինքեան,
քննել զիւր գնացս՝ ուղղել զնոսին:

## Առիւծ, Էշ, և Աքաղաղ:

Որ խիզախէ՝ ընդդէմ վեհին,
անդէն լինի՝ կոխան ոտին:

Մի դէմ ելլեր՝ քեզմէ մեծին,
կոխան կըլլաս՝ ներքեւ ոտքին:

Ճ. Առիւծը կը վախնայ կըսեն աքաղաղին ձայնէն. օր մը աքաղաղը երբոր սկսաւ երգել առիւծ մը կանգնէր անկէ, առիւծը ձայնը լսածին պէս անանկ սաստիկ վախցաւ, որ շուտմը սկսաւ փախչիլ. անատենը մէկ էշ մը տեսաւ առոր փախչիլը, որ իր ճամբան կերթար: Անխելք էշը տեսնելով առիւծին անանկ վազելը, կարծեց թէ իրմէ վախնալուն կը փախչի, սկսաւ ետեւէն ինկնիլ: Բայց առիւծը նայեցաւ որ աքաղաղին ձայնը այլ չի գար՝ մէկէն դարձաւ բռնեց էշը պատռտեց: Իսկ էշը մեռնելու ատենը սկսաւ պոռալ. վա՛յ ինծ՛ կըսէր ես

Ինչ անխելք եմ եղեր․ ինծի պէտք էր որ քաջութիւն ցցնելու համար յիմարութիւ՛ գամ առիւծի մը հետ լինիմ։

---

Ով որ իր սիրտը չի ճանչնար, և իրմէ մեծին հետ կռուի՝ շատ անխելք է․ Նա չի կարծեր թէ երբոր մեծ երեն շատեր գէշութիւն ընեն՝ իրմէ կը վախնայ․ չի՛ գիտեր թէ շատ մարդ շատ բան կընայ ընել՝ թէ որ սա-կէնայ։

Տեսնե՛ր պատուհաս՝ յիմար տկարին,
որ ելլէ հզօր՝ 'ի ճակատ մարտի․
Դառնոյ ընդ կրունկն՝ հզօր ամեհին,
գիշատէ զնա՝ անդ 'ի ճակատի։
Ուսի՛ր ճանաչել՝ զոյժ և չափ անձին,
և մի խոյրոխտանար՝ ընդ դէմ առիւծին․
բազումք յիւրեանց տան՝ խիզախեն 'ի սուր,
անդէն կորանան՝ 'ի տես հզօրին։

---

## Լուշ հիւանդ։

Գիշակերաց՝ խորհուրդ և կամք,
է պարարել՝ այլոց մահուամբ։

Շահասէրին՝ թող շահ ըլլայ,
հոգ չէ ուրիշ՝ վնաս ըլլայ։

ծա․ Լուշը վտանգաւոր հիւանդութեան մէջ էր․ բայց երբոր սկսաւ առողջութեան դիմ

դառնալ, ձայն մը տարածվեցաւ գայլերուն և շներուն մէջ, թէ էշը հոգեվարք է: Շնե-րը մէկէն վազեցին որ մեռածին պէս կաշին յափշտակեն. երբոր կըսպասէին անհամբերութեա՛մբ թէ ի՛նչ ձայն կայ, և իշուն պառկած տեղին դռանը ծակէն ներս կը նայէին. տեսան հօն իշուն ձագը, կանչեցին անոր այս բարեկամները, թէ որդեակ կաղաչենք մեզի իմացո՛ւր ի՛նչպէս է մայրդ. գիտնաս որ մեծ ցաւ ունինք անոր համար: Պատասխանեց ձագը խստութեա՛մբ. շատ լաւ է՝ ձեր ուզածէն աւելի:

---

Ոխերամոլ անզգամ մարդիկ կը նային, որ իրենց ձորը կործանւոյ աարիւին ինչ կըլլայ ըլլայ՝ չէն հըգար ամէնևին: Մարդ մարդու օգնութեան ընելու համար ծնած է. կըսէ Քրիզոստոմ:

Այս դատարկակեաց՝ բարք պորտաբուծին,
աքնի կերակրել՝ մարմնով ակարին.
Իբրև բարեկամ՝ ցաւակցի նմին,
պատառել զնա՝ մնայ առ սեմին:
Մարդ ընկերական՝ մի՛ ըստ գազանին,
խոշանգեր զընկերն՝ առ օգտի անձին.
Կարեկից լինել՝ ուսար 'ի բնուստ,
բընութենակից՝ վշտաց օտարին:

# Կատու, և Մկունք։

Մի՛ մերձենար՝ նենգաւորին,
մանրիս ծախիս՝ 'ի ձիրանին։

Մի՛ հաւատար՝ դրսէն սուրբին,
նայէ՛ ինչե՛ր՝ սրտէն խօսին։

Ծի՛․ Կատու մը գրեթէ մկներուն ցեղը ջընջեր էր․ կամեցաւ որ մնացածներն ալ ջարդէ հատցընէ։ Բայց կատուին անբաղդութի՛ը մկներն աւելի խորագէտ էին․ ուստի կատուն մեծ զգուշութի՛ կը նայէր որ ձեռք ձգէ, և չէր յաջողէր որ զանոնք բռնէ։ Սակայն ես զանոնք ոխտոր բռնեմ՝ ըսաց կատուն՝ ուզեն չուզեն։ Զայս ըսաւ ու վրան ալուր ցանեց, կծկեցաւ մտաւ խմորին տաշտին մէջ։ Մ՚էկ մուկ մը տեսաւ այն կըրձերմակ բանը, կարծեց թէ մսի կտոր է, մօտեցաւ քովը․ իսկ կատուն թաթիկներուն վրայ զայն դանելով բռնեց ձանկերովը․ և ուրիշ մուկ մ՚ ալ մօտեցաւ հոն․ և ասոր ետևէն բոլոր մկները հոն ժողո[վ]ուն․ բայց ասոնցմէ մէկը ետ չի դարձաւ, [ո]ւրը հոդաց։ Ամենէն ետև մէկ խածած ծեր մուկ մը գլուխը ծակէն դուրս հանեց, ու մէկէն չորս դին նայելով առանց առաջ երթալու սկսաւ այն ալըրոտ գունտին վրայ մտմըտալ։ Հուսկ յետոյ գլուխը շարժելով ը-

ւոց․ բարեկամ՝ քուկին առանց ձեռմընկնալդ-իմ՝ առջիս բան մը չարժէր․ կուզես ալիւր եղիր, կուզես պարկ կամ տաշտ եղիր, ինչ որ կուզես եղիր, հազար տարի անցնի մէկ անգամ մը չեմ մօտենար քեզի ։

---

Կեղծաւոր և խաբեբայ մարդէն միշտ պէտք է հեռու փախչիլ, թէպէտ դրսէն աղէկ երևնայ ։ Փորձ և խոհեմ մարդիկ լաւ կը ճանչնան ասանկ մարդը․ պէտք է անոնց խրատին հետևիլ ։

*Տեսանե՛ս հնարս՝ հնարագիտին,*
*որոգայթ լարէ՝ ընդդէմ ռամկին․*
*Որչափ խորագէտ՝ իցէ թշնամին,*
*այնքան զանանայ՝ ծածկել զնոսին ։*
*Ուսի՛ր ՚ի ծերոյն՝ չմերձիլ չարին,*
*թէև լուսազգեաց՝ իցէ արտաքինն․*
*Բազումք արտաքուստ՝ պայծառ երևին,*
*այլ ներքինն նոցա՝ չար և խաւարին ։*

---

## Առիւծ, և Ուլ ։

*Խրոխտալ հեռուստ՝ դէմ առիւծին,*
*է անխոհեմ՝ գործ ակարին ։*

Հեռուէն դէմ՝ խօսիլ մեծին,
անխելք գործք է՝ յիմար տղին ։

ծզ․ Այծին ձագը մէկ բարձր պատուհանէ մը նայելով կը տեսնէ առիւծ մը, որ

կանչնէր վարէն: Բայց բաղդ ունեցաւ, որ բարձր տեղը զինքն ազատեց անոր ձեռքէն: Ուստի սկսաւ կծու խօսքերով անարգել զառիւծը և թշնամութիւն նախատել: Իսկ առիւծը տեսաւ որ չի կրնար հասնիլ՝ խոժոռ նայելով ըսաց. մի՛ անզգամ՝ չար դուն զիս չէիր կրնար նախատել, աղօթք ըրէ կեցած տեղիդ, որ զքեզ իմ՝ ձեռքէս ազատեց. Թէ որ քեզ ձեռք ձգէի, շատ տարբեր պիտոր խօսէիր:

---

Տկար մարդը միշտ հեռուէն շատ բան կը խօսի. և մեծաբանելով ուրիշը կարհամարհէ. Բայց երբոր մօտ կուգայ ընդդէմ կը պապանի վախուն: Զի խածնող շունը հեռուէն կը հաչէ, կըւէն:

Այս յիմարական՝ գործ է անփորձին,
որ փակեալ 'ի տան՝ դրդալ ընդ վեհին:
Բայց իբրև արտաքս՝ ելանէ անտի,
զինչ ունի առնել՝ առաջի նորին:
Մի՛ հակառակիր՝ ընդդէմ հզօրին,
մի զբարկութիւնն՝ ածեր քում անձին,
Քանզի մեծարանք՝ պատիւ 'ի փոքրուէ,
և ոչ անարգանք՝ մեծաց պատշաճին:

# Մարդ, և Առիւծ։

Անիրաւ է՝ պարծիլ ընդ գործ,
զոր այլքն առնեն՝ ինքն է անգործ։

Ի՞նչ շահ պարծիլ՝ նախնեաց վրան,
Երբ ինքն անխելք՝ չգիտէ մէկ բան։

Ծք. Մարդն ու առիւծը միատեղ ճամբորդութեան կըլլէին. եղաւ որ ճամբուն վրայ տեսան արձան մը, որ կը ձեւացընէր կորիճ ըմբիշ փէհլիվան մը, որ կըսպաննէր մէկ առիւծ մը։ Զայս որ կը տեսնես՝ ըսաւ մարդն առիւծին, քեզ կիմացընէ, թէ մենք ձեզմէ շատ աւելի կորիճ, և աւելի սրտոտ ենք։ Պատասխանեց առիւծն անոյշ ձայնով մը. թէ որ մեր մէջն ալ գտնըւէր քարտակոփ, կամ արձան շինող ինչպէս ձեր մէջ կայ. դուք ալ պիտի տեսնէիք շատ աւելի մարդիկ առիւծէ մեռած, քան թէ առիւծ մարդէ սպաննըւած։

Հին ատենը Հերքիւլէս անուանով կորիճն առիւծ մը ճզմացեր էր. ատոր քարէ շինած արձանը շատ տեղ դրած կար, որ փեհլուանները օրէք առնեն։ Օրինակ է անանց որ իրենց նախնեացը ճգնութեանը կը պարծին, և իրենք բանի մը շահ չանին։

Զի՞նչ օգուտ պարծիլ՝ ի՛ գործ դիւցազանց,
պանծալ 'ի վերայ՝ նախնեաց և ազանց.
Յորժամ ինքն է զուրկ՝ յառաքինութեանց,
աննման նոցին՝ քաջութեանց խելաց:
Յամօթ սերնդոց՝ անմիտ անարեաց,
որ նախնեաց զարարս՝ համարին իւրեանց.
Որով և լինին՝ վեհափառ զարմին,
վախճան և աւարտ՝ ազնիւ պերճութեանց:

---

## Մ՝արդ, և Լու:

Փոքր վնաս՝ ապիկարին,
մեծ համարի՝ ընդդէմ մեծին:

Թէ չար բան գար՝ յէութեան ծառեին,
տէր Եէ ինձէր՝ կէնէր մեծին:

ԾԵ. Լուն մարդու մը թև խածաւ. ցաւն որ իմացաւ մարդը անանկ անհանգիստ է-ղաւ որ ուզեց բռնել և մէկէն ճզմել. ու-նի ... ուցածին պէս բռնեց, պի-տի ... լուն ըսաւ, թէ մոմրամ, որ ես քեզ միայն խածայ, դուն կուզես զիս մեռ-ցընել. ափսոս ինձի. ան ատենը ես այս բանիս արժանի կըլլայի, թէ որ ուզենայի քու կեանքդ վերցընել: Պատասխան տըւաւ մարդը. եթէ ունենայիր կարողութիւն ընե-լու, անտարակոյս կընեիր: Զայս ըսելով սխմեց մեռցուց:

Ուստի փոքր յանցանք մը մարդն ընէ Այ դէմ, մեծ կը սեպուի. Զի ըստ Այ մեծութեան կը չափուի մեղքը. Թէ որ կարողութիւն ունենար ստեղծողին դէմ աւելի լրութեամբ ընելու՝ կ'ընէր. Թէպէտ գործը ոչինչ է, անոր համար օրինազանցները կը պատժուին [illegible]:

Այս հաստուցումն՝ արդար օրինին,
որ մինչու պատժէ՝ խայթիչ փանաքին.
փանաքի մարմնով՝ այլ խայթն է ուժգին,
եթէ էր կարող՝ զրաւէր զմարմին:
Օրինակ է այս՝ օրինազանցին,
մարդոյն ընդդէմ կալ՝ օրինաց վերին.
Որչափ այն է մեծ՝ և մարդն է չնչին,
այնչափ մեծ յանցանք՝ 'ի գործոց չափին:

---

## Կաքաւ, և Աքաղաղ:

*Թէ խիստ ինչ է՝ անտանելի,*
*համբերութեամբ՝ է տանելի:*

Որչափ դժուար՝ խիստ բան ըլլայ,
համբերողին՝ կը կրնայ:

ծզ. Արօտի տէրը մէկ կաքաւ մը գնէ կը դնէ տանը բակին մէջ. զայն որ տեսան աքաղաղները, որոնք չեն քաշեր աստնկ օտարականները, վազեցին վրան ու կտուցքով ծեծեցին. անկէ ետև ամէն օր աստնկ կը նեղէին խեղճը: Ուստի կաքաւը քաշվեցաւ հաւնոցին

մէկ կողմը տրտմած երբոր կուլար, տեսաւ որ աքաղաղներն իրենց 'նախանձին համար ի-րարու հետ կը ծեծկըվէին՝ ըսաց կաքաւը· ահա ես ալ միտքս դրի որ ասկէ ետև համ-բերեմ· որովհետև ասոնք կուարարներն եր-բոր իրարու միս կուտեն այնչափ կատղե-լով, ի՞նչպէս կրնան ինձի հետ անուշութե՜ վարվիլ:

---

Կատարած է քերթիկ Թուղթինը· Խորհուրդ ըլլալով օրինակ է համբերողին· որ ամբիծներուն նայելով ինք զինքը կը մխիթարէ գիտնալով, թէ ամէն մարդ չէ տաշէլիք մը գիտէ ունենայ:

Զխմբդ դժնդակ՝ բարք կռուասիրաց,
կափեն հարկանեն՝ զընկեր բարեկեաց·
Երբ ոչ գտանեն՝ զայլ ոք յօտարաց·
անհամբոյր գահիճ՝ լինին իւրերաց:
Իսկ յաղթօղ նոցին՝ սիրտ համբերողաց,
որ զերթ ապառաժ՝ անբեկ կայ յալեաց·
Որչափ հարկանեն՝ կոհակք եզերաց,
անդէն ընկրկեալ՝ դառնան խորտակած:

## Ճպուռն, և Մրջիւն։

Որ ոչ գործէ՝ յամարայնի,
'ի ձմերան՝ սովու նկթի։

Թէ ամէնին՝ բան չի հոգաս,
յէտոյ ապտապ՝ խեղճ կը մնաս։

ծէ. Ճպուռը բոլոր ամառուան մէջ ուրիշ բան չէր մտածեր, միայն թէ ձայնովը միշտ կը զըւարճանար. այս կենդանին ձմեռուան սա մեծ նեղութեան մէջ գանըվեցաւ, որ բան մը չունէր ուտելու։ Ուստի մտմըտալով, թէ ձմեռն ի՛նչպէս պիտի անցնի. գնաց մրջուններուն աղաչեց որ իրեն քիչ մը ցորեն փոխ տայ, թէ որ բաց ինձի բան չի տաս, գիտնաս որ իմ անօթի մեռնելս կուզես. վա՛ զի երդուամ կընեմ որ ամենեկին ապրուստ մը չունիմ պահած։ Պատասխան տըւաւ մրջունը, թէ շատ դէշ բան է ըրածդ. զի պէտք էր գալիքը մտածելով ինձի պէս ընել. ատենով աշխատիլ, և կերակրով համբարները լեցընել. հապա դուք ի՛նչ կընէք ամառուան այն գեղեցիկ եղանակին մէջ։ Ես գիշեր ցորեկ կերգեմ՝ ըսաւ Ճպուռը։ Ծաղր ընելով ըսաց մրջունը. իրաւ է որ դուք ուրիշ լաւ բան մը չէք կրնար մտածել, բայց միայն ուրախանալ. ուրեմն ինձի մտիկ ըրէ, ինչպէս որ սկսար՝ կատարէ այս տարին. որովհետև ժա-

մանակիդ կէսը ծախեր ես երգելու համար. և մէկալ կէսն ալ քեզ կը մնայ որ պար խաղաս ։

---

Ծաղրական է ճըռճըռ պէօճէկին. որ օրինակ է դատարկ և շատախօս մարդկանց, որ ամէն անդին ժամանակնին կանցընեն հաւան բաներով. չեղոյ կերթան ոստինեռեան գեղեցկութեան կըրեն, որ պատին ըներէն։ Ով որ շատ գիտէ, շատ բան գիտէ կըրեն ։

Վայելուչ խրատ՝ է անգործ ծուլին,
որ դատարկ ծախէ՝ զիւր կենաց բարին.
Այլ գայ ժամանակ՝ դառն եղանակին,
կարօտի այլոց՝ ծաղր եղեալ նոցին ։
Զի՛նչ շահ սին ձայնիւ՝ լնուլ զ՚վայր օդին,
և դատարկ թողուլ՝ զիւր տուն զիւր անդին.
Ջանա՛ 'ի ժամուն՝ գործել զպիտանին,
ամբարել պիտոյս՝ վասն ապագային ։

---

## Ագռաւ, և Ոչխար ։

Զուարճութիւն՝ անիրաւին,
է վշտացնել՝ զհեզահոգին ։

Անզգամը՝ կարախանայ,
երբ նմանին՝ ճառ կապայ ։

ծը. Ագռաւ մը խաղալով կը թռչտէր ոչ-
խարին բոլորտիքը. և շատ անգամ կտուցն-

քով աղ զարնելով կը զըւարճանար: Ես քեզ զըւարճացընելու համա՞ր եղեր եմ ըսաւ ոչխարը․ ինչու համար միշտ իմ վրաս կուգաս ու այս չանը վրա չես երթար, որ կը նայի՛ ոչխարները: Անոր համար ըսաւ ագռաւը ատանկ կընեմ, որ քեզմէ չատ՝ անկէ կը վախնամ․ գիտնաս որ ես աւելի աղէկ կը վարվիմ չարերուն հետ, քան չարերը բարիներուն հետ:

---

Օրինակ է անզգամ մարդկանց, որ հեզահոգի մարդոցն վրա կը խնդան ու ծաղր կընեն․ բայց չար անգամ ըրածնին կը գտնեն: Ով որ այսպէ կը խնդայ, դառն անկէ մի խնդար․ կըսէ փիլիսոփան:

Ահա այս է գործ՝ չար անխրատին,
որ չարիս գործէ՝ ընդդէմ խոնարհին․
Քանզի միշտ հարուած՝ առնել անմեղաց,
միակ զբօսանք՝ է չարասիրաց:
Արդ մի՛ նմանիր՝ դու անզգամաց,
մի՛ վնասարար՝ լինիր անմեղաց․
Ջանա հետեւիլ՝ բարուց խոնարհին,
որ խոնարհութեամբ՝ տանի իւր նեղչին:

## Կաղնի, և Եղեգն։

Մեծաբանին՝ փոյթ հասանէ,
ծաղր լինել՝ յետ վէհ բանէ։

Մի՛ շատ պարծիր՝ թէ ուժով ես,
Հով մը կուգայ՝ խեղճ կընէ քեզ։

ԾԹ. Կաղնի ծառը կըխնդար եղեգին վրայ. և նախատելով կըսէր, թէ պզտիկ հովէ մը կըշարժիս. ես շատ կը խնդամ քու վրադ, երբոր կը տեսնեմ ջրին քով տնկած. ուր տեղ ուրիշ կերպ չես կրնար կենալ, բայց և թէ գլուխդ ծռած տկար հովերուն առջին։ Ինծի նայէ տե՛ս ու՛ր եմ բարձրացեր. և ի՛նչպէս հաստատ է իմ բունս և արմատս, որ սաստիկ հովերու փոթորիկներու դէմ կըդնեմ։ Երբոր այսպէս կըպարծենար յանկարծ փոթորիկ մը ելաւ եկաւ կաղնիին և եղեգին զարկաւ։ Այս հովը որչափ որ փչեց չի կրցաւ վնասել եղեգին. որովհետև հովին առջին խոնարհելով, ուրիշ բան չեղաւ միայն թէ շարժեցաւ։ Իսկ բոլոր վնասը կաղնիին եղաւ. վասն զի երբոր խիստ դէմ կեցաւ հովին, ու կարծեց հաստատուն մնալ փոթորիկին դէմ, մէկ կատաղած հովմը զարկաւ անոր, և անանկ ցնցեց, որ շրջեց տապալեցուց ծառը։ Եւ այսպէս ահա այս հպարտ ծառը եղեգին ոտքն ընկաւ, որ այնչափ նախատեր էր զայն։

Խրատ է մեծամեծ հարուստներուն, որ հպարտութեամբ չանարգեն աղքատները. Բայց շատ անգամ ասոնք իրենց վիճակով հանգիստ կը մնան, և հարուստները աշխարհքիս հովերուն կը կործանին չքանին:

Այս է պատուհաս՝ ամբարտաւանին,
որ խայտառակի՝ յիւր հպարտ բանին.
Այն մեծաբանող՝ ամբարձեալն յերկին,
տես լինի 'ի հողմոյ՝ շիջի 'ի գետին:
Քանի՞ մեծատունք՝ նման են սմին,
անարգեն զաղքատն՝ պանծան 'ի բաղդին.
Բայց 'ի գալ հողմոյ՝ հալածեալ անուին,
խոնարհք կան կանգուն՝ ինքեանք կործանին:

## Ջորի, և Գայլ.

Որ գուբ փորել՝ այլոց ջանայ,
ինքն սահեալ՝ 'ի նոյն մնայ:

Ով կը փորէ՝ փոս ուրիշին,
ինքը կիյնի՝ մէջը փոսին:

Ն. Գայլը կը տեսնէ մէկ ջորի մը, որ խոտ կուտէր դաշտին մէջ. մէկէն պիտի յափըշտակէր զայն. բայց երբոր տեսաւ ջորիին զգուշութիւնը, և հաստակին զօրութիւնը որ կըրնար ինք զինք պաշտպանելու՝ միտքը դրաւ, թէ ա՛լ լաւ կըլլայ խորամանկութբ ձեռք ձգել, քան թէ ուժով: Ուստի շուտմը մօտե-

ցաւ անոր , և զինքը խիստ վարպետ բժիշկ ձևացընելով ուզեց իրեն գեղ ընել ։ Ես ըսաւ անանկ վարպետ եմ, որ եթէ ունիս հիւանդութի՝ մէկէն կառողջացընեմ ։ Իսկ ջորին , որ վախ ունէր անկէ , պատասխանեց թէ դուն զիս մեծապէս կամըչցընէիր , թէ որ կամենայիր հանել իմէ մէկ փուշ մը, որ խոցոտեր է ոտքս ։ Զայս ընելով վերցուց ետևի ոտքը ցըցուց գայլին ․ իսկ գայլը որովհետև ուրիշ բան չէր ուզեր, միայն յարմար ժամանակ կը փնտըռէր , որ ջորիին վրայ ցաթկէ ․ մօտեցաւ անոր , և երբոր սկսաւ նայել , ջորին անանկ կից մը զարկաւ գայլին , որ քիթը բերանը ջղմեց փախաւ ։ Անատենը գայլը բոլորովին տրտմած ըսաւ ինքիրեն ․ արժանապէս այս բանն ինծի եղաւ ․ ալ՞ոք էր որ բժշկութի ընէի ես , որ ուրիշ բան չեմ, բայց միայն մսագործ ։

---

Արթուն կեցիր որ անզգամ մարդու յետոյ ըլլանիս և թէ ընկեր, նայէ որ խելք մը թանկօցընելով անզգամին յետոյէն ազատիս ․ վասն զի մարդուս պէտք է իրեն խելքը ։

Քանի՞ դիպաւոր՝ այն անզգամին ,
 կրել զայս չարիս՝ զոր նիւթէր նմին ․
 Քանզի վրիպանք՝ խորամանկ չարին ,
 չարաչար լինի՝ ըստ առակողին ։
Այս դաժան բնութեան՝ է քանասարին ,
 ախտէլ զ՞հետ այլոց՝ պատառել մարմին ․
 Որչափ ոք ցանկայ՝ զայլս կեղեքել ,
 այնչափ և յայլոց՝ կրէ զարժանին ։

# Վիշապք ։

*Բազում գլուխք՝ և տանուտեարք,*
*են երերաց՝ խափանարարք ։*

Թէ տուն մը մէջ՝ շատ գլուխ կայ,
տունը բանը՝ շատ գէշ կըլլայ ։

*կա · Երկու վիշապ կուզէին ցանկէ մը կամ փշոտ տեղէ մը անդին անցնիլ, որ աւելի խիտ ալ ըլլալով արգիլեր էր անոնց ճամբան ։ Մէկ վիշապն ունէր մէկ գլուխ մը և շատ պոչ · մէկալը մէկ պոչ մ' ունէր, և շատ գլուխ ։ Այս ետքինը բոլոր ուժովը ջանաց՝ չի կրցաւ անցնելու · վասն զի շատ գլուխ ըլլալով մէկմէկու արգելք կուտային · ուստի ուրիշ բան չի կրցաւ ընել, բայց եթէ մէկ ծակ մը բացաւ, որ միայն մարմինը հազիւ կրնար անցնիլ ։ Իսկ մէկալ վիշապը քիչ աշխատանքով բացաւ իր ճամբան · վասն զի միակ գլուխը բացաւ ծակը հանգստութեամբ անցաւ, ու քաշեց պոչերն ալ անկէ անցուց · և անանկ լաւ ըրաւ որ անցան անկէ գլուխը, պոչերը և բոլոր մարմինը ։*

---

Խրատ ըլլայ ամենուն, որ տուներնուն մէջ երէխա-նէ · և շատ գլուխ ըլլնեն, որ իրարու չեն հաւնելով խռովեն տունը · Թէ որ մէկ բանին գլուխը մէկ

Մարդ ըլլայ ամէն բան կարգի դնելով, բոլորն իրեն հնազանդ կըլլան, և դիւրին բանը յառաջ կերթայ։

Տես զխմբդ բազում՝ գլուխք մի մարմնին,
են արդեօք միմեանց՝ 'ի գործ պիտանին.
Զի իւրաքանչիւրք՝ են ինքնագլուխ,
ոչինչ վճարեն՝ միայն անգլուխ։
Այս օրինակ է՝ իշխանաց պետաց,
որ տիրել կարծեն՝ անկախ յիրերաց.
Բայց երբ չեն կարգեալ՝ ընդ միով գլխով,
են բազմագլուխ՝ անբաժ 'ի բարեաց։

## Կրիայ, և Նապաստակ։

Աշխատութիւն՝ միշտ շարունակ,
յաղթէ առնու՝ ըզյաղթանակ։

Թէ անհանգիստ՝ ջանաս հոգնիս,
ամէնէն ուշ՝ տուն կը հասնիս։

կը. Օր մը նապաստակը կըխնդար կրիային վրայ, ու երեսը կըզարնէր անոր խիստ ծանրաշարժութիւնը։ Եկուր ըսաց կրիան գըչինք դէ բռնենք. ես քեզմէ շուտ կը հասնիմ այն ծառին, որ անկած կըտեսնես արտին ծայրը։ Պատասխանեց նապաստակը թէ մէկ կրիայ մը ինչպէս պիտի նապաստակին հետ վազելու ելլէ, քու խելքդ գործեր է եղբայր դնամ բանդ։ Այս կարգէ դուրս բանին զիս հրամցընելէդ առաջ պէտք էր մտմըտալ, թէ ես չորս անգամ ցատկեմ այն

չափ ճամբայ կընեմ, որ դուն չորս շաբթը_ վան մէջ չես կրնար ընել։ Հօգ չէ ըսաւ կրի_ ան. և առեն չի կորսընցընելով սկսաւ եր_ թալ։ Իսկ նապաստակն առանց հոգալու թողուց որ կրիան առաջ անցնի, երբեմն խաղ կընէր, երբեմն ետ կը դառնար, և խոտ ու_ տելով կը զըւարճանար. ինքզինքեն կըսէր թէ ես ապահով եմ, որ կորսընցուցած ժամա_ նակս՝ շուտով կրնամ շահիլ. սակայն կրիան միշտ առաջ կերթար։ Երբոր տեսաւ նապաս_ տակը թէ երկու մատ մնացեր է, որ կրիան համնի ծառին, շուտմը ցաթկեց ու կայծա_ կի պէս վազեց. բայց բանը բանէն անցեր էր. վասն զի կրիան հոն համնելու վրա էր. և ինչ որ ըրաւ նապաստակը չիկրցաւ, կրիան առաջ հասեր էր. և այսպէս կորսընցուց իր գաշինքը։

---

Կրիան այսինքն թօսպաղին օրինակ է աշխատա_ սէր մարդուն, որ միշտ աշխատելով օրուան իւրեն ըլլայ յառաջ կերթայ։ Իսկ նապաստակն է օրինակ անհոգ մարդուն. որ ծոյլ ապրելով անցընելով՝ ուրիշ_ ները կերթան զինքը կանցնին՝ ինքն անանկ կըմնայ։ Ասոր բանն յայտնօղ է աշխատասիրութիւնը կըսէ փիլի_ սոփան։

Ահա տեսարան՝ ինքնահաւան հեղգին,
ինքնապանծ խոտէ՝ գնացս օտարին.
Բայց նա անվաստակ՝ գոլով յիւր ուղին,
յաղթէ հասանէ՝ իւր նպատակին։
Քանի պատկառանք՝ այն դանդաղկոտին,
երբ ինքն է մեղկեալ՝ այլք յառաջ ձգին.

Զի՛նչ օգուտ ստանալ՝ լեռնէ 'ի լերին,
զի աշխատասէրն՝ հասանէ կիտին :

## Ոզնի, և Գայլ :

Ով վայրապար՝ բաշխէ բնութիւն,
խորամանկեալ՝ զէն զօրութիւն :

Ինչ որ ունիս՝ աղէկ պահէ,
որ փորձանքէն՝ երբոր պէտք է :

ԿԴ. Մէկ գայլ մը կը հանդիպի ոզնիին, և շատ անօթի ըլլալով առաջ կը վազէ որ ուտէ: Իսկ ոզնին տեսածին պէս զայն՝ վրայի փշե-րը մէկէն շտկեցուց: Գայլը կատղելով չէր գիտեր ուր տեղէն բռնէ. ուստի խորաման-կութէ՞ ըսաւ անոր, եթէ կամենաս քեզմէ հանել բոլոր այս փշերը՝ շատ աղուոր կըլլաս. վասն զի ատոնք զքեզ խիստ գէշ կերևցընեն. ինծի մօտիկ ըրէ ու ասկէ ետև 'նետէ զատոնք: Ան չըլնէ ըսաւ ոզնին, աւելի շտկեցընելով փշերը. բարեկամ թէպէտ այս փշերս զիս գէշ կերևցընեն, բայց շատ լաւ կը պաշտպա-նեն քու ձեռքէդ :

---

Ոզնին է քիմրի. [illegible] [illegible] [illegible] ... [illegible], որ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] : Օրինակ է խոհեմ մարդուն, որ միայն

իր ապահովութիւնը իր նայի, և ամենուն առջևն խօսք մտիկ ընէր, որ վնաս մը չի գայ իրեն ։

Խրատէ առակս՝ զգոյշ կալ յանձին,
չթափել զզէնս՝ բանիւ խարդախին.
Զի նենգել ուտել՝ է խորհուրդ նորին,
ոչ թէ կարեկցիլ՝ իբրև մտերիմ։
Արդ մի ապահով՝ կալ ընդ թշնամին,
և մի հետևիր՝ խորհրդոց նորին.
Զինեաց հանճարով՝ ընդդէմ ոսոխին,
զի զէն մարդոյն է՝ հանճար բնածին ։

## Աղուէս, և Աքաղաղ։

Որ ոչ ումեք՝ բարի առնէ,
յայլոց բարիս՝ ոչ տեսանէ ։

Մէկն որ մարդու՝ բարիք չընէ,
ուրիշէն բարիք՝ պիտի գտնէ ։

կդ. Աղուէս մը շատ հաւեր յափշտակելէն ետև վերջապէս ընկաւ որոգայթին մէջ. որ հողագործ մը լարեր էր անոր համար տանը բակին մէջը ։ Երբոր անօգուտ կաշխատէր և կը ջանար որ ազատի, տեսաւ աքաղաղ մը։ Ե՛ղբայր ըսաւ զգո՛յշ կեցի՛ր, կերդուընցնեմ քեզ որ զիս չի յայտնես. թէ որ կուզես ինձի հարկաւոր և մեծ ծառայութի ընելու, վազէ՛ շուտով գնա՛ իմացուր աղուէսներուն՝ իմ գլխուս եկած վտանգը. և ըսէ՛ իրենց որ

կաղաչեմ՝ զան զիս անկէ ազատեն ։ Իսկ աքաղաղը գոցեց իր սրտին մէջի եղած ուրախութիւն որ կարենայ վրէժ առնել անկէ. երդում՝ ըրաւ անոր խորհուրդը լաւ պահելու, և ա՛մ՝ կերպով գրած պարտքը կատարելու. բայց շատ հեռու էր խօսքը պահելու. վասն զի վազեց գնաց շիտակ տանտիրոջը պատմեց բոլորը. անալ մէկէն եկաւ բռնեց սպաննեց աղուէսը, որ մեռնելու առենը լալով կըսէր. վա՜յ գլխուս ովք էր որ ես օգնութիւն խնդրէի աքաղաղէն, որուն այնչափ հաւերը խղջեր եմ ։

---

Պէտք է յաջողութեան մէջ բարեկամ ունենալ՝ ամենուն բարերարութիւն ընելով, որ ձախորդութեան մէջ ինքն ալ գտնէ ։ Անոր համար Աղեքսանդր Թագաւորը կըսէր թէ ամէն բանէն վեր հաւատարիմ բարեկամն է ։

Ահա գեղեցիկ՝ պատուհաս չարին,
Որ գործն է լարել՝ թակարթ ընկերին.
Հուսկ յետոյ և ինքն՝ 'ի նոյն թակարթի,
աղաչէ զնա՝ գալ օգնել նմին ։
Քանի՛ լրբութի՛՝ ժամէ խօսնակին,
Որ ծծէր զարիւն՝ թէ էր 'ի ձեռին.
Ո՜րպէս յօտարէն՝ նպաստ ոք յուսայ,
Երբ այլոց բարի՝ չարար բնաւին ։

## Աղուէս, և Կատու ։

Պատիր հանճար՝ խորագիտին,
ոչինչ զօրէ օգնել նմին ։

Շատգէտ մարդիկ՝ շատ բան գիտեն,
բայց պէտք եղածն՝ որ բան չգիտեն ։

կն. Աղուէսն ու կատուն միատեղ ճամբոր-
դութիւն կընէին. երթալու ատենը սկսան
խօսիլ զանազան բաներու վրայ. վերջապէս
աղուէսն ըսաւ մէկալին թէ բարեկամ քու-
կին քիչ մտածելուդ համար պարտական ես,
որ յայտնի խոստովանիս թէ իմ միտքս բա-
րակութիւն որչափ գերազանց է, և խելքս քու-
կինէն շատ վեր է։ Պատասխանեց կատուն
թէ ես կուտամ. բայց կարծեմ՝ նայինք
ինչ օգուտ այն քեզի կընայ ընել հիմա. կը
տեսնեմ որսորդին երկու շներն որ չիտակ
մեր վրայ կուգան, ինչպէս ինձի կերեւնայ ։
Ահա թէ որ չեմ սխալիր, քու խորամանկու-
թիւնդ պիտի լմնցընեն. ինձի որ հարցը-
նես՝ ահա իմինս. իմ ունեցածս մինակ այս
է, որ բոլոր քուկին ունեցածներէդ լաւ կը
բանեմ։ Զայս ըսելով ցատկեց ծառին ծայ-
րին ելաւ. իսկ աղուէսն որ այնչափ յաջող
էր, այս բանը չգիտցաւ ընելու, թէպէտ
շատ անգամ իր հնարքներովը խաղցուց ար-
գիլէց շները, և քան անգամ առաջներնուն

փախաւ · բայց փուճ եղաւ · վն զի վերջա-
պէս չի կրցաւ ազատիլ, բռնեցին զինքը
սպաննեցին :

---

Միշտ ջանա որ շիտակ ճամբայէն ելլես · կամ
չէ որ լաւ խորամանկ ըլլալ, քեզմէ խորամանկը կայ,
և ամէն կըլլայ որ շատգիտութիւն քեզ շատ մը չէ
կրնար ընել: Կըսեն գիտունները, թէ շատ մեծ
յիմարութիւն է պարծիլ խելքին վրայ :

Զխաբող անիրաւ՝ պարծանք հպարտին,
որ ազատ պանծայ՝ ընդ համբար անձին ·
Բայց երբ ժամանէ՝ արկած իւր բաղդին,
անդէն նախրանան՝ այն պանծանք չնչին :
Պանծալի իմաստ՝ գոյ յառաքինին,
որ իմաստութիւն՝ փայլի 'ի բանին ·
Ոչինչ յեղյեղեալ՝ յարկածից բաղդին,
ոչ նսեմացեալ՝ 'ի մահու անուին :

---

## Աքաղաղ, և Հնդկահաւ :

Սիրտ նախանձոտ՝ տանջէ համայն,
և իւր ինքեան՝ տանջանարան :

Թէ չես տանիր՝ այլոց գործքին,
նայէ՛ ըլնել՝ տուն աւելին :

ԿԴ. Աքաղաղը բնութեամբ նախանձոտ է
բայց հինտու աքաղաղին հետ բակին մէջ

մատեղ կը վարվէին․ որ մը տեսաւ որ վերցուց փեսաուրներն ուռեցաւ մէկալը հաւերուն աղջին․ այս բանէն աղաղաղը կասկած գնաց ու ըսաւ անոր․ Նենգաւոր՝ պարապ բան չէ, որ դուն իմ հաւերուս աղջին փեսաուրներդ վերցուցիր․ ատանց կարծեաց կուղես իրենց հաճոյ ըլլալ․ և խամէ զանոնք հանել: Անալ պատասխան տըւաւ թէ բան մը կըսես, որ ամէնելին մօքէս ալ չէ անցած, և անմտութէ՞ տաղցեր ես: Ինչու համար չես կրնար քաշել, որ ես հաւերուդ աղջին փեսաուրներս ուռեցընեմ․ հապա ես կըհամբերեմ որ դուն երբոր կուղես իմին հաւերուս աղջին միշտ կերդես:

---

Նախանձը անանձ անարգ ախտ է, որ իր տէր֊ ցընէ ուրիշին բարութենը վրա․ ասանկ նախանձո֊ ռը ևի իրենը փաշէր ուրիշին գեղեցկութենը գիտութենը և ամէն բանը․ ըսածէր որ իրեն հասարար ըլլան, [illegible]

Անյագ է նախանձ՝ ըստ անսուտ վճռի,
որ բուռնեալ՝ ի սիրտ՝ սպառէ զոգի․
Մաշի ընդ յաջող՝ բաղդըս ընկերին,
զի պատիժ նորա՝ է այլ՛ց բարին:
Ուսիր կենակցիլ՝ քաղցր ընդ ընկերին,
և մի նախանձիր՝ ընդ գործս նորին․
Զի ամօթ մեծ է՝ թողեալ զիւր գերան,
ընդ օտարս կադել՝ զշիւղոյ ական:

# Կով, և Շուն։

*Չարակն հիւծի՝ ընդ բաստ մարդկան,*
*յորինչ հայի՝ սիրտն է դաժան։*

Ծածկուած այլոց՝ բան չի կամիր,
Թէպէտ իրեն՝ բան չի պակսիր։

*ԿԷ. Շուն մը պառկեր էր խոտի դէզին երդընին վրա. կովն ալ եկաւ քիչ մը խոտ ուտելու որ անօթի կըմարեր. բայց շունն որ գիլեց ու ակռաները կրճրտելով կովին դէմ ցաթկեց։ Ո՜վ նախանձոտ կենդանի ըսաւ կովը, Ի՞նչ ես կատղեր ու չես կընար քաշել որ քիչ մը խոտ ուտեմ, որովհետեւ քեզի ամենեւին հարկաւոր չէ։*

---

Օրինակ է չարակնութեան, որ ուրիշին աղէկութենը չուզեր, ու ինք ալ աչքով կը նայի ուրիշին։ Փիլիսոփայ մը տեսնալով ուրիշ մէկը տրտում ըսաւ. Թէ այս մարդուն կամ ինք բան մը պակսած է, կամ թէ ուրիշին աղէկութիւն մը եղած է։

*Ով զխարդ չարակն՝ զոխ զերեկուն,*
*ու չար նախանձու՝ կաղկանձէ անգուն.*
*Զի երբ տեսանէ՝ զընկերն ՚ի բարին,*
*իւր մաղձ դառնութեան՝ զեղանի յարիւն։*
*Մի ուտեր զհաց՝ ասէ իմաստուն,*
*ընդ վասն չարակնին՝ բարեաց թշնամւոյն.*

Զի համօրէք նորա՝ զրկել քոյդ սեղան,
Թէև ինքն յազեալ՝ ննջէ խոր 'ի քուն:

## Բու, և Թռչունք:

Որ զայլս ատէ՝ յայլոց ատի,
Եթէ զբօս՝ ընդ մութ շրջի:

Դուն ուրիշին՝ ինչ որ ընես,
ուրիշներէն՝ զայն կը գտնես:

ԿԷ. Բու Թռչունը կը նայի, որ ընդհանրապէս բոլոր թռչունները զինքը կատեն. սատակի նեղութէն կը քաշվի կաղնի ծառին խոռոչին խոշոռներին մէջ կը նստի, ու ալ չի համարձակիր ցորեկը դուրս ելլելու. միայն գիշերը կելլէ: Մէկ անգամ մը դիպուածը բերելով ցորեկին անկէ դուրս ելաւ. բայց բանը շատ գէշ եղաւ. վասն զի թռչունները զայն տեսածնուն պէս ամէն կողմէն վազեցին վրան թափեցան, և յետոյ մեծէն մինչև պզտիկը սկսան զուարճանալով ծեծել զայն կտուցներով. և այնպէս հալածեցին:

---

Բուն այսինքն *պայղուշը* միայն մութ տեղը կը նստի, և գիշերը դուրս կ'ելլայ կ'ապրի. ասոր խրատներ ըսելով նման է ատեցող մարդուն, որ միշտ ուրիշը ատելով՝ ամէնքն ալ զինքը կ'ատեն:

Այս օրինակ է՝ ատելի անձին,
որ զանխուլ կրծէ՝ զսիրտ ընկերին.
Որով յամենից՝ կրէ զարժանին,
զրկեալ 'ի լուսոյ՝ շրջի խաւարին։
Քանի՛ վայելուչ՝ սիրել և սիրիլ,
օտարաց համայն՝ ցանկալի լինիլ.
Զի՛նչ հանգիստ չարաց՝ ատել և ատիլ,
հալածեալ խապառ՝ 'ի մթան թաքչիլ։

---

## Գայլ, և Շունք։

Որկրաժեռին՝ միայն թակարթ,
է կերակուրն՝ եդեալ 'ի կարթ։

Ով որ զուրիշն՝ ուտել ցանկայ,
Ինք կերակուր՝ անոր կըլլայ։

կթ. Գայլ մը հեռուէն կըտեսնէ երկու շուն որ իրարու հետ կռիւ կընէին. կռիւն որ աւելի տաքցաւ՝ մռմռալով, որ երթայ մօտենայ անոնց և երբոր իրարու վրայ ելլեն՝ դիւրութիւ՟ զանոնք յափշտակէ։ Այս խորհրդով շիտակ անոնց քով վազեց. բայց. հակառակն եղաւ. վասն զի շներն այն կէ... տին հաշտըվէր էին, գայլն որ մօտեցած տեսան՝ շատ ուրախացան, և յետոյ երկուքը միաբան վազեցին ընկան գայլին վրայ պատռեցին.

Որկրամոլին խորտակը մեզ կերակրէն կուլայ · է մի մեծ ոստեւը մեծ հիւանդութեան պատճառ-ռաւային 'ի մեզ, մեծ ժողովութէ մեզ յաճելով կերկը-պէս զուարթ կարէ գայլին եղածին պէս · այսպէս կուլան ասրին ահեղ եղանէ եղածներն ալ:

Այն անհամբոյր բարք գազանային,
յայլոց գիտութեանց՝ հանէ զկեր բաժին.
Քանի՞ շահասէրք համանման սմին,
կռուողաց բարիս՝ գրաւեն հեշտին:
Բայց արդարութի՝ չթողու նոցին,
փութով հասանէ՝ կշիռ 'ի ձեռին.
Տոկոսիս արդար՝ պահանջէ կրկին,
և անդէն մասնէ՝ ժանեաց ոսոխին:

---

## Արծիւ, և Ագռաւ:

Որ յանդգնի՝ գործել մեծ ինչ,
Նշաւակի՝ լինի ոչինչ:

Չէք մի ըներ՝ մեծ բաներու,
կը պարտուհի՝ ան որ էրըր:

Արծիւն ինջաւ ոչխարի մը վրա, ու առաւ վեր հանեց · զայն որ տեսաւ ագռաւը նախանձեն ըսաց · միթէ ես ալ չեմ կրնար ընել սանկ մէկ բան մը: Զայս ըսելով թըռաւ գնաց մէկ գէր ոչխարի մը վրա · բայց ետ հեռու մնաց արծիւին ըրածէն · վասն զի անանկ ոչխարին բրդերուն փաթթըւե-

ցաւ , որ չի կրցաւ ազատէր էր · մնաց անանկ ոչխարին վրայ ։ Եւ երբոր կըշարժէր , որ ագռա-ւը՝ հովիւն իմացաւ , վազեց եկաւ բռնեց դըրաւ վանդակին խաւքէ-ին մէջ , տըւաւ տղոցը որ խաղան ։

---

Օրինակ է յանդուգն մարդու · որ զինքը չի ճանչնալով ինչ որ տեսնէ՝ կարծէ թէ ինքն ալ կրնայ ընել · բայց երբոր վտանգի մէջ կիյնի , անատենը կիմանայ ինչ ըլլալը ։

Խրատ է այս գործ՝ յանդուգն յիմարին ,
որ ոչ ճանաչէ՝ զոյժ և չափ անձին ·
'ի գործ մեծագործ՝ մխիլ յանդգնի ,
մինչև 'ի ներքոյ՝ ճմլի ծանրոցին ։
Պիտանի յաւէտ՝ իմացականին ,
ճանաչել զիւր կար՝ և ոչ հզօրին ·
Քանզի հզօրաց՝ գործն է մեծագործ ,
չնչին և թեթև՝ է գործ տկարին ։

# Կատու, և Աքաղաղ։

Զրկողութիւնք՝ անզգամին,
սուտ պատճառօք՝ արդար դատին։

Զօրաւորին ձեռքն՝ ինչ որ ընէ,
զինքը սուտով՝ արդար կընէ։

ճա. Կատուն բակը կը մտնէ, և հոն տեսնելով աքաղաղ մը վրան կը ցատկէ, ճանկովը կը բռնէ որ իրեն ընէ մէկ լաւ կերակուր մը։ Ինչո՞ւ համար սպանել կ'ուզես ինծի ըսաւ աքաղաղը. ամենևին չեմ յիշեր թէ քեզի օր մը գէշութիւն ըրած եմ, որ արժանի ըլլամ սպանվելու քու ձեռքդ։ Պատասխան տուաւ կատուն հանդիստ ձայնով մը. թէ որ օրինաւոր բան մը չի գտնեմ քեզմէ տալը տրնջալու, և չի պատժեմ քու կին գողութիւններդ որ տեսած եմ, պարտական կը մնամ իմ ազգին. ո՛վ անօրէն դուն չե՞ս որ ամէն օր կերթաս տիրոջդ արտին մէջ կը պտըտիս, որ ցանած ցորենն ուտես. մինչու արժանի ես դուն ըսելով խղդեց կերաւ։

Զրկողութիւն ընողը միշտ մէկ սուտ պատճառ մը կը գտնէ. որ ըրած բանը արդար երևնայ. և որչափ աղուոր ընէ, ինքը ալ նոյնը կ'ընէ. ով որ գայ իրեն, որ տկարներուն իրեն լաւ հանէ, ան ալ յանցաւոր կ'ընէ։

Այսպէս և զրկողք՝ զինքեանս համարին,
արդար դատաւոր՝ լինել ոմանկին.
Սուտ պատճառանօք՝ խաբէն զմարդիկ,
սակայն չեն խաբել՝ յանխաբ ատենին։
Որ յայնժամ երկար՝ պատմութիւնք բանին
և նորին պատճառ՝ փաստ փաստաբանին.
Արդ ճշմարտութիւն՝ անցեալ 'ի բեմին,
պահանջէ համար՝ գործոց զրկողին։

---

## Հաւ, և Արտավար։

Գործ խոհական՝ հասուն մնաց,
զփոքրն ընտրէ՝ յերկուց չարեաց։

Բարէ ծնողք՝ զաւակին սէրման,
Փէշէ խելամն՝ օտարնէրման։

հը. Հաւ մը նոր հանած ձագերը կանչէ կըտանի արտերուն մէջ, և իր տեղէն շատ կըհեռանայ. երբոր անհոգ կըպտըտէր, ահա բազէն հոն երևցաւ, և մէկէն պատրաստւեցաւ, որ ինջնի ձագերուն վրայ։ Անատենը հաւն ինչոր կրնար ընել ըրաւ, որ ազատէ ձագերը. մինչև փախաւ ապաստեցաւ մէկ ապահով գոց տեղ մը, որ մօտ էր, և հոն գտաւ մէկ վանդակ խոփէս մը, մտաւ ձագերուն անոր տակը պահվեցաւ։ Իսկ երկրագործը տեսնելով զայն շատ մը վազեց բռնեց հաւը ձագերուն առաջ տարաւ։ Բայց հաւուն միխիթարութիւն այն էր որ գոնէ ձա-

գերս ազատեցի կըսէր անողորմ Թշնամուն ձանկէն ։

---

Ինչպէս որ հաւը տատանէլ խածոտա գէրէ ըււլալ ան ըէ յոգերը բոլէին յետոը յգէւ. տոանք ու ինօղը պէտք է իրէնց ղուխըներըն անանք նայէն որ ըզնամուն , և ըստ ընկերներուն յետոը ըէյնէն խոր-ղքին ըստրաստր ։

Այս օրինակ է՝ խոհեմ ծնողին,
որ պահէ զորդիս՝ 'ի ձեռաց չարին.
Յանձն առնու գերի՝ լինել օտարին,
զի մի այն անմեղք՝ մահու մատնեսցին ։
Եղո՜ւկ ծնողաց՝ որ անհոգ նստին,
մանկունք մատնեալ կան՝ առ չար ընկերին.
Զորս 'ի խոր խոցեալ՝ զանազան ախտին,
կորուսեալ առնէ՝ անյագ գաղանին ։

---

## Կապիկ, և Թութակ ։

Որչափ ճարպիկ՝ խաբօղն իցէ,
առաւել անդէն զինքն՝ յայտնի առնէ ։

Ճրագ և մոմ՝ ճորպէպորդուն,
հաղնի կէրբայ՝ ձնւ իրէկան ։

հզ. Որ մը կապիկն ու Թութակը մտա_ծեցին որ բանական ըլլան, և խելքերնին դրին որ զիրենք մարդ ձևացընեն ։ Կապիկը

կարծէր թէ մարդու լաթ որ հագնի, մարդ կըլլայ, թութակն ալ կարծէր թէ մարդու պէս որ խօսի կըլլայ մարդ։ Ուստի կապիկը լաթը հագաւ․ իսկ թութակն ալ քանի մը խօսք սորվեց․ յետոյ երկուքը միասնեղ ելան իրենց բունէն գացին բազմութեան մէջ Քաղաքը երևցան։ Տեսնօղը մէկէն կըխաբվէր․ բայց որովհետև կապիկը բան չէր կըրնար խօսիլ, և թութակն ալ միշտ մէկ բան մը կըսէր, շուտ մը խաբէութիւնը յայտնի եղաւ։ Նոյն այսպէս որոնք առաջուց իրաւ մարդ կարծեցին զանոնք, քիչ ատենէն ետև ինչ ըլլալնին հասկըցան։

---

Յիմար և կոշտ մարդը կարծէ, թէ հագուստով և մարդուն մէջ մտնելով երևելի կըլլայ, չիտեր թէ իր շարժուածքն ու խօսքը մէկէն ինչ ըլլալը կիմացընեն։

Խրատէ՛ առակս՝ գող լինել յողին,
մի՛ խաբէութե՞ամբ՝ նմանիլ վեհին․
Զոր ինչ ետ բնութիւն՝ այն է բուն անձին,
որ ոչինչ ունիք՝ փոխի բնաւին
Զինչ շատ զգեստուք՝ ծածկել զարտաքին,
բարեձև կեղծիլ՝ 'ի զարդ [illegible]րին․
Երբ ներքին նորա՝ անկիրթ իբր անբան,
վաղ խայտառակէ՝ զանխիմաստ հոգին։

## Գայլ, Աղուէս, և Կապիկ։

Յաջողամիտք՝ յանհնարինս,
զեղծս իրաց՝ հնչա հնարին։

Գիտուն մարդը՝ երբոր ուզէ,
ամէն բանին՝ ճար կը գտնէ։

ՃԷ. Գայլն ու աղուէսը կապիկին առջին հակաճառութեն կընէին իրարու դէմ։ Գայլն ամբաստանութեն կընէր, թէ աղուէսը գողցեր է իմ կերակուրս։ Աղուէսն կուրանար թէ սուտ է։ Իսկ կապիկն՝ որ կը ճանչնար երկուքին ալ բնութիւնը, մեծ տարակուսանքի մէջ ընկաւ, թէ որու՛ն հաւատայ. ուստի միայն սանկ ազատեցաւ։ Երկու կողմն ալ շատ հակառակութիւն ընելէն ետև, պարտք դրաւ իրենց որ չի խօսին, և սանկ պատուիրեց անոնց։ Ո՛վ գայլ կը պարտաւորեմ քեզ, որ հատուցում ընես. որովհետև դուն աղուէսէն կը պահանջես զայն, որ քեզմէ բան մը չէ առած. և դուն ալ ով աղուէս պէտք է որ հատուցում ընես. վասնզի կուրանաս պարտքդ գայլին որ գողցեր ես։

---

Անիրաւ են անոնք որ գիտութիւնը բանի տեղ չի դնելով չեն սորվեցներ զաւակներուն բան մը։

ցընելու ․ Չէ՛ որ գիտուն մարդը այն բանին ճամ-
բան գտնելուն անօթի էր հոս, և այնպէս այլին
յարգութիւն ունի ։ Իմաստութիւնն է նմանութիւն ալ,
Ջուէ իմաստուն մը ։

Այս իմաստնոց է՝ և ոչ անգիտին,
գտանել հնարս՝ յանհնար դատին.
Զի երբ խորամանկք՝ ընդ միմեանց վիճին,
գործ է գտանել՝ անշուշտ զմիջին ։
Ահա աստ յայտնի՝ միտք հանճարեղին,
որ շահի զսիրտ՝ վիճողաց կրկին.
Ուստի ընդ գիտնոց՝ նստիլ կենակցել,
հանճարոյ նոցին՝ բաժանորդ լինել ։

## Աղուէս, և Մորենի ։

Է ազգային՝ օրէնք բնական,
պատուել զհիւր՝ զօտարական ։

Մարդկութեան դէմ՝ շատ գէշ բան է,
որ հիւր օտար՝ նեղ ձգարէ ։

ՃԾ. Մէկ մարդ մը աղուէսին ետեւէն ըն-
կաւ որսալու համար . անալ փախաւ գնաց
մորմենիին մէջ մտաւ պահվեցաւ , որպէս
զի կարենայ աներեւոյթ ըլլալ հալածողին
տեսութենէն . բայց նայեցաւ որ մորմենիին
փշերը վրան գլուխը պատռեր են՝ ըսաւ ին-
քիրեն . այս ինչ անխելքութիւն է իմին ը-
րածս , որ այս անզգամին ապաւինեցայ .

մէ այնչափ արուն թափեցին հոս, որ չէր կրնար սրբողն այնչափ հանել խամէ։

---

Մորենին օրինակ է անհարկի հարցմանց, որ փորձանքին չեն ուզեր պատիւ ընել. բայց ամէն ազգաց մէջ օրէնք է, պատուել հիւրը մուսաֆիրը, և ձեռքէն եկած օգնութիւնն ընել։

Իմաստ առակիս՝ խրատէ զնոսին,
պատուել զհիւր օտար՝ ըստ բերման առթին·
Քանզի խրատուք՝ օրէնք ազգային,
զայս ուսուցանեն՝ ամենայն ազին։
Զի՛նչ չար ընդ յորկաւ՝ լինել ընկերին,
և պատսպարել՝ ի ձեռաց գայլին·
Յորժամ տանուտէրն՝ դառնացել յանձին,
մերժէ հալածէ՝ նման գազանին։

---

## Մարդ և կուռք.

Զայնես մաղթեա՝ հիմ զանդուայն,
զի լսեցիս՝ չունի յինքեան։

Խորամանկին՝ խօսք չի տրուի,
ինչ որ ըսես՝ քար կը կտրի։

հզ. Մէկ մարդ մը չէր հեռանար իր կուռ-քին առջևէն. և միշտ կը շողոքորթէր կաղա-չէր ու կաղօթէր. օր մը խունկ կը ծխեր, օր մը զոհ կընէր անոր համար որ կուռքը

իրեն ոսկի եւ դանձ տայ․ բայց փոխ՝ տեղը կաշխատէր․ վա՛յ զի կուռքն անանկ խըլացեր էր, որ սատակ մը չի տըւաւ խեղճին։ Ուստի մարդը հարստանալու տեղը՝ աղքըտացաւ։ Բայց եւ այնպէս ետ չի կեցաւ, ալ աւելի սկսաւ աղօթք ընել, եւ պաշտօն մատուցանել կուռքին․ բայց բան մը չի հասաւ ձեռքը։ Ժամանակ մը շարունակեց այս բաները ընելու, սակայն պարապ ելաւ։ Վերջապէս համբերութիւնը հատաւ, օր մը յուսահատելով առաւ կացինը զարկաւ կուռքը կոտր կոտր ըրաւ․ մէյմնաւ տեսաւ որ կուռքին մէջէն ոսկի կարկանք թափեցան․ ո՛հ ո՛հ կըսէր ժողվելով՝ ի՞նչ է այս, այս ի՛նչպէս բան է․ ուրախութէն խելքը գլխէն գնաց։ Ահա կըսէր իրաւի մէկ անձոռնի եմ մը․ ես կընայի՞ հաւատալ թէ աւելի պիտի վաստըկիմ եղեր զայն ծեծելովս, քան թէ աղաչելովս։

---

Խրատաւորք անգամ մարդը աղաւանդով են կաըղնար, այլ բանութիւնէ․ Ինչպէս արծաթասէր մարդը ոսկին անանկ որպէս մէջ կը քաշէ որ մարդուս օգնութիւն մը ըներ․ Բայց մահին բանութիւնը այնպէս կընէ, որ շնորհացան կըլլան պահած ոսկիները։

Տես զխամբրս ձայնէ՝ անլուր արձանին,
ում լսել ոչ եւս՝ մատ քանդակողին․
Միայն 'ի պատիւ՝ եդ 'ի լանջս ոսկին,
զոր եւ տալ չունի՝ թէ ոչ փշրեսցին։
Այս օրինակ է՝ անգութ ագահին,
որ տմուր փակէ՝ զոսկիս 'ի սրտին․

Բանք ողորքանաց՝ ոչ ազդէ նմին,
արկածիւք ևեթ՝ հանէ զայն ոսկին:

## Մարդ, և Երկու կանայք:

Վա՛յ որ մատնէ՝ զինքն կանանց,
հանեն յիւրմէ՝ խելս ընդ հերաց:

Թէ որ պէտէ՛ կնկաց մարդուն,
Խելքէ մտքէ՝ շուտով կ՚ելլէ:

ՀԷ. Երիկ մարդ մը սկըսեր էր հալեւորնալ. և կընայեր որ հաճոյ ըլլալ՝ իրեն երկու սիրելի կնիկներուն. որոնց մէկը պզտիկ էր, ու տարիքը քիչ. իսկ մէկալը տարիքն առած տեսքն ալ գացած էր: Անոնք կախորժէին որ երիկնին իրենց յարմարցընեն. և երկուքն ալ իրենց ախորժակին հետեւելով մեծ հոգ ունէին որ փոփոխ սանտրեն անոր գլուխը: Բայց մարդուն բանը շատ գէշ եղաւ. վասն զի պզտի կնիկը երբոր անոր գլխուն վրայ կը տեսնէր ծերութեան նշան ճերմակ մազ, բոլը կանալով կը փեթտէր որչափ որ գտնէր: Մէկալ կնիկն ալ երբոր կը տեսնէր սև մազ բոլորը կը փեթտէր: Եւ այսպէս քիչ ժամանակին մէջ մարդուն գլուխն եղաւ կընտակ փառ:

---

Առիստոտէլ փիլիսոփան կըսէր. Թէ մէկ մը կին մը կարող է խելացիները ալ կարողներուն. հոդա

Երկուսը իրենց մէջ որ ըսածն ի՛նչ չէն կրնար ընել֊ ուն համար զօրաւորէն վիճաբանութիւն ըրաւ, թէ ինքնիկէն դժուարոր բան չի կայ աշխարհքիս մէջ։

Ո՞Վ քանի՛ ապուշ՝ մեղկ կնամարդին,
մատնեալ կայ 'ի ձեռս՝ վատ կանանց կրկին.
Ձգի ընդ տռամբ՝ ուր նոքա կամին,
Թափեալ 'ի խելաց՝ զերթ խելագարին։
Ուշի՛ր արթուն կալ՝ 'ի վերայ անձին,
չմատնիլ 'ի ձեռս՝ քաղցր յուշկապարկին.
Որ այնչափ է կար՝ շրթանց և լեզուին,
յաղթէ իմաստնոյ՝ արքայից բազկին։

## Հայր, և Որդիք։

Քան բերդ ամուր՝ զի՛նչ հաստատուն,
բայց միաբան՝ եղբայրութիւն։

Որոնք եղբարք՝ միաբան են,
ամէն բանի՝ մէջ կը յաղթեն։

ՀԷ. Մ՝էկ մարդ մը ծեր շատ որդիք ունէր. երբոր հասաւ վերջին ծերութեն, և տեսաւ թէ մօտ է վախճանին, կանչեց քովը բոլոր որդիքը. նայեցաւ որ ամէնքը քովն են ժողված, բերել տըւաւ մանր ցուպեր չորսոն֊ նէր, և բոլորը միատեղ կապեց ու տըւաւ մեծ որդուն, հրամեց որ կոտրէ։ Անալ յանձն առաւ. բայց որչափ որ ջանաց՝ և շատ անգամ ուժ տըւաւ որ կոտրէ, չի

կրցաւ կոտրել էր։ Այսպէս տրուաւ զայն երկ-րորդին. անալ տրուաւ երրորդին. ոչ մէկը ոչ մէկալը կրցան կոտրել զայն կապոցը։ Ասանկ որ եղաւ ծերին առաւ զայն կապը քակեց, ու զատեց. ամէն մէկին մէյմէկ հատ տրուաւ, և հրամեց որ երկրորդ ան-գամ փորձեն, ու կոտրեն. բայց անոնք ա-ռանց դժուարութեան մէկէն բոլորը կոտրե-ցին։ Անատենը դարձաւ ծերին ըսաւ. Որ-դեակ երբոր ես այս աշխարհքէս ելլեմ, ա-սանկ պիտի ըլլայ ձեզի. որչափ որ դուք ամէնքնիդ միաբան մնաք, այնպէս զօրաւոր կըլլաք որ մէկը չի կրնար ձեզի շարժել. բայց անմիաբան եղածնուդ պէս, անանկ պիտի տկարանաք, որ պզտի փորձանք մը ձեզ կրնայ կործանել։

---

Որչափ թագաւորութիւններ կան աշխարհքիս մէջ՝ որ միաբանութիւն կեցած են, անմիաբանութիւն կը կոր-ծանէ։ Հայոց թագաւորութիւնը քանի որ միաբա-նութիւն կար՝ այնչափ մեծցաւ որ աշխարհքի փրթեց. բայց անմիաբանութիւն քիչ ժամանակի մէջ ոչնչցաւ։

Զի՞նչ հաստատութիւն՝ գայ երկրի երկնից,
որ քակել զօրէ՝ զկապ միաբանից.
Զի երբ միաբան՝ եղբարք գտանին,
դիմագրեն ուժոյ՝ բոլոր աշխարհին։
Յե՞ր վերայ կանգնին՝ գունտ տիեզերին,
բայց 'ի միաբան՝ տարերց չորեքին.
'Ի քակել սոցա՝ քակի և աշխարհ,
'ի քակել եղբարց՝ քակի տուն տեղին։

## Հովիւ ստախօս ։

Զի՞նչ զբօսանք՝ ստախօսին,
երբ հաւատայ՝ ոչ ոք նմին ։

Այն է վարձք՝ ստոյգ խօսողին,
որ մարդ լսող՝ իրեն խօսքին ։

ՃԹ. Հովիւ մը իրեն զբօսանք էր ըրեր, որ ստէն ստէն կը պոռար գայլին դէմ, թէպէտ բան մը չէր տեսներ ։ Այս ձայնը երբոր կառնէին գիւղացիները վազէին կուգային ։ Իսկ հովիւը շնորհակալ ըլլալով անոնց աշխատանքին համար՝ կը խնդար զուարճանալով, և շատ անգամ այսպէս ընելով կը խաղար ։ Յանկարծ եղաւ որ օր մը իրաւ եկաւ գայլը մտաւ ոչխարներուն մէջ. սկսաւ կանչել պոռալ հովիւը որչափ որ ձայն և ուժ ունէր. բայց որչափ իրեն օգնութիւն կանչէց պարապ ելաւ. վասն զի գիւղացիները կարծելով, թէ սուտ կը պոռայ չուզեցին երթալ անոր օգնութիւն ընելու ։ Ուստի յաջողեցաւ գայլին, որ բոլոր ոչխարները պատռեց ։

---

Ստախօս մարդուն շահը, այն է որ ճշմարիտ խօսքին ալ մարդ չհաւատար, և մինչև քաղ հասարակութենէ զրկի. որոշելով ստոյգը՝ թէ ճշմարտութիւնը հաւատալ է ։ Ուստի հին ատենը ստոց երդման ընդունին չէին կ՚ընէին ։

Այս չաՀ պտուղ՝ խաբօղ սուտ լեզուին,
որ 'ի սուտ փոխէ՝ զիսկութիւն իւրին .
Հակառակ գոլով՝ անխաբ Ճշմարտին,
անհաւատարիմ՝ լինի բոլորին ։
Արդ մի՛ հեռանիր՝ դու ստախօսին,
որ զիսկն եղծանէ՝ զիւր ստոյգ բանին .
Զի որ միանգամ՝ սովոր է խաբել,
բնաւ բանք և գործք՝ անհաւան լինին ։

## Ուրուր, և Լուսինեակ ։

Երգ և նուագ՝ չեն ընդունակ,
'ի կերակրել՝ զորկոր դատարկ ։

Ամէն բանին՝ ափէնը կայ,
ափէնէ դուրս՝ մէջը գէն կուլայ ։

Ճ. Ուրուր մը շատ անօթի ըլլալով՝ կը բըռնէ ճանկին մէջ մէկ լուսինեակ [illegible] մը ։ Ո՜վ ուրուր կըսէր լուսինեակը իմ կեանքս ինծի բաշխէ, ես քեզի մէկ բան մը երգեմ որ զմայլիս . վա՜ զի իմ ձայնս դուն գիտես որ ամէներուն ալ կըզմայլեցընէ ։ Պատասխանեց ուրուրը, ես առանց կարծեաց յօժար սրտով կը լսէի քու ձայնդ, թէ որ չըմնայի նեղանէն, թէ հիմա աւելի կարօտութիւն ունիմ կերակրի, քան թէ եղանակի ։ Զայս ըսելով՝ կերաւ ։

Աղէն բան ժամանակ ունի, տղէնուն էղած բա-
նը մեծ լաւ կըլլայ · շատ մարդ կայ որ գործէի
տէն քուճ բաներու հէտ ըլլալուն հարկաւոր բանէն
էտ կը մնայ ու խէղճ կըլլայ :

Ուսիր չըլինել՝ Թոյլ 'ի պիտանին,
գնալ 'ի զբօսնուլ՝ յերգս ընդ նուագին ·
Այլ է ժամանակ՝ վաստակել շահիլ,
և այլ ժամանակ՝ խօսիլ և հրճուիլ :
Քանզի հեղգ 'ի գործս՝ գնան զմայլլին,
'ի լուր քաղցր երգոց՝ ձայնի հաւատորին ·
Թողուն լիք դատարկ՝ զիւրեանց որովայն,
Ընուն զանելիս՝ բաղխմամբ լոկ օդին :

## Առխուծ, և Աղուէս :

Բնութիւն չոգմոգ՝ նման ձիթոյ,
ցանգ ելանէ՝ յերես ջրոյ :

Կէղծաւորներըն՝ էղի նման,
ջրէն կըլլան՝ էրէս կէլլան :

ձա. Երբոր առխուծ մը թագաւոր պիտի պսակվէր՝ ծանուցում ըրաւ ամէն կենդանիներուն, թէ պէտք է որ գան իրեն հպատակութիւն, և ծառայութիւն ցըցընեն. ուստի ամէնքն ալ վազեցին եկան, ու խոստացան որ հնազանդ մնան միշտ : Մինակ աղուէսն ուշացաւ, և ամենէն ետև երեցաւ առխուծին : Իսկ առխուծը երբոր բարկութեամբ կը մըն-

*չէր՝ աղուէսը խոնարհ ձայնովմը ըսաւ ։ Տէ՛ր իմ ժամանակ չունեցայ երեւնալու տէրութեանդ առջին. վն զի սէրն՝ որ ունիմ քու վրադ մի միայն պատճառ եղաւ իմին ուշանալուս. որովհետեւ լսածիս պէս թագաւորէդ վաղեցի գնացի կուռքին հարցընելու, թէ ո՛րչափ պիտի թագաւորես ։ Իսկ կուռքը՝ որուն ամէն օր քեզի համար կաղաչէի ո՛վ թագաւոր՝ ինծի վկայեց ուրախութիւս, որ սրտիս մէջ ունէի. վն զի հաստատեց, թէ աւիւծներուն մէջ մէկ թագաւոր մը չէ եղած, և չպիտի ըլլայ անանկ երջանիկ և երկան ժամանակ թագաւորութեն ընող, ինչպէս դուն ։ Ես ահա այս լուրս ժամ մի առաջ տէրութեանդ ուզեցի հասցընել. բայց կուռքին քով ուշանալս թող չի տըւաւ ընելու ։ Այս անմեղադիր խօսքս անանկ շատ հաճելի եղաւ աւիւծին, որ չէ թէ միայն չի բարկացաւ, այլև շնորհակալ ևս եղաւ անոր աշխատանացը վրա, և ամէնէն աւելի սէրով ընդունեց զայն ։*

---

Ա[illegible] օրինակ է անանց բոլորաններուն, որ երեւցուցող կեղծաւոր մարդուն խօսքին աւելի ան ալ կը պատուէն. քան թէ հաստատարիմ բարեկամին, որ անոնց շահուն համար կաշխատին. Մեծամեծները ամէն բան կընեն, ու ձրին երեւան ուլլեն ։

*Զխարգ հեշտալուր՝ ձայն փաղաքշողին,*
*'ի լուր լսելեաց՝ արքայից վեհին.*

Զի յաւէտ նոցա՝ պատիւ յարգութեն,
և ոչ իմաստնոց՝ տան աւագանին։
Այս է գեղեցիկ վրիպանք նոցին,
որ շոգմոգ բանիւ՝ խաբին և հաճին.
Եւ զայն ոչ գիտեն՝ թէ բանիւ միայն,
՚ի միտըս ծանակ՝ լինին շոգմոգին։

---

## Մրջիւն, և Աղաւնի։

Բարերարօղն՝ զգուշնագոյն,
գտցէ բարիս՝ ըստ իւր չափուն։

Բարին ըրէ՝ ծովը նետէ,
ձուկը չգիտնայ՝ Տէրն կը գիտէ։

Ճբ. Մէկ մրջիւն մը անզգուշութբ կիյնի պզտի գետի մը մէջ. երբոր կը խղդըւէր հոն՝ աղաւնի մը կը տեսնէ զայն, և ծառի ճիւղիկ մը կըձգէ ջրին մէջ, որուն վրա կայնած էր ինքը. և այն կըլլայ մրջիւնին իբր նաւ մը, որ ցամաքը հանելով կազատէ զայն։ Ցամաքին ելլելու ատենը որսորդ մը կը լարէր աղեղն ու աղաւնիին կը նշաէր. երբոր պիտի նետէր զարնէր, մրջիւնը հասկըցաւ իր բարերարին վնասը, շուտմը վազեց եկաւ որսորդին ոտքը խածաւ։ Իսկ որսորդը վերվար ըլլալով ձայն ելաւ, աղաւնին իմացաւ թռաւ։ Եւ այսպէս մըրջիւնն որ պարտական էր իր կեանքը աղաւնիին, փրկեց զայն փոխադարձ. և այս մէ-

ջոցով հատուցում ըրաւ անոր բարերարու-
թեն, որ տեսեր էր անկէ։

---

Օրինակ է փոխադարձ արդարութեան, որ մէկը ինչ ողորմութիւն ըրաւ մէկալին, անալ անոր դայն ըրա իրեն մեծութեանը չափուն նայելով. Թէ ալ այն գործոց ընդունին ապրանքներն կը չափէ։ Աստի այն մարդ պէտք է ըստ իր չափուն երախտիք ճանաչելով հատուցում ընել։

Այս է տեսանել՝ պատգամ տէրունոյն,
որ կշռէ բարիս՝ ըստ արդար չափուն.
Թէ արար յորմէ՝ չունէր ակն առնուլ,
յանձնիւք գանձեն՝ կշռի չափ նորուն։
Եթէ բաժակաւ՝ ջուր չափիւ փոքրուն,
անդրէն քեզ ջամբին՝ թաթաղուն գեղուն.
Եթէ նպաստ ինչ՝ առնես կարօտին,
անկարօտ մեաւ՝ 'ի վիճակ կրկին։

---

## Մայր, և Գող որդին։

Որ ոչ որդւոյն՝ վըշար գործ պատժէ,
գարշ ոճրագործ՝ զնա առնէ։

Ով իր տղային՝ աղէկ խրատէ,
ամէն պատիւ՝ մեծ կը գտնէ։

Մեկ. Մայր մը իր որդին չէր պատժեր բնաւ
պզտիկ գողութեան համար. որ մանկութեն

սկսաւ ընել, և իրեն սովորութիւն եղաւ։ Ուստի ոչ չափ որ հասակն աճեցաւ, այս չարութիւն ալ հետը աճեցաւ։ Տղայութեան ատենը խնձոր մը առաւ, և մէկը չի մտածեց զինքը պատժելու։ Երբոր գնաց դպրատուն ընկերներուն գրքերը կը գողնար ու կը տանէր մօրը ցոյց կուտար. իսկ մայրը խնդալէն 'ի զատ ուրիշ բան չէր ըներ։ Աւելի որ մեծցաւ՝ սկսաւ դրացիններուն տունը թալնել, և ծանրագին բաները գողնալ. սակայն խրատ մը կամ նախատինք մը չի լսեց մէկէն։ Շատ չանցաւ, գէշին գէշն եղաւ. և անանկ չարացաւ, որ սկսաւ քաղաքներուն մէջ և մեծ ճամբաներուն վրայ աւազակութիւն ընել. մինչև դատաւորը բռնեց զինքն, ու արդարութեամբ դատապարտեց, որ կախելով մեռնի։ Երբոր վեր պիտի հանէին կախաղանէն, աղաչեց քովի եղողներուն, որ մայրը բերել տան, ուր է նէ շնորհք ընեն գտնեն իրեն համար, որ ետքի անգամն ալ տեսնէ։ Մա՛յրն որ տեսաւ խնդրեց որ իրեն մօտենայ, և ձևացուց թէ կուզէ գրկելով բարևել։ Բայց ակռաներովը բռնեց անոր ականջն ու քաշեց փրցուց. յետոյ դարձաւ ժողովուրդին ըսաւ։ Պա՛րոններ, թէ որ այս թշուառականը զիս պատժէր խրատէր մանկութեանս ատենը, որչափ անգամ որ այս չարութիւնը կընէի. հիմա ես ասանկ դարշելի մահուամբ չէի մեռնէր. ուրեմն դադարեցէք այլ մի զարմանաք ըրած բանիս վրայ. վա՜յ զի ես մայր չեմ ճանչնար ինձի ասիկա, այլ մեծ թշնամի։

Խորոփ ըււմ, ծնողաց, որ փղոփին մանկութէ ոփինը լուս նոյին ու պոփծին երբոր գէշ բան մը կրանքին կը փէոնէն. մ՛ս չի մամ կըլմանին անոնց, փանի որ կակուղ են՝ ինչ որ ոսրմըշընեն՝ շտյն կընեն. երբոր մեծնան անանկ կը մնան: Ա՛ն որ շարժել կրու թել ուզէր՝ կափէ իր շուռակը. ան որ կը սիրէ՝ կը խրատէ, կըսէ Աստուած:

Այս գառնուղէս՝ տեսիլ աչացին,
մայրն է գժնդակ՝ դաժնիմ զաւակին.
Պատժի և պատժէ՝ զխել ծնող որդին,
հատուցումն առնէ՝ մանհարեր կաթին:
Ո՛վ քանի՛ պարտք են՝ խոհեմ ծնողին,
ուղղել խրատել՝ զխել անսաստ մանկանին.
Եթէ միանգամ՝ խնայէ նմին,
ողբայ զայն ապա՝ առ կախաղանին:

## Ճա՛նճ:

Շատակերին՝ կորուստ է իւր յագ,
ուտէ պայթի՝ մնայ անյագ:

Ծոփակայ մարդին՝ են ծաւ կարսա,
որուն ւշնեա՝ միջ է պակաս:

Առ. Մ՛էկ սատուել շատակեր ճանճ մը կը մտնէ կերակուր եփելու տեղն ու հոն չափէ դուրս ուտելու համար պտուկին մէջ կը խըխմըվի, և այնչափ շատ կուտէ կը խմէ չափազանց, որ մինչև ճանթի հոն կը մնայ:

Օրինակ է գինեմոլ և շատակեր մարդկանց, որ ուտելով խմելով կեանքերնին կորսեն, և հոգւով մարմնով կը կորսուին. Մանաւանդ երբոր տարիքնին բանը գտնեն ուտելով չեն կշտանար. [illegible] թէ մարդկային ախորժակը կրակի նման է, որչափ շատ տաս, այնչափ աւելի կը բորբոքի, մինչև որ հատնի։

Ապաժոյժ անյագ՝ կերք շատակերին,
ցանկայ զծով լինել՝ յորովայն ձանձրին.
Որչափ շատ է կերն՝ այնչափ խղձք ածին,
մինչ անյագութե՛՝ պայթիլ գլխովին։
Ուսի՛ր չափ գնել՝ անյագ որկորին,
մի՛ պայթուցաներ՝ զայն ՚ի յուտելին.
Զի բազումք ատափ՝ բարձան ՚ի միջոյ,
կերակուր եղեալ՝ որդանց զազրագին.

## Հերմէս, և Փայտահատ.

Ճշմարտախօսն՝ առ գիւղացւանց,
և առ մարդկան՝ միշտ գերազանց.

Շիտակ մարդը՝ միշտ կը շահի,
և ամենուն՝ է սիրելի.

ԺԷ. Փայտ կտրող մը կը կորսնցընէ կացինը, և որովհետև անով իր հացը կը վաստըկէր, աղքատ մարդն սկսաւ յուսահատելով աղաչել Հերմէս (չածին)։ Իսկ Հերմէս խղճալով անոր աղաղակին վրայ կերևնայ իրեն, ու մէկ արծըթէ կացին մը ցցընելով կըսէ. այս

ջըլլայ կորսնցուցած կայլինգ: Պատասխանեց մարդը առանց տարակուսի, թէ չէ: Դարձեալ՝ ծծը ցըցուց իրեն մէկ ոսկիէ կայլին մը, թէ արդեօք այս է: Նաև չէ ըսաւ մարդը: Յետոյ ցուց տըւաւ իրեն երկըթէ կայլին մը: Աղաղակեց փայտ կտրողը, թէ ահա այս է որ կը փնտռէի, և ատոր համար միայն քեզի կաղաչէի: Ա՛ռ ըսաւ ծծը, և քու բարի հաւատքիդ համար առմէկալ երկուսն ալ: Եւ այսպէս ստիպեց որ իրեքն ալ առնէ երթայ:

---

Կռապաշտները կ'ըսէին թէ Հերմէս էր որդի Դիոսին, և զանազան արուեստներու գիւտ կ'ընէր. այս պատճառաւ ճարտարները անոր կ'աղաւէր: Որ թէնայ է ընթալ և արդար խօսքի, աստի կարգը Թիւ բառի կը գտնէ:

Տեսէ՛ք զհպերձութի՛ն ճշմարտախօսին, ·
զհա՛րդ խնկաբան՝ գտաւ 'ի բանին ·
Ոչ եղծանելով՝ զխակն առ ցանկութիւն,
պանծայ և շահի՝ զարծաթն և զոսկին:
Վա՜յ որ 'ի շահիլ՝ զանցաւոր ոսկին,
երդնուն և խառնեն՝ սուտն ընդ ճշմարտին.
Որով և խաւար՝ է նոցա բաժին,
որդի սատանեան՝ խաւարասիրին:

## Մայր, և Տղայ լացօղ։

Ի վայելուչ՝ ազնիւ ծնողաց,
Ժուժալ ձայնի՝ անմեղ մանկանց։

Մի՛ գէշ շարժէր՝ լացօղ տղայն,
որ լար ձանգ՝ չի գայ գլխուն։

Ձգ. Տղայ մը օրօցքին մէջ պառկած անանկ կուլար որ մօրը համբերութիւնը հատաւ, և սպառնալով ըսաւ տղուն. Թէ որ ձայնդ չի կտրես հիմա քեզի գայլին կուտամ որ ուտէ։ Այս խօսքս որ կըսէր՝ գայլն ալ տանը պատուհանին տակէն կանցնէր ու կը լսէր սպառնալիքը. ուստի մէկէն վազեց ուրախութե՜ դուռն եկաւ, որ յանձնառակէ տղան որուն կը փափաքէր։ Բայց չարաչար խաբուեցաւ. վա՜ զի մայրը զայն տեսածին պէս շուտ մը կանչեց դրացիները, որոնք զէնքով եկան օգնութեան, և գաւազանով երկաթներով ծեծելով հալածեցին գազանը։

---

Պէտք չէ որ մէկ մայր մը թծգուհալով տղուն ա-
նէծք տայ. և զգուշութիւն ընէ խօսք բերնէն հանէ, որ ըլլայ թէ լար պատահմունք մը հանդիպի. զի
չի օրհնէնքն ալ լաւ կը հասնի, անէծքն ալ հա-
սնի և մարմնաւոր ծնողաց։ Արիստոտէլ կըսէ,
թէ ողջմտութիւնն ու գեղութիւնը տղին մարմին կը ձեռնա-
ռուի. որոնց որդուն կէսը մայրն է։

Ջիմրդ վաղ լուեալ՝ կրից մօրն զձայն,
վազէ մերձ առ գուբս՝ խլել զտղայն.
Այս գործ է չարաց՝ որ գնան շրջին,
դաւել խարդախել՝ ծնունդս ընկերին։
Յակայն ազնիւ գութ՝ ծնողականին,
չժուժայ մերձիլ՝ առ նա թշնամին.
Մերժէ հալածէ՝ անդէն առ նմին,
զի գան և հարուած՝ են չարաց բաժին։

---

## Կրիայ, և Արծիւ։

Որչափ հպարտն՝ 'ի վեր ձախորի,
այնչափ սաստիկ՝ գահավիժի։

Թէ վէր ելլէս՝ հպարտանաս,
վէրէն իյնիս՝ ուէինէ իըլլաս։

ՃԷ. Կրիան օր մը աւազին վրա քարշ գալով երթար կաղաչէր արծիւին, որ զինքը վեր հանէ օդին մէջ. և որչափ կարելի է շատ վեր բարձրացընէ իրեն հետ։ Իսկ արծիւը անոր խօսքը չի կտրելու համար առաւ զայն իր ճանկերուն մէջ, հանեց բարձրացուց ամպէ վեր։ Սիրելի կըսէր անհանգարտ կրիան՝ ես վարն եղած ատենս ամէն կենդանիները զիս կանարգէին. բայց հիմա աւանց կարծեաց նախանձելով ինձի կը նային, որ անոնցմէ շատ վեր ելած եմ։ Երբոր սանկ կը պարծենար, արծիւը հողնեցաւ զայն տանելու, և ճանկերը բացաւ ձգեց վար։

*Անատենը հպարտ կրիան ընկաւ շուտմը քա-րերուն վրայ, ցըրեխ ցըրեխ եղաւ:*

---

Փիլիսոֆայի մը հարցուցին, թէ ինչո՞ւ հա-մար թոյլ կուտայ չար հպարտ մարդիկներուն, որ զինքնան ու թարքըրանան: Անալ պատասխան տըւաւ, թէ անոր համար, որ թարքըրէն իյնելու լաւ մը կտոր կտոր ըլլան · ինչպէս եղաւ կրիան:

*Ահա գաղափար՝ ամպարհաւաճին,*
*որ պանծայ ընդ ճախր՝ յածիլ յեթերին.*
*Ոչ գիտէ թէ այն՝ բարձրագոյն վիճակ,*
*գուշակէ նմա՝ կործանումն ուժգին:*
*Զի՞ բեկկրի հպարտն՝ 'ի թուիչ բազդին,*
*երբ քան զայլս 'ի վեր՝ բարձրանայ յերկին.*
*Երկիւղ ոչ բերկրանք՝ նմա պատշաճին,*
*զի չար է անկումն՝ գերամբարձ կային:*

---

## Խաչափառ, և Զագ իւր:

*Բարի ծնողաց՝ առաքինի,*
*լինի որդիք՝ առաքինի:*

Զաւակն ինչ որ՝ ծնողէն տեսնէ,
չար թէ բարի՝ անոր կընէ:

*Առ. Խաչափառը կըսէր իր ձագին, թէ պէտք է որ դուն գեղ շտկես այդ մեծ պա-կասուէնդ, որ շատ ժամանակէն 'ի վեր քո*

վրադ կըտեսնեմ ։ Վասն զի կընայիմ որ միշտ ծուռ ծուռ կըգալես ետեւորանց․ ինչի համար ուրիշ կենդանիներուն պէս դէպ 'ի առաջ չես երթար ։ Պատասխան տըւաւ ձագը․ մայրիկ ես ուրիշ բան չեմ ըներ, բայց ինչոր կընես դուն կըտեսնեմ՝ ես ալ անանկ կընեմ։ Թէ որ կուզես ես գիս շըտկեմ, նախ դուն սկսէ զքեզ շտկել ։

---

Խեչափառն է չաղանօղ․ որ բնապէս խոտորնակ քալելը օրինակ է անանկ ծնողաց, որ իրենք շիտակ չեն ըլլար առաքինութեամբ, և կուզեն որ զաւակնին շիտակ ըլլան․ բայց անհնար է, թէ տղան ծնողաց չար օրինակը տեսնելով աղէկ ըլլայ․ Ու չի ծնողաց պէս լաւ վարժապետ չի կրնար ըլլալ, թէ որ ծնողք մը կուզէ տղան առաքինի ըլլալ, նախ ինքը թող ընէ առաքինութիւն որ անով սորվի ։

Այսպէս օրինակ՝ ծնողաց կրկին,
'ի գիրգ սիրտ մանկանց՝ խոր տպաւորին․
Քանզի օրինակ՝ յաւէտ քան խրատ,
լինի ուսանիլ՝ 'ի գալոց ծնողին ։
Քանի՛ նախատինք՝ ախտաւոր ծնողաց,
երբ կամին զորդիս՝ տանել բարեկեաց․
ինքեանք զուրկ գոլով՝ յառաքինութեանց,
ուղղել նկրտին՝ զնոցին գնացս ։

# Լոշ, և Տէր իւր ։

Զգեստ և զարդ՝ զ՚որմուղն անզօր,
չառնեն արի՝ առիւծ հզօր ։

Ի՞նչ շահ հագնիլ մորթն առիւծին,
երբոր վախկոտ՝ էշ է ներքին ։

ՅԺԹ. Մ՚էկ էշ մը առիւծին մորթը ձեռք կը հագնի, ու ջաղացքէն դուրս կելլէ. և անտառէ անտառ կերթայ անանկ այլանկերպ, որ ամէն կենդանիները կը վախցընէ. որոնց որ կերևնար կը մամռային, թէ ի՞նչ բանի կըլլանի. ուստի ասկալի բան մը երևնալով իրենց՝ շուտ մը կը փախչէին դողալով։ Վախը հասարակ էր անոնց մէջ, մինչև առիւծները աչ կը հալածէր։ Երբոր Ջաղացպանը փէշէրմընտէն կը փնտռէր էշը, կը հանդիպի անոր ու մէկէնիմէկ հեռուէն կարծէ թէ իրաւ առիւծ է, շատ կը վախնայ. բայց մօտէն որ նայեցաւ՝ տեսաւ իշուն ականջներուն ծայրը դուրս ելած. հասկըցաւ անոր խաբէութը։ Անասունը չխառակ վրան վազեց, և առանց խնայելու լաւ փայտ մը քաշելով խօթեց ջաղացքին մէջ։

---

Մարդս պէտք է որ առաքինութիւնը իրեն բնութիւն ընէ առնելովը. որպէս առաքինի կրնայ ըլ-

բան մը գտանէ, թէ որ ըմանայ՝ ինքն ալ կրնայ ը-, նել. եւ թէ անիրեւթ իրուն պէս համաստարակ մայն ով երեւնալ, առ համբաւթէ ըսանենալ: Փիլիսոփա- ներն ըսին թէ ամէն բան բարախնամէ կըրրդի. մար- դը միայն համար ըւլալուն կը կորսի:

Տես յիմարութի՛ն վատ ապիկարին,
կարծէ զգեստուք՝ վեհ լինել յանձին.
Այն արտաքին է՝ ոչ յատուկ ներքին,
մերկանայ լինի՛ որպէս առաջին:
Արդ ջանամ ունիլ՝ զարութին վեհին,
գրեալ քանդակեալ՝ 'ի սիրտ և յոգին.
Զի թէ զլանայ՝ բնութիւն զբարին,
դու ունակութե՛ք՝ լցո՛ զթերին:

---

## Գորտ, և Աղուէս:

Եթէ լսես՝ բժիշկ ճարտար,
արդ արա՛ նախ՝ անձին քո ճար:

Թէ դուն [illegible]
Ինքզինքդ կրնաս՝ ուրիշն ընել:

Հ. Գորտ մը ճանչնալ սկսաւ մէկ քանի բժշկական խոտեր, որ բուսած էին իր լճին քովերը: Յետոյ միտքը դրաւ որ կենդանի- ներուն հասկըցընէ, թէ սորված է ինքը բո- լոր բժշկութեան արուեստը: Երբոր ամէն դի ծանուցում կընէր, թէ գիտէ բժշկել անար- խալ ամէն կերպ հիւանդութիւնը որչափ ան-

բժշկելու ըլլայ. մէկ աղուէս մը՝ որ գէշ հիւանդութիւն մ' ունէր, ուզեց անկէ դեղ առնել: Զայն որ տեսաւ գորտը սկսաւ պատմել, թէ զարմանալի բժշկութիւններ ըրեր է. որը ողջնցուցեր է, որը ազատեր է, քիչ մնացեր է որ յարութիւն ալ տայ: Երբոր պատմութիւնը լմնցաւ, յորդորեց հիւանդն որ բոլորովին անոր դեղերուն յանձնէ զինքը. պէտք է որ կըսէր քիչ ժամանակին մէջ ողջնանաս: Իսկ աղուէսը մեծ ուշադրութ̄ մտիկ կընէր, մինչև խօսքը լմնցաւ. յետոյ այս պատասխանը տըւաւ ծաղր ընելու կերպով մը: Դուն շատ աղէկ բացատրեցիր, իրաւ որ ըսածներուդ շատին կաւատայի, թէ որ չի մտածէի քեզ տեսած ատենս. վասն զի կըտեսնեմ պռկունքներդ դեղնած և կապուտ, որ ստոյգ նշան է, թէ դուն գէշ տրամադրութեան մէջ հիւանդ ես: Հապա ինչպէս կընաս զիս բժշկել, երբոր չես կընար դուն զքեզ բժշկել: Այսանկ զուրցելով թողուց գնաց:

---

Օրինակ է անոնց, որ իրենց պակասութիւնը կը թողուն, ուրիշինը ցուցնելու կը նային. Բայց ծաղր կըլլան ամենուն, որ կըսեն իրենց թէ բժիշկ բժշկեա՛ զանձն քո:

Այս առակացոյց է՝ ախտաւոր անձին,
որ զայլոց զվէրս՝ բուժել վաստակին.
Եթէ ունիս դեղ՝ դարմանիչ ախտին,
դի՛ր զայն 'ի վերայ՝ քոյդ անբուժ վիրին:
Քանի՛ շաղակրատք՝ նմանեալ սմին,
բանիւ իմաստուն՝ երևիլ ջանին.

Սակայն գիտնոց է՝ սակաւ բարբառիլ,
զի միշտ լսի ձայն՝ դատարկ անօթին ։

## Շուն, և Գաւազան ։

Թուղք անարգանք՝ յերես չարաց ,
վարդ համարին՝ և զարդ դիմաց ։

Որուն փող որ՝ խղճիւ չի կայ ,
չի ամըչնար՝ ինչ որ ըլլայ ։

զն․ Կատղած շուն մը կըխածնէր բոլոր անցնողները․ տէրն որ այս ըրած անկարգութեն իմացաւ, ուրիշներուն հասկըցընելու համար մէկ գաւազան մը կախեց վիզն, որ ամէն անցնող զգուշանայ անկէ ։ Իսկ շունը կարծելով թէ այն մէկ պատուի մը նշան է որ վզին վրայ կըտանէր, սկսաւ հպարտանալով երթալ ճամբաներէն գլուխը վերցուցած, և նախատանքով կընայէր ուրիշ շներուն ։ Անոնց մէջէն մէկ շուն մը չի կրցաւ քաշել ասոր անմիտ հպարտութիւնը, ըսաւ իրեն․ խեղճ յիմար ինչ է ըրած անխելքութինդ․ անանկ բանի մը վրայ կը պարծենաս, որ քեզ պէտք է ցածցընել․ վն զի վիզդ անցած գաւազանը՝ չէ նշան քաջութե, այլ նշան քու չարութենդ ։

Ամօթ չունեցող մարդուն ինչ որ ընես՝ իրեն մէ-

ծառաթիան էր ունել, և առէլի զէլ հրամայ ։ Այնոր համար գիտուններըը ամեն լարէն իր հրտնէին անու-մօթը ։ և աղօթք հընէին թէ մի փանիր ամօթն երէ-ան ։

Սոյնպէս փառասէրք՝ որչափ նախատին ,
զայն շուք և պարծանք՝ վերադրեն անձին ․
Թէ առ չարութեան՝ 'ի ճանկսա խարին ,
Իբրև քաջութեան՝ նշանակ պարծին ։
Զինչ անհամբոյր բարք՝ զինչ գազանային ,
Իբրև անպատկառ՝ խածատող ժանտին ․
Քանզի յերեսաց՝ երբ ամօթ մերժի ,
ազատ զամենայն՝ առնէ ըստ կամի ։

## Ուղտ , և Դիոս ։

Այր գանգատող՝ հաշէ մաշի ,
որչափ խնդրէ՝ միշտ մնասի ։

Տծփաձ մարդը՝ օրլաք որ լայ ,
այնլաք ճէսա՝ իրէն կուփայ ։

ղէ ․ Օր մը ուղտը փէքէն կը տրտնջար Դիո-սին , թէ ինչու համար չամծները ցուլին կմ եզին եղջիւր տուեր , ու ինծի մինակ ականջ տուեր ․ կերևնայ թէ կրնար տրտնջողը , եղ-ջիւրներին ինծի այն կենդանիէն շատ աւե-լի կը վայլէին , և եթէ անոնք գլխուս վրայ բուսած ըլլային շատ աղուոր պիտի ե-րևնայի ․ որ ինծի կընային ծառայելու թէ

զարդարանքի , և թէ պաշտպանութեան համար : Տրտունջն որ ըմբռնցաւ կարծեց , թէ Գրիտս պիտի նայի իրեն խօսքին · բայց հակառակն եղաւ , վասն զի բարկանալով անոր անխելք գանգատանացը վրայ՝ չէ թէ միայն եղջիւր չի տուաւ որ խնդրեց , այլև ականջներն ալ մանտրեցուց :

---

Տժգոհ մարդը որևէ ճոխութիւն ունենայ՝ բան մը կը գտնէ տրտնջալու · բայց պէտք է ամէն մարդ իրեն ունեցածին վրայ գոհ ըլլալ , և ոչ փափաքիլ · որ չըլլայ թէ իր ագահութեամբը ունեցածն ալ կորսնցընէ :

Շատք ըղձու նման՝ տրտնջան թէ հէ՛մ ,
ոչ առնէ ա՛ծ՝ զայս ինչ զոր կամիմ ·
Զգիտեն զկարգ՝ ամենիմաստին ,
որ չափով կշռէ՝ զչափ բոլորին :
Զի՞ քեզ ո՞վ յիմար՝ զի՞ ձայներս ուժգին ,
կամի՞ս փոփոխել՝ զկարգ անբաւին ·
Դու կաս ես անարգ , և որդն չնչին ,
իսկ նա անսահման՝ վեհելոց բարին :

# Երկու ընկերք։

Որ ոչ կշռէ՝ զվախճան իրին,
Իւր մնասիւք՝ փորձի յանձին։

Ամէն բանի՝ մէջ մի մտներ,
առաջ նայէ՝ կրնա՞ս ընէր։

ՂԶ. Մէկ մուշտակ կարօղ մը կը փնտըռէր արջու մորթ պէտք. մի՛ աշխատիր ըսին իրեն երկու դըրացիները, մենք հիմա կերթանք հոս մօտ անտառը կը զարնենք մեծ արջ մը կը բերենք։ Այսանկ խօսելով ծախեցին արջուն մորթն ու պարտական եղան որ անոր ձեռքը տան։ Ուստի ելան գացին անտառը. բայց ներս մտածնուն պէս, մէկ մեծ արջ մը ելաւ իր բունէն, վազեց շիտակ անոնց վրայ. այս երկու կարիճները մոռցան իրենց ըրած առուտուրը, և ուրիշ բան չի մտածեցին, միայն թէ ազատին. մէկը փաթթըրվեցաւ ծառն ելաւ, մէկալն որ գիտէր թէ արջը մեռած մարմիններին չի մօտիր, ընկաւ գետինն ու շունչը բռնեց մեռելի պէս եղաւ։ Արջն որ եկաւ տեսաւ զայն գետինը բըռված, հոտըռտալով ասդին անդին դարձուց. և մեռածի տեղ դնելով ձգեց գնաց։ Երբոր հեռացաւ՝ մէկալ ընկերը ծառէն ինջաւ եկաւ ընկերոջը հարցուց, թէ արջն ի՞նչ ըսաւ ականջդ 'ի վար երբոր քովդ էր մօտեցեր։ Ան ալ կիսամեռ պատասխան տը-

ւաւ, թէ ըսաց որ ամենեւին չի ծախէք ար֊
ջուն մորթը, մինչեւ որ գետնին վրայ ձգած
չըլլայ ։

---

Պէտք է այն բանին վերջը մտածել և անանկ ընել. այդ մեծ պակասութիւն է եթէ չի մտածելով խելքին եկածն ընել թեթևութեամբ, որ այդ մարդիկ զղջացեր են ։

Այս գործ անխոհեմ՝ վաճառականաց,
որ գին հատանեն՝ անծանօթ իրաց.
Ի զի՝ նկրտին՝ զորկել օտարաց,
բայց ինքեանք զրկին՝ արտաքոյ մտաց ։
Զխամրդ վայելուչ՝ ընկերականաց,
հաւատարիմ գոլ՝ խոհեմ ՚ի դնացս.
Զամենայն արարս՝ արդար կշռելով,
շահին միշտ գովին՝ յաղգաց և յազանց ։

## Անօթ երկաթի, և Անօթ խեցեղէն:

Որ ոչ է գոհ՝ ընդ իւր վիճակ,
զինքն արկանէ՝ 'ի մեծ վտանգ:

Ով որ գոհ չէ՝ իր վիճակին,
շուտ կը ինկնէ՝ վայ իր գլխին:

դր. Օր մը երկաթէ ամանը հողէ ամանին ըսաւ, թէ եղբայր մենք խոհարանին ամէնէն մէկ կողմէն 'ի զատ ուրիշ բան չըլլալ տեսնենք. ով որ բան չէ տեսած, բան չկրնայ պատմել, նաև կրնամ թէ ճամբորդութիւն մը կընանայ: Ես կըփափաքիմ որ քաղաք տեսնեմ. թէ որ դուն ալ ունիս այս հետաքրքրութիւն միասնեղ ճամբորդութիւնէնք: Կը տեսնե՞ս այն ջուրը, որ վարէն կանցնի. օրէնք է որ մէջը մտնենք, յետոյ թող կուտանք զմեզ ջրին, որ վազելով տանի. և այս կերպով խիստ քիչ ժամանակին մէջ շատ ճամբայ կրնանք ընել. և այն՝ առանց աշխատանքի ինչպէս կը տեսնես: Հողէ ամանը շատ հաւնելով այս հնարքիս երաւ անկէ երկաթէ ամանին հետ միասւ ջրին մէջ, անոր համար կերթար, բայց չի կրցաւ շատ հեռուն երթալ. վասն զի երասն ոտք անգին չի գացած կտոր կտոր եղաւ: Իսկ երկաթէ ամանն ալ երբեմն աջ դին, երբեմն

ձախ դին ալէկոծելով միշտ քարէ 'ի քար կը զարնըվէր ։

---

[illegible]

Դժնդակ բերմունքը՝ փոփոխամըտին,
որ աստանդական՝ ցանդ տարուբերին.
'ի գլխել բաղում՝ մոլորեալ շրջին,
յօտարութեան անդ՝ մաշին կորնչին ։
Քանզի արարիչն՝ էից բնաւին,
եւ զանազան գործս՝ըստ անցնիւր յատկին.
Որ դժգոհ լինի՝ ընդ իւր վիճակին,
անվիճակ եղեալ՝ քանդի իւրովին ։

---

## Մ՝կունք խորհրդակցին ։

Քաղում վնասոց՝ որչափ խորհի,
ոչինչ բարի՝ վճռել ունի ։

[illegible]

ղէ. Մ՝կներն խորհուրդ կընէին, պիտի ո-
րոշէին թէ ի՞նչպէս կրնան ազատիլ կատ-

ւին ճանկէն, որ գրեթէ իրենց ազգին իրեք
մասին երկուքը ջարդեր էր․ երբոր ամէն
մէկը կը մամռտար իր կողմանէ, մէկ աւելի
ծեր մը իրենց մէջէն վեր ելաւ, ծանր ձայ֊
նով մը խօսեցաւ ։ Ես կարծեմ, թէ կըսէր
պէտք է այս անզգամ գազանին վիզը բոժոժ
[illegible] կախել, որ քովերնիս չի մօտեցած
բոժոժը կիմացընէ մեզի շատ հեռուէն անոր
գալը․ և այս միջոցով ամէն ատեն կընանք
փախչիլ․ դուք ալ կը հասկընաք լաւ, որ
մեզի շատ դիւրին կըլլայ այս ճամբով զմեզ
պաշտպանելու անոր ամէն խաբէութենէն ։
Ուստի բոլոր ժողովքը շատ գովեցին այս
խորհուրդիս օգուտը, բայց դժուարութիւնը
մնաց մէկ մուկ մը գտնելու, որ կարենայ
համարձակիլ և բոժոժը կախել կատուին
վզէն․ վա՛յ զի ամէնքնալ հրաժարեցան, մէ֊
կը կըսէր թէ թաթս վիրաւորած է, մէկալը՝
աչքս հեռուէն չի զօրեր․ մէկն ալ ըսաւ թէ
ես շատ սրտոտ չեմ․ մէկ ուրիշն ալ ըսաց,
թէ չիյտեմ ի՛նչպէս ընելու է ։ Ուստի ա֊
մէնքն ալ զանազան պատճառներ առաջ բե֊
րին․ անանկ որ առանց բան մը որոշելու
բաժնըվեցան գացին ։

---

Տէր և անչափ մարդիկ խրատ շատ ըսեն, և
շատ մարդիկ՝ մէկ շատ բան մը չեն կրնար ատենմա֊
նել․ վասն զի ինչոր մարդիկ չեն կրնար գործածել փո֊
խել, անկարող են ըսողն ։

Առակս է տիպար՝ ժողովոց վասաց,
որք նստին վճռել՝ շահ հասարակաց․

Բայց զիա՞րդ հնար՝ այնչ ժողովակաց,
խորհիլ կատարել՝ զօգտակարն իւրեանց ։
Զի՞նչ օգուտ խորհիլ՝ բազմատանջ մտաց,
և թողուլ անգործ՝ զպիտանին խորհած.
Որ ոչ աշխատի՝ յօգուտ ընկերաց,
ոչինչ վճարէ՝ զուրկ յօգտակարաց ։

---

## Ցուլ, և Նոխազ ։

Որ փակէ զ՞գութն՝ ընդդէմ եղբօր,
ոչ գտանէ՝ զ՞բարիս բ· լոր ։

Թէ չէս գթար՝ յարօք եղբօր,
Չի գէր գթայ՝ խնդրմութեան օր ։

ղզ· Նախանձը մէկ ցուլի մը եռնէն կիյնի.
իսկ ցուլն անկէ ազատելու համար, ուզեց
փախչիլ նոխազին գոմը կամ ախոռը. բայց
նոխազը դուռը գոցեց, ու յանդգնութբ
եղջիւրներն ալ ցըցուց անոր ։ Նա քաշվե-
լով բսաւ ցուլը. անզգամ թէ որ դուռն չի
տեսնէիր ինձի հալածօղը, շատ պիտի զգու-
շանայիր զիս այսպէս վիրաւորելու ։ Գիտնաս
որ եթէ չի կրնամ հիմա քու կամօքդ տունդ
մտնել, բռնութբ ալ կըմտնեմ. թէ որ ա-
տեն ունենայի, քեզի կը սորվեցընէի ։

---

Ցուլն է պալատայ, և Նոխազն է արօտ այծ·
ոչ օրինակ է խոպանիրք անօգուտ մարդոց · որ մէ

Քէն պահ մը ըրնէլէն 'ի վար Քաս ու փառ կուզէ,
Թէպէտ յետքէն ու ծառն ալ կը գայ :

Տեղ է այս տուակ՝ անողորմ անձին,
որ փակէ զգութն՝ ընդդէմ ընկերին .
Փոխան նպաստել՝ փախստականին,
եղջիւր դառնութեան՝ անբառնայ նմին:
Ուսի՛ր օգնական՝ լինել անանկին,
մի՛ դառնար ընդդէմ՝ վշտատես սրտին.
Զի որ ողորմի՝ ողորմին նմին,
պարտաւոր առնէ՝ զ՛վարձօղն երկնային:

## Դիոս, և Կենդանիք:

Զանազանք զայլոց՝ թերին ուղղել,
իսկ սեպհականն՝ ոչ նշմարել:

Այլոց գործքը՝ շիտկէլ կուզէնք,
Մերինները՝ դուրս կը նետէնք :

զէ. Օր մը Դիոս ըսաւ, թէ բոլոր կենդանիները թող ժողվըւին առջևս. վս̃ զի կուզեմ հասկընալ իրենց որպիսութիւնն ու պակասութիւնը. և ինչ պակասութիւն որ ունենան՝ կըլեցընեմ: Անոնք ալ հնազանդելով եկան առջևն. բայց Դիոս կարծեց, թէ շատ գանգըտող պիտի գտնէ անոնց մէջէն. փիղը պիտի գանգտի պոչին համար, ուղտը ականջին համար, մանաւանդ արջը՝ իր անշնորհք կազմածքին համար: Բայց մեծ զարմանքին

ւոյն եղաւ, երբոր տեսաւ Թէ ամենքն ալ այնչափ հաճոյ էին իրենց վրայ, մինչեւ սըր-տերնին ալ սըխմըղեցաւ, Թէ ինչո՞ւ Գիտա իրենց վրայ սաստիկ կարծիք դայցեր է: Սա-կայն ըսաւ կըցան իրարու պակասութիւնը գտնել, Թէ անոր պէտք է բան աւելցընել· մէկալէն պէտք է բան պակսեցընել· իսկ ամէն մէկը մասնաւորապէս իրենց կողմանէ սաստիկ գոհ կեցան, որ չակելու բան մը չի գտաւ Գիտա: Կապիկն ալ հպարտութի̃ շը-նորհակալ եղաւ Գիտային· և զինքն այնպէս գեղեցիկ գըրաւ, որ չի կրնար ըլլալ·

---

Մենք ուրիշին պակասութի̃ը կը գտնենք, և զմեզ կատարեալ դրեր ենք· իսկ լաւ կը տեսնենք ու-րիշին ըրածը, Թէպէտ կոյր ենք մերինը չենք տես-ներ· Բայց երանի՛ Թէ նայէինք մերինը ուղղէինք, քան Թէ ուրիշինը:

Այս գանգատանաց՝ տեսիլ է ռամկին,
որ գժգոհութեամբ՝ վշտանան յանձին.
Բայց իբրև խնդրես՝ Թէ յի՞նչ պակասին,
բերեն զընկերաց՝ ոչ զիւրեանց Թերին:
Ո՜վ քեզ անխնամ՝ զի՞ գոչես ուժգին,
զի՞նչ պակաս 'ի քեզ՝ և զի՞նչ յընկերին.
Մեկին նշմարեալ՝ զայլոց զԹերին,
ուղղես ոչ զքոյս՝ միայն ըզնոցին:

## Սիրամարգ, և Կռունկն ։

Թող գովեսցեն՝ օտարք համայն,
Զքեզ պերճութիւն՝ մի՛ քո բերան ։

Քու բերանդ՝ չէ ըն գովէ,
Բայց ուրիշը՝ չէ ձեռքէ ։

ՂԷ ։ Սիրամարգը մէկ օր մը առատապէս կը պատուէ զկռունկը ։ Երբոր պատուական կերակուրները կը տաքնային, ինքն սկսաւ խօսիլ թէ ի՛նչ բանով կը զանազանի ուրիշ թռչուններէն ։ Յետոյ ուզեց հասկըցընել այս բարեկամին իր գերազանցութիւնը, թէ որչափ անկէ վեր է ։ բայց պոչը և ցըցուց անոր բոլոր վրայի գեղեցիկ գոյները ։ Իսկ կռունկը խոժոռելով անոր ունայնութեը վրա ըսաւ ։ Բարեկամ ես կը հաւանիմ քեզի, թէ իմ փետուրներս քուկիններդ շատ վար են գեղեցկութ. ։ բայց երբոր կը մտածեմ, թէ դուն դժւարու. կը թռչիս հազիւ տան մը երթիքին վրա, և ես ամպերէն վեր կը բարձրանամ, Երդում ըլլամ քեզի, որ շատ ուրախութ. կը մխիթարվիմ ։

---

Սիրամարգը այսինքն Թաւուզ գուշին՝ օրինակ է հպարտ ժամանակներին, որ նայելէ թէ իրենց վեր

[illegible]

Այսպէս մոլեգնեալ՝ ինքնապանծ ոգին,
գեր 'ի վեր կարծէ՝ զինքն բոլորին ·
Մինչ զերանութիւն՝ գնել խնդային,
յաւերժութիւն գոյն՝ ցոլման արեգին ։
Զիմրդ վաղանցուկ՝ պերճութիւն նորին,
ընդ շարժիլ լուսոյ՝ այն տեսիլք փոխին ·
Զանամ պերճանալ՝ երանգոք ներքին,
տապքինանալ՝ 'ի թև թեթևին ։

## Սադր , և Գայլ ·

Որչափ յանդուգն՝ իցէ հզօր,
ընդդէմ բազմաց՝ մնայ անզօր ։

Մէ [illegible] ,
[illegible] ։

ղթ · Սադր գազանը ժողվեց իր մօտաւոր կենդանիները, և անոնց գլուխ եղաւ, ու գնաց որսորդներուն դէմ այս մտքով, որ նախատանաց վրէժը անոնցմէ հանէ · որ ամէն օր կընէին իրեն ։ Երբոր իր զօրքովն երեցաւ անոնց առջին, ըսաւ կենդանիներուն · ով բարեկամներ ես կուզեմ հոս ձեզմէ բաժնըվիլ, ու մինակ թշնամիներուս վըրա յարձակիլ · որովհետև ես այնչափ զօրութիւն ունիմ, որ առանց ձեր օգնականու-

Թէ՛ք կրնամ՝ հալածել Թշնամիներս • ուստի զգոյշ կենաք, հոս կեցէք կաղաչեմ ետեւէս չի՞ գաք։ Իսկ գայլը հասկցուց անոր թէ կ՚երթաս, բայց կը ճանաչես չարաչար • զի մի-նակ ըլլալով որսորդներէն զօրաւոր չես կրնար ըլլալ։ Ուստի թէ որ այսպէս միա-բան երթանք վրանին յարձակինք, դիւրաւ կրնանք անոնց յաղթել։ Այս խորհուրդը բանի տեղ չի դրաւ վագրը • և ինքինքն վը-տանգելով վազեց շիտակ որսորդներուն վրա։ Բայց որսորդները զայն տեսածնուն պէս՝ կարկըտի նման վրան մաղեցին նետերը • ո-րոնց մէկը դպաւ իրեն, և խոր վիրաւորեց։ Անտանէրը սոսկեցաւ ետ դառնալ, ու ա-մընչալով եկաւ գայլին քով, որ շատ երկ-ար զարկաւ ըրած յանդգնութիւնը • բայց վագ-րը տանանց զղջալու չի ցաւեցաւ իր Թշուա-ռութենը վրա։

---

Վագր՝ այսինքն փիլէնկ գազանն է խիստ կա-տաղի և յանդուգն • որ ամէն կենդանիներու հետ կը կռուի, մինչև առիւծի հետ ու կը համարձակի կռուիլ։ Օրինակ է ետքը չի մտածող յանդուգն մարդուն, որ իր խելքին եկածը կընէ, և ամենուն ա-րին մտիկ չըներ • բայց շատ անգամ ու խայտա-ռակ կըլլայ։ Այսպէս են հիմիկվան մարդիկ, որ բարեկամի խօսքին մտիկ չընելով՝ իրենց քէֆերնին ըրածը կընեն։

Զի՞նչ շահ խիզախել՝ խուսել զթշնամին,
մերժել լսել՝ ձայն խրատատուին •

Յորժամ ելանէ՝ յասպարէզ մարտին ,
կարեվէր խոցեալ՝ ծաղրի 'ի զինին :
Արդ մի վստահիր՝ 'ի զէն յոյժ բազկին ,
և մի անխորհուրդ՝ կապէր ընդ բազմին .
Զի զէն զօրութե՝ յոլովագունին ,
խորտակէ միոյն՝ զօրութիւն ուժգին :

---

## Եղեւին , և Մորենի :

Խոնարհ ազին՝ յամէն վայրկեան ,
կայ 'ի չարեաց՝ աներկեան :

Խոնարհն մարդիկ՝ ասոր որ ըլլան ,
ամէն չարէ՝ միշտ ազատ կան :

Ն. Եղեւին ծառը կանարգէր զմորմենին ,
ու կըսէր : Անպիտան ցուցմունք բնութեան՝
տես իմ գլուխս մինչև մէր հասուցեր եմ .
մամբռում եմ ձիւղերովս փրչանք տեղ գետնին
վրայ դոյեր եմ : Ձէ թէ միայն նաւերուն
կայմեր փէտէնէ կըպատրաստեմ , այլև անե-
րուն տաճարներուն գերաններին ալ ես կը-
լնեմ . մինաւանդ ինչ դործք կայ , որ ես
յարմար չըլլամ : Բայց դուն ողորմելի ծա-
ռիկ , չորս ոտքէն աւելի չես կրնար բարձ-
րանալ դաշտին մէջ , ուր որ քեզ կըտեսնեմ
ընկած . հապա ինչ օգուտ քեզմէ կրնայ ըլ-
լալ : Պատասխան տըւաւ մորմենին , թէ խամ-
բան մը չըլլար , բայց իմ մխիթարութիս այն է ,
որ քեզմէ քիչ կըվախնամ փայտ կարողէն ,

որ շխտակ մեր վրա կուգայ։ Այս մեկենե_մեկ եղեւնին բերանը գոցվեցաւ. վասն զի փայտ կտրօղը շուտ մը կացինը վերցուց անոր դէմ. եւ քիչ ժամանակին մէջ ջարդուբուրդ ըրաւ վար ձգեց, դարձաւ գնաց առանց ցաւելու մորմենիին. զի հարկաւոր բան մը չունէր, որ առնէր։

---

Եղևնին չամ'ծառը օրինակ է պարծենկոտ մարդու. որ զինքը մեծցընելու համար ուրիշը վար կը զարնէ պարծենալով. Բայց օր կոտրուայ որ չի հասնած մարդուն ոտքը կ'իյնի։ Ուր տեղ խոնարհութիւն կայ, հոն իմաստութիւն կը գտնուի, կըսէ սողոմոն։

Այս սուտ պարծանք՝ ունայնասիրին,
պանծոյ պարսաւէ՝ զվեհձակ խոնարհին.
Բայց նա միշտ է նոյն՝ յանսասան կայեն,
Ինքն անդէն սաստեալ՝ ձգի 'ի գետին։
Այլ ինչ ծնխանալ՝ յամփոփ սահմանին,
մնալ 'ի խոնարհ՝ սասանիլ հեշտին.
Բարի է այդքան՝ կալ անդրդուելի,
քան ծոխ 'ի բարձուէ՝ խորտակիլ յերկրի։

## Չկնորս, և Ձուկն փոքրիկ։

*Գուշնաքեայ որս՝ աւուր սերկեան,*
*շատ է քան մեծ՝ որս լինչ վաղուեան։*

Այս օրուան հաւը՝ ծօծր ու ըլլայ,
վաղուան սագէն՝ մեծ ու ըլլայ։

ՃԽ. Մէկ ձկնորս մը կը ձգէ իր կարթը ուռեան գետին մէջ, կըբռնէ պզտի ձուկ մը. որ իր պզտիկութեան անոր առջին գնելով կաղաչէր, որ զինքը թող տայ։ Խօսք կուտար որ եթէ թողու զինքն աւելի մեծնալ, քանի մը շաբաթէն ետև նորէն պիտի գար խածնէր անոր կարթը։ Այս անանկ բան է որ կըսէր, քեզի օգուտ է. վա՜յ զի յետոյ աւելի լաւ կերակուր կըլլամ քեզի։ Պատասխան տըւաւ ձկնորսը, թէ ես չեմ կարծեր թէ դուն այնչափ յիմար ըլլաս, որ խօսքիդ վրա կենաս. բայց լաւ գիտեմ թէ ես ալ այնչափ անխելք չեմ, որ քեզի հաւատամ ու թողում ունեցածս ունենալուքիս համար։

---

Շատ ժողովրդէ կան, որ բանի մըն հասնիր, և ուրիշներին մեծ բանի մը է. այս պատճառաւ պըււփիլին ու կը ււլէլին, ու խիղճ կը ռան։ Անոր համար այս աււււր հաււը վաղուան սագէն շատ աղէկ է կըսէն։

Իմաստասիրել՝ յառակէս ուսիր,
շատացեալ և գոհ՝ լեր ընդ շահեալ իր.
Զի մեծ է սերկեան՝ շահ դուզնագունին,
քան զանստոյգ շահ՝ վաղուեան մեծ իրին։
Շատք անգոհութեամբ՝ թողուն զոր ունին,
կորուսեալ ձեան՝ հանդիպիլ մեծին.
Որ չէ հաճ ընդ փոքր՝ պարգև իւր բաղդին,
արտաքոյ լինի՝ մեծին և փոքրին։

---

## Արծիւ, և Բզէզ։

Զրկանք չարեաց՝ անիրաւելին,
նաև որդւոցն՝ հատուցանելին։

[illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible],
[illegible] [illegible]՝ [illegible] [illegible]։

ԾԲ. Արծիւը երբեմն մէկ ճագար մը վեր կըվերցընէր առանց նայելու բզէզին աղաչանքին, որ միջնորդութիւն կընէր բարեկամին համար. կաղաչէր արծիւին, որ անոր կեանք բաշխէ։ Իսկ արծիւը առանց լսելու անոր ձայնին՝ յափշտակեց տարաւ. բայց շատ չանցաւ խիստ զղջացաւ. վա՜ զի քանի մը օրէն ետև բզէզը տեսաւ, որ արծիւը հեռացեր էր իր բունէն. թռաւ հոն, բոլոր անոր հաւկիթներին ապականեց, մերը ծակեց, մերը կոտրեց. և իր բունը բոլորովին կործանելով՝ բարեկամին մահուանը վրէժն առաւ։

Ծագումն է սոսա թուչանի, իսկ բղխումն է պէօճէկ · որ օրինակ էն անոնց, որ շըրջադաթեամբ հարստութեան իւրեանց զանխընէրուն · և որոնցնէն անոնց համար էղաւ այս անօրէնութիւնը, արդարութիւնը իւրապէսէ զանանք ալ · իննջէա իւրէ այն առաջիւ, թէ հարք աղէն իւրեան, և որդւոց պատմանք առան:

Տես զարդար պատիժ՝ անլուր զրկողին,
պատրաստէ ձագուց՝ զիխ Ճագարին ·
Սակայն խրատունք՝ ոչ թողուն նմին,
գարմանել զածած՝ աճիլ զաւակին:
Այս հատուցումն է՝ զրկողաց բաժին,
որ գանձեն որդւոց՝ յանիրաւ շահին ·
Սոքին անժառանգ՝ անորդի լինին,
որդիք փոխան հարց՝ գառնապէս պատժին:

## Պատանի, և Գող:

Ծարաւր մնաց՝ չիք ինչ գժուար,
ամէն չարեաց՝ գտանէ ճար:

Վնաս էի գար՝ խելօք մարդուն,
ջան տան ալ՝ ըլլա գիտուն:

ՃԺ. Պատանի մը ջրհորին քովի քարին վրա երբոր պառկեր էր, մէկ գող մը չխտակ վրան կուգայ, որ զինքն հանվեցընէ · իսկ պատանին հասկընալով անոր չար միտքը սկսաւ լալ: Անառակը հարցուց գողը, թէ ինչ

պատճառի համար կուլաս ։ Ան ալ պատաս-
խան տուաւ թէ վայ ինծի, ահա այս հօրին մէջ ոսկիէ աման մը ձգեցի ։ Շուտ մը գողը հանեց լաթերն, ու հօրն իջաւ զայն հանելու համար, որ մէկալը կըսէր, թէ ձգեցի կորսնցուցի ։ Բայց երբոր կըփնտրուէր, ժողվեց պատանին գողին լաթերն, առաւ փախաւ ։

---

Խելացի ճարպիկ մարդը ամէն բանին հնարքը կը գտնէ. Իսկ յիմարը դադարելի կը մնայ. անոր համար իմաստուն մարդը ամէնուն ցանկալի է, և ամէն ազգի մէջ մեծ յարգութիւն պէտք է ունենալ, ինչպէս կրողի, թէ իմաստունը ազնուաբարոյ կը փրկէ ։

Արդ գողն 'ի գողէն՝ յորժամ գողանայ,
միտք հողածընաց՝ ափշի զարմանայ ·
Բայց սակայն գողոց՝ գողունի իրաց,
գողք են ժառանգօղ՝ ըստ ճիշդ օրինաց ։
Եղուկ որ զիւր գործ՝ թողու և գնայ,
կողոպտել զընկերն՝ կեղեքել զնա ·
Ոչ գիտէ թէ գանձ՝ անիրաւ վաստակ,
'ի չէք փոխարկեն՝ և զոր 'ի տան կայ ։

# Առիւծ, և Այծ.

Մի՛ հաւատար՝ ձայնի բազմաց,
զի բանք այլոց՝ են վա՛ս ինքեանց:

Ամէն խօսքի՝ մի՛ հաւատար,
շատին խրատն՝ է իր համար:

ՃԶ. Առիւծը կը տեսնէ մէկ այծ մը, որ ա-մէն դիէն ապառաժ բարձր քարի մը վրայ խոտ կուտէր, հասկցաւ առիւծն որ հոն ելլել չի կրնար. շուտ մը կանչեց անոր խոնարհ ձայնով: Բարեկամ ինչու այդ բարձր ապառաժներուն վրայ կը ճանկես. ուր տեղ անհամ մամուռէն [illegible] 'ի զատ բան մը չես կրնար արծել. շատ լաւ կընէիր, ինչպէս ինձի կերևնայ, վար իջնէիր այս դաշտին մէջ, ուր ես կարծիմ. զի խոտերը մատղաշ, և զարմանալի համով են, ինչի՛ր վար նորէն կըսեմ քեզի: Պատասխան տըւաւ այծը ծաղր ընելով. բարեկամ ահա շատ յօժարութի՞ կուզեմ ընել ըսածդ. բայց ան ատենը կը-նեմ, երբոր քեզ չեմ տեսներ հոգ ընաւ:

Պէտք չէ Թշնամուն անոյշ խօսքերուն հաւատալով խաբուիլ. Վա՛յ չի ուրիշ բան ըսլալով հարկաւ քեզ իր կորուստիցը, և որչափ բարեկամ ձևանայ ասոր է.

Միայն իր շահը կը մտածէ ։ Շատ դժուար է հաւ-
տարիմ մարդ գտնել, կըսէ իմաստունը ։

Վա՜յ մրջէս առիւծ՝ ցաւակցի այծին,
Թողուլ զապառաժ՝ խայտալ 'ի դաշտին.
Բայց նա ծանուցեալ՝ խորհուրդ նենգողին,
զարժանին առնէ՝ պատասխան նմին ։
Ո՞վ քանիք խաբեալ՝ առ սէր որկորին,
իջանեն 'ի վայր՝ ձորակել յախտին.
Եւ անդէն ինքեանք՝ լինին կերակուր,
գազան Թշնամւոյ՝ ժանտ կլանողին ։

## Ագռաւ ծարաւի ։

Հարկն է գտիչ՝ նոր արուեստից,
ելս հնարէ՝ անել ելից ։

Երբոր հարկը՝ մարդ կը ստիպէ,
ամէն բանին՝ ճար կը գտնէ ։

ՃԺ. Ագռաւ մը խիստ ծարուցած ջուր կը գտնէ ամանին տակը, որուն վիզն երկան և նեղ ըլլալով՝ կտուցը չէր կրնար ջրին հասցընել որ խմէ ։ Այս դժուարութեան ճար գտնել անհնարին կերեւնար. Բայց որովհետև ծարաւէն կը մարէր, ծարաւն անցընելու հարկը իրեն ճար մը գտնել սորվեցուց ։ Ասոր ժողվեց շատ մանտրաւիկ քարեր, ու մէկիկ մէկիկ կտուցովը բերաւ ամանին մէջ ձգեց. ասով կամաց կամաց ջու-

ը վեր ելաւ, այնչափ որ վերջապէս ագռաւը ջուրը խմեց դիւրութեամբ:

---

Հարկաւորութիւնը մարդուս ձեռքը որեւէ չափ բան կը գտնէ, և չափ արուեստ հնարել կուտայ. ինչպէս Թովմէս Աքուինաս կ'ըսէ պէտք է որ տարբերութիւնը պէտք է մարդուն՝ էական ելլալ գտնել հնարել. ասոր համար պէտք որ հնարքները բան կը գործեն, և գիտցած որ կրնալ չափ հարկաւոր է, կրնալ գործելը հնարել, եւն:

Այսպէս հարկն եղև՝ ըստ բերման առթին,
գտող արուեստից՝ գեղոց գարմանին.
Որով հանճարեղք՝ յիւրաքանչիւր գար.
ալխամնի մարդկան՝ գիւտ հնարեցին:
Արդ մի անարգեր՝ ըստ հեղգամըտին,
զգիւտըս նախնեաց՝ զառաւելս նոցին.
Այլ ընտրեա՛ զլաւն՝ հետեւեա՛յ նմին,
հանճարեա՛ զգիւտս՝ ըստ ընագիտին:

## Ցուլ, և Մուկն ։

*Որչափ անարգ՝ է փանաքին,*
*գործել կարէ՝ վնաս մեծին ։*

Մի՛ պարծիր թէ՝ ուժըդ շատ է,
Զի պզտիկ մը՝ քեզ կը յաղթէ ։

ՃԽԷ. Ցուլ մը խոտին վրայ պառկած կըմը-տածէր իր ուժին վրայօք ։ Թող փիղն ու առիւծը չըլլան կըսէր ինքիրեն, իրաւ որ ա-մէն կենդանիներէն զօրաւոր և աշխարհին ես եմ. այս երկուքէն ՚ի զատ ամենեւին մէկէն ալ չեմ վախնար ։ Երբոր աստնկ կըհպար-տանար, մէկ մուկ մը ախոռին ծակերէն դուրս ելաւ, և կատղած եկաւ խածաւ ցու-լին ոտքն ու յետոյ վազեց մտաւ ելած ծա-կը ։ Անատենը ցուլն անանկ սաստիկ ցա-ւեցաւ, որ չի կրցաւ զինքը բռնել և չի պոռալ ։ Ուստի մէկէն բերանը փոխեց յու-սահատեցաւ՝ տեսնելով, թէ մուկն ալ կըր-ցաւ զինքը նախատել. և այսպէս ինքզինքը դրաւ վախցող կենդանիներուն կարգը ։

---

Ո՛չ կարծեր թէ՝ զի մուկ մը կրնայ այսպիսի ու-ժով կենդանիին ասանկ բան ընել. բայց գիտնան ինքնահաւան մարդիկ, որ պզտի թշնամին կրնայ մեծ չար ընել. և ասոր պէտք է խոնարհել ։

Պարծանք սնոտի՝ վէս մեծամըտին,
զխա՛րդ 'ի փոքուէ՝ նանրացեալ դիւրին.
Զի որ վե՛հ դնէ՝ զի՛նքն ամենեցուն,
նաև 'ի փոքունց՝ ընկճի հեշտագոյն։
Քանի՛ք ինքնապանծ՝ զանձինըս եդին,
'ի կշիռ վեհից՝ գլխացաղանց կարգին.
Բայց 'ի գոյզն աւթէ՝ սահեալ՝ 'ի խոնարհ,
ծանեան թէ զի՛նչ են՝ և զի՛նչ կար անձին։

---

## Մուկն փոքրիկ, և Մայրն։

Եթէ տիօք՝ իցես անփորձ,
խրատ ծնողաց՝ լիցի՛ն քեզ փորձ։

Թէ մանուկ ես՝ սորվէ՛ մեծէն,
Մի՛ պարծենար՝ թէ բան գիտեմ։

Ձէ. Մէկ մկան ձագ մը մօրը կըպատմէ ինչ որ իրեն հանդիպեր է ճամբորդութեանը մէջ, որ գացեր եկեր էր։ Կըսէր թէ օր մը հետաքրքրութիւն բերաւ որ մտնեմ բակի մը մէջ. և հոն գտայ մէկ կենդանի մը, որ չէի ճանչնար. բայց խիստ գեղեցիկ ըլլալով շատ հաճեցայ անոր վրայ. վն զի կերպարանքն էր անոյշ և համեստ, նայուածքը շնորհալի, վրան պուտաւոր և պոչն երկան, գրեթէ մերինին նման։ Ահա ասանկ շատ գեղեցիկ տեսք ունէր. իսկ ես անանկ սիրեցի որ մէ_կէն պիտի մօտենայի անոր հետը ճանչուորու_թիւն ընելու համար. նայիս մէկ անդգամ

Թռչուն մը, որ գլխուն վրայ կատար մը ճըլխ-քըրտած միս ունէր · խռովեց, և սուր ձայնովը անանկ վախցուց զիս, որ դողալով փախայ ։ Ո՛րդեակ ըսաւ մայրը՝ ա̃յ փառք տուր, որ քեզ պահեր է այս չար պատահմունքէն, որ չի կրնար ըլլալ · վասն զի այն կենդանին, որ քեզի անոյշ երևցեր է՝ կատուն է · իսկ Թռչունն է աքաղաղը, որ մեզի վնաս մը չի տար · բայց կատուն մեր կըրուստէն 'ի զատ ուրիշ բան չի մտածեր ։ Ուրեմն ճանչցի՛ր, թէ ի՛նչ անխոհեմութեն մէջ ես, որ անգութ թշնամուդ ձեռքը զքեզ գլխալի մատնէիր ։

---

Ուրեմն գեղեցկութեանը մի՛ նայիր, և մի՛ ուրուն փետուրը և անոյշ լեզուովը խաբուիր · պէտք է իմաստութեամբ ճանչնալ բարեկամը և թշնամին, որ չըլլայ թէ պատահի մը յետոյ զղջաս · շատ բան պէտք է որ այս խելքը ուրիշէն [illegible]։

Օրինակ է այս՝ խակամիտ մանկանց,
որ կարծեն լինել՝ հմուտ աշխարհաց ·
Բայց անփորձ գոլով՝ յոլով գլխանլեաց,
փորձ հասուն լինել՝ կարօտին բազմաց ։
Յորմա է այս քեզ՝ մանուկ ինքնապանծ,
մի՛ խաբիր տեսլեամբ՝ գեղափայլ դիմաց ·
Զի զգայութիւնք՝ խաբին և փորձին,
միայն փորձ լինին՝ խորհրդով ծնողաց ։

## Երկրագործ, և Եզն :

Թէև զեղջիւր՝ հատցես ժանտին,
կռուի ոտիւք՝ չաստակ կերպին :

[illegible]
[illegible]

ՃԸ. Երկրագործ մը ուզեց եզին եղջիւրնե-րը կտրել, որ միշտ իրեն դէմ կը վերցընէր. բայց կտրելէն ետև աւելի չարացաւ եզը. վասն զի տեսաւ թէ եղջիւրները կորսընցուց, որով կը վնասէր անոր. սկսաւ ոտքերովը գետինը փորել՝ անանկ կատղելով, որ հա-նած փոշին, ու հողը երկրագործին աչքը կը լեցվէր: Ուստի ըսաւ խեղճ մարդը. մի՛ ինչ օգուտ ինձի եղաւ բրած գթութենս. վասն զի այս չար կենդանին հիմա աւելի վնաս տըւաւ ինձի ոտքերովը, որ անցած օրերը այնչափ վնաս չէր տուած գլխովը :

---

[illegible]

Ուսի՛ր չկապել՝ ընդ բարկասրտին,
 հեզ կենակցութե՟՝ շահիլ զսիրտ ժանտին.
 Զի ոչ վէրք հարուածք՝ վիրօք բժշկին,
 ոչ հուր բարկութե՟՝ հրդեհք չիջանին ։
Զեղջիւր ամբառնալ՝ ընկեր ընկերին,
 ոչ մարդոյ է գործ՝ այլ գազանային .
 Որք խայթեն խեթկեն՝ յօտար տեսակին,
 մարդ միայն ըմպէ՝ զարիւն իւր սեռին ։

## Արծիւ, և Նապաստակ .

Չարագործաց՝ չարն է բաժին,
 զոր ինչ գործեն՝ 'ի նոյն պատժին ։

Չար ընողը՝ չար կը գտնէ,
 իրեն գործքը՝ ինքը կը պատժէ .

ճժ . Արծիւն իւր բունին մէջ կեցած՝ տեսաւ հեռուէն որ նապաստակին ձագերը խոտ կուտեն, մէկէն վրանին հասաւ յափշտակեց տարաւ իւր ձագերուն ։ Իսկ անոնց մայրը կաղաչէր արծիւին, որ խնայէ, և իրեն տայ ձագերը ։ Բայց արծիւն առանց անոր աղաչանքին նայելու, մէկիկ մէկիկ մեռցուց ձագերը աչքին առաջ ։ Մայրն ալ կսկծալն կատղեցաւ, և ուրիշ ճար չի գտաւ վրէժխնդիր ըլլալու, սկսաւ ծառին տակի հողը փորել . այնչափ փորեց որ մինչև հովը զարն

կածին պէս ծառն ընկաւ, և արծիւին մա-
գերը վար ընկան մեռան ։

---

Խրատ է անանց, որ ի բերնոյ Մեծամէջը տպաւինե-
լով անհրասալթ նըշէն աշտարին, ըկոտէն թէ ազ-
գարին յայնը ըստ վեր նեւլէ. ու Մեկէն փառն առ-
րողին փառնը ձովուր նը տարուշընէ ։

Զամ է գեղեցիկ՝ անձնապաստանին,
'ի փոքուէ անոր՝ կրել զարժանին.
Որ քանդել ջանայ՝ զտուն անանկին,
քանդի նանրանայ՝ զըկանօք նովին ։
Մի՛ քեզ վստահիր՝ թէ կաս 'ի գահին,
վերանցեալ 'ի կայս՝ իշխանականին.
Երկի՛ր 'ի չնչմանց՝ ալէբեր հողմին,
որ կործան առնէ՝ զաթոռ հպարտին ։

## Սագ, և Տէրն ։

Սիրտ ագահին՝ ոչ գիտէ յագ,
Թէ և իցէ՝ յոսկի համակ ։

Ագահ սիրտը՝ ոսկին թողլի,
Չի կշտանար՝ ալ շատ կայ ։

ՃԾ. Մէկ սագ խաւ մը ամէն օր մէյմէկ ոսկիէ հաւկիթ կածէր տիրոջը. իսկ տէրը միտքը դրաւ, թէ սագին ներսը լեցուն ոսկի է ։ Այս մտքով բռնեց խողխեց զսագը. բայց ինչպէս յուսահատեցաւ երբոր բացաւ փորն ու բան մը չի գտաւ որ կը խնդրէր ։

---

Ագահութիւնը երբոր ագահին սրտին մէջ թագաւորէ, կը կուրացնէ զայն. և որչափ շատնայ ոսկին, այնչափ այս մոլութիւն ալ կը սաստկանայ. վերջապէս հոգին ալ կերէ, մարմինն ալ ։ Դիոգինէս Կինիկոսին հարցուցին, թէ ոսկին ինչո՞ւ դեղին է ։ Պատասխանեց թէ շատ թշնամեաց ունենալուն համար վախնալուն դեղներ է ։

Ո՜վ քանի՜ անյագ՝ սիրտ ոսկէսիրին,
Ոչինչ շատանայ՝ ընդ ձիրս բաղդին.
'Ի մի ուժով ըմպէր՝ թէ էր 'ի ձեռին,
Զոսկի և զարծաթ՝ պանծ տիեզերին ։

Ի՞ զի 'ի ցանկալ՝ հանդիպիլ շատին,
Թողու զգրաւականն՝ որ կայ 'ի ձեռին.
Եւ է զի յոսկի՝ համակիլ սրտին,
Ճնշի և մաշի՝ նոյն սիրտ նոյն հոգին։

## Ընձառիւծ, և Աղուէս.

Մեծ և չքնաղ՝ է գեղ հոգւոյ,
քան վաղանցուկ՝ տեսիլ մարմնոյ։

Մէ՛ պարծիր սոսկ՝ մարմնոյդ վրայ,
Նայէ՛ հոգիդ՝ պայծառ ըլլայ։

Աշխ. Ընձառիւծը կըպնդէր, թէ աղուէսէն շատ վեր է ինքը. լաւ նայէ կըսէր իմ վրայիս աղուորութենը. կըտեսնես ինչպէս փայլուն գունաւոր և խատուտիկ է մորթս. բարեկամ՝ առանց կեղծաւորութեն մտածէ, քուկինդ իմինիս առջին կրնայ՝ շուք ըլլալ բաղդատութեն։ Պատասխանեց աղուէսը, թէ ես անանկ տգեղ կըտեսնեմ զիս, որ կրնայի աղաա խոստովանիլ, թէ քեզմէ շատ վար եմ, թէ որ չգիտնայի թէ խելացիները քիչ մը աւելի մեծ կըհամարին հոգին, քան թէ մորթը։

[illegible]
[illegible]

ըանի · որ հպարտ բնութիւնը օրինակ է պարծենկոտ կանանց, որ միայն իրենց զարդարանքներուն վրայը պարծենան, ու առաքինութիւնը և պարկեշտութիւնը մէկդի ընկնէր, որ է բուն մարդուն գեղեցկութիւնը։

Անիմաստ դատմունք՝ մնաց յիմարին,
որ 'ի գեղ մարմնոյ՝ դնէ զիւր բարին ․
Պանծայ վեհ լինել՝ այն բազմագիտին,
զի պերճ երևի՝ տեսիլն արտաքին ։
Բազումք 'ի մեր դար՝ յայս խորհուրդ բերին,
յարգեն զգեղ մարմնոյ՝ և ոչ զհոգին ․
Թողեալ զներքին՝ պճնեն զարտաքին,
զուրկ գոլով բարեաց՝ իմացականին ։

## Երկու բժիշկք, և Հիւանդ ։

Արդ մի այլոց՝ զքեզ մատներ,
բերեն 'ի գլուխ՝ քո մահ և վէր ։

Մի՛ յանձներ քեզ՝ ուրիշներուն,
շուտով կերթաս՝ ծոցը հողուն ։

ՃԺԷ ․ Հիւանդ մը իր հիւանդութեան զանազան ցաւերը կըպատմէ երկու բժըշկի, որ զինքը նայելու եկեր էին ։ Այն մէկ պատմած բանին մէկ բժիշկը միշտ կըսէր, շատ լաւ ․ մէկալն ալ կըսէր շատ գէշ ։ Հիւանդը լաւ հասկըցաւ թէ այս բժիշկներն ի՞նչ կարծիք ունեցան իր հիւանդութեանը վրա ․ որ մէկին կարծիքը մէկալին հակառակ էր ։

Ուստի կապվեցաւ միայն՝ որն ընտրէ․ վասն զի դժուար էր ընտրութիւնը․ երկու կողմի կարծիքն ալ հաստատելով պնդող ունէին, և պակաս չէր իրենց պատճառները․ Թէպէտ անհաստատ, բայց մեծցուցած և երկան պատճառներ էին։ Այս ընդդիմութենց մէջ հիւանդը քրտընելով չէր գիտեր՝ որ կողմը բանէ։ Վերջապէս յանկարծ դէշ բաղդին հետևեցաւ, և ամէն զգուշութիւն անոր կարդադրութենը յանձնըվելով՝ դեղ առաւ անկէ մեռաւ․ իսկ բժիշկներն ասոր մահուանը վրայ երկու պատճառ տուին․ դէշ բաղդը կըսէր տեսա՞ք ես ի՞նչպէս ճանչցայ․ լաւ բաղդն ալ կըսէր որ անխափան կազատէր հիւանդը, թէ որ ինքիր գլխովը բան չընէր։

---

Շատ զգուշանալու է, որ օտար մարդու խօսքին հաւատալով, զինչ չի մարմնէս աղբերէն յետոյ․ Թէպէտ շատ մարդու բան հարցնես, երկու ան, բայց մէկ մարդու հետևէ, և նայէ որ մարդու յետև չըլլաս։

Այսպէս որ տենչայ՝ այլոց դարմանին,
մատնեալ զանձն 'ի ձեռս՝ ոգէտ բժշկին.
Փութով կորնչի՝ ըստ առակողին,
գնայ և նստի՝ 'ի մահու բանտին։
Իսկ դու որ իշխան՝ և տէր ես անձին,
մի մատներ զքեզ՝ օտարաց հեշտին․
Որ ոչ 'ի լաւ անդր՝ փոխարկել ունին,
և ոչ անպատճառ՝ մատնեն գեհենին։

## Ածխագործ, և Ներկարար։

Սևատեսիլ ածխագործին,
ոչ երևի՝ իւր սեաւ փոշին։

[illegible]

Ճշմ. Մէկ ածխագործ մը կըսէր ներկարարին, թէ բարեկամ իմ տունս քեզի շատ յարմար է. հրամմէ հոն նստէ, հաւատայիր որ շատ զարմանալի հանդիստ կըլլաս։ Պատասխանեց մէկալը՝ շնորհակալ ըլլալով անոր բարերարութենը վրայ. թէ ես կուտամ, որ քու տունդ ինծի շատ աղէկ կըլլայ. բայց ինչպէս կերևնայ, ես աւելի լաւ կըլլամ անանկ մէկ տեղ մը նստիլ, ուր որ քու ածուխդ չի կրնար սևցընել իմ կտաւներս։

---

[illegible]

Այս օրինակ է՝ պակասաւորին,
որ ոչ տեսանէ՝ զիւր ինքեան թերին.

Կոչէ զմերձաւոր՝ նստիլ առ նմին,
համակել զնա՝ 'ի մութ սևագին ։
Այնպէս ախտաւորք՝ շաղեալ 'ի տղմին,
մաքուր ձևացեալ՝ արդարոց մերձին.
փախչիլ 'ի նմանէ է՝ մերժել զայնպիսին,
քանզի աղտեղքն՝ զանմեղաց հոգին ։

## Մորենի, Հողամաղ, և Չղջիկան ։

Ամէն խրաց՝ գոյ ինչ պատճառ,
քննեա զծերոց՝ բան նախաճառ ։

Ամէն բանի՝ մէկ պատճառ կայ,
[illegible]

ՃԺԲ. Մորենին, հողամաղը, և չղջիկը ընկերացան որ վաճառականութ ընեն. մորենին ապրանք առաւ նաւը դրաւ, որ հընդկաստան խրկէ. հողամաղը դրաւ իր կողմանէ դրամ մը ոսկի. չղջիկն ալ իրեն համար արծաթ ժողվեց դրաւ նաւը ։ Ժամանակն որ եկաւ՝ ճամբայ ելաւ նաւը. բայց շատ չի հեռացած մէկ ալէկոծութե մը հանդիպեցաւ, անանկ որ բոլոր մէջի ապրանքովը գնաց նաւը ծովին տակը։ Անկէ եղաւ որ հողամաղը միշտ ծովին քովերը կըպտըտի. յուսալով թէ ոսկին տեղէ մը գտնէ ։ Չըղջիկն ալ կը վախնայ ցորեկն երևնալու՝ չըլլայ թէ փոխ տըւողը արծաթն ուզէ ։ Իսկ

մորմենին, որ միշտ կը մնամ իր ապրանքը գանելու, ամէն անցնողներուն միտքը կը փակէ։

---

Հողամաղն է խարապաթախ Բալլանը, որ երկայէնցող ըլլալով մեր գրերէ ծածկան փակերն է։ Այս տառերս օրինակ է հոգեկանից մարդիկներուն, որ մենք մեռնին կամ կենին նորացնացած բաներուն վրա։ Դան ամէն մեծ է առմկներուն մէջ-Թէ որ մարմնին դառը մէկին վրա դալէն կենին Թէ պարպել փոր։

Ահա գաղափար՝ ընչաքաղց անձանց,
որք մինչև ցմահ՝ չահել նկրտին.
Եթէ միանգամ՝ կորուսին ինչ գանձ,
հեծեն և ողբան՝ մինչ 'ի կէս վերջին։
Են որք մահանան՝ ընդ կորուստ իրաց,
և են որ մոլեալ՝ մոլաթափ շրջին.
Բայց աւաղ ոչ մարդ՝ սակս մետաղաց,
է վասն մարդոյ՝ այն գանձ այն ոսկին։

# Երկու մարդիկ, և Էշ:

Հակառակօղք՝ յայնժամ հաշտին,
երբ վնասիւք՝ իւրեանք տուժին:

[illegible]

ՃԺԵ. Էշ մը մոլորած կերթար, երկու մարդ կըգտնեն զայն, և կըսկըսին վիճաբանութիւն ընել, թէ որուն կըլնի. երբոր կըջանային մէկզմէկէ յափշտակելու՝ ըսին թէ ով որ աւելի զօրաւոր է՝ այն թող առնէ. ուստի սկսան ծեծկըվիլ իրարու հետ. բայց շատ անխելքութեն ըրին. վասն զի երբոր մէկզմէկ գետինը կըզարնէին՝ էշն ելաւ ձեռքերնուն փախաւ. և ասով հաշտըվեցան սիրով այս երկու կռուողները:

---

[illegible]

Այս արդար պատիժ՝ է կռուասիրաց,
որք ազնիւն կորզել՝ ջանան յիրերաց.
Բայց երբ ելանէ՝ այն ինչ 'ի ձեռաց,
շուարեալ հաշտին՝ ամաչէն յինքեանց:

Առ քեզ 'ի խրատ՝ այս գործ առելեայ,
մի՛ առեր զընկերն՝ առ սէր օգտութեանց.
Գազանաց է բարք՝ որք թողուն զորսանս,
անխնայ կառուին՝ խածանեն զինքեանս :

---

## Գայլ, և Շուն վտիտ :

Անյագ որկոր՝ ցանկայ շատին,
բայց միշտ կարօտ՝ կայ սակաւին :

Որոնք գոհ չեն՝ ունեցածին,
ունեցածն՝ ալ կորսնցնին :

ԺԷ. Օր մը մէկ գայլ մը կը պատահի խիստ աղւոր շան մը. բայց անանկ վատուժ էր, որ ոսկորն ու կաշին էր մնացեր. երբոր ուզէր պատառէր զայն՝ ըսաց շունը. ով պարոն գայլ ինչ կընես. չես տեսներ թէ հիմա ես անանկ վիճակի մէջ եմ, որ մէկ ակռայիդ կերակուր չեմ ըլլար : Սակայն հաւատա ինծի, համբերէ՛ տեղս դառնամ. երդում ըլլայ քեզի, որ կըջանամ զիս լաւ կերակրելու. թէ որ քիչ մը ժամանակէն ետև ախորժիս հոն գալ, զիս այնպէս գիրցած պիտի գտնես, մինչև չպիտի զզջաս որ անչափ կերակուր մը թողուցիր՝ աւելի լաւ կերակուր ուտելու համար : Իսկ գայլը հաւատաց, և թողուց զայն : Քանի մը օրէն ետև գնաց գայլը շանը տեղը, և դռանը ծակէն տեսաւ կանչեց որ դուրս ելլէ, որուած

խօսքը կատարէ։ Պատասխանեց շունը, թէ կուզես վաղն եկոր· զի այսօր չեմ յուսար թէ այն աստիճանը գիրցած ըլլամ, որ քեզի յարմար կերակուր ըլլամ· և չեմ կարծեր թէ դուն ալ խմով գոհ ըլլաս։ Իսկ գայլը այս խօսքս լսեց չի լսեց, կախեց ականջները ու ետ դարձաւ, և երդում ըրաւ որ մէկ մը նալ բան մը բռնէ՝ բնաւ չըխալ թողու։

---

[illegible]

Ապաժոյժ բերմունք՝ որկորամոլին,
Թողու զբաւականն՝ վազէ անշահին·
Որով և նկթեալ հիւծի առ վշտին,
արժանի պատիժ՝ անյագ որկորին։
Արդ մի՛ նմանիր՝ գիշախանձ շարին,
որ մարմնով այլոց՝ սնանի յանձին·
՚ի սնունդ մարմնոյ՝ շատ են ձեռք կրկին,
քրտամբք երեսաց՝ սնանիլ ինքնին։

# Կապիկ, և Ձագ իւր :

Որ քան զչափ՝ սիրէ զորդին,
կրկին վնաս՝ առնէ նմին :

Թէ շատ սիրես՝ զաւակ սիրեն,
անչափ խորէ՝ որդի կընես :

ՃԺԷ. Մ՛էկ կապիկ մը խելքը տըւեր էր իր մէկ ձագին, անանկ որ գիշեր ցորեկ կը պագնէր, և գրկելով կը սխմէր. բայց այս անխելք սէրը շատ դէշ ըրաւ ձագին. վասն զի օր մը սաստիկ սիրելով գիրկն առաւ ա֊ նանկ ուժով սխմեց գրկին մէջն, որ շունչը բռնըվեցաւ մեռաւ խեղճ ձագը :

---

Կապիկը իւրեն թէ այնչափ սաստիկ կը սիրէ ձագն, որ ինքն սիրելով կը մեռցնէ : Օրինակ է անանց ծնողաց, որ սաստիկ սիրելով զաւակնին ան֊ խելք կընեն. որովհետև առանց կրթութեան մեծնալով անպիտան կըլլան, և բանի մը չեն ըլլար. մեծ֊ մարդկութեան մէջ՝ մնան կը սեպեն :

Տեսանեմս զոխա՝ յիմար ծնողին,
որ գգուէ այնչափ՝ փայփայէ զորդին.
Մ՛ինչ չիջուցանել՝ զեռանդուն ոգին,
առնէ զայն անմիտ՝ իբրև լոկ մարմին :
Զի՛նչ օգտեն գգուանք՝ յիմար զաւակին,
երբ անկիրթ աճի՝ նման անբանին .

Քանզի անխրատք՝ ոչ մարդ համարին,
Թէև կերպարան՝ մարդոյ ունիցին ։

## Աւազակ հեղձեալ ։

Թէ և պատիժք՝ անագանին,
բայց ոճրագործք՝ ոչ ազատին ։

[illegible]
[illegible]

ՃԺԸ. Պաստաւորը մէկ աւազակի մը ետևէն կիյնի որ բռնէ. իսկ աւազակը անանկ արագութեամբ կը փախչի որ չեն կրնար բռնել. ուստի կազատի, և միտքը կը դնէ չարագործը՝ թէ այլ տեղէ մը վախնալու բան չունի. կարծէ թէ իր գործած չարութիւններուն առանց պատժի պիտի մնան ։ Բայց երկնաւորը լաւ գիտէ հատուցում ընելու. վասն զի երբոր այս թշուառականը մէկ գետի մը մէջ մտեր անդին կուզէր անցնիլ, չգիտնալով անոր խորութիւնը, ոտքը սողաց գնաց տակը խղդըւեցաւ ։

---

[illegible]

Այս է հատուցումն՝ օրինաց էլին,
որ կըշռէ էից՝ ըստ գործոց նոցին.
Թէ իցէ բարի՝ այն միայ նմին,
իսկ եթէ չար է՝ հանդիպի չարին:
Ո՛վ գիտնող պատրաստ՝ կայ դատող վերին,
դատել և պատժել՝ գործ չարագործին.
Թէ հալին արդարք՝ յերեսաց նորին,
Թշուառ մեղաւորք՝ զինչ առնել ունին:

---

## Եզինք, և Լուծ.

Ո՛րչափ բեռն է՝ անտանելի,
համբերատար՝ սիրտն տանի:

Անհամբերին՝ ժիւ մը շուտ գայ,
փրփրանքներով՝ խիտ կը պոռայ:

ՃԺԹ. Եզներ լծած էին միկ խիստ բարցըրած սայլի մը վրայ, և շատ աշխատանքով կըքաշէին. իսկ լուծը անանկ սաստիկ ձայն կը հանէր, որ եզները ձայնէն վախցան ու կեցան: Յետոյ դարձան լուծին ըսին, Թէ ով անհանգարտ ինչ ունիս որ սաստիկ կըպոռաս. գրեթէ գուն աշխատանք մը չունիս. մենք որ բոլոր այսչափ բեռը քաշելու կաշխատինք, միկ ձայն մը չենք հաներ.

---

Համբերող մարդ հրեշտակ ծանր բեռան տակ ըլլայ յայտը չիւլեր. իսկ անհամբերին յայտը թեթեւ բեռնալ մը

[illegible] ։ Երանի՛ անոր, որ [illegible] կը [illegible] կը [illegible], և [illegible] կը [illegible] ։

Այս տարացոյց՝ համբերատարին,
որ ընկճեալ բեռամբ՝ վաստակի լծին․
Իսկ եթէ ոմանք՝ մատամբ յինչ մերձին,
ձայն գանգատանաց՝ արձակեն ուժգին։
Ջանամ անլեզու՝ տանիլ քոյդ բեռին,
ենթարկեալ ձեռաց՝ ամենակալին․
Լռողք արտնջողք՝ միապէս տանին,
մին արդիւնաւորի՝ միւսն է անբաժին։

## Աքաղաղ, և Աղուէս ։

Խարդախն որչափ՝ նենգել ջանայ,
ծանակ լինի՝ անհնարանայ։

Ո՛[illegible] որ [illegible]՝ [illegible] կը [illegible],
[illegible]՝ կը [illegible] ։

ՃԻ․ Աքաղաղ մը նստեր էր բարձր կաղնի ծառին վրայ․ Մէկ աղուէս մը հոն գալով տեսաւ որ չի կրնար անոր հասնիլ, վազեց ծառին տակն ու կանչեց անոր ։ Բարեկամ աւետիս աւետիս, խաղաղութիւնը հաստատուեցաւ երէկ ձեր մէջն ու մեր մէջը․ ուրեմն կաղաչեմ քեզի՝ ասկէ ետև առանց ոխ պահելու պարտական ենք մէկզմէկ սիրել եղբօր պէս, և մենք ալ սկսինք հաշտուիլ․ ուստի եկո՛ր սիրելի իջի՛ր որ պագտուինք ։ Պատասխան

տըւաւ ագռաւը · բարեկամ՛ չկյամս թէ մը-
չափ զիս ուրախացուց աւետիսդ · կարծեմ
թէ իրաւ է, ինչպէս ինձի կերևնայ · վասն
զի կըտեսնեմ որ վարէն երկու սուրհան-
դակ թաթաւ կուգան մեզի այս աւետիսը
տալու համար · ուստի քիչ մը կեցիր կաղա-
չեմ, անոնք հոս հասածնուն պէս ես ալ
վար կիջնիմ · չորսս մէկ տեղ կուրախանանք:
Եւ այս սուրհանդակներն են երկու որսող
շներ: Զայս որ լսեց աղուէսը դող ելաւ,
ու ծոռով փախաւ անկէ · իսկ ագռաւը վի-
զը վերցուց, սկսաւ երգելով խնդալ անոր
վրան :

---

Անզգամն իր ըրածը կը գտնէ · որպէս աղուէսն
նենգաւորութե ընելով խաբել ջանայ, այնպէս ինքը
կելնի ծոռը:

Տես զպատուհաս՝ խարդախող չարին,
'ի նենգել զընկերն՝ հալածի ինքնին ·
Քանզի լոյս ծրագ՝ նենգաւոր անձին,
'ի մուտս արևու՝ անդէն շիջանին:
Արդ այժմեան մարդիկ՝ նման են սմին,
միայն առ երես՝ շուք տան ընկերին ·
Այսու քաղցրութե՝ երբ զսիրտ շահին,
լոքեն անխնայ՝ զորոգայթ նմին:

## Վարդ, և Ծաղիկք։

*Զի՞նչ փառք փթթիլ՝ չքնաղ վարդի,*
*Երբ յերեկուն՝ ընդ փոյթ խամրի։*

Ի՞նչ շահ բուսնիլ՝ վարդի նման,
Երբ ծաղկին ու կեանքն՝ է մէկ օրուան։

Դիտ. Ծաղիկները մտածեցին վարդին վըրայ, և անոր գոյներուն մէջ անանկ կենդանի պայծառութիւն մը գտան, որ գրեթէ անոնց նախանձելու խոնարհեցան, ու գեղեցկութեան պսակին իրեն տալ ուզեցին։ Ամենքը միաբերան կըսէին, թէ մեր գոյները անոր պէս մէկ հատիկ գեղեցիկ չեն. մենք անոր անոյշ հոտը չենք կրնար հանելու. ուստի քեզի կը վայլէ պսակը ազնիւ վարդ, քեզի կը վայլէ միմիակ անոյշ հովին սիրուն դգուանքը։ Վարդն ալ բսաւ հառաչելով. սէ՛ր ծաղիկներ՝ որովհետև ես մէկ օրուր մէջ ծնիմ, ու կը թառամիմ. ինչո՞ւս պէտք է իմին այսչափ գեղեցկութիւնս. ո՜հ աւելի կուզէի ձեզմէ վար ըլլալ, և ձեզի չափ դիմանալ։

---

Օրինակ առնեն անոնք, որ իրենց աղուորութենը՝ խելքին և բաղակին պարծենալով կը հպարտանան. որովհետև մէկ րոպէին մէջ ամէնքը կանցնին կերթան. ներէ աղէկութիւն մը առնին, մինակ այն կը մնայ։

Ահա՛ քեզ տիպար՝ փառաց աշխարհի,
որ փոխչի դնայ՝ նման ստուերի.
Մինչեւ է փթթեալ՝ խամրի չիջանի,
'ի քթթել ական՝ և չերեւալս խառնի:
Թէ պանծանք ծաղկանց՝ ոչինչ համարի,
զի՞նչ ապա մարդոյն՝ դիւրեղծանելի.
Որ այսօր 'ի կառս՝ վաղիւն 'ի դագաղս,
Հեքեալ զամենայն՝ յաւիտեան հանգչի:

## Կարապ, և Կռունկն.

Թէ կեանք մարդոյ՝ է բարեաւ,
Լինի օրհասն՝ ուրախալի:

Թէ որ ճորդը է՝ տանը մէջէն,
մարդ չըլլայ՝ փառքերուն չի:

Ծնթ. Կարապ Թռչունը մեռնելու ատենը կերգէր ինչպէս իր սովորութիւն է: Կռունկը զայն տեսնելով ըսաց իրեն, թէ չկիտեմ ինչ կը մռմռաս որ ասանկ վիճակի մէջ ալ կուրախանաս: Պատասխանեց կարապը, թէ կը հասկընամ որ պիտի մեռնիմ. միթէ ճամբէ դուրս անկարգ բան է յայտնել ուրախութիւս. երբոր զիս կը տեսնեմ այս ետքի կէտին մէջ, որ բոլոր իմ Թշուառութենէս պիտոր ազատիմ:

Օրինակ է տալու երեխանէն մարդուն, որ մէտ

Նելսա ատենն ըրած բարեգործութիւնները միտքը բե-րելով կուրախանայ, որ աշխարհէս թշուառութենէն կ'ազատի. ինչպէս հին ատենը ազգ մը կար, որուն տղայ որ կը ծնանէր՝ կուլային. և երբոր մէկը կը մեռնէր՝ կուրախանային։

Լաւ է օր մահու՝ քան զօր ծննդեան,
արդար օրինօք՝ գիտունք վճռեցին.
Քանզի յօր ծննդեան՝ վիշտ չարիք ծագին,
իսկ յաւուր մահու՝ է չարեաց վախճան։
Երանի մարդոյ՝ որ յաւուր մահուան,
ընդ գործս բարեաց՝ հրճուի խնդագին.
Սիրտ առաքինեաց՝ ցնծայ 'ի բարին,
վայ անօրինաց՝ մահու անվախճան։

---

## Ջրշուն, և Շուն։

Պսակ գործոց՝ է կէտն յետին,
եզր և վախճան՝ իրաց ընաւին։

Ամէն բանին՝ վերջը նայէ,
որ գործերը՝ կը պսակէ։

Ձինք. Մէկ շուն մը կերնի ջրշանն ետևէն. և ջրշունը անոր ձեռքէն ազատելու համար զինքը ջուրը կը նետէ. շունն ալ անոր ետևէն ջուրը նետուեցաւ բռնելով գնաց անոր հասաւ. և այնչափ մօտեցաւ, որ բերանը բացաւ պիտի բռնէր. իսկ ջրշունը մէկէն մտաւ ջրին տակն, ու աներևոյթ եղաւ։ Եւ

այսպէս շունը կորսընցուց որսը այն կէտին, որ ձեռքովը դրեր էր թէ բռնեցի ։

---

Կրէսոս Թագաւորը հարցուց օր մը Սողոն փիլիսոփային, թէ ինծի պէս երջանիկ կը գտնըսի՞ աշխարհքիս մէջ. անոր պատասխան տըւաւ, թէ մինչև եսքի կեանքը պէտք չէ որ երանի տայ մարդս իր մեծութեանը. վասն զի ամէն գործք փոփոխման կը դառնին ։

Այս է տեսանել' վշտու սողունին,
Թէ վախճանն է եղբ' պատկեր իրին ·
Մինչև է հասեալ' գործ ինչ այն կիսին,
մի' վստահանար' տեղի տայ հեշտին ։
Ո'վ զիմբրոգ ոմանք' 'ի մտի եդին,
ցնծալ հանապազ' 'ի գահոյս բաղդին ·
Բայց 'ի թարթ ական' ընհատեալ անունին,
վեր 'ի վայր արար' խորհուրդ հողածնին։

---

## Ն.յր անհեր ։

Թէ չէ ինչ քո' յատուկ անձին,
ոչինչ օգուտն' իրք օտարին ։

Թէ քու քանըքդ' քէզ շահ չընէ,
օտարինն ի՛նչ' պէտք ընէ ։

Ձիք. Մէկ անհեր մարդ մը հարկադրեցաւ, որ գլուխն օտար մազ դնէ. երբոր օր մը պար կըխաղար ընկերներուն հետ, անանկ

ուժով ցաթկեց, որ մօրուքը ցնցըվեցաւ, և սուտ մազերը գլխէն վար ընկան ։ Զայս որ տեսան ամէնքն սկսան խնդալ, իսկ պար խաղցողն ուզեց անոյշ խօսքով մը այս ծիծաղը դադրեցընել անոնց ըսելով ։ Պարոններ պէտք չէ այսչափ զարմանալ, թէ այս մազերը ուրիշ մարդու գլխուն վրա չէին կենար կեցնին. որովհետև բուն տիրոջը գլխուն վրա չէն կրցած կենալ. մանաւանդ թէ իմ յատուկ մազերս գլխուս վրա չէն մնացած, ուրիշի՛նը պիտի մնայ ։

---

Ուրիշին բանը գիտութիւնը իրենը մարդու օգտակար չէ . ջանամ որ դուն ունենաս այն իրենը այն գիտութիւնը արդարութիւն որ միշտ հետդ ըլլայ, և զամէնընտրող ու շահ ընէ ։

Այսպէս որ ցանկայ՝ ընչից օտարին,
խաբի և մնայ՝ աղքատ և մերկին.
Զի այն որ չօգտէ՝ իւր վաստակողին,
զիմրդ օգտեսցէ՝ օտարաց անձին ։
Ջանա ամբարել՝ քեզ բարիս ներքին,
և մի մուրանար՝ առ դուրս ընկերին.
Դիր զիմաստութիւն՝ պսակ 'ի գլխին,
զառաքինութիւն՝ զարդ լինչ գագաթին ։

# Աւղեւորք, և Սօսի:

Զոր ինչ առնես՝ ապերախտին,
միշտ ապերախտ է յիւր բանին:

[illegible]

Առկ. Շնիկ աստղին մէջ մէկ խիստ տաք օր մը երկու Ճամբորդ զովանալու համար սօսի չնար ծառին շուքը նստան. արեգակին տաքութենէն ազատելով հոն քաշվեցան կեցան: Երբոր ծառին ճիւղերուն վրայ կը նայէին, որ պտուղ չի կար վրանին, սկսան իրարու ըսել. այս անպիտան ծառ մը, որ բանի մը չահ չունի. թէ որ մեզի ըլնէր, հիմա կը կտրէինք կրակը կը ձգէինք: Պատասխան տըւաւ ծառը. ով ապերախտներ՝ հապա այս շուքն որ իմ տերեւներս ըրեր են բան մը չէ՞, որ զձեզ սաստիկ ատեն արեգակին տաքուէն ազատեց, որ երեւալով հաղիւ փախաք հոս հանգչեցաք:

---

[illegible]

Անաւարութիւնը այն տեղ չափ կընէր · չափ անգամ պէտք է բանաւոր բան տեսնել · վասն զի խան մար-դէք, որ միայն բանաւորն ալ տեսնէին չէին խորհուր:

*Քաղցրութիւն բանից՝ ոչ յամենայնի,*
*յօգտակարաց լինչ՝ վճարել ունի ·*
*Այլ 'ի ձահ յաւէտ՝ իշխանաւորին,*
*որոտալ երբէք՝ 'ի սաստել ռամկին:*
*Այսու ապստամբք՝ ձնշին առ ահին,*
*սատհակ զաւակք՝ ուղղին խրատին ·*
*Ջի որ ոչ բանիւ՝ գայ յուղիղ կարգին,*
*գանիւ բռնութեամբ՝ ուղղի խստագին:*

---

## *Կոկորդիլոս, և Աղուէս:*

*Վա՜յ որ զընկեր՝ քո անարգես,*
*ամենեցուն՝ դու անարգ ես:*

Վա՜յ անոր որ՝ ուրիշը կը ձանձրայ,
ետքը պարծանօքը՝ ծաղր կըլլայ:

*Ճիէ. Կոկորդիլոսը զաղուէսն անարգելով միայն իր ազնուական ցեղին վրայ կըխօսէր · և հպարտ ձայնով մը կըսէր անոր · ա՜յ ողորմելի ես զքեզ անանկ լիրբ կըտեսնեմ, որ մինչև կը համարձակիս ինծի հետ բարեկամութիւն ընելու · գուն գիտե՞ս ես ով եմ · գիտե՞ս որ իմ ազնուականութիւնս գրեթէ աշխարհքիս պէս հին է: Պատասխան տըւաւ աղուէսը զարմանալով, թէ այդ բանը ինչ-*

*պէս կրնար ցցընել ինձի: Շատ դիւրին կրնամ՝ ըսաւ կոկորդիլոսը, վասն զի գիտնաս որ Հսկաներուն կռուին ատենը սմանք Ածնե-րէն փախան եկան կոկորդիլոս եղան, Նե-ղոս գետին մէջ պահվեցան, ահա ես ալ շի-տակ անոնց ցեղէն եկած եմ. բայց դուն թշուառական ուստի՛ կուգաս: Պատասխա-նեց աղուէսը, իրաւ որ այս բանը ամենևին չգիտէի, և չէի լսած. բայց հաւատայ պարոն կոկորդիլոս, որ ես շատ աշխատանք կը քա-շեմ գիտնալ, թէ ո՛ւր կերթամ, քան թէ ուստի՛ կուգամ:*

---

Ի՞նչ չափ պարծենալ ծնողաց մեծութեան վրա, երբոր ինքը մարդ չէ: Հ[illegible] մը [illegible] [illegible] մէկ իշխան մը հոր [illegible]. պարծենալով երեսը [illegible] անոր հոր մարդու [illegible] ըլլալը. [illegible] պատասխան տուաւ, թէ ես իմ ցեղիս առաջին ազնուականն եմ. իմ ազգս [illegible], և քու ազգդ [illegible] վերջանայ: [illegible] պատմու-թեան [illegible] 642 համարը:

*Տես զունայնութի՛ն զրաքան վառին,*
*Նախատէ զընկերն՝ իբրև գիւղացին.*
*Երկրաքարշ գոլով՝ սողալ ընդ գետին,*
*պանծայ թէ իցէ՝ յածոց կարգին:*
*Եղո՜ւկ այնոցիկ՝ որ նման սմին,*
*'ի վերայ լանջաց՝ Ճարտակեն յախտին.*
*Պարծին ը նախնեաց՝ գործս ազնիւ զարմին,*
*ոչ գիտեն այն է՝ նախատինք նոցին:*

## Ուխտ հիւանդին ։

Ո՞չ է հաճոյ՝ երկնաւորին,
ուխտել 'ի վեր՝ քան զոյժ անձին ։

[illegible]
[illegible]

Յիշ․ Մ՛էկ երկրագործ մը վտանգաւոր կը հիւընդնայ, և հարիւր կով ուխտ կընէ Ասկղէպիոսին՝ այս դաշինքով որ եթէ առողջանայ բոլորը զոհ ընէ անոր ։ Հարիւր կովը ուստի՞ պիտի գտնես՝ ըսաց կնիկը․ դուն չե՞ս մնացեր ամենևին․ տէր Ա՛ծ ես մէկ հատ մը չեմ տեսներ գոմին մէջ ։ Պատասխանեց հիւանդը Թէ կըտրէ ձայնդ․ Թող իմ խնդիրքս կատարվի, հարկաւորապէս անանկ քարի է Ած, որ եթէ հաճի մեր հորթուն ալ գոհ կըլլայ ։

---

[illegible]

Ահա քեզ բերմունք՝ մտաց յիմարին,
կշռէ մարդկօրէն՝ զբան անբանին ․

Ով գիտէ թէ նա՝ յամենայն վայրի,
ներկայ և զննիչ՝ է շարժման սրտի:
Ուստի երկիւղիւ՝ պատկառ կալ նմին,
ուխտուք զարարիչ՝ պաշտել ջերմագին.
Որում զոհ ընտիր՝ է նուանդն հոգւոյն,
և ոչ բազմաթիւ՝ երամ անբանին:

## Ձկնորսք:

Որ լոկ յուսով՝ ուրախանայ,
յամրօղ գործոյն՝ անյոյս մնայ:

Մինակ յուսով՝ եթէ երթաս,
ամէն բանէն՝ պարապ կենաս:

Ձիթ. Ձկնորսները իրենց ուռկանը ջրէն դուրս կը քաշէին. բայց սովորականէն ծանր ըլլալով մեծ յոյս ունեցան, և մէկմէկու կը-սէին թէ առանց կարծեաց լաւ որս ունինք. ով գիտէ հիմա ի՞նչ ձկներ պիտի տեսնենք մեր ուռկանին մէջ: Անոնց ուրախութիւնը շատ չի քշեց. վասն զի երբոր շատ աշխատան-քէն ետև նայեցան ուռկանին մէջը՝ ուրիշ բան չի գտան, բայց մէկ մեծ քար մը որ ջրին ընթացքը բերեր էր հոն:

Օրինակ է անոնց, որ իրենց հարկաւոր բանին ետևէ չեն ըլլար, ու կը նային որ հօրէրնուն տղըրան-

քը շահուածէն: Բայց հայրերնին մեռնելէն ետեւ պարապ թղթերէն 'ի զատ ուրիշ բան չի մնար ձեռքերնին:

Քանի՛ք յուսալից՝ գնան խնդալին,
Գլխովին յեցեալ՝ դիւրաւոս բաղդին.
Զամենայն զգործս՝ յաջող ենթադրեալ,
Յետոյ չարաչար՝ յուսոյ վրիպին:
Յու՛շ լիցի վճիռ՝ իմաստասիրին,
Երբեւ բարեկամ՝ քեզ ազդ արարին.
Սիրտ զգուշաւոր՝ առէ կասկածի,
Հակառակ կողմն՝ իւր յաջող բաղդին:

## Գորտք:

Մի՛տք խոհական՝ խորհի զվերջին,
Համեմատէ՝ զելս ընդ մտին.

Խելացի մարդ՝ շուտ բան չընէ,
Ետքն ու առաջ՝ լաւ կը քննէ:

ՃԼ. Գորտերը ամառուան մէջ տեսան որ իրենց ջրոտ տեղը կը ցամքի՝ սկսան պռռալ, թէ ուր պիտի երթանք բնակինք: Իրենց մէջէն մէկ ձայն մը պատասխանեց, թէ այս մօտ եղած հորն երթանք, որուն մէջ լեցուն ջուր ըլլալով մինչեւ բերանը շատ դիւրին հոն կըրնանք մտնել: Խիստ լաւ ըսաց մէկ ծեր մը իրենցմէ. բայց երբոր ջուրը ցածնայ մենք հորին տակն որ մնանք՝ որուն խորութիւնը

քան տղէն աւելի է, ինչպէս կրնանք անանկ գիրերն դուրս ելլել, որ ասանկ գիրերն դիւրաւ մեննենք ։

---

[illegible]

Տես զ՚հասուն մտաց՝ խորհուրդ գերազանց,
խորհի դժուարին՝ ՚ի վախճան իրաց.
Քանզի փորձ գոլով՝ խնթայ յապառնեաց,
զի մի անխորհուրդ՝ դիպեսցի չարեաց ։
Արդ մի հեռանար՝ դու ՚ի ծերունեաց,
ունկն մատուցես՝ բանից փորձառուաց.
Որք ոչ վայրապար՝ խորհին և խօսին,
Թէ և չեն յարգոյ՝ առ անմիտ մանկանց ։

---

## Երկու Թշնամիք ։

Որ ոխս ունի՝ ընդ ընկերին,
դաշնակից է՝ սատանային ։

[illegible]

Ծնթ. Երկու մարդ մեկզմեկ մահուչափ կա-
տէին, եղաւ որ այս երկուսը մեկ նաւով

տը յաճախային ։ Բայց հայրերնին մեռնելէն ետև պարապ ծովերէն 'ի դատ ուրիշ բան մը ճար յետ- քերնին ։

Քանի՜նք յուսալից՝ գնան խնդացին,
գլխովին յեցեալ՝ դիւրասահ բաղդին.
Զամենայն զգործս՝ յաջող ենթադրեալ,
յետոյ չարաչար՝ յուսոյ վրիպին ։
Ցո՛ւշ լիցի վճիռ՝ իմաստասիրին,
երբև բարեկամ՝ քեզ ազդ արարին.
Սիրտ զգուշաւոր՝ առէ կասկածի,
հակառակ կողման՝ իւր յաջող բաղդին ։

---

## Գորտք ։

Միտք խոհական՝ խորհի զվերջին,
համեմատէ՝ զելս ընդ մտին.

Խելացի մարդ՝ շուտ բան չընէ,
Ետքն ու առաջ՝ լաւ կը քննէ ։

ՃՂ. Գորտերը ամառվան մէջ տեսան որ իրենց ջրոտ տեղը կը ցամքի՝ սկսան պօռալ, թէ ուր պիտի երթանք բնակինք ։ Իրենց մէջէն մէկ ձագ մը պատասխանեց, թէ այս մօտ եղած հորն երթանք, որուն մէջ լեցուն ջուր ըլլալով մինչև բերանը շատ դիւրին հոն կըրնանք մտնել ։ Խիստ լաւ ըսաց մէկ ծեր մը իրենցմէ. բայց երբոր ջուրը ցամքնայ մենք հորին տակն որ մնանք՝ որուն խորութենը

ճամբորդութիւն ըրին ։ Երբոր լեցուն հովով կերթային, ալէկոծութիւն մը ելաւ անանկ սաստիկ՝ որ նաւը հովին բռնութիւնը ծովին զարնելով փառատեցաւ, տակը բացուեցաւ ։ Այս վերջին խեղճութեան երբոր երկու ճամբորդները ջրին մէջն էին ընկեր · և իրաւ կը տեսնէին որ պիտի խղդուէին, սկսան մխիթարուիլ · զի կըսէին մօրերնուն մէջ, թէ որ ես կորսուիմ, ահա թշնամիս ալ ինձի հետ կը կորսուի ։

---

Ագահութիւնը անանկ կը կուրացնէ մարդն, որ մինչև մահին դուռը կը հասնի, և մէկը ոսկէն չի հանէր, ու սատանային կերակուր կըլլայ ։ Փիլիսոփայ մը կըսէր, թէ որ կուզես թշնամիէդ վրէժ առնել՝ անկէ աղէկ եղիր ։

Զխմբդ ապաժոյժ՝ կերբ դժոխային,
 անհամբոյր սրտի՝ ատելեաց կրկին ·
 Մինչ հասեալ ժանեաց՝ սեաւ մահաբերին,
 լինին վրէժառու՝ յայն կէտ խաւարին ։
Բամբէ կուրութեան՝ խորհրդոց նոցին,
 ոչ հային ո՛ւր կան՝ յոր սահման հասին ·
 Այս գործ է ահա՝ սկզբնաչարին,
 որ այսպէս զմարդ՝ առնէ իւր բաժին ։

## Առիւծ, Արջ, և Աղուէս:

*Խռովարարք՝ միշտ վնասին,*
*այլ ոք շահի՝ ինքեանք ծաղրին:*

Կռուող մարդիկ՝ միշտ զեն կընեն,
անոնք այլոց՝ շահ կը բերեն:

ՃԼԲ. *Առիւծն ու արջը իրենց մէջ խռովե-ցան մեղրի փեթակին համար, որ գտեր էին կաղնի ծառին խոռոչին մէջ. երկուքն ալ կը ջանային որ յափշտակեն առանց իրարու բաժնելու: Շատ լաւ կըլլար թէ որ երկու բաժին ընէին. վասն զի երբոր իրարու հետ կը կռուէին՝ մէկ աղուէս մը կամացուկ մը եկաւ մտեցաւ մեղրին, բոլորը լափելով կերաւ փախաւ:*

---

Շատ անգամ երկու եղբայր, և երկու բարեկամ իրարու հետ չեն հաշտուիր, մինչև որ միջերնուն մէկը չի մտնի, կամ մէջ ճամբայ մը չի գտնին. շատ չի անդրենը իրենց իրենց կռուան, և շահը կը հաշուին:

*Ահա հատուցումն՝ անմիաբանից,*
*որ զրկեն միմեանս՝ 'ի սիրոյ ընչից.*
*Այլոց առնեն շահ՝ ինքեանք մերկ Թափուր,*
*երբ օտարք շահին՝ վերջ լինի վիճից:*

Քանի՜ շահաբեր՝ է միաբանից
մասնակցել սիրով՝ միմեանց զբարիս.
Զի ո՞չ քաղցրութի՛ւն և ո՞չ բերկրալից,
քան սիրել սիրել՝ գոյ հարազատից:

---

## Աստղաբաշխ:

Զի՞նչ շահ զննել՝ զաստղըս վերին,
ոտիւք սահիլ՝ 'ի գուբ խորին:

Ի՞նչ շահ մեծ մեծ՝ բաներ խօսիլ,
պզտի բանով՝ ջուր ինկնիլ:

Ճշգ. Մէկ աստղաբաշխ մը քալելով կը դիտէր աստղերը. բայց շատ լաւ կըլլար եթէ իր ոտքին վրա նայէր: Վասն զի երբոր աչքը վերցուցեր միակերպ երկինքը կը դիտէր, ահա մէկ հոր մը փորած էր ճամբուն վրա՝ որ առանց նայելու անանկ մօտեցաւ, մինչև ընկաւ մէջն ու խղդըլեցաւ:

---

Թալէս փիլիսոփան որ իր գործերուն յետեւէն էր, թալով աստղերը կը դիտէր, ընկաւ ջուրի մը մէջ. ծառան հասաւ որ զինքը անկէ հանէ, բայց՝ երկինքին բաները դիտելու տեղը ոտքին առջեւ նայի՞ն: Խորհ է ասոնց որ իրենց բանը կը թողուն, ու իրենցմէ վեր բաներու ետեւէ կիյնան, և երբեմն հա[illegible] [illegible] [illegible] կընեն, որ մէկէն ջուրը կը գլորին:

Օրինակ է այս՝ ընդվայր շրջողին,
Թողեալ զօգտակարին՝ քննէ ըղձլերին.
Ոչ գիտէ թէ ո՛ւր՝ իւր վիճակք յանգին,
շրջի իմանալ՝ զբան օտարին։
Մի՛ հետաքններ՝ զոր քեզ ոչ օգտին,
այնգամ զինի՝ վայելչականին.
Եւ օգտակարին՝ և փառաւորին,
որով պերճ մնաս՝ 'ի քոյդ վիճակին։

---

## Դըլֆին, և Դոռն։

Մի՛ պահանջեր՝ վրէժս յայլմէ,
զի մի՛ և քեզ՝ նոյն չար հասցէ։

Վրէժխնդիր՝ այլոց լինիլ,
մէ նէ խօսթայ՝ փըլխօրդ մէծ լար։

Ձըլֆ. Դըլֆին ձուկը եռանէն էր ընկեր մէկ դոռն ձկան մը, վրէժխնդիր ըլլալով նախատանացն որ անկէ առեր էր։ Դոռն ձուկը փախաւ ծովին եզերքը քէնարը, դըլֆինն ալ ետևէն վազեց։ Իսկ դոռնը անոր ձեռքէն ազատելու համար ցատկեց աւազին վրա, դըլֆինն ալ անոր ետևէն ցատկեց. բայց ինչպէս պատահեցաւ իրենց յանցանքը, երբոր երկուքն ալ անանկ ձգած մնացին հոն։ Որովհետև իրենք ջրէն դուրս ըլլալով օդին մէջ մնացին, ու անանկ տկարանալով մեռան. և շատ զղջացան որ իրարմէ վրէժ առնելէն 'ի զատ ուրիշ բան չի մտմըտացին։

Դուքինն է խօնուզ, և դունն է փալամուտ ժուկը. որ օրինակ են ադէլի մարդկանց. բայց չափ անգամ էրկու թշնամի ալնուած իրարու հետ կիյնին, որ մինչև իրարու գլուխ կուտեն:

Տեսե՞ր զ°պատուհաս՝ ոխակալ չարին,
զնմա՞րդ յայն պատիժ՝ կործեալ ընդ նմին.
Զի որ ոչ ներէ՝ չարեաց ընկերին,
ոչ թողցին յանցանք՝ իւր յատուկ անձին:
Այս քեզ է խրատ՝ մարդ ընկերական,
մի՛ տար զընկերն՝ ըստ ձկանց բերման.
Սիրել և սիրիլ՝ քեզ է սեպհական,
կեալ որպէս զմարդ՝ և ոչ զերթ գազան:

---

## Մ՝եռելաթաղ, և Բժիշկ:

Որ անիրաւ՝ ջատագովն,
զերթ չաղակրատ՝ յայլոց ծաղրի:

Մէ՛ դուրծէնար՝ բէ բան գիդէռ,
համա դէ՛ր բէ՝ բան մը ւէյդէռ:

ՃԼՆ. Մ՝էկ մեռել թաղող մը կը թաղէր իր դրացինը. երբոր գերեզմանը կը լմընցը-նէր լէցընելու, տեսաւ բժիշկը, որ դեղ բերեր էր մեռելին երբոր հիւանդ էր. ուռ-տի ըսաւ անոր, ես զքեզ անանկ վարպետ կը տեսնեմ, որ կարծեմ թէ կրնայիր հի-ւանդն ըռընացընել: Պատասխանեց բժիշ-կը, թէ որչափ որ կըրցայ նէ ըրի. բայց

այդ մարդը դէշ հիւանդութեան մէջ էր։ Կրկնեց մեռել թաղօղը գլուխը շարժելով. Թէ որ անանկ չըլլար քու ձեռքդ կեյնէր։

---

Լեզուանի մարդը կարծէ թէ խօսքով գործած յանցանքը կը գոցէ. Բայց շատ անգամ ալ ծռուր կ'ելլայ ու իր խօսքովը կ'իյնի։ Ասանկ մէկ լեզուա-նին բանը Ջինան թէ ականջներդ լեզուէն տալէր։

Այսպէս և զրկօղք՝ արդար երևին,
պատճառ տան գործոց՝ ոչ զիրաւացին.
Որով 'ի բազմաց՝ իբրև չարակրաւ,
արդար օրինօք՝ մերժին հալածին։
Արդ մի հեռաւիր՝ ուղղախոհութին,
որ բազում բանիւք՝ խաբել հնարին.
Քանզի բանք ոչինչ՝ վճարել ունին,
Թէ ոչ ընդ գործոց՝ արդեամբք ընթակցին։

---

## Թռչնորս, և Օձ։

Որ ընկերին՝ չար ինչ խորհի,
նովին չարեօք՝ պատուհասի։

Ով որ ընկերոջ՝ չար կը խածէ,
ինքն ալ չարովը կը ճրուի։

Ճլէ. Մէկ թռչուն որսող մը կաշխատէր որ թռչուն բռնէ. երբոր վար ծռեցաւ որո-

գայթը լարելու, օձ մը խածաւ ոտքը. ո՛չ կանչեց մարդը եւ արժանի եմ այս բանիս, որ ինծի եղաւ. ի՛նչպէս կրնամ տրտնջալ թէ կ՚ուզէ օձը իմ կեանքս վերցընել. որովհետեւ ես ուրիշ բան չեմ մտածեր, միայն այլոց կեանքը վերցընելու կը նայիմ:

---

Անխախտ օրէնք է, թէ որ կ՚ուզես քեզի այնպէս ըլլայ, դուն ալ ուրիշին այնպէս ըրէ. թէ որ կ՚ուզես քեզի չըլլայ գէշութիւն մը, դուն ալ ուրիշին մի՛ըներ. [illegible] չի ինչ որ ըսես, նոյն կը գտնես: [illegible] է թէ [illegible] [illegible] [illegible]:

Այս արդար պատիժ՝ է չարականին,
միայն զչարիս՝ այլոց խնդրողին.
Զի որ չար կամի՝ չարն է իւր բաժին,
զոր ինչ և կշռէ՝ կշռի չափ նովին:
Թէ խնդրես բարիս՝ բարիք քեզ պահին,
գործք քո և քո սիրտ՝ զ՚քեզ ուղիղ դատին.
Մի՛ ցանկար այլոց՝ չարիս այլ բարին,
զի արկածք չարեաց՝ 'ի քեզն հեռասցին:

## Աւանակ, և Դիոս :

Որ ոչ է գոհ՝ յիւր վիճակի,
ուր և գնայ՝ յաւէտ ծանրի :

[illegible]

ՃԼԷ. Պարտէզպանին էշը կը ձանձրանայ ամէն առտու գիւղերանց եկեղ խոտ տանել վաճառանոցը : Օր մը աղաչեց Դիոսին, որ զինքը անանկ մէկ մարդու մը տայ, որ կարենայ գէթ քնանալ : Ըսաց Դիոս թէ անանկ թող ըլլայ . նայիս որ ըսածին պէս էշը գործելի ծախողի մը տուն գանըվեցաւ : Երկու օր չի կրցաւ կենալ հոն՝ սկսաւ զըղջալով փնտռել պարտէզպանը . եւ անոր տունը կըսէր երբեմն կաղամբի [illegible] տերեներ գաղտուկ կառնէի կուտէի . բայց հոս ի՞նչ կը վաստըկիմ գործելի տանելովս, ծեծ ուտելէն 'ի զատ ուրիշ բան չի կայ : Ուրեմն պէտք եղաւ անոր ուրիշ վիճակ խնդրել : Դիոս դրաւ զայն մէկ խաղախորդի մը [illegible] տուն . իսկ էշը չէր դիմանար կաշիներուն գէշ հոտին, որ կը կրէր : Ուստի անանկ ուժով պոռաց որ չի կրնար ըլլալ, և խնդրեց երրորդ անգամ մէկ ուրիշ տէր մը : Անոտենը Դիոս ըսաւ անոր, թէ դուն խելք ունենայիր առջի

տխրոջդ տունը կը կենայիր ։ Թէ որ քեզի ուրիշ նոր տէրմ՛ ալ տամ, դուն գոհ պիտի չըլլաս ինչպէս մէկալոնց ըրիր ։ Այլա կեցիր ուր ես նէ ․ չըլլայ թէ ուրիշ տեղ անանկ առիթ մը գտնես որ աւելի տրտնջաս ։

---

[illegible]

Այս գործ է տժգոհ՝ ծոյլ հեղգասիրին,
ջանայ անվաստակ՝ կալ 'ի քուն խորին․
'Ի փոխել վիճակ՝ կարծէ թէ փոխի,
իւր անսանական՝ յատկութ̃ն ներքին ։
Արդ մի՛ գանգատիր՝ ըստ տրտնջողին,
զի մի՛ դիպեսցի՝ քեզ չարիք կրկին․
Ո՛ւր և լինիցիս՝ դու ընդ քեզ տանիս,
յոր վիճակ մտցես՝ ընդ քեզ կամք քոյին ։

## Առիւծ, և Գորտ ։

Ի զի երբեք՝ զառիւծ հզօր,
ահաբեկէ՝ գորտ ինչ անզօր ։

Շատ հեղ անանկ՝ բան կը տեսնես,
ու կործանես՝ որ կանարգես ։

ՃԼԸ. Մէկ առիւծ մը ջրոտ տեղի մը քով պառկած ըլլալով քունը հոն կը առնի ։ Երբոր խորունկ քունի մէջ էր՝ մէկ գորտ մը սկսաւ պոռալ․ այս ձայնէն առիւծն արթնցաւ կարծեց, թէ զօրաւոր կենդանի մը եկեր է հետը կռուելու, մէկէն ելաւ չորս դին կը նայէր․ բայց ինչպէս զարմացաւ երբոր տեսաւ թէ մէկ գորտ մը զինքը անանկ սաստիկ վախցուցեր էր ։

Որուն մեծութիւն ունենան՝ պէտք չէ որ փոքր բան մը տեսնելով․ վախնան, զի շատ անգամ պզտիկ բաներէն կը վախցընեն ։ Իսկ երբեմն երեւեցած պզտիկ անանկ բաներ կընեն որ մեծը կը վախցընեն ։

Տես զխամրդ հզօր՝ առիւծ ամեհին,
գոռայ ՚ի ձայնէ՝ կենդանւոյ չնչին․
Որ օրինակ է՝ փարթամ՝ հզօրին,
զաղքատս զփոքունս՝ յաւէտ ծաղրողին ։

Արդ մի՛ ոտնհար՝ լինիր տկարին,
թէև յարքայից՝ բազմիս 'ի գահին.
Զի փոքունք երբեք՝ արտաքոյ կարգին,
ահարեկ առնեն՝ զխրոխտ արքային:

## Հնդիկ:

Օճառ և ջուր՝ որչափ լցեն,
մաքրել զհնդիկ՝ ոչինչ զօրեն:

Ի՞նչ շահ կընէ՝ հինները ըսին,
ունին սարդն՝ խորագ խենէն:

Ճշմ. Մ՛էկ մարդ մը միտքը դրաւ որ ճեր մըկցընէ սև հնդիկ մը. ուստի ջուրը խօթեր կը լուանար և կածռըէր, բայց փուճ տեղը աշխատեցաւ. վասն զի շատ ածռըվելովը անկէ եռև առաջուանէն աւելի սև երևցաւ:

Հնդիկ կամ սև մարդիկ օրինակ են այնպ գլուխ մարդոց, որ ինչ ընեն՝ չեն կրնար խօսք հասկըցընել՝ ինչպէս որ սևն ալ չի ճերմըկնար. վասն զի կըսեն թէ անանց կաշիին փակը բարակ մաշկ մը կայ, որ սինքը լուանալով՝ անկէ է սևութիւնը. որ ինենց փեղին ու արեգակին տաքէն կըլլայ:

Զի՞նչ շահ լուանալ՝ զսևաւ ափրիկեցի,
որ զսևութիւն՝ ընդ մորթով ունի.

Զի՞նչ չափ խրատել՝ գիտնար կամակոր,
որք ուղիղ գնեն՝ զոր ինչ և խորհին։
Արդ մի փայլապար՝ ուղղեր զայնպիսին,
որք անուղղութեն՝ է կանոն անձին.
Քե՛զ լիցին կանոն՝ վրիպանք նոցին,
առաքինանալ՝ ըստ ուղիղ բանին։

## Վաճառական, և Ծով։

Փորձել զփորձեալն՝ է յիմարին,
որ կրկնակի՝ փորձի յանձին։

Փորձած բանը՝ փորձել չուզեր,
որ նոր փորձանք՝ գլուխ չի բերեր։

Ծն. Վաճառական մը կը բարձրնէ նաւը ապրանքով դէպ 'ի Հնդկաստան կերթայ։ Երբոր առագաստը բացին հովը յաջող էր, և ծովը հանդարտ. բայց հազիւ թէ նաւահանգստէն հեռացան մէկէնիմէկ հովը փոխվեցաւ, և ծովն ելաւ, անանկ որ նաւը մէկց բերաւ մէկ աւազոտ տեղ մը զարկաւ հոն նաւեցաւ։ Իսկ վաճառականը բոլոր ապրանքը կորսընցնելէն ետև, նաւուն մէկ տախտակովը ձորով ազատեցաւ։ Քանի մը օրէն ետև երբոր ժուռ կուգար ծովուն քով, ուր տեղէն որ նաւ նաւեր էր տեսաւ ծովը հանդարտ. իրեն կերևնար թէ կըսէ որ նորէն նաւով տեղ երթայ. ուստի սկսաւ պոռալ։ Անզգամ ծով փուծ՝ տեղը կաշխա-

*ախս զիս խաբելու՝ սուտ հանդարտ ըլլալովդ։ Ո՛վ որ կուզէ թող հաւատայ, իմ կողմանէ ես ամենևին չեմ մոռցած անցած օրեր ինծի ըրածներդ․ ես այնչափ փոփոխամիտ չեմ, որ հաւատամ քեզի երկրորդ անգամ, որուն անհաւատարմութիւնը փորձով տեսեր եմ։*

---

Ծովն է օրինակ աշխարհիս․ որ անոյշ հանդարտ երևնալով շատ մարդիկ փորձութեան մէջ ձգեր կորուսաներ է․ բայց ատոնք որ ամէն անգամ ալեկոծութեան մէջ կիյնին, և չեն աչքերնին վաճառականին դէս․ որ ամբիոններէն հեռու կենալով մէյմալ մէկու փորձութեան մէջ։

*Աչքս խմաստուն՝ բան խոհականին,*
*որ զգուշանայ՝ փորձ գնել անձին․*
*Զի որ ոչ փախչի՝ յաւելից փորձողին,*
*անդէն անկանի՝ 'ի վտանգ կրկին։*
*Ծով է այս աշխարհ՝ ըստ տարացուցին,*
*հեղիկ ծածանմամբ՝ քաղցր է անփորձին․*
*Արդ մի հաւատար՝ տեսլեան արտաքին*
*զի մի ընկլուզցէ՝ ո՞քեղ յիւր կոհակին։*

## Աքաղաղ, և Բազէ։

*Ի՛ վաղանցուկ՝ պարծանք չարին,*
*անդ՝ի հրճուելն՝ փութով պատժին։*

Մի՛ [illegible] [illegible] [illegible],
զի [illegible]՝ [illegible] [illegible]։

*Նմա. Երկու աքաղաղ չարաչար կը կռուէին մէկ վառեկի մը համար, որ մէկզմէկու կը նախանձէին։ Ինչ և իցէ մէկ աքաղաղը յաղթեց միւսին. յաղթըւօղը փախաւ բակին մէկ կողմը քաշվեցաւ կեցաւ։ Իսկ յաղթօղ աքաղաղը թռաւ ելաւ հաւնոցին վրա որ երգելով իր յաղթութիւնն իմացընէ. բայց այս ուրախութիւնս երկար չի կրցաւ վայելել. վասն զի երբոր թևերը կը զարնէր, և ուրիշ բան չէր մտածէր, բայց եթէ իր ուրախութիւնը յայտնել ամենուն, ահա բազէն՝ որ զայն յայտնի տեսեր էր հաւնոցին վրա, յանկարծ վրան հասաւ յափշտակեց։*

---

Աշխարհական մարդը յաջողութիւն որ գտնէ [illegible] [illegible] ամենուն [illegible] [illegible]. բայց նոյն յաջողութիւնը վերջապէս իր գլուխը կուտէ։ Շատ [illegible] մարդիկ իրենց գործերին վրա պարծելու ատենը [illegible] [illegible]։

Արժանի պատիժ՝ է անզգամին,
անդ հրճուիլ ՚ի չարն՝ հանդիպի չարին.
Խոնարհք յանկեան ինչ՝ ապահով նստին
հպարտք ՚ի բարձունս՝ չարաչար ծախին։
Զի՞նչ օգուտ գործեաց՝ այն յաղթականին
երբ նոյն յաղթութի՛ն առթեաց մահ նմին.
Զի՞նչ շահ ձոխանալ՝ ՚ի վերայ այլոց,
ուր այլք ՚ի կեանս են՝ իսկ ինքն յօրհասին։

---

## Ռէշկ մշկոյ, և Որսորդք։

Լաւ է տալ մասն՝ ընդ բոլորին,
զոհել զփոքրն՝ առ սէր մեծին։

Շատ աղէկ է՝ մաս մը ձգել,
Բոլոր մարմնին՝ ամբողջ պահել։

Ծնթ. Որսորդները մէկ ջրշան մը ետևէ կե-
նին, որ որսան, և իր անդամներն դեղեր շի-
նեն. որովհետև սովորութիւն է, որ աստ
մարմինը կը գործածեն օգտակար դեղի հա-
մար շատ հիւանդութեանց դէմ։ Իսկ ջրշու-
նը գիտնալով անոնց միտքը՝ հասկըցածին
պէս թէ չպիտի կրնայ ազատիլ անոնց ձեռ-
քէն. բռնեց իր անդամը ակռաներովը փըր-
ցուց վար ձգեց։ Զայն որ տեսան որսորդ-
ները առին իրենց ուզածը, և անով շատա-
ցան ու ալ ետևէն չի գացին ետ դարձան։
Եւ ասանկ իր խոհեմութիւը ջրշունն ազա-
տեցաւ, որ շատ իմաստութիւն մտածեց մէկ

անդամը պակասեցընել, երբ չէր կրնար պա-
հել, և բոլոր մարմինն ազատել:

---

[illegible]

Գործ է խոհական՝ 'ի լինել աւթին,
փոքր չարին ընտրել՝ խափան տալ մեծին.
'ի ճահ է զոհել՝ զանդամս սորին,
պահել զգլուխ՝ մասն էականին:
Գլուխ և բոլոր՝ ըստ տիրականին,
կրօն և հաւատք՝ են որպէս ասին.
Արդ 'ի պահել զայն՝ յաւէտ պատշաճի,
զոհել զամենայն՝ զկեանս աշխարհի:

---

## Հովիւ, և Շուն:

Շահաւորին՝ որով բերկրանք,
են օտարաց՝ չարիք զրկանք:

[illegible]

Ձևք. Մ՝էկ հովիւ մը շատ անգամ՝ իր շունը
կուտար՝ որչափ որ ոչխարներէն կը մեռնէին

հիւանդութիւն։ Օր մը խիստ դէր ոչխար մը կը հիւընդնայ. անտառին շունը սովորականէն աւելի տրտում երեւցաւ։ Հովիւը երբոր հարցուց անոր պատճառը, պատասխան տըւաւ, թէ այս է պատճառն որ չեմ կրնար առանց տրտմութեան տեսնել սանկ մէկ հաստիկ պատուական ոչխար մը, որ մեռնելու վտանգի մէջ է։ Պատասխանեց հովիւը, թէ ինչ պիտի ըլլայ այս երեսպաշտութիւն որ կընես ինծի. որովհետեւ դուն քու շահդ իմինէս շատ աւելի կը նայիս, փուճ տեղը կեղծաւորութիւն կընես. գնա աղէկ ես լաւ գիտեմ, որ դուն չես ցաւիր իմ ոչխարիս համար, հապա կը վախնաս որ չըլլայ թէ ըռընանայ, ու ձեռքէդ ելլէ։

---

Ընչասէր կամ ինքնասէր մարդը կը նայի, որ իրեն շահ ըլլայ. ուրիշին ի՞նչ կըլլայ ըլլայ, չի ցաւիր ամենեւին ուրիշի յաջողութենէ վրայ. որ է շան բնութիւն։

Ընչասէր ժլատը՝ համանման սմին,
կեղծեալ վշտանան՝ ընդ մահ ընկերին.
Բայց յորժամ անոր՝ եղանէ բաժին,
հրճուին՝ ի հոգի՝ ընդ օգուտ անձին։
Զի՞նչ քան զայս զազիր՝ գործ որկրամոլին,
ուր չարիք այլոց՝ է ինքեան բարին.
Դաւան է այնպիսւոյն՝ գխտել յազգակցին,
բարիս որ միակ՝ է պատիժ սրտին։

## Ագահ, և Անցաւոր ։

Վա՜յ որ թաղէ՝ սիրտն ընդ գանձին,
անդ 'ի գեհենն՝ աստ 'ի գետին ։

Թէ որ դնես՝ սիրտդ 'ի ոսկին,
ըսպասէ լուսոյ՝ դիմաց քաղին ։

Վիպ. Ագահ մարդ մը կը թաղէ իր գանձը մէկ տեղի մը մէջ. բայց չի կրցաւ անանկ ծածուկ ընել, որ իր դրացինը չի տեսնէ ։ Ուստի երբոր ագահը գնաց անկէ, դրացինը հասաւ հոն, հանեց ոսկին առաւ տարաւ ։ Մէկալ օրը ագահն եկաւ որ նայի իր գանձը. բայց ինչ կսկիծ եղաւ երբոր բացաւ, ու բան չի գտաւ հոն. աշխարհք չի կրնար պատմել անոր ցաւածը. ինչպէս կը կանչէր, ինչպէս կուլար, և մազերը կը փետտէր. մինչև յուսահատեցաւ ։ Այս ձայնին որ առաւ մէկ Ճամբորդ մը հոն վազեց, ինչ կորսընցուցիր ըսաւ անոր, որ ասանկ կեանքէ կելլես ։ Պատասխանեց թէ գանձս կորսընցուցի. որ ինծի հազար հեղ աւելի սիրելի էր քան իմ կեանքս, որ այս քարին քով թաղեր էի ։ Կրկնեց մէկալը. թէ առանց քեզի աշխատցընելու բերելով այսչափ հեռու տեղ ինչու համար տունդ չի պահեցիր, որ ամէն անգամ երբոր պէտք ըլլար կարենայիր դիւրութեամբ հանել ու-

կիդ։ Հանել իմ ոսկիս, պօռայ ագահը․ թէ՛հ, ես այնչափ խնամով էի որ հանէի․ ամենևին չի դպչէի պահուն անոր։ Անալ ըսաւ թէ երբոր չպիտի դպչէիր, ինչու համար այսչափ կը ցաւիս․ ո՛վ բարեկամ քար մը գանձիդ տեղը․ անալ անոր բանը կընէ քեզի։

---

Բիաս փիլիսոփային հարցուցին, թէ ո՞վ է ամենաողորմելի․ անալ ըսաւ թէ ագահն է, որ միտքն ու հոգին մաշեցընէն ետև, ժողուած ապրանքը չի կրնար ամենևին վայելել․ և կեանքն ալ հոգին ալ անոր համար կը կորսընցընէ։

Աւա՜ղ կուրութեն՝ մոլաց ագահին,
 ամփոփէ 'ի հող՝ զսիրտ և զհոգին․
 Այն որ է կարգեալ՝ 'ի գլուխ մարդկութե,
 ան՛ս զխա՛րդ քաղէ՝ զհոգի անմահին։
Գանձի այն ոսկի՝ առ մնունդ անձին,
 նա մաչէ զայն անձն՝ առ սէր մնուցչին․
 Արդ մի մատներ զայն՝ գներ 'ի հողին,
 առ անբան սիրոյ՝ առ անբան ոսկին։

# Եղն, և Ձագ իւր :

Որ ոչ է փորձ' ոչ գիտէ չափ,
զանձին իւր կար' դատի անչափ :

Ով որ իրեն' չափը չգիտէ,
Ինքն ամենէն' վեր կը դնէ :

Ձին. Եղնիկին ձագը կըսէր իր մօրը, թէ բնութիւնն ինձի անանկ մեծութիւններ տուեր է չնէն աւելի, որ անկէ ամենեւին վախ մը չունիմ: Թէ որ պատահի կըսէր շանը հետ կռուելու, գրեթէ առանց աշխատանքի պիտի յաղթեմ անոր. վասն զի ես շատ բարձր և անկէ զօրաւոր ըլլալէս' ի զատ, իմ գլուխս զէնք մը ունի եղջիւրէ, և շունը բան մը չունի: Պատասխանեց մայրը. որդեակ ըզ-գո՛յշ կեցիր անոր հետ լինելու, դուն անոր չես հասնիր. Թէպէտ ան զգուշացաւ իրեն եղջիւր տալու, և քեզի տուաւ. բայց անոր անանկ սիրտ մը տուած է, որ դուն չունիս ամենեւին :

Կատարեալ մարդը շատ բան կը խօսի պակաս մէջ,
Բայց բնութեան որ փնտռէ, մեղքն կը պատմէ : Ան-
խելքն է որ իր չափը չի ճանչնալով ինքզինքը վեր-
ներէն կարծէ կը դնէ :

Այս թերակատար՝ բերմունք են մանկանց,
որք գնեն զանձինս՝ 'ի չափ վեհաղանց.
Ամէն դժուարին՝ հեշտ թուի ինքեանց,
զի խակ և անփորձ՝ են բաղում իրաց:
Մի' գներ զքեզ՝ 'ի կշիռ քաջաց,
և մի՛ անխորհուրդ՝ լինիր ինքնապանծ.
Կշռեա խորհրդով՝ զայլոց զօրութիւն,
գտանես յոլով՝ գործս սքանչելեաց:

## Աղուէս, և Կինձ:

Խոհեմ բնութի՝ հնարէ ճարտար,
նախ քան զարկած՝ նպաստ և ճար:

Խէլք աանօղին՝ չէյայ ինէ չար,
ձէն մը չէկած՝ կըզդընէ ճար:

Ճիտ. Մ'էկ լեռան խոզ մը կը սրէր ակռաները ծառի մը կոճղի վրայ, զայն տեսնելով աղուէսն, ըսաւ իրեն, թէ որմէն հետ կը պատրաստուիս ծեծկուելու. որովհետև հիմա ոչ շուն կը տեսնես, և ոչ որսորդ: Պատասխանեց խոզը. հէ՛ պէ՛տք է պատրաստել, որ անոնք եթէ հասնին ես հազիւ իմ զէնքս սրեմ, երբոր անատենը մտածելու ժամանակ ալ չեմ ունենար:

---

Ամէն մարդ պէտք է ապէնօվ իր բանը հոգալ
իրեն պէտքական բանը գիտնալ, և առնէյած խէլքը

Կը շինէք խառնակորէն խոհեմութիւն, որ յանձնորդ ծերութիւն մը հրաժ գտուած խելք ըլլայ ։

Գեղեցիկ խորհի՝ նախատես բնութիւն,
պահել յարկածից՝ զվայրագ անասուն,
Զի յամենեսին՝ գոյ զէն զօրութիւն,
թէ՛ 'ի դէպ գործէ՝ յաղթէ թշնամւոյն ։
Միտք և լոյս բանին՝ է քաջ զէն մարդոյն,
միակ կառավար՝ բանական դատումն .
Սրեա՛ փայլեցո՝ զայն ոյժ զայն ցոլմունս,
լիցի քեզ պաշտպան՝ 'ի դիպող ժամուն ։

## Կարկատուն բժիշկ ։

Բանն է շնորհեալ՝ ամէն լեզուի,
բայց սակաւուց՝ իմաստ բանի ։

Ամէն մարդու՝ խօսք է տրուած,
բայց քիչ մարդու՝ խելք իմացուած ։

Առակ . Մ՛էկ կարկատուն էշէծ մը խիստ աղ-գէտ չափօղած ըլլալով իր արուեստին մէջ՝ անանկ քիչ շահ ունէր իրեն եկած վաստակէն, մինչև մտմտաց որ արհեստը փոխէ ։ Օր մը խելքը գրաւ, թէ բժիշկ ըլլայ և քանի մը բժշկական բառեր սորվելով բժիշկ եղաւ, և ծանուցանուեցաւ . որ իր լրբութիւնը՝ շատախօսութիւնը, և անծանօթ ըլլալը շուտ մը զինքն ըրին մէկ շատ անյարմար բժիշկ մը . բայց խիստ յարմար շատախօս մը ։ Ամէն

դի ծանուցում ըրաւ, թէ իր դեղերուն զօրութիւնը չի կրնար սխալիլ. և ամէնքն ատոր խօսքին հաւատացին: Իր դրացիներէն մէկ վարպետորդի մը ուզեց ծաղր ընել զայն այս կերպովս: Սաստիկ գլխացաւութիւն ունիմ ըսելով բերել տուաւ այս բժիշկը. անիկայ եկաւ սկսաւ երկան երկան խօսիլ անոր սուտ հիւանդութիւնը վրա պատճառներով. յետոյ հաստատեց հիւանդին, թէ գլուխը կազատէ այս ցաւէն քիչ ժամանակին մէջ, միայն թէ կամենայ յանձնել զինքն անոր հոգաբարձութեանը: Վարպետորդին ալ խնդալով ըսաց. խեղճ անխելք ես ի՞նչպէս կրնամ քեզի յանձնել իմ գլուխս, որովհետեւ միայն ոտքս ալ քեզի չեմ հաւատար:

---

Օրինակ է անոնց որ չեն ճանչնար իրենց գործքին մէջ երևելի ըլլալ, այլ մեծ բանի յետև պտտելով կը մնան: Ո՛ր բազմանք գտնանք որ վարպետ ըլ-նենալնուն համար եկեղեցական կըլլան. իրենք ի՛նչ գիտեն որ ժողովուրդին ի՛նչ պէտք սորվեցընեն. Կոյր կուրի առաջնորդ երկուքն ալ խորխորատ կիյնին:

Ահա արժանի՝ բան անիմաստին,
զանձին բրտութիւն՝ ոչ նկատողին.
Հեգել ոչ գիտէ՝ սուտ ալփաբետին,
բազմի սխալով՝ յիմաստնոց դասին:
Արդ քանի՜ անզօրք՝ յայս մասբերին,
մոռանան զկար՝ զօրութիւն անձին.
Միայն բան դատարկ՝ 'ի բերան նոցին,
հեռի 'ի խելաց՝ համաձայն լոյս բանին:

## Փողահար :

Որ ոք գրգռէ՝ զընկերն 'ի չար ,
նոյն պատժի՝ չարեօք խայտառ ։

[illegible]
[illegible]

Ձմռ̃ . Մէկ փողահար պօռուղան մը պատերազմին բաները չլլալէն ետև բռնուեցաւ : Երբոր մէկն անոնց մէջէն թեւը վերցուց որ սուրը խօթէ անոր , պօռաց գերի բռնըվողը . թէ ո՛վ զօրական մարդիմ , որ ես ուրիշ բան չըրի , բայց եթէ փողս չալեցի . ուստի ոչ մարդ եմ մեռցուցեր , և ոչ ձեզմէ մէկին զարկեր եմ : Պատասխանեց մէկալը . թէ դուն ալ քիչ արժանի չես մահու . և թուրը փորը խօթելով կըսէր՝ անորէն իրաւ մարդ չի մեռցուցիր , բայց ո՛վ ժողվեց զանոնք որ իրար մեռցընեն :

---

[illegible]

Այս են հատուցմունք՝ խեռ պատանեկաց ,
որ գրգռեն 'ի չար՝ զընկեր բարեկեաց .

Ո՛չ գիտէ՞ն զերկնից՝ պատիժ պատուհաս,
գանձեալ կա՛ն նոցա՝ ՚ի մահու արկած։
Զի՞նչ ունիս տալ բան՝ յայն սահման չարեաց,
զի՞նչ վասն անձին քո՝ և զի՞նչ զընկերաց։
Մի՛ սուլեր զփող՝ չարին գրգռանաց,
զի մի կորիցես՝ ՚ի սուր Թշնամեաց։

---

## Երկրագործ, և Տունք իւր։

Զայլոց չարիս՝ երբ տեսանես,
այնու և դու՝ ուղղեա՛ զքեզ։

Թէ որ պակասն՝ այլոց գիտնաս,
շտկէ՛ զքեզ՝ դուն ալ նոյնպէս։

Միթ. Երկրագործ մը կարծելէ ըծէն իր կովերը, սովի առեն կը մորթէ զանոնք, որ անով ապրելի ինքը և իր ընտանիքը։ Երբոր զայն տեսան իրեն շուները շուտմը ցաթկեցին իրենց տեղէն քաղաք փախան։ Փախչելնիս ազատինք կըսէին իրարու, թէ որ այս մարդը չի խնայեց մորթեց կովերն, որ իր գործքին շատ հարկաւոր էին, մեզի ի՞նչ չընէր, որ գրեթէ անանկ շատ պիտանական մը չենք անոր։

---

Թէ որ ուրիշին վրա գէշ բան մը տեսնես՝ մի գայթակղիլ դասէր, այլ նայէ որ դուն չընես,

ւ անոնց խնճոյքը դուռն չփակեցին։ Այսուր թշուա-
ռութիւնը նայելով ես ալ էիք էշայ · կըսէ ճիւղատեան։

Այս սահման վճիռ՝ իմաստասիրին,
հրահանգիլ առէ՝ սահմանք օտարին ·
Զի որ հանդիպի՝ երբեք տեսակին,
հանդիպիլ գիտէ՝ նաև անհատին։
Բանական դասիւ՝ մասնակցեալ բանին,
մի՛ օտար դատիր՝ գործ բանականին ·
Արթուն կաց գիտեմ գործածս աշխարհին,
փախի՛ր 'ի յաղթից՝ վնասաբերին։

---

## Առիւծ, Աղուէս, և Էշ։

Զի՞նչ զօրաւոր՝ քան միայն խոհեմ,
որ աշխարհի՝ յաղթել գիտէն։

Խոհեմութիւն՝ մեծ յաղթող է,
ամէն բանին՝ վրան կելլէ։

ձճ. Օր մը առիւծը աղուէսն ու էշը որսորդութեան ելան միատեղ, և բռնեցին մէկ եղնիկ մը · որ գետինն ընկածինալէս մէկէն էշը կորրսեց զայն · բաժինն որ եղաւ՝ նախ էշը յափշտակեց առաւ քան զամէնն աւելի մեծ բաժինը։ Այս անկարգութիւս անանկ կատղեցուց զառիւծն, որ նոյն կետին ցաթկեց իշուն վրա պատառեց։ Անատենը հակըցաւ աղուեսը գլխուն գալիքը · անոր համար զգուշացաւ իրեն բաժինն առնելու

Նաև տարաւ զան ալ խառնեց առիւծին և իշուն բաժիններին հետ, և բոլորն ընծայ ըրաւ առիւծին ։ Այս քաղաքավար վարմունքս որ տեսաւ առիւծը խաղաղեցաւ. որ քիչմ' առաջ իշուն բրածը աղուէսին ալ պլխալ ընէր ։ Մանաւանդ երբոր գոհ եղաւ բոլոր եղնիկն յափշտակելուն համար, ընկերաւ շնորհակալութիւն ալ ընել անոր մարդավարութեանը։ Եւ այսպէս ազատեցաւ աղուէսն իր ճարտարութեանը անանկ վտանգէ մը, և էշը կորաւ իր անխելքութեանը ։

---

Խելացի մարդը զինքը վտանգէն կազատեցնէ խելքովը. իսկ անխելք մարդը զինքը վտանգի մէջ կը ձգէ. ահա այս է զանազանութիւնը խելացի ու անխելքի, իմաստուն և տգէտ մարդկանց ։

Ահա զօրութիւն՝ հզօր առիւծին,
աննապղապ խիղախ՝ ճիրանաց նորին.
Տես 'ի հանճարոյ՝ զխմբող նուաճին,
զի միտք ոչ ճիրանք՝ են պաշտպան անձին ։
Իսկ դու որ տէր ես՝ աշխարհաց ծրին,
մի ընկճիր փութով՝ 'ի տես հզօրին.
Շողացո՛ յաւէտ՝ զայն սուր հանճարին,
որ յաղթել գիտէ՝ ուժոյ աշխարհին ։

## Պառաւ, և Աղախին։

Որչափ փախչիս՝ յաշխատանաց,
վաստակք լինին՝ քեզ զուգընթաց։

[illegible]

ՃԾԶ. Մէկ պառաւ մը իրեն աքաղաղին ձայնը առաւօտին պէս՝ ամէն առտու կերթար կարթընցնէր իր աղախինը [illegible] առաւօտէն ժամ մը առաջ կանուխ։ Անալ կը հարկադրէր որ մէկէն ելլէ բոքն [illegible] առնէ մանէ. և թող չէր տար ձեռքէն ձգել՝ մինչև որ արևը մանելէն ետև ժամ մը չանցնէր մութ չըլլար։ Իսկ աղախինը հալեցաւ մաշեցաւ քուն չըլլալով և աշխատանքով. ուստի օր մը բռնեց աքաղաղը խղդեց այս մտքով, որ երբոր՝ պառաւը կը կորսընցընէ արթընցնողը՝ կրնայ անկէ ետև հանգիստ քնանալ. բայց հակառակն եղաւ։ Վասն զի աքաղաղն որ մեռաւ, պառաւը ալ չի լսելով ձայնը՝ կարգը կորսընցուց. ուստի բոլոր գիշերն ոտքի վրա էր, կը վազէր կարթընցնէր աղախինը. անանկ որ հազիւ կարը մը ժամանակ կրնար պառկիլ։

---

[illegible]

Խիստ ըլլայ, եւ թէ աշխատասէր ձախմելու համար խելքին էնած ընել. անտէնը գէշ ըլլայ. Հատ ու երբոր մէկը տաշէլիք որ ատենայ, ինչ ընէ չատ էտակ:

Խնդրել ըզ հանգիստ՝ ըստ մարմնականին,
խորշել 'ի կրել՝ է գործ տկարին.
Քանզի 'ի սկզբան՝ 'ի գրել մարմին,
նոյն սահման երկանց՝ գրեցաւ նմին:
Պատրաստ կալ ձայնի՝ հրամանաց վեհին,
միայն գիտութիւն՝ երկոց ծառային.
Արդ մի ըծընկեց՝ լինիր հեղգութեր,
զի մի՛ գիտեսցես՝ դժուարագունին:

## Ձի, և Խոզ:

Զայլոց վիճակ՝ մի՛ զարտաքինն,
ուշիմ միօք՝ կշռեա զ՚ներքինն:

Մեծ ըլլալը՝ յանը ալ մեծ է,
հարստութեան ալ՝ հոգը շատ է:

ՃԾԷ. Փառաւոր ծածկոցով զարդարված մէկ ձի մը կերթար տէրը տանելու համար պատերազմին մէջ. սոր անցնելը տեսաւ էշ մը՝ սկսաւ հառաչանքով նախանձիլ ձիուն երջանկութենը վրայ: Ձին որ լսեց և հառ_ կըցաւ զայն. եանէկս եկօր ըսաւ, որ իմ փառքիս մասնակից ըլլաս, ինչպէս ես ալ_ ժանի եղեր եմ այս զարդարանքիս: Իսկ է_

ըը լամծին պէս վազեց եւեւէն գնաց, և հասան պատերազմին բանակը՝ նախ տեսաւ զօրքերը զէնքերը վրանները դրօշները փողերուն թմբուկներուն ձայնը, շատ հաճեցաւ, ամենուն վրայ կուրախանար զըւարճանալով։ Բայց քանի մը օրէն ետև տեսաւ որ ձին պարտաւորեցաւ ամէնը տանելու պատերազմին կրակոտ տեղը և վտանգաւոր ծեծին մէջ․ սկսաւ տարակուսելով զըւարճութիւնը ձգել, և միտքը բերել իրեն առջի թողուցած տեղը․ քիչմ՝ ալ անցաւ կախեց ականջներն, ու ետ դարձաւ․ ինչ որ ըսաւ իրեն ձին՝ որ չերթայ հոն մնայ, ամենևին մտիկ չըրաւ․ և յետոյ սաստիկ վազելով ձեռք առաւ ջաղացքին ճամբան գնաց։

---

Օրինակ է մեծապատն հարուստին, որ դրուէն ա- [illegible]

Այսպէս և ումանք՝ ընդ տես արտաքին,
պշնուն զմայլին՝ իշխանաւորին․
Երբ քննեն զկայս՝ ներքին վիճակին,
այլազգ գտանեն՝ տխուր վշտագին։
Մի՛ ցանկար փառաց՝ վսեմագունին,
և մի՛ փայլութեանց՝ աշխարհիկ բաղդին․
Զի այն շողշողանք՝ են սոսկ արտաքին,
այլ ներքին նոցա՝ թախիծ խաւարին։

## Հողագործ, և Որագիլ։

Կենակցութիւն անզգամին,
Վնաս բերէ՝ մերձաւորին։

Անզգամին՝ ըլլալու ընկեր,
Գլխուդ կուգայ՝ շատ մը դառնէր։

ՃԾԴ. Երկրագործ մը լարեց իր որոգայթը, և մէկ արագիլ մը քանի մը ուրիշ թռչուններով եկաւ մէջն ընկաւ։ Անտանկը բռնեց երկրագործը մեռցուց թռչունները. երբոր պատրաստվեցաւ արագիլն ալ մեռցընելու՝ աղաչելով կըսէր արագիլը, թէ ես ոչ չարագործ եմ և ոչ մեղսակից աւազակներուն. մի՛ զիս որոնց մէջ որ գտնըվելով բռնըվեցայ՝ անոնք սորվեցընելով ակամայ զիս հոս բերին. ուստի մեծ անիրաւութիւն կըլլայ, թէ որ անոնց բրածը՝ ինծի ալ ընես և անոնց հետ զիս կորսնցընես։ Պատասխանեց երկրագործը. դուն մեռնելու արժանի ես, Ինչպէս կընամ ես քեզի բարի ըսել. երբ չար ընկերներու հետ գտայ զքեզ։ Զայս ըսելով վիզը փրցուց։

---

Խրատ է անոնց, որ կըսեն թէ ես աղէկ ըլլալէս ետքը գէշ ընկերն ինծի ինչ պիտի ընէ։ Ասոնք

Մարդիկ ինչ կուզեն թող ըսեն. Գէշին հետ կեցօղը գէշ կըլլայ, աղէկին հետ կեցօղը աղէկ կըլլայ։

Այս ահա պատգամ՝ է գուշակողին,
'ի վերուստ անաի՝ մեզ ազդ առնողին.
Թէ որք ընդ չարաց՝ կենակցիլ կրթին,
չարեօք 'ի կենաց՝ զրաւիլ ունին։
Հեռի 'ի վատաց՝ մերձիր 'ի բարին,
կցորդեալ յաւէտ՝ ընդ առաքինին.
Որով և արդար՝ լինիս ընդ նմին,
ազատ յարկածից 'ի չարաբերին։

---

## Սիրամարգ, և Կաչաղակ։

Յիմարք պանծան՝ ընդ զարդ մարմնոյ,
իսկ իմաստունք՝ ընդ գեղ հոգւոյ։

Խելացի մարդ՝ [illegible] [illegible],
Իր [illegible] [illegible]՝ [illegible] կընէ։

ՃԾԹ. Օր մը թռչունները ժողվեցան իրենց մէջէն թագաւոր ընտրելու համար, որ յարմար ըլլայ զիրենք կառավարելու։ Իւրաքանչիւր թռչուն ժողովքին ընտրութիւնն իրեն քաշելու համար ըսին թէ այն ըլլայ թագաւոր, որ բնապէս աւելի կարողութիւն ունի. ուստի արծիւը խօսեցաւ իր ուժին վրայ, աքաղաղը՝ քաջասրտութենը վրայ, թութակը յիշողութենը վրայ, և կաչաղակը մտքին վրայ։ Բայց պարապ տեղը կը պարծէին ժո-

ղովքին մէջ ամէն մէկը իրենց կատարելութ̃եր վրա . մէկին խօսքը բանի տեղ չի դնելէն 'ի զատ՝ գլխացաւութ̃ի եղան զուրցըւած խօսքերը: Ամէնէն եռե եկաւ սիրամարգը բանալով գեղեցիկ պոչը . երևնալուն պէս թռչունները զմայլելով գոյնզգոյն փետուրներուն վրա , իրեն տըւին մեծութ̃իը առանց նայելու կաչաղակին ցուցմունքներուն . որ կը պնդէր , թէ սիրամարգը պոչէն 'ի զատ ուրիշ կատարելութ̃ի մը չունի . բայց անոնք գովասանքը սիրամարգին տըւին և մէկէն թագաւոր կոչեցին :

---

Խելք ունեցողը պէտք է աւելի հոգւոյն գեղեցկութ̃ենը և բնական ազնուութ̃ենը նայել , քան թէ մարմնոյն . վասն զի մարմնական գեղեցկութ̃ինը ծաղկի պէս շուտով կանցնի , միայն հոգւոյնը կըմնայ:

Անրան ընտրութիւն՝ աշխարհասիրին ,
ընդ. տեսիլ մարմնոյ՝ յաւէտ աչնողին .
Որ զուրկ 'ի լուսոյ՝ տիրական մասին ,
ոչինչ նշմարէ՝ զգեղ հոգեկանին :
Նուրբ համեմատ մտաց՝ միակ գանձ անգին ,
մի՛ փոխեր զարդուց՝ բատ մարմնականին .
Թէ վառ է հոգւոյ՝ նշոյլ բնածին ,
ոչինչ գեղ և զարդ՝ նման զուգադրին:

## Դըլֆին, և Կապիկ ։

Մի՛ խուզեր զայն՝ որ չէ քեզ անկ,
զի մի՛ անկցիս՝ յանել վտանգ ։

Անդէտ բանին՝ ձեննօղ ըշըլլար,
օր մը ճաժին՝ ֆօօը [illegible] ։

ՃԾԵ. Մէկ դըլֆին մը ցամաքին խիստ մօտ լողալով կերթար, տեսնելով զայն կապիկ մը, շատ լաւ միջոց է ըսաւ, որ դիւրութե երթամ բոլոր ծովը քալեմ. վասն զի բնաւ չեմ տեսած, պէտք է որ սիրտս հանգչի։ Զայս ըսելով ծովուն մօտեցաւ, յետոյ ցատկեց ձկանը կռնակին հեծաւ. իսկ դըլֆինը որովհետև մարդս կը սիրէ, կարծեց թէ մարդ է վրան՝ առաւ շատ հեռուն տարաւ զկապիկը, որ առաւելապէս կուրախանար ժուռ գալով ովկիանոսին մէջ, մինչև խընդալու ձայն մը հանեց։ Այս ձայնէս դըլֆինը գլուխն որ վերցուց նայեցաւ կապիկին, ճանչցաւ և զարկաւ պոչովը վեր նետեց վրայի բեռը, մէկէն մնաւ ծովուն տակը։

---

Ոչ որ իր բանը և գանը [illegible], [illegible] բանին [illegible] համար և [illegible] բանը [illegible] համար, [illegible]

պէս առիւծին պատճառաւը իր խորըտի ։ Շատեր
կեցան որ այս ճամբան բռնեցին փներնին առ-
ճամբայէն եղան ։

Բարք անատանական՝ ընդվայր շրջողին,
մատանայ զեւր գործ՝ քննէ զօտարին ·
Թողու լքանէ՝ զատուն և տեղին,
զի գիտակ լիցի՝ թէ այլք յի՞նչ բերին ։
Զի՞ կաս մի յիմար՝ 'ի վայր անտեղի,
առ ի՞նչ յօտարաց՝ շրջիս վիճակի ·
Դարձ 'ի սեպհական՝ արարս և տեղի,
զի մի ծովակուր՝ լիցիս անտեղի ։

---

## Հովիւ, և Գայլ փոքր ։

Մի՛ նպաստեր՝ չարասիրին,
զի մի՛ չարիք՝ 'ի քեզ դարձցին ։

Թէ փաղանին՝ փառնըր փէղ փաս,
ղափընէրըսը՝ իօրուսափ իսսփաս ։

Առակ · Հովիւ մը կը գտնէ գայլի ձագ մը , որ մայրը ձգեր էր , կառնէ կը տանի իր խուցը · և հոն կը մեծցընէ · Երբը կը դնէ զայն շներուն մէջ , որ կը նայէին ոչխարները · բայց շատ լաւ կըլլար , թէ որ սատկեցընէր · վա՛ զի առաջ քանի որ պզտիկ տկար էր , բան չէր ըներ · կատարեալ գայլ եղածին պէս մէկէն 'ի մէկ շները խղդեց , և երբոր հովիւը

տուն էր՝ վազեց ընկաւ ոչխարներուն վրա
ու բոլորը ջարդեց:

---

...ոփ ըլլան վարդապետաց, որ աշկերտներուն
...ը չի տան գործելի աղանդաւորներուն գըր-
քերը, որ թէպէտ առջի բերանը անվնաս կերեւնայ,
բայց կամաց կամաց կապականէ մանկանց միտքը: Նմա-
նապէս ծնողքն ալ իր տղաքը գէշ մարդ չի հանդիպե-
ցընեն, որ անոնց լեզուով ու բարի երեւալով կըթու-
նաւորէ բոլոր տղաքը:

Զօրավիգ լինել՝ գժնեայ գազանին,
գործ է գժնդակ՝ սրտի անմտին.
Զի խնամ և գութ՝ անճշողականին,
ըստ անդրոյն առնել՝ է խոհականին:
Իսկ դու հոգածու՝ մանկանց երամին,
մի խառներ ընդ այն՝ զծնունդ չարին,
Թէև ապիկար՝ իցէ չարածինն,
սակայն է անգութ՝ սերմըն գազանին:

---

## Օձ, և Տուտն:

Երբ տուտն իշխէ՝ իշխող գլխոյն,
եղուկ և վայ՝ բոլոր մարմնոյն:

Որ տեղ կիշխէ՝ կին ու ծառայ,
շուտով կըլլեն՝ տակն ու վրայ:

Ածէ. Օր մը կը նայի օձն, որ պոչը կը
գլխուն դէմ կելլէ. Ինչ ամբարտաւանութիւն,



[illegible]



[illegible]



[illegible]

Թէ է կըսէր պոչը գլխուն, որ միտ... ես թէ ես քեզ անանկ լաւ չեմ կըր... վարելով տանիլ, ինչպէս դուն զիս կ... նիս․ ով թէ իմ խելքս քուկինէն շատ է ։ Յայտնի է որ շատ ժամանակներ ես քեզ կը հետեւէի, հիմայ ալ դուն հետեւէ կարգով․ տեսնես որ ասանկ լաւ բան չի կրնար ըլլալ։ Զայս ըսաց պոչը և քաշեց գլուխն սկսաւ ճամբայէն ետ տանել, որ ճամբուն վրայի բաներուն զարնելով տարաւ քարի մը զարկաւ պատռեց մարմինը․ քիչմ' ալ առաջ գնաց ձգեց զայն ծակի մը մէջ։ Եւ այսպէս քանի որ առաջ չի գացած վայն 'ի վրան եկաւ բոլոր օձին։ Անատենը ետ կեցաւ պոչը կառավարելու, և խոնարհելով հետեւեցաւ գլխուն ինչպէս կարգն էր․ ուստի շատ լաւ բոլոր մարմինը կառավարվեցաւ գլխուն առաջնորդութիւնը, քան պոչին։

---

Եթէ մէկ ժողովքի կամ տան մը մէջ պզտիկը ուզէ հրամայել մեծին, հարկաւ այն պիտի կործանի․ այս տանկ ալ մարդուս զգայութիւնը բանականութենէն պե- տիրէ՝ այն մարդը կը կործանի․ որովհետեւ զգայութիւնը ծառայ է, և բանականութիւնը կամ հոգին տէր է, բայց [illegible] որ լաւ անգամ հոգւոյն առաջ- նըլլար, քան մարմինինը ըլլայ։

Անօրէն օրէնք՝ ստորնագունին,
որ իշխէ լինել՝ կառավար գլխին․
Բայց մ՛եր տուն քաղաք՝ կայցէ 'ի կային,
Երբ կին և ծառայք՝ տիրեն տիրողին։

Տր̄ իշխան կարգի՝ բան մտաւորին,
'ի քաղաք մարմնոյ՝ կառավար մէկին.
Թէ թոյլ տաս մասանց՝ զգայականին,
ուրեն կործանեն՝ զքաղաքն ընդ պետին:

## Դիոս, Ապողոն, և Մոմոս:

Որ ձեռնարկէ՝ 'ի գործս այլոց,
յեանեալ ծաղրի՝ 'ի նոյն գործոյ:

Մէ՛ յեռաւ վարներ՝ այլոց գործերէն,
ծաղր կըլլաս՝ անոնց առջէն:

ՃԾԸ. Մէկ օր մը Դիոս ըսաց Ապողոնին, թէ կտորմը ժամանակ տուր ինձի քու աղեղդ. զի կուզեմ քեզի հասկըցընել, թէ ես քեզմէ շատ չիտակ կրնամ նետել: Կը տեսնես այս կաղնի ծառը տնկած Ողիմպոս լեռան գլուխը. կուզեմ որ նետը օդը երթայ չիտակ ծառին կոճին մէջ տեղը զարնէ, այս որ ըլլայ դուն ալ ջանա անանկ չիտակ նետել որ յետոյ Մոմոս դատաստան թող ընէ, թէ որերնիս աւելի յաջող ենք: Զայս ըսելով առաւ Ապողոնին աղեղը նետեց, նետն ելաւ, բայց չիտակ երթալու տեղը խոտորեցաւ, և Մոմոս դատաւորին երեսին քսելով անցաւ գնաց զարկաւ քարերուն հարիւր ոտք հեռու նշանէն: Իսկ Մոմոս բոլորովին շփոթած վախուն, որ վտանգ էր իրեն՝ ոտքի վրա ելլելով ըսաւ Դիոսին.

Անհերուն գլուխը՝ չի կրցայ հասկընալ, Թէ Ապողոնին նետերը աւելի շիտակ է, բայց զայս ստոյգ գիտեմ որ անոր նետածներն ինծի վախ մը չէին տըւած, ինչպէս քու կինդ պատճառեց. ուրեմն ինծի մօտիկ ըրէ. ա՛ռ ձեռքդ դուն քու կայծակդ, և մեծդ Ապողոն դուն ալ ա՛ռ քու աղեղդ. ահա ասանկ շատ լաւ կըլլայ։ Զայս ըսաց ու առանց աւելի բացատրելու, և մէկալին նետուածքը մեծցընելու, գնաց Մոմոս։ Եւ այս կերպով դատաստանն անորոշ թողուց Դիոսին վախուն։

---

Դիոս կայծակն ոսկի ձեռքը, որ կընետէ կըսէին, իսկ Ապողոն արեգակին ածը՝ աղեղ ոսկի ձեռքը. Մոմոս խեղկատակութե ած ըլլալով, երբեմն ած-ներուն մէջ դատաւոր կըլլար։ Օրինակ է անոնց որ իրենց արուեստը կը ձգեն ու չգիտցած բանի կը խառնըւին, և անով լարալար կը խաբուին ծիծաղ կըլլան։

Այս շահ վաստակոց՝ փոփոխամոլին,
յայլոց 'ի վաստակ՝ վաղ ձեռնարկողին.
Այս և կատարած՝ ինքնահաւանին,
որ զայլս եպերէ՝ պանծացեալ յանձին։
Բայց յիւրաքանչիւր՝ ըստ իւր վիճակին,
գո՛յ զօրութի ինչ՝ յատուկ բնածին.
Վառեա զնշոյլ՝ քոյդ անկականին,
և մի՛ նախանձու՝ մխիր յօտարին։

# Ոչխ՟ն, և Կով։

Զի՞նչ շահ անգործ՝ նստիլ 'ի տան,
և պարարակ՝ լինել զենման։

Շատ աղէկ է՝ հոգնիլ ջանալ,
քան ծուլութեան՝ կորուստն երթալ։

ՃԾԹ. Ոչ՟ մը կը ջանար քաշել զայլը աքաղան մէկ խիստ քարոտ տեղէ մը. մէկ կով մը տեսնելով անոր ջանքը կը խնդար վրան, ու կըսէր. խեղճ ողորմելի ես չեմ տարակուսիր թէ դուն օրը հարիւր անգամ կը ցանկաս իմ վիճակիս, լաւ գիտեմ որ շատ կուզես քինձի պէս սիրելի ըլլալ, և առանց աշխատանքի ուտել։ Երբոր աստնկ կը խօսէր մէկ զոհ ընող մարդ մը հասաւ հոն, և սկսաւ տաճարին ճամբան տանել զկովը, որ սեղանին վրա իր կուռքին զոհ ընէ։ Անատենը եղն ըսաւ անոր, մի ամբարտաւան նայիր հիմա քու վիճակդ. յանկարծ կերեւնայ քեզի ճշմարիտ է թէ ես կը բաղձամ քու վիճակիդ. բայց դուն ալ խոստովան եղիր, որ հիմա շատ կը փափաքէիր զքեզ իմ վիճակիս մէջ տեսնել։

---

Հեշտանէր հարուստ մարդիկ ուրիշը վար զարնելով կը պարծենան իրենց հանգստութեանը վրա, բայց

շինուէն, Թէ որչափ հանգիստ տալին, այնչափ շատ իրենց կը մօտենայ հիւանդութիւնը և մահը. անոր համար աշխատաւոր մարդիկ շատ կապրին և փափուկ-ները շատ կը մեռնին ։

Այսպէս Թուլամորթք՝ ընդ հեշտասիրին,
մերժեն զվաստակ՝ 'ի խնջոյս հրճուելին.
Որով մերձենան՝ 'ի սայր մանգաղին,
խաւարին ասուրց՝ կերակուր պահին ։
Իսկ դու որ գործել՝ ծնար յաշխարհին,
առաքինանալ՝ 'ի սէր արարչին.
Մի՛ անգործ նստիր՝ ըստ հեղգասիրին,
մի՛ պարարանար՝ 'ի գարշ հեշտալին ։

## Աղուէս, և Ձէտ իւր ։

Իւրաքանչիւր՝ իւրն է սիրուն,
զոր ինչ ունի՝ հրճուի 'ի նոյն ։

Պակասաւորն՝ միշտ կը նայէ,
զուրիշն իրեն՝ նման ընէ ։

ձկ. Աղուէս մը կիյնի Թակարդին մէջ. մինչև որ պոչը չի ձգեց, չի կրցաւ անկէ ազատիլ ։ Այս պատճառաւ շատ յուսահատեցաւ. վասն զի տեսնէ անպոչ մէկուն չէր կրնար երևնալ, ամէնքը վրան կըխնդային ։ Այս բանէն ազատելու համար տես ինչ ըրաւ ։ Միտքը դրաւ որ իրեն պէս ընկերներ ունենայ. ժողվեց աղուէսները, ու

թարեկամաբար խորհուրդ տրուաւ անոնց, որ պոչերնին ձգեն. զի աւելի արգելք կուտայ կոսէր, քան թէ զարդարանք. որովհետեւ աւելորդ բեռ մի է. վերջապէս ցըցուց, թէ նայս պոչը ճամբաներն աւելէն 'ի զատ ուրիշ բանի չի ծառայեր: Փուճ տեղը այս ցուցմունքներն ըրաւ. վասն զի բոլոր ժողովքը վրան կըխնդար: Յետոյ մէկ ծեր աղուէս մը դարձաւ իրեն ըսաց. բարեկամ չկյաեմ թէ ի՞նչ կըլլայ մէկ պոչէն անցնելով, բայց զայն գիտեմ ստոյգ՝ որ եթէ դուն ունենայիր քու պոչդ, չէիր ըսեր թէ անօգուտ բան է պոչը:

---

Օրինակ է անոնց, որ իրենց պակասութիւնը և աղքատութիւնը գոցելու համար, կուզեն որ ամէնքն ալ իրենց պէս ըլլան, բայց իրենք անանկ ճամբէն ելլե ի՞նչ օգուտ:

Արդ մի ցանկանար՝ զարդու օտարին,
Եթէ ոչ ունիս՝ սեպհական յանձին.
Գիտութեն համար՝ հոգեկան մասին,
Են բուն վայելչանք՝ իմացականին:
Զի՞նչ շահ բեռնակրի՝ գանձուց աշխարհին,
զի՞նչ իմաստութեն՝ փրավածառին.
Արտաքին է այն՝ ոչ 'ի նա յանկին,
զի գայ և գնայ՝ ըստ բերման աւթին:

## Այգեգործ, և Որդիք իւր ։

Անխոնջ վաստակ՝ հողագործին,
են հանք հողոյ՝ և գանձ անգին ։

Աշխատողին՝ բան չի պակսիր,
շատ կը տրուի՝ գանձ և ոսկի ։

Ճկա. Այգեգործ մը տեսաւ որ մեռնելը մօտ է, կանչեց որդիքներն ըսաց. որդեակք առանց ձեզի իմացընելու իմ խորհուրդս չեմ ուզեր մեռնիլ, որ պատճառի մը համար մինչև հիմա ձեզմէ պահեր էի ։ Գիտնայք որ էգիիս մէջ գանձ թաղեր եմ, չի մոռնաք երբոր ես մեռնիմ դուք ալ եղբի պարտքերնիդ ընելէն ետև փորեցէք որ գտնէք զան ։ Մեռաւ բարի ծերը՝ որդիքը վազեցին էգին և բոլոր հողը մէկ ծայրէն մէկալ ծայրը դարձուցին տակնու վրայ ըրին. բայց փուճ տեղը հոգնեցան և փորեցին հողերը. բան մը չի գտան ինչ որ ըսեր էր իրենց հայրը ։ Անտանկը մտքերնին դրին թէ ծերը խաբեց. բայց մէկէն խելք ըրին որ ճշմարիտ էր անոր ըսածը. վասն զի հողը այսպէս շրջելով անանկ պտղաբեր եղաւ, որ շատ տարի էգին սովորականէն եռապատիկ աւելի բարիք կուտար ։

Ոսկեղէն դար կոչէր հին ատենը, երբոր արդէն սէր ու հաւասարութիւն ունէր, ամէն մարդ երկրագործութեամբ կ'ապրէր. երբոր պէտք ըլլար իրարմէ կը փոխէին ու անանկ հանգիստ կ'ապրէին. ահա այս է գանձը կամ տէֆինէն որ անմիտ մարդիկ հողին տակը կը փնտըռեն։

Զի՞նչ այն գանձ հողոյ՝ թաղեալ 'ի ծոցին,
զի՞նչ արծաթ ոսկի՝ քննականին.
Աշխատանք և քիրտն՝ ժիր հողագործին,
այն գանձ այն ոսկւոյ՝ ծնօղ են ինքնին։
Թէ վաստակք ձեռացդ՝ ընդ քեզ կենակցին,
մթերին քեզ գանձք՝ մօր ոսկեբերին.
Եւ եթէ անգործ՝ ձեռք քո կաշկանդին,
անչափ գանձ մթերք՝ փութով սպառին։

## Երկու շունք։

Որք ընդ տղմուտ՝ վայր թարթափին,
աղտեղանան՝ 'ի բաց մերժին։

Անձայնելով՝ պեղէր ըէրթան,
որ գարշելի՝ այսպէս ըլլան։

ՁԿԷ. Երկու շուն մէկ տուն մը կը պահէին, որ մը մէկը բոլորովին ուրախանալով ըսաւ մէկալին. Եղբայր իմացայ թէ մեր տէրը գեղին տունը պիտի կարգըվի. դուն գիտես որ առանց հարկիքի հարսնիք չըլլար. ուստի թէ որ ինձի մտիկ կընես երկուքնիս մէկ

տեղ երթանք մեր բաժինը առնենք․ մէկ գիտէ թէ ինչ կերակուրներ պիտի ուտենք հոն։ Զայս ըսելով սկսան երթալ մէկ գեղ ճամբայէ մը, անանկ որ հարկաւորեցան աղտոտ և գարշելի ջրերէ անցնիլ․ մինչև բոլոր տիղմ՝ չամոռ եղան, և անանկ հարսնիք գացին։ Իրենք զիրենք դրին պատուաւոր հարսնիք գացողի տեղ․ բայց չարաչար խաբւեցան․ վասն զի երբոր երեւցան հոն՝ ամէնքը պոռացին անոնց աղտոտութենը վրա․ և հարկիքին տեղը չի մօտեցած՝ ո՛րը փայտով ո՛րը ոտքով զարկին վռնտեցին։ Այս կերպով ետ դարձան այս երկու աղտոտ շըները, հոգնած քաղցած և ծեծ կերած։

---

Օրինակ է որկրամոլներուն և գէշ ճամբայ գացողներուն, որ ամենուն գարշելի կըլլան․ մինչև մարդ երեսնին չի նայիր․ այլ երեսէն ալ ինկած են մարդու երեսէն ալ իրենց չար վարքովը։

Գեղեցիկ խրատ՝ մանկանց անփորձին,
որ ընդ տիղմ՝ գնան՝ յանվայել տեղին․
Անդէն մոլորեալ՝ ՚ի նոյն շաղախին,
՚ի մաքուր հոգւոց՝ մերժին հալածին։
Արդ մի՛ տենչանօք՝ վազեր յուտելին,
և մի՛ ուղեկցիր՝ ընդ հեշտասիրին․
Որք գնան ընդ տիղմ՝ աղմով աղտեղին,
և ընդ Թիւրս Թիւրեալ՝ սահին կործանին։

## Ջորի ։

Ունայն պարծանք՝ ոչինչ զօրէ,
բնութեն անդէն՝ զխակն յայտ առնէ ։

Սուտ պարծանքով մարդ չի խոխլի,
Բնութիւն ինչ է՝ կը յայտնըւի ։

Ձկէ· Մէկ գէր և մսոտ ջորի մը միշտ կը պարծենար մանկութեան առենը իր մօրը վը- րա, թէ ձի է, ու ես ձիու զաւակ եմ· բայց ծերութեան առենը երբոր աղւոր կերակուր ջաղացքը, լեզուն փոխեց, և միտքը բերելով չիտակ խոստովանեցաւ թէ իմ հայրս էշ է ։

Հպարտ մարդը իր մեծութենը նայելով ծնունդը բան մը կը կարծէ, ու իր ազգին վրայ կը պարծի, ինչ- պէս հին ատենի կռապաշտ Թագաւորները յաջողու- թեան մէջն որ էին, կըսէին թէ աստուածոց ցեղէն ենք, բայց յաղթութէ մէջ ինչ եղածնին կը խոստովա- նէին ։ Աւելի գեղեցիկ է աստուածային ըսուիլը, քան աստուածային ծնիլը կըսէր Սողոն ։

Այսպէս ինքնապանծք՝ 'ի յաջող կէնս,
Իբր դիւցազուն՝ 'ի հանդէս բազմին·
Բայց երբ ժամանեն՝ 'ի ձախողակէնս,
զինչութիւն ինքեանց՝ խոստովան լինին ։
Մի թեթևութբ՝ խաբիր զերթ ջորին,
կարծելով լինել՝ 'ի վեհից ազգին·

Այս է նշանակ՝ անխորհուրդ անձին,
որ ոչ նախատես՝ լինի վտանգին.
Անօրգէ զաւխթս՝ ալէբեր բաղդին,
'ի վտանգիլ անդ՝ մեղ դնէ նմին:
Դու իմացական՝ վիճակեալ բանին,
կշռեա զվախճան՝ ելից և մտին.
Արա ըստ տեղւոյն՝ ըստ ժամանակին,
զի մի զղջասցիս՝ 'ի փախչիլ աւթին:

## Ծիծառն, և Պատանի:

Մի՛ հաւատար՝ պատիր բանից,
զի մի՛ ծանակ՝ նկուն լիցիս:

Երբէ՛ք հաւատար՝ ամէն ըսողին,
Եղբա՛յ [illegible]՝ [illegible]:

ՃԿԵ. Մէկ ծիծեռնիկ մը շատ փութալով անցած ծովերէն, և գարնան օրերէն առաջ եկաւ այն քաղաքը հասաւ, ուր տեղէն որ ձմեռուան մօտ գացեր էր. մէկ պատանի մը առտու օր մը տեսաւ որ ծիծեռնիկը եկեր է. շատ լաւ ըսաւ ինքիրեն, ահա գեղեցիկ եղանակին կարապետը ծիծեռնակն եկաւ. ուստի կրնամ լաթերս ծախել. զի ասկէ ետև ծանրութիւն կուտան ինծի: Զայս ըսելով գնաց ծախեց լաթերը և ստակն ալ շռայլութեամբ մսխեց կերաւ. բայց շատ չանցաւ խիստ զղջացաւ. վասն զի քանի մը օրէն ետև ցուրտը ետ դարձաւ անանկ սաստիկ

որ պատանին չփոթեցաւ, որ մերկ աղքատ ըլլալով ծիծեռնիկէն առաջ մեռաւ, որ այս գէշ գուշակութինն անոր ըսեր էր ։

---

Օրինակ է ծոծոխամիտ մարդկանց, որ ամէն բանի կապան անձնուրդապաշտութեամբ և չարաչար կը խաբուին ։ Այս առակէն մտած է որ կուզի, թէ մէկ ծիծեռնը գարուն չի բերեր ։

Աւա՜ղ խորհրդոց՝ յեսասամիտ ռամկին,
որ դատի մեծ լինչ՝ բան գուշակողին.
Նա խաբէ զնա՝ յերկդիմի բանին,
սա կարծէ լինել՝ վճիռ երկնային ։
Զի՞նչ քան զայս անբան՝ բան մտացածին,
զիա՞րդ 'ի սոյն՝ խակք հետեւեցին.
Գուշակք և քաղդէացք՝ արբանեակք չարին,
կորուստ են ինքեանց՝ և բարեպաշտին ։

---

## Աստղաբաշխ Մոգ ։

Մի հետեւիր՝ ձայնի մոգին,
զի մի անկցիս՝ 'ի ցանց չարին ։

Մի հաւատար՝ կախարդներուն,
որոնց խօսքն է՝ սատանայ լեզուն ։

ՃԿԴ. Պ՝ռող մը կը մտնէ աստղաբաշխ կախարդի մը տուն, և երբոր կախարդը բազմուն մէջ կեցած իր նրբամիտ մարգարէի պէս

գուշակութիւն կընէր գալիքներուն վրայ, և կըպարծենար թէ աստղերուն նայելով ա-նանկ գիտութիւն ստացեր եմ, որ ամէն բան կիմանամ որ հարիւրաւոր տարի ետև պիտի ըլլան։ Հոն կեցողներուն մէկն՝ որ տեսեր էր տունը մտնող գողը, կտրեց անոր խօսքն ու ըսաց. Ի՞նչ պատճառաւ հաւատամ թէ դուն գիտես գալիքները. ինծի անտարակոյս կե-րենայ թէ դուն և ոչ ներկայն կրնաս գիտ-նալ. բարեկամ՝ թէ որ դուն գիտնայիր բան մը շուտով տուն կըվազէիր գողը փախցը-նելու համար, որ տեսայ տունդ կըմտնէր։

---

Մոգութիւնը հին Արաբներէն ծագած է, որ կը-սէին թէ որևէ աշխարհքիս մէջ բան կըլլայ, աստ-ղերուն դասաւորուիլը, և անոնց զօրութիւնը կը պատ-ճառէ. անոր համար աստղերուն դիրքը նայելով կարծէին թէ գալիքները կիմանան, և խաբէու-թիւներ ընելով կը կողոպտէին ժողովուրդը։

Տես խաբէութիւն՝ բազմադէմ մոգին,
կախարդէ զմիտս՝ անհանճար ռամկին.
Ըստ ինչ տեսանէ՝ որ կան առ տոփն,
պանծայ գուշակել՝ զապառնիս խորին։
Քանիք կուրացեալ՝ հաւատան նոցին,
'ի կուրաց անտի՝ լոյս առնուլ կրթին.
իմաստ ապառնեաց՝ թէ գոյր 'ի նոսին,
ոչ մերկ և աղքատ՝ մնչեալ շրջէին։

## Գլուխ, և Մարդիկ։

Այլոց թերին՝ կայ առաջի,
իսկ սեպհականն՝ յետուստ բերի։

Այլոց պակասն՝ ունինք առաջ,
Մերինն ունինք՝ մեր ետևանց։

ՃԿԷ. Մարդիկ ստեղծուելէն ետև Գլուխ տեսաւ թէ անանկ մեծ մեծ պակասութիւններ ունէին որ չպիտի կրնային համբերել. մինչև որ անոնց ճանաչողութիւնը չի վերցընէր իրենցմէ։ Այս պատճառաւ կըմտմըտար Գլուխ, որ զանոնք այս կարծիքէն հեռացընէ. ուստի ժողվեց բոլոր մարդկային պակասութիւնները՝ լեցուց երկու բերնէն չատ պարկերու հէյպէներու մէջ. յետոյ բաժնեց՝ ամէն մէկինը իրեն տալով վրան բարձուց անանկ կերպով, որ ուրիշներուն պակասութիւնները կախուած էին առնողներուն առջին. իսկ իրենց պակասութիւնները պարկին մէկալ դին ըլլալով ետևնին կախուած մնացին։

Մարդոյս բնութիւն եղեր է որ իր պակասութիւնը չի տեսներ, ուրիշինը միայն կը տեսնէ. անոր համար առակը կըյայտնէ, թէ Գլուխ անանկ ըրաւ. ծոխանակ ընելու թէ այս չար սովորութիւնը բնութիւն եղեր է։

Այս անկարգ դատմունք՝ պակասամոլին,
որ գնէ հանդէպ՝ զայլոց զթերին․
Սուր խուզէ զշիւղ՝ ական ընկերին,
կոյր է և անտես՝ իւրում գերանին ։
Քանի՛ գեղեցիկ՝ լինէր ըստ կարգին,
եթէ զննէաք՝ վրիպանս անձին․
Փութապէս արդեօք՝ զերծ գտանէաք,
՚ի վրիպանաց՝ բարոյականին ։

---

## Հաւ պարարտ ։

Որ քան զչափն՝ ունիլ կրթի,
կորուսանէ՝ և զոր ունի ։

Եղած բարոյն՝ ով գոհ չըլլայ,
ունեցածն ալ՝ ձեռքէն կերթայ ։

Ձկը․ Մէկ հաւ մը ամէն օր մէյմէկ հաւկիթ կածէր տիրոջը․ իսկ անէրը կըսէր որ եթէ երկու չափ գարի տամ, ինծի երկու հաւկիթ կածէ ։ Եւ ասա ժամէ ՚ի ժամ շատ գարի լեցընելով առջին՝ անանկ ստատիկ հաւը գիրցաւ շատ ուտելուն պատճառաւ, որ մինչև շուտ մը սկսաւ քիչ ածել, և յետոյ բոլորովին հաւկիթէն կտրեցաւ ։

---

Շատ մարդ իրեն բաւական բարիքն աւելցընելու համար՝ ուրիշ մաշելով ունեցածն ալ կորսընցուցեր է․ և յետոյ ձանձր ընելով գացեր է աշխարհքէն ։

Անոր համար կըսէ մէկ իմաստուն մը․ թէ ինչպէս որ ծովը գետերով կըլեցուի ու չի յագենար, նոյնպէս ալ շահասէր ագահին սիրտը չի կշտանար:

Այսպէս ոչ յագի՝ բաղձանք անյագին,
ձկան հանապազ՝ յանչափից մասին․
Անսահման գոլով՝ խղճ և տենչ սրտին,
մինչև սպառէ՝ զախրան ընդ գոյին:
Մի՛ տենչար շատին՝ մի՛ չափազանցին,
մի՛ զքեզ մաշեսցէ՝ ցեց տրտմականին․
'Ի ձկանն յանչափին՝ արկածք քեզ չափին,
Նմանեան բնաւք՝ և դու ընդ նոսին:

---

## Դիոս, և Կրիայ:

Մի՛ կար ընդդէմ՝ կամաց վերին,
մի՛ կրեսցես՝ պատիժս յանձին:

Ինչ բանով որ՝ կը մեղանչես,
անոր պատիժ՝ պէտք է քաշես:

Զկեթ․ Օր մը Դիոս կանչեց առջին բոլոր կենդանիներն, որ ամէնը միատեղ տեսնելով, և իրենց տարբերութենը վրայ նայելով զուարճանայ․ որոնք մէկէն հնազանդելով վազեցին եկան արագութեամբ, միայն կրիան ուշացաւ, այնչափ որ կարծեցին թէ չի գայ պիտի․ բայց ինչ և իցէ եկաւ յետոյ հասաւ, և ինչ բանի վրայ որ տրտունջ կար՝ պատճառ բերաւ թէ գալու ատենը հարկ եղաւ իր

տունը ապահով տեղ մը պահել. ահա ասոր համար կըսէր շատ ժամանակ կորսընցուցի, և այսչափ ուշացայ: Բայց այս անմեղադրութիւն անանկ պաղ ընկաւ, որ մէջոց չունեցաւ զօրութիւն մը ունենալու. վասն զի հազիւ թէ սկսաւ խօսիլ տանը վրա, Դիոս վերցուց տունը կռնակը դրաւ, որ կուզէր թէ առանց ուշանալու հնազանդ ըլլայ իրեն: Ասկէ եղաւ որ պակասութիւնը պատժելու համար, մինչև հիմա իր տունը վրան առեր կըտանի:

---

Ինչ մեղք որ գործէ մէկը՝ անոր պատիժը կը քաշէ. ինչպէս կրիան իր տունը պատճառ բերաւ անհնազանդութեանը, անոր համար կռնակին առաւ զայն. այսպէս ուրիշները պատճառ կը բռնեն թէ զանկէփէր ենք, պէտք է շահինք, ու ալ զաւակնին յետքերէն կառնէ, և երբեմն խեղճ աղքատ կընէ. ասանձ է ամէն բան:

Այս կշիռ արդար՝ արդարադատին,
ոչինչ վրէպ կայ՝ 'ի կշռոյ նորին.
Ցոր ինչ ոք յանցեաւ՝ զծանրութեն բեռին,
գնէ 'ի Թիկունս՝ այն յանցաւորին:
Ուսի՛ր յառակէս՝ անլուր անբանին,
կոչողին ձայնի՝ ոչ հետեւողին.
Պատկառ կալ կամաց՝ վերին կոչողին,
գնալ զկնի՝ ձայնի անբաւին:

# Եղջերու, և Այգի։

Որկոր անյագ՝ կորուստ բազմաց,
կարապետէ՝ 'ի չար արկած։

Անհարգ մերը՝ շատ ուտելուն,
ան օր բերան՝ շատին գլխուն։

ճհ. Մէկ եղնիկ մը որսորդներուն ձեռքէն փախչելով եգին կը մտնէ և հոն տերևներուն մէջ կը պահվի. անանկ որ՝ որսորդները զայն կորսնցուցին ետ դարձան։ Իսկ եղնիկը տեսաւ թէ վտանգէն ազատեցաւ՝ սկսաւ որթը ուտել կրծել և տերևներին ուտել, որ զինքը պահեր էին։ Այս եղաւ իր թշուառութեանը պատճառ. վասն զի այնչափ տերևները կերաւ, որ բացն եղաւ երեցաւ. մինչև որսորդները ետ դառնալու ատենը տեսան զայն, հասան վրան մէկէն բռնեցին մեռցուցին։

---

Օրինակ է անոնց որ ուտելէն 'ի զատ ուրիշ բան չեն մտածեր, և կարծեն թէ որչափ աւելի ուտեն աւրախանան այնչափ շատ կապրին, բայց չգիտեն թէ անանկ աւելի շուտով կը կորսուին։ Կրնէր մեկ ճշմարտութիւն մը թէ մարդս կերով ուտելով խմելով կը մեռնի, քան ալ շատ հոգ ընելով։

Գործ է յետսամիտ՝ որկորածեալին,
ուտել և ըմպել՝ ըստ տենչման սրտին.
Որով վաղվաղէ՝ զկորուստ անձին,
մուլթոյ ժամանէ՝ ժանեաց օրհասին.
Սակայն ողջութին՝ գոհար է անգին,
թէ ոչ խամրեսցի՝ յանկարգ հեշտալին.
Գնայք բարեխառն՝ զգաստ յուտելին,
մի միայն անգիւտ՝ գիւտ է կեցողին:

## Երկրագործ, և Աղուէս:

Որ չար խնդրէ՝ մերձաւորին,
նոյն չար դառնայ՝ 'ի ծոց նորին:

Ուրիշներուն՝ որ չար կուզէ,
չարը կուգայ՝ իրենք կը գտնէ:

ճկա. Մէկ երկրագործ մը ցանեց իր արտերը, և բոլորը զարմանալի լաւ բուսաւ. երբոր կընայէր որ հնձէ ցորենը, դրացիններէն մէկն որ զինքը կատէր ըսաւ մտքովը. ես անանկ արգելեմ ցորենիդ ժողվելն, որ դուն ալ տեսնես. ուստի առաւ վառած կերոն մը կապեց աղուէսին պոչը, որ բունին մէջ բռներ էր իր արտին քովերէն: Յետոյ տարաւ զայն հետը մէկալին արտին մօտ, և հրելով հասած ցորեններուն մէջ ձգեց. կուզէր որ այս կերպով բոլոր ցորենները մոխիր դարձընէ. բայց տես ինչ պատահեցաւ: Աղուէսը առաջ երթալու տեղը, Տան

բայէն ետ դարձաւ որ իր բունը երթայ. և որովհետև չէր կրնար երթալ առանց անցնելու իր տիրոջը արտէն, որ չարութին կուզէր ընել. ահա վազեց մտաւ անոր արտերուն մէջ ու կրակը տըւաւ. և այսպէս բոլոր չարութինը՝ չարութին ուզողին գլխուն եկաւ, որ տեսաւ իրեն բոլոր ցորենը մոխիր դարձած իր խորամանկ չարութէն։

---

Նախանձոտ չար մարդիկ իրենց պէս մէկը կը գըտնեն. ու կընայեն որ անոնք ուրիշին վնաս տան. բայց ամէն մարդ ըրածը կը գտնէ։

Չարակամ խորհուրդ՝ դաւաճանողին,
դուն գործէ կարճել՝ զօտարաց բարին.
Բառնայր զարեգակն՝ թէ էր 'ի ձեռին,
զի մի ծագեսցի՝ 'ի տուն ընկերին։
Մի՛ չարակնութե՛՝ ատեր զբարին,
և մի նախանձու՝ փնտռեր նմին.
Զոր ինչ սերմանես՝ զնոյն հնձեսցես,
թէ չար թէ բարի՝ գտանես զմին։

## Ձիադարման, և Ձի:

Վա՛յ որ այլոց՝ փոքրն գտանես,
զքոյդ մեծ չարիս՝ առնես անտես:

[illegible]
[illegible]

ՃՀԷ. Պարոնի մը պէտք եղաւ իրեն ձին, որ քաղաքը Թողուցեր էր, և հրամեց ձին նայօղ սպասաւորին, որ իր եղած տեղը բերէ: Այս հրամանն որ գնաց անոր ձին առաւ մեկնեցաւ անկէ. երբոր երկուքը միատեղ կանցնէին տիրոջը դաշտին մէջէն ծառան տեսաւ, որ ձին գլուխը կախեր դալտուկ խոտ կուտէր. գո՛ղ աւազակ ըսաւ զարնելով անոր՝ չգիտե՞ս որ այս խոտը մեր տիրոջն է. ասկէ խոտ ուտելը իրեն դէմ է: Պատասխան տըւաւ ձին. դուն որ ինձի կէս ափէն աւելի գարի չես տար որ ինձի համար գներ է, չգիտե՞ս որ այս գարիին կէսը անոր կելնի, և գողնալովդ մեկալ կէսը ինչպէս սովորութիւն ես ըրեր, ես կը վստահ-ամ տեսքով, դուն մեզի պատճառ կըլլաս: Ահա այս շատ մեծ միտս է մեր տիրոջ քան թէ զայն որ երեսս կըզարնես: Ուրեմն դադրէ ինձի նեղութիւն տալու. և թէ կուզես հաւատարիմ ըլլամ անոր, նախ դուն սկըսէ ինձի բարի օրինակ տալ:

Օրինակ է անգամ ծառաներուն, որ մինչ իւրեանց մեծ անիրաւութիւններ կ'ընեն տէրերուն. իրենց մեծ չարիքը չեն տեսներ, ու պզտի բանի վրա կը գայթակղին։

Շահասէր ծառայն՝ անհաւատարիմ,
այսպէս կենակցի՝ ընդ ծառայակցին.
Կարծէ հատանել՝ զապրուստ ընկերին,
ցուցանել զայն՝ յիւր անյագ փորին։
Սոցա դատաստան՝ ոչ շատ յերկարին,
որ զրկողութեամբ՝ շահիլ նկրտին.
Երբ համար խնդրի՝ 'ի գալ դատողին,
պապանձին յայնժամ՝ տալ պատասխանին։

## Ագռաւ, և Թռչունք։

Պճնեալ բարեօք՝ ո՞չ քննող հոգւոյն,
մի՛ զվաղանցուկ՝ պատիր մարմնին։

Մի՛ զարդարեր՝ մարմինդ ունայն,
այլ գեղեցկէ՛ հոգիդ միայն։

ՃՀԷ. Ագռաւը օր մը զարդարվեցաւ փետուրներով, որ ժողվեր էր զանազան թռչուններուն բուներէն. և եկաւ անոնց մէջ որ փառաւորի. իսկ թռչուններն աչքի բերանը զըւարճացան զանազան գունով փետուրներուն վրա. բայց երբոր մօտանց նայեցան և ճանչցան անոր խորամանկութիւնը, ամէնքը բարկացած մէկէնմէկ վրան վազե-

ցին , և շատ վըրցըցելով ոչ միայն իրենց մե-տուրները այլև իրեններն ալ փեթթաեցին : իսկ ազգաւը այսպէս փեթթաւած ամօթով մնաց՝ անանկ որ վաղեց պահվեցաւ , ալ չի համարձակեցաւ անկէ ետև երևնալու նաև ազգաններուն առջին :

---

Օրինակ [illegible]

Զարդ գեղանկար՝ զարդ բանականին ,
Ներքին բարութիւնք՝ են հոգւոյ մասին .
Կրթողականօք՝ չափակցեալ բանին ,
գերապայանծ փայլի՝ իբրև լուսածին :
Դու որ ճոխացար՝ գանձու իմաստին ,
մի ցանկար զարդու՝ ըստ մարմնականին .
Պատկեր քո անգիւտ՝ մնաց անբաւէին ,
մի նմանեսցի՝ 'ի զարդ օտարին :

## Ուխտաւոր, և Կարապ։

Մինչ ճանաչես՝ զյարգ բարուցն,
մի՛ ըքաներ՝ զայն հեշտագոյն։

Երբ [illegible]
[illegible]

Ճշմ. Ուխտաւորը կը բռնէ մէկ կարապ մը կարծէ թէ սագ է. երբոր վիզը պիտի կըտրէր, սկսաւ կարապն երգել. խակ մարդը ձայնէն հասկըցաւ, և շուտով դանակը անդը դրաւ։ Աերման կարապ կըսէր սիրելով՝ իմ հաճոյ չէ որ ես քեզ մեռցընեմ, որովհետև այսպէս գեղեցիկ կերգես։

---

[illegible]

Կարապ նշանակ՝ է մաքրասիրին,
որ յոգւոյ հանէ՝ 'ի դալ օրհասին.
Անձկայ ըքանել՝ զվիճակ մահածին,
զնալ մտանել՝ յանմահ վիճակին։
Զանձն մաքրափայլ՝ ըննել ըստ նմին,
ըծակցիլ սրբոց՝ գրկել զքաղին.
Մերժել զձոխութի՝ զչնորհս բաղդին,
թևթև թևանալ՝ 'ի քաղցր անձկալին։

## Հաւ, և Կատու ։

Մի՛ լսեր ձայն՝ չարասիրին,
զի մի՛ չարիք՝ քեզ նիւթեսցին ։

Շատ մի՛ հաւտար՝ նենգաւորին,
որ փէշ ընէ՝ իրեն բաժին ։

ՃՇՆ. Մէկ հաւ մը անզգուշութեամբ ուտելով թունաւոր կենդանի մը կը հիւընդնայ, երբոր թևերը վար ձգած կերթար՝ կատուն մօտեցաւ իրեն և քաղաքավար ձայնով մ՚ ըսաւ, որդեակ չի գտամ քեզի ճար մը ըռընանալու ։ Հրամմերես ըսաւ հաւը, մէկ խիստ ապահով դեղ մը գտայ որ դուն միայն կրնաս ընել. ի՞նչ է ըսաւ կատուն դեղդ սիրելի. պատասխանեց հաւը, թէ այս դեղն է քու մէկ դի քաշվիլդ, այնչափ հեռու՝ որչափ կարելի է ։

---

Շատ կեղծաւոր մարդիկ կան որ անոյշ լեզուով կը մօտենան, և խորհուրդ կուտան որ կերպով մը իրենց յաջողին. բայց անանկներէն հեռու փախչելու է ։

Այս կարեկցութիւն՝ դաւաճանողին,
չէ՛ վասն ընկերին՝ այլ յօգուտ անձին.
Զի խորհուրդ և կամք՝ նենգաւորի չարաց,
ծանօթից անգամ՝ չար առնել յանձին ։

Քեզ խորհրդակցիլ՝ մի՛ թողլ տար վասն
զի մի՛ խարդախել՝ մուտ լիցի նմին.
Որչափ հեռի կայ՝ 'ի քէն թշնամին,
այնչափ ապահով՝ մնաս 'ի կային։

---

# Որսորդ, և Հովիւ։

Չէ արութիւն՝ 'ի տան պանծալ,
'ի ժամ մարտի՝ վատթարանալ։

Ի՞նչ շահ տան մէյ՝ մեծ մեծ խօսիլ,
Բանի ատէն՝ վախող դեղնիլ։

Ճշմ. Որսորդ մը տաքցած վեր վար կերթար կուգար, երբեմն անտառը երբեմն դաշտը կը վազէր. Ինչ կը փնտըռես՝ ըսաւ իրեն հովիւ մը, որ աւանկ խռոված կը տեսնեմ զքեզ: Պատասխանեց, թէ մէկ առիւծ մը անցած օրեր իմ խիստ լաւ շունս կերաւ, կը փնտըռեմ՝ որ գտնեմ սորվեցընեմ իրեն, թէ որուն հետ կըխաղայ: Իմ հետս եկո՛ ըսաւ հովիւը, ես քեզի կըցցընեմ անոր բունը ուր տեղ որ կըգտնըվի: Որսորդը գոյնը փոխելով ըսաց. բարեկամ ժամանակը ուշ է, ես ալ հիմա խիստ հոգնած եմ չեմ կըրնար հոն երթալ. բայց վաղը կանուխ կուգամ կաղաչեմ որ տանիս զիս հոն: Հովիւը մէկալ օրը շատ սպասեց. բայց մէյմալ չերեւցաւ որսորդը:

Օրինակ է փլոր մարդկանց, որ ամէն բանի վրայ մէծ մէծ կըխօսին. բայց տեղն որ գայ ընելուներին կը խաղին. անոր համար կըսուի թէ մէծ խօսողին ձեռքէն բան չի գար. և մէծ քար նետելը՝ չի զարնելու նշան է։

Այսպէս վատ մարդիկ՝ յորժամ են 'ի տան,
առաջի իւրոց՝ լինին բազմաբան.
Բայց երբ 'ի հանդէս՝ գործոց մերձենան,
զերթ կնամարդի՝ վատթարեալ դողան։
Քէզ լիցի խրատ՝ այս իմաստ և բան,
մի առ օտարաց՝ լինիր բազմաբան.
Զի բանք ընդ գործոց՝ երբ ոչ միանան,
ծանակ ամենից՝ մնաս զրաբան։

## Էշ բեռնաբարձ։

Միտք յիմարաց՝ որչափ խորհին,
միշտ մնասու՝ ծանրաբեռնին։

Յիմար մարդուն՝ գործքին վրայ,
յիմարութիւն՝ նշան կըլլայ։

ՃՀԷ. Մէկ էշ մը աղ բարձըլված ջուրը մըտաւ, և շուտով վրայի աղը հալեցաւ. քանի մը օրէն ետև սպունգ տանէր բարձըլված երբոր կանցնէր նոյն ջրին քովէն՝ վազեց ջուրը մտաւ, որ բեռի ծանրութիւնը թեթևնայ, ինչպէս առջի անգամն եղեր էր, բայց հակառակն եղաւ. վնզի սպունգը ջուրը ծծեց,

*և բոլորն ուռեցան. ուստի անանկ լըռւն բռնը ծանրըցաւ, որ չի կըցաւ դիմանալ ընկաւ ջըրին մէջ խըղդըվեցաւ ։*

---

Անխելք մարդը որչափ աւելի ջանայ խելք բա-նեցնել, այնչափ անշնորհք բան կընէ. շատ աղէկ է որ իրեն ընծան ընէ, աւելի բան չի մտածէ։ Անոր համար կըսուի, թէ շատ լաւ է խելացի մար-դուն հետ քար կրել. քան թէ անխելքին հետ փի-լաւ ուտել։

*Այս բերմունք մնաց՝ անխմաստ ռամկին,*
*որ կարծէ խորհիլ՝ զօգտակարն անձին.*
*Իմաստնոց է այն՝ խորհիլ զբարին,*
*առնել ըստ տեղւոյն՝ և 'ի դէպ ժամին։*
*Ջանամ վառ պահել՝ զիմաստ բնածին,*
*և մի՛ մԹագներ՝ ըստ աւանակին.*
*Որ ոչինչ ունի՝ կըռել զառնելին,*
*առնել կամ՝ Թողուլ՝ ըստ բերման առԹին։*

## Արծիւ նետահար ։

Ով որ յանկարծ՝ գլխի չարեաց ,
երբ նախատես՝ է ապաւռնեայ ։

Թէ մտմըտան՝ այնպէս գործէս ,
չոփ ճշաաէ՝ տէղ խաղատէս ։

ՃԺԷ. Արծիւը մէկ քանի փետուր կը փետ-
տէ իր վրայէն վար կը ձգէ . որսորդ մը կը
ժողվէ զանոնք , յետոյ նետին ծայրը կանցը-
նէ , և անով նոյն արծիւը կը զարնէ ։ Մեռ-
նելու ատենը կը կանչէր արծիւը . վայ ինծ
ի սատանկ խեղճ ողորմելի կը մեռնիմ , թէ
որ անխոհեմութեամբ իմ մեռնելուս պատճառ
ըլլայի ։

---

Անխոհեմութեն պտուղն է , որ ըրած բանին վեր-
ջը չի մտածելով մահը յետոյն կը կանչէ ։ Շատ
անգամ մէկ անխոհեմ գործք մը անանկ բան կընէ ,
որ ամբողջ մէկ տէղ գոր՝ չէր կրնար ընել ։ Ա-
ղէկ պէտք է նախ ամէն բանին վերջը մտածել , որ
պատելէն ետք անխելքութեամբ չի ըլլայ պորտաք-
ելը ։

Այս առասպան՝ անխորհուրդ մտաց ,
զվախճան գործոց՝ ոչ մտառողաց .
Որով և ինքնին՝ զթևերս կենաց ,
կարէ հատանէ՝ 'ի այսր մանգաղաց ։

Քանի՛ անխոհեմք՝ գնին յայս արկած,
վաղվաղեն զմահ՝ հանդիպիլ անձանց.
Որ ոչ նախատես՝ լինի ապառնեաց,
մաշի զրաւի՝ 'ի նոյն ապառնեաց։

---

## Ուրուր։

Որ զկուրն տայ՝ այլոց ցանկայ,
և յերկոցունց՝ վրէպ մնայ։

Այլոց բանին՝ տուն մի ցանկար.
Նայէ՛ քուկինդ՝ ըլլայ յարմար։

ՃՀԹ. Կըլավի թէ ուրուրը առաջ հիմակվան ձայնէն շատ լաւ ձայն ունէր. բայց թէ ինչ դիպուածով անանկ անուշութենէն աւանկ խիստ անհամ ձայն եղեր է, ահա պատճառը այս թռչունին անխոհեմութենէն է կըսեն։ Օր մը կը տեսնէ, որ ձին խրխնջալով հայն կը հանէ, միտքը կը դնէ ուրուրն որ ինքն ալ անոր պէս ընէ. բայց որչափ աշխատեցաւ անոր ձայնը հանելու, չի կրցաւ։ Գէշն այն եղաւ, որ ուժ տալով նմանցընելու համար ձիուն ձայնին, իրեն ձայնն ալ աւրեց. և անանկ խառնըւեցաւ, որ միայն մէկ զարհուրելի աղաղակ մը կըլավի։

---

Օրինակ է անանց, որ իրենց ունեցածին չեն հաւնիր. կուզեն ուրիշին նմանիլ. և անով անէ-

ցածնին ալ կը խոշորցընեն, և անպիտան կըլլան ։ Շատ լաւ է իր ունեցածը կատարելագործել, քան թէ ուրիշին ետևէն իյնիլ ։

Այս անմտութեան՝ բերք են տկարին,
որ այլոց ցանկայ՝ նմանիլ յատկին ·
Թողու զյատկութիւն՝ պատշաճեալ անձին,
ունիլ նկրտի՝ որ չէ սա բերին ։
Ջանա՛ կատարել՝ քուդ յատուկ ներքին,
զանազան ձիրք՝ իշխանականին ·
Մի՛ ցանկար այլոց՝ այլք քեզ ցանկասցին,
նմանիլ բարուդ՝ վսեմագունին ։

## Առիւծ, և Որսորդք ։

Իմաստ հանճար՝ մտաւորին,
յաղթէ ուժոյ՝ վեհ առիւծին ։

Մարդուս զէնքը՝ իրեն խելքն է,
անով կրնայ՝ աշխարհք յաղթէ ·

ՃՅ. Առիւծը մէկ քանի կենդանիներու գըլուխ եղաւ, և անոնց հետ միատեղ որսորդներու դէմ ելաւ, որ ծեծկըվի ։ Երբոր մօտ գնաց՝ որսորդները նետեցին իրենց նետերը առիւծին վրայ, վիրաւորեցին ։ Առիւծը հասկըցաւ, որ վէրքը խորունկ է, բարեկամներ ըսաւ ետ դառնանք · եթէ մեր թշնամիները հեռուէն սաստիկ կը զարնեն · հապա աւելի որ մօտենանք ի՞նչ չեն ըներ մեզի ։

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

Տե՛ս զիա՛րդ ընձկի՝ հզօր ամեհին,
յանզէն հանճարոյ՝ իմացականին.
Զի՛ միտք և ոչ զէնք՝ տիրեն աշխարհի,
Թէ իմաստութ՟՝ զինեալ է բանին:
Մի՛ վստահանար՝ 'ի քո ոյժ բազկին,
մի՛ 'ի վէգ բերեր՝ ընդ գիտնականին.
Քանզի իմաստունք՝ թէև փոքրոգի,
փշրեն հանճարով՝ զեղջիւր գոռոզին:

## Առիւծ, Կինճ, և Անգղ:

Կինճ և առիւծ՝ երբ մաքառին,
անգեղք խնդան՝ յուտել զնոսին:

[illegible]

ՃՀա. Առիւծն ու խոզը անանկ իրարու վը-
քա կատղած էին, որ կռուելով մէկզմէկ կը
փետտէին. իսկ անգղ թռչունները ու-
շադրութ՟ կըդիտէին անոնց կռիւը, և ի-
րենց մէջ կըսէին, թէ որ շիտակը նայինք
այս յաղթութիւնը մեզի համար պիտի ըլլայ.
վ՟ զի ատոնք իրար չպիտի թողուն, մինչև որ
մէկը գետինը չիյնի. ուստի կամ առիւծը և

կամ՝ խոզը հարկաւ մեզի կերակուր կըլլան ։ Այս խօսքը պարապ չելաւ. վն զի իրաւի առաջուն աւելի մեծ որս մը որսային որ չէին կարծեր. որովհետեւ առիւծը մեկէն պատռեց զխոզը. խոզն ալ զինքը պաշտպանելու համար վիրաւորեր էր զայն. ուստի խոզը մեռնելէն մէկ քանի օր ետեւ առիւծն ալ մեռաւ իր խոցէն. եւ այսպէս անգեղները յափշտակեցին երկուսն ալ կերան ։

---

Օրինակ է ոխակալ եւ հակառակ մարդկանց, որ իրար խածնելով հասցնեն գլուխնին. եւ անոնց կոր-ծանելուն խաղաղասէրները կը շահին՝ անգղին ախ-պարալային պէս ։

Ահա անհամբոյր՝ կիրք գազանային,
ածէ զատելիս՝ ժանեաց օրհասին.
Որով եւ անգեղք՝ ընակք յեթերին,
հանել կեր ինքեանց՝ կան 'ի տես մարմնին ։
Այս է ատելեաց՝ գեղեցիկ բաժին,
խածատեն զերեարս՝ յինքեանց կոտորին.
Մերժեն հալածեն՝ զսէր ընկերին,
մերժին անանել՝ զսէր արեգին ։

## Ո՛չ կուաքարձ :

*Զի՛նչ շահ տանել՝ գանձ և բազքն,*
*մնալ վատթար՝ թափուր մտքին :*

Մէ՛ պարծէնար՝ թէ ունէս գանձ,
այն շուտ կէրթայ՝ կը մնայ բայ :

ՃՃԲ. Մ՝էկ էր մը վրան կուռք մը բարձած կանցներ բազմութեան մէջէն, և ժողովուրդը երեսի վրա ընկած մեծ յարգութեամբ երկրպագութիւն կընէին կուռքին : Իսկ էշը՝ այս պատիւն իրեն սեպելով սկսաւ հպարտ քալել ծանր ծանր, և գլուխը բարձրացընելով ականջները վեր տնկել: Ասոր ըրածը մէկը տեսաւ կանչեց իրեն. պարո՛ն աւանակ՝ դուն կըկարծես թէ մեր յարգութիւնը արժանի ես եղեր. քիչ մը սպասէ՛, մինչև որ կուռքը վըրայէդ վար իջնի, որ կըտանիս. գաւազանը քեզի կըհասկըցընէ, թէ յարգութիւնը որ մենք կընենք քուկի՛նն է, թէ անորն է :

---

Օրինակ է ճոխաւորներ հպարտ մարդոց, որ դրսէն պատիւ տեսնելով՝ ինքզինքը բան մը կը կարծէ. բայց ... կը տայ ինչ որ է: Փիլիսոփաները ճարտասանութեամբ՝ արդարեւ բարի ըլլալ, որ կարգաւ կերթայ. ձայն տալոր որ ... ութիւն կը հպարտանայ :

Անբան ցանկութիւն կոյր փառասիրին,
կարծիս տայ լինել՝ 'ի վեհից սակին.
Այլ չէ մեծութիւն՝ այն բեռն արտաքին,
բուն ներքին օժիտք՝ են յոգւոյ մասին։
Մի ցանկար փառաց՝ այն անցաւորին,
որ գայ և գնայ՝ իբրև բեռնակրին.
Այնպէս զարդարեա՝ զներքին բանին,
զի վեհ մնասցես՝ 'ի գնալ բաղդին։

## Գայլք, և Ոչխարք։

Չէ պարտ անսալ՝ խրատատուին,
երբ խրատտու՝ է թշնամին։

Զուր խրատով՝ անզգամին,
ծառա չի նայիր՝ բարեկամին։

ՃԾԶ. Օր մը գայլերն ըսին ոչխարներուն. բարեկամք իրաւ որ չենք կրնար հասկընալ, թէ ի՞նչպէս դուք կրնաք համբերել անարգանացն, որ ձեր շները ամեն անգամ ձեզի կընեն. չխասակն որ նայինք. ի՞նչ ծառայութիւն կընեն ձեզի այս անզգամները ձեր խումբին ետևէն գալով. բայց եթէ վռնտացընել միշտ և խածնել հազար նեղութիւն տալով։ Մեր խօսքը մտի՛կ ըրէք, և շուտով զանոնք վռընտեցէք. ի՞նչ կը վախնաք. մինթէ դուք բաւական քաջութիւն չունի՞ք, որ ձեզ մինակ պաշտպանէք, և ձեզի վնաս տուողը հալածէք։ Այս խօսքիս վրայ ոչխարներն իրենց

զիրենք խիստ զօրաւոր կարծեցին, ու շուտ մը վազեցին շներուն ճամբայ տըւին. բայց շուտով զզջացան. վա՛ զի գայլերը տեսան, որ շները հեռացան, մէկէն վազեցին ոչխարներուն վրայ, բոլորը պատառեցին:

---

Ով որ թշնամոյն խօսքին հաւտայ, և բարեկամին կըհեռանայ, այս ոչխարներուն պէս կըլլայ. վասն զի մէկն որ բնութէ չար է, ուրիշին ու բարի կըր-նայ ընել, և ու բարի խրատ կրնայ տալ:

Այսպէս չարք պատրեն՝ զմիտս անմեղաց,
երբեւ բարեկամ՝ ձայնեն լսելեաց.
Կարեկից լինին՝ խրատու բարեաց,
մինչեւ ձգեսցեն՝ 'ի թակարդ իւրեանց:
Մի լսեր ձայնի՝ մարդկելոյզ չարին,
մի՛ քեզ մերձեսցի՝ գաղան թշնամին.
Քանզի չարակամք՝ միշտ չարիս կամին,
մի՛ անկանիցիս՝ 'ի նոցունց բարին:

# Գետ, և Աղբիւր ։

Մի՛ ապերախտ՝ ըլլիր բարեաց,
զի մի՛ հասցեն՝ քեզ տոյժք չարեաց։

Անշնորհութիւն՝ բարերարին,
կրոյ պատժոյ՝ մեծի պարտի ։

Ձմռ. Գետը դէմ ելաւ իր գլխուն, կամ աղբիւրին, և անարգելով կըսէր, թէ երբոր կը մտածեմ իմ լայնութիւնս ու խորութիւնս, և կը տեսնեմ՝ թէ իմ ջուրս աղբիւրներուն ջրէն որչափ մեծ և որչափ շատ է, փառք կու տամ որ ես գետ եմ. բայց դուն ողորմելի աղբիւր՝ ի՞նչ ես միայն թէ մէկ բարակ ջրէ թել մը, որ արեգակին մէկ ճառագայթը կրնար ցամքեցընել՝ թէ որ ապառաժները, ուր տեղաց որ կը վազես, քեզ չի պահէին արևէն։ Պատասխանեց աղբիւրը. ըլլիր՝ իրաւ քեզ շատ կը վայլէ զիս անարգել, դուն որ առանց ինծի ոչինչ կըլլայիր. ես թող չըլլամ, նայինք քու մեծութիւնդ, և ձկներդ ի՞նչ կըլլան ։

---

Աներախտը ի՞նչ բարիք որ գտանէ՝ լաւ չէր ճանչնալ, խորհելով թէ իրենն է. անոր համար երբեմն բարիքին ալ զուրկ կը գտնէ, և պատճառ կըլլայ, որ մարդ մարդու բարերարութիւն չընէ ։

Դժնդակ դատմունք՝ ապերախտ վաւին,
անգամնել բերի՝ իւր բարերարին.
Որով և զրան՝ լաւ զարժանին,
Թէ ես եմ պատճառ՝ քեզ ապրատին:
Արդ մի մոռանար՝ ըստ օրինակին,
զերախտիս այլոց՝ որ քեզ արարին.
Գրեա քանդակեա՝ յարձան քո սրտին,
զի աշխարհ համայն՝ զայն միշտ ընթերցցին:

## Կին, և Ոչխար:

Մի տնակոխ՝ ընկեր հեզին,
որ հպարտակ՝ կայ քոյդ ձեռին:

Եթէ իշխան՝ ես տորեւին,
Զինչ նեղութի՝ չի տալ խեղճին:

ՃՃԵ. Մ՚եկ կին մը կըխուզէր իր ոչխարին բուրդը, և անանկ գէշ կըկտրէր, որ կաշին ալ միատեղ կըքերթէր: Իսկ ոչխարը կաղաղակէր, թէ կաղաչեմ՝ եթէ իմ կաշիս կուզես՝ զիս մսածախին խրկէ, և թէ բուրդս կուզես՝ խուզողը բերել տուր որ կտրէ:

Օրինակ է անողորմ մարդկանց, որ անանկ տանջէին կուշխատցընեն ծառաներն, որ հոգին կը հանեն. Բայց թէեւ պակասաւոր ըլլայ ծառան պէտք է մեղմութեամբ մէկ տալ իրեն աճնոտ, աղէկօք իրն պէտ պէտք է կըծառայէին մեր տիրոջը:

Ա՛յսպէս են վարմունք՝ գաժան տիրուհեաց,
կափեն կեղեքեն՝ զաղախինս իւրեանց.
Մոռանան թէ գոյ՝ և տիրող իւրեանց,
մորթեզերծ առնեն՝ այսպէս չարատանջ։
Արդ մի խոշտանգիչ՝ լինիր անմեղաց,
մի 'ի քեզ առցի՝ գործ գառն գանձոց.
Ոչ մարդոյ է այն՝ այլ բարք գազանաց,
ընկճնել և մաշել՝ զենթարկեալս անձանց։

## Հովիւ, և Այծ։

Մի՛ բարկութեամբ՝ հարկաներ զոք,
զի ոչ հարուած՝ բառնի վիրօք։

Կէչի խօտօյը՝ հարդ էն ալլէր,
և վէրէ վէրէտը՝ էն էօտէլէր։

ՃԾԶ. Հովիւ մը բարկանալով զարկաւ այծին գլխուն անանկ սաստիկ՝ որ մէկ եղջիւրը կոտրեցաւ. բայց շուտով զղջացաւ ըրածին վրայ, ու կաղաչէր այծին, որ տիրոջը բան չըսէ։ Պատասխանեց այծը. ով թըշուառական յիմար. ես թող անանկ բարի ըլլամ, որ մեր տիրոջը բան չըսեմ. իսկ այն աչք չունիմ, չիմ տեսներ թէ մէկ եղջիւրս պակաս է։

Բուրճլուլէրը հարթը իւնէր ընէ՝ վէրմէ էն հար_ծէր, անոր համար սուզուն իր աղձայ ըրածին վրա.

մարդուն կընմանի, որ բարկութեան մէջ ատեն ի
ընէ, որ երբեք չի ըլլայ։ Զոր ինչ է, որ
րէն վրայ չի կրնար ինչպէս ընել՝ կընէ ...

Տարապարտ ցասումն՝ բարկասիրտ անձին,
իբրև բոց հրոյ՝ վառի 'ի սրտին.
Զզգօնութիւն ապաշաւ՝ հեռանալ նմին,
խայթեն խռովեալ փութով զայն հոգին։
Արդ մի բարկուն՝ գործեր զանիրաւն,
յորժամ մաղձն սրտին՝ եռայ 'ի լերդին.
Բարեխառն եղեալ՝ 'ի բարկանալն,
զի մի զղջասցես՝ 'ի սպառիչ բանին։

## Նաւապետ։

Այր նախատես՝ ոչինչ զղջայ,
երբ յետ յաջող՝ զչարէն խիթայ։

Արթուն մարդիկ՝ միշտ պատրաստ կան,
վտանգն որ գայ՝ առաջ կըլլան։

ՃԼԷ. Երբոր հովը յաջող և ծովը հանդարտ էր, նաւապետ մը գնաց իր նաւը նայելու. խարիսխը ընկերը տեղը հաստատեց, չուանները պատրաստեց. և վեր վար կերթար կուգար առագաստներուն քովերն, ու ամէն բանին զգուշութիւն ընելով կընայեր։ Ճամբորդներէն մէկը զարմանալով ըսաւ. տէր ինչ պատճառաւ այսչափ շատ կը հոգաս. այս ըրած հոգդ ով որ տեսնէ, կարծէ թէ

մօտ ենք վտանգին · ահա ծովն ու հովը մեր վրա կըծիծաղին · դուն ինչու համար կըվախնաս ։ Հիմա բանէ մը չէմ վախնար ըսաւ խելացի նաւապետը · բայց գալիքներուն վրա միշտ կըվախնամ · վ՟ զի բան չի մնացած ուտելիս կրնայ մէկ ալէկոծութիւն մը ելլէ ։ Կաղաչէմ ըսէ , եթէ յանկարծ փոթորիկ մը հանի վրանիս , մենք անանկ անպատրաստ ո՛ւր կերթանք ։

---

Խոհեմ մարդու պէտք է որ յաջողութեան մէջ ձախող դէպուածներէն վախնալով զգոյշ կենայ , և ձախորդութեան մէջ առանց յուսահատելու յաջողութեան · ինչպէս նաւորդ կամ թաւալու խաղցողները կընեն · եթէ յաջողութեան մէջ շատ բարձրին , կամ ձախորդութեան մէջ խոնարհին՝ միշտ խաղը կորսնցընեն ։

Տես զնաւորդ խիթայ՝ միայն խոհականին ,
զձախողակէն՝ 'ի յաջող ելին ․
Քանզի յանկայուն՝ շրջի 'ի ծովին ,
'ի կիտէ 'ի կէտ՝ փոփոխականին ։
Ծով է այս աշխարհ՝ ծփեալ երերին ,
ալէբեր հողմունք՝ 'ի նոյն փոթորկին ․
Արթուն կա՛ց զգաստ՝ ըստ քաջ նաւուղղին ,
զի մի սուզեսցի՝ նաւ տխրականին ։

## Խաղախորդ, և Ոստիկան։

*Այլոց անդէպ՝ գործոց համբե՛ր,*
*Թէև լինին՝ քեզ վշտամբեր։*

Ով որ այլոց՝ կը համբերէ,
Ընդհէն իրէն՝ ժողոր համ բերէ։

*Ճշմ. Մ՚էկ խաղախորդ մը դրացի եղաւ ոստիկանի մը, որ տէրութեան մարդ ըլլալով՝ կ՚ համբերեց անոր կաշիններուն գարշահոտութեանը. մինչև դատաստան կանչեց, և կուզէր որ պարտաւորի դրացնութենէն հեռանալու. իսկ դրացինը շատ պատճառներով անանկ լաւ պաշտպանեց զինքն, որ դատաստանը հեռուն ձգել տըւաւ։ Սակայն ոստիկանը սորվեցաւ դէշ հոտին, անանկ որ շատ ցաւեցաւ խարճած տըկին վրայ, որ վուճառըը դատաստան կանչեց։ Ուստի անկէ ետև համբերեց դրացինին, ամենևին տրտունջ մը չըրաւ։*

---

Ով որ տրամադրէն կամ ընկերէն մէկ ներողութիւն կը տեանէ, պէտք է ինքը տալու. Թէ ինքն ալ [illegible] պահանջողութիւն ունի, որ ուրիշը կըներէ. և այսպէս իրարու պահանջողութեան փոխելով միայն ասպրին կը վայլէ. վասն զի ամէն բան կանցնի, բայց ընդունին խոսը [illegible] կըմէն։

Այսպէս կարծամիտք՝ փութով զայրագնին,
'ի վերայ թեթեւ՝ բանից ընկերին.
Բայց յետոյ իբրեւ՝ 'ի միտս լինին,
տեղի տան կրից՝ սիրով կենակցին։
Արդ մի զայրանար՝ ընդ գործ օտարին,
մի յարուցանէր՝ կագ ընդ դրացին.
Զի ամէն լեղի՝ սիրով համեմին,
և սովորութեամբ՝ անսովորք դիւրին։

## Շուն պայտառի։

Անգործ հանգիստ՝ և քուն յերկար,
ախտից լինին՝ մննդարար։

Գործել ապէն՝ ծայլն է թմբած,
հայն որ փէանէ՝ ջէրւէ ապայ։

ՃԺԹ. Պայտառին նալպանդին շունը սովորութիւն էր ըրեր որ միշտ պառկէր կը քնանար սալին քով (որ է Էօրս.) Թէպէտ պայտառը շատ անգամ երկաթ կը ծեծէր սալին վրա, բայց շունը ամենեւին չէր արթըննար։ Իսկ ընդ հակառակն, երբոր պայտառը գործքը կը ձգէր կերակուր ուտելու կերթար՝ շուտ մը շունը սեղանին ձայնէն կարթըննար, ու վեր կը ցաթկէր, մէկէն սեղանին կը վազէր։

Օրինակ է ծանուցանէ. ըստ հարդ ջայ որ գործ-

քի աղէն Թմբի կը ճայ. Բայց կերակրի աղէն անալ արթուն է, որ ասրէլի Բան չի Թողուր. ասոր է Թէ հանգիստն ու փառքը շատը արթուն Բնութիւնը կը Թողէն անպիտան կընեն, հապա մարդուն ինչ ընընէր, որ հանգիստ կըունենայ ։

Այսպէս վատթարեալ՝ յետսամիտ ծուլին,
եղծեալ զարթնութիւն՝ ննջէ քուն խորին.
Որով կարգն ուղիղ՝ համբեալ բնածին,
արթուն կայ զգաստ՝ միայն յուսակին ։
Մի՛ քնափութեամբ՝ շիջցի լոյս բանին,
և մի ուտելեօք՝ Թմբրանալ յանձին.
Քանզի հեղգ գնացք՝ զբազումս արկին,
'ի լայն որովայն՝ կորստականին ։

---

## Բազէք ։

Կագ և կռիւ՝ կռուասիրաց,
յօգուտ կարգին՝ բարեսիրաց ։

Անգղաձիներն՝ երբ կըխօսին,
Բարի մարդիկ՝ հանգիստ ունին ։

ՃՂ. Երբեմն բազէներն իրենց մէջ խռովութիւն ունէին, որ անդադար կըկռուէին իրարու հետ. և ասով ուրիշ Թռչունները հանգիստ էին անոնց ձեռքէն ։ Իսկ միամիտ աղաւնիները տեսնելով անոնց Թշնամութիւը՝ բարեկամութիւն ընելու համար՝ մէջերնին մտան հաշտեցուցին. բայց շուտով զղջացան,

կը զի անզգամները հաշտածնուն պէս մէ-
կէն սկսան հալածել ուրիշ Թռչունները և
աղաւնիները · անանկ որ ամէնեքին անոնց
հանգիստ չէին տար · ուստի աղաւնիները
ցաւելով կըսէին , Թէ շատ աղէկ էր ատոնց
մէջ միշտ պատերազմ ըլլալ , քան Թէ խա-
ղաղութին :

---

Ամէն տեղ հաշտութի ընելը աղէկ չէ · երբեմն
կըլլայ որ հաշտութենէն ընելով աւելի մեծ շառ կը
ծագի · որովհետև գէշ մարդիկ իրենց մէջ երբոր
կռուին , բարեպաշտները քիչ մը հանգիստ կը մնան ։

Անհանդարտ գրգռիչք՝ միշտ կռուիլ բերին,
Եթէ ընդ միմեանց՝ Թէ ընդ օտարին ·
Յորժամ խածանեն՝ զիւրեանց զմարմին,
բարեսէրք անվէր՝ և հանգիստ նստին :
Արդ մի կցորդիր՝ ընդ գործոց նոցին,
զի մի այն հարուածք՝ քեզ փոխաբերցին ·
Դժնեայ անզգամք՝ երբ միաբանին,
խռովէն զարդար՝ զընկեր դրացին :

## Հովիւ, և Ոչխար ։

Թէ երախտիք' ճանաչէին,
արջառք ոչխարք' ոչ զոհէին ։

Անիրաւն որ' գէւ բան ըրնէ,
Ջծ բարաւթի' ղայն կը ոեղէ ։

Ճղձ. Հովիւ մը գաւազանով սաստիկ կը զարնէր ոչխարին. Ես քեզ ըսաց ոչխարը բուրդ և կաթ կուտամ, բարութէ 'ի զատ ուրիշ բան չեմ ըրած քեզի' ապերախտ. դուն ինչու սաստիկ միշտ գէշութեն կընես ինծի։ Պատասխանեց հովիւը, թէ ապերախտ դուն ես, որ զիս չես սեպեր. մի զի իմ աղէկութեն քու կեանքդ քեզի բաշխեր է. որով հետև ամէն վայրկեան կեանքդ իմ ձեռքս է երբոր ուզեմ կրնամ վերցընել ։

Անիրաւ մարդիկ ինչ ազնիւանի որ ասրիմին փե. նէն, միշտ ուիրէնէ արծանի կը համարին, և էրի իրէնէ ասրիմին գէւթի մը ըրնէն ջծ էրաիտի կըոեղէն. բայց ճշ դաստապանն որ բայլն իրէնց ։

Այս գործ է և բարք' ժանտ ապերախտին,
կուփէ հարկանէ' երախտաւորին ։

Իբրեւ դատաւոր՝ դառնանայ նմին;
Թէ քո կեանք և մահ՝ ունիմ 'ի ձեռին։
Բայց գայ ժամանակ՝ քննել զերկոսին,
պսակ պարծանաց՝ պահի անմեղին.
Արդարք աստ տանջին՝ և անդէն հրճուին,
զրկօղք աստ հրճուին՝ և անդէն տանջին։

## Արծիւ, և Կաչաղակ։

*Բանք և զրոյցք՝ վարըս մարդկան,*
*ծածկեն յայտնեն՝ միանգամայն։*

Մարդուս խօսքը՝ իրեն խօսքն է,
Ինչ ըլլալը՝ այն կըյայտնէ։

Զղ՟. Թռչունները պարտաւորեցին արծիւն որ զիրենք կառավարելով թագաւորէ. անոր անոնց հասկըցուց, թէ իրենցմէ մէկը պէտք է օգնական ըլլայ. որ իրեն աշխատանքին մէկ մասն ալ այն ընէ, որ ինքը թեթեւնայ։ Այս բանիս համար կաչաղակն ելաւ անոնց մէջէն եկաւ արծիւին ծառայութիւն ընելու. որուն առջին դրաւ, չէ թէ միայն մարմինը թեթեւ և յարմար է շուտով կատարելու, ինչ որ իրեն հրամէ. այլև ունի մէկ զարմանալի յիշողութիւն մը և բարակ սուր միտք մը։ Դարձեալ յաջող է՝ արթուն, և աշխատաւոր. երբոր անհամար ուրիշ շատ կատարելութիւնները պիտի մանրամասն պատմէր՝ արծիւը մէկէն կտրեց անոր խօսքն ու-

Ըսաց . այսչափ կատարելով ըլլալովդ գու ինձի շատ յարմար ես . բայց գէշն այս է, որ խիստ շատախօս կերևնաս . վ՜ զի կաս կած եկաւ, որ չըլլայ թէ երթաս՝ ամենուն իմացընես իմ պալատիս մէջի եղած ծածուկ բաները ։ Սուտի շնորհակալ ըլլալով անոր շուտ մը ճամբեց ։

---

[illegible]

Այսպէս շատ արանք՝ 'ի գովեստ անձին,
յերևան ածեն՝ զիւրեանց զթերին .
Կարծեն թէ բանիւ՝ ցանկալի լինին,
այնու տաղտկալի՝ յաւէտ բոլորին ։
Արդ մի ինքնահաւան՝ պանծար առ վեհին,
մի զքեզ առարկեր՝ յաստիճան վերին .
Զի որք վերանան՝ հարկիւ վայրբերին,
և ինքնահաւանք՝ նանրանան խոտին ։

# Կին, և Մահ։

Մի՛ հաւատար՝ կանանց ձայնին,
որ փոյթ կոչեն՝ զմահ անձին։

Կանանց ձայնը՝ թէև լի շարժէ,
որ թէև բանով՝ մահ կը կանչէ։

Ճղչ․ Մէկ հիւանդ մը երբոր պիտի մեռնէր, կնիկը յուսահատելով կը պոռար, և լալով կըսէր․ ո՛վ մահ հասիր ինծի, կսկիծս վերջացուր․ մի՛ ուշանար եկո՛ արեւս կարճեցուր․ երանի էր, թէ իմ կեանքս վերցընէին ընկերոջս տայիր։ Դարձեալ կըսէր, ո՛վ մահ ինչու՞ կուշանաս, ես քեզի կըսպասեմ․ ես քեզ կը փափաքիմ կուզեմ։ Ահա՛ ես՝ ըսաւ մահը՝ երեւնալով անոր․ ի՞նչ կը խնդրես ինծմէ։ Կնիկը տեսաւ, որ մահն իրեն կը մօտենայ․ պատասխանեց դողալով, ո՛չ կապաչեմ, առանց երկնցընելու ընկերոջս ցաւերը՝ շուտով հոգին առ, որ վերջանայ հիւանդութիւնը։

---

Որչափ որ մահը մահկանացու բնութէն ատելի է, այնչափ ալ մօտ է ամենուն․ որ ամէն դիպուածով խօսքայ կը հասնի․ ուստի ո՛չ ալ պէտք է մահը կանչել, և ո՛չ ալ մահէն փախչիլ։

Զի՞նչ հզօրագոյն՝ քան զմահ ասեն,
որ նկուն առնէ՝ զանյաղթ կորովն,
Լուծանէ զսէր՝ անքակ լծակցին,
մինչ յղեւ զմահ՝ յիւր քաղցր անձկալին.
Բուռն է սէր հզօր՝ յիւր ապարինչն,
բայց 'ի մահուանէ՝ լուծանի հեշտին.
առեալ արկած՝ զգայականին,
վեր 'ի վայր առնէ՝ զարուեստ աշխարհին.

## Գող, և Աղքատ:

Որ գնէ զաչս՝ յինչս օտարին,
տայժ և չարիք՝ ինքեան գլխին:

Ով որ այլոց՝ ուրիշն կ'առնէ,
Իրենն գլխուն՝ նոյ կը բերէ:

Ճշգ. Գիշեր մը գող կը մտնէ աղքատի մը տուն. դրանը բացվելու ձայնէն կարթըննայ աղքատն, ու անանկ սոսկալի ձայն կը հանէ, որ բոլոր տունը թունդ կելլէ: Իսկ գողը չի կրնար հոն մնալու. այնպէս կը փախնայ, որ առանց բանի նայելու ձգէ վրայի լաթն ու կը փախչի անկէց շուտով: Եւ այսպէս վնաս եղաւ անոր, որ բան առնելու եկեր. և շահ եղաւ անոր, որ կարծէր թէ բան պիտի կորսընցընէ:

Անիրաւութեան, և գողութեան ետևէ եղողներ

Գէթ արդար վաստակին խորամանկներէն եթէ մոխիր դարձեր են․ վասն զի անիրաւութիւնը կրակի պէս կերէ ասոր որ կը մտնէ։

Այս է չար գողոց՝ աւազակողին,
զրկել 'ի շահուց՝ իւր սեպհականին․
Քանզի անխրատք՝ աստ եւ անդ զրկին,
'ի կրկին վիճակ՝ աղքատ եւ մերկին։
Առ քեզ 'ի խրատ՝ բան զաւակողին,
մի ցանկար ընչից՝ փոքու եւ մեծին․
Զի գողօնք գողոց՝ ոչինչ չար բերին,
եւ զարդար վաստակս՝ յաճախ դարձուցին․

---

## Մ՝արդ, եւ Գ՝անձ։

Արդ մի մերժեր՝ զուխթ բաղդին,
որ ոչ գտանայ՝ յիւր շրջանին։

Բարին ծուլին՝ բաղդ որ բացվի,
չի էգ ըլի գող՝ երեւոր խանչնի։

Ձզէ․ Խիստ հարուստ մարդ մը ճամբուն վրայ գանձ կը գտնէ․ բայց անանկ մեծութեն մէջ էր, որ ամենեւին չէր երեւակայեր թէ օր կուգայ, որ կարօտ կըլլայ այն գանձին որ գտեր էր․ այս պատճառաւ եւ ոչ զինքն արժանիս եպեց, որ ծռուի գետնէն գանձը վերցընէ․ ուստի ձգեց գնաց։ Ժամանակ մը անցաւ ասոր մէկ նաւն ընկղմեցաւ բոլոր բանովը, որ շատ ծանրագին ապրանքով բարձու-

ցեր էր ։ Եւ մէկ վաճառական մը բացն ելաւ ու այս հարուստին շատ ապրանքը փճացուց ։ Յետոյ կրակ ընկաւ տունը բոլոր բանով մոխիր դարձուց ։ Դատաստանի մը մէջ ալ իրաւունքը կորսնցնելով շատ բանէ ելաւ ․ մինչև այս բաներով աղքատցաւ մարդը ։ Անատենը միտքը բերաւ ձգած գանձն ու վազեց հոն որ առնէ ․ բայց բանը բանէ անցեր էր ․ վասն զի երբոր առաջ այն տեղէն քանի մը քայլ հեռացեր էր , մէկ բան կարօտ մարդ մը անկէ անցնելով տեսեր էր գանձն , ու առեր շուտով փախեր էր ։

---

Հարուստ մարդիկ կարծեն , թէ միշտ անանկ պիտի մնան ․ չգիտեն թէ ստուերի պէս կը փախչի հեթայ ․ այսօր մէկին քովը մէկալին քով կը դառնի ․ եթէ լսնին հոգևոր բարիք , անկէ շատ մը [illegible] ։

Այսպէս է խորհուրդ՝ անմիտ փարթամին
կարծէ միշտ ինքեան՝ դաշնակցիլ բաղդին
Այլ աւաղ փառաց՝ դիւրափոփոխին ,
որ փախչի գնայ՝ նման ստուերին ։
Մի վստահանար՝ յանցաւոր ոսկին ,
զգանձս իմաստից՝ ժողովեա յանձին ․
Զի 'ի հոլովիլ՝ ձախողակ անուին ,
գանձք իմաստութե՝ 'ի քեզ ճոխասցին ։

## Նապաստակ, և Կաքաւ։

Որ ընդ այլոց՝ արկած խնդայ,
Նովին չարեօք՝ պատժի և նա։

Երբ ուրիշին՝ կը հասնի չար,
Ծաղ ու կատակ՝ ըրէ մի խնդար։

Ճղչ. Մէկ նապաստակ մը կը բռնըվի որսորդին որոգայթին մէջ. երբոր անօգուտ ակըը աղդին անդին կը զարնէր որ ազատի. կաքաւը անեսա զայն և ծաղր ընելով կանչեց. բարեկամ ո՞ւր են ոտքերդ. որոնց վրա կը պարծենայիր, թէ շուտ կը վազեմ. ահա գեղեցիկ առիթ զանոնք գործածելու. զգո՛յշ կեցիր որ չի կորսընցընես։ Վաղէ՛ քա՛ջ եղիր. ջանա որ զիս անցնիս այս դաշտիս մէջ չորս անգամ ցատկելով։ Երբոր սանկ կը խնդար նապաստակին վրա, շուտով ինքն ալ անոր նմանն եղաւ. վասն զի սանկ անհոգ ծիծաղելու ատենը մէկալին թշուառութեը վրա, մէկ բազէ մը անեսա զայն, վրան հասաւ յափշտակեց։

---

Մարդկային բնութիւնը կարեկից ըլլալով դէպ ի իրարու օգնելն և մխիթարելն ախորժելի դառնալէ. ով որ թշուառութեան ուրիշին ուրախաց ծաղր կը խնդայ, կոպտութեան նման կը համարուի։

Այս չարախնդաց՝ գործ վրէժառուին,
ըղնոյն պատուհաս՝ պատճառեաց անձին.
Զորինչ ոք ցանկայ՝ լինել օտարին,
Թէ բարի թէ չար՝ հանդիպի նմին։
Կարեկցիլ պիտոյ՝ է բանականին,
մեղմել զդառնութիւն՝ վշտաց ընկերին.
Դու մի՛ ոտնակոխ՝ լինիր թշուառին,
զի մի՛ այն աղէտք՝ քեզ փոխաբերցին։

## Ծեր ամուսնացեալ։

Յորժամ ծեր ոք՝ զառամանայ,
մտօք տղայոց՝ ՚ի նոյն դառնայ։

Ծերը դառնայ՝ մանուկ կըլլայ,
Երբ լի ճայլած՝ բան կը հոգայ։

Ճշէ. Մ՚էկ մարդ մը չափահաս եղաւ, ու ամէննեւին մտքէն չէր անցներ կարգըլլիլ։ Երբոր ատենը հասաւ մէկին չէր հաւներ որ առնէ. մինչեւ տարիքն առաւ։ Իսկ ծերութեն ատենը տեսաւ որ տարիքին շատութենէն կնիկներուն ծանրութիւն կըլլայ, կամեցաւ անոնցմէ մէկ կին մը առնել։ Վերջապէս գրեթէ այլ խուփեր էր մէկ մանկահասակ կէնճ կնկան մը հաւնեցաւ, եւ զինքն անանկ զօրեղ հարուստ եւ մեծատուն ցըցուց, մինչեւ կինն ալ հաւանութիւն տըւաւ առնելու. բայց շատ չանցաւ զըզջացաւ մարդը՝ վասն զի պառակին տանը ձեռնդրէքն որ

եղաւ՝ ֆըր էմ լռածին պէս հասկըցաւ ծերին ըրած սխալմունքը, սկսաւ ողբալ. վա՜յ դըլխուս՝ կըսէր զարմանալով. ի՞նչ պէտք էր ինծի կապըլիլ անանկ բանով մը, որ հիմա ամէնէն հարկաւոր չէ ինծի. երբոր կը վայլէր այս բեռը տանել՝ անաանը չուզեցի, հիմա ի՞նչ խելքով կուզեմ։

---

Խորագ է անանց, որ ապէնով աշխարհս ըն մտնէր, և երբոր փարթեւնին խաւնեն ներգ ներգ ձորյաւթէ ռէջ ԽԾնէնով Խրէնց հասալին ըն ձայլածը ներնեն։ Հաստն մորքաս ըրած անխարգաւթիը Խիսափ գէշ ներըլայ ներանն ։

Այսպէս 'ի մանուկ՝ փոխի ծերունին',
գործէ զանպատշաճս՝ խրուամ հասակին.
Զի թէ միտք արթուն՝ չիցէ 'ի նմին,
ալիք ծերութե՛՝ ոչ 'ի շահ բերին։
Ալիք ծերութե՛՝ ասի 'ի գրին,
ըն իմաստութե՝ հասակ բարեծին.
Ջանա ծերանալ՝ 'ի սոյս իմաստին,
զի մի՛ գործեսցես՝ անվայելս անձին։

## Առիւծ, և Որսորդ :

Մի՛ հետևիր՝ անկարգ բերման,
զի մի՛ նկուն՝ լինիս խոտան :

Անկարգ բանէն՝ հեռու կենաս,
որ չըր ճահին՝ յետոյ ընկնաս :

Ձղը̄· Առիւծ մը կուզէր որսորդին աղջիկն առնել· ուստի վազեց հօրը տունը խնդրեց որ տայ իրեն· իսկ որսորդը տեսաւ թէ այս սոսկալի գազանին հետ գլուխ չելլըլիր, և որովհետև կըվախնար անկէ, չէ ալ չի կըրցաւ ըսելու· ուզեց խորամանկութ̄ բան մը տեսնել : Առիւծին ըսաւ, թէ դուն իմ աղջիկս կուզես, խիստ լաւ· միայց որ քու բաղձանքիդ չես կրնար համնիլ· վասն զի աղջիկս կը վախնայ, թէ կամ ակռաներդ, և կամ եղունգներդ զինքը կը պատռեն· ուստի պարոն առիւծ, քեզի լաւ կըլլայ՝ եթէ կամենաս ակռաներդ հանելէն ետև եղունգներդ ալ փրցընենք· անատենը ամէն ուզածդ շատ լաւ կերպով կը կատարվի : Իսկ առիւծին միտքը ցանկութ̄ կուրցած ըլլալով չի հասկըցաւ գլխուն գալիքն, որ թշնամուն ձեռքը պիտի մատնըվի· թողուց որ ակռաներն իրմէն հանեցին, ասանկ եղածին պէս վրան թափեցան շները, որսորդը, և աղջիկը՝ զարկին մեռուցին :

Խրատ է երիտասարդաց, որ անհարթ ցանկութեան հետևելովն հաւատան և իրենց վերջին հարուածոցնէն։ Ասանկ եղաւ անյաղթելի Սամսոնը. որ քսան տարի աշխարհք դողացուց անհնար յաղթեց. բայց յետոյ կնկան ձեռքը մատնեցաւ, ու այնպէս կոյր երկաթներով կապած թշնամիներուն մէջ մաշեցաւ։

Այս անկարգ բերմունք՝ մոլեկալ առուծին,
զինաթափ նկուն՝ արար զամեհին.
Այն դողացուցիչ՝ ծովու ցամաքին,
տես զկարգ ընկճի՝ բանիւ նենգողին։
Ո՛վ քանի՛ հզօրք՝ այսպէս մոլեգին,
՚ի ձեռն կանանց՝ յերկաթ կաշկանդին.
Որոց կեանք որև՝ փայլէր ՚ի գահին,
ապա մաշեցան՝ ՚ի թախիծ բանտին։

## Գիտուն, և Ռամիկ։

Յանժամ գիտունն՝ միայնակ կայ,
յորժամ ռամիկք՝ գնան առ նա։

Գիտուն մարդը՝ մինակ կենայ,
Երբ անխելք մը՝ քովը կերթայ։

Ճղճ. Փիլիսոփայ մը մինակ նստած խուցին մէջ միշտ կը մտմտար. օր մը գեղացի ռամիկ մարդ մը տեսաւ զայն մինակ՝ շատ զարմանալով ըսաց իրեն. իմ խելքս չի հասնիր թէ ի՞նչ պատճառաւ մինակութիւնը կը սիրես այսչափ. երդում ըլլայ քեզի, որ ես հազար

տարի այդ բանը չէի ընդունէր ։ Երեսն անդին դարձընելով պատասխան տըւաւ փի. լիսոփան ․ Թէ դուն խիստ դիւրին կընդու. նէիր, Թէ որ գիտնայիր Թէ քուկին հոս ըլլալդ, և քեզի պէս մարդկանց իմ քովս գալը որչափ ինծի ներողութին կուտան, զի ան ատենը մինակ կը մնամ։

---

Օրինակ և խրատ է գիտնականաց, և քահանայից․ որոնց պէտք է միշտ քաշուած ըլլալով գրոց հետ խօ. սակցիլ․ Բնաւ պէտք աշխարհական տաճիկներըը զբօսանա. լով բան ըսեն, մտիկ ընելու չէ ։

Արդ իմաստասէրք՝ երբ կան առանձին,
ընթերցմամբ գրոց՝ քաղցր կենակցին․
Զի միայն իմաստն՝ է ճարակ մտաց,
ընկեր կենակից՝ բարեկամ անգին ։
Փախիր յամբոխէ՝ խառնաղանճ ռամկին,
յառանձնակ վայրի՝ խօսիլ ընդ գրին․
Քանզի աշակից՝ աստուծոյ ասին,
որ ըսեն 'ի բանս՝ իմաստնոց յառին ։

# Նախանձոտ, և Ագահ։

փառք ցանկալի՝ նախանձառութին,
պատիժ չխառն՝ է ընկերին։

Նախանձորդին՝ մնալ խնդում,
է ոսրինին՝ հինգն ու ըրկում։

Բ. Նախանձոտն ու ագահը միատեղ Դիոսին ոտքն ընկան աղաչեցին, որ իր բարերարութիւնը յայտնելով անոնց շնորհք մ՚ ընէ. իսկ Դիոս կը նայէր որ աւելի զանոնք պատժէ, քանթէ բարի տայ իրենց. այս կերպով զիրենք պատուհասեց։ Ըսաց Նախանձոտին թէ նախ դուն բան մը խնդրէ, և ապահով եղիր որ ըրած խնդիրքդ պիտի առնես. բայց տալ գիտնաս որ ես քեզի ինչ որ տամ, մէկալին անոր կրկնապատիկը պիտի առնէ. ուրեմն որոշէ միայն ի՛նչ կուզես։ Նախանձոտը չի կրցաւ որոշել, և անանկ բանի մը ցանկալ, որ կրկնապատիկն ըլլայ ընկերին. ուստի ըսաւ որ իր մէկ աչքը հանէ։ Դիոսն ալ ուզիլը դատաստան տեսնելով զարկածին պէս մէկը միաջէնի ըրաւ, մէկալը կոյր. մէկը մէկալով պատուհասեց։ Այսպէս նախանձոտը կը մխիթարվէր ուրախանալով թէ ես մէկ աչքս կորսնցնելով՝ ագահին երկու աչքը փորել տուի։

Նախանձոտ մարդը անանկ կը խորանայ, որ միայն կը նայի ընկերոջը վնաս մը գայ՝ որչափ մեծ վնաս իրեն ըլլայ հոգը չէ, վասն զի ատելին թշնամու-թիւնը կը մխիթարէ :

Ահա կոյր բերմունք՝ կոյր նախանձողին,
նախանձու վնաս՝ բերէ նախ անձին.
Յանձն առնու հանել՝ զաչքն իւր անգին,
զի բարձցէ զարև՝ յաչաց ընկերին :
Զի՞նչ դժնդակ կիրք՝ քան զայս մահածին,
որ մահ և չարիս՝ ծնանի յաշխարհին.
Մի՛ քեզ մերձեսցի՝ այս կիրք մոլեգին,
զի մի՛ պատժեսցիս՝ 'ի շանթէ վերին :

## Մարդ՝ որ շնչէ զցուրտ, և ջերմ։

Զի՞նչ դառնաշունչ՝ քան զայն բերան,
որ ցուրտ և ջերմ՝ շնչէ համայն :

Անիծած է՝ անանկ բերան,
որ կը խօսի՝ խաբէբայ բան :

մա. Խիստ ձմեռվան մէջ մէկ ճամբորդ մը ցրտէն պաղելով կը մտնէ գեղացիի մը տուն, և կաղաչէ որ իրեն տեղ տայ ընդունի : Գեղացին սիրով ընդունեց զինքն, ու տարաւ իր խուցը հանգչեցուց . Մէկէն շատ կրակ վառեց, յետոյ սեղան դրաւ և տաքտաք ապուր մը հանեց իրեն : Բայց կրակ վառելու ատենը երբոր կերթար կուգար, տեսաւ որ ճամ-

բորդը մատղըներուն վրան շունչ կուտար ։ Հարցուց երեն թէ ի՞նչ կը նշանակէ ըրածդ ։ Պատասխանեց, թէ մատղըներս ցրտէն պաղեր են, տաքնալու համար վրայէն կը շնչեմ՝ ինչպէս որ կը տեսնես ։ Քիչ մը անցնելէն ետև տեսաւ, որ ապուրին վրան ալ անանկ կը փչէր, բայց թէ ապուրը տաքցընելու համա՛ր կը փչես ։ Չէ ըսաւ, հապա պաղեցընելու համար ։ Կրկնեց գեղացին զարմանալով, թէ ո՛յ դէմ կըլլայ, թէ որ երկար ժամանակ իմ տունս պահեմ ասանկ մէկ մարդ մը, որուն բերնէն թէ՛ տաք կելլէ թէ՛ պաղ ։ Զայս ըսելով դուրս ըրաւ խուցէն, շուտ մը դուռը գոցեց ։

---

Օրինակ է խաբեբայ մարդկանց, որոնց բերնէն մէկ ներհակ բան կելլէ տաք պաղ խառնած ․ երբեմն մէկ բանին լաւ կըսեն երբեմն գէշ ․ երբեմն հա երբեմն չէ, որ նշան է անհաւատարմութեան և անհաստատութեան ։

Այս յաւէտ պատկան՝ հանգստարանին,
որ սուտ ճշմարիտ՝ կրէ 'ի լեզուին ․
Նա՛ զի ջերմ և ցուրտ՝ և է՛ քաղցր լեղին,
ընչէ միապէս՝ յոր և դէպ բերին ։
Ո՜վ քանի՛ անդէպ՝ քեզ բանականին,
տխրական պատկեր՝ գրելոյդ էին ․
Արդ մի՛ ներհականն՝ այլ բարի բարին,
շնչեա՛ ընդ բերան՝ քաղցր սէր ջերմին ։

## Նաւորդք , և Նաւապետ ։

Զանա՛մ յաղթել՝ ալեաց բաղդին,
զի քեզ հասցէ՝ աջ հզօրին ։

Փորձանքի մէջ՝ դուն ուշխափէ ,
որ ապաւինած ու՝ քեզի օգնէ ։

մէ. Մէկ նաւ մը կը բռնադատէր ալէկոծութե, մինչև կուգայ ցամաքը կը զարնէ. և հոն տակը բացուելով երբոր ծովուն ալիքներէն պիտի ընկղմիր, մէջի եղած ճամբորդները սկսան պոռալով յուսահատիլ. որոնք կրնային իրենց ազատութե ճամբան մտածել. սակայն վախը զիրենք անանկ չփոթեց, որ ամէն բան թողուցին, ու միայն թեւերնին բացած երկինքէն օգնութի կը խնդրէին ։ Իսկ Նաւապետը լաթերը հանելով կը պոռար անոնց. թէ ո՛վ բարեկամք դէշ բան չէ թեւերնիդ Դիոսին վերցնել. բայց այս վտանգիս մէջ աւելի աղէկ կըլլար, որ ծովուն վրա շարժէիք թեւերնիդ ։ Զայս ըսելով ծովը նետուեցաւ, ու լողալով ցամաքն ելաւ. և անտանկէնը նայեցաւ, որ ծովուն մէջ ընկղմեցան ճամբորդները նաւուն հետ միասին. որոնք ուխտ ընելէն ՚ի զատ՝ ուրիշ ճար չուզեցին փնտռել ։

Խրատ է անոնց, որ հարկաւոր գործքերնին ըն

յետէն, ու աղօթքի եղեր կըլլան, որ իրենց բանը մէջ յաջողէ սաանց աշխատանքի. սակայն մինչև որ մարդնալ չաշխատի, մէջ ալ յաջողէր ։

Անզգամ պղտամանք՝ անգործ պղերգաց,
ոչինչ ժամանեն՝ էին լսելեաց․
Զի թէ ոչ շարժին՝ ձեռք վաստակողաց,
մի՛ ակնկալցին՝ նպաստ 'ի բարձանց ։
Այս հատուցումն՝ հեղգասիրտ վատաց,
որ անշարժ գնան՝ 'ի մահու արկած․
Ջանա յարաժամ՝ մինչ 'ի շունչ կենաց,
ընդդէմ կալ ուժոյ՝ բաղդին կոհակաց ։

## Չար դրացի ։

Իժ չարաթոյն՝ կին անզգամ,
խայթէ ընաւից՝ որպէս գազան ։

Չար կնիկը՝ խայթօղ օձ է,
անէն մարդու՝ վնաս կը բերէ ։

մէ․ Անզգամ կնիկ մը միշտ բան կը փնտը-ռէր, որ փուճ տեղը դրացիններուն հետ կռիւ ընէ ։ Անոնք ալ գացին էրկանը գան-գատ ընելով ըսին, Թէ այս ի՛նչպէս ամբա-րիշտ կնիկ ունիս, որ միշտ կը կռուի կը պօ-ռայ առտուանց մինչև իրիկուն խռովութեն մէջ է, երանի թէ մեզի մէկ ճար մը գտնէիր, որ կարենայինք այս չար կնկանը հետ վար-ուիլ ։ Ան ըսաւ էրիկը խամ՚ ճար կուզէք վար-

վերլու. եա անանկ չարաչար կապվեր եմ, որ չէ միայն ցորեկը, այլև գիշեր ցորեկ ուզեմ չուզեմ պիտի քաշեմ:

---

Խրատ է անոնց, որ եթէ անզգամ իցեն, և ըստ դրացիի հանդիպին. ժամ պէտք է համբերել, և ժամ հեռու փախչիլ: Փիլիսոփայ մը տեսաւ բու-կաւերտ կնիկ մը, որ կրակ կը տանէր՝ ըսաց. ահա կը տեսանեմ կրակ, որ առնի յետոյ կրակ. Բայց առաւել կերէ տանող կրակը, քան թէ յետին կրակը:

Զի՞նչ այլ դժնդակ՝ քան զանզգամ կին,
ընտանի գազան՝ իւրոց և օտարին.
Մերժէ հալածէ՝ զընկեր դրացին,
'ի տանէ 'ի տուն՝ լեռնէ 'ի լերին:
Փախի՛ր յերեսաց՝ այն չարալեզուին.
մի՛ պատասխաներ՝ կռուարար բանին.
Սա միակ պատկեր՝ է բելիարին,
որ հեղու զթոյն՝ 'ի սիրտ բոլորին:

---

## Ձկնորսք, և Ձկունք:

Խոնարհք յաղբից՝ վաղ ճողոպրին,
եղուկ մեծաց՝ եթէ անկցին:

Փոքրին բանը՝ խիստ դիւրին է,
Մեծն որ իյնի՝ բանը գէշ է:

ՄԴ: Ձկնորս մը իր թօռը ծովը նետածին պէս շատ ձկներ մէկէն բռնըվեցան մեծ ու

պղտիկ միատեղ. և ամէն մէկը կը ջանային որ Թօսին ծակերէն ելլէն փախչին. բայց ամէնքը չի կրցան ազատիլ, միայն մանտր ձկները դիւրին կերպով մը ծակերէն անցան փախան. որովհետև Թօսին ծակերը մանտրերուն համար լայն էին. իսկ մեծերուն համար նեղ, որ ամէն դի ասանկ նեղ ծակ ըլլալով չի կրցան անցնիլ. ուստի մնացին Թօսին մէջ. բոլորը ձկնորսին ձեռքն ընկան:

---

Առակս կը սորվեցնէ, թէ խոնարհ և աղքատ մարդը աշխարհքին փորձանքին մէջ որ իյնայ, շուտով կրնայ ազատիլ. իսկ հպարտ և մեծ մարդիկներուն կործանումը սարսափ կըլլայ. և ատանկ հպարտ ամբարտաւաններուն և հարստութիւններուն:

Տե՛ս զխամրդ խոնարհք՝ անցանեն հեշտին,
ընդ անցս խոնարհ՝ մահարեր ցանցին.
Փարթամք մեծամեծք՝ ոչ փոյթ ձողոպրին,
որսող թշնամւոյն՝ կերակուր պահին:
Մի՛ ցանկար վեհից՝ և մեծագունին,
որոց կեանք արև՝ մերձ կայ օրհասին.
Թէ ոչինչ անձկաս՝ կենաց փարթամին,
փութով անցի առն՝ արկածք աշխարհին:

# Գայլ, և Ոչխար ։

'Ի չար արկած՝ թող զանզգամն,
'ի բաց փախիր՝ զի է գազան ։

Անզգամին՝ օգնել մ՚ըլլար,
Կընէ քեզի՝ իրեն պատառ ։

ՃԾ. Մ՛էկ գայլ մը երկար ժամանակ շնե-րէն հալածվելով կը հոգնի և կը թուլնայ, մինչև կիյնի մէկ տեղ մը հոգնութեն անե-լու համար. որ հեռու էր գետէն, ուր տե-ղէն մէկ ոչխար մը ջուր կը խմէր։ Որովհետև գայլը ծարաւ և անօթի կը մարէր. ուժն ալ հատեր էր, որ կարենայ առաջ երթալ, և ուզածը գտնել. ուստի կանչեց ոչխարին ու աղաչեց, որ իրեն քիչ մը խմելու ջուր բերէ ։ Մ՛իտքը դրեր էր, որ ջուրը խմածին պէս ոչխարին ալ ուտէ. և ասով երկու ու-զածն ալ միանի գտնէր. բայց ոչխարն անկէ կասկած ունենալուն համար խիստ զգուշա-նալով տեղէն ալ չի շարժեցաւ, ու կանչեց գայլին հեռուէն. ո՛վ բարեկամ՝ ես յօժար կամքով քեզի օգնութեն կընէի. բայց որով-հետև դուն գայլ ես, կը՛նայիմ՝ որ աւելի մեծ կարօտութեն ունիս քան թէ ջրի. ուրեմն քեզի աղէկութեն ընելու համար կը մտածեմ զիս քեզմէ հեռացընել քան թէ մօտ գալ։ Զայս ըսելով շուտով փախաւ, և թողուց անանկ գայլն որ ուզածին չափ ոռնայ ։

Անգամ մարդիկ նեղն որ իյնին անոյշ լեզու բա-
նիւն խաղաղային որ ուրիշը խաբեն. բայց ինկա-
յին պէտք է հեռու փախչիլ. վասն զի ատամներն
փոխելէն ետև՝ վայն 'ի վրան կը բերեն:

Արժանի պատիժ՝ այն նենգաւորին,
հիւծիլ և մաշիլ՝ առ ցաւոց սրտին.
Զի որ չար առնել՝ փութայ անմեղին,
չարեաց հանդիպի՝ այսպէս վշտագին:
Արդ մի մերձենար՝ 'ի չար թշնամին,
և մի նպաստեր՝ այն չարասիրին.
Որ 'ի չար արկած՝ գոչէ լալագին,
ահա զի՞նչ արասցէ՝ երբ լինի յուժին:

## Առիւծ, և Ճանճ:

Թէ և յաղթես՝ վէհ առիւծին,
երկնի՛ր յուժոյ՝ փոքրագունին:

Շատ մի տեսներ՝ գէծ գէծ նորու,
գնչի բանէ՝ անօթ հեռանա:

ՃԼ. Ճանճը առիւծին հետ պատերազմ բացաւ, ու խելքովը յաղթեց անոր. վա՛ զի երբեմն կռնակը խածաւ երբեմն կուշտը. մինչև համբերանկեցաւ ամէն դին խածնել. յետոյ մնաւ ականջն ու քիթը, և այնչափ նեղութի տըւաւ առիւծին, որ կատաղութէն իւր զինքը պատռեց, թէ ինչու համար մէկ պզտի կենդանի մը զիս ասանկ կը չար-

չարէ, որ ես անոր բան մը չէմ կրնար ընել
իսկ ճանճը այս յաղթութենէն որ ըրաւ. սկսաւ
բզզալով վերելլել, և ոստայնին անդին թռչե-
լով խմացընել ըրած յաղթութիւնը. մինչև խո-
տորելով գնաց անխելքը սարդին վրա ընկա-
փակաւ. տեսաւ որ վրան կը վազէ թշնա-
մին. վայ ինծ կը կանչէր, կը վայլէ՞ որ սար-
դին ոտքերը ճզմեն զիս, ես որ առիւծի
ճանկերէն ազատեր եմ:

---

[illegible]

Արդ պերճ յաղթութեան՝ ունայն պարծողին
զխմբրդ 'ի փոքուէ՝ ջրեցաւ հեշտոին.
Զի որ զինքն մեծ՝ գնէ հզօրին,
կոր 'ի գլուխ պարտի՝ յանզօրէ չնչին:
Քանի՛ մեծք յեցեալ՝ 'ի սահուն բաղդին,
միշտ յաղթօղ լինել՝ հանուրց կարծէին.
Բայց 'ի սկզբան անդ՝ երբ պերճանային
'ի փոքրիկ առթէ՝ 'ի չիք մոռացանին:

## Ս՝ուկն, և Չագ խոր։

Թէ փորձ սրտին ՝ոչ տեսանէ,
զխորդ անփորձ՝ ակն տեսցէ ։

Փորձ Գեներալն՝ տուն հետևէ,
Եւ գար ճու՝ իւր էտեւէ ։

Մէ․ Մ՝էկ մշակ մը մուկը կը տեսնէ, ու եաւէն կելնի, որ սպաննէ․ իսկ մուկը աչքին պզտիկութէն չէր կրնար ծակը գտնել փախչիլ, թէպէտ որչափ որ կարելի էր կը վազէր դէպ՚ի ծակը։ Ուստի ձագը կանչեց իրեն, մօրիկ անկարելի է, որ դուն ազատիս, մինչև որ մէկը քեզի առաջնորդ չըլլայ․ ուրեմն իմ եաւէս եկօ, ես քեզ կը տանիմ հոն, ուսկից որ ելար։ Ըհ ձագուկս՝ ըսաւ մայրը․ ինչպէս կրնամ քեզ առաջնորդ ընել ինծի․ երբոր գիտեմ, թէ դուն խամ ալէկ չես կրնար տեսնել։

---

Պէտք է, որ առաջնորդին միտքն ու բայց ըլլայ
այն ու, որ խորհնայ նոր ինքը չփոխ էրթալ, և
ուրիշներուն ու չփոխ ձախբայ առաջնորդնել․ Թէ
իր ուրիշներէ իրեն առաջնորդութիւն ընելով բան
առաջնորդնէ, որ խիստ մեծ ամօթ բան է ։

Այս են Թերակիրթ՝ գասմունք անփորձին,
Իշխէ առաջնորդ՝ լինել փորձառուին․

Ուղղէ զգնացս՝ խոր առաջնորդին,
այլ ոչ գիտէ ինքն՝ ուր յանգի ուղին։
Արդ մի խոտորիր՝ յաջ և յահեկին,
ուղիղ ընթացիր՝ ըստ ուղիղ կարգին.
Զի ամօթ մեծ է՝ գիտուն ուսուցչին,
երբ յայլոց ուղղի՝ յանսայթաք ուղին։

## Երկու շունք պայթին.

Վա՜յ որ անյագ՝ տենչայ ունել,
մահու պատժի՝ անդ 'ի խնդրել։

Որչափ որ շատ՝ ուտել ջանաս,
այնչափ շուտով՝ ուռէնս ճեղքաս։

ՃԸ. Երկու շուն գետի մը քովէն կերթային, տեսան որ ջրին երեսը կտոր մը միս կայ իրենցմէ հեռու. մէկը մէկալին ըսաւ. Թէ բարեկամ՛ ջանք ընենք, որ այս որսը չի կորսընցընենք. ես շատ լաւ հնարք մը մտածեցի զայն ձեռք ձգելու համար. մեր կեցած տեղէն մինչև հոն եղած ջուրն՝ որ կը տեսնես, կրնանք խմել. և այս ջուրը խմածնուս պէս լաւ գիտես, որ կը ցամքի մսին եղած տեղը, և այսպէս մեզի շատ դիւրին կըլլայ երթալ պատուական միսն առնել. գիտնաս սիրելի որ առանկ մեր ձեռքէն չելլեր միսը։ Այս խօսքով սկսան երկուքն ալ խմել գետին ջուրը. և սաստիկ ուռենալով շունչերնին կտրեցաւ, հոն մէկէն ճաթեցան։

Մոլութիւնը անանկ կը կուրացընէ մարդուս միտքն, որ խենթի բաներ կընէ ու չիմանար. հին ատենը թագաւոր մը կար այնչափ որկրամոլութեան տրւած էր, որ մինչեւ կերակուրին մէջ փիթը ձեռանը չի խօթեր մէկ կերանար։

Յայս յանգի վախճան՝ ծառայից ախտին,
Նոքին կորնչին՝ յոր անյագ բերին.
Այնչափ կուրացեալք՝ յանկարգ բերկրութին,
մինչ պայթիլ՝ 'ի ջուր՝ յանկար առնելին:
Արդ մի հետևիր՝ բերմանց մոլեգին,
որ անչափ տենչմամբ՝ յանլուրս ձգին.
Սանձեա զապստամբն՝ եգեալ 'ի կարգին,
զի մի կորուսցէ՝ զքեզ յանտեղին:

---

## Աղուէս, և Նոխազ:

Մի ընկերեր՝ խորամանկին,
ձգէ զքեզ՝ յանկել գբին:

Խաբեբային՝ չըլլար ընկեր,
տեղ կը ձգէ՝ անցած քուներ:

մԹ. Աղուէսն ու այծը միատեղ ճամբորդութն կընէին. օր մը սաստիկ ծարաւելով պապակեր էին, գտան մէկ հոր մը, մէկէն մտան մէջը ջուր խմեցին. բայց դժուարութիւնն եղաւ անկէ դուրս ելլելը. որովհետեւ հորը խորունկ էր, այծը չէր գիտեր, թէ ինչպէս պիտի վեր ելլէ: Աղուէսն ը-

սաց իրեն · Թէ Եղբայր մի վախնար, չատ դիւրին է երկուքիս ալ ատկէ ելլել · քեզի ուրիշ բան պէտք չէ ընել, միայն երկու ոտքի վրան ել չիտակ պատին կրթընէ, որչափ որ կրնաս վեր բարձրացուր զքեզ · ես ալ թաթիկներովս կռնակէդ վեր կելլեմ եղջուրներուդ վրա · յետոյ դիւրին մը կը ցաթկեմ հորին բերանը · անկէ ետև քեզի օգնութիւն ընելով մէկէն վեր կելլես : Այծը հաւնեցաւ այս հնարքիս · և անանկ լաւ կեցաւ, որ աղուէսը ցաթկեց ելաւ հորէն, ու փախչելէն 'ի զատ ուրիշ բանի չի նայեցաւ : Ուստի Թողուց անանկ ընկերին ու ծիծաղելով կըսէր · մօրուքդ երկնցընելու տեղը խելքդ երկընցուր · որ գլխուդ ճարը գըտնես, և միտք բանեցընելով ատկէ ազատիս :

---

Խորհրդական մարդը մինչև որ բանը լմընցնայ բարէ կամաւորին չըսէ · անոր էտև ծաղր ընելուն իր ձամ բան չերթայ :

Այսչափ է նպաստ՝ խարդախ մտերմին,
այս և հատուցումն՝ չարաց ընկերին ·
Նա ընկերանայ՝ ձգել 'ի գբին,
նա յուշի լինի՝ երբ կայ 'ի նմին :
Այս քեզ է խրատ՝ ով կանանցածին,
մի խաբիր փութով՝ բանիւ նենգողին ·
Մինչ յամենայն գործոյն՝ քեզ է մտերիմ,
ապա ծաղր առնէ՝ գնայ խնդագին :

## Ուրուր, և Թռչունք։

Մի՛ ուտեր հաց՝ ընդ թշնամին,
զի կերակուր՝ լինիս նմին։

Թշնամիէդ՝ պափչին առ հաց,
ձեռն իր ներնէ՝ պատառ մը հաց։

ՄՃ. Օր մը ուրուրը կը հրամցընէ պզտի թռչուններին, որ հարկերը տան. երբ թէ մեծ պատրաստութիւն ունէր իր տօնախըմբութիւնը կատարելու համար։ Իսկ անխելք թռչունները բան մը չի մտածելով վազեցին եկան, որ հարկերը տեսնեն։ Սակայն յիմարութիւ ուրուրին ձանկն ընկան. որ զանոնք ժողված տեսածին պէս յանկարծակի վրանին ընկաւ՝ մէկիկ մէկիկ ջարդեց կերաւ։

Նենգաւոր մարդիկ միշտ եղեռանց պատրուելով ուրիշին փառքը կ'առնեն. ուրեմն պէտք է ամէն մարդու հաւտալ, եւ տեսնել [illegible]։ Ըստ մարդիկ պատիւ գտնելու համար, եւ հարկեր քաշելու համար կ'որան գային։

Տես յիմարութիւն՝ թռչնոց երամին,
որ վստահ գնան՝ առ բուն թշնամին.
քանզի ոչ փախեան՝ յաղրից փորձողին,
անկան ծախեցան՝ ՚ի ժանտ որկորին։

Արդ մի՛ վստահիր՝ յանհաւատ ոխերիմ,
մի՛ քեզ քաղցրացի՛ հաց ննդաւորին.
Բազումք ցանկութեա՛ պատուոյ կերակրին,
'ի չար թշնամւոյն՝ որովայն մտին:

## Մարդ, և Ձի:

Վա՜յ որ դիմէ՝ 'ի գիրկ մարդկան,
ընկճեն առնեն՝ ոտից կոխան:

Վա՜յ քէզ մարդուդ՝ ԹԷ յէտին իյնաս,
ըսոտ մը անոր՝ գէրի խըլլաս:

մժա. Ներեան ձին բարկանալով եղնիկին վրա, որ անոր ջուրը պղտորեր էր՝ սկսաւ ծեծկըւիլ. բայց յաղթըւեցաւ. երբոր յոյսը հատաւ՝ գնաց մարդուն ընկաւ աղաչեց, որ իրեն օգնութիւն ընէ: Իսկ մարդը խոստացաւ վրէժխնդիր ըլլալու թշնամուն դէմ. միայն թէ թող տայ, որ սանձ մը դնէ բերանը, որով կարենայ առաջ տանել, և կայնեցընել զինքը ինչպէս պէտք ըլլայ: Ձին սիրով յանձն առաւ սանձ դնել. ուստի մարդը սանձ դրաւ ու հեծաւ վրան, և եղնիկին ետևէն ընկաւ բռնեց մեռցուց: Յետոյ ձին շնորհակալ ըլլալով մարդուն՝ ուզեց երթալ. բայց մարդը տեսնելով անոր շահը՝ ամենևին մոնիկ չըրաւ ըսելով. ա՟ծ չընէ որ ես թող տամ սանկ մէկ կենդանի մը, որ այսպէս լաւ ծառայութիւն կընէ: Զայս ըսաւ, ու

լաւ մը քաշեց սանձը և ստիպեց, որ կամայ ակամայ երթայ քաղքին ճամբան. և այսպէս ձին կամքը կոտրելով բռնադատեցաւ հնազանդիլ մարդուն, որունմէ յիմարութեամբ օգնութիւն խնդրեր էր:

---

Խրատ է անոնց, որ կամակորութ᷉ ուրիշին վրէժ-խնդիր ըլլալու համար իրենք զիրենք գերի կընեն, այսպէս և թշուառական կըլլան:

Այս օրինակ է՝ ըմբոստ յիմարին,
'ի տիրել այլոց՝ նուաճի ինքնին.
Ա՛ռ 'ի լուծանել՝ վրէժս ընկերին,
սանձի կաշկանդի՝ ձեռամբ մարդկային:
Դու՛ ազատ ծնեալդ՝ ըստ տիրականին,
մի՛ ընկճիր գերեալ՝ յախտից տիրողին.
Սանձեա՛ զապստամբն՝ անսաստ իշխանին,
հրահա՛նգ և կրթեալ՝ հպատակ բանին:

---

## Աղուէս, և Գայլ:

Ուսի՛ր կշռել՝ զժամանակ,
քննեա՛ զպիտոյն՝ որ քեզ է անկ:

Ամէն բանի՝ ժամանակ կայ,
հարցո՛ւր ինծի՝ փէշն որ կուգայ:

մժթ. Աղուէս մը գիշերանց կելլէ իր բունէն կը մտնէ արտին մէջ բան ուտելու հա-

մար․ երբոր աղջին անդին կը պտըտէր՝ ընկաւ հորին մէջ, որ չորս դիէն փորած էր։ Այս բանն եղած ատենը անկէ գայլ մը կանցնէր․ աղուէսը կանչեց իրեն, բարեկամ ո՛չ օգնութիւն ըրէ՛ ինձի․ կաղաչեմ շուտով ասկէ հանէ։ Գայլն ալ հանդիսաձայնով՝ ըսաւ, համբերութի․ բայց կուզեմ իմանալ թէ ի՛նչ պատճառով հորին մէջ իննելու պարտաւորեցար․ կաղաչեմ որչափ կարելի է ինձի տեղն՚ի տեղը պատմէ ինչպէս ըլլալը։ Ո՛վ բարեկամ ըսաւ աղուէսը․ երբոր զիս ասկէ հանես քեզ կը պատմեմ, որ հետաքրքրութեանդ կատարուի․ հիմա ատե՛ն է խամէ պատմութեն խնդրելու, երբ կը տեսնես որ ահա կը խղդըվիմ։

---

Օրինակ է անանց, որ [illegible] յա-
ւիտեան [illegible] կանգնի պա-
տուոյն իմանալ, և մերժելով ծաղր ընել։

Ո՛վ ապարասան՝ մտաց գաղանին,
որ ոչ կարեկից՝ լինի ընկերին․
Տենչայ իմանալ՝ պատճառ արկածին,
զի ծիծաղեսցի՝ ընդ վիշտս անբաղդին։
Արդ մի հետաքիր՝ դու օրինակին,
և մի քեզ տխպար՝ առցես գործ չարին․
Թէ կամիս գիտել՝ զգործս օտարին,
քննեա և ուսի՛ր՝ ըստ ժամանակին։

## Առիւծ հիւանդ, և Աղուէս ։

Արդ հետք այլոց՝ գնացք և վարք,
լինին գիտնոց՝ դաստիարակք ։

Ուրիշներու՝ ընթացք փորձէն,
Խելացիներին՝ խրատ կուտան ։

ԺԺԶ. Առիւծը հիւընդցաւ, և ամէն կենդանիներուն դեսպան խրկեց կանչեց, որ գան մխիթարեն զինքը՝ նեղութենէն, որ հիւանդութիւնը կը պատճառէր ։ Աւսար ամէնքը շուտով վազելին եկան առիւծին տեղը․ որ զանոնք մէկիկ մէկիկ կը խղդէր երբոր հոն կը հասնէին ։ Մինակ աղուէսը աղէկ չէր սեպեր առիւծին երթալ․ թէպէտ կապիկը շատ անգամ եկեր էր առիւծին կողմանէ աղաչել, որ մէյմը երթայ իր պարտքն ընէ ինչպէս ուրիշներն ըրին․ որուն այս պատճառը տըւաւ․ շատ անգամ դիտեցի կենդանիներուն ոտքի տեղն, որ այցելութեան գային առիւծին․ տեսայ որ ամենուն ոտքին նշանը կըցցընէ, թէ ներս մտեր են, բայց չերևնար, թէ մէկն անկէ դուրս է ելեր ։

Պէտք է արթուն կենալ թշնամիներէն ու չի խաբուիլ, վասն զի շատ անգամ բարեկամ երևնալով մարդը չարաչար կը ձգեն որոգայթի մէջ ։

Զխմրդ քաջ գինէ՝ միտք նրբաղննին,
յայլոց ՚ի պատուց՝ խրատի ինքնին.
Զի նշանք և հետք՝ գործոց աշխարհին,
միան խրատել՝ չեղեալ ապառնին:
Զգաստ և արթուն՝ լեր յապագային,
այլոց վրիպանք՝ քեզ խրատ լիցին.
Թէ թմրեալ շրջիս՝ առ թակարդ ախտին,
՚ի նոյն թակարթեալ՝ կորնչիս հեշտին:

## Կապիկ, և Կատու:

Ձեռք յիմարաց՝ գործեն շահին,
զապրուստ և շահ՝ խորամանկին:

Ամնիես մարդիկ՝ շատ կը խաբին,
այլոց համար՝ մէջ կաշխատին:

մժգ. Կապիկն ու կատուն կրակին մօտ կը մտմտային թէ ինչպէս կրնան առնել կրակին վրայէն շագանակը թէփանէն որ կըխորվէր: Ե՛ղբայր ըսաւ կապիկը կատուին. այս շագանակներն որ կը տեսնես անանկ յաջողութ̃ կրնանք առնել որ չէ եղած. այս բանիս համար իմինէս աւելի յարմար կը տեսնեմ քու թաթիկներդ, դուն միայն մոխիրէն դուրս քաշէ. ես ազգին կառնեմ: Այս հնարքիս հաւնեցաւ կատուն. և նախ կրակները եա առաւ, ապա մոխիրը. յետոյ թաթիկը տանելով բերելով մէկ քանի հատ կրակին մէջէն հանեց. կատուին թաթիկը

տապքութՋն կերէր, կապիկը հանգիստ կու-
տէր ։ Մէկ ծառայ մը այս բանիս վրան ե-
կաւ՝ խռովեց անոր հարկիքը ․ բայց կապիկը
ձկկէն փախաւ ․ ուստի բոլոր պատիժը կա-
տուն քաշեց, և բոլոր օգուտը կապիկին ե-
ղաւ ։

---

Շահասէր մարդը Գէթ իր շահը կը նայի, ուրիշին ինչ որ ըլլայ հոգ չըներ ․ անոր համար պէտք է հե-ռու կենալ անանկներէն ։

Անխմաստ ռամիկ.ք՝ գիւրասաց պատրին,
գործեն վասն այլոց՝ ոչ 'ի շահ անձին ․
Տ.քնին 'ի հաճել՝ սիրտ շահասիրին,
անկեալ 'ի վտանգ՝ չարաչար պատժին ։
Զգո՛յշ լեր ով մարդ՝ մերձիլ յայնպիսին,
որ քեզ չար խորհի՝ և շահ իւր անձին ․
Զի կենակցուԹի՝ ընդ խորագիտին,
միաս պատուհաս՝ բերէ ընկերին ։

## Առիւծ, և Ցուլք:

*Ուր միութիւն՝ իցէ անքակ,*
*յաղթէ ուժոյ՝ զերթ ամբարտակ:*

Եղբօր տեղ մը՝ միութիւն կայ,
ամէն բանի՝ յաղթող կըլլայ:

*ՄԺԵ. Չորս ցուլ սովորութիւն էին ըրեր որ միասեղ արծին. և իրենց վտանգը ճանչնալով միշտ զգուշութիւն կընէին առիւծի մը դէմ, որ կը պտըտէր մօտ անտառին մէջ, ու կըսպասէր որ զանոնք պարապ գտնէ յափըշտակէ: Բայց առիւծը տեսնելով անոնց զգուշութիւնը, որ միշտ գլուխնին դէպ իրեն անկած կը կենային. հարկաւորեցաւ սատանութիւն բանեցընելու: Ասոր նախ և առաջ ձևացուց, թէ միտքը փոխած է անկէ ետև այլ չպիտի դպչի անոնց. յետոյ ետ դարձաւ՝ եղած տեղէն շատ հեռուն գնաց: Ցուլերն առանկ տեսածնուն պէս կարծեցին թէ անոր այսչափ հեռանալովը ապահով եղան, և հոգ չընելով իրարմէ զատուեցան, դաշտին մէջ մէկն ասդին մէկալն անդին հեռացան: Անատենը առիւծը նորէն դարձաւ յանկարծակի ընկաւ անոնց վրայ. և որովհետև զատուած էին՝ շատ դիւրին եղաւ մէկիկ մէկիկ չորսն ալ յափշտակել:*

Ուր տեղ որ գոհունութիւն չկայ աղքատութիւն կը յաղթէ. ուր որ գոհունութիւն կայ հարստութիւն կը ծնանի:

Քանի՛ զօրաւոր՝ անքակ միութիւն,
յաղթող Ճիրանաց՝ անյաղթ առիւծուն.
Բայց երբ քայքայի՝ այն ույժ բռնագոյն,
յաղթի 'ի փոքունց՝ այսպէս հեշտագոյն:
Հզօր պետութիւնք՝ պանծացեալ՝ 'ի սոյն,
առանց միութեան եղեն անանուն.
Այն որ աշխարհի՝ տիրէր վեհագոյն,
արդ անկանգնելի՝ կայ յիւր կործանումն:

## Ոզնի, և Օձ:

Անզգամին՝ թէ տաս տեղի,
մերժեալ առնէ՝ զքեզ անտեղի:

[illegible]
[illegible]

մէջ. Մէկ ոզնի մը որսորդէն փախչելով ժայռի խոռոչի մը տակ կը մտնէ, ուր տեղ օձ մը կը բնակէր. աղաչեց օձին որ իրեն տեղ տայ պահուելու համար. օձը սիրով ընդունեց, բայց յետոյ նայեցաւ որ անոր փշերէն անհանգիստ կըլլայ. հասկըցուց ոզնիին, թէ որսորդը գնաց հիմա վտանգ մը չկայ՝ կրնաս տեղդ երթալ. կաղաչէր որ

ելլէ երթայ իր ծակէն : Ե՞ս երթամ ըսաւ ոզնին, քա՛ւ լիցի. գիտնաս ով անխելք, որ ես հոս աւելի իրաւունք ունիմ բնակելու, քան թէ դուն : Եւ այսպէս ոզնին օձէն զօրաւոր ըլլալով դժուարութիւն չունեցաւ համարձակ անոր դէմ դնելու իր ուժն, ու վռընտելու անկէ :

---

Օրինակ է անոնց, որ անիրաւութեամբ ուրիշին բանը յափշտակելով կը զրկեն, և իրենց զօրութենը վըկը պարծենան. բայց չգիտեն այն առակին, որ կ'ըսէ. Զրկողին աղբեր է վա՛յ զրկողին :

Այս է անիրաւ՝ գործ բռնաւորին,
զօգուտ օտարաց՝ յինքեան ձգողին.
Որով և խնդայ՝ յանիրաւ շահին,
յաւէրժանալ միշտ՝ կարծէ եղկելին :
Զի՞նչ օգուտ երբէք՝ գործեաց զրկողին,
անիրաւ վաստակ՝ անիրաւ տեղին.
Լքին զամենայն՝ յայլ վիճակ մնին,
սուզեցան 'ի փոր՝ մահու անմահին :

# Լեառն յերկունս ։

Զի՞նչ շահ երկնել՝ գործս ահագին,
և ծնանիլ՝ վիժած չնչին ։

Մեծ խոստմունքը՝ բան մը չարժեր,
Երբոր գործքը՝ չի հնայեր ։

մէջ. Երբեմն լեռանը ցաւը կը բռնէ. և երբոր սոսկալի ձայնովը կը պոռար, աշխարհք կը դողայըներ. մինչև ամէնքը չորս դիէն եկան հոն թափեցան. կարծէին թէ մէկ զարհուրելի հրէշ մը պիտի ծնի, կամ նշանաւոր ցուցանք մը պիտի հանէ որ չէ եղած ։ Բայց քանի՛ մեծ զարմանք եղաւ՝ երբոր պոռալով ետքի ճիգն ըրաւ, տեսան որ ծնաւ լեռը, ի՛նչ ըլլայ աղէկ է. ահա մէկ մուկ մը փորէն դուրս ելաւ ։

---

Օրինակ է մեծ խօսողներուն, որ խօսքով մեծ բաներ կը խոստանան, և գործքով միայն չափ բան կը փնտռեն. անոր համար կըսուի, թէ խօսքին ու գործքին մէջը շատ բան կայ ։

Տես պատկառելի՝ ձայն մեծաբանին,
ահեղ որոտայ՝ յամպոց սահմանին.
Այլ երբ ժամանէ՝ 'ի գլուխ գործոյն,
յետնեալ արտադրէ՝ զխուլ մուկն չնչին ։

Թէ ճոխաբանես՝ կարող գոլ մեծին,
յամօթ համակիս՝ 'ի մեծաց զննին.
Զի չիք ինչ արգել՝ դիւրաշարժ լեզուին,
բայց արդեամբք առնել՝ գործ է դժուարին։

## Ուրուր, և Մայրն ։

Մի՛ անարգեր՝ սեղանս էին,
մի՛ քեզ շնորհաց՝ դրունք փակեսցին։

Վա՛յ որ խընէ՝ աստուծոյ դէմ,
դուռն ողորմած՝ գոց է իր դէմ։

Մժէ. Ուրուրը սաստիկ կը հիւանդնայ. երբոր վերջի շունչը հասաւ՝ կըսէր մօրը. վա՛յ ինձ մայրիկ. աղօթք ըրէ կուռքերուն որ ինծի առողջութիւն տան ։ Որդեակ ըսաւ մայրը՝ շատ ըրի շատ աղաչեցի, բայց փուճ գնաց. վ՟ զի չեն ուզեր քեզի առողջութիւն տալ, որովհետև շատ անգամ տեսեր ենք, որ դուն անոնց սեղանն անարգելով յափշտակեր ես զոհերուն միսն, որ իրենց ընծայ եղած էին ։

Օրինակ է անհաստատ [illegible], որոնց աչքը եկեղեցականներուն վրայ է. և միշտ ծաղր ընելով Աստուծոյն օրէնքը կանարգեն. բայց երբոր կը հիւանդնան, և փորձանքի մէջ իյնան, քահանաները կը

ժողովքէն, որ իրենց համար աղօթք ընեն. հոն ա-
նանց որ անտէնը ողորմութիւն պիտի գտնեն:

Աչեղ պատուհաս՝ օրինազանցին,
մերժիլ յերեսաց՝ արարչապետին.
Զի որ մեղանչէ՝ յաթոռ անբաւին,
ուստի՞ գեղ և ճար՝ հայթայթէ անձին:
Ո՞ նանրախորհուրդ՝ ժառանգ գեհենին,
զի՞ գոչես ձայնես՝ երբ կաս 'ի մահճին.
խնդրեա՛ զօգնութիւն՝ մարմնոյ աշխարհին,
որ յանձ մեղար՝ հաճել զնոսին:

## Լ,Հ, և ՁԻ.

Որ ոչ բառնայ՝ զբեռն ընկերին,
ծանրի յաւէտ՝ բեռամբ ուժգին:

Թէ ընկերիդ՝ օգնող ըլլաս,
անօգնական՝ խեղճ կը մնաս:

ՄԺԹ. Օր մը էշն ու ձին միատեղ ճամբայ կերթային. իշուն բեռը շատ ըլլալով աղաչեց ձիուն, որ իրեն օգնութիւն ընէ ու բեռանը մէկ մասն ալ ինքն առնէ, եթէ ուզենայ խնայել անոր կենացը. իսկ ձին աննելին չուզեց այս աղէկութիւնն անոր ընել. ուստի էշն ընկաւ բեռանը տակը մեռաւ: Տէրն որ տեսաւ, իշուն կաշին քերթեց բոլոր բեռանը հետ մէկ տեղ դրաւ ձիուն վրայ: Անատենը ձին սկսաւ պոռալ. ո՜վ թշուառ-

ռութենս ես չուզեցի բեռանը մէկ մասը տա-նելու, հիմա հարկաւորեցայ՝ չէ միայն բո-լորը, այլ և կաշին ալ միատեղ տանել։

---

Օրինակ է անողորմ մարդուս․ որ ինչպէս ինքն ուրիշին չողորմէր․ իրմէ ալ անանկ ողորմութիւնը կը հեռանայ․ անոր համար անողորմ մարդը գազանի կը նմանցընեն, որ ուրիշին վրա գութ չունի։

Այս իրաւունք՝ արժանի նմին,
որ ոչ կարեկցի՝ վշտաց ընկերին․
Այլ ընկերատեաց՝ իբրև անկանի,
ոչ ուստեք նպաստ՝ տեսցէ բնաւին։
Երանի կարդան՝ ողորմած անձին,
զի ողորմութիւնք՝ յիւրմէ ոչ բառնին․
Թէ չափով օգնէ՝ կարեաց կենակցին,
անչափ օգնութիւնք՝ ՚ի վերուստ Թափին։

---

## Եղջերու, և Եղնիկ։

Վայ որ այլոց՝ ապաւինի,
զանձին փրկանս՝ ոչինչ հնարի։

Թէ որ յոյսդ՝ այլոց դնես,
հարկաւ գլխուդ՝ չար կը բերես։

մէ․ Եղնիկ մը որսորդներէն հալածվելով՝ փախաւ եզներուն գոմը․ որոնցմէ մէկն ըսաց իրեն, ինչ կընես ողորմելի, հոս կենա-

րովդ մարդու ձեռք կը մատնըվլիս, և վտան-
գի մէջ քեզ կը ձգես: Ներեցէ՛ք ինծի ըսաւ եղնիկը, թէ որ դուք մարդու բան չըսէք՝ ես զիս կրնամ ազատել: Գիշեր որ եղաւ եղնապանը խոտ բերաւ եղներուն, բայց եղնիկը չի տեսաւ զան: Տանը ծառաները և վերակացուն մտան ելան բան չի տեսան: իսկ եղնիկը կարծելով թէ վտանգէ ազատեցաւ, ելաւ եղներուն շնորհակալ եղաւ, որ կամեցան պահել զինքը իրենց մէջ: Անոնք ալ պատասխանեցին, թէ մենք կուզենք որ դուն բոլորովին ազատիս. բայց դժուար կեցիր որ մեր տիրոջը ձեռքը չիյնիս. վասն զի մեծ վտանգ է կենացդ: Շատ չանցաւ տէրը տուն դարձաւ բարեկամին հարկիքէն, տեսաւ որ քիչ օրուան մէջ եղները վատեր են, գնաց դուռն որ նայի. երբոր մօտեցաւ մսուրին, ըսաց ծառաներուն, թէ ի՞նչ է պատճառն որ խեղճ եղներս քիչ կուտեն, և քիչ յարդ ըլլալով աղբը ՚իսա կուտայ իրենց: Վերջապէս երբոր աստին անդին կը նայէր ուշադրութեամբ, տեսաւ եղնիկին մեծ եղջիւրները, և մեկեն կանչեց ծառաներն որ բռնեն մորթեն:

---

Ո՛վ որ հանգիստ կը [illegible] իր կենացը [illegible]

Եղո՜ւկ խորհրդոյ՝ վատասիրտ անձին,
որ տապալինի՝ յօտարաց ձեռին.
Ոչ ջանայ փախչիլ՝ յապահով տեղին,
անգործ սպասէ՝ կենաց բարձողին:
Քանի՛ քաջ արանց՝ 'ի յասպարիզին,
տառաթուր կոխեալ՝ հանուրց ոտքերին.
Բայց երբ փափկութե՛ է յարկաւ նստին,
մատնեցան կորեան՝ զերթ կնամարդին:

---

# Արջ, և Մեղուք:

Այր անհամբեր՝ միշտ վնասի,
թէև լինէ՝ զօրեղ այր:

[illegible]
[illegible]

Միթ. Մէկ արջ մը քաղցած անօթի ելաւ անտառէն, որ կերակուր գտնէ. Ճամբուն վրայ մեղրի փեթակ տեսաւ, սկսաւ լափել՝ փեթակէն մեղու մը դուրս ելաւ արջուն ականջը չարաչար խայթելով ցաւցուց. արջն ալ կատաղութենէն կործանեց փեթակը: Անատենը բոլոր մեղուները բարկանալով դուրս թափեցան մէկէն արջուն վրայ մաղուեցան, և անանկ խայթեցին զինքն, որ արջուն ըլւայ եղաւ վրէժխնդիր ըլլալով իրենց թշնամուն, որ փեթակը կործանեց: Եւ այսպէս արջը ամօթով և կատղած սախպեցաւ ետ դառնալ, մեղադրելով իր գազանական ան-

համբերութեան՝ որ այնչափ թշնամի իրեն վրայ հանելու պատճառ եղաւ ։

---

Խօսք է անոնց, որ իրենց ապրուստին համար ուրիշին դրանը կը կենան. եւ առատանալ ուզելով ան- համբեր մարդիկ, որոնք չար անձամ ատքէլու պարա- ւմանք կը կորսնցնեն ։

Այսպէս անհամբերքը՝ կրեն զարժանին,
ըստ իւր ապաժոյժ բերմանց ոլորին ·
Զի որ կեղեքէ՝ զտուն օտարին,
զրկանք եւ յայլոց՝ պատրաստի նմին ։
Մի՛ զաղանութի՝ բերիր յուսալին,
եւ մի զօղանար՝ զապրուստ ընկերին ·
Որ թէեւ իցէ՝ փանաքի չնչին,
'ի նախանձ բրդեալ՝ վնասէ ուժգին ։

---

## Խոհարար, եւ Շուն ։

Քաջ զօրանայ՝ սիրտ խոհակամ,
երբ հանդիպի՝ նմին վշտան ։

Խոհեմ մարդը՝ իւր փորձանայ,
երբոր իրեն՝ ... կուգայ ։

միտք . Երբեմն շուն մը մտաւ խոհարանը կամ կերակուր եփելու տեղը, եւ հոն սպա- սելով տեսաւ թէ խոհարարը անզգուշութե կեցեր չէր նայեր · խլեց անկէ կոճին սիրտն,

ու փախաւ ։ Իսկ խոհարարը տեսաւ որ չու-
նը այս չարութենն ըրաւ՝ կը փախչի, կանչեց
ետեւէն՝ ասանկ. դուն այսօր դիւրին կըր-
ցար զիս խաբել. բայց լաւ գիտնաս. ես
ասկէ ետեւ անանկ պիտի նայիմ, որ ամենեւին
բան մը չպիտի կրնաս ինծմէ գողնալ. վասն
զի դուն չէ թէ իմ սիրտս տարիր, այլ մա-
նաւանդ ինծի սիրտ տուիր. որովհետեւ կո-
րուստը եւ ձախորդութիւնը կը բանան մար-
դուս միտքը, եւ կը սորվեցընեն որ լաւ
զգուշութիւն ընելով՝ ազատ ըլլայ դժբաղ-
դութենէ որ կը պատահին ։

---

Աշխարհիս փորձառութիւնը չի պակսիր, բայց պէտք
է որ մէկ անգամ իյնողը, մէյմալ չիյնի. վասն զի
ձախորդութիւնը եւ փորձը լաւ կը սորվեցընեն մարդու
խոհեմութիւն ։

Գեղեցիկ առած՝ բան խոհականին,
որ սիրտ տալ ասէ՝ վնասն առաջին.
Այս մարդոյ պատկան՝ այս բանականին,
մի կրկին անգամ՝ վնասիլ յանձին ։
Թէ չես փորձ զգաստ՝ 'ի մի նուագին,
անկանիլ քեզ կայ՝ 'ի նոյն վերստին.
Եւ թէ անընդոստ՝ կացցես 'ի կային,
սահեալ կործանիս՝ կրկին չորեքկին ։

# Արծիւ, Բազէ, և Ցին:

*Ձքնաղ գործեն՝ գործք և գնացք,*
*և ոչ պատիր՝ անսիլ գիմաց:*

Գործքը ընէ՝ մարդը ազնուն,
և ոչ ցեղը՝ ազնուութիւն:

*Միթ. Բազէն ու ցինը վիճաբանութիւն կընէին արծուին առջին, թէ որն աւելի ազնուական է, ցինը կը գովէր իր գերազանց ուժը և սաստիկ թռչիլը. իսկ բազէն իր ազնիւ բարքը. և կը նայէին թէ ինչ վճիռ կուտայ արծիւը: Պատասխան տուաւ արծիւը, թէ գնացէ՛ք մէյմէկ որս ըրէ՛ք. ով որ ձեզմէ լաւ որս բերէ, այն է աւելի ազնուական: Եւ ահա ցինը գնաց մուկ մը բերաւ, և բազէն աղաւնի մը: Անատենը արծիւն ըսաւ թէ այնչափ աւելի ազնուական է բազէն քան զցինը, որչափ աղաւնին գերազանց է քան զմուկը. որովհետև ուժը չէ, հապա գործքն է ազնուական ընօղը:*

---

Ազնուականութիւնը գործով կը յայտնի և ոչ ցեղով. Թէ որ ցեղով ազնուական է՝ գործով ազնիւ է, ազնուական կըլլայ. Թէ որ անձամբ ազնուական է, գործով չէ, ազնուութիւն չէ. ինչպէս որ

յայտնի էղան բանըն ու ցինը, այսինքն չահէնն ու
չայլանը :

Նազելի գնացք՝ գործք առաքինի,
չքնաղ յօրինեն՝ զսիրտ և հոգի.
Թէ սոքա չիցեն՝ ընակցեալ ընդ գեղ,
չէ ազնիւ չքնաղ՝ այն սիրտ այն հոգի:
Մի՛ պանծար ընդ գեղ՝ և յանուն զարմի,
ջանա՛ զ՞քեզ գործով՝ գործել պանծալի.
Զի լոկ բան անուն՝ չեն ազնիւ յարգի,
գործն է պսակիչ՝ ամենայն բանի:

## Նապաստակ, և Գորտք:

Քոյդ վրիպանք՝ թեթև թուլին,
եթէ հայիս՝ յայլոց թերին.

Քու պաշտօնըդ՝ ըէըն խըլըլայ,
ըէ որ նայիս՝ այլոց ճըրա:

միտ. Երբեմն նապաստակները մէկ տեղ եկան կուլային իրենց խեղճութենը վրա, որ վախկոտ ըլլալով շատ վտանգի մէջ էին. վասն զի մարդէ կը վախնանք կըսէին, շնէ, արծիւէ, գրեթէ ամէն բանէ վախ ունինք. ուրեմն մենք ասանկ պիտի՞ հանինք. ուստի աւելի լաւ է մէկ անգամ մը մեռնիլ, քան թէ բոլոր կենացնուս մէջ զարհուրանքով մեռնիլ: Զայս ըսելով վազեցին միաբան որ լիճն իյնին խեղդըլլին. բայց ատոնց

տքին ձայնէն ըմ՛ին քովի գորտերը վախնա-
լով մէկէն ջուրը ցատկեցին ։ Անատենը մէկ
ծեր նապաստակ մը իրենցմէ կանչեց · մի՛
ընկերք կեցէ՛ք մի՛ վախնաք · ահա ինչպէս
տեսանք , մեզմէ շատ աւելի վախկոտ կեն-
դանիներ ալ կը գտնուին եղեր · հապա մենք
տեղերնիս դառնանք ։

---

Ինչ նեղութիւն մեզ որ ըլլայ մարդ , պէտք չէ յու-
սահատելով [illegible] , այլ [illegible]
[illegible] և մխիթարելու · [illegible] չի յուսահատութիւն է
[illegible]ութիւն և մարդկութիւն դէմ է [illegible] ։ Փիլիսո-
փաները կըսեն , թէ [illegible] մարդը [illegible] մեզ
ու ըլլայ , [illegible] ։

Թէ քեզ դժկամակ՝ ըլլի ձեռք բաղդին ,
 զլացեալ զձիրս՝ օժիտ բնածին ·
 Մի՛ կարծամըտիր՝ հայեա՛ց 'ի ստորինս ,
 այլոց թերութիք՝ քեզ յորդոր ըլլին ։
Չի՛ք ինչ անթերի՝ յեղելոց կարգին ,
 գործ է կատարել՝ զայն թերատ ներքին ·
 Արդ ուշիմ միօք՝ քննեա՛ զօտարին ,
 գտանես զքեզ՝ 'ի գոհ վիճակին ։

## Եղջերու :

Թէև խցես՝ յանքոյթ տեղի,
մի գներ զքեզ՝ յապահովի:

Ո՛ր որ ըլլաս՝ ապահով չես,
Ժահէն հեռու՝ փէղ չի խործէս:

մին. Մէկ եղնիկ մը ծովուն քով ժուռ գալով բան կուտէր. որ մէկ աչքը չի տեսնելուն համար ծովուն դին էր ըրեր, տեսնող աչքը ցամաքին դին. և առանց զինքն ապահով կարծելով վախ մը չունէր: Սակայն նաւով անցնողները տեսան զայն ու նետով զարկին ձգեցին. ողորմելի եղնիկը մեռնելու ատենը լալով կը կանչէր, Թէ ուսկից որ կը վախնայի այն կողմանէ բան չեղաւ. և ուսկից որ վախ չունէի, անկէ չնաս քաշեցի, ու զարնըվեցայ. ուրեմն վախ չեղած տեղէն աւելի վախնալու է եղեր:

---

Ամէն անգամ ու ամէն տեղ պէտք է որ [illegible] նալ, թէ ըէ ըի խործած տեղէն նէփ խնգայ. որով-հեփս խախտելի բանէն այնչափ մէծ վաա ըի գու որչափ ապահով բանէն: Քաղ նաապէտը նաա-հանգոտին մէջ աւելի պէտք է զգուշանայ՝ քան թէ ծովին մէջ. ինչու խմաստուն մը:

Այսպէս հասանեն՝ արկածք աշխարհի ,
անփոյթ շրջողաց՝ յապահով վայրի ․
Զի աներկեան՝ չեն ուսուեալ տեղի ,
յոր ոչ ժամանեն՝ վիշտք աղէտալի ։
Արթուն կաց ով մարդ՝ յանքոյթ վիճակի ,
'ի գործս 'ի գնացս՝ ժիր յամենայնի ․
Շատք իրրեւ զինքեանս՝ անվտանգ եղեն ,
'ի վտանգ մահու՝ կորեան ցաւագին ։

## Օձ , և Խեցգետին ։

Թէ ոչ գնաս՝ յուղիղ կարգին ,
զգեղ չարաչար՝ գործք քո դատին ։

Թէ այլոց հետ՝ շիտակ չերթաս ,
Մահին դասը՝ շիտակ կերթաս ։

մից ․ Խեցգետինը սպագօղը օձին հետ ընկեր կըլլայ , և միատեղ երթալու տանը կը նայի , որ օձը մեկին մեկալին չարութեն կուզէ ընել և խայթել ․ այս բանէն կասկած երթալով խեցգետինը միշտ կը խրատէր օձն որ խորամանկութիւնը թողու և իրեն պէս պարզամիտ ըլլայ ․ բայց օձը ամենեւին մտիկ չէր ըներ ։ Ուստի խեցգետինը օր մը տեսաւ , թէ օձը կը քնանայ բռնեց ճանկերովը անանկ սխմեց որ մեռցուց ․ և յետոյ երկնցընելով շիտկըցուց , սկսաւ մեռած օձին հետ խօսիլ ․ Թէ որ առաջ կըսէր այսպէս շիտակ և պարզ ըլլայիր , հիմա սաանկ

պատժով չէիր չխրատուէր · որովհետև ես ընկերը չխօսակ կուզեմ, հարկ եղաւ որ քեզ ալ շտկեմ:

---

Խրատ է անոնց որ թողուն չարութիւնը բարուն հետևէ ըլլան · վասն զի բարի ընօղը բարի կը գտնէ, և չար ընօղը՝ չար · երբեմն շուտ երբեմն ուշ:

Այս են խրատունք՝ արդարադատին,
չափէ 'ի գործոց՝ չափ չարասիրին ·
Զի որ ոչ դառնայ՝ 'ի գործոց չարին,
չարատանջ ուղղի՝ դանիւք արկածին:
Արդ մի դառնանար՝ ընդդէմ խրատին,
գանձեա 'ի սրտի՝ խրատ մաքրմին ·
փախիր 'ի գործոց՝ վնասաբերին,
Թէ ոչ կորնչիլ՝ կամիս յօրհասին:

---

## Առիւծ, և Գայլ:

Մի՛ զոք դրդուեր՝ ընդդէմ եղբօր,
զի մի՛ հասցէ՝ քեզ խաւար օր:

Չար մի խօսիր՝ եղբօր վրայ,
չար խորհուրդը՝ քեզ կը դառնայ:

մինչ · Ծեր առիւծ մը երբոր հիւանդ պառկեր էր այրին մէջ, ամէն կենդանիները գնացին զինքը տեսնելու բաց 'ի աղուէսէն · իսկ գայլը մատնութիւն կընէր առիւծին, թէ

աղուէսը քեզի բանի տեղ չի սեպելուն չէ֊
կաւ ։ Այս միջոցիս մէջ աղուէսն ալ հոն
հասաւ, տեսաւ որ առիւծը մռմռալով կը
բարկանայ իրեն, բանը հասկըցաւ ու մէկէն
առջին գնաց ըսաւ. Տէր իմ ո՛ր կենդանին
քու շահդ մտածեց ինչպէս ես, որ աշխարհք
պտըտելով քեզի համար դեղ գտայ բժիշկ֊
ներէն ։ Ի՞նչ դեղ է ըսաց առիւծը. քեզի
դեղ այն է, որ գայլը ողջ քերթես ու կաշին
տաք տաք հագնիս ։ Առիւծը հաւտալով
մէկէն զարկաւ գայլը պատռեց. երբոր կա֊
շին կը հանէր, աղուէսը ծիծաղելով ըսաւ.
առնկ հասկըցի՞ր՝ որ պէտք չէ տէրը բար֊
կութի շարժել, այլ բարեկամութիւն յոր֊
դորել ։

---

Որոնք որ իշխանին հաճոյ ըլլալու համար ուրի֊
շը կը մատնեն, և մեծաւորին սիրտը կը շարժեն
բարկութեան, այսպէս կը պատժուին ։

Գրգռիչ նենգաւորք՝ չարաչար պատժին,
այլոց գուբ փորեն՝ 'ի նոյն գլորին.
Որ չար խորհեցաւ՝ ընդդէմ ընկերին,
Երբ ոչ դառնայցէ՝ կորեաւ 'ի նմին ։
Քեզ է այս խրատ՝ ծառայդ վեհազնին,
մի մատներ զընկերն՝ առ օտար անձին.
Որչափ քաղցրակեաց՝ լինիս ընդ այլոց,
այնչափ բարութիւնք՝ յայլոց քեզ բերին ։

## Գինեմոլը, և Կին իւր։

*Ոյր կրթութիւնք՝ իցեն յոռի,*
*զինչ և առնես՝ միշտ է յոռի։*

Երբոր ձեւը՝ գէշ սորված է,
ինչ որ ընես՝ օգուտ չընէ։

*Միթ.* Մ՝էկ կին մը իր գինով էրկանը դեղ կը փնտռուէր. օր մը տեսաւ որ խիստ գինով է, տարաւ քարէ շինած գերեզմանին մէջ պառկեցուց, գերեզմանին դուռը գոցեց գընաց. կարծէր թէ ատով պիտի զգաստանայ մարդը։ Բայց իրիկուան գնաց գերեզմանին դուռը զարկաւ. գինովը ներսէն ձայն հանեց թէ մի՛ ես. կնիկն ալ պատասխանեց, թէ ես մեռելի հաց բերող եմ։ Գինովը կանչեց անոր, թէ ինծի ուտելու բան մի՛ բերեր, հապա խմելու. վասն զի ես շատ կը տրտմիմ երբոր կերակրի անունն կառնեմ ու գինիի անունը չեմ առներ։ Անատենը կնիկը գլխուն զարնելով կըսէր. վա՜յ անբաղդիս որ ճար մը չի գտայ քեզի շահելու, ահա չար սովորութիւնը քեզ անանկ կորսընցուցեր է, որ ճար չիկայ։

---

Խրատ ըլլա՛ մարդուն, որ չար գործերէ մէջ չըմտնայ. վասն զի չար սովորութիւնը կորսնցուցիչ

ու մուխ կընէ կըխորտակընէ · անանկ որ բնական է ըին պտուղն բաներն ու կըմտէն ըներ ինչպէս որ անէ ։ Որո՞ւն է վայ, որո՞ւն է խռովութիւն, որո՞ւն է դատաստան, բայց միայն գինեմոլ մարդուն · կըսէ Սողոմոն ։

Որ 'ի գործ վատթար՝ այսպէս սովորի ։
'ի նոյն վատթարեալ՝ մոլի յիմարի ·
Զի ունակութի՝ բնութին փոփոխի ,
Եղանի ըստ չափ՝ թէ չար թէ բարի ։
Թէ անկար երբէք՝ 'ի գործ ինչ յուղի ,
արա զ՞ներհական՝ բարին ցանկալի ·
Եւ թէ նոյն դառնաս՝ 'ի գործ առաջին ,
մոլեալ կործանիս՝ յայն անկանգնելի ։

---

## Բու, և Չղջիկ ։

Թէ ըստ տեղւոյն՝ չես նախատես ,
ոչինչ օգտիս՝ զոր և գործես ։

Որ տփէնին՝ պէտոյ ըլլայ ,
Էտէր ըրածն՝ ուխնի կըրթայ ։

Միթ · Մ՝էկը բռնեց բու թռչունը, և վանդակով պատուհանին մէջ կախեց · որ բոլոր գիշերը ձայն կըհանէր կերգէր · իսկ գիշերահաւը չըխմանալով սոր ձայնին եկաւ քովը մօտեցաւ, հարցուց թէ ի՞նչու ցորեկը ձայն չես հաներ, ու գիշերը կըկանչես ։ Անալ պատասխանեց, թէ առանց մտածմուն

քի չէ ըրածս. վասն զի ցորեկին երգելուս համար բռնուեցայ: Կրկնեց գիշերահաւը ծիծաղելով, թէ ասկէ ետեւ քեզի ոչ զգուշանալ պէտք է, և ոչ պահուիլ. անխելք այդ զգուշութիւնը բռնուելէդ առաջ ընելու էիր:

---

Բուն կամ պայպուշը օրինակ է անխոհեմ մարդկանց, որ դեռ եղած պտուղը վայելութիւն չեն ըներ ու դեռ չեղած պտուղը կուզեն: Մարդուս որոգայթը իրեն բերանն է. որ իր խօսքովը կը բռնուի. կըսէ իմաստունը:

'Ի զուր է ջանալ՝ յանցանել առթին,
որոնել զճար՝ փրկութեան անձին.
Խորհիլ և առնել՝ ըստ ժամանակին,
գործ խոհեմութեան՝ է խոհականին:
Արթուն նախատես՝ լեր ապագային,
մինչև է եղեալ՝ դեղ խորհեսց ախտին.
Զի գայ ժամանակ՝ երբ 'ի սոյն սահս,
ոչինչ դեղ և ճար՝ գտանել մարթի:

## Կատու, և խարտոց :

Վա՛յ որ լեզուն՝ զերկրուս ածէ,
բոլոր չ՛խսա՝ ինքեան ածէ :

[illegible]

Մը. Կատուն կըմտնէ ոսկերիչին խանութը, և հոն գտնելով խարտոց մը կըսկըսի լզել· բայց լեզուն խարտոցին ակռաներէն քեր-թըվելուն համար՝ արիւնոտեցաւ խարտոցը· իսկ կատուն կուրախանար՝ կարծելով թէ երկաթէն ուտելու բան կը հանէ· մինչև բո-լոր լեզուն մաշեցաւ :

---

[illegible]

Ո՛վ զխմբրդ դժնեայ՝ գործ լեզուագարին,
լսէ և խարտէ՝ զանուն օտարին·
Կարծէ խանգարել՝ զայլոց զբարին,
բայց ինքն մաշի՝ կտտորի յանձին :

Նախանձու է բերք՝ այս գործ խաւարին,
դառնացեալ ընդդէմ՝ բարեաց ընկերին.
Մի սրեր լեզու՝ այլոց ՚ի չնաս,
զի մի անզգայ՝ մաշեսցիս կրկին:

## Երկրագործ, և Բաղդ:

Եթէ բարեք՝ քեզ գլխեացին,
տուր փառս երկնից՝ և ոչ բաղդին:

Թէ որ յէտևէրը՝ ապրանք իյնին,
ճանըչէ՛ր տուր փառք՝ երկնաւորին:

Մին. Երկրագործ մը գետինը փորելու ատենը գանձ գտաւ, և այս պատճառաւ գիշեր ցորեկ գետնին պատիւ կընէր որ իրեն այն բարերարութիւն ըրաւ. օր մը բաղդը բարկանալով երեցաւ իրեն ըսաց. ով յիմար ինչու համար ինձի ընելու պատիւդ գետնին կընես. այն ոսկին ես քեզի տըւի, որ փարթամ ըլլաս, բայց գիտեմ՝ եթէ ժամանակը փոխուի, և այս ոսկին ուրիշին ձեռքն անցնի, անատենը պիտի պարսաւես զիս թէ բաղդ չունիմ:

---

Այն մարդ պարտական է, որ իր տըւած բարի-
քը ճանչնայ, և պատուէ տէրտէրը. [illegible]
[illegible]
[illegible]. Բայց [illegible] այն է որ [illegible]

կը իրենց խելքին կորսան, և յաջողութեանը այ-
տալով կը տրտնջան, ինչպէս թէ անոր իրենց հոգւոյն
ծերութեանը համար կորսայ, որ յաջողութեան մէջ
համբերութիւն ընեն, յաջողուածէ մէջ խոնարհութիւն:

Այսչափ է խորհուրդ՝ անիմաստ ռամկին,
որ ոչ ճանաչէ՝ ուստի գայ բարին.
Երբ գիտի բարեաց՝ գանձուց աշխարհին,
զայն երկրի գրէ՝ զայն պարգև բաղդին:
Աղբիւր է բարեաց՝ անսահման բարին,
հանուրց բարերար՝ ըստ էից հարկին.
Պատկան կալ ձեռաց՝ ամենակալին,
որ տայ և բառնայ՝ երբ կամք են նմին:

## Երկու ուղևորք.

Բազում խնդրանք՝ յաջողակին,
չեք բարեկամ՝ ձախողակին:

Յաջող բանին՝ խնդրող շատ կայ,
յախորդին մարդ՝ չի մօտենայ:

Ճըն. Երկու հոգի ճամբայ կերթային, մէ-
կը կացին մը գտաւ, ուրախանալով ամե-
նուն կըսէր, թէ կացին գտայ. իսկ ընկերը
կը խրատէր որ գտայ չըսէ, հապա գտանք
ըսէ. բայց մէկալը միշտ նոյն կըսէր: Քիչ
մը առաջ գային՝ նայիս որ կացինին տէրը
վազելով ետևնուն կուգար. անատենը գըտ-
նողը խօսքը փոխեց ու սկսաւ մէկալին ը-

*սել, թէ կորանք եղբայր։ Այնաւ պատա-
խանեց թէ ինչո՞ւ կորանք կըսես, հապա կը-
րայ ըսէ. վասն զի երբոր կացինը գտար՝
գտանք չէիր ըսէր՝ գտայ կըսէիր. ուրեմն
ինչպէս յաջողութեանդ զիս մասնակից չուզեցիր
ընել, պէտք չէ որ ձախորդութեանդ ընես։*

---

Ով որ յաջողութեան մէջ ուրիշին բարի չընէ, ձախորդութէ մէջ դէմը կուգայ. վա՜յ այն մարդուն, որ յաջողութեան մէջ հպարտանալով մարդու երե-նի նայիր։

*Բարեբաստք պանծան՝ յեւս յաջողակին,
ոչ զոք մասնակցեն՝ ընդ բարեաց մասին.
Բայց եթէ ժամանեն՝ 'ի ձախողակին,
բաշխեն և սփռեն՝ զայն ընդ բոլորին։
Մի՛ մեծամտիր՝ երբ կաս 'ի բաղդին,
մասնակցեա՛ զայն բաղդ՝ կարօտ ընկերին.
Զի յետս յընթադրիլ՝ դիւրաւ անուին
քեզ նշխարեսցի՝ և բաղդ օտարին։*

## Երկու գորտք :

Որ գոհ վարէ՝ կեանս աղքատին,
անքոյթ զուարթ՝ կայ յիւր կայեն :

[illegible]

Մջ. Երկու գորտ իրարու դրացի ըլլալով մէկը լճին մէջ կապրէր ապահով և աղքատ. մէկալը ճամբուն վրա քիչ ջրի մէջ կապրէր հարուստ: Լճին մէջինը շատ անգամ կը խրատէր ընկերին որ իրեն քով գայ ապահով ապրի, և դուրսը վտանգի մը չի գայ. բայց մէկալն ամենևին անոր մտիկ չէր ըներ՝ թէ ես հոս շատ կերակուր կը գըտնեմ: Սակայն շատ զղջացաւ երբոր սայլ մը վրայէն անցնելով տրորեց, որ մեռնելու ատենը կը կանչէր, թէ ինչ անխելքութիւն է, որ շատ ուտելու համար կեանքս կորսնցուցի. թէ որ ընկերոջս խօսքը մտիկ ընէի, հիմա ողջ կըլլայի :

---

[illegible]

Աղքատք և փարթամք՝ զմի օդ շնչեն,
Ի կենաց շաւիղ՝ այլ ոչ զոյգ գնեն։
Նա գոհ յիւր փոքուն՝ ապահով շրջի,
սա անդոհ բաղձմանց՝ 'ի վտանգ մաշի։
Այս կրկին վիճակք՝ քեզ տեղ են կրկին,
շատանալ փոքու՝ 'ի կեանս աղքատին.
Թէ չես գոհ փոքուն՝ փափաքիս շատին,
առաթուր վշտիս՝ 'ի մահու անուին։

## Մեղրագործ, և Մեղու։

Մերժեմ 'ի բաց՝ զայր անզգամ,
մի՛ զընտանի՝ և բարեկամ։

Հեռու կեցէ՛ք՝ անզգամքն,
և թէ օգնէն՝ բարեկամքն։

մլդ. Ցորեկին մեղուանոցին մէջ մէկ մարդ մը մտաւ մեղր գողցաւ. երբոր տէրն եկաւ տեսաւ թէ փեթակն աւրած է, զարմանալով կայներ կընայեր թէ ով ըրեր է. անատենը մեղուներ ալ դարձան եկան. տեսան որ մեղրագործը փեթակին քովն է, սկսան խայթել։ Ո՜վ անզգամներ կըսէր մեղրագործը ձեր մեղր գողցողին բան չըրիք, ու ձեզի նայօղը կըխայթէք։

---

Կյան [illegible]էն որ անձնաւորէ թշնամեաց չեն զգա-
ցուն[illegible]արեկամաւորէ կը ձարձեն. իսկ բարեկամքն է

…ու կը փարչըննէն · բայց ինքը կը համոզըան թէ լաւ…
…ն վէրք բարեկամին, քան համբոյր թշնամոյն :

…ւել զինք՞ն և զայլս՝ է մտաւորին,
ընտրել զ՞բարեկամ՝ մերժել թշնամին ·
իսկ սիրել զվնասն՝ ատել զբարին,
գործ է յիմարաց՝ խորհուրդ անբանին :
…ն որ գութ խրատ՝ մերժեն մտերմին,
կենակցին անհոգ՝ ընդ դող թշնամին ·
Բայց գայ ժամանակ՝ յոր խաբին ծաղրին,
յայնժամ ճանաչեն՝ զ՞յարգ բարեկամին :

## Երկու շունք կրթեալք :

Յոր ինչ 'ի բնէ՝ ոք սովորի,
այնպէս մնայ՝ չար թէ բարի :

Ինչ բանի որ՝ սորված ըլլայ,
Գէշ թէ աղէկ՝ անանկ կերթայ :

ճէ. Մէկ պարոն մը երկու շուն ունէր · մէկին որս ընել սորվեցուց, մէկալին տուն պահել · որսորդ շունը միշտ որսի երթալով կաշխատէր, և ինչ որ բռնէր պահապան շունը մէկ տեղ կուտէր հետը : Ուստի օր մը որսորդ շունը բարկացաւ, և նախատելով կըսէր անոր · դուն ամէն օր առանց աշխատանաց հանգիստ նստեր ես · իսկ ես միշտ կաշխատիմ, դուն կուտես : Պատասխան տըւաւ պահապան շունը՝ թէ զիս մի՛ պարսա-

ւեր, հապա մեր տէրը պարսաւէ՛ որ ինձի աշխատիլ չի սորվեցուց, քեզի սորվեցուց։

---

Խրատ է ամէն մարդու մանաւանդ ծնողաց, որ զաւակնին պզտիկունէ ատենը բարի բաներով կրթեն. վասն զի ան ատենը ինչպէս սորվին՝ անանկ կըլլան։

Ծնողք վարդապետք՝ յայս պարաւանդին,
քաջիկ հրահանգել՝ բոյս բարուց մանկին.
Զի մանկունք ցվերջ՝ զոյն առնել կրթին,
գովեստ և պարսաւ՝ նոցա վերբերին։
Զանձն սովորիլ՝ 'ի բարեաց մասին,
առաքինանալ՝ իբրև գիւցազին.
'Ի քեզ նկարեալ՝ բարեաց բոլորին,
տենչալի տիպար՝ գացես անփորձին։

---

## Ձկնկուլ, և Ծով.

Մի՛ հաւատար՝ այլոց դեղ,
ևս առաւել՝ զանձն քո քեզ։

Չէ՛ հաւատալ՝ քեզ ուրիշին,
և մանաւանդ՝ քեզ քոյ անձին։

մէ. Ձկնկուլ թռչունը անապատասէր բե-լալով մեծ ծովուն քովերը կը կենցաղավարի. և ծովուն քովի ժայռերուն մէջ ձագ կը հանէ, ինչպէս կըսեն։ Եղաւ որ ձագ հանած ատենը կերակուր գտնելու գնաց. այս

Գլոցիս մէջ ծովը ալէկոծելով ալիքները քարին զարկեր բունը ծովուն մէջ ձգեր էր · Երբոր Թռչունը դարձաւ տեսաւ որ ձագերը ջրին մէջ կորսուեր են · վա՜յ ինձ կըսէր, Ես ցամաքը Թշնամի կարծելով ծովուն ապաւինեցայ · սակայն ծովն է եղեր իմ բուն Թշնամիս, որ ես չէյտէի ։

---

Խրատ է անոնց, որ Թշնամիէն փախչելու համար անանկ տեղ բարեկամի յետ կը մտանէին, որ Թըշնամիէն աւելի վնաս կը բերէ իրենց ։

Զի՞նչ շահ արթուն կալ՝ 'ի մի վտանգին,
յայլ վտանգ հաշիլ՝ Թմրեալ գլխովին ։
Զի որ ոչ գիտէ՝ եզր սահմանին,
անդարձ մոլորեալ՝ դանդաչէ յուղին ։
Ծով է այս աշխարհ՝ որ ցանգ երերին,
ալեբեր հողմունք՝ խաղան 'ի նմին ·
Արդ մի վստահիր՝ փոփոխականին,
զի մի ծախեսցիս՝ յանյատակ ծոցին ·

# Այր, և Կին։

Զխմրդ՞ գժնեայ՝ կին անզգամ,
խայթէ զընկերն՝ օտարս համայն։

Զոր խնայէ էն՝ օձի նման,
որքան մօտին՝ [illegible] խօսան։

մէջ. Մէկ չար կնիկ մը ամենուն հետ ատելութիւ վարվելով կռիւ կընէր. օր մը իրեն ընկերն ուզեց հասկընալ, թէ արդեօք հօրը տունն ալ անանկ կըվարվի. ուստի մէկ պատճառով մը կինը խրկեց հօրը տունը. բայց քիչ օր անցաւ նայիս դարձաւ եկաւ. ընկերը հարցուց իրեն թէ անոնց հետ ինչպէս կը վարվէիր հոն։ Անաւ պատասխան տըւաւ, թէ ինչպէս պիտի վարվիմ հովիւներն ալ ինծի հետ աղէկ չէին երթար։ Ո՛վ անզգամ կին՝ պօռաց էրիկը, եթէ անոնց հետ ալ կռիւ ըրիր, որ առտուանց կերթան ոչխարներուն հետ մթուն կը դառնան. հապա ինչ չես ըներ անոնց, որ գիշեր ցորեկ մէկ տեղ ես։

Կատարեալ մարդը [illegible] որ երթայ [illegible] հետ կը [illegible], և [illegible] հետ [illegible] կը [illegible]. [illegible] է թէ [illegible] [illegible] [illegible] [illegible] հետ [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible] հետ կը [illegible]։

Այս բոյսք են բարուց՝ կնոջ ժանտածին,
որ մէջ աղմկէ՝ զընկեր դրացին.
Ապականիչ թոյն՝ կրէ 'ի լեզուին,
ացցել զայն այլոց՝ բերկրանք են սրտին։
Բարէ դառնութեն՝ այն անզգամին,
յորմէ մերձաւորք՝ հեռանան փախչելին.
փոխան գգուանաց՝ որ պարտ էր 'նմին,
առեն հալածեն՝ դժնդակ զայն կին։

## Ուլ, և Գայլ։

Եթէ ունիս՝ բան և հանճար,
յաղթես ընաւից՝ չիք քեզ դժուար։

Թուղուսս տուս գործէդ՝ այլ բան ընէս,
ըսպ ձուռնէդ՝ տեղ նըբերես։

ճլը. Մէկ այծի ձագ մը իր ընկերներէն մոլորած երբոր կերթար՝ գայլ մը առոր եւէն ընկաւ, այծը հասկըցաւ որ ազատում չունի՝ դարձաւ ըսաց. ով գայլ լաւ գիտեմ որ քեզի կերակուր պիտի ըլլամ. ուրեմն կը խնդրեմ որ խեղճութեամբ չի մեռնիմ. եկուր քիչ մը խաղ կանչէ, եսալ պար խաղամ. անկէ ետև ինչ որ կուզես ըրէ։ Իսկ գայլը հաւանեցաւ անոր, ու երբոր ոռնալու ձայն կը հանէր որ այծը խաղայ. շները գայլին ձայնը առին հեռուէն, և մէկէն հոն հասան հալածեցին զգայլը։ Բայց գայլը փախչելով կըսէր այծին, թէ արժանապէս ինձի այս

բանն եղաւ. աղէկ էր երաժշտութեն ընել, որ բնական խոհարար աղջի եմ։

---

Ո՛չ որ իր սորված բանը կը յիշէ՝ անասնոր բանի ձեռք կը դառնէ՝ դժբախտութեան մէջ կիյնի։ Կա՛յ անանց որ չիտակ ճամբան կը թողուն, ու խոտոր կերթան. կըսէ Առակը։

Այսպէս որ ձգեն՝ զիւրեանց առնելին,  
միա գնեն այլոց՝ գործոց և բանին.  
Բայց անդէն ծաղրին՝ առ մտաւորին,  
որ հանճար յաղթէ՝ բնութեն նոցին։  
Զի՛նչ հզօրագոյն՝ քան զէն իմաստին,  
երբ հաստ սրեալ՝ է յիւր յեսանին.  
Հատանէ զջիղ՝ արքայից բազկին,  
ծաղրեալ զխորագէտն՝ անձէ յարկածին։

---

## Գողք, և Աքաղաղ։

Պատճառ լինել՝ գործոց բարեաց,  
ատելի է՝ չարասիրաց։

Թէ լաւ բանի՝ ըլլաս պատճառ,  
կը բամբասեն՝ չէղ լաւալար։

մէթ. Գողերը տուն մը մտան թալլելու համար. բայց տանը մէջ ուրիշ բան չի գտան՝ մինակ աքաղաղ մը գտան բռնեցին տարին. երբոր պիտի մորթէին կաղաչէր որ թող

տան զինքը․ վասն զի կըսէր ես շատ պխտա-ւական եմ մարդու, որ գիշերը կարթընցընեմ զանոնք, կելլեն կաշխատին ։ Այն ատոր համար՝ ըսին գողերը դուն մահապարտ ես, որ զանոնք արթընցընելով չես թողուր մեզի գողութիւն ընելու ։ Զայս ըսելով գլուխը կտրեցին թէ ինչու համար ատանկ բանի պատճառ կըլլայ ։

---

[illegible]

Այսպէս թշնամիք՝ բարեաց բոլորին,
ըզպատճառ բարեաց՝ ատեն խստագին․
Զի որ ակն է չար՝ նմա չար թուին,
բարեգործ արդարք՝ պատճառ բարեծին ։
Դու մի՛ հետեւիր՝ եղծողաց բարին,
նպաստ յարդութեն՝ տուր բարեսիրին․
Որ պատճառ լինի՝ բարեաց աշխարհին,
չքնաղ պանծալի՝ լինի նազելին ։

## Գիշերահաւ, և Կուզ։

*Որ ըստ անգղոյն՝ զէն իւր փոխէ,*
*անյաղթ միայ՝ զերծ 'ի չարէ։*

Թէ ըսփ փէդրոյն՝ բանըրք ֆոխէս,
ամէն բանի՝ վրան կէլլէս։

*Մի՛. Մօրբեմն գիշերահաւը թռչելու ատենը յանկարծ վար կիյնի. կուզնալ հոն գըտնըվելով կըբռնէ զինքն, որ սպաննէ։ Իսկ գիշերահաւը կաղաչէր որ չի մեռցընէ. պատասխանեց կուզը ամհարը՝ թէ չեմ կրնար քեզ թող տալ. որովհետև բնութիւն ամէն թռչունի հետ հակառակութիւն ունիմ։ Նա ըսաց գիշերահաւը թռչուն չեմ. հապա մուկ եմ։ Զայս որ լսեց կուզը թող տըւաւ։ Ուրիշ անգամ երբոր ընկաւ գիշերահաւը կատուն զինքը բռնեց. կաղաչէր թէ զիս մի ուտեր։ Կատուն ալ ըսաւ թէ բնութիւ ամէն մկներու թշնամի եմ. անոր կըսէր թէ ես մուկ չեմ թռչուն եմ։ Եւ այսպէս երկու անգամ անունը փոխելով ազատեցաւ գիշերահաւը կէնձէ փախչին ։*

---

Պէտք է ժամանակին յարմարելով վարանգէ ազատիլ, և ամէն մարդու հետ խելքով վարուելով օգուտ շահիլ, ու թէ աղէկ առաւելութիւն քաշելով աւելի բանի մը նայիլ։

Յարմարիլ աւթից՝ գործ է հանճարին,
մի յամառութ՛ք՝ պինդ կալ 'ի նմին.
Զի փոփոխ շնչմունք՝ հողմոց աշխարհին.
հարկաւ փոփոխեն՝ պարագայս անձին:
Մի կաշկանդեսցեն՝ զ՛քեզ բերմունք ազգին,
մի սովորութիւնք՝ 'ի քեզ պնդասցին.
փոխեա զայն երբեմն՝ ըստ ժամանակին,
որով 'ի լաւ անդր՝ գործք նախնեաց փոխին:

## Ձիւ, և Լ,չ:

Մի երաներ՝ բաղդ մեծատան,
զի տառապանք՝ նմին մերձ կան:

Երնէ՛կ մի տար՝ մեծ-մեծին,
Նայէ՛ ներսէն՝ ինչ վիշտ ունին:

Միտ. Լեռան էշը կը տեսնէ ընտանի էշն, ու քովը մօտենալով կ'ըսայի անոր փափկութեը երանի կուտայ, որ քաղքի մէջ գտնըւելով լաւ կուտէ և հանգիստ կեանք կը վայելէ: Ուրիշ անգամ տեսաւ որ բեռնաւորեալ կերթար. տէրն ալ ետևէն գաւազանը զարնելով կը քշէր, ըսաց թէ ես ասկէ ետև քեզի երանի պիտի չի տամ. վասն զի կը տեսնեմ, որ առանց չարչարանքի գուն երջանկութիւդ չես կրնար վայելել: Ուրեմն իմ աղքատութիւս քու մեծութենդ շատ վեր է, որ ազատութիւ ուզած տեղս կերթամ:

Պէտք է որ աշխատողները իրենց վիճակին կը-
գոհ ըլլան, փնտռելով ձեռնարկութիւններուն յաջող նէ
[illegible], որ միշտ ծփծփուող կը տանջին։
Շատ աղէկ է քիչ ունենալ հանգիստ, քան թէ մե-
ծանց ունենալ խռովութեամբ․ իրենց ինչպէսնները։

*Մեծատանց աղքատք՝ երանեն բաղդին,*
*Նոյնպէս մեծատունք՝ կենաց աղքատին․*
*Թէ կշռես նոյուն՝ զվիճակ ներքին,*
*փարթամք են թշուառք՝ աղքատք երանին։*
*Մի ցանկար փառաց՝ փարթամութեանն,*
*որոյ տագնապք են՝ ընկից սրտին․*
*Լաւ են կեանք անփոյթ՝ որ անվիշտ վարին,*
*քան զայն ցեցակեր՝ կեանք տրտմականին։*

## Էշ, և Գորտք։

*Ծոյլ հեղգասիրտք՝ փոյթ գանգատին,*
*ոչինչ յայլոց՝ վաստակս հայցին։*

Ծոյլն որ նեղի՝ գանգատ կընէ,
այլոց ջանքին նայէլ [illegible]։

*Մխք․* Էշը *փայտ բարձրցած երբոր ջրէ մը կանցնէր, ընկաւ ջրին մէջ մնաց, չէր կըր-նար ելլել․ ուստի փոխանակ աշխատելու սկսաւ հառաչանքով լալ։ Իսկ ջրին մէջի գորտերը լսելով անոր հառաչանքը ծաղր կը-նէին ու կըսէին․ Թէ որ դուն մեր տեղը ըլլայիր, և այսչափ ժամանակ ջրին մէջ մը-*

նայիր ի՛նչ պիտի ըլլայ · որ կարող մը ժամա- նակ հաս մնալուդ համար առանց կուլալ :

---

Խրատ է ծոյլ մարդկանց · որ թէև մը բանով կը փրկուին, և չեն նայիր գիտէր ջուրէն աշխատասիրու- թեան վրայ : Գիտունները ծոյլ մարդը կը նմանցընեն փտած ծառի, որ միայն ծանրութ̄ մը ունի ամենևին բանի չեգար :

Այս բնական բերք՝ վասն տրտնջողին,
Թեթև նեղութի՝ նման մեծ Թուլին.
Յայլոց մեծագոյնս՝ եթէ հայեսին,
Թեթևագունից՝ յօժար տանէին :
Արդ փոքրագունից՝ մտաբ՛ր ՚ի զինին,
մեռ զխորդ ՚ի վերջա՚սանձին վաստակին.
Յամօթ լեր ով վատ՝ընդ գործք քո չնչին,
ուսի՛ր զօրանալ՝ ՚ի մեծագունին :

---

## Հաւ, և Օձիձագն :

Զօտար սերմանս՝ հո՛ր զքարի,
և մի խառներ՝ զորն ընդ բարի :

Գէշը աղէկին՝ հետ չէ խառներ,
ձորը թէղէ՝ հետ ըլլեր :

Միտք. Օր մը հաւը կը գտնէ օձի հաւկիթ, հոգաբարձու ըլլալով կը տաքցընէ որ ձագ հանէ : Զայս տեսնելով ծիծեռնիկը զարմա- նալով անոր անխելքութեանը վրայ · ծիծաղելով

կըսէր, ինչո՞ւ այդ բանը կընես․ չէյամ՞ս որ ձագերին եղածին պէս նախ քեզի պիտի սկըսին վնաս տալ: Ան ատենը հաւը մայրաբարով ըսաց․ այս ինչ յիմարութիւն է իմ ըրածս, որ ասանկ օձ թշնամիս կը սնուցանեմ․ որ նախ ինծի վնաս տալով ձագերս պիտի կորսընցընէ։

---

Մեծ զգուշութեան պէտք է նախ ծնողաց, որ չար ու անառակ տղաքը չի մօտեցընեն իրենց անմեղ մանկանց․ Երկրորդ պէտք է վարժապետներուն որ թող չի տան աշակերտաց չար ընկերանք ուրիշ, անհաւատ աղանդաւորներուն բաները կարդալ։

Զխմբութ քաջ խորհի՝ խոհեմ կենդանին,
մի՛ լինիր ասէ՝ դարմանիչ չարին․
Որոյ թոյն գժնեայ՝ 'ի ներքս պահի,
խայթէ և ժայթքէ՝ երբ 'ի չափ ածի։
Խրատ է ծնողաց՝ և քաջ վարժողին,
անարատ պահել՝ զսիրտ անմեղին․
Որ խառնէ զթոյն՝ քաղցր անընդին,
կորուստ պատրաստէ՝ իւր անմեղ դաւին։

## Աղաւնի, և Մնօթ:

Արդ մի՛ անյագ՝ բերիր յուտել,
զի մի՛ անկցիս՝ 'ի վիշաս անել:

Ուտել խմել՝ շատ մի ցանկար,
շատին վնասն՝ այս է պատճառ:

մին. Մէկ աղաւնի մը խիստ ծարաւցած ջուր կը փնտռէր այնչափ բաղձանքով, որ երբ տեսաւ պատին վրայ ջրի աման մը դը- րած, չփորձութէն կարծեց թէ իրաւ ջուր է, վեր ելաւ ուժով մը զարկաւ պատին վը- րայի ամանին որ էյնի. բայց շատ զըջացաւ. լան զի անանկ սաստիկ պատին զարկաւ թևերն, որ վնասելով վար ընկաւ. և երբոր բռնըվեցաւ կուլար թէ ափսոս իմ անխել- քութենս, որ կաթ մը ջուր խմելու համար՝ անմտութեան այս խեղճութեան մէջ զիս ձգեցի:

Խրատ է անոնց, որ առանց մտածելու իրենց ցանկութեան ետևէն անանկ կ'երթան, որ վնասելով կը կորսուին: Ինչպէս որ դժոխքն ալ կորսուեցուն կերթանք, ասանկ ալ ագահին ալնը. կ'ուտէ առանց:

---

Այլպէս որ անյագ՝ անձնայ յըմպելին,
անդէն կորնչի՝ 'ի նոյն հեշտալին.
Զի բանական կերք՝ կորստականին,
վաղ կարապետէ՝ 'ի դուրս օրհասին:

Արդ երբ տեսանես՝ սրտիդ բերկրալին,
մի՛ գահավիժիր՝ անսանձ 'ի նմին.
Զափակցեալ զկիրս՝ ըստ բանականին,
չքնաղ վայելես՝ զերկնածիր բարին :

---

## Աղջիկ, և Լալականք :

Բազումք առ սէր՝ ոսկւոյն անբան,
առնեն զգործս՝ եղերական :

Շատ մարդ ոսկւոյն՝ համար կ'ընէ,
լալա բաներ՝ որ արժան չէ :

մխ. Մեծատուն մը երկու աղջիկ ունէր· ատոնց մէկը երբոր մեռաւ՝ լալկան կնիկներ բերին, որ չարաչար ողբ կընէին. մէկալ աղջիկը տեսնելով անոնց չափազանց լացը՝ կը զարմանար թէ այս ի՞նչ խեղճութիւն է. ո՜հ մեզի պէտք էր ատանկ լալ հարկաւ, որ կսկիծը մերն է. չէ թէ ատոնց որ ատանկ ստակի կուլան : Պատասխանեց մայրը թէ մի զարմանար որդեակ ատոնց խեղճ լացին վրա. որովհետև ստակի համար կընեն. ըստակին ուժն է, որ կըլացընէ՝ չէ թէ կըսկիծը :

---

Շատ մարդիկ կան որ արծաթասիրութեան և փառասիրութեան համար լալա բաներ կընեն, որ չէն ըսուար. Հապա նէ ցանկութիւնը մտերմին կը թողուն :

Այս գործս է այժմեան՝ դարու արուամածին,
յոր 'ի սէր օգտի՝ գործեն զեղկելին ․
Աչք ամենեցուն՝ են յանբան ոսկին,
միտք ամենեցուն՝ ձգել զայն յանձին ։
Զինչ ինչ կործանէ՝ գիրս հոգադնոմն,
'ի սուսեր մաշէ՝ մարդիկ երկրածին ․
Բայց աշխարհակուլ՝ այս հրահալելին,
որ զաշխարհս ողջոյն՝ գործէ լալագին ։

## Հովիւ, և Ոչխարք ․

Զարիս խորհել՝ բարերարին,
գործ է ախմար՝ ապերախտին ։

Բարերարին՝ չար մի՛ ուզեր,
որ քեզ հասնին՝ բարի օրեր ։

միտք ․ Մէկ հովիւ մը ոչխարներին անտառը տարաւ, և կաղնի ծառին տակը հաներց իր լաթը փռեց՝ ելաւ ծառին վրայ, որ պտուղը վար թափէ, բայց ոչխարները պտուղն ուտելու ատենը անոր լաթն ալ միատեղ կերան ։ Իսկ հովիւը երբոր վար իջաւ տեսաւ որ լաթերը չէ կան, ով անզգամ կենդանիներ ըսաց, դուք ուրիշներուն բուրդ կուտաք 'որ լաթ շինեն, իմ լաթերս կուտէք, որ ձեզ այսչափ կը խնամեմ ։

Կան անանկ մարդիկ՝ որ հարկաւոր մարդուն, և իրենց ընտանեացը տէր և բարիք մը չեն ուզեր ընել, օտար անարժաններուն կընեն, որ փոշը կերթայ։ Ով որ բարերարին չար հատուցում կընէ, չարը իր տնէն չի պակսիր. կըսէ իմաստունը։

Անոպայ տխմարք՝ յայս միտս բերին,
Թողեալ զընտանիս՝ օգնեն օտարին։
Ի զի դառնացեալ՝ բանիւ նենգողին,
ընդդէմ ելանեն՝ խնամակալին։
Խակամիտ մանկանց՝ խրատ է անգին,
զընկեր և զօտար՝ ոչ ճանաչողին.
Որ մերժեն խոտեն՝ զութ խնամարկուին,
անկանին 'ի ձեռս՝ ոխերիմ չարին։

## Հաւ, և Ձագք իւր։

Ձի՛ք ապաւինով՝ պատսպարան,
իբրև ամուր՝ հնազանդութեան։

Մտի՛կ ընելը՝ հնազանդութիւն է,
տեղ չի՛ մօտեր՝ փառաւոր բան։

մին. Երբեմն հաւը ձագերն առաւ հեռուն գնաց ուտելու բան գտնելու համար. տեսաւ որ ուրուրը կը պտըտի օդին մէջ անոր մանրը ձագերն յափշտակելու համար. մէկէն կանչեց քովը զանոնք ու թևերուն տակը պահելով ազատեց թշնամուն ձեռքէն։ Իսկ ձագերը տեսան, որ ուրուրը հեռա-

ցաւ, եղան ինքնագլուխ կըպտղտէին. քիչ մը առէնեն եաւ նորէն եկաւ ուրուրը, հաւը նորէն կանչեց ձագերն, որ գան թեւին տակը պահվին. որոնք որ հնազանդեցան եկան մօրը թեւին տակը մտան, ազատեցան. իսկ անոնք որ չուզեցին մօրերնուն հնազանդիլ և քովը գալ, ընկան թշնամւոյն ձանկը կորան։

---

Խրատ է մանկանց. որոնք որչափ հնազանդ են ծնողաց և իւրեանց պետին, [illegible] [illegible] [illegible]. իսկ անհնազանդ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։

Որդի հնազանդ՝ ծնողաց ձայնին,
քա՛ջ պատսպարի՝ ընդ թեւօք նորին.
Ճիրանք և մագիլք՝ դժնեայ ոսոխին,
ոչինչ վէրս առնեն՝ 'ի վերայ անձին։
Իսկ որ անհաւան՝ գտանի նմին,
ինքնակամ շրջի՝ ուր կամք իւր բերին.
Երագէ ինքեան՝ ճիրան գազանին,
մանրի կործանի՝ 'ի նոյն դառնագին։

## Պարտիզպան, և Մուկն։

Գործ վշտաբեր՝ զօշաքաղին,
է միշտ քաշել՝ զօգուտն անձին.

Շահասէր մարդն՝ ամէն բանէ,
Միայն իրեն՝ շահ կը քաղէ։

*Միտք*. Պարտէզպանը էգիկին մէջ մէկ մուկ մը կը բռնէ. երբոր պիտի մեռցընէր, սկսաւ մուկն աղաչել, թէ մի ապաններ զիս մեղք կը գործես. վասն զի ես քու ծառադ եմ, միշտ քեզի համար կաշխատիմ ու գիշեր ցորեկ գետինը կը փորեմ աւանց վարձքի, և հողն ալ ուրիշ տեղ մը չեմ տանիր։ Պատասխանեց պարտէզպանը թէ ինչ որ ընես, միայն քու շահիդ համար կաշխատիս, և քեզի օգուտ ըլլալու համար աշխարհքի վնաս կուտաս. այս պատճառաւ պէտք է որ դուն անպատճառ մեռնիս։

---

Ամէն գործքի մէջ պէտք է դիտաւորութիւնը նայել գործողին. շատ բան կայ որ ինքը չար չէ, բայց չար վախճանով ըլլալուն համար չար կելլայ։

Դժնեայ զօշաքաղք՝ զանձանց շահ խորհին,
'ի վնաս այլոց՝ բերկին խնդալին.
Բայց երբ գործ իւրեանց՝ յերևան ածին,
անպատիւ լինել՝ ջանան յատենին։

Ո՛ւր յայնժամ լռօղ՝ ձայնի զրկօղին ,
ինքեան դատապարտօղ՝ նոյն իսկ գործ անձին.
Զի գործք թէ չիցեն՝ կարգեալ՝ 'ի վախճան,
հարկաւ կորնչիլ՝ կայ 'ի վախճանին :

---

## Աղուէս , և Շուն :

Որ վասն այլոց՝ չարիս խորհի,
չարագունին՝ ինքն հանդիպի :

Թէ որ այլոց՝ չար ուզենաս ,
Քեզ չարերու՝ կը դիպնաս :

մխթ. Մէկ աղուէս մը խորամանկութե՛ մեռել ձևացաւ , և դաշտին մէջ ընկած մնայ. որ թռչունները մօտենալով իրեն , առանց աշխատանաց բռնէ զանոնք ուտէ. Բայց ըրած խաբէութիւնը գլուխը կերաւ. վասն զի շուն մը դիպուածով անցաւ անկէ , տեսաւ որ աղուէսը բաւէր պառկեր է. մէկէն վրան վազեց սպաննեց. երբոր կըմեռնէր կըսէր ողորմելին , ուրիշները խաբել ուզելուս համար աչա ես խաբուեցայ , և ըրածս գտայ. Ճշմարիտ է ըսեր թէ ինչ որ ընես՝ զայն կըգտնես :

---

Ո՛րչափ խորամանկ ըլլայ և խորագէտ, այնչափ քէնէ խորամանկներուն կը պատահի , դառն ինչ չարութիւն որ կը մտածէր ուրիշին , բոլորը իր գլխուն հասնի . չի անդամին կործանումը չար է :

Զոր ինչ ոք խորհի՝ առնել ընկերին,
նոյն վերադառնայ՝ յիւր ներգործողին.
Զի գործ 'ի պատճառն՝ բերին հոլովին,
Թէ վատ թէ ընտիր՝ յայն կեդրոն յանկին։
Իսկ քեզ մտախոհ՝ վիճակեալ բանին,
'ի ձեռն է աննենգ՝ վարիլ ընդ մանկտին։
Որչափ խորամանկ՝ գտցիս ընդ այլոց,
'ի նոյն ըմբռնեալ՝ մանրիս դառնագին։

---

## Շուն, և Տէրն.

Պահել զքոյս՝ թէ չես արթուն,
զխարդ յայլոց խնդրես զնոյն։

Թէ չէս հոգար՝ տուն տու բարէն,
Ինչ շահ կընէ՝ հոգն ուրիշէն։

մճ. Մէկ մարդ մը շատ հաւ կըպահէր հաւնոցին մէջ. գիշեր մը մոռցաւ հաւնոցին դուռը փակելու. ուստի աղուէսը գիշերն եկաւ բոլոր հաւերը խեղդեց ։ Առաւօտուն երբոր տեսաւ տէրը այս եղած վնասը, սաստիկ բարկանալով սկսաւ շունը ծեծել, թէ ինչու համար անհոգ կեցար նայելու, որ աղուէսը զանոնք խեղդեց ։ Պատասխան տըւաւ շունը, թէ տէր իմ դուն առանց պատճառի զիս կըծեծես. որովհետև եթէ դուն անհոգ եղար քու հաւերդ նայելու, և չի մտածելով դուռը բաց թողուցիր, որոնցմէ այնչափ շահ ունէիր, ինչ կուզէիր որ ես

ընեմ․ դու՛ն քու ախտական բանը չի՛ նայե-
լէ՛ն ետև ես ի՛նչպէս պիտի՛ նայիմ։

---

Օրինակ է ծոյլ մարդոց, որ իր բանին հոգ չը-
տանելով ուրիշին յետևը կընկնի, և կուզէ որ ու-
րիշը սա փնտռէ իրեն բանը․ չգիտէ թէ ուրիշին
ալ չի կայ։

Անիրաւ գատամունք՝ զանցառու հեղգին,
որ յայլոց վերայ՝ ձգէ մեղս անձին․
Զոր ինքեան անկ էր՝ առնել ըստ կարգին,
Թողու հեղգութեան՝ առնել օտարին։
Թէ դու չես ոչ վասն՝ հոգածու անձին,
հի՞մ յայլոց խնդրես՝ հոգ տանիլ նմին․
Եւ եթէ դու քեզ՝ չես հաւատարիմ,
ո՞վ ոք քեզ լիցի՝ բարեկամ ներքին։

---

## Շուն, և Լոշ։

Չէ վեհապանծ՝ տեան արտաքին,
Թէ համբաւուն՝ չիցէ ներքին։

Պիտի տեսքը՝ բան մը չարժէ,
թէ որ ներքի՝ սիրտն անանց չէ։

մծու․ Շունը գայլին հետ պատերազմ ու-
նէր․ տեսաւ որ գլուխ չպիտի կրնայ ելլել,
ուզեց ընկեր մը գտնել որ անով թշնամուն
յաղթէ։ Ահա օր մը հանդիպեցաւ խոզին,

որ կը գոռար , և վրայի համետը ամբերը զէնք կարծեց · նայեցաւ որ ձայնն ալ շատ զօրաւոր է , միտքը դրաւ թէ խչուն ալէս ուժով և քաջ կենդանի չի կայ · ուստի իրեն ընկեր ըրաւ ու միատեղ գնաց գայլին հետ պատերազմելու ։ Բայց էշը երբոր տեսաւ հեռուէն գայլը՝ սիրտը փըթելով մէկէն փախաւ թողուց շունը մինակ ։ Իսկ շունը զարմանալով կըսէր եւեէն , թէ մեղք այդ ձայնից ու տեսքից որ սիրտ չունիս · ուրեմն դրսի տեսքին նայելու չէ եղեր , հապա ներսի սրտին ։

---

Խրատ է առակս՝ որ մեծախօս և մեծագլուխ մարդը մեծ չը համարին · վասն զի մարդուս մեծութիւը սրտին և հոգւոյն վրայ է , չէ թէ մարմնոյն ։

Ռամկական մտաց՝ այս ծնունդ յետին ,
որ միայն դատի՝ տեսլեամբ արտաքին ·
Յորժամ տեսանէ՝ զչյաղթանդամ մարմին ,
կարծէ զերկնաձիր՝ ոգիս 'ի սրտին ։
Իսկ իմաստնոց է՝ կշռել զներքին ,
վաւերական ճրագ՝ փայլի 'ի նմին ·
Զի այնու մարդն է՝ անյաղթ 'ի մարտին ,
և ոչ անարի՝ դիմօքն ահագին ։

## Սարեակ, և Տատրակ ։

Մի՛ ինչ գրեր՝ զ°ձայն ճռուողին,
երկի՛ր յաւէտ՝ որ կայ լուին ։

Շատ խօսողէն՝ դուն մի՛ վախնար,
անկէ վախցի՛ր՝ որ չկայ խօսար ։

Մթք ․ Սարեակը տատրակին հետ ընկեր ըլլալով՝ տեսաւ ուրուրին որ օդին մէջ կերթար զարհուրելի ձայն հանելով ինչպէս որ սովորութիւն է իրեն ․ սոր ձայնէն այնչափ սոսկաց որ դողալով կըսէր տատրակին, թէ նայէ ինչպէս սաստիկ սպառնալով կերթայ ուրուրը ․ ես խիստ կը վախնամ՝ այս ձայնէն ։ Պատասխան տըւաւ տատրակը, թէ մի վախնար անանկ ձայներէն ․ վա՛ զի այս սպառնալեաց մեզի համար չէ, հապա մկներուն և հաւի ձագերուն համար է ․ մենք պէտք է աւելի վախնանք սուսիկ բազէին ճանկերէն, որ ձայնէն առաջ մեզի կըհասնի ։

---

Աւելի պէտք է չի խօսողէն վախնալ, քան թէ շատախօսէն ․ վասն զի ձէնին գործքը խօսքէն առաջ կը հասնի ․ իսկ ձէնաւին յայնը առանց գործքի կը պատնայ ։

Գեղեցիկ խրատ՝ խոհեմ տատրակին,
զգո՛յշ կաց սաէ՝ որ լռիկ նստին ․

Զի փոխան գործոց՝ բանքն են ձրուոյն,
իսկ փոխան բանից՝ գործքն են անխօսին։
Արդ մի երկնչիր՝ 'ի ձայնէ ուժգին,
մի 'ի սպառնալեաց՝ անգործ զրախօսին.
Պատկառ կալ յաւէտ՝ անձայն գործողին,
որ նախ քան զձայն՝ արգելունք վճարին :

## Փարթամ, և Ազգական :

Որ յոյժ տենչայ՝ յառնուլ զբոլոր,
կորուսանէ՝ զբարին բոլոր :

Ով որ բոլորն՝ առնել կուզէ,
ձեռքն ալ եղածը՝ ձեռքէն կելլէ :

մծք. Հարուստ մարդ մը իր գանձը տարաւ ծածուկ անտառին մէջ թաղեց մարդ չիմացաւ. մինակ իր մէկ ազգականը գիտէր՝ որ գիշերանց գնաց ոսկիները հանեց գողցաւ: Ատեն անցաւ երբոր եկաւ տէրը իր գանձը նայելու. տեսաւ որ չիկայ, հասկըցաւ թէ իր ազգականն է գողցեր. մտածեց անանկ խելք մը բանեցնել որ ոսկին տեղն երթայ: Ուստի կանչեց ազգականն ըսաւ, թէ կաղաչեմ* վաղը մէկ տեղ երթանք անտառը փորենք գանձս եղած տեղն, ու հազար ոսկի ալ նորէն թաղենք: Նոյնիս գիշերանց ազգականը առաւ գողցած ոսկիները տարաւ տեղը դրաւ, որ այն հազար ոսկին ալ տէրը թաղէ հոն. անկէ ետեւ բոլորը յափշտակէ:

իսկ հարուստը երբոր գնաց գտաւ գանձը, վերցուց տարաւ տուն :

---

[illegible]

Այսպէս որ անյագ՝ ցանկայ բոլորին,
վաղ կորուսանէ՝ որ կայ 'ի ձեռին.
Զի երբ ոչ գիտէ՝ բերկրիլ 'ի մասին,
վրիպի բերկրիլ՝ 'ի բոլոր բարին :
Մի՛ ցանկար շատին՝ մի՛ չափազանցին,
զի մի՛ զրկեսցիս՝ 'ի չափաւորին.
Հրճուեա՛ ընդ բարիս՝ նշխարեալ անձին,
նորանոր բարեք՝ քեզ վերադրեսցին :

---

## Ոչխար, և Շուն :

Ծանր է կրել՝ միշտ յընկերէն,
քան յոխերիմ՝ դիմամարտէն :

[illegible]

Մծփ. Գայլը երբեմն ոչխար մը բռնեց. իսկ ոչխարը ամենևին ձայն չի հանեց կեցաւ. գայլը ապահով ըլլալով ոչխարին վրա երբոր ասդին անդին ժուռ կուգար, կերպով մը ոչխարը փախաւ ազատեցաւ գայլին ձեռ.

քէն ու ընկաւ շան մը ձեռք • բայց շունն որ զինքը բռնեց անանկ սաստիկ պօռաց, որ հովիւը ձայնն առաւ հոն հասաւ ազատեց շանը բերնէն ։ Ինչո՞ւ համար՝ ըսաւ հովիւը երբոր գայլը քեզ բռնեց ձայն չի հանեցիր, ու շունն որ բռնեց բոլոր ուժովդ պօռացիր ։ Պատասխան տուաւ ոչխարը թէ աւելի դըժւարեցայ երբոր շնէն միսս առայ՝ քան թէ գայլէն • վասն զի գայլը 'ի բնէ մեր թշնամին է • իսկ շունը պահապան ըլլալով տեսայ թէ պահապանը թշնամութիւն կընէ, շատ դժուարելով պօռացի ։

---

Շատ դառն է ճշաա և նեղութի փոքէ բարէկամէն և աղքատներէն, քան թէ օտարէն • ճանն չէ բարէկամէն կը ճայնէ բարեաթի փէանէն՝ ըէ թէ ըռբաաթիան ։

Այս դժնդակ են վէրք մտերմին,
որ յանկարծ խոցեն՝ զսիրտ բարեկամին •
Եթէ թշնամին՝ լինէր ոխերիմ,
ոչ յոյժ մորմոքեալ՝ ցաւ գործէր խորին ։
Խրատ վայելուչ՝ ընկերականին,
միամիտ սիրել՝ զընկեր դրացին •
Բարք է անհամբոյր՝ գազանականին,
ոչ զնուրան խոցէ՝ որպէս թշնամին ։

## Հաւորս, և Եղջերուկ :

Արդ մի խորշիր՝ տանիլ փոքուն,
զի մի անկցիս՝ 'ի մեծագոյնն :

Եթէ փիւռ՝ փախչիլ ուզես,
Մեծ նեղաց մէջ՝ փեղ կը յփէս :

ՃԾԵ. Հաւորսը բռնեց եղջերուկ թռչու֊
նը, և ոտքը չուան կապեց տանը մէջ կը պա֊
հէր. խեղճ թռչունը դժուարելով մարդու քով
կենալու, չուանն ոտքը թռաւ գնաց իր բու֊
նը նստաւ. բայց չուանը ծառին փաթթուելե֊
լով արգիլուեցաւ ալ չի կրցաւ անկէ թըռ֊
չիլ: Ուստի կերակուր չէր գտնէր ուտելու,
երբոր անօթի կը մեռնէր՝ սկսաւ ինքը զին֊
քը մեղադրելով ըսել. աւա՛ղ ողորմելուս.
ես չի համբերեցի մարդու ծառայութեն ը֊
նելու, ահա անմտութեամբ կը մեռնիմ. որչափ
որ կամեցայ ազատ ըլլալ, չարաչար կապ֊
վեցայ. վասն զի կապով փախչելը աւելի
վնասակար է եղեր, քան թէ գերի ըլլալը :

---

Խրատ է անանց, որ պէտք նեղութէն փախչելու
համար շատ անգամ մեծին մէջ կիյնին. վասն զի ա֊
ռանց նեղութէ կեանք չի կայ : Նոյն այս առա֊
կէս կրնան խրատ առնել եկեղեցականները և մարա֊
դէպներն, որ աշխարհքին կամքէն կը փախչին. է

Բէ աշխարհէին հէփ արփէրնին չապած ըլլայ, հա՛յ է իրէնց ։

Կրել յաշխարհի՛ միշտ տրտմաբերին ,
  Հարկ 'ի սկզբանէ՝ եղաւ մահացուին .
  Որ 'ի բաց փախչի՝ տանիլ թեթեւին ,
  'նմին հասանէ՝ ծանր անտանելին ։
Մարդ ժառանգաւոր՝ տրտմական մասին ,
  մի՛ օտար գրեր՝ զոր քեզ պատշաճին .
  Եթէ գոհ տանիս՝ ծանունք թեթեւին ,
  Թէ փոքունց անգոհ՝ քեզ ծանրաբեռնին ։

## Կրիայ , և Գորտք ։

Մի՛ մեղադրեր՝ բնութեան արդար ,
  Թէ հի՛մ հանուրց՝ բարիս չարար ։

Մէ՛ տըրփմըր Բէ՛ Թէծ Եան ըրանիա ,
  Բէ ըշա փաննէա՝ ըշփ Եան աանիա ։

Մծղ. Կրիան տեսաւ որ գորտերը արագ արագ կը ցատկէին , տրտնջալով ըսաց թէ ինչո՞ւ համար բնութիւնը տուեր է անոնց անանկ արագութիւն , և իրեն անանկ ծանրութիւն , որ բեռան տակ ըլլալով կամաց կամաց քալէ կուգայ։ Բայց օր մը տեսաւ որ արագիլը մէկը է լճին մէջն ու մէկիկ մէկիկ զանոնք ջարդէ կուտէ . սկսաւ զինքը մխիթարելով ըսել թէ ես խե՞նդ եմ, որ կը մեղադրեմ արդար բընութիւնը, որ ինծի սանկ մէկ լաւ զէնք մը

տըւեր է · որով այս վտանգներէս ազատ եմ, և բանէ մը վախ չունիմ :

Օրինակ է անմիտ տղաներուն · որ [illegible] բարի բան մը [illegible] · [illegible] է · ով որ շատ բարիք ունի, շատ ալ նեղութիւն ունի :

1950P1-1-1

Այս բերքը են մնաց՝ անխորհուրդ ռամկին,
որ աշնու ցանկայ՝ ընդ այլոց բարին ·
Երբ գեղեցիկ ինչ՝ գիտէ յօտարին,
կարծէ զինքն զուրկ՝ յիրաց բնութին :
Մի լինիր չարակն՝ յընկեր դրացին ,
քոյդ չէն փոքր օժիտք՝ նկատեալ յանձին ·
Եթէ մի ակամբ՝ գիտես ձիրս այլոց,
միւսով տես չարիս՝ ընակցեալ նմին :

## Րունէտք , և Կաղնի :

Որ ոչ խորհի՝ զգործոց վախճան ,
զղջայ կրէ՝ ցաւս անվախճան :

Բան մը ըրած՝ վերջը քննէ ,
Ետքի ցաւը՝ օգուտ չընէ :

ՄԾԷ. Րունէտները աշխատանքէ փախչելու համար խորհուրդ ըրին իրենց մէջ, որ կաղնի ծառին արմատները կրծելով վար ձգեն·

որ կլլելու խնջնելու նեղութիւն չի քաշելով վարէն ուտէն պտուղները ։ Բայց ասոնց մէջէն մէկ ծեր մը պատասխան տըւաւ, թէ մենք հիմա մեզի կերակուր տըվօղն որ կըտրենք․ հապա եկած տարի ով մեզի կերակուր պիտի տայ․ քիչ մը նեղութիւն չի քաշելու համար ի՞նչ խելքով մեզի սնուցանողը պիտի վար ձգէք, գնացէք բաներնիդ․ այս միտքը մէկ բանին ետքը չի մտածելէն կուգայ ։

---

[illegible]

Այսպէս որ կշռէ՝ զակիզըն և վախճան,
կանխաւ դուշակէ՝ զանդորր ապագային․
Որով միշտ առնէ՝ գործ աներկեան,
ոչինչ վրիպի՝ անձն խոհական ։
Արդ մի՛ անխորհուրդ՝ առներ գործս համայն,
այլ որիշ մտօք՝ քննեա զապագայն ,
Զի նախկին պատճառն՝ է վախճանական,
զոր սակս եղանին՝ բնաւք եղական ։

# Զինուոր, և Ձի:

Նորասիրաց՝ նորն է սիրուն,
ընտրեն զնորն՝ հինըն թողուն:

Փորձած բաներն՝ էփ մ՚ կենար,
մ՚ ափէր հինը՝ նորին համար:

Մեկն. Մէկ զինուոր մը սրաւոր ձի մը ունէր. որ երկար ժամանակ իրեն լաւ ծառայութիւն ըրեր էր ամէն բանի մէջ. իսկ զինուորը նորէն ուրիշ ձի մը գնեց, որ անչափ ըլլալով մէկալ ձիէն շատ վար էր: Սակայն տէրը նոր գնած ձին առաջինէն շատ փափուկ կըպահէր և մեծ գութ ունէր վրան: Օր մը անչափ ձին ըսաց լաւ ձիուն, թէ դուն իմմէ շատ զօրաւոր ես և լաւ ծառայութեն կընես, բայց մեր տէրը զիս քեզմէ շատ կըսիրէ ու խիստ լաւ կընայի: Ան ալ պատասխան տուաւ, թէ զարմանք բան չէ, որովհետև սովորութիւն է մարդկանց հինը ձգել նորը սիրել:

Օրինակ է մարդկային մեղաց անհաստատութեան. որ ասէր են նորը սիրել և հինին վէր բանել, թէ կէփ գէլ ըլլայ. ամէնայն նորութիւնը մեծ մեծ էտաններ բերեր է շատ մարդու:

Այս նշանակ՝ անհաստատ սրտին,
որ ընտրէ զնորն՝ առէ զընտրելին.
Ոչինչ համարի՝ հնութիւն անգին,
անհաստուն մնաց՝ այն նորաւորին:
Նորաւորութ՟՝ թէ մերժես զհինն,
յեղաշրջ ոգիս՝ ցուցանես յանձին.
Հնագիտութ՟՝ թէ զննես զնորն,
հնոց և նորոց՝ դու հետաքննին:

---

## Գայլ գառնազգեստ:

Բազում գառինք՝ ըստ արտաքնոյն,
այլ քանասար՝ գայլ ըստ ներքնոյն:

Շուքը դրսէն՝ գառն է անմեղ,
ամայն ներսն է՝ գազան ահեղ:

ՄԾԹ. Նըբեւմն գայլը վրան առաւ ոչխա-
րին մորթը քէրէն, գնաց ոչխարներուն մէջ
խառնըվեցաւ. և ամէն օր մէյմէկ ոչխար
կուտէր: Տէրն որ իմացաւ սպաննեց զգայլն,
ու անանկ մորթը վրան կախեց ծառէն. եր-
բոր հովիւները կը հարցընէին, թէ ինչու
համար ոչխարը կախեր ես ծառէն. պատաս-
խան կուտար թէ մորթն որ կը տեսնէք, ի-
րաւ ոչխարի է. բայց ինքը գայլ է. երեսա-
ծը անմեղ գառն է, ներսը պատառօղ գայլ
է: Սուտի դրսինը մի նայիք ներսինը նայե-
ցէք. որ այս անմեղ կերպարանքով այնչափ
ոչխարներս կերաւ:

Օրինակ է կեղծաւոր, և խաբեբայ մարդկանց. որ սուրբ երեւնալով արտաքին փառք կառնեն. Բայց օր մը խայտառակ կըլլայ իրենց կեղծաւորութիւնը։

*Այսպէս կեղծաւորք՝ զերթ փարիսեցին,*
*արդար ձևանան՝ ձևոյն արտաքին.*
*Քաղցրաթոյն բանիւ՝ մաքուր երևին,*
*այլ ՚ի ներքոյ են՝ գազան դառնագին։*
*Արդ մի հաւատար՝ կեղծութեանց նոցին,*
*որոց այլ է սիրտ՝ այլ ինչ ՚ի լեզուին.*
*Մի քեզ բարեձև՝ գազանք մերձեսցին,*
*զի մի ծախեսցիս՝ յանդուլթ որկորին։*

---

## Ձիթենի, և Դոշմենի։

*Որ փոյթ ցոլայ՝ վաղ չիջանի,*
*կանխաբողբոջն՝ անդէն խամրի։*

Շուտ ծաղկածը՝ շուտ կը չորնայ,
ուշ հասածը՝ կը դիմանայ։

ծկ. Ձիթենին կը զարմանար դդումին վըրա, որ քովը փուսած էր. Թէ ինչպէս քիչ ժամանակին մէջ այնչափ աճեցաւ մինչև զինքն անցաւ երկայնութեամբ, որ քսան տարի առաջ էր տնկած։ Բայց շատ չանցաւ, տեսաւ որ ձմեռվան մօտ չորցաւ դդումը. տեսածնը ձիթենին միտքը փոխեց ու ըսաւ. Իրաւի յիմարութիւն է նախանձիլ այսանկ շուտ աճողներուն վրայ. վա՜յ զի մէկէն մեծցողը, շուտ

ու կըկորսուի եղեր: Ուրեմն շատ աղէկ է կամաց կամաց աճիլ, ու շատ մնալ. քան թէ շուտ աճիլ, ու շուտ չորնալ:

---

Շուտով եղած բանը շատ չի տեւեր կանցնի. ուստի պէտք չէ ծուլալ ամէն բանի մէջ, որ չըլլայ թէ վերջը չունենալով կորսուի մէկէն. վասն զի խորհրդով եղած բանը, ծուլով շանցներ շատ կը դիմանայ:

Զի՞նչ օգուտ պանծալ՝ ճոխանալ հեշտին,
ընդ փոյթ նուաղել՝ խամրիլ գլխովին.
Լաւ է անսասան՝ աճիլ 'ի չափին,
յերկարել մնալ՝ 'ի նոյն վիճակին:
Մի՛ ցանկար փառաց՝ փախստականին,
որ փոյթ ցոլացեալ՝ անդրէն խուսափին.
Փառք են տիրապէս՝ փառք հոգեկանին,
որ փայլին ընդ ձիգս՝ յանծայր շրջանին:

---

## Շուն, եւ Ծառայ:

Երբ դք այրի՝ ջրով ջերմին,
խնդթայ մերձիլ՝ 'ի ջուր ցրտին:

Եռած լեղուն՝ վախցող կըլլայ,
պաղ ջրին ալ՝ չի մօտենայ:

Մեկն. Պարոնի մը տուն մէկ շուն մը կար, որ ամէն անգամ երբոր անձրեւ կուգար դը-

ին դուրս չէր ելլեր ծակերը կը մտնէր . օր
մը տանը ծառան ուզեց շունը դուրս ընել
անձրևի ատեն . կաղաչէր շունն որ քիչ մը
ատեն ալ իրեն , մինչև որ անձրևը անցնի .
քան զի առանց պատճառի չէ կըսէր այս
բանս : Ան ալ հարցուց , թէ ինչ է պատ-
ճառն որ անձրևի ատեն դուրս չես ելլեր ;
Պատասխանեց թէ մէկ անգամ մը դիպուա-
ծով տաք ջրին մօտեցայ , կռնակիս կաշին խա-
շեց . անոր համար պաղ ջրէն ալ կը վախ-
նամ :

---

Շունը օրինակ է զգուշաւոր մարդու . որ երբ
բանէ մը վնաս տեսնէ , ամէն բանէն զգուշաւոր
է , որ նորէն վնաս մը չի քաշէ :

Գեղեցիկ հանճար՝ մնաց փորձառուին ,
Լուրջ կայ չփորձիլը՝ ՚ի նոյն վերստին .
Եթէ ոք փորձի՝ ՚ի միում առթի ,
պարտի արթուն կալ՝ յամենայն առթին :
Պաշտաւ յորդորակ՝ ժիր պատանեկին ,
առ ՚ի հեռանալ՝ յառթից վտանգին .
Թէ առարկայ ինչ՝ փորձեալ զքեզ դիւրին ,
Մի անփորձ մերձիր՝ յիր ինչ ընտելին :

## Հաւորս, և Մանուկ:

Միտք տղայոց՝ չեն խոհական,
զոր ինչ լսեն՝ այնպէս գնան:

Խաբեբայ բան՝ [illegible] [illegible],
անմիտ խօսքն է՝ անմիտաց բոյն:

մէջ. Հաւորսը զարկաւ տասը թռչուն, ու շամփուրին անցուց տըւաւ տղուն որ խորովէ մինչև ինքը գայ. բայց երթալու ատենը ապսպրեց որ զգոյշ կենայ, չըլլայ թէ մոխրին մէջ ձգէ. թէ չէ՝ բոլորը քեզի կըկերցընեմ կըսէր: Թռչունները գրեթէ խորված էին՝ դիպուածով տղուն ձեռքէն ընկան մոխրին մէջ: Տղան ալ տիրոջը խօսքին նայելով սկսաւ ուտել. ինը հատը կերաւ կշտացաւ, մէկ հատը չի կրցաւ ուտել: Երբոր տէրն եկաւ՝ սկսաւ տղան լալ. ան ալ հարցուց թէ ինչու համար կուլաս. պատասխանեց թէ յանկարծակի թռչունները ձեռքէս ընկան, ես ալ ինը հատը կերայ մէկը չի կըրցայ ուտել, կաղաչեմ մի բարկանար. վասն զի խիստ կշտացայ: Անատենը հաւորսը մըտածելով ըսաւ՝ թէ շատ զգուշութին պէտք է եղեր տղոց բան հասկցընելու:

---

Տղոց [illegible] պարզամիտ ըլլալով [illegible] [illegible]

մէջ պէտք է վարժիլ հետերնին. և գէշ օրինակ մը տալ իրենց խաբէական խօսքերով։ Առակը կը-սէ, թէ խելացիներուն հետ կեցողը խելացի կըլլայ. անզգամին հետ կեցողը անզգամ։

Ի խոհեմ մտաց՝ վարիլ ընդ մանկութին,
կրել և խօսիլ՝ առաջի նոցին.
Զի թերակատար՝ միտք մանկականին,
զոր ինչ և լսէ՝ գրէ 'ի սրտին։
Մի խօսիր խարդախ՝ և կամ զանտեղին,
զի մի չարուսոյց՝ լիցիս անմեղին.
Խօսեաց պարզ արդար՝ ըստ հոգեկանին,
օրինակ բարեաց՝ եղով համբակին։

## Դիոս, և Կապիկ.

Իւրաքանչիւր՝ իւրով բերկրի,
զի ամենից՝ իւրն է բարի.

Ամէն մարդու՝ իրն է աղուոր,
Թէև ըլլայ՝ պակասաւոր։

ՄԿԶ. Դիոս ուզեց իմանալ, թէ ամէն կեն-դանիներուն մէջ որուն ձագը աւելի գեղե-ցիկ է. հրաման հանեց, որ ամէն կենդանի իր ձագն առնէ գայ. ուստի ամէնքը իրենց ձագերուն եկան ժողվեցան. կապիկն ալ իր ձագը բերաւ հոն։ Իսկ Դիոս անոնց վրա նայելով սկսաւ ծիծաղիլ. երբոր կապիկը տեսաւ Դիոսին ծիծաղ երեսը՝ ուրախանա-

*լով կըսէր, թէ իմ ձագս ամենէն գեղեցիկ տեսաւ, անոր համար կըխնդայ Դիոս։*

---

Խելացի մարդը իրեն ունեցածը բանի տեղ չի դնելով ուրիշին կը նայի, որ իրենն ալ կատարելագործէ. վասն զի անխելք մարդիկ միայն իրենց բանին կը հաւնին։ Սոկրատ փիլիսոփային հարցուցին թէ ո՛ր կենդանին գեղեցիկ է. ան ալ պատասխան տըւաւ, թէ կրթուած հոգի մարդը։

*Անմիտ ինքնասէրք՝ նմանեալ կապկի,*
*զոր ինչ և ունին՝ համարին յարգի.*
*Ոչ հային յայլոց՝ բարին ցանկալի,*
*զխուրեանցն 'ի կատար՝ բերել անթերի։*
*Տես քանի՛ չքնաղ՝ յօտարս երևի,*
*զանազան օժիտ՝ ձիրք առաքինի.*
*կրթեա՛ զքոյդ ծնունդ՝ գործով պանծալի,*
*պայծառ փայլեսցի՝ այլոց առաջի։*

## Սարդ, և Ծիծառն :

Մի՛ զքեզ դներ՝ վեհ յաղթական,
զի մի՛ վեհից՝ լիցիս կոխան :

Մէծէրուն խարգ՝ թէղ ըլը տընէ,
ուլինու խըլլա՞՞ ճանըշըր ըտէղ :

մկջ. Սամուկը տեսաւ թէ ծիծեռնիկը վեր վար օդին մէջ թռչելով ճանճերը կուտէ իրեն բան չի մնար, ուզեց որ բռնէ. ուստի իրեն թելերէն որոգայթ մը լարեց ծիծեռնիկին ճամբուն վրան, որ ճանճի պէս բռնուի. բայց երբոր ծիծեռնիկն անկէ անցաւ ոչ միայն պատռեց աւրեց անոր որոգայթը, այլ և սամուկն ալ հետը տարաւ զարկաւ պատին ճզմեց. որ երբոր կը մեռնէր, կու լար թէ իմ մահս ես ձեռքովս պատճառեցի. ճանճին յաղթելովս կարծէի թէ մեծ կենդանիներուն ալ պիտի յաղթեմ: Ահա իմ տկարութիւս չի ճանչնալուս համար արժանի եղայ այս պատուհասիս :

---

Այնժա մարդին էրէ պղտին թաջու՞ մը գործէն, խարծէն թէ ալխարհ տէմացնին ըէ խըրնար էււէլ. խարծէն թէ ալխարհ տէմացնին ըէ խըրնար էււէլ-և այս խէլթաղ խըէնցէ ջծին հէփ խիյնին աա ըա-րալար խը խըրարլըն: Ուափէ գէփաանէրուն աաջէ խըրափն է. ճանըշըր ըտէղ :

Այսպէս ամբարիշտք՝ կրեն զարժանին,
ոչի՛նչ չափելով՝ զօրութիւն անձին.
Երբ իշխեն փոքունց՝ ընդ վեհից կռուին,
յորոց եւ անդէն՝ կոխին սաստակին:
Արդ մի՛ մաքառիր՝ ընդ վեհագունին,
զի մի՛ կորիցես՝ նման յիմարին.
Պատկառ կա՛լ պետաց՝ եւ գլխանականին,
պանծալի լիցիս՝ 'ի շնորհս նոցին:

---

## Պառաւ, եւ Բժիշկ:

Ջանա՛ պահել՝ ճրագ քո վառ,
մի՛ տիրեսցէ՝ զքեզ խաւար:

Նայէ՛ քու լոյսդ՝ որ վառ մնայ,
այլոց լոյսը՝ քեզ մութ չըլլայ:

ՄԿՆ. Մ՚էկ պառաւ մը աչքի տկարութիւն ունենալուն համար կանչեց բժիշկն, որ ըռընացընէ՝ այսպիսի պայմանով. թէ որ առողջանայ՝ անոր ուզածը տայ. իսկ թէ չառողջանայ՝ բան մը չի տայ: Բժիշկը սկսաւ դեղ ընելով ամէն օր աչքը եղով օծել. բայց տեսաւ թէ չառողջանար, ամէն գալուն մէկ-մէկ բան անէն գողնար կըտանէր. անանկ որ տանը մէջ բան չի մնաց. մինչեւ պառաւն ալ կըցաւ տեսնել թէ տանը բաները պակսեր են: Ուստի երբոր բժիշկը պահանջելով իր վարձքը կըհաստատէր վկայութէ, թէ ըռընայաւ աչքը լաւ կը տեսնէ: Պա-

տախտնեց պատուաւը թէ սուտ է ամենեւին. վասն զի երբոր աչքս կըցաւէր, շատ բան կըտեսնէի տանս մէջ. հիմա որ կըսես ըռ-ընացար՝ ամենեւին տանս մէջ բան չեմ տեսներ. ինչո՞ւ պէտք է անանկ տեսնելըն, որ ինծի պէտք եղած բաները չեմ տեսներ ։

---

Օրինակ է անհաստատութեան մարդկանց․ որ երբէ աշխատութիւն մ' ընելու ըլլան, կրկին ձեռք կապան ։ Ասոնք ասանկ բարերարներէն զգուշանալու է, ո-րոնք բարի ընելու ատենը սկսած բարիքը կը վեր-ջնեն ։

Այսպէս ինքնամատն՝ 'ի ձեռս օտարին,
զրկի 'ի բարեաց՝ զոր ունէր յանձին.
Զի այլք վասն ինքեանց՝ ազնին վաստակին։
ոչ վասն ընկերին՝ ոչ բարեկամին ։
Թէ ձրագ մարմնոյդ՝ իցէ խաւարին,
ուսի՛ր քեզ ձրագ՝ լուսատու անձին.
Այլոց լոյս ձրագ՝ վասն ինքեանց վառին,
'ի քեզ մթագնեալ՝ փութով խաւարին ։

## Ուղևոր, և Հերմէս։

Արդ մի՛ ստեր՝ զուխտ և զերդումն,
զի ոչ խաբի՛ բարձրեալն անքուն։

Հոգևորին՝ ստոր մի խաբեր,
զի չես կրնար՝ զԱծ խաբել։

ՄԿԹ. Ճամբորդ մը երկան ճամբորդութեան մէջ անանկ կանօթենայ, որ ուխտ կընէ թէ ինչ ուտելու բան որ գտնէ, կէսը Հերմէսին ընծայ ընէ։ Նայիս որ ճամբուն վրայ պարկ մը կը գտնէ մէջը լեցուն նուշ և արմաւ. պապէճ խուրմայ. շուտով կը մոռնայ ուխտին ու նստի բոլորը կուտէ։ Բայց խելքովը սատանութեան մտածեց, ժողվեց արմաւին կուտերը և նուշին կեղևները դրաւ սեղանին վրայ, և հաւաչելով ըսաց. ո՛վ մեծ Հերմէս ընդունէ՛ իմ ուխտս, որ կատարեցի. վասն զի աշա գտած բանիս դրսինն ու ներսինը հաւասար բաժնեցի։

---

Աստախ խրատ է ագահ և մոլի մարդկանց. որ հոգևոր բանի մէջ ալ խաբեբայութիւն կը բանեցնեն։ Կռապաշտները շատ անգամ Հերմէս աստուծին ուխտ կընէին։

Տեսնե՞ր զօվատ խորհուրդ՝ մոլի խարդախին,
զիա՞րդ արատէ՝ զուխտն ընդ արարչին.

Նենգութե՞ վարի՝ ՚ի հոգևորին,
մարդկօրէն չափէ՝ զիրաւունս էին ։
Բարէ կոյր մտաց՝ նենգօղ ագահին,
զրկել նկրտի՝ զ՞տխրօղ բոլորին ·
Որ ըղձիրաս էից՝ ունի ՚ի ձեռին,
գիտէ զամենայն՝ պատժէ ցաւագին ։

## Նշամեղուք, և Կաքաւք ։

Չար է խորհուրդ՝ չարասիրաց,
զոր ինչ առնեն՝ բերեն ՚ի վաս ։

[illegible]
[illegible]

Մեկ․ Նշամեղուներըն ու կաքաւները օր մը սաստիկ ծարւըցած կուգան երկրագործին կաղաչեն, որ ջուր տայ իրենց · և խոստացան կաքաւներըն որ ջրին տեղը փորեն անոր էգին · նշամեղուներըն ալ չորս դին ըսպասելով գողերը խայթեն ։ Իսկ երկրագործը պատասխան տըւաւ, թէ ես երկու եզ ունիմ · որոնք առանց բան խոստանալու իմ ամէն բանս կընեն · ուրեմն աւելի աղէկ է անոնց տամ՝ քան թէ ձեզի · որ ձեր օգտին համար ինձի սուտ խոստմունքներ կընէք ։

---

O[illegible]
[illegible]

բերել տուրիչին ։ Հասարակին մարդուն այն աւ-ելորդ մեծ է. իսկ անհասարակին այն բան պատ-է. կըսէ իմաստունը ։

Ժանտ վնասաբերք՝ խոստանան բարին,
նուիթել զչարիս՝ բերին նկրտին.
Զի որ կամքն է չար՝ միշտ 'ի չար հակին,
ոչինչ ցուցանեն՝ 'ի բարեաց մասին։
Արդ մի՛ թևարկու՝ լինիր զրկողին,
թէև փաղաքշէ՝ զերթ յուշկապարկին.
Խաղապատելով՝ յածի կաթոգին,
մինչև լցուսցէ՝ զկարիս անձին։

## Սրտոտ, և Հաւորս։

Մի՛ կերակուր՝ և դոյզն շահ,
քեզ նուիթեսցեն՝ վտանգ և մահ։

Քիչ մը հանգիստ՝ կտոր մը հաց,
պէտք կըլլայ՝ մահէն առաջ։

Մկն. Սրտոտ թռչունը, որ է հարեղանա-գը, ամէն օր կերթար ցորեն ուտելու. օր մը տեսաւ զայն հաւորսը՝ որոգայթ լարեց բռնեց ։ Իսկ թռչունը հասկցաւ որ ազատում չունի, սկսաւ լալ. վա՜յ անբաղդիս կըսէր, ես ոչ արծաթ եմ գողցեր, ոչ ոսկի, և ոչ մեծ չարութիւն մը մարդու ըրած եմ. հապա միայն ցորենին մէկ հատիկին համար պիտի կորսուիմ. շատ աղէկ էր որ ըսանէ

...ուն խոտերն ուտէի, քան թէ մէկ քանի
...ատ ցորենն, որ մահուանս պատճառ եղաւ ։

---

Խրատ է անոնց որ գէշ ունին համար մէջ [illegible]
[illegible] · և [illegible]
[illegible] համար [illegible] · [illegible]
[illegible] չայլըրդուշու ։

Որ անյագ տենչմամբ՝ ձկտի՝ յուտելին,
սակաւ կերակուրն՝ առթէ մահ նմին.
Զի անխրատօղք՝ յոյլոց 'ի բարին,
դառն չնասին՝ 'ի մեծի պատժին ։
Մի բերիր զոկեւ՝ զինչըս օտարին,
և մի դիմագրաւ՝ լինիր վտանգին.
Զի փոքրիկ արկած՝ դուզնաքեայ օգտին,
հատանէ զկեանս՝ վերջ տայ բոլորին ։

---

## Բժիշկ, և Հիւանդ ։

Թէ դու չես քեզ՝ բժիշկ ճարտար,
ոչինչ օգտէ՝ բժշկաց ճար ։

[illegible]՝ [illegible],
[illegible]՝ [illegible] ։

Մկթ. Բժիշկը գնաց հիւանդ մը տեսնե-
լու, և հարցուց թէ ինչպէս է. հիւանդն
ալ ըսաց թէ չափէն աւելի կը քրտնիմ. բա-
րի նշան է ըսաւ բժիշկը ։ Երկրորդ անգամ
գնաց հոն բժիշկը երբոր հարցուց հիւան-
դին. պատասխան տըւաւ, թէ սաստիկ մսե-

ըէն գող մը կուգայ ինձի. բարի է ըսաց: Դարձեալ՝ երրորդ անգամ գնաց երբոր հարցուց. անալ ըսաւ ջրգող ուլխոյ եկայ. բարի նշան է ըսաց բժիշկը: Յետոյ իր ընտանիքէն մէկը հարցուց հիւանդին, թէ ի՞նչպէս ես: Ի՞նչպէս պիտի ըլլամ կըսէր. ամն բարի նշաններու մէջ կը մեռնիմ:

---

Պէփ+ է Էրէս տարմընէլ Էրէտպայքին, և թէ կէղծաւորութէը հասանէլոհ հաստպալ խօսքին. Ճառն ըի անանդ մորդէք ասէն տի կըդաաննան:

Տիպ է այս տխմար՝ մարդահաճոյին,
որ զներհակսն՝ կրէ 'ի լեզուին.
Խառնէ անպատկառ՝ սուտն ընդ ճշմարտին,
'ի միում կխօսի՝ ընարէ զերկոսին:
Քանզի անարգանք՝ այն մարդելուզին,
զիւր ուղիղ դատմին՝ զխակն եղծանողին.
Որ 'ի սէր օգտի՝ խօսի զմտաեղին,
մինչև մի կարծել՝ զայոն ընդ ոչին:

# Ագահ, և Որդի իւր ։

Այլք վայելեն՝ յինչս ագահին,
ինքն է միայն՝ պահնակ գանձին ։

Ագահն իրեն՝ բանին տէր չէ,
այլոց համար՝ պայն է դահէ ։

Ռ. Ագահ մարդ մը իր պարտէզին մէջ ունէր պատուական խնձորի ծառեր․ բայց մինչև որ խնձորները չի փթթէին մէկ հատ մը չէր ուտեր ։ Իսկ որդին առատասիրտ ըլլալով օր մը առաւ ընկերները պարտէզը տարաւ, և ստիպելով կըսէր անոնց թէ մի վախնաք կերէ՛ք լաւ խնձորները որչափ կուզէք․ մինակ փթթածները մի ուտէք, վն զի հայրս պիտի ուտէ զանոնք ։

---

Օրինակ է ագահին, որ ուրիշին համար խնայէ, չէ իրեն համար․ Բէդէտ դասատանը ինքը դիւթէ զայ այս չար անթէին համար ։

Օտարք ըմպանեն՝ ժառանգ ագահին,
քաղցր վայելեն՝ 'ի վաստակ նորին․
Մահուչափ աքնի՝ պահել զփոելին,
մինչև ակամայ՝ տայցէ օտարին ։
Ո՛վ յիմարութիւն՝ պապառում արտին,
առ մինչ չարատանջ՝ յաւելու զմարին․

Երբ ոչ վայելէ՝ զայն գանձ զայն ոսկին,
հի՞մ վասն օտարաց՝ տանջի գառնագին :

## Մանուկ, և Կարիճ:

Մի՛ մերձենար՝ յամէն կենդան,
բազումք ունին՝ թոյն 'ի տտան :

Մէ՛ հօփէնար՝ ամէն բանի,
շուտով ճեռա՝ կուգայ փէղի :

մշա. Մանուկ տղայ մը պարտէզը կը մտնէ. և կը տեսնէ որ գեղեցիկ կը թռչէին թիթեռնները ճեճէնէնէնէրը սկսաւ բռնել հետերնին խաղալ : Յետոյ կարիճ մը տեսաւ, չճանաչելով գնաց քովը որ բռնէ : Իսկ կարիճը ըսպառնալով պոչը ցըցուց ու ըսաց. հանդարտ կեցիր ով անխելք ինծի մի դպչիր. հիմա անանկ կը խայթեմ քեզ, որ կը մեռնիս. եթէ ամէն բանի առանց անխըտիր դպչելու ըլլաս՝ վա՜յ է քեզի :

Խրատ է անոնց, որ ամէն հարգաւ հէտ, և ամէն տեղ մօտէնալ կը ճարպին. ճառն ոչ շատ բան կայ որ կը թոռնաւորէ ոմարդը ինչպէս կարիճը ագռէպը. ատոփ շատ անմէղ հարդին տառնէ կորուշուծ էն :

Անմիտ պատանիք՝ ընդ չարն ընդ բարին,
բերեալ անխորհուրդ՝ մի աչօք հային.

Բայց երբ 'ի կարճէն՝ մահաթոյն խայթին,
յայնժամ խմանան՝ վրիպանս անձին ։
Մի՛ պատրիր տեսլեամբ՝ զգայականին,
և մի՛ անտարբեր՝ հուպ լինիր վասին ․
Որչափ արտաքուստ՝ անմեղ երևին,
այնչափ մահաշունչ՝ թիւնալից ներքին ։

## Առիւծ, և Ցուլ ։

Արդ մի՛ ճաշեր՝ ընդ թշնամին,
զի մահաբեր՝ է ճաշ նորին ։

Զոր բընածուն՝ սեղան ձերբօս,
որ կերակուր՝ իրէն ըուլլօս ։

Խր․ Առիւծը միտքը դրաւ որ վարպետութիւ ուտէ ցուլ մը․ ուստի հրամցուց իւրեն հարկիքը․ բարեկամ կըսէր մէկ ոչխար մը մորթեցի և ամէն պատրաստութիւն տեսայ, կըխնդրեմ որ իրիկուան դուն ալ իմ հարկիքիս մէջ գտնըվիս ։ Ցուլը գնաց հեռուէն նայեցաւ որ ամէն պատրաստութիւն կայ՝ բայց ոչխար չի կայ, հասկըցաւ բանը, սկսաւ փախչիլ ։ Ինչու համար կերթաս ըսաց առիւծը․ ցուլն ալ պատասխան տըւաւ, թէ տեսայ որ հարկիքիդ ամէն բանը պատրաստ է ցուլը ուտելու համար, չէ թէ ոչխարը ։

Խաբեբայ մարդիկ շատ անգամ պատիւ ընելով, և ընծայ տալով կը խաբեն շատերը. ուստի պէտք է հեռու փախչիլ անանկ խորամանկներէն։

---

Դրժօղ դաւաճանք՝ 'ի տխուր առիւծին,
յարգելով պատուեն՝ զնորա բարեզարդ.
Զի ձաշ և կաշառք՝ զբաղուսն արկին,
յանդուգն գժբողաց՝ կորուսիչ թակարդ։
Մի՛ քեզ քաղցրասցի՝ ձաշ դաւաճանին,
մի՛ կախարդեսցէ՝ պատիւ նենգողաց.
Զգոյշ լեր արթուն՝ ըստ խորագիտին,
Թափել հնարիւք՝ չարին 'ի ձեռաց։

---

## Շինական, և Հերքիւլէս։

Արդ՝ մի՛ անջան՝ կարդար զերկին,
զի չէ՛ք նպաստ՝ անգործ վարին։

Ջանք ընելով աղաղակէ,
որ Երկնաւորն՝ յօժարէ լսէ։

մշք. Մէկ գեղացի մը իր սայլը առեր տեղ կերթար. յանկարծ ընկաւ սայլը ջրոտ փոսին մէջ, որ չէր կրնար առաջ երթալ՝ ձիոց անանկ. իսկ գեղացին թողուց զայն ու պոռը-սաւ Հերքիւլէս չաստուծին աղաչել, որ գայ սայլը հանէ տղմին մէջէն. իսկ Հերքիւլէս ծի-ծաղեցաւ անոր վրան. ով անխելք ըսաւ.

[...]րկ ձիերուդ, հրէ՛ սայլը, և հապա կան-
չէ Հերքիւլէսն, որ գայ օգնէ քեզի:

---

Հերքիւլէս կամ Հերակլէս հին ատենը քաջ զօ-րաւոր էր, որ անպատմելի քաջագործութեանը համար [...]ն կռապաշտները կը պաշտէին զայն, և նեղութե-[ան] օգնական կը կանչէին. որ օրինակ է այս նախա-խնամութեն, որ հարկաւոր պէտքը կը համարի ջանք ընե-լին. բայց ատոր տեղ որ մարդու ճարը և հնարքը կը հատնի, ան ատենը կը հասնի վերին նախախնամու-թիւնը. զի ծոյլ մարդէն միշտ հեռու է:

Թէ խնդրես նպաստ՝ արարող մատին,
վաստակեա՛ զ՚մատունս՝ ՚ի գործ պիտանին.
Թէ անջան կարդաս՝ զօգնութիւն վերին,
մի՛ ակնկալցիս՝ սատար երկնային:
Ջանա՛ դու ո՛վ վատ՝ ըստ կարի անձին,
հասցէ քեզ յօգնել՝ ձեռք նախախնամին.
Զի նա քեզ թողու՝ առնել զկարելին,
և զանկարն ինքեան՝ պահէ հրաշալին:

# Գեղջուկ, և Խոզ :

*Թէև հասցես՝ զականջս անլուր,*
*ոչ իմանայ՝ խրատ և լուր :*

Այն ականջն որ՝ լսել լուալէ,
Ինչ որ ընէս՝ խօսք չի լսէ :

*Մէջ · Գեղացի մը տեսաւ, որ դրացինին խոզը մտեր է արտը կապականէ ցանած գարին · շատ վռնտեց մտիկ չըրաւ · անալ բարկութէն զարկաւ մէկ ականջը կտրեց · բայց խոզը նորէն սկսաւ հոն մտնել, մինչև զարկաւ գեղացին մէկալ ականջն ալ կտրեց : Բայց խոզը՝ ամենևին այս բանէն ետ չի կեցաւ · բռնեց տիրոջը տարաւ որ մորթէ : Իսկ տէրը երբոր գլուխը կտրեց ու ճղքեց, տեսաւ որ խոզն ըղեղ չունի՝ շատ զարմացաւ : Մի՛ զարմանար տար վրա ըսաց գեղացին · վասն զի թէ որ խելք և զգայութի ունենար, երկու ականջն որ կտրեցի՝ կըհասկընար ու չէր գար նորէն իմ գործս ապականէր :*

---

Օրինակ է այնպէս Գեղջուկ խոզ մարդկանց, որ ականջին խրատ չեն ընդունիր, և իրենց հաւնածին անանց բան կընեն, որ պէտք է ըսել, թէ ոչ իմաստ ունին ու միտք :

Այս ապառում՝ գործ անխըղճատին ,
որ ոչինչ ազգուՃին՝ ընդունի յանձին ․
Գոյ յոյս բուսանիլ՝ սերմն յապառաժին ,
քան յանլուր ականջ՝ վայրագ տարտամին ։
Տես զխարդ անգործ՝ մնայ սերմն անգին ,
յանհըրահանգ սիրտ՝ 'ի միտս անսաստին ․
Ընկալ զխրատ՝ 'ի հերկեալ սրտին ,
ընծիւղել բարիս՝ զերթ պարարտ երկրին ։

---

## Ագահ հիւանդ ։

Մեծ գանձեր քեզ՝ զկորստականն ,
զի մի տացէ՝ զ°քեզ կորստեան ։

Ջանա՛ հոգւոյդ՝ ունիլն շահնայ ,
որ երբ մեռանիս՝ ընդ քեզ գայ ։

ՃԷ. Մէկ ագահ մը անիրաւութիւ շատ հարստութիւն ունէր . երբոր հիւընդցաւ , և տեսաւ որ պիտի մեռնի , ուզեց որ իր բոլոր գանձը բերեն առջին ։ Ուստի առաւ առջին ոսկիներն ու սկսաւ հառաչելով անոնց հետ խօսիլ . ա՜վ սիրական ոսկիներս կըսէր՝ ես ձեզ չարաչար աշխատանքներով վաստըկեցայ , ու դուք ինձի ամենեւին հանգիստ և զուարճութիւն մը չի տուիք . հապա միշտ տրտմութիւն և նեղութիւն ։ Պատասխան տըվին ոսկիները , թէ մենք զըւարճութիւն կըրնանք տալ միայն քու ժառանգներուդ , երբոր ուտելով խմելով բոլորը կը մսխեն . բայց

չկյանք թէ հոգւոյ բանը՝ ինչպէս պիտի ըլլայ. որ հոս ալ տանջուեցաւ, հոն ալ պիտի տանջուի։

---

Ով որ ագահութեամբ հաւաքէ իր գանձը՝ հոգւով մարմնով իր կորսուի։ Հայն ոչ հոս չէ մեր հայրենիքը, այլ երկինքն է. ուր պիտի թագաւորենք յաւիտեան. ինչպէս կ'ըսէին հին քրիստոնեաներն ալ։ Փիլիսոփայի մը հարցուցին, թէ հայրենիքդ ուր կը մնայ. ան ալ երկինքը ցուցուց ըսաւ, հոն ուր կը մնայ իմ հայրենիքս։

Նանրախոհ ագահք՝ վշտանան յանձին,
 Ժողովել զգանձս՝ գործի կորուսչին.
 Կարծեն թէ իշխեն՝ ոսկւոյ արծաթին,
 բայց ինքեանք յոսկւոյ՝ գերեալ կաշկանդին։
Քանզի 'ի տանջանս՝ կորստականին,
 կորուսին զկեանս՝ և սիրտ ընդ նմին.
 Գանձել քեզ լիցի՝ 'ի բուն հայրենին,
 ուր յաւերժ բերկրի՝ վերնաձեմ հոգին։

# Թութակ ։

Չէ մարգարէ՝ ընդունելի,
և ոչ գիտուն՝ յիւր քաղաքի ։

Գիտուն հարդին՝ պարին ըռանին,
Իրենց տան մէջ՝ ու քաղաքին ։

Մէկ. Թութակը պապաղա Հնդուստան երբոր արևելքէն եկաւ արևմուտքը՝ ամէնքը մեծ պատիւ կընէին իրեն. որովհետև արևմուտք չըլլար այս թռչունը ։ Օր մը հարցուցին թէ ինչու համար քու աշխարհքիդ մէջ քեզի պատիւ չէին ըներ, ու հոս այսչափ պատիւներ կընեն, արծըթէ և փղոսկրէ վանդակի մէջ կըդնեն, և զանազան փափուկ կերակուրներով կը պահեն ։ Պատասխանեց թէ մի զարմանաք. վասն զի ամէն տեղ վայլած պատիւը չընելնուն համար, ես հոս պատուաւոր եղայ, և այս պատճառաւ գիտուններն ալ իրենց քաղաքը կը ձգեն ուրիշ տեղ կերթան, որ ընդունելի ըլլան, ու պատիւ ունենան ։

---

Իմաստուն հարդիք իրենց քաղքին, ու աշխարը մէջ ընդունելի չէն. օտար տեղ աւելի յարգուիք ունին ։ Գիտունի մը հարցուցին թէ ի՞նչ ա-[illegible] ներդ տեղ աւելի կը ճանչնեն. ըսաւ պատճառ պըտուա թէ մայն գիտէրս ։

Բանիբուն խոհեմք՝ գիտունք ցանկալի,
չեն յարգի և մեծ՝ յիւրայնոց միջի.
Զի յաճախութիւն՝ ընդ մերձաւորին,
գործէ զմեծարուս՝ անարգ խոտելի։
Լաւ է յարգանօք՝ կալ յանապատի,
քան անարգ մնալ՝ 'ի մեծ քաղաքի.
Փախի՛ր ուր գիտունք՝ չիցեն յարգելի,
նստեալ առ անին՝ յառանձին տեղի։

## Արծիւ, և Սիրամարգ։

Ոյժ և մագիլ՝ զարծիւ տգեղ,
առնեն սիրուն՝ և աչագեղ։

[illegible]
[illegible]

մՀէ. Նորեկին արծիւը եկաւ ուրիշ թռչուն-ներուն մէջ նստեցաւ ու սկսաւ պարծենալ. չեմ կարծեր թէ կրսէր՝ իմմէ գեղեցիկ դըռ-նըվլի աշխարհքիս վրա. ահա իմ վրաս յայտ-նի կերեւնան շատ գեղեցիկ նշաններ։ Երբոր իր վրայի ամէն բանը կըգովէր, բոլոր թըռ-չունները վախերնուն կը հաստատէին թէ ճշմարիտ է. մինակ սիրամարգը քթին տակէն ըսաց կամաց մը, թէ կտուցքդ ու ճան-կերդ քեզ գեղեցիկ են ըրեր. թէ որ ատոնք չըլլային, կը գտնըվէր հոս մէկն որ քեզի ցոյց տար, թէ ոչ միայն գեղեցիկ չես, այլ և խիստ տգեղ ես։

Մէծուն անոզ մարդը գէչէյին ու ֆըլըլայ գի-
ւան ու. որոշնէփը անճնքը ձախէրնան ֆըգուլըն.
Նը որ ըռէ, գըլուխ ծոէլով անանի է ֆըռէն, Բէզէփ
ֆմար ըլլայ. անոր համար հին ֆնլիուֆանէրը փգէփ
գիտուններան անանը տրէր էին՝ անասուն ող-
ջին։

*Անխառն փարթամք՝ ինքեանց վեհ Թուին,*
*յանձին կարծեցեալ՝ ունող բոլորին.*
*Ու որք դիմադիր՝ խորհրդոց նոցին,*
*ընաւք ծնրադիր՝ յոխորտող ձայնին։*
*Այս Թիւր սկզբունք՝ Թիւրեալ աշխարհին,*
*որ զմեծութին՝ դնէ 'ի դանձին.*
*Գեղեցիկ գիտուն՝ փարթամք համարին,*
*Թէև խեռ ազեղ՝ ըստ բընականին։*

---

## Էշ, և Շուն։

*Որ ոչ լսէ՝ զձայն կարօտի,*
*չօգտի ուսմանք՝ երբ կարօտի։*

Թէ չէօ հասինը՝ տաւն աւրինըն,
Մարդ ըլի հասինը՝ ֆաւ խէղճ ֆայնին։

Մնջ. *Էշն ու շունը ընկեր ըլլալով միատեղ*
*կերթային. բայց իշուն վրա հաց կար բար-*
*ձըված, որ աղքատներուն կըտանէր։ Անոնք*
*ճամբան կանօթենան՝ էշը կերթայ խոտ ու-*
*տելու, և շունը կաղաչէ իշուն որ իրեն քիչ*
*մը հաց տայ. իսկ էշը ծաղր ընելով կըսէր*

շանը, թէ խօսք կեր ինծի հետ: Այս խօսքիս վրայ նայիս գայլը հոն հասաւ. սկսաւ էշն աղաչել շանը թէ շուն եղբայր կաղաչեմ օգնէ ինծի, և հալածէ զգայլն որ զիս չը պատռէ. գիտեմ որ կրնաս այս շնորհքն ընել: Պատասխան տըւաւ շունը, թէ քիչ մը առաջ կտոր մը հաց չի տըւիր ինծի, հիմա զիս քեզի օգնութիւն կը կանչես. գնա կորսուէ ինծի անանկ ընկեր պէտք չէ, որ կարօտութեանս ատենը օգուտ մը չունի: Եւ այսպէս թողուց որ գայլը պատռեց զայն:

---

Խրատ է անոնց, որ ուրիշը կարհամարհեն, օգնութիւն մը չեն ըներ և իրենք ալ իրենց կըլլան. [illegible] չի կայ անանկ անպիտան, որ պէտք եղած ատենը օգնութիւն մը չի կարենայ ընել փոխարէն: Շատ անգամ ուրիշին աղէկութիւն ընելով մեծ բարիք գտեր են:

Բոյք են բնական՝ իմացականին,
կարեկցիլ այլոց՝ նպաստել նոցին.
Իսկ թողուլ զընկեր՝ կարօտ ցաւագին,
բերմունք են սրտի՝ անասնականին:
Թէ մատամբ մերձիս՝ յօգուտ կարօտին,
բազումք թեկնածեն՝ և քոյդ կարօտին.
Թէ մերժես զձայն՝ որ քեզ կարօտին,
կաս մնաս 'ի վիշտս՝ միշտ կարօտագին:

# Էշ, և Խոզ։

*Ջանա՛ 'ի գործ՝ կրթել զմարմին,*
*մի՛ պարարեր՝ նման խոզին։*

Կրթէ՛ ջանէ՛ աշխատանօք,
Թէ չէ՛ մահին՝ կերթաս շուտով։

*Էշը սաստիկ կը նախանձէր խոզին. վասն զի կը տեսնէր որ առանց աշխատանաց բոլոր օրը կուտէր կը գիրնար. իսկ ինքն առտուընէ մինչև իրիկուն բեռ կրելով հոգին կելլէր։ Օր մը տէրն ուզեց մորթել զխոզն, որ շատ գիրցած էր. երբոր պառկեցուցին մորթեցին, էշը զարմանալով կը նայէր. ահա պատճառը հասկըցայ թէ ինչու համար մեր տէրը դգուելով գիրցուց խոզն, որ մորթէ և իրեն կերակուր ընէ։ Ուրեմն շատ աղէկ է էշ ըլլալ, քան թէ խոզ, և այսպէս գոհ եղաւ իր վիճակին վրայ։*

---

Խրատ է անոնց, որ ուրիշին հանգստութեանը վրա կը նախանձին. Չեն գիտեր որ անոնք ներքէնէն երկնան, այնպէս շատ նեղութեց տակ են. անոր համար իմաստուններն աշխատաւորաց կեանքը ծուլացածներուն կեանքէն վեր կը դնեն։

*Ահա՛ այս վախճան՝ է պորտաբուծին,*
*որ միայն լնու՝ զծակ կարասին.*

Բայց որչափ պարարտ՝ լինի փուշըն,
փութով 'ի սպանդ՝ վարի կորչին :
Արդ մի՛ նախանձիր՝ կենաց անգործին,
ջանա՛ միշտ կրթիլ՝ 'ի գործ պիտանին.
Քանզի կեանքն է կեալ՝ յօգուտ աշխարհին,
այլ ոչ 'ի կորուստ՝ բուծանել զմարմին :

## Աքաղաղ, և Աղուէս .

Եթէ անկար՝ յարկած չարին,
փախի՛ր 'ի բաց՝ հեռոց նորին :

Թէ չես տեսար՝ անզգամէն,
հեռու փախի՛ր՝ [illegible] տեղէն :

ՃԶ. Մէկ աքաղաղ մը աղուէսին ձեռքն ընկաւ . բայց շատ աշխատելով և ջանքով փրցուց զինքն անոր ձեռքէն ու փախաւ : Օր մը մէկ քանի աքաղաղներու հետ երբոր ժուռ կուգար՝ տեսաւ աղուէսի մը մորթ, մէկէն սկսաւ փախչիլ : Այն որ տեսան ընկերները՝ ամէնքը միատեղ վրան խնդացին . մինչև որ աքաղաղը չդիմացաւ եւ դարձաւ ըսաւ իրենց . հէ՜, թէ որ դուք ալ աղուէսին ձանկը մտնէիք, չէ թէ միայն մորթէն, այլև կախած տեղէն ալ կը փախչէիք դողալով :

Օրինակ է [illegible] . որ ամէն [illegible]

[illegible]

խոհական մտաց՝ այս գործ փորձառուին,
փախչի 'ի հեռոյ՝ դաժան փորձողին.
Զի կրեալ արկածք՝ տպանան խորին,
առ 'ի ոչ փորձիլ՝ 'ի նոյն վերստին:
Լեր շրջահայեաց՝ յամենայն առթին,
զի անպատկառ կան՝ դարանք ստոխին.
Թէ արթուն գնաս՝ և հսկող յանձին,
անգործ մնան հաղբք՝ դարանակալին:

---

## Էշ, և Գայլ:

Որ յանսովոր՝ գործ ինչ մխի,
գանիւք վշտօք՝ ծանր տուժի:

[illegible]

մձա. Երբեմն իշուն ոտքը փուշ կը մտնէ, որ շատ կը տանջըվէր փուշին ցաւէն. ուստի տեսաւ որ գայլը վրան կուգայ՝ սկսաւ ողորմուկ ձայնով աղաչել. ով գայլ կըսէր, ահա այս ցաւս զիս պիտի մեռցընէ ու ագռաւններուն կերակուր պիտի ըլլամ, քեզմէ օգնութիւն մը կը խնդրեմ, ինձի շնորհք ընելով հանէ ոտքէս փուշը. գոնէ առանց ցաւի մեռնիմ: Իսկ գայլը ուրախանալով մօտեցաւ իրեն,

և առջևի ակռաներովը բռնեց փուշը կամաց մը հանեց ոտքէն: Սակայն էշը մոռնալով քաշած ցաւը՝ կից մը զարկաւ երեսին որ ակռաները թափելով պատռեց գայլին ճակատն ու փախաւ: Երբոր գայլին խելքը գլուխն եկաւ՝ սկսաւ ինքիրեն ըսել թէ աղէկ եղաւ ինծի. որովհետև ես անասուններուն մսագործութիւնը սորված էի, հիմա ուզեցի ըլլալ անոնց վիրաբուժ բժշկ:

---

Որոնք որ իրենց ոտանաւորական արուեստը կուզեն ու չեն սորված բանի մէջ կը պարծենան՝ ծաղր կըլլան և մեծ վտանգի մէջ կիյնին:

Որ ձգէ զգործս՝ սովորականին,
մխի յանսովորն՝ 'ի ձեռն օտարին.
Անդ խայտառակեալ՝ տուժի և ծաղրի,
անարգան ուրէք՝ մեղադրի ինքնին:
Արդ մի գահավէժ՝ լինիր յառնելին,
և մի ոստոստեր՝ 'ի միոյ առ մին.
Անսասան կացեալ՝ 'ի քոյդ վիճակին,
յաւերժանաս միշտ 'ի գերագունին:

# Աղուէս, և Առիւծ ։

Երբ յաճախէ՝ պէտն ընդ ռամկին,
կորուսանէ՝ պատիւ անձին ։

Մեծն որ ռամկին՝ շատ երեւնայ,
անարգ և ցած՝ մարդ կը ըլլայ ։

Մեք ․ Աղուէսը բնաւ առիւծ չէր տեսած ․ եղաւ որ օր մը դիմացն ելաւ, անանկ սաստիկ վախցաւ որ քիչ մնաց կը մեռնէր ։ Երկրորդ անգամ երբոր տեսաւ, վախցաւ, բայց առաջիններին պէս չեղաւ ։ Իսկ երրորդ անգամ որ տեսաւ առիւծը՝ ամենևին վախ մը չունեցաւ, համարձակ սկսաւ հետը խօսիլ. և ինքիրեն ըսել թէ վախն ու ակնածութիւնն է եղեր մեծութեն սըւօղը. չէ թէ մեծ մարմինը և մեծ անունը ։

Որչափ մեծ և ահաւոր բան ըլլայ, երբոր շատ անգամ կը տեսնըւի, ձանձր կերեւայ և համարձակ բան մը կըլլայ ։ Այս պատճառաւ հին առածը է [illegible], և [illegible] անգամ մարդու կերեւնային. և երբ [illegible] կը տեսնէր, կարծէր թէ երկինքէն եկած են ։

Գըլխապետք իշխանք՝ ՚ի վեհ վիճակին,
ցանցառ երևիլ՝ ռամկաց հարկադրին ․

Զի յաճախութիւն կարծէ զյարգ անձին,
Թէ և մեծայարգ՝ իցեն աչագին:
Իսկ դու վերանցեալ՝ ՚ի պատիւ կարգին,
մի՛ յաճախ նստիր՝ ՚ի ժողով ռամկին.
Կշռելով զանձինս՝ զխօսս զտեղին,
վեհապանծ բազմեաց՝ առաջի նոցին:

## Գայլ ծերացեալ:

Բազում ընկերք՝ ճոխ մեծատան,
ոչ ոք մերձի՝ յաղքատ սեղան:

Մեծ ունեցողին՝ շատ ընկեր կայ,
աղքատին քով՝ մարդ մը չերթայ:

մէջ. Գայլ մը անանկ ծերացած էր, որ ոչ կերակուր կրնար գտնել և ոչ մէկն իրեն բան կուտար. անանկ որ ամէնքը զինքը կը հալածէին: Օր մը ելաւ անտառը գնաց, և հոն գտաւ մէկ մեռած եզ մը՝ վազեց ուտելու: Բայց ուրիշ գայլերը մէկէն հոն առին հոն Թափեցան, որ ուտելով օգնեն իրեն. վասն զի ընկեր ենք կըսէին: Իսկ ծերը բարկանալով կըսէր. հիմա որ կերակուր ունիմ ամէնքնիդ ինծի ընկեր եղաք. և երբոր բան չունէի, մէկերնիդ զիս ընկեր չէիք ճանչնար ու միաբան զիս կը հալածէիք. ուրեմն ունեցածիս ընկեր էք, չէ թէ ինծի:

Մեծատութիւնը աւելի բարեկամ կըստանայ, բայց թէ խելքը. և այս սոսկ բարեկամները ուրախ օգտաւէտեն՝ կը մօտենան. և երբոր ձախորդութիւն հանդիպի մեծատունը՝ դառնեն ու չեն անցնիր, որ գիշեր ցորեկ դառնէն չէին պակսեր:

Այն տարացոյց՝ այժմեան վիճակին,
որ տայ զյարգութիւն՝ փառաց և պատուին.
Ոչ ոք բարեկամ՝ բուն բանականին,
այլ ամենեքեան՝ մեծութեան նորին:
Չեք քեզ մերձաւոր՝ թէ ես աղքատին,
Թէև վեհապանծ՝ և ձոխ յիմաստին.
Թէ աղքատ մտօք՝ և ձոխ 'ի գանձին,
'ի ծունր իջանեն՝ քեզ բոլորեքին:

## Գառն, և Գայլ:

Որ կայ հնազանդ՝ ձայնի վեհին,
անգործ առնէ՝ նենգս չարին:

Ով որ հնազանդ՝ է իր մեծին,
վնաս և չար՝ չի գար անցին:

մէջ. Գայլը տեսաւ որ գառնուկ մը կերթար այծին հետ՝ սկսաւ անոր խօսքերով ըսել թէ ինչու համար թողուցիր մայրդ, ու այս գարշահոտ այծին ետևէն կերթաս. դարձիր մօրդ քով, որուն ստինքը կաթով լեցուն են: Այս խօսքերով կը ջանար այծէն զատել, որ դիւրաւ յափշտակէ զգառն:

Ան ալ պատասխան տուաւ, թէ մայրս զիս առոր յանձնեց. ուստի աւելի կուզեմ հնազանդ ըլլալ մօրս քան քեզի, որ կեղծաւոր խօսքերովդ կուզես զիս ասկէ հանել ու պատրել:

---

Ով որ թշնամոյն խօսքին հաւնելով անհնազանդ կ'ըլլայ, հարկաւ կը կորսուի. խրատ ըլլայ մանկանց, որ սոր ընկերներուն հասարակաւ իրենց մեծին կը հնազանդին:

Այսպէս փաղաքշէ՝ նենգօղ թշնամին,
խորամանկ բանիւ՝ զախրա անմեղին.
Տքնի ձողոպրել՝ 'ի ձեռաց վեհին,
զի ծախեսցէ զայն 'ի ժանիս հեշտին:
Մի՛ լսեր զձայն՝ կորուսիչ թովչին,
նազելի բանիւ՝ զքեզ խարդախողին.
Հնազանդ և հլու՝ կաց մեծաւորին,
հարեալ զբերան՝ գաղան բանսարկուին:

## Էշնաւոր , և Էշինք :

Որում իմիք՝ ոք կարօտի ,
զայն երազէ՝ 'ի գիշերի :

Ինչ բանի որ՝ մարդ կարօտէ ,
Երազին մէջ՝ զայն կը տեսնէ :

մձծ. Օր մը էշնաւորը կը մտնէ էշներուն գոմը, կը տեսնէ որ բոլորն ուրախութեան մէջ են, կը հարցընէ թէ ի՞նչ պատճառաւ ասանկ կ'ուրախանաք : Անոնք ալ պատասխան տըւին, թէ այս գիշեր երազ տեսանք, որ մեզ մէկ խիստ զուարճալի դաշտի մը մէջ տարեր խոտ կը կերցընէիր՝ անոր համար կ'ուրախանանք : Պատասխան տըւաւ էշնաւորը թէ ես ալ տեսայ, որ բոլոր օրը ձեզ կաշխատցընէի երկիրը փորելու. ուստի պէտք է որ իմ երազս իրաւ ելլէ, ձերինը սուտ : Զայս ըսելով վերցուց տարաւ արտը հերկելու :

---

Օրինակ է անոնց որ անմտաբար երազի կը հաւատան. որովհետև երազը անօթենը կը պատճառի, երբոր մտքը բան մը կայ որ կ'ուզէ զայն տեսնէ՝ երազ կըլլայ. ինչպէս ծարաւ մարդը ջուր կը տեսնէ. բայց երբոր ըմպէլը կը լռնայ, ու արիւնը կը պակսայ՝ զարհուրելի երազ կը տեսնէ : Նայէ մեր Ճշմարտութեան 979 համարը :

Ջիմրդ պաշարեալ՝ միտք նախադատին,
երազէ զայն ինչ՝ որում կարօտին.
Բերկրի հանդիպիլ՝ բարեաց բոլորին,
զոր եռես ընդ կարծ՝ յանդոյ կարելին:
Մի՛ զքեզ շարժեսցէ՝ տեսիլ անդոյին,
որ չէ ինչ պատճառ՝ բարւոյ և չարին.
Այլ այն գաղափար՝ նման սաւերին,
անցանէ ընդ միտս՝ զգայականին:

---

## Ագահ դեսպան:

Ագահն 'ի սէր՝ դոյզն ինչ օգտի,
ծանակ լինել՝ լաւ համարի:

Ագահը քիչ՝ շահի համար,
ինքը ըլլայ՝ անարգ և չար:

մձէ. Երբեմն ագահ մարդ մը դեսպան գընաց ուրիշ քաղաք մը. երբոր քաղքին մօտեցաւ, ամէնքը դէմ գացին նուագարաններով. զի սովորութիւն էր որ երաժիշտները քաղքին դուռը կերթային հանդէսով բան կըչալէին, որ անկէ պարգև առնէին. բայց ագահը մարդ խրկեց որ չիգան բան չալեն. վասն զի սուգ ունիմ կըսէր մօրս մահուանը համար: Այս պատճառաւ քաղաքացիք գացին զինքը մխիթարելու. երբոր իրարու կը հարցընէին, թէ արդեօք որչափ ատեն է որ ասոր մայրը մեռեր է: Պատասխան տըւաւ ագահը, թէ քառսուն տարի կայ. ական

ամէնքը ծիծաղելով զարմանալ անոր ագա-հութենը վրայ ։

---

Օրինակ է ագահին, որ մէկ ոսկին և թէլ մը լահի համար ամենայն ծաղր կըլլայ ․ Բայց մարդուս [?]յութին այն է որ ոսկին անարգէ, և ինքը լանարգվի ։ Որ տեղ որ ոսկին կը խօսի, ամենքը կը լռեն․ կըսէ գիտուն մը ։

Այս ակնզըն յոռի՝ մտաց ժլատին ,
որը նպատակն է՝ յաւելուլ յոսկին ․
Մինչ գանձ մի ծախել՝ դժուար է նմին ,
քան ծանակ լինել՝ բոլոր աշխարհին ։
Եւ հիմ ժողովլի՝ այն գանձ այն ոսկին ,
երբ ոչինչ ծախի՝ յօգուտ գանձողին ․
Կաշկանդէ կապէ՝ զսիրտ և հոգին ,
'ի նախատ բերի՝ կծծի ագահին ։

---

## Շինական , և Մուկն ։

Ընկեր ծառայ՝ են մտերիմ,
բարգլին միայն՝ և ոչ անձին ։

Շատ Բարեկամ՝ ճառայ ու պատուին ,
մարդ մը ըլի կայ՝ նեղ ատենին ։

մէջ․ Մէկ գեղացիի մը տան յանկարծ բռընկեցաւ կերեր չարաչար, և ինքը հեռուն կեցած երբոր կընայէր, տեսաւ որ մուկ մը

տնէն դուրս ցատկեց կը փախչէր · Մէկէն գեղացին վրան վազեց ու բռնեց մուկը կըրակին մէջ նետեց · Թշուառական կըսէր, քանի որ տունս շէն էր կը վայլէիր, հիմա որ թշուառութեն հասաւ գլուխս կը փախչիս· այս է քու ընտանութիւնդ · ուրեմն ինչպէս որ աղէկութիւնը վայլեցիր, գնա խեղճութին ալ քաշէ · քեզի պէս բարեկամին այսպէս պէտք է ընել :

---

Օրինակ է աշխարհիս թշուառութեան, որ երբ մէկը ձախորդութեան մէջ իյնայ, ամենքը երես կը դարձընեն, մէկը չի նայիր երեսը · բայց ճշմարիտ բարեկամը ձախորդութեան մէջ աւելի բարեկամութիւն կընէ :

Ո՛ւր այն բարեկամ՝ ընկեր մտերիմ,
յաջող վիճակին՝ նոյն և ձախողին ·
Արդ և բարեկամք՝ միայն յաջողին,
ոչ ոք մերձաւոր՝ ձախողակ բաղդին ·
Ո՜վ դիւրափոփոխ՝ մտաց մարդկային,
որ այսպէս փոխի՝ ընդ փոփոխ բաղդին ·
Զայն որ յանմահից՝ գնէին ոսկին,
յետոյ անարժան՝ իւրեանց ողջունին :

# Մարագ, և Խոզ։

Տես զվնաս՝ քո վաղագոյն,
մինչ չև գործեալ՝ է թշնամւոյն։

Գուլու ճնան՝ ատենով տէօ,
ու խործածէտ՝ չէն խը տաչէօ։

Առակ. Լեռան խոզը իր ակռաներուն զօրութենը ապաւինելով՝ որ խիստ երկայն զօրեղ էին, ուզեց իշուն հետ կռիւ ընել։ Իսկ էշը վարպետութենով մը մօտեցաւ խոզին, և անանկ կից մը զարկաւ ճակատին, որ կիսամահ գետինն ընկաւ խոզը։ Յետոյ խոզին միտքը վրան գալով սկսաւ բսել ինքիրեն, թէ ոտքով կռուիլը մտքէս չէր անցած. աս ալ սորվեցայ, բայց հանդերձ վնասով։

---

Մինչ պէտք է համբերել, թէ ստակդ խրնայ ճշտա-ւ, ու թէ չինքը բանի մը տէղ տնելով զատրիլը նախատել. չան չի ու խործած մարդիկ ժծ ճշտա խրնան տալ։

Այս պատիժ պահէ՝ յանձնապաստանին,
որ զինքն յաղթական՝ գնէ բոլորին.
իսկ այն ապիկար՝ որ չուզի լաւին,
պշտանի հարեալ՝ յաղթէ զոռոզին։

Մի՛ զոք արհամարհ՝ տկար և չնչին,
Ջանալ անխորհուրդ՝ կոխել առ ոտին.
Գոյ զէն զօրութե՝ 'ի սիրտ խոնարհին,
Հանէ և ծաղրէ՝ զ՚հպարտ թշնամին ։

---

## Բանաստեղծ, և Էշ ։

Մի՛ դներ լինչ՝ յաւերժական,
զի մահն հանուրց՝ դնէ վախճան ։

Մնացական՝ բան մը չէ կայ,
ամէն բանի՝ մահը մօտ կայ ։

Մեկն. Մ՛էկ բանաստեղծ մը կըպարծենար, թէ ես անանկ վարպետ եմ և անանկ լաւ կերպով բան կըսորվեցընեմ, որ չէ թէ միայն մարդիկ, այլ և էշն ալ կրնայ սորվիլ իմ բանաստեղծութիւս ։ Զայս երբոր լսեց մէկ իշխան մը կանչեց զինքն ըսաց, թէ իմ իշուս ալ բանաստեղծութիւն սորվեցուր, ահա քեզի տասը տարի ժամանակ, և ինչ որ կուզես կուտամ ։ Բանաստեղծն ալ խոստացաւ, թէ խի՛ստ լաւ այսչափ տարվան մէջ կրնամ սորվեցընել՝ բան մը չէ. թէ որ չի սորվի՝ բոլոր կեանքիս մէջի ըրած վաստակս քեզի կուտամ ։ Այս դաշինքիս համար շատ մարդիկ զինքը մեղադրեցին, թէ անանկ բան մը վրան առաւ որ անկարելի է ։ Պատասխանեց բանաստեղծը թէ ո՛վ յիմարներ, տասը տարվան մէջ կա՛մ իշխանը կամ էշը և կամ ես կը մեռնիմ ։

Խրատ է անոնց որ աշխարհային անցաւոր բանե-
րուն վրա հոգ կը տանին. մի մահը շուտ մը կը հա-
նէ ամէն բան կը մոռցընէ: Հոգ տանող մարդուն
ոսկորները կը ցամքին. կըսէ իմաստունը:

Արթուն խորագէտ՝ գիտող վախճանին,
ծաղրէ զխորհուրդ՝ յիմար իշխանին.
Զի գիտունք միայն՝ զներկայն ունին,
իսկ յիմարք զգար°ս՝ խոստանան անձին:
Ունայն վաղանցուկ՝ զի՞նչ քան զմարմին,
ում կից են արկածք՝ մանգաղ օրհասին.
'ի թարթել ական՝ հասանէ նմին,
վերջ տայ խորհրդոց՝ նանրախոհ ռամկին:

---

## Խոյ, և Ցուլ:

Հպարտ յիմար՞ն՝ վստահ յանձին,
գայ 'ի պայքար՝ ընդ հզօրին:

Յիմար մարդիկ՝ չիրենց չափն,
Մեծ կը կարծեն՝ ծիծաղ կըլլան:

մղ. Մէկ արու ոչխար մը խիստ զօրաւոր և մեծ ըլլալով ոչխարներուն մէջ՝ միշտ կը կռուէր անոնց հետ, և ամէնուն յաղթող էր. որ այնչափ ամբարտաւան եղաւ, մինչև յանդըգնեցաւ ցուլին հետ ալ կռուիլ. բայց երբոր իրարու դէմ ելան՝ ցուլը անանկ սաստիկ զարկաւ ոչխարին, որ գլուխը ճզմելով եղջիւրները թափեց գետինը ձգեց: Աւասի

Մեռնելու ատենը կըսէր ոչխարը հառաչե-
լով. ով Թշուառականիս այս ի՞նչ անխիղճ
հպարտութին էր ըրածս, որ համարձակեցայ
կռուիլ ցուլին հետ. որովհետեւ բնութիւնն
անանկ քաջ է ըրեր զայն, որ մէկը չի համնիր
իրեն ։

---

[illegible]

Զբաղոհ յիմարք՝ վստահեալ յանձին,
եղջիւր ամբառնան՝ ընդդէմ հզօրին.
Անդէն զինաթափ՝ ձգեալ 'ի գետին,
փորձեն 'ի սնոտ՝ զոյժ ախոյանին ։
Մի՛ բերեր կարել՝ ընդ վեհագունին,
մի՛ ընդ իշխանաց՝ և գիտնականին.
Զի նոյին հարուածք՝ սնոտեն ուժգին,
ձգեն յայն փորեալ՝ խորխորատ խորին ։

# Աղուէս, եւ Շուն ։

Գովեստ ոմանց՝ մնասէ ուժգին,
քան զպարսաւ՝ չարախօսին ։

Գովեստ կայ որ՝ մեծ վէն կոտայ,
կայ պարսաւ որ՝ շատ ալ է պատ ։

Ա̃ռ. Շուն մը աղուէսին ետեւէն ընկեր կը հալածէր՝ որ բռնէ. աղուէսը տեսաւ թէ ազատում չունի՝ կանչեց շանը. ով շուն ինչ ես ընկեր ետեւէս, իմ մարմինս միս չունի որ ուտես. աչքս անդին դէր նապաստակ մը կայ, վազէ ետեւէն. որուն մարմինը խմինէս շատ լաւ է։ Շունը տեսաւ նապաստակն, ու վազեց ետեւէն. բայց չի կրցաւ հասնիլ. մինչեւ փախաւ ազատեցաւ ձեռքէն։ Քանի մը օրէն ետեւ նապաստակը երբոր տեսաւ աղուէսը, սկսաւ մեղադրել թէ ինչու համար զինքը գովեց շանը։ Պատասխանեց աղուէսը. թէ որ արհամարհէի զքեզ ինչ պիտի ըսէիր, որ աղէկ ըսելուս համար կը տրտնջաս ։ Անալ ըսաւ թէ ա՛լ աղէկ էր զիս վար զարնէիր, քան թէ սանկ չարութը գովէիր ։

Խորամանկ մարդը սուտ գովասանքով, և անոյշ լեզուով կը մատնէ մարդը. ասոր չար անգամ գովեստը նախատինքէն աւելի շատ կը բերէ ։

Այս գործ է մատնիչ՝ սուտ բարեկամին,
որ սատէ զընկերն՝ յիւր վաս ներքոյին.
Քաղցր գեղգեղեալ՝ զ՚ձայն մահաբերին,
մատնէ զայն հնարիւք՝ ժանեաց որսային:
Են և անձնասէրք՝ որ ՚ի շահ անձին,
ոչ խղճեն զընկեր՝ բարիս օտարին.
Յորինչ վաստակին՝ զորինչ և խօսին,
զամենայն յիւրեանց՝ շրջեն ՚ի բարին:

---

## Իշխան, և Գառն:

Զի՞նչ զօրաւոր՝ քան ըզկաշառ,
որ շատ գործոց՝ լինի պատճառ:

Կաշառքն այնչափ՝ զօրաւոր է,
որ աշխարհքին՝ բանը կարէ:

մղէ̄. Գեղացի մը կերթար միշտ իշխանին, որ իր խնդիրքը կատարէ. բայց իշխանը ամեն անգամ որ կը տեսնէր զայն՝ չի տեսնելու զարնելով ուրիշ բանի հետ կըլլար. ոչ դիմացը հանել կուտար, և ոչ խօսքը մտիկ կընէր. անանկ որ յուսահատեցաւ խեղճը: Օր մը խելք ըրաւ, տարաւ հետը մէկ գէր և փափուկ գառ մը կանուխ դնաց իշխանին. երբոր դռանը մօտեցաւ՝ ձայն հանել տուաւ գառին. Ծառաները այս ձայնը լսածնուն պէս մէկէն տարին գեղացին իշխանին քով, որ խօսեցաւ հետը ինչ որ պէտք էր խօսիլ և խնդիրքը կատարեց: Անատենը գեղացին

բարձաւ գառին բայց, թէ շատ մեծապէս շնորհակալ եմ՝ քեզի սիրելի գառնուկս, որ զիս արժանի ըրիր այս բաղձալի խօսակցութեանս ։

---

[illegible]

Տես զլամբդ բաղխէ՝ զկուրծս իշխանին,
ապիկար մրմունջ՝ ձայնի կաշառին.
Որով անիրաւ՝ դատաւորք լինին,
և ոչ զօրութիւ՝ ճշմարիտ փաստին ։
Այս ձայն խանգարէ՝ զկարգ օրէնսդրին,
փոխարկէ զսուտն՝ 'ի տեղ ճշմարտին.
Փոխէ զլեզու՝ և սիրտ դատողին,
քաջ հանդիսանայ՝ յայն հանդէս դատին ։

---

## Ծ՝եր, և Մ՝անուկ ։

Թէ ոչ յորդորին՝ ազդէ խրատին,
ուղղեսցէ զայն՝ հարուած գանին,

[illegible]

մղք . Ծ՝երունի ծեր մը տեսաւ մէկ մանուկ տղայ մը, որ պարտէզը մէկր պտուղ կը գող-

նար, սկսաւ անոյշ խօսքերով խրատ տալ, որ այն չարութիւնը չընէ՛ երթայ անկէ. իսկ մանուկը ծաղր ընելով մտիկ չէր ըներ խօսքին։ Ուստի սկսաւ ծերն որ խօսքը փուճ եղաւ, սկսաւ ինքիրեն ըսել՝ թէ ես կարծէի, որ մարդուս զօրութիւնը խօսքին, և ուժին վրա կը կայանայ. աՀա խօսքս զօրութիւն մը չունեցաւ, նայինք ուժն ունի՞ զօրութիւն։ Զայս ըսելով քարեր ժողվեց կը նետէր մանկանը վրա. նոյնիս մանուկը շուտ մը ծառէն ինջաւ փախաւ։ Եւ այսպէս խօսքին չի տեսած բանը ուժը տեսաւ. մինչև զարմանալով կըսէր ծերը, թէ ինչո՞ւ պէտք եղաւ իմ փորձ խրատս՝ երբոր տկար ձեռքիս ուժը անկէ աւելի բան տեսաւ։

---

Խրատ է մանկանց, որ ծերոց խօսքը լաւ պահեն. որոնք տղայ ըլլալով տհաճ բան չեն խօսիր, լաւ հարկաւոր խրատ և խորհուրդ կուտան։ Հարցուցին թէ աշխարհքին ո՞ր բանը ծանրագին է. վճիռ եղաւ թէ խելացի և տղայ ծերուն խրատները։

ԱՀա բոյս բարուց՝ խեռ. պատանեկին,
զոր ոչինչ չարժէ՝ ձայն խոհականին.
Մ՛իակ բանութիւն՝ ուղղէ զայնպիսին,
զընկենուլ զեղեռն՝ առնել զբարին։
Արդ մի հեռեիր՝ դու ստահակին,
անլսող եղով՝ ձայնի ազդողին.
Ամբարեա՛ 'ի սիրտ՝ իբր ակունս անգին,
խրատ ծերունեաց՝ և զառակ նոցին։

# Մեղու, և Մժեղ։

*Հետևեա՛ց դու՝ այն արուեստին,*
*որ քեզ այլոց՝ յօգուտ կարգին։*

Անանկ բան մը՝ սորվիլու ուզէ՛,
որ քեզ այլոց՝ շահ մը բերէ։

*Պտմ. Զձմեռուան մէջ մժեղը* սիվրիսինեկը *գնաց մեղուներուն աղաչեց, որ իրեն տեղ և կե-րակուր տան, խոստանալով անոնց. թէ ձեր ձագերուն երաժշտութիւն կը սորվեցընեմ։ Պատասխան տուին մեղուները թէ չենք ու-զեր, որ ձագերնիս այսպիսի արուեստ սոր-վին. այլ կուզենք անանկ բան սորվիլ. որ կարենան ուրիշին կերակուր տալ, և աղքա-տութէ ազատել, չէ թէ երաժշտութիւն գիտ-նալ որ բանի մը պիտանական չէ։*

---

Օրինակ է անանց, որ միայն օգտակար բանի ետևէ ըլլալով իրենց զաւակըներուն անօգուտ բան չեն սոր-վեցըներ. որ յետոյ խեղճ չեն ըլլար, և ուրիշներու օգուտ կրնան ընել։

*Քաջ նաղաբանէ՝ իմաստ առակիս,*
*յունկն նաղելի՝ մանկանց անմեղին.*
*Ուսի՛ր վայելուչ՝ ասէ զօգտականիս,*
*Լի՛ք զանօգտակարն՝ քեզ և բոլորին։*

Թէ կըրթիս գիտել՝ զանպիտանս անձին,
ոչ լինիս գիտուն՝ այլ վարիչ հողմին.
Թէ ջանաս գիտել՝ գիտաս օգտակարին,
յայնժամ՝ քեզ խմաստք՝ բարեաց հանճարին։

## Մարդ, և Օձ։

Թող զապերախտն՝ յարկած իւր չար։
զի ոչ գիտէ՝ զիւր բարերար։

Աշխարհաւորին՝ օգնել մեծամր,
Երբ երախտիք՝ բան չի ճանչար։

մըն. Օձ մը երբեմն քարին տակը մնացեր երկար կը ճզմըվէր, տեսաւ թէ անկէ մարդ մը կանցնի, աղաչեց որ քարը վրայէն վերցընելով զինքն ազատէ, և իրեն շատ մեծ պարգևներ խոստացաւ։ Մարդն ալ վերցուց վրայէն քարն ազատեց օձը։ Իսկ օձը խօսքէն դարձաւ, ու բան մը չէր ուզէր անոր տալ, մինչև սկսան բարկանալով հակառակութիւն ընել. անտառէնը դիպուածով անկէ կապիկը կանցնէր, կանչեցին զայն իրենց մէջ դատաւոր դրին, որ այս վէճը կտրէ։ Պատասխան տըւաւ կապիկը, թէ ես լաւ դատաստան չեմ կրնար կտրել, մինչև որ չի տեսնեմ թէ ինչպէս քարին տակը սխմըված էր օձը. այս խօսքովս պարտաւորեց օձն որ կենայ, և մարդը դրաւ քարը վրան։ Դարձաւ կապիկն ըսաց թէ աջնմ այս է ուղիղ դատաստան,

ր դուն քարին տակը այսպէս մնալով սառ-
ես ։

---

Աշխարհաւորութիւնը շատ անգամ մարդը փառաւորան-
ց մէջ կ'ելնէ, և անօգնական կը կործանէ ։ Շատ
կեանքս մարդիկ աղքատ մարդկանց հանդէպ-
ն օգտակար են մը լուրջ աշխարհիս եղած են,
ր շատ են կրնային ընել ։

Այսպէս ամբարտաւանք՝ գործով խաւարին,
գլխագրեն կամաց՝ բարերար անձին.
Մերժեն զնպաստ՝ որ պարտ էր նոցին,
պատրաստեն անձանց՝ կործանում ցաւագին։
Ուսիր ճանաչել՝ զգործ բարերարին,
որ քեզ 'ի նպաստ՝ բերի խնդագին.
Զի գործ գժնդակ՝ է դժնեայ օձին,
մերժել զբարերար՝ մաշիլ առ վշտին ։

---

## Իշ ։

Աղքատք մնան՝ յաջող էլից,
այլ կեանք նոցա՝ միշտ ցաւալից ։

Աղքատն որսայ՝ հանգուիւ ջանայ,
հանգիստն ի մէջն՝ հետոա կերբայ ։

Ճշմ. Իշը ձմեռուան մէջ սաստիկ կը վշտա-
նար ցրտէն, և մինակ յարդ ուտան կուտէր,
ուրիշ բան չէր գտնէր ուտելու. և այս պատ-

Ճառաւ կըցանկար գարնան, որ ցրտէն ազատի, և խոտ գտնէ ուտելու: Գարունն ալ եկաւ պարտաւորեցաւ բրուտին կաւը տանել փուռը, որ կաւէ ամաններ շինեն. ոչ կըսէր երանի թէ ամառ գար, որ քիչ մը հանգչէի: Ամառն ալ եկաւ, պարտաւորեցաւ ցորենն և պտուղ կրել: Անաւենը ինքն իրեն ըսաւ, թէ ինծի շատ լաւ է ձմեռն որ տերս ցրտէն չի կրնար աշխատիլ, ես ալ քիչ մը կը հանգչիմ:

---

Աստուածն ու բնութիւնը պէտք է բոլոր մարդին ու-սուցանել, և իրենց բեռը համբերութեամբ տանիլ. քանզի համբերողին բեռը կը թեթևնայ, և անհամբերին բեռը կը ծանրանայ:

Աշխատք գործաւորք՝ միշտ գործել հարկին,
ոչ անգործ մնալ՝ յաջողակ բաղդին.
Քանզի վաստակիլ՝ կնքեալ է նոցին,
ժրանալ քաջիկ՝ 'ի բոլոր տարին:
Եթէ փախչիս՝ անգործ վիճակին,
ջանք քո և վաստակ՝ քեզ ծանրաբեռնին.
Զի միրք նաև հեղգ՝ տանիլ հարկադրին,
նա թեթև տանի՝ և սա ծանրագին:

## Դիոս, և Կրիայ ։

Լաւ է փոխել՝ զտունն յայլ տեղի,
քան մերձ ունիլ՝ չար դրացի ։

Լաւ է տուն տեղ՝ թողել երթալ,
քան գէշին հետ՝ [illegible] ։

ՃԷ. Երբեմն Դիոս կամեցաւ ամէն կենդանիներուն խնդիրքը կատարել. ուստի ամենքն եկան իրենց խնդիրքը յայտնեցին. Կրիայն ալ եկաւ կաղաչէր, որ տունը իր վրան դնէ. որպէս զի ուր որ երթայ՝ հետը տանի ։ Ինչու համար ըսաւ Դիոս կուզես այդ բեռը հետդ տանել ։ Անալ ըսաց թէ շատ լաւ է իմ հետս տանիլ այս բեռը, քան թէ չար դրացին որ ունենամ չի կրնամ անդէս շարժիլ, և ամեն օր անոր նեղութիւնը քաշելով կծու խօսքը լսել ։

---

Զար [illegible] ։

Անզգամ ընկեր՝ և չար դրացին,
Լքանեն զախրա՝ թողուլ տուն տեղին.
Մինչ բառնալ զտուն՝ թեթև գատեցին,
քան կալ կենակցիլ՝ ընդ անզգամին ։

Փախիր յայնպիսեաց՝ թէ քեզ մերձեսցին,
մի՛ պատասխանէր՝ բանից բանսարկուին.
Կաց և թշնամանք՝ են բերկրանք նոցին,
զրկել զմերձաւորն՝ հանճար համարին:

## Հայր, և Որդի իւր:

Մի՛տ դիր ծերոց՝ ուսի՛ր զիմաստ,
և մի՛ լինիր անմիտ գրաստ:

Թէ որ ծերոց՝ լսօղ ըլլաս,
Խելօքով գիտուն՝ մարդ մը կըլլաս:

Միտ. Մէկ խելացի ծեր մը միշտ կը խրատէր որդին, որ ժամանակը փուճ չի ծախէ, ուսման միտք դնէ ու բան սորվի, և ախտաւոր չար սովորութիւնները վար դնէ: Բարի ծերը գիշեր ցորեկ կըջանար միտքը խօթել, թէ ի՞նչպէս ազնիւ և գեղեցիկ է առաքինութիւնը, և քանի՛ զզուելի գէշ բան է մոլութիւնը: Պատասխան տըւաւ որդին ըսելով. կաղաչեմ հայրիկ շատ երկան մի՛ նեղեր. մտածէ՛ թէ ես որ այնչափ քարոզիչներէ յորդորանք ըսեր եմ առաքինի ըլլալու համար, և մտիկ չեմ ըրած, դուն որ քարոզիչ չես ի՞նչպէս պիտի մտիկ ընեմ խօսքդ:

Տղէք և ախպարներ մարդիկ խելացիներուն խրա-

ու Բանի տեղ չեն դներ. որովհետև իրենց լաւ մտ-
քերը դէմ է. Բայց օր կուգայ որ շատ կը զղջան,
և կը ճանչնան այն խրատներն որ չեն կրնար գտ-
նել։ Ով իր ծնօղքը կանարգէ՝ լոյսը կը մարի, և
աչքը կը խաւարի. կըսէ Առակը։

*Այս վայրենամիտ՝ բարք սատահակին,*
*որ զիմաստ ծերոց՝ կոխէ առ ոտին.*
*Գիտութինք խրատք՝ բարոյականին,*
*ներհակ են ախտից՝ ներհակ և վատին։*
*Թէ անուս են միտք՝ դատմունք խաւարին,*
*չեն մարդոյ դատմունք՝ այլ բան անբանին.*
*Զի այր անխրատ՝ ՚ի պատկեր չըքի,*
*մարդ անբանական՝ անբան ՚ի բանին։*

---

## *Հովիւ, և Շուն։*

*Ծանր են զրկանք՝ բարեկամին,*
*քան մեծ չարիք՝ դառն ոսոխին։*

Շատ գործէ՝ ապերախտ է,
Բարերարին՝ որ լաւ կընէ։

*միթ. Հովիւը ոչխարներն իր շանը յանձ-*
*նեց, որ հոգ տանելով նայի զանոնք. և շատ*
*առատ կըկերակրէր շունն որ լաւ հոգայ. իսկ*
*շունը ամէն օր մէյմէկ ոչխար կը պատռէր*
*կուտէր։ Երբոր իմացաւ տէրը բռնեց շու-*
*նը կապեց որ մեռցընէ, շունը ոտքըն ընկաւ*
*կաղաչէր. տէ՛ր իմ կըսէր՝ զիս մի՛ սպաններ.*

որովհետև քեզի ընտանի ծառայ եմ։ Պատասխան տըւաւ ալքը, թէ ես առաւել մահապարտ ես դուն, որ ինձի ընտանի ըլլալով հաւատացի քեզի ու ասանկ անիրաւութեն ըրիր ինձի. զայս ըսելով զարկաւ մեռցուց։

---

Աւելի արժանի են պատուհասի անոնք, որ իրենց բարեկամին չարութիւն կընեն. հաւատարիմ կըցուցնեն, և անհաւատարմութիւն լաւ ծածուկ կընեն։

Քանի՛ անիրաւ՝ գործ դաւաճանին,
զընկեր բարեկամ՝ թշնամանողին.
Սրով և կրէ՝ զարժանիս անձին,
դառն տանջանաց՝ պատուհաս կրկին։
Զինչ դժնդակ կիրք՝ սրտի նենգողին,
տանել և տալ՝ նման գազանին.
Զընկերասիրութիւն՝ մերժեալ է ինքնին,
որ միակ զարդ է՝ բուն բանականին։

## Ռուիւծ, և Կապիկ։

Ձեք ինչ խոստան՝ յերից կարգին,
որ 'ի պիտոյս՝ ինչ ոչ կարգին։

Այն բանէն՝ օգուտ կելլէ,
բանը խելքով գործածէն է։

Յ. Ռուիծը չորքոտանիներուն Թագաւոր ըլլալով՝ բոլորը գլխուն ժողվեց պատերազմ ելաւ Թշնամիներուն հետ. ուստի բանակ զօրք կազմելով՝ բոլոր կենդանիները կարգի դրաւ Թշնամիներուն դէմ որ պատերազմի։ Բայց կապիկը նայեցաւ, որ էշն ու նապաստակը այն կարգին մէջն են, հարցուց առիւծին թէ ասոնք հոս ինչու են կեցեր, ասոնք վախկոտները կրնան պատերազմ ընել։ Ան ալ պատասխան տուաւ, թէ էշը զուռնով փողահար թռմպէթաճի կըլլայ, որ մէկալնեք ծեծկռվին. իսկ նապաստակն ալ արագ փախչելովը սուրհանդակ թաթար կըլլայ, խօսք տանի կը բերէ։

---

Աշխարհքիս մէջն անպէտ բան մը չէ ստեղծած. ամէն բան պիտանի է երբոր տեղը իյնի, և խելքով գործածուի։

Չքնաղ են ծնունդք՝ մօր նախատեսին,
չքնաղ 'ի գործ ինչ՝ կարգեալք ըստ յատկին։

Ամենայն էակք՝ 'ի գործ պիտանին,
քաջ հանդիսանան՝ երբ 'ի հարկ բերին։
Մի՛ ինչ արհամարհ՝ գտանի և չնչին,
զի չիք ինչ անպէտ 'ի գործս արարչին.
Թէ ուշիմ մտօք՝ կշռես զներքին,
զմայլիս ընդ գործ՝ անցնիւր էակին։

---

## Բարեկամք ։

Քեզ բարեկամ՝ լիցի անգին,
որ ցանդ կցորդ՝ կայ քոյդ անձին։

Այն բարեկամ՝ քեզի ընտրէ,
Երբ ձեռնիւ՝ քեզ կը բանէ ։

Յառ. Մ՝էկ մեծատուն մը առատասիրտ ըլլալով միշտ իր բարեկամներուն հարկէք կընէր. որոնք գիշեր ցորեկ քովէն չէին պակսեր, մեծ պատուով կըբարեէին զինքը։ Օր մը կամեցաւ փորձել այս բարեկամները թէ արդեօք պէտք եղած ատենը կըհասնին օգնութեան իրեն հարկաւորութեանը. ուստի ձեւացուց թէ հակառակութեան ունի թշնամիներուն հետ, որ զինքը պիտի սպաննեն. աղաչեց բարեկամներուն որ այս նեղութեան մէջ իրեն օգնեն։ Տեսաւ որ երկու բարեկամէն 'ի զատ մէկը չեկաւ. անոր մինակ այս երկուսը բարեկամ պահեց իրեն, մէկալոնք բոլոր վռընտեց։

Ճշմարիտ բարեկամը և սուտ բարեկամը յառա-
ջուէ մէջ իր յայտնուիլն · Խիստ դժուար իր գտնը.
Ու ճշմարիտ բարեկամը· անոր համար մեծ ցանկալի
է։ Աղէքսանդր Թագաւորին հարցուցին թէ ուր է
գանձդ · ասաւ բարեկամներս ըսաւ։

Ընտրեալ 'ի բիւրուց՝ անգիւտ մտերիմ,
'ի կեանս և 'ի մահ՝ կայ ընդ մտերմին.
Զոր ընդ գանձս երկրի՝ 'ի կշիռ եդին,
ծանրեաց 'ի կշիռ՝ յորդ բարեկամին։
Թէ տիրես գանձուց՝ և հանքաց երկրին,
չունիս բարեկամ՝ քեզ հաւատարիմ.
Զարժէն և ոչինչ՝ այն հանք այն ոսկին,
որ գան և գնան՝ ըստ բերման բաղդին։

---

## Արտաւազր, և Բարեկամք։

Զոր ինչ կարես՝ գործել անձամբ,
բարեկամաց՝ մի՛ յանձներ զայն։

Գործէ՛ որչափ՝ յետքէտ կուգայ,
նէ ուրիշին՝ քեղ չահ չի կայ։

ԺԷ· Նաբեղաձագը, կամ տրտուտ Թռչու-
նը բուն շինէր էր ծառի մը մէջ· օր մը կե-
րակուր բերելու գնաց ձագերուն, պտուղ-
ներէց անոնց որ ինչ լաւն իրեն պատմէն։
Քիչ մ' անցաւ ծառին տէրն եկաւ նայեցաւ
որ ցորենը հասած է, ըսաց իր զաւկին՝ Թէ
տուաւօտուն կանուխ երթայ բարեկամները

կանչէ, որ գան միասին հնձեն։ Երբոր դարձաւ թռչունը՝ վրան թափեցան ձագերն աղաչեցին, որ զիրենք անկէ հանէ. վասն զի բարեկամները վաղը պիտի գան հնձեն ցորենը։ Իսկ մայրը սիրտ կուտար ձագերուն թէ մի վախնաք, եթէ արտատէրը բարեկամներուն յանձնեց՝ վաղը չի հնձըվիր ցորենը, հանգիստ կեցէք։ Արտատէրը մէկալ օրը նորէն գնաց կերակուր բերելու. ձագերը նայեցան, որ արտին տէրն եկաւ շատ սպասեց, եկող մը չեղաւ. ուստի ըսաւ որդուն թէ երթայ ազգականներուն և դրացիններուն ըսէ, որ վաղը գան կարեն։ Զայս երբ լսեցին ձագերը վախնալով մօրերնուն պատմեցին. ան ալ մի վախնաք ըսաց բան չի կայ։ Այն օրն ալ տէրն եկաւ սպասեց՝ մարդ մը չեկաւ. ապա ըսաւ որդուն թէ ահա ամէնքը մեզ խաբեցին չեկան. ուրեմն վաղը կանուխ մէյմէկ մանգաղ առնենք մենք գանք հնձենք ցորենը։ Զայս որ լսեց թռչունը առաւ ձագերը փախաւ՝ ըսելով թէ հիմա կաւատամ, որ կը հնձըվի ցորենը. վասն զի գործքն իրենց ձեռաց։

---

Առակս կը խրատէ, թէ այն բանն որ մեր ձեռքէն կու գայ, պէտք չէ ուրիշին յանձնել. վասն զի ուրիշէն շահ չի կայ, ամէն մարդ իր շահը կ՚ընայի։

Այսպէս են խնամք՝ սերտ բարեկամաց,
որ անգործ թողուն՝ զգործ մտերմաց.
Այժմեան բարեկամք՝ խնդրեն շահ անձանց,
ոչ ոք մտադրէ՝ յօգուտ ընկերաց։

Վայ որ տպատան՝ ըլնի մանրմաց,
զոր անձամբ կարէ՝ թողու օտարաց.
Օտարք վաստակին՝ միայն առ ինքեանց,
մի ակնկալցի՝ շահ յայլոց ձեռաց։

## Ապողոն, և Պատանի։

Արդ մի փորձեր՝ զայր գիտնական,
մի ծաղրեցիս՝ իբրև անբան։

[illegible]
[illegible]

ՅԺ․ Մէկ չարամիտ պատանի մը գնաց Դեղոս կղզին Ապողոն (չաստծին) կռատունը, և փորձելու համար թռչուն մը ձեռքն առաւ լաթին տակը պահեց, ու արձանին մօտեցաւ հարցուց, թէ ձեռքս որ ունիմ գիտցի՞ր շնչաւո՞ր է թէ անշունչ։ Միտքը դրաւ որ եթէ անշունչ ըսէ, թռչունը ողջ պիտի դուրս հանէ. և թէ շնչաւոր ըսէ, մէկէն խղդէ ունանկ պիտի ցոյց տայ։ Ապողոնին քուրմին կնիկը բանը հասկընալով պատասխան տըւաւ կուռքին բերնէն. Թէ ինչպէս կամիս անանկ ըրէ. կուզես ողջ հանէ, կուզես մեռած, որովհետև անոր կեանքը քու ձեռքդ է։

---

Օրինակ է [illegible]

փորձել, և երբեմն իմաստունները արհամարհել. Բայց մեկէն խոստովանիլ կըլլան ։

Այն վատ խորհուրդ՝ թերահաւատին,
փորձել ժպրհի՝ զոյժ Նախագիտին.
Անդէն խայտառակ՝ լինի 'ի բանին,
մերժի յիմաստնոց՝ զերթ իմաստակին ։
Մի՛ լինիր քննիչ՝ օրինականին,
և մի՛ անգոսնէր՝ զօծեալս արարչին.
Զի դու չես կարգեալ՝ դատաւոր նոցին,
Նա քեզ դատաւոր՝ օրինօք վերին ։

---

## Առաքինութիւն, և Ոսկի ։

Գանձ և ոսկի՝ գործի չարին,
դիմեն 'ի ձեռս՝ զրկօղ ժանտին ։

Գանձն ու ոսկին՝ չարին ձեռքն,
որ չարութեան՝ գործի ըլլան ։

ԺԴ. Առաքինութիւնը երբեմն զարմանալով կըսէր ոսկիներուն, թէ ինչու համար առաւել կուզէք չար մարդկանց ձեռքն երթալ, քան թէ բարիներուն ։ Անոնք ալ պատասխան տուին թէ մեր աշկերտները վաշխ առնելով զրկանք կընեն, սուտ տեղը կերդւըննան, և այլ շատ անօրէն բաներ ընելով կըշահին մեզ. իսկ քու աշկերտներդ ասոնց հակառակը կընեն. անոր համար կը հարկադրինք առաքինի բարեպաշտներէն փախ-

կլ և զրկող չարերուն ձեռքն երթալ։ Առա_
քինութեան ալ բաւ, թէ որովհետև աստանկ
է ես ալ աւելի կուզեմ որ իմ աշկերտներս
աղքատ ըլլան, քան թէ փարթամ։

---

Խրատ է ամենուն որ զրկողութիւն չընեն հարստա_
նալ. Շատ աղէկ է աղքատ ըլլալ, քան թէ զրկող
մեծատուն. Վասն զի աղքատութիւնը կ'անցնի, բայց
զրկողութիւնը կը մնայ յաւիտենական յաւիտենից։ Շատ
աղէկ է արդար աղքատը, քան սուտ մեծատունը.
ըստ Սողոմոն։

Ընտրէլի վիճակ՝ գնացք աղքատին,
անհոգ և անխինչ զմայլող յանձին.
Զի ոչ մաշէ կեանս՝ 'ի գիւտ դրամին,
մաշէ զամենայն՝ 'ի ստանալ բարին։
Նա կեանք անզբաղ՝ գոհար է անդին,
մի վատնէր դիւրաւ՝ 'ի գիւտ կորուսչին.
Առինչ մթերել՝ զայն գանձ փտելին,
երբ մաշէ վատնէ՝ զախրա և հոգին։

## Գլխուն, և Երկրագործ։

*Եթէ խնդրես՝ խիղճ՝ զուղղութիւն,*
*արդ նախ յանձին՝ խնդրեա՛ զնոյն։*

Թէ կուզես մէկն՝ արդար ըլլայ,
առաջ նայէ՝ քու քեզ կայ։

յն․ Երկրագործ մը մէկ հարուստի մը քով տարիներով կաշխատէր, երբոր ատենն եկաւ, որ քովէն ելլէ, ուզեց իր վարձքը։ Ան ալ պատասխան տուաւ թէ խիստ լաւ․ բայց դուն ալ կերածիդ ստակը տուր․ մի՞ ծի ինչ որ կաշխատէիր ես քեզի կրկինը կը կերցընէի, որ լաւ գատիս։ Հատ մինձարանութեն ընելէն ետև դատաւորին առջին ելան․ երկրագործը կըսէր, թէ իրաւունք է որ մէջտեղ եղած տեղն ուտէ, և իր վարձքէն ալ չի զրկուի․ իսկ հարուստը կաշառքին ուժով դատաւորին իր կողմն ըրաւ, որ այսպէս վճիռ կտրեց․ թէ որ կերածը աշխատանքէն քիչ է, թող պարտաւորի հարուստը հատուցանելու․ իսկ թէ շատ է, ինչպէս կը վկայէր հարուստը, թող երկրագործը աշխատելով հատուցանէ։ Զայս որ լսեց խեղճը գլխուն զարնելով կըսէր, թէ արդարութեն չի կայ, խիղճմտանքը մեռաւ։ Այսոր տանիք լացը տեսաւ գլխուն մարդ մը, մխթարելով ըսաց․ ինչու կը կանչես լալով․

ի՛ղծմանքը չէ մեռած մի լար. հապա բոլորովին համբարձեր է. վա՜ զի թէ որ մեռած ըլլար, գէթ մէկ ոսկորը կը մնար:

---

Արդարութիւնը և Իրաւը մեզ դժուարագին է, ճանաչել հիմա. թէպէտ ամէնքը կը ճանչնան զայն ուրիշին քով, և իրենց քով ամէնքն ալ չեն ճանչնար:

Քանի՜ պանծալի՝ բան գիտնականին,
համարի զուղիղն՝ յանուրեք վայրին.
Թէ գոյր ուղղութիւն՝ լինէր 'ի նմին,
որ յայլս որոնէ՝ յօտարաց անձին:
Զի՜ վայես յիմար՝ զուղիղն ընդ խոտին,
որք 'ի վաղ դարուց՝ անաւղի շրջին.
Նա զի չեն հեռի՝ թէ կոչես յանձին,
անխիղճք միայն զայն՝ յինքեանց մերժեցին:

---

## Ծեր հայր, և Որդի:

Վա՜յ որ չար ինչ՝ խորհի ծնողին,
որդիքն զնոյն՝ առնեն նմին:

Ինչ որ ընես՝ ծնողիդ դէմ,
քեզ զաւակդ՝ կընէ քեզ դէմ:

ԺԷ. Մէկ անզգամ որդի մը իր ծեր հայրը անէն դուրս կընէ. անաւ կերթայ հիւանդանոցը կըպառկի, երեսի վրա կըմնայ խեղ-

ճութեն ։ Օր մը որդին անկէ կանչնէր կան-չէց ըսաց հայրը, թէ կաղաչեմ որդի ինձի ջուխտ մը կապերտ գնէ խրկէ իմ բանէրէս, որ վաստակովս գնէր եմ։ Որդին ալ մեղքը-նալով տըւաւ իր որդուն երկու կապերտ՝ խրկեց հօրը։ Իսկ ծերը մէկն առաւ, մէ-կալը դրաւ որդուն խրկեց. և ըսաւ թո-ռանը թէ կուզեմ որ հայրդ լաւ պահէ այս մէկ կապերտը իրեն համար. վս զի երբոր ինքն ալ հիւանդանոցը գայ ըլնի՝ ինչպէս ես եմ եղեր, պէտք կըլլայ իրեն ։

---

Զաւակ մը ինչ որ ընէ իր ծնողացը, այն կը գտնէ, թէ հարկի ըլլայ, և թէ չար. վասն այն զա-ւակին որ չար ընելով ծնողաց սիրտը կը ցաւցնէ, ան չարաչար կը պատուհասուի։ Աստուած քինախնդիր կըլնէր, թէ պատուէրքը ծնողներ, որ յէր կենդանին պատժում էն, իսկ վարդապետը՝ որ հարկի կենաց պատժում է ։

Ո՞վ զխմբդ անդութ՝ սիրտ ժանտ զաւակին,
դառնանայ ընդդէմ՝ խորոյ ծնողին.
Անտուն անտեղի՝ առնէ ծերունին,
որ ինքեան զդուռ՝ բաշխեաց զ՞տուն տեղին։
Յակայն անյեղլի՝ օրէնք երկնային,
անձին վերբերեն՝ զոր գործեաց նմին.
Թէ պատուասիրեաց՝ հանդիպի պատուին,
և թէ անարգեաց՝ կրկնի չորեքկին ։

# Ծեր, և Մահ:

Զմինչ սոսկալի կիրք բռնական,
քան զապաժոյժ երկիւղ մահուան:

[illegible]

ՃԷ. Օր մը մէկ ծեր մը փայտ կտրելու համար լեռը կերթայ, և կտրած փայտերը կապէ բեռ կընէ, որ երբ բարձըված կըբերէր քաղաքը, ճամբան երկայն ըլլալով խիստ կը հոգնի. մինչև ալ չի դիմանար բեռը վար կը ձգէ, ու կըսկըսի մահը կանչել, որ իրեն հասնի: Նայխ յանկարծ մահն երևցաւ իրեն, և հարցուց թէ զիս ինչու համար կանչեցիր: Պատասխանեց ծերը դողալով. անոր համար կանչեցի, որ գաս բեռս վրաս բարձնես:

---

[illegible]

Ո՞չ դժոխերես՝ տեսիլ օրհասին,
բուռն բռնաւոր՝ ղզայականին.
Թշնամի կենաց՝ հատանօղ թելին,
ատելի ծերոց՝ մինչ 'ի շունչ վերջին:
Մի՛ գոչեր զմահ՝ 'ի չար արկածին,
մի՛ 'ի քէն ելցէ՝ յիշատակ նորին.
Զի մահ գիտացեալ՝ չէ մահ այլ բաժին,
մահ ոչ գիտացեալ՝ մահ է չարածին:

## Մահ, և Ծեր.

Բուռն և ազդու՝ է ձայն մահուան,
որ ցանգ հնչէ՝ 'ի լուր մարդկան:

Մահն անդադար՝ մեզ յայն խօսպայ,
Ըննք արթըննար՝ թէ ի՞նչ յայն խայ:

ԺԵ. Երբեմն մահն եկաւ յանկարծ ծե-
րու մը վրայ հոգին առնելու. ծերը կա-
ղաղակէր ու կաղաչէր, որ քիչ մը ժամանակ
տայ իրեն կտակ ընելու համար: Պատաս-
խանեց մահը թէ չեմ կրնար քեզի ժամանակ
տալ. որովհետև շատ անգամ քեզի իմացու-
ցի, դուն ամէնևին կտակդ միտքդ չի բերիր:
Ե՞րբ ինծի իմացուցիր ըսաւ ծերը: Մահն
ալ ըսաւ թէ երբոր ընկերներուդ հոգին ա-
ռի, ինչու միտքդ չի բերիր թէ որ մը ինծի
ալ կուգայ. շատ անգամ մանուկներուն և
կորիճներուն հոգին առի՝ տեսար. շատ հեղ
լսեցիր. որ դրացիներդ վերուցի տարի.
կը տեսնէիր որ ուժդ պակսեր է, մարմինդ
մաշեր գացեր է, և աշխարհք քեզի համար

չմնացեր է , դուն աշխարհքին փակեր էիր . եւ առանց բաներով գիրքեր ցորեկ քեզի խմացած կուսայի , դուն ամենեւին չէիր պատրաստվէր ։ Քեզի պէտք չէր որ անատենը մանգ մտածելով կարգաւորէիր բանդ , ու այս կէտիս չի ձգէիր . ուրեմն եւ եկն պատասխան տուր գործքերուդ ։

---

[illegible]

Զարթիր 'ի քնոյ՝ մարդ եղծանելի ,
ահա ազդարարն՝ 'ի դուռըն մերձի .
Զայնէ հանապազ՝ հրաժարիլ ասէ ,
գնալ յանվախճան՝ և յանդարձ ուղի ։
Արթուն կաց ընդ ձայն՝ զքեզ կոչողի ,
զի մի անպատրաստ՝ հասցէ գիշերի .
Թէ լսես զձայնն՝ յընկեր գրոցի ,
մերձ ծանիր զնա՝ 'ի քէն ոչ հեռի ։

# ՑԱՆԿ
## ՎԱՐՈՒՑ ԵԶՈՎԲՈՍԻ.

Գլ. Ա. Հանգամանք Եզովբոսի. 3
Գլ. Բ. Զրպարտութեն Եզովբոսի. 8
Գլ. Գ. Հիւրասիրութիւն Եզովբոսի. 11
Գլ. Դ. Վաճառումն Եզովբոսի. 13
Գլ. Ե. Ճարտարմտութեն Եզովբոսի. 17
Գլ. Զ. Երկրորդ վաճառումն Եզովբոսի. 19
Գլ. Է. Եզովբոս երթայ 'ի տուն. 25
Գլ. Ը. Պատասխանատուութեն Եզովբոսի. 28
Գլ. Թ. Խորամանկութիւն Եզովբոսի. 31
Գլ. Ժ. Վրէժխնդրութիւն Եզովբոսի. 34
Դլ. ԺԱ. Եզովբոս դարձուցանէ ըզտիկինն 'ի տուն. 38
Գլ. ԺԲ. Սպաս Եզովբոսի. 39
Գլ. ԺԳ. Երկրորդ սպաս Եզովբոսի. 41
Գլ. ԺԴ. Հնարագիտութիւն Եզովբոսի. 42

| | | |
|---|---|---|
| ԳԼ. ԺԵ. | Խօսք Եզովբոսի ընդ Դա-տաւորին. | 46 |
| ԳԼ. ԺԶ. | Հանճար Եզովբոսի. | 47 |
| ԳԼ. ԺԷ. | Ապերախտութիւն Քսանթոսի ընդդէմ Եզովբոսի. | 51 |
| ԳԼ. ԺԸ. | Փորձէ Եզովբոս զգիտնա-կանս. | 52 |
| ԳԼ. ԺԹ. | Հնագիտութիւն Եզովբոսի. | 54 |
| ԳԼ. Ի. | Ազատութիւն Եզովբոսի. | 57 |
| ԳԼ. ԻԱ. | Եզովբոս հաշտեցուցանէ զթագաւորսն. | 63 |
| ԳԼ. ԻԲ. | Եզովբոս գրէ զառակս իւր. | 65 |
| ԳԼ. ԻԳ. | Եզովբոս որդեգրէ ինքեան զԵնոս. | 67 |
| ԳԼ. ԻԴ. | Անյիշաչարութիւն և խրատք Եզովբոսի. | 70 |
| ԳԼ. ԻԵ. | Եզովբոս կրթէ զձագս ար-ծուոյ. | 72 |
| ԳԼ. ԻԶ. | Իմաստութիւն Եզովբոսի. | 76 |
| ԳԼ. ԻԷ. | Եզովբոս գնայ 'ի Յոյնս, և 'ի Դելփոս. | 80 |
| ԳԼ. ԻԸ. | Մահ Եզովբոսի. | 83 |

# ՑԱՆԿ ԱՌԱԿԱՑ

Ըստ կարգի Այբուբենից ։


| | Երես |
|---|---|
| Ագահ բաժանեգէնք և Անցաւոր · | 295 |
| Ագահ և Նախանձող · | 373 |
| Ագահ և Որդի իւր · | 467 |
| Ագահ հիւանդ · | 473 |
| Ագահ գտապան ելլէ · | 488 |
| Ագռաւ գառն և Արծիւ · | 105 |
| Ագռաւ և Աղուէս · | 107 |
| Ագռաւ և Ոչխար · | 174 |
| Ագռաւ և Արծիւ · | 191 |
| Ագռաւ ծարաւի · | 242 |
| Ագռաւ և Թռչունք · | 336 |
| Ազգական և Փարթամ · | 444 |
| Ածխագործ [illegible] և Ներկարար · | 254 |
| Աղախինն հաւայքէ և Պառաւ · | 305 |
| Աղաւնի [illegible] և Ուրուր · | 119 |
| Աղաւնի և Բազէ · | 141 |
| Աղաւնի և Մրջիւն · | 208 |
| Աղաւնի և Անօթ · | 433 |
| Աղբիւր և Գետ · | 351 |
| Աղուէս [illegible] և Ագռաւ · | 107 |
| Աղուէս և Արծիւ · | 109 |
| Աղուէս և Արագիլ · | 130 |
| Աղուէս և Կապիկ · | 137 |

| | |
|---|---|
| Աղուէս և Գայլ · | 143 |
| Աղուէս և Խաղող · | 147 |
| Աղուէս և Կապիկ · | 152 |
| Աղուէս և Աքիս · | 157 |
| Աղուէս և Աքաղաղ · | 183 |
| Աղուէս և ատու · | 185 |
| Աղուէս, Գայլ և Կապիկ · | 197 |
| Աղուէս և Մորենի · | 198 |
| Աղուէս և Առիւծ · | 206 |
| Աղուէս և Գորտ · | 219 |
| Աղուէս և Ընձառիւծ · | 251 |
| Աղուէս և Աքաղաղ · | 263 |
| Աղուէս և Կոկորդիլոս · | 272 |
| Աղուէս, Առիւծ և Արջ · | 279 |
| Աղուէս և Կինճ · | 298 |
| Աղուէս, Առիւծ և Էշ · | 303 |
| Աղուէս և Ձետ-խուր · | 318 |
| Աղուէս և Երկրագործ · | 333 |
| Աղուէս և Նոխազ · | 385 |
| Աղուէս և Գայլ · | 389 |
| Աղուէս և Առիւծ հիւանդ · | 391 |
| Աղուէս և Շուն · | 439 |
| Աղուէս և Աքաղաղ · | 480 |
| Աղուէս և Առիւծ · | 483 |
| Աղուէս և Շուն · | 495 |
| Աղքատ և Գող · | 364 |
| Այգեգործ դաշտէ և Որդիք իւր · | 320 |
| Այգի և Եղջերու · | 332 |
| Այծ քէնի և Առիւծ · | 241 |
| Այծ և Հովիւ · | 353 |
| Այր անհեր · | 268 |
| Այր և Կին · | 424 |
| Անգղ ———, Առիւծ և Կինճ · | 346 |


33

Անդամք և Որովայն · 151
Անտառ ծառոյն և փայտահատ · 146
Անցաւոր և Ագահ · 295
Անօթ երկաթի և Անօթ խեցեղէն,
կամ, պղնձակ · 226
Անօթ և Աղաւնի · 433
Ապողոն, Դիոս և Մոմոս · 315
Ապողոն և Պատանի · 511
Առաքինութիւն և Ոսկի · 512
Առիւծ արքայն և Կենդանիք · 98
Առիւծ ծեր · 111
Առիւծ և Մուկն · 114
Առիւծ, Էշ և Աքաղաղ · 163
Առիւծ և Ուլ · 167
Առիւծ և Մարդ · 169
Առիւծ և Աղուէս · 206
Առիւծ և Այծ · 241
Առիւծ, Արջ և Աղուէս · 279
Առիւծ և Գորտ · 287
Առիւծ, Աղուէս և Էշ · 303
Առիւծ և Որսորդք · 345
Առիւծ, Կինճ և Անգղ · 346
Առիւծ և Որսորդ · 370
Առիւծ և Ճանճ · 381
Առիւծ հիւանդ և Աղուէս · 391
Առիւծ և Ցուլք · 394
Առիւծ և Գայլ · 410
Առիւծ և Ցուլ · 469
Առիւծ և Աղուէս · 483
Առիւծ և Կապիկ · 507
Առնէտք և Կաղնի · 449
Աստղաբաշխ · 280
Աստղաբաշխ մօտ փոսէ · 326

| | |
|---|---|
| Բազէ և Աքաղաղ · | 29 |
| Բազէք · | 358 |
| Բազէ, Արծիւ և Ցին · | 405 |
| Բաղդ և Երիտասարդ · | 324 |
| Բաղդ և Երկրագործ · | 416 |
| Բանաստեղծ և Էշ · | 492 |
| Բարեկամք · | 508 |
| Բարեկամք և Արտավար · | 509 |
| Բզէզ պէտճէլ և Արծիւ · | 238 |
| Բէչկ մէկոյ գօնփօռ և Որսորդք · | 292 |
| Բժիշկ երկու և Հիւանդ · | 252 |
| Բժիշկ և Մեռելաթաղ · | 282 |
| Բժիշկ կարկատիչ էօյէճէ · | 299 |
| Բժիշկ և Պառաւ · | 460 |
| Բժիշկ և Հիւանդ · | 465 |
| Բու պայղուշ և Թռչունք · | 189 |
| Բու և Չղջիկ · | 413 |
| Գայլ գօրշ և Գառն · | 92 |
| Գայլ և Կռունկն · | 99 |
| Գայլ և էգ խոզ · | 121 |
| Գայլ և Ուլ · | 126 |
| Գայլ և Կխարճան · | 132 |
| Գայլ և Աղուէս · | 143 |
| Գայլք և Ոչխարք · | 144 |
| Գայլ և Շուն · | 148 |
| Գայլ և Փայտահատ · | 160 |
| Գայլ և Ջորի · | 177 |
| Գայլ և Ոզնի · | 182 |
| Գայլ և Շունք · | 190 |
| Գայլ, Աղուէս և Կապիկ · | 197 |
| Գայլ և Վագր · | 233 |
| Գայլ և Շուն վախտ ղայիֆ · | 258 |

Արագիլ մէտէ և Աղուէս · 130
Արագիլ և Հողագործ · 308
Արծիւ գործով և Ագռաւ · 105
Արծիւ և Աղուէս · 109
Արծիւ և Ագռաւ · 191
Արծիւ և Կրիայ · 215
Արծիւ և Բզէզ · 238
Արծիւ և Նապաստակ · 248
Արծիւ նետահար · 343
Արծիւ և Կաչաղակ · 361
Արծիւ, Բազէ և Ցին · 405
Արծիւ և Սիրամարգ · 476
Արջ այլ. Առիւծ և Աղուէս · 279
Արջ և Մեղուք · 402
Արտավար ընկենի և Հաւ · 194
Արտավար և Կարապ · 338
Արտավար և Բարեկամք · 509
Արտուտ ձագովք գիւղին և Հաւտորս · 464
Աւազակ հեղձեալ · 261
Աւանակ և Գիտոս · 285
Աքաղաղ խօսող և Մարգարիտ · 91
Աքաղաղ, Առիւծ և Էշ · 163
Աքաղաղ և Կաքաւ · 171
Աքաղաղ և Աղուէս · 183
Աքաղաղ և Հնդկահաւ · 186
Աքաղաղ և Կատու · 193
Աքաղաղ և Աղուէս · 263
Աքաղաղ և Բազէ · 291
Աքաղաղ և Գողք · 426
Աքաղաղ և Աղուէս · 480
Աքիս կեւինձին և Աղուէս · 157

Բազէ տանին և Աղաւնի · 141

Գայլ փոքր և Հովիւ · 312
Գայլք և Ոչխարք · 349
Գայլ և Ոչխար · 380
Գայլ և Աղուէս · 389
Գայլ և Առիւծ · 410
Գայլ և Ուլ · 425
Գայլ գառնազգեստ · 452
Գայլ և Էշ · 481
Գայլ ծերացեալ · 484
Գայլ և Գառն · 485
Գանձ հաւնէ և Մարդ · 365
Գառն փոքրիկ և Գայլ · 92
Գառն և Գայլ · 485
Գառն և Շինական · 496
Գաւազան փէյէնէյ և Շուն · 221
Գեղձուկ և Խոզ · 472
Գետ և Աղբիւր · 351
Գինեմոլ այրհոն և Կին իւր · 412
Գիշերահաւ և Կուղ · 428
Գիտուն և Ռամիկ · 371
Գիտուն և Երկրագործ · 514
Գող և Շուն · 120
Գող որդի և Մայրն · 209
Գող և Պատանի · 239
Գող և Աղքատ · 364
Գողք և Աւազակք · 426
Գորտ փոքրագոյն և Մուկն · 94
Գորտք Թագաւոր խնդրեն · 117
Գորտ և Կով · 139
Գորտ և Աղուէս · 219
Գորտք · 276
Գորտ և Առիւծ · 287
Գորտք և Նապաստակք · 406


33

Գորտք երկու ․ 419
Գորտք և Էշ ․ 430
Գորտք և կրիայ ․ 448

Դդմենի գոռոզ և Ձիթենի ․ 453
Դիոս և Ուղտ ․ 222
Դիոս և Կենդանիք ․ 230
Դիոս և Աւանակ ․ 285
Դիոս, Ապողոն և Մոմոս ․ 315
Դիոս և Մարդիկ ․ 328
Դիոս և Կրիայ ․ 330
Դիոս և Կապիկ ․ 457
Դիոս և Կրիայ 503
Դելֆին ծօնուղ և Դոն ․ 281
Դելֆին և Կապիկ ․ 311
Դոն ճալըմուփ և Դելֆին ․ 281

Եզն եօթնուղ և Երկրագործ ․ 247
Եզինք և Լուծ ․ 262
Եզն և Կով ․ 317
Եզինք և Եղջերու ․ 400
Եզնավար և Եզինք ․ 487
Եղեւին լամ և Մորենի ․ 235
Եղէգն գաձեղ և Կաղնի ․ 176
Եղն կէյէ նկատէ զկնքն 'ի ջրի ․ 155
Եղն և ձագ իւր ․ 297
Եղջերու կէյէ և Ոչխար ․ 95
Եղջերու և Այգի ․ 332
Եղջերու և Եզինք ․ 400
Եղջերու ․ 408
Եղջերուկ պատշպայ գուռըն և Հաւուրս ․ 447
Երիտասարդ և Բաղդ ․ 324
Երկրագործ ընծօձի և Օձ ․ 101

529


Երկրագործ և Օձ։ 128
Երկրագործ և Եղն։ 247
Երկրագործ և Շունք իւր։ 302
Երկրագործ և Աղուէս։ 333
Երկրագործ և Բաղդ։ 416
Երկրագործ և Կռունկն։ 514

Զինաւոր և Ձի։ 451

Էշ և Խոզ։ 102
Էշ և փոքրիկ Շուն։ 112
Էշ և Ձի։ 153
Էշ, Առիւծ և Աքաղաղ։ 163
Էշ հիւանդ։ 164
Էշ և Տէր իւր։ 218
Էշ և Երկու մարդիկ։ 257
Էշ, Առիւծ և Աղուէս։ 303
Էշ և Ձի։ 306
Էշ բեռնաբարձ։ 341
Էշ կռաբարձ։ 348
Էշ և Ձի։ 399
Էշ և Ցիռ։ 429
Էշ և Գորտք։ 430
Էշ և Շուն։ 477
Էշ և Շուն։ 479
Էշ և Գայլ։ 481
Էշ և Վարազ։ 491
Էշ և Բանաստեղծ։ 492
Էշ։ 501

Ընձառիւծ գաճլան և Աղուէս։ 251
Ընկերք երկու։ 224

Թշնամիք երկու · 277
Թութակ փափուկ գողոյն և Կապիկ · 195
Թութակ · 475
Թռչնորս գոռշապող և Օձ · 283
Թռչունք և Ծիծառն · 115
Թռչունք և Չղջիկան · 140
Թռչունք և Բու · 189
Թռչունք և Ագռաւ · 336
Թռչունք և Ուրուր · 387

Իշամեղուք էշէք աքլոր և Կաքաւք · 463

Լալականք · 434
Լեառն յերկունս · 397
Լու ճիճէ և Մարդ · 170
Լուծ պօյաւնպաւրաց և Եզինք · 262
Լուսինեակ դիւրդիւ և Ուրուր · 205

Խաղախորդ Բադագ և Ոստիկան · 356
Խաղող խաղէոմ և Աղուէս · 147
Խաչափառ լողանօղ և Զագ խոր · 216
Խարտոց փէօրճիւ և Օձ · 156
Խարտոց և Կատու · 415
Խեցգետին ըսպագօղ և Օձ · 409
Խոզ փօնաւղ և Էշ · 102
Խոզ էգ և Գայլ · 121
Խոզ և Գեղջուկ · 472
Խոզ և Էշ · 479
Խոհարար աչճը և Շուն · 403
Խոյ գօչ և Ցուլ · 493

Ծաղիկք և Վարդ · 265

Ծառայ և Հոռն. 454
Ծեր ամուսնացեալ. 368
Ծեր և Մանուկ. 497
Ծեր հայր և Որդի. 515
Ծեր և Մահ. 517
Ծեր և Մահ. 518
Ծիծառն գըռուանիծ և Թռչունք. 115
Ծիծառն և Պատանի. 325
Ծիծառն և Հաւ. 431
Ծիծառն և Սարդ. 459
Ծով և Վաճառական. 289
Ծով և Ձկնկուլ. 422

Կաղնի ձեծ և Եղեգն. 176
Կաղնի և Առնէտք. 449
Կաչաղակ ազգազան և Սիրամարգ. 133
Կաչաղակ և Սիրամարգ. 309
Կաչաղակ և Արծիւ. 361
Կապիկ ճայճառն և Աղուէս. 137
Կապիկ և Աղուէս. 152
Կապիկ և Թութակ. 195
Կապիկ, Գայլ և Աղուէս. 197
Կապիկ և Ձագ իւր. 260
Կապիկ և Դելֆին. 311
Կապիկ և Կատու. 392
Կապիկ և Դիոս. 457
Կապիկ և Առիւծ. 507
Կաքաւ. արջառ և Ճանճ. 134
Կատու ծէփէ և Մկունք. 166
Կատու և Աղուէս. 185
Կատու և Աքաղաղ. 193
Կատու և Հաւ. 339
Կատու և Կապիկ. 392

Կատու և Խարտոց · 415
Կարապ բոյ գունով և Կռունկն · 266
Կարապ և Արտավար · 338
Կարիճ ագուէզ և Մանուկ · 468
Կաքաւ [illegible] և Աքաղաղ · 171
Կաքաւ և Նապաստակ · 367
Կաքաւք և Իշամեղուք · 463
Կենդանիք և Առիւծ · 98
Կենդանիք և Դիոս · 230
Կին և Ոչխար · 352
Կին և Մահ · 363
Կանայք երկու և Մարդ · 201
Կին և Այր · 424
Կինճ էադան փոխանակ և Աղուէս · 298
Կինճ, Առիւծ և Անգղ · 346
Կխտարձան բաղ գոգա և Գայլ · 132
Կոկորդիլոս և Աղուէս · 272
Կով և Գորտ · 139
Կով և Ճուռն · 188
Կով և Եղն · 317
Կուզ ամառ և Գիշերահաւ · 428
Կուռք [illegible] և Մարդ · 199
Կռունկն բոստան և Գայլ · 99
Կռունկն և Սիրամարգ · 232
Կռունկն և Կարապ · 266
Կրիայ [illegible] և Նապաստակ · 180
Կրիայ և Արծիւ · 215
Կրիայ և Դիոս · 330
Կրիայ և Գորտք · 448
Կրիայ և Դիոս · 503

Հայր և Որդիք · 202
Հայր և Որդի իւր · 504

Հաւ և Արտաւար · 194
Հաւ պարարտ · 329
Հաւ և Կատու · 339
Հաւ և Ծիծառն · 431
Հաւ և Ձագ իւր · 436
Հաւորս և Սարեակ · 162
Հաւորս և Եղջերուկ · 447
Հաւորս և Մանուկ · 456
Հաւորս և Արտուտ · 464
Հերմէս և Փայտահատ · 212
Հերմէս և Ուղեւոր · 462
Հերքիւլէս և Շինական · 470
Հիւանդ և երկու Բժիշկ · 255
Հիւանդ և Բժիշկ · 465
Հնդիկ ագռաւ · 288
Հնդկահաւ հինք թռչունք և Աքաղաղ · 186
Հողագործ և Արագիլ · 308
Հողամաղ գորտապաթագ, Մորենի և Չղ-
ջիկան · 255
Հովիւ ստախօս · 204
Հովիւ և Շուն · 293
Հովիւ և Գայլ փոքր · 312
Հովիւ և Որսորդ · 340
Հովիւ և Այծ · 353
Հովիւ և Ոչխար · 360
Հովիւ և Ոչխարք · 435
Հովիւ և Շուն · 505

Ձի ոք և Էշ · 153
Ձի և Էշ · 306
Ձի և Ձիադարման · 335
Ձի և Մարդ · 388
Ձի և Էշ · 399

Ձի և Զինուոր· 451
Ձիթենին փշոյթին ողոմը և Դդմենի· 453
Ձկնկուլ գործողութեան և Ծով· 422
Ձկնորս պաշտօնը և Ձուկն փոքրիկ· 237
Ձկնորս և Ձկունք· 271
Ձկնորսք· 275
Ձկնորս և Ձկունք· 378
Ձուկն փոքրիկ և Ձկնորս· 237
Ձկունք և Ձկնորս· 271
Ձկունք և Ձկնորս· 378

Ճանճ ընկէր և Կառք· 134
Ճանճ և Մրջիւն· 135
Ճանճ· 211
Ճանճ և Առիւծ· 381
Ճպուռն ծլամծլոյ ջերմեջի և Մրջիւն· 173

Մահ և Կին· 363
Մահ և Ծեր· 517
Մահ և Ծեր· 518
Մայր և Գող որդին· 209
Մայր և Տղայ լացող· 214
Մանուկ և Հաւորս· 456
Մանուկ և Կարիճ· 468
Մանուկ և Ծեր· 497
Մարգարիտ ընձի և Աքաղաղ· 90
Մարդ և Առիւծ· 169
Մարդ և Լու· 170
Մարդ և Կուռք· 199
Մարդ և Երկու կանայք· 201
Մարդ երկու և Էշ· 257
Մարդիկ և Գիւս· 328
Մարդ և Գանձ· 365

Մարդ որ ընծէ զցուրտ և զջերմ· 374
Մարդ և Ձի· 388
Մարդ և Օձ· 500
Մեղուք տուն և Արջ· 402
Մեղու և Մժեղ· 499
Մեղրագործ դուռն և Մեղու· 420
Մեռելաթաղ և Բժիշկ· 282
Մժեղ որ ընթանէր և Մեղու· 499
Մոմոս, Դիոս և Ապողոն· 315
Մորենի շուշ և Աղուէս· 198
Մորենի և Եղևին· 235
Մորենի, Հողամաղ և Ձգջիկան· 255
Մուկն և Գորտ· 94
Մուկն ընտանի և Մուկն դաշտային· 103
Մուկն և Առիւծ· 114
Մկունք և Կատու· 166
Մկունք խորհրդակցին· 227
Մուկն և Ցուլ· 244
Մուկն փոքրիկ և Մայրն· 245
Մուկն և Ջաղ խուր· 383
Մուկն և Պարտիզպան· 438
Մուկն և Շինական· 489
Մրջիւն գառընծա և Ճանճ· 135
Մրջիւն և Ճպուռն· 173
Մրջիւն և Աղաւնի· 208

Նախանձող և Ագահ· 373
Նապաստակք Բաշան· 124
Նապաստակ և Կրիայ· 180
Նապաստակ և Արծիւ· 248
Նապաստակ և Կաքաւ· 367
Նապաստակք և Գորտ· 406
Նաւապետ ըռէին· 354

32

Նաւորդք Լեհաց և Նաւապետն. 376
Ներկարար պօյաճի և Ածխագործ. 254
Նոխազ էրքէք քէչի և Ցուլ. 229
Նոխազ և Աղուէս. 385

Շինական քէօյլի և Հերքիւլէս. 470
Շինական և Մուկն. 489
Շինական և Գառն. 496
Շուն և Սատուեր. 96
Շուն փոքրիկ և Էշ. 112
Շուն և Գող. 120
Շուն և Որսորդ. 123
Շուն և Ոչխար. 127
Շուն և Գայլ. 148
Շուն և Կով. 188
Շունք և Գայլ. 190
Շուն և Գաւազան. 221
Շուն վախո և Գայլ. 258
Շուն և Ջրշուն. 267
Շուն և Հովիւ. 293
Շունք և Երկրագործ. 302
Շունք երկու. 321
Շուն պայտառի. 357
Շունք երկու պայթին. 384
Շուն և Խոհարար. 403
Շունք երկու կրթեալք. 421
Շուն և Աղուէս. 439
Շուն և Տէրն. 440
Շուն և Էշ. 441
Շուն և Ոչխար. 445
Շուն և Ծառայ. 454
Շուն և Էշ. 477
Շուն և Աղուէս. 495


32

Շուն և Հովիւ. 505

Ոզնի փիփերի և Գայլ. 182
Ոզնի և Օձ. 395
Ոչխար և Եղջերու. 95
Ոչխար և Շուն. 127
Ոչխարք և Գայլք. 144
Ոչխար և Ագռաւ. 174
Ոչխարք և Գայլք. 349
Ոչխար և Կին. 352
Ոչխար և Հովիւ. 360
Ոչխար և Գայլ. 380
Ոչխարք և Հովիւ. 435
Ոչխար և Շուն. 445
Ոսկի և Առաքինութիւն. 512
Ոստիկան պաշտէր և Խաղախորդ. 356
Որդեք և Հայր. 202
Որդի և Հայր իւր. 504
Որդի և Ծեր հայր. 515
Որովայն գառըն և Անդամք. 151
Որսորդ աղճի և Շուն. 123
Որսորդք և Բեշկ մեկոյ. 292
Որսորդ և Հովիւ. 340
Որսորդք և Առիւծ. 345
Որսորդ և Առիւծ. 370
Ուլ փէջի նախշրաւուն և Գայլ. 126
Ուլ և Առիւծ. 167
Ուլ և Գայլ. 425
Ուխտ հիւանդին. 274
Ուղտերք խոլճու և Սօսի. 270
Ուղտերք երկու. 417
Ուղտեր և Հերմէս. 462
Ուղտ փէջի և Պիոս. 222

Ուրուր լայլագ և Աղաւնի ・ 119
Ուրուր և Լուսնենեակ ・ 205
Ուրուր ・ 344
Ուրուր և Թռչունք ・ 387
Ուրուր և Մայրն ・ 398

Չար դրացի ・ 377
Չղջիկան չէծէ գուշոյ և Թռչունք ・ 140
Չղջիկան, Մորենի և Հողամաղ ・ 255
Չղջիկ և Բու ・ 413

Պառաւ և Աղախին ・ 305
Պառաւ և Բժիշկ ・ 460
Պատանի չէնծ և Գող ・ 239
Պատանի և Ծիծառն ・ 325
Պատանի և Ապողոն ・ 511
Պարտիզպան պահծըղեան և Մուկն ・ 438

Ջորի գաբըլու և Գայլ ・ 177
Ջորի ・ 323
Ջրշուն գունդպաւող և Շուն ・ 267

Ռամիկ գաղա տփան և Գխտոռն ・ 371

Սագ գող և Տէրն ・ 250
Սարդ էօրճանձէք և Ծիծառն ・ 459
Սարեակ գարաբաւագ և Հաւուրս ・ 162
Սարեակ և Տատրակ ・ 443
Սերամարգ բասսող գունչ և Կաչաղակ ・ 133


24

| | |
|---|---|
| Սիրամարգ և Սոխակ · | 159 |
| Սիրամարգ և Կռունկն · | 232 |
| Սիրամարգ և Կաչաղակ · | 309 |
| Սիրամարգ և Արծիւ · | 476 |
| Սոխակ դիւղդիւղ և Սիրամարգ · | 159 |
| Սատուեր ձեօլէ և Շուն · | 96 |
| Սօսի ուռենի և Ուղեւորք · | 270 |
| | |
| Վագր ծիլէնի և Գայլ · | 233 |
| Վաճառական և Ծով · | 289 |
| Վարազ էշկան փօնտուզի և Էշ · | 491 |
| Վարդ և Ծաղիկք · | 265 |
| Վիշապք աժդէր · | 179 |
| | |
| Տատրակ գումրու և Սարեակ · | 443 |
| Տղայ լացող և Մայրն · | 214 |
| | |
| Ցին շայլահ, Արծիւ և Բազէ · | 405 |
| Ցիռ էշկան էշէկի և Էշ · | 429 |
| Ցուլ պուղա և Նոխազ · | 229 |
| Ցուլ և Մուկն · | 244 |
| Ցուլք և Առիւծ · | 394 |
| Ցուլ և Առիւծ · | 469 |
| Ցուլ և Խոյ · | 493 |
| | |
| Փայտահատ օդունձի և Անտառ · | 146 |
| Փայտահատ և Գայլ · | 160 |
| Փայտահատ և Հերմէս · | 212 |
| Փարթամ չքնիքն և Աղքատն · | 444 |
| Փողահար պոռոզան · | 301 |


26

| | |
|---|---|
| Օձ եղեան և Երկրագործ . | 101 |
| Օձ և Երկրագործ . | 128 |
| Օձ և Խայտառոց . | 156 |
| Օձ և Թռչնորս . | 283 |
| Օձ և Տուտն . | 313 |
| Օձ և Ոզնի . | 395 |
| Օձ և Խեցգետին . | 409 |
| Օձ և Մարդ . | 500 |